

ԾՈՆ ՊԻՎԻՐ

«Սահանայի խայծը» հանրաճանաչ գիրքի հեղինակ

ԲԱՐԻ՞,

ԹԷ՞

ԱՍՏՈՒԱԾ

ԻՆՉՈՐԻ ԲԱՐԻՆ ԱՌԱՆՑ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱԲԱՐԱՐ ԶԷ

Թանկագին ընկեր,

Երբ մենք Աստուծոյ հետ յարաբերութիւն կ'ունենանք, Ան կը փոխէ մեր կեանքի բոլոր բնագաւառները: Մեր կեանքը առատութեամբ կը լեցուի, երբ հնազանդինք Յիսուս Քրիստոսի իշխանութեան եւ ամէն օր ապրինք Անոր շնորհքով:

«Բարի՞, թե՞ Աստուած»-ը՝ պարզ գիրք չէ: Այն ուղերձ է, որ կրնայ ոգեշնչել մարդոց՝ միանալու աշխարհով մէկ տարածուած սրբութեան շարժումին: Դուք կրնաք միանալ այս շարժումին՝ այս սրբութեան ուղերձին մասին պատմելով առաջնորդներու, եկեղեցական համայնքներու, ձեր ընտանիքին, ընկերներուն եւ ձեզ շրջապատող մարդոց: Ընդամենը մէկ մարդ՝ Պօղոս առաքեալը, որ պզտիկ դպրոցի մը մէջ կը սորվեցնէր խումբ մը աշակերտներու, բաւարար էր, որ Աւետարանը հասնէր իւրաքանչիւր մարդու, որ կ'ապրէր Ասիայի մէջ, այն ալ՝ ընդամենը երկու տարուան մէջ: Անոնք դարձան Աստուծոյ ներկայութիւնը կրողները (կարդացէ՛ք Գործք 19.1-10): Այդ պարագային, ի՞նչ կրնայ ընել Աստուած մեր միջոցով, եթէ մենք միաբանինք Անոր հանդէպ ունեցած մեր եռանդով:

Տերը դրած է իմ սրտին մէջ, որ այս ուղերձը փոխանցեմ ձեզի եւ աշխարհի տարածքին գտնուող ծառայակից հոգեւոր աւագներուն: Ես կ'ուզեմ սպառազինել ձեզ, որ փոխանցեք այս յայտնութիւնը բոլոր անոնց, որ կը ճանչնաք: Կը խնդրեմ, ընդունեցէ՛ք այս մէկը՝ սիրոյս եւ աջակցութեանս հետ: Ի՞ սրտէ կը փափաքիմ գիտնալ, թէ ինչպիսի ազդեցութիւն ձգեց այս ուղերձը ձեր կեանքին եւ այն մարդոց կեանքերուն մէջ, որոնց համար դուք հոգ կը տանիք:

Սրտանց,



Շոն Պիվիո

JohnBevere@ymail.com



MESSENGER
INTERNATIONAL
MessengerInternational.org



բարի,
Թե՛
ԱՍՏՈՒԱԾ

Քրիստոնեայ առաջնորդները՝ «Բարի՞, թե՞ Աստուած» գիրքի մասին:

«Բարի՞, թե՞ Աստուած» գիրքը նոր ձեւով պիտի բացայայտէ Աստուածաշունչը ձեզի համար. այն մարտահրաւեր պիտի նետէ ձեր պատկերացումին վրայ՝ կեանքը լաւ ապրելու մասին, եւ բոլորովին պիտի վերափոխէ այն:

— Մարք Պեթերսոն, «Նիւ Եորք Թայմզ» ամսագիրի հանրաձայնաչ գիրքերու ցուցակին մէջ գտնուող «Շրջաններ կազմողը» գիրքի հեղինակ

«Բարի՞, թե՞ Աստուած» գիրքը պիտի սորվեցնէ ձեզի զանազանէ եւ պիտի մղէ ճշմարտապէս փնտռելու Տիրոջը, որպէսզի գիտնաք Անոր կատարեալ կամքը ձեր կեանքին համար:

— Ճոն Մաթեր, քրիստոնեայ ուսուցիչ եւ հանրաձայնաչ գիրքերու հեղինակ

Ճոն Պիվիորը պատուարժան ուսուցիչ, առաջնորդ եւ հեղինակ է, ինչպէս նաեւ՝ լաւ ընկեր եւ գործակից Աստուծոյ արքայութեան կառուցման մէջ: Ան կ'ուզէ, որ մարդիկ ոչ միայն լաւ, այլեւ աստուածային կեանք ունենան: Անոր ձգտումը պիտի բարձրացնէ ձեր հաւատքը եւ կոչ պիտի ընէ, որ համարձակ մուտք գործէք այն բաներու մէջ, ինչ որ Յիսուսը պատրաստած է ձեզի համար: Ճոնին ուսմունքներն ու անձնական յայտնութիւնները նորէն պիտի բացայայտեն ձեզի Աստուծոյ կամքը եւ Անոր ծրագիրները ձեր ապագային համար:

— Պրոֆեսոր Ռիչարդս, «Յիլտնկ» եկեղեցւոյ աւագ հովի

Երբ կը կարդամ այն մարդոց մասին, որոնք աննախադէպ գործեր ըրած են Աստուծոյ հանդէպ իրենց ունեցած սիրոյն պատճառով, ես կը փափաքիմ ըլլալ անոնցմէ մէկը: «Բարի՞, թե՞ Աստուած» գիրքը կը նկարագրէ, թէ ինչ կը կատարուի անոնց կեանքին մէջ, որոնք ճշմարտապէս կը յարին Աստուծոյ ունեցած լաւագոյնին, եւ ոչ թէ պարզապէս կը բաւարարուին ասելի դիրին շահելի կեղծիքներով: Եթէ դուք նոյնպէս կ'ուզէք արմատապէս ճանչնալ զԱստուած եւ ծառայել Զինք, ես կը քաջալերեմ, որ ընթերցէք այս գիրքը»:

— Ճոն Բ. Մաքսուել, հանրաձայնաչ հեղինակ եւ քարոզիչ

Աստուած ունի լաւագոյնը ձեզի համար, եւ Ճոն Պիվիորի «Բարի՞, թե՞ Աստուած» գիրքը պիտի դրդէ ձեզ երբեք չհամակերպիլ այն ամէնուն, ինչ որ պակաս է անկէ: Ճոնը փայլուն կերպով կը յիշեցնէ, որ մենք կը գտնենք զԱստուած, երբ փնտռենք Զինք:

— Ճեյմս Գրեյսթ, «Ֆրի Չեփըլ» եկեղեցւոյ աւագ հովի եւ «Նիւ Եորք Թայմզ» ամսագիրի հանրաձայնաչ գիրքերու ցուցակին մէջ գտնուող «Ծոմ» գիրքի հեղինակ

«Բարի՞, թե՞ Աստուած» գիրքը հիմնովին պիտի ցնցե՛ծե՛ք: Եթե դուք չէ՛ք ձգտիր փոփոխութիւններու, այս գիրքը ձեզի համար չէ: Այնուամենայնիւ, եթե կը փափաքիք, որ ձեր պատկերացումները մէկընդմիշտ փոխուին, անհազ կերպով կլանեցե՛ք այս ուղերձը: Այն պիտի վերափոխէ ձեր կեանքը:

— ԲՐԻՍԻԼ ԲԷՅԼ, «Ա21 Քըմփէյն» ծառայութեան հիմնադիր եւ «Անկասելի» հանրաժանայ գիրքի հեղինակ

Խթանող: Պարզ: Անհրաժեշտ: «Բարի՞, թե՞ Աստուած»-ը շատ անհրաժեշտ ձեւով կը յիշեցնէ այն մասին, որ մեր վերջնական նպատակը՝ պարզապէս բարի ըլլալը չէ: Այս գիրքը ցոյց կու տայ, որ մարդիկ կրնան անցում կատարել բարոյական հնազանդութեամբ բնութագրուող միապաղաղ կեանքէն դէպի այն ակնառու կեանքը, որ կարելի է ստանալ միայն Յիսուսէն:

— ԼՈՒԻ ԿԻԿԼԻՕ, «Փէշըն Սիթի Չըրչ»-ի հովիւ Ճորճիա Նահանգի Աթլանթա քաղաքին մէջ եւ «Փէշըն Քոնֆըրնսիս» համաժողովներու հիմնադիր

Ինչպէս որ լուցկին վառելով կը ցրուէ խիտ խաւարը, ճոն Պիվիրը կը լուսաւորէ ճանապարհը դէպի Աստուծոյ յայտնուած ներկայութիւնը եւ միեւնոյն ժամանակ անյագ ցանկութիւն կը բոցավառէ ընթերցողին սրտին մէջ, որ կը յագնայ միայն Անոր հետ մտերիմ հաղորդակցութեան մէջ:

— ԵՊԻՍԿՈՍ ԹԻ ՏԻ ՃԷՅՅԸ, «ԹիՏիճէյ Էնթերփրայսիս» ընկերութեան գլխաւոր տնօրէն եւ հանրաժանայ հեղինակ՝ ըստ «Նիւ Եորք Թայմզ» ամսագրի

Աստուծոյ բարութիւնը կը շրջապատէ մեզ, բայց արդեօ՞ք մենք ճշմարտապէս կը հասկնանք այն: «Բարի՞, թե՞ Աստուած» գիրքին մէջ ճոն Պիվիրը ցոյց կու տայ, թէ ի՛նչ կը նշանակէ՝ ըլլալ բարի, եւ ի՛նչ առնչութիւն ունի բարին Աստուծոյ հետ: Կարդացե՛ք այս կարեւոր գիրքը. այն պիտի շահագրգռէ, պիտի դողէ եւ պիտի խթանէ ձեզ փնտռելու Աստուծոյ լաւագոյնը ձեզի համար եւ բաժնեկցիլ այս ուղերձով մարդոց հետ:

— ԲՐԵՅԿ ԿՐՈՇԵԼ, «Լայվ Չըրչ ԹիՎի»-ի գլխաւոր հովիւ, նաեւ «Այսօրուընէ յետոյ» եւ «Յինգ պարտաւորութիւն՝ ձեր ամուսնութիւնը ձախողումէն ապահովագրելու համար» գիրքերու հեղինակ

Ճոն Պիվիրը եւս մէկ անգամ անզուգական ու կեանքեր փոխող կանչ յղած է Քրիստոսի մարմնին մէջ: Ճոնը իր նոր գիրքին մէջ, որ կը կոչուի «Բարի՞, թե՞ Աստուած», ցոյց կու տայ ընթերցողին, թէ Աստուծոյ հետ փոխյարաբերութենէն ի՛նչպէս ստանալ առաւելագոյնը եւ ի՛նչպէս աւելի բարձր չափանիշ հաստատել կեանքի բոլոր բնագաւառներուն համար:

— ՄԵԹԵՆԻ ՊՐՆԷՏ, «Անձելուս Թեմփըլ» եկեղեցոյ աագ հովիւ Գալիֆորնիա Նահանգի Լոս Անձելըս քաղաքին մէջ, եւ «Տրիմ Սենթըր» եկեղեցոյ համահիմնադիր

«Բարի՞, թե՞ Աստուած» գիրքին մէջ Ճոն Պիվիորը կոչ կ'ընէ քննել եւ վերանայիլ մեր պատկերացումը Աստուծոյ բարութեան մասին եւ ճանչնալ այն բնագաւառները, որոնց մէջ մենք բաւարարուած ենք մեր չափանիշներով, եւ ոչ թէ Անոր: Ներկայացնելով խորաթափանց աստուածաշնչեան գաղափարներ եւ պատմելով իր կեանքի խոցելի պահերուն մասին՝ Ճոնը կ'ոգեշնչէ ընթերցողներուն մերժել այս աշխարհի կեղծ բարութիւնը եւ կրկին սրտանց նուիրուիլ մեր երկնային Հօր կատարեալ սրբութեան: «Բարի՞, թե՞ Աստուած» գիրքը պէտք է ընթերցուի Յիսուսի ամէն մէկ հետեւորդի կողմէն, որ կը հրաժարի բաւարարուիլ որեւէ բանով, ինչ որ պակաս է Աստուծոյ պատրաստած լաւագոյնէն:

— Քրիստոս Զոհիս, «Չըրչ ըվ Յայլընտս»-ի գլխաւոր հովիւ, նաեւ «Թարմ օդ» եւ «Չորս գաւաթ» գիրքերու հեղինակ

ԵՐԱՆ ՊԻՎԻՐ

ԲԱՐԻ՞

ԹԷ՞

ԱՍՏՈՒԱԾ

ԻՆՉՈՒՒ ԲԱՐԻՆ ԱՌԱՆՑ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱԿԱՐԱՐ ՉԷ

Կը Նուիրենմ այս գիրքը մեր որդիին՝
Արտըն Քրիստոֆըր Պիվիրին

Ղուն ջանասէր, զօրաւոր, զգայուն եւ իմաստուն ես:
Ես հիացած եմ, թէ որքան զգայուն ես
դուն անոնց հանդէպ, որոնք ցաւ կը զգան:
Որդի՛ս, ես այնքա՛ն կը հպարտանամ քեզմով եւ
կը սիրենմ քեզ յաւիտեան:

Good or God? by John Bevere, Western Armenian

© 2017 Messenger International

www.MessengerInternational.org

Originally published in English as Good or God?

Additional resources in Western Armenian by John Bevere are available for free download at: www.CloudLibrary.org

To contact the author: JohnBevere@ymail.com

«Բարի՞, թե՞ Աստուած», Ճոն Պիվիր, արեւմտահայերէնով

© 2017 Messenger International

www.MessengerInternational.org

Նախապէս հրատարակուած է անգլերէնով,

«Good or God?» վերնագիրով:

Ճոն Պիվիրի միւս հեղինակային միւթերը արեւմտահայերէնով կրնաք անվճար ներբեռնել հետեւեալ կայքէջէն. www.CloudLibrary.org

Հեղինակին հետ կապ հաստատելու համար. JohnBevere@ymail.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շնորհակալական խօսքեր	13
Այս գիրքին մասին	15
Ներածություն	17
Գլուխ 1. Ի՞նչ է բարին.....	19
Գլուխ 2. Ինչպե՞ս ատիկա պատահեցաւ	29
Գլուխ 3. Բարիի համընդհանուր չափանիշը.....	43
Գլուխ 4. Հիմքը	59
Գլուխ 5. Մի՞թէ ցանկութիւնը բաւական է.....	75
Գլուխ 6. Մեր ներքին տեղորոշման համակարգը	91
Գլուխ 7. Նախանձաւոր՝ մեզի համար	109
Գլուխ 8. Ընկերութիւն	123
Գլուխ 9. Անտեսուած ճշմարտութիւնը	141
Գլուխ 10. Վառելիքը.....	159
Գլուխ 11. Բարի՞, թե՞՞ օգտակար	181
Գլուխ 12. Սուրբ կեանքի ուսուցում.....	195
Գլուխ 13. Մեր դրդապատճառը	209
Գլուխ 14. Մեր չափանիշները.....	227
Գլուխ 15. Զանազանութիւն	245
Գլուխ 16. Ընդհանուր պատկերը	263
Սերտողութեան նիւթեր եւ քննարկման հարցեր	269
Նշումներ.....	288

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՕՍՔԵՐ

Իմ կնոջը, զաւակներուն եւ թոռներուն. ամէն մէկդ նուէր էք Աստուծմէ: Դուք կը հարստացնէք իմ կեանքը: Ես կը սիրեմ ձեզ յաւիտեանս յաւիտենից:

«Մեսէնճըր Ինթերնեշնլ» ծառայութեան խումբին, խորհուրդի անդամներուն եւ գործընկերներուն շնորհակալութիւն կը յայտնեմ, որ Լիզային եւ իմ կողքին էք: Դուք Աստուծմէ տրուած հաւատարիմ եւ ճիշդ ընկերներ էք, որոնց հետ կը փափաքէինք ընթացք անցընել՝ քարոզելով Յիսուս Քրիստոսի փառաւոր Աւետարանը բոլոր ազգերուն:

Պրիւսին, Ճէյլինին, Վինսենթին, Էլիսընին, Էտիսընին եւ Լորենին. շնորհակալութիւն, որ ջանասիրաբար յղկեցիք այս ուղերձը՝ օգտագործելով ձեր խմբագրական հմտութիւնները: Ձեր աստուածատուր պարգեւները հիացմունք կը ներշնչեն ինձի:

Ալանին. շնորհակալութիւն այս ուղերձի կազմի տպաւորիչ ձեւաւորման համար: Այն շատ գեղեցիկ ոճ ունի:

Էտիսընին, Քոլինին, Էսթերին, Թոմին, Մեթին, Արտընին, Ալանին, Ճէյլինին եւ Տէյվիտին. շնորհակալութիւն, որ կարդացիք այս ուղերձը իր ձեւաւորման փուլերուն մէջ եւ իմաստուն ու ողջամիտ ներդրում ունեցաք դժուար հատուածներուն մէջ:

Թոմին, Էսթերին, Էտիսընին, Օսթինին եւ Ճոնին. շնորհակալութիւն ձեր իմաստուն ներդրումին համար այս գիրքի հրատարակչական եւ գովազդային եւ հանրաճանաչման աշխատանքներուն մէջ:

Ռոպին եւ Վանեսային. շնորհակալութիւն այս ուղերձը ազգերուն հասցնելու ձեր անխոնջ աշխատանքին համար:

Մեր Հօրը, մեր Տէր Յիսուս Քրիստոսին եւ Սուրբ Հոգիին. Շնորհակալութիւն կը յայտնենք Քեզի, որ լիովին փրկեցիր մեզ մեր մեղքերէն, որդեգրեցիր՝ դարձնելով Քու զաւակները, եւ այս ուղերձը տուիր Քու սիրելի ժողովուրդին համար: Քուկդ է ամբողջ փառքը:

ԱՅՍ ԳԻՐՔԻՆ ՄԱՍԻՆ

Դուք կրնաք ընթերցել այս գիրքը սկիզբէն մինչեւ վերջ, ինչպէս նաեւ մնացած բոլոր գիրքերը: Այնուամենայնիւ, գիրքի վերջաւորութեան ես ներառած եմ յաւելեալ նիւթեր բոլոր անոնց համար, որոնք կը փափաքին օգտագործել «*Բարի՞, թէ՞ Աստուած*» գիրքը՝ որպէս փոխգործուն ուսուցողական նիւթ: Դուք կրնաք ուսումնասիրել այս գիրքը անձամբ կամ խմբային միջավայրին մէջ: Այն նախատեսուած է վեցշաբաթեայ ուսուցման համար, բայց դուք ազատօրէն կրնաք յարմարցնել այն ձեր պահանջներուն:

Իւրաքանչիւր շաբթուան նիւթերը հետեւեալը կը պարունակեն.

- Հարցումներ խմբային քննարկման կամ անձնական մտորման համար:
- Շաբաթական սերտողութեան նիւթեր, որոնք կրնաք օգտագործել Աստուծոյ հետ անձնական հաղորդակցութեան ժամանակ:
- *Խորհեց՛ք*. Աստուածաշնչեան խօսք, որուն շուրջ պէտք է խորհիք ամբողջ շաբթուան ընթացքին:
- *Կիրառեց՛ք*. պարզ միջոց՝ օրուան մէջ ձեր սորվածը կիրառելու համար:

Իւրաքանչիւր շաբթուան վերաբերող գիրքի գլուխները նշուած են այդ շաբթուան քննարկման հարցումներէն առաջ:

Եթէ դուք այս գիրքը պիտի ընթերցէք «*Բարի՞, թէ՞ Աստուած*» դասընթացքի շրջանակներուն մէջ, մենք կ'առաջարկենք ձեզի դիտել կամ ունկնդրել իւրաքանչիւր շաբթուան ուսումնական տեսանիւթը եւ ապա ձեր փոքրիկ խումբին մէջ պատասխանել գիրքի վերջաւորութեան զետեղուած քննարկման հարցումներուն: Անկէ ետք խնդրեցէ՛ք ձեր խումբի բոլոր անդամներէն ընթերցել գիրքին համապատասխան գլուխները եւ սերտողութեան նիւթերը՝ մինչեւ ձեր յաջորդ հաւաքոյթը: Ամէն շաբթուան համար նախատեսուած է մէկական ուսումնական տեսանիւթ:

Այս ամէնը ձե՛զի համար է:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Վերջերս հեռախօսազրոյց մը ունեցայ մեծ յարգանք վայելող քրիստոնէայ առաջնորդի մը հետ: Մենք արդէն հրաժեշտ կու տայինք իրար, երբ ան անսպասելիօրէն ըսաւ. «Ճո՛ն, սպասէ՛ մէկ վայրկեան: Ես պէտք է բան մը ըսեմ քեզի: Վերջին քսան տարիներուն ընթացքին դուն շատ գիրքեր գրած ես, բայց գիրք մը կայ, որ դուն *պէտք է* գրես: Այն ճիշդ ժամանակին եկած մարգարէական ուղերձ է եկեղեցիին. ասիկա երկինքի յանձնարարութիւնն է քեզի»:

Երբ ան աւարտեց իր խօսքը, ես արդէն ծունկերուս վրայ էի՝ երկիւղած Աստուծոյ ներկայութենէն: Այդ հեռախօսազանգէն քանի մը շաբաթ յետոյ մէջս այս գիրքը գրելու անյաղթահարելի փափաք մը յառաջացաւ:

Այս ուղերձը հիմնուած է պարզ հարցումի մը վրայ. «Արդե՞՞ք բարին բաւարար է»:

Մեր օրերուն «բարի» եւ «Աստուած» բառերը կարծես հոմանիշներ դարձած են: Մենք կը հաւատանք, թէ այն, ինչ որ ընդհանուր առմամբ բարի կը համարուի, պէտք է համապատասխանէ Աստուծոյ կամքին: Առատածեռնութիւնը, խոնարհութիւնը, արդարութիւնը բարի են: Եսասիրութիւնը, ամբարտաւանութիւնը, դաժանութիւնը չար են: Այս տարբերակումը շատ պարզ կը թուայ: Բայց արդե՞՞ք ամէն ինչ այդքան պարզ է: Եթէ *բարին* այդ աստիճան ակնյայտ է, ինչո՞ւ Եբրայեցիներու 5.14-ն կը սորվեցնէ, որ մեզի զանազանութիւն հարկաւոր է՝ այն ճանչնալու համար:

Պօղոս առաքեալը կը գրէ. «Եւ մի՛ կերպարանիք այս աշխարհին կերպարանքով, այլ նորոգուեցէ՛ք ձեր մտքի նորոգութեամբ, որ դուք քննէք, թէ ի՞նչն է Աստուծոյ կամքը՝ բարին, հաճելին եւ կատարեալը» (Հռովմայեցիս 12.2): Մենք չենք կրնար զանազանել, թէ ինչը ճշմարտապէս բարի է մեզի համար՝ առանց նախապէս մեր միտքը նորոգելու: Առանց վերափոխման, որ կու գայ մեր մտքերը նորոգելու միջոցով՝ մենք կը կորսնցնենք այն հրաշալի, Աստուծոմով լեցուն կեանքը, որ կրնայինք ունենալ Քրիստոսի մէջ:

Մինչեւ այս աշխարհը ստեղծելը, Աստուած ծրագիր ունէր ձեր կեանքին համար, որուն մէջ կան իրականացած նպատակներ, անսահման ուրախութիւն եւ լիակատար բաւարարութիւն: Անոր կամքն ու ծրագիրը ձեր կեանքին համար կատարելապէս ու լիովին բարի են. այնուամենայնիւ, գոյութիւն ունի կեղծուած բարի, որ կրնայ թոյլ չտալ, որ Աստուծոյ լաւագոյնը ընդունիք:

Ցաւօք, մեզմէ շատերը բաւարարուած են այդ կեղծիքով: Մենք անգիտակցաբար (իսկ երբեմն՝ գիտակցաբար) մերժած ենք *Աստուծոյ՝* ձգտելով ակնյայտօրէն *բարի* նպատակներու:

Առաջին եկեղեցւոյ առաջնորդները շարունակ կը զգուշացնէին մեզ այս խաբէութեան մասին (խաբուած ըլլալ կը նշանակէ՝ հաւատալ, որ մեր կեանքը կը համապատասխանէ ճշմարտութեան, այնինչ՝ իրականութեան մէջ այդպէս չէ): Ինքը՝ Յիսուս, կը զգուշացնէր, որ մեր օրերուն մէջ խաբէութիւնը այնքա՛ն հմտօրէն քողարկուած պիտի ըլլայ, որ նոյնիսկ ընտրեալները կրնան զոհ երթալ ատոր: Արդեօ՞ք մենք կրնանք թեթեւօրէն վերաբերիլ այս զգուշացումներուն: Արդեօ՞ք կրնանք անտեսել ատոնք՝ համարելով, որ մենք վեր ենք խաբէութենէն եւ կրնանք բնագոյօրէն զանազանել բարին չարէն:

Ես բարի լուր ունիմ ձեզի. Աստուած չի փորձեր պահել լաւագոյնը, որ պատրաստած է մեզի համար: Ան քօղով չի ծածկեր մեր աչքերը: Ան կը խոստանայ, որ փնտռողները պիտի գտնեն: Եթէ նուիրուինք ճշմարտութիւնը փնտռելուն, մենք չենք խաբուիր կեղծիքով: Հարցումը հետեւեալն է. արդեօ՞ք մենք կ'ուղղենք մեր հայեացքը ճշմարտութեան Աղբիւրին, թէ՞ կը բաւարարուինք Աստուծոյ եւ Անոր կամքին մասին մակերեսային գիտելիքներով: Յոյսով եմ, որ կարդալով այս գիրքը՝ դուք մէկընդմիջտ որոշում պիտի կայացնէք, որ այլեւս պիտի չբաւարարուիք այն ամէն ինչով, որ չի համապատասխաներ Աստուծոյ լաւագոյնին ձեզի համար:

Եկէ՛ք աղօթենք սկսելէ առաջ.

Հայր, Յիսուսի անունով, բայց իմ աչքերը, ականջները եւ սիրտը, որ տեսնեն, լսեն ու հասկնամ Քու կամքը իմ կեանքին համար: Սո՛ւրբ Հոգի, այս ուղերձը ընթերցելու ընթացքին, սորվեցո՛ւր ինձի Յիսուս Քրիստոսի ճանապարհներու խորութիւնները: Ես կը սպասեմ Քեզմէ՝ Իմ Ուսուցիչէն: Խօսի՛ր հետս այս գիրքի ամէն մէկ նախադասութիւնը կարդալու ժամանակ: Թո՛ղ որ իմ կեանքը յաւիտեան փոխուի: Ամէ՛ն:

ԻՆՉ Է ԲԱՐԻՆ

«Մէկէն զատ բարի չկայ, որ է Աստուած»:
— Մարկոս 10.18

Ամէն ինչ տիեզերքին մէջ բարի է այն չափով,
որ այն կը համապատասխանէ Աստուծոյ
բնութեան, եւ չար՝ այն չափով,
որ աստիկա տեղի չ'ունենար:
— Է. Ու. Թոզեր

Բարին եւ չարը. բոլորս գիտենք այս երկուքի տարբերութիւնը, ճիշդ է: Չէ՞ որ ամէն մարդ կը ծնի ներյատուկ գիտելիքով բարիի եւ չարին մասին:

Ես հաճախ լսած եմ, որ մարդը ի ծնէ բարի է, բայց արդեօ՞ք աստիկա ճշմարիտ է: Մեր սրտերը ջերմացնող ֆիլմերը, վաւերագրական տեսերիզները եւ այլ հեռուստատեսային հաղորդումներ կ'ընդգծեն մարդուն բարի ըլլալը: Ես ծանօթ չեմ հանրաճանաչ դարձած որեւէ պատմութեան, վէպի կամ ֆիլմի, որուն մէջ չարը կը յաղթէ բարիին:

Բոլորս ալ մեծցած ենք՝ դիտելով ֆիլմեր, որոնց մէջ լաւ մարդիկ մեծ դժուարութիւններ կը յաղթահարեն: Այդ մարդիկ խիստ անարդար պայմաններու մէջ էին. անոնց պարտութիւն կը սպառնար, յաճախ՝ համարեա՛ մինչեւ պատմութեան ավարտը: Բայց յանկարծ մեր հերոսները ձեղքում կ'ունենային. անոնք յաղթանակ կը տանէին կամ կը հաստատէին արդարութիւնը: Մենք կ'ականկալէինք այսպիսի վերջաբաններ եւ կը ծափահարէինք անոնց: Մենք կը փափաքէինք, որ բարին միշտ յաղթէր. չէ՞ որ Աստուած բարիին կողմն է:

Վերջին տարիներուն հեռուստատեսային արտադրութիւններն ու հեռուստաընկերութիւնները սկսան նոր գաղափար եւ ուղղութիւն թելադրել. Անոնք հանրութեան ներկայացուցին իրապաշտ-ներկայացումներ, որոնց մէջ մարդոց կեանքը կը փոխուի:

Ամէն ինչ սկսաւ կարիքաւոր ընտանիքներուն տուները վերանորոգելէն: Մենք չէինք բաժնուեր հեռատեսիլէն՝ հիանալով բարերարներու ոգէտորութեամբ եւ առատաձեռնութեամբ աղքատներուն եւ կարիքաւորներուն հանդէպ: Մենք կ'ակնկալէինք տեսնել նախագիծին մասնակիցներուն զարմանքը եւ կու լայինք այն պահերուն, երբ այդ «խեղճերը» առաջին անգամ ըլլալով կը տեսնէին իրենց վերանորոգուած տունը:

Յաջորդ նոյնանման նախագիծերու մասնակիցները կ'օգնէին գիրութենէն տառապող «անյաջողակներուն»՝ մեծ քանակութեամբ կշիռք կորսնցնելու համար: Այս նախագիծերուն հետեւեցան այն հաղորդումները, որոնց մէջ մարդոց կ'օգնէին ճիշդ հագուստ, սանտրուածք կամ շպար ընտրելու, եւ այսպէս շարունակ:

Շուտով նշանաւոր մարդիկ միացան այս գաղափարին: Հանրաձանաչ արուեստագէտներ հնարաւորութիւն տուին անոնց, որոնք այլապէս հնարաւորութիւն չէին ունենար ներկայացնել իրենց երգն ու պարը: Մենք կը ցնծայինք՝ տեսնելով, թէ ինչպէս պարզ մասնակից մը մէկ գիշերուան ընթացքին աստղ դառնալու հնարաւորութիւն պիտի ստանայ: Ինչպիսի՞ բարութիւն. ինչպիսի՞ առատաձեռնութիւն. ինչպիսի՞ համակրանք:

Որեւէ հաղորդում, որուն մէջ մարդիկ բարեգործութեամբ կը զբաղէին, անմեղներ կը պաշտպանէին կամ իրենց ժամանակը կը զոհաբերէին անյայտ մարդոց համար, հանրաձանաչ կը դառնար:

Ասոնց կարգին էին նաեւ ոստիկաններու կամ վարձու խուզարկուներու մասին հաղորդումները, որոնք չար յանցագործներ կը բռնէին: Ասոնք նոյնպէս աւելցան ամենաշատ դիտուող հաղորդումներու ցուցակին մէջ:

Որպէս ամփոփում՝ մեր ժամանցը յաճախ կեդրոնացած է մարդկութեան բարի կողմին վրայ:

«101 փաստ վաճառքի եւ շուկայավարութեան մասին» գրքոյկը կը սորվեցնէ, որ որեւէ ապրանք պէտք է լաւ տպաւորութիւն ձգէ, լաւ տեսք ունենայ եւ հաճելի ձայն, կամ՝ լաւ համ ու հոտ, որպէսզի մեծ տարածում գտնէ շուկային մէջ: Այն պէտք է ազդէ սպառողին զգացումներուն կամ զգայարաններուն վրայ՝ աւելի հանգիստ եւ ուրախ դարձնելով զինք: Մենք գիտենք, որ լաւ առարկաները կը վաճառուին: Իսկապէս որ, ո՞վ կ'ուզէ վատ բան գնել: Այսպիսի մարդիկ առնուազն պէտք է տարօրինակ ըլլան:

Մենք այսպիսի մեկնաբանութիւններ կը լսենք. «Ան լաւ մարդ է», կամ. «Ան լաւ կին է», եւ սովորաբար կը հաւատանք մեր լսածին: Խոցելի եւ անպաշտպան մարդիկ անմիջապէս կը թուլացնեն զօգնութիւնը եւ կ'ընդունին որեւէ խօսք կամ գործողութիւն այդ «բարի» համարուող մարդոցմէն՝ ապահով եւ արժանահաւատ համարելով: Բայց արդեօ՞ք այդ գնահատականները մշտապէս ճիշդ են:

Կարելի՞ է արդեօք, որ մենք խաբէութեան մէջ յայտնուինք՝ «սխալ» անուանելով այն, ինչ որ ճիշդ է, եւ «ճիշդ» անուանելով այն, ինչ որ սխալ է: Եւ ո՞վ կրնայ յստակօրէն ցոյց տալ տարբերութիւնը այս երկուքին միջեւ: Եւ անկասկած՝ մենք ոչ մէկ պարագային կը խաբուինք, եթէ բարին՝ չար կամ չարը՝ բարի անուանենք, ճի՞շդ է:

Մտածեցէ՛ք այս մասին. դարեր առաջ, հարուստ երիտասարդ իշխան մը մօտեցաւ Յիսուս Քրիստոսին: Ան անկեղծ եւ բարոյապէս մաքուր մարդ մըն էր: Ան երբեք շնութիւն չէր գործած, չէր սպաննած, սուտ չէր խօսած, չէր գողցած եւ մէկուն խաբած չէր իր համագործակցութիւններուն մէջ: Ան միշտ յարգանք կը ցուցաբերէր իր ծնողներուն հանդէպ: Ան օրինակելի քաղաքացի մըն էր եւ, ամենայն հաւանականութեամբ, շատերուն հիացմունքի առարկան էր: Ան պատուեց Յիսուսը՝ ողջունելով Ջինք որպէս «Բարի Կարդապետ»:

Առաջնորդ մը կը խօսէր ուրիշ առաջնորդի մը հետ. բարի մարդ մը կը դիմէր ուրիշ բարի մարդու մը. այս կերպով հարուստ երիտասարդը ընդհանրութիւններ կը փնտռէր ակնառու Ուսուցիչին հետ, Որուն անծամբ չէր ճանչնար: Թերեւս ան կը մտածէր իր սրտին մէջ. *«Եթէ ես շողորթեմ այս Մարգարէին՝ խօսելով Անոր բարութեան մասին, ատիկա պիտի համոզէ Անոր, որ բարի պատասխան մը տայ իմ հարցումին»*: Այնուամենայնիւ, նախքան անոր հարցումին անդրադառնալը՝ Յիսուսը վիճարկեց անոր ըսածը. «Ինչո՞ւ Ջիս բարի կ'անուանես: Մէկէն զատ բարի չկայ, որ է Աստուած» (Մարկոս 10.18):

Ինչո՞ւ Յիսուս ուղղեց այն մարդը, որ Ջինք բարի անուանեց: Մի՞թէ Յիսուսը բարի չէ: Անշուշտ, Ան բարի է: Այդ պարագային, ինչո՞ւ ան այդպէս ըսաւ: Կարելի՞ է արդեօք, որ այն «բարի»-ն, որուն մասին կը խօսէր երիտասարդ իշխանը, հիմնուած էր սխալ չափանիշի վրայ: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ կարելի՞ է, որ այս մարդուն չափանիշը բարիի մասին՝ կը տարբերի Աստուծոյ չափանիշէն:

Եթէ դուք կամ ես յայտնուէինք այդ մարդուն փոխարէն, ինչպիսի՞ պատասխան պիտի ստանայինք՝ Յիսուսէն «բարի Կարդապետ» անուանելով: Ես կրնամ ըսել, թէ Յիսուս ինչ կ'ըսէր ինծի: Որպէս մարդ, որ տարիներ շարունակ Աստուծոյ զուակ է, որ կարդացած է Աստուածաշունչը աւելի քան մէկ անգամ, երկար ժամեր տրամադրած է Սուրբ Գիրքի ուսումնասիրութեան, ամէն օր աղօթած եւ նոյնիսկ լրիւ ժամանակը եղած է ծառայութեան մէջ ու քանի մը հանրաճանաչ քրիստոնէական գիրքեր գրած է՝ ես պիտի ստանայի միեւնոյն պատասխանը, որ ստացաւ այդ հարուստ երիտասարդ իշխանը: Ճիշդ նոյն ձեւով Յիսուսը պիտի ըսէր. «Ճո՛ն, ինչո՞ւ բարի կ'անուանես Ջիս»: Ես ուրկէ՞

գիտեմ այս մէկը: Իրականութեան մէջ Աստուծոյ Հոգին տուած է ինծի միեւնոյն դասը, ինչ որ Յիսուսը՝ այդ իշխանին:

Յնցող լուր

Առիթ տուէ՛ք բացատրելու, թէ ինչ նկատի ունիմ: 1990-ական թուականներու վերջաւորութեան Շուէտ Ճամբորդեցի՝ համաժողովի մը քարոզելու համար: Թռիչքը տեսց ամբողջ գիշեր, եւ օդանաւը վայրէջք կատարեց Սթոքհոլմ առտու կանուխ: Երբ օդանաւէն իջայ, Ճամբորդութեան պայուսակս վերցուցի եւ անցայ մաքսային ստուգման, զիս դիմաւորեց իմ շուէտացի հիւրընկալը՝ ջերմ ողջոյնով: Մինչեւ օդանաւակայանի ելքի դուռը, ան իրադարձութիւն մը պատմեց ինծի, որ պիտի դառնար այդ տարուան եւ, թերեւս, ամբողջ տասնամեակի գլխաւոր նորութիւնը:

- Ճո՛ն, շատ ցաւալի դէպք մը պատահեցաւ անցեալ գիշեր՝ երբ դուն կը թռչէիր դէպի Շուէտ,- ըսաւ ան,- թերեւս դուն նոյնիսկ տեղեակ չես այդ մասին: Ես կը պատմեմ քեզի:

- Ի՞նչ է պատահածը,- հարցուցի ես՝ ե՛ւ մտահոգուած, ե՛ւ հետաքրքրուած:

Իմ հիւրընկալը պատմեց, որ ընդամենը քանի մը ժամ առաջ մահացու ինքնաշարժի արկած մը տեղի ունեցած է, որուն զոհերէն մէկը, հաւանաբար, ամենաճանչցուած եւ սիրուած անձնաւորութիւնն էր ամբողջ աշխարհի տարածքին: Այն ամէնը, ինչ որ այդ կինը կ'ընէր, կը յայտնուէր զանգուածային լրատուամիջոցներու ուշադրութեան կեդրոնը: Կինս՝ Լիզան, եւ ես հիացմունքի վերաբերմունք ունէինք անոր մարդասիրական գործունէութեան հանդէպ եւ մեծ հաճոյքով անոր մասին յօդուածներ կը կարդայինք ամսագիրին եւ թերթերուն մէջ: Աւելի անկեղծ ըլլալու համար՝ ես կը սիրէի ոչ միայն անոր մասին յօդուածներ կարդալ, այլեւ դիտել անոր կեանքը ներկայացնող լուսանկարները: Կարելի է ըսել, որ ես անոր ՄԵԾ երկրպագուն էի: Ամէն անգամ, երբ հեռատեսիլով կը խօսէին անոր մասին, կը ձգէի բոլոր գործերս եւ ուշադրութեամբ կը լսէի:

Ես աննկարագրելի ցնցում ապրեցայ՝ լսելով այդ կնոջ մահուան լուրը: Ան փոքրիկ մանուկներու երիտասարդ մայր էր: Ատոր հետ միասին՝ եռանդուն պետական գործիչ էր: Ան ե՛ւ խելացի էր, ե՛ւ գեղեցիկ: Ան կ'օգտագործէր իր համաշխարհային ազդեցութիւնը՝ իրականացնելու համար մեծածաւալ մարդասիրական ծրագիրներ պատերազմական երկիրներուն մէջ տուժած բնակչութեան եւ որբացած մանուկներուն համար: Ատիկա արդէն բաւարար էր իմ սիրտը շահելու համար, բայց անոր դրական յատկանիշները աւելին էին: Ան կը սիրէր իր

երկրպագուները եւ երբեք չէր անտեսեր զանոնք. ան միշտ կ'ողջունէր զանոնք՝ կա՛մ անկեղծ ժպիտով, կա՛մ ուրիշ ջերմ, անձնական ձեւով:

Անոր մահուան լուրը ցնցեց զիս. անհաւատալի էր, որ ատիկա տեղի ունեցած ըլլար: Ինչպէ՞ս ան կրնար մահանալ: Ինչպէ՞ս այդ մէկը կրնար տեղի ունենալ:

Իմ հիւրընկալը հիւրանոց հասցուց զիս: Առաջին բանը, որ ըրաւ ինձի համար սենեակ մտնելուն պէս, հեռատեսիլը բանալն էր: Բոլոր ալիքներով կը խօսէին այդ պատահարին մասին: Ես չէի հասկնար լուրերուն մեծ մասը, որովհետեւ ատոնք շուէտերէն լեզուով էին, եւ սկսայ ալիքները փոխել, մինչեւ որ գտայ «Սի-Էն-Էն» եւ «Պի-Պի-Սի Սքայ Նիուզ» ալիքները: Նստեցայ մահճակալի եզերքը՝ առանց պայուսակս բանալու. անհաւատալի էր, որ ատիկա տեղի ունեցած ըլլար:

Հեռուստակայաններու եթերով հազարաւոր սզացող մարդիկ հաւաքուած էին այդ կնոջ սեփական տունին քով: Տեսախցիկները կը նկարահանէին տարբեր տարիքի մարդիկ, որոնք արցունքներով ծաղիկներ կը դնէին անոր տունին դրան քով: Մարդիկ գրկախառնուած կու լային կամ խմբուած կ'աղօթէին: Ամբողջ աշխարհը ցնցուած էր:

Յաջորդ չորս օրերուն ընթացքին այս ողբերգութիւնը աշխարհի բոլոր թերթերու առաջին էջերուն վրայ էր: Բոլոր լրատուամիջոցները կը խօսէին այդ ինքնաշարժի արկածին, դժբախտ պատահարի հետաքննութեան, այդ կնոջ ընտանիքի արծազանգի եւ անոր յուղարկաւորութեան մասին: Պետութիւններու նախագահները, համաշխարհային առաջնորդները, ինչպէս նաեւ հարիւրաւոր հանրայայտ դերասաններ եւ երգիչներ մասնակցեցան անոր հոգեհանգիստի արարողութեան, որ ամենադիտուած իրադարձութիւններէն մէկը դարձաւ հեռուստատեսութեան պատմութեան մէջ:

Այդ առաջին օրը Սթոքհոլմի մէջ ես աւելի ու աւելի կը տխրէի իմ իջեւանած պանդոկին մէջ եւ նոյնիսկ չէի կրնար պատրաստուիլ երեկոյեան հաւաքոյթին: Միտքս զբաղած էր մէջս ծագած հարցումներով: Ես կը փորձէի յաղթահարել այն բարկութիւնը, որ կ'առաջանար, երբ կը մտածէի անոր մահուան հանգեցնող անիմաստ դիպուածներու մասին: Այդուհանդերձ, այդ տրտմութեան հետ մէկտեղ, կը զգայի, որ ուրիշ միտք մը կը փորձէր գրաւել իմ ուշադրութիւնը:

Ես կ'աշխատէի ազատիլ այս մտքերէն, բայց՝ ապարդիւն: Ի վերջոյ, քանի մը ժամ զգացումներուս եւ հոգիիս մէջ աններդաշնակութիւն զգալէն յետոյ, ծունկի եկայ անկողինիս քով եւ աղօթեցի. «Հայր, ես կը տրտմիմ այդ կնոջ մահուան պատճառով, սակայն սրտիս մէջ այնպիսի զգացում մը կայ, կարծես ինչ որ բան մը սխալ է: Ի՞նչ տեղի կ'ունենայ»:

Գրեթէ անմիջապէս ես լսեցի սրտիս խորքին մէջ. «Կարդա՛ Յայտնութիւն գիրքի տասնութերորդ գլուխը: Չէի յիշեր, թէ ինչ գրուած էր Յայտնու-

թին 18-րդ գլուխին մէջ, որովհետեւ ցաւօք, այդ ժամանակ խորապէս չէի ուսումնասիրած այդ գիրքը: Ես բացի Աստուածաշունչս եւ սկսայ կարդալ: Սիրտս արագօրէն կը բաբախէր, երբ հասայ եօթներորդ խօսքին.

«Որչափ որ փառաւորեց զինք եւ զեխութեամբ ապրեցաւ, այնչափ ալ տանջանք եւ սուգ հատուցանեցէ՛ք անոր. վասնզի իր սրտին մէջ կ'ըսէ. «Ես թագուհի եմ, որբեւայրի չեմ ու բնաւ սուգ պիտի չտեսնեմ»: Անոր համար մէկ օրուան մէջ պիտի գան աստոր հարուածները՝ մահ եւ սուգ եւ սով, ու կրակով պիտի այրի, վասնզի հզօր է Տէր Աստուած, որ զանիկա դատեց: Ու երկրի թագաւորները, որ աստոր հետ պոռնկացան ու հեշտացան պիտի լան ու կոծեն աստոր վրայ...» (Յայտնութիւն 18.7-9):

Ես զգացմունքային պոռթկում ունեցայ այս խօսքերը կարդալէն յետոյ: Այս հատուածին մէջ նկարագրուած կնոջ եւ այն կնոջ միջեւ, որուն մահուան լուրը կը պատմուէր բոլոր հեռուստաթերթներուն մէջ, ակնյայտ զուգահեռներ կային: Ըսես զլիսու թոյլով պաղ ջուր թափէին. ես ցնցուած, այլալուծ ու շփոթած էի: Ինչպէ՞ս այս հատուածը կարելի էր վերագրել այդ կնոջը, որ հանրայայտ բարեգործ էր:

Կարելոր է նշել, որ այս խօսքերուն մէջ Յովհաննէս առաքեալը նկատի չունէր ոեւէ մարդ: Այս հատուածը կը խօսի անձի մը մասին, որ նշանաւոր դարձած է այս անկում ապրած աշխարհին մէջ: Այնուամենայնիւ, այն շատ նմանութիւններ ունէր ստեղծուած իրավիճակին հետ, եւ Աստուծոյ Հոգին օգտագործեց այն, որպէսզի փոփոխութիւն բերէր մտածելակերպիս մէջ: Երբեք պատահա՞ծ է, որ Աստուած խօսի ձեր հետ որեւէ սուրբգրային հատուածի միջոցով՝ վերագրելով այն ձեր կեանքի իրավիճակներուն: Հետս ճիշդ այդպիսի բան մը պատահեցաւ:

Աստուծոյ Հոգին վիճարկեց այն, թէ ինչպէս ես կ'որոշէի *բարին*՝ նոյն ձեւով, ինչպէս Յիսուս վարուեցաւ հարուստ երիտասարդ իշխանին հետ: Հասկնալով, թէ Աստուած ինչ կը յայտնէր ինձի՝ ես բարձրածայն ընդդիմացայ իմ պանդոկի սենեակին մէջ.

- Տէ՛ր, մի՞թէ այս խօսքը որեւէ կապ ունի այդ կնոջ հետ: Չէ՞ որ ան բազմաթիւ մարդասիրական ծրագիրներ իրականացուցած էր պատերազմական երկիրներուն մէջ տուժած եւ որբացած զաւակներուն համար, եւ...

«Ան բացայայտ ձեւով կը ցուցադրէր իր անարգանքը իր ընտանիքի իշխանութեան հանդէպ եւ իր շնութիւնը՝ ամբողջ աշխարհին հանդէպ, - ըսաւ Տէրը: - Ան հնազանդ չէր Ինձի»:

Տակաւին չհաւատալով լսածիս՝ ես կրկին հակառակեցայ.

- Բայց չէ՞ որ ան այդքան բարիք գործած էր մարդկութեան համար:

Ես լսեցի Աստուծոյ Հոգիին. «Որդի՛ս, Եւային չիրապուրեց բարիի եւ չարի գիտութեան ծառի չար կողմը, այլ՝ բարի»:

Ես սառեցայ տեղս, երբ պարզօրէն լսեցի այդ խօսքերը սրտիս մէջ: Քանի մը վայրկեան յետոյ բացի Ծննդոց գիրքի 3-րդ գլուխը՝ հաստատելու համար այն, ինչ որ լսեցի: Եւ անշուշտ, ես կարդացի.

«Կինը, տեսնելով, որ ծառը *աղէկ* էր կերակուրի համար, եւ *հաճելի*՝ աչքերուն ու *փափաքելի* իմաստուն ընելու համար, առաւ անոր պտուղէն ու կերաւ» (Ծննդոց 3.6):

Երբ տեսայ «*աղէկ*», «*հաճելի*» եւ «*փափաքելի*» բառերը, զարմանքէն քարացայ: Ես լսեցի Աստուծոյ Հոգիին ձայնը. «Գոյութիւն ունի բարի, որ Ինծմէ չէ: Այն հնազանդ չէ Ինծի»:

Ես նստեցայ՝ մտածելով այն ամէնուն մասին, ինչ որ լսեցի եւ կարդացի: Աստուծոյ խօսքը բացայայտեց իմ սխալմունքը եւ շտկեց զիս: Ակնյայտ էր, որ իմ բարիի չափանիշը կը տարբերէր բարիի աստուածային չափանիշէն:

Աստուած շարունակեց խօսիլ սրտիս հետ: Ան ցոյց տուաւ, որ «բարի» մարդոց եւ յատկապէս՝ քրիստոնէաներու մեծամասնութիւնը հրապուրուած չէ սեռական օրկաններով, դիւային երգերով, որոնք բացայայտօրէն ապստամբ բառեր ունին, ռոք-աստղերով, որոնք կը տարածեն սատանայապաշտութիւնը իրենց համերգներու ընթացքին, մասսայական սպանութիւններով, գողութեամբ եւ թալանով, կամ որեւէ ուրիշ վատ բաներով: Անոնցմէ շատերը խաբուած են՝ հրապուրուելով այնպիսի բաներով, որոնք ճիշդ, բարի եւ իմաստուն կը թուան, սակայն հակառակ են Անոր իմաստութեան: Գրուած է.

«Ճամբայ կայ, որ մարդուն շիտակ կ'երեւնայ, բայց անոր վերջաւորութիւնը մահուան ճամբան է» (Առակաց 14.12):

Եկէ՛ք սկիզբը անդրադառնանք այս խօսքի երկրորդ մասին. «բայց անոր վերջաւորութիւնը մահուան ճամբան է»: Շատ քրիստոնէաներ ուշադրութիւն չեն դարձներ ասոր, քանի որ կը մտածեն. «Ես փրկուած եմ, երկինք կ'երթամ եւ մահ չեմ տեսներ»: Անոնց կարծիքով՝ այս խօսքը կը վերաբերի միայն անհաւատներուն: Այնուամենայնիւ, եկէ՛ք նորէն տեսնենք, թէ Աստուած ինչ նկատի ունի այս խօսքին մէջ:

Նայեցէ՛ք «մահուան ճամբայ» արտայայտութեան: Սուրբ Գիրքը մէկ անգամ չէ, որ կը խօսի կեանքի ճամբայի եւ մահուան ճամբայի մասին: Աստուած կը յայտարարէ Իրենիմներուն (ոչ թէ անոնց, որոնք չեն պատկանիր Իրեն). «Տէրը այսպէս կ'ըսէ. «Ահա Ես ձեր առջեւ կը դնեմ կեանքի ճամբան ու մահուան ճամբան»» (Երեմեայ 21.8):

«Ճամբայ» բառը այս խօսքին մէջ կը նշանակէ՝ այն իմաստութիւնը, որմով մենք կ'ապրինք: Այս բառին յաճախ կը հանդիպինք Սուրբ Գիրքին մէջ: Յիսուս կը ձեւակերպէ ասիկա հետեւեալ ձեւով. «Նեղ դռնէն ներս մտէ՛ք. վասնզի լայն է այն դուռը ու ընդարձակ՝ այն ճամբան, որ դէպի կորուստ (դէպի մահ) կը տանի, եւ շատուոր են անոնք, որ անկէ կը մտնեն: Վասնզի նեղ է այն դուռը ու նեղուացք է այն ճամբան, որ դէպի կեանք կը տանի...» (Մատթէոս 7.13,14): Բայց մի՞թէ այս հատուածին մէջ Յիսուս կը խօսի միայն յաւիտենութեան մասին:

Աստուած դրաւ կեանքի ծառը Եդեմի պարտէզին կեդրոնը: Այն կը խորհրդանշէր Աստուծոյ կեանքի ճամբան՝ Անոր իմաստութիւնը: Պարտէզին կեդրոնը գտնուող միւս ակնառու ծառը կը կոչուէր բարիի եւ չարի գիտութեան ծառ: Այս ծառը կը խորհրդանշէր մահուան ճանապարհը կամ մարդկային իմաստութիւնը՝ առանց Աստուծոյ: Այս ծառի պտուղէն ճաշակելը չազդեց միայն Ադամի եւ Եւայի հանդերձեալ կեանքին վրայ. անոնք ակնթարթօրէն կրեցին ասոր ազդեցութիւնը: Մինչեւ այդ անմիտ քայլը, անոնք անկաշկանդ, արդիւնաւէտ, առողջ ու յաջողակ էին բոլոր այն գործերուն մէջ, որ իրենց սրտին մէջ որոշած էին ընել: Այնուամենայնիւ, հազիւ որ անոնք ճաշակեցին արգիլուած ծառէն, կեանքը ծանր դարձաւ: Յայտնուեցան հիւանդութիւնը, պակասութիւնը, լարուած ծանր աշխատանքը եւ այնպիսի դժուարութիւններ, որոնց անոնք ծանօթ չէին: Անոնք ոտք դրած էին մահուան ճամբան:

Այդուհանդերձ, Աստուած՝ Փրկիչ է: Ան արդէն ծրագրած էր, որ պիտի վերականգնէր այն, ինչ որ մարդը կորսնցուց: Ան *ուխտ կնքեց՝* կեանքի ճանապարհը վերականգնելու համար: Անոր իմաստութիւնը եւս մէկ անգամ պիտի տար մարդոց ճշմարիտ երջանկութիւն, հաճելի կեանք, խաղաղութիւն, առատութիւն եւ այլ մեծ առաւելութիւններ.

«Երանի՛ այն մարդուն, որ իմաստութիւն կը գտնէ... քու բոլոր ցանկալի բաներդ չեն կրնար անոր հաւասարիլ: Անոր աջ ձեռքին մէջ՝ օրերու երկայնութիւն եւ ծախ ձեռքին մէջ հարստութիւն ու փառք կայ: Անոր ճամբաները հաճոյական ճամբաներ են, եւ Անոր բոլոր շաւիղները խաղաղութիւն են: Անիկա Իրեն յարողներուն (ամուր բռնողներուն) կենաց ծառ է, ու Զինք ամուր բռնողներուն երջանիկ կ'ընէ» (Առակաց 3.13-18):

Աստուածաշունչը ցոյց կու տայ, որ կիրառելով Աստուծոյ իմաստութիւնը՝ մենք պիտի ունենանք պտղաբեր ընթացք, արդիւնաւէտութիւն, յաջողութիւն, երկար կեանք, ներքին խաղաղութիւն եւ պատիւ: Ծառը այնպիսի բան մըն է, որմէ մարդիկ կը ճաշակեն: Համաձայն այս

խօսքին՝ Եթէ մենք երթանք կեանքի (իմաստութեան) ճամբայով, պիտի դառնանք կեանքի ծառ՝ սնուցման աղբիւր անոնց համար, որոնք կը ճաշակեն մեր արդիւնքները: Հակառակը նոյնպէս ճշմարիտ է: Եթէ մենք ապրինք մարդկային իմաստութեամբ, մենք կործանարար ծառ պիտի դառնանք, եւ անոնք, որոնք պիտի ճաշակեն մեր արդիւնքները, պիտի ընթանան դէպի ծանր աշխատանքը, ճնշուածութիւնը, անարդիւնաւէտութիւնը, հիւանդութիւնը, եսասիրութիւնը եւ հոգեւոր մահուան այլ կողմնակի հետեւանքները:

Վերադառնալով Առակաց 14.12-ին՝ մենք կը կարդանք. «Ճամբայ կայ, որ մարդուն շիտակ կ'երեւնայ (կամ՝ շիտակ կը թուայ մարդուն), բայց անոր վերջաւորութիւնը մահուան ճամբան է»: Հասկնալի է, որ այս խօսքի առաջին մասը կրնայ վերաբերիլ ոեւէ մարդու՝ թէ՛ քրիստոնէայի, թէ՛ անհաւատի: Կայ ճամբայ, որ շիտակ կը թուայ. այն կը թուայ բարի, իմաստուն, օգտակար, մարտավարական, ընդունելի, շահաւէտ եւ այլն: Այնուամենայնիւ, մենք ստացած ենք պարզ զգուշացում. այն, ինչ որ բարի կը թուայ, կրնայ ըլլալ կործանարար, վնասակար եւ անարդիւնաւէտ, այսինքն՝ կրնայ ըլլալ մահուան ճամբան:

Եբրայեցիներու թուղթի հեղինակը կը գրէ այս զգաստացնող յորդորը հաւատացեալներուն.

«... որուն համար շատ ըսելիք ունինք... վասնզի ձեր լսելիքները բթացած են (դանդաղ եղաք լսելիքով). վասնզի թէպէտ պէտք է որ մինչեւ հիմա ուսուցիչ ըլլայիք, ժամանակին նայելով՝ պէտք է սորվեցնէիք, բայց դո՛ւք դեռ կարօտ էք սորվելու, թէ որոնք են Աստուծոյ պատգամներուն առաջին սկզբունքները: Դուք կաթի կը կարօտիք, ոչ թէ հաստատուն կերակուրի... Բայց հաստատուն կերակուրը չափահասներուն (կատարեալներուն) համար է, որոնց զգայարանները սովորութեամբ վարժուած են բարին ու չարը զանազանելու» (Եբրայեցիս 5.11, 12, 14):

Ակնյայտ է, որ զանազանութիւնը գլխաւոր գործօնն է, որմով պէտք է որոշել, թէ իրականութեան մէջ որն է բարին, եւ որն է՝ չարը: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ այն, ինչ որ իրականութեան մէջ բարի է, միշտ չէ, որ պարզ է մեր բնական մտքի, դատողութեան կամ զգայարաններուն համար:

Դուք կրնաք հարցնել. «Մի՞թէ Եբրայեցիներու թուղթի հեղինակը չըսաւ, որ մեր զգայարանները կրնան վարժուիլ՝ զանազանելու համար»: Այո, ան այդպէս ալ ըսաւ, բայց ո՞ր զգայարաններու մասին կը խօսէր ան: Կրնա՞ք տեսնել, որ այս հատուածի սկիզբը հեղինակը կ'ըսէ, որ ան կը գրէ այս քրիստոնէաներուն, որոնց լսողութիւնը ծանրացած է: Ո՞ր լսողութեան մասին է խօսքը: Արդեօ՞ք բոլոր եբրայեցի

հաւատացեալները լսողական գործիքներու պէտք ունէին: Հազիւ թէ: Ան կը խօսէր սիրտերով լսելու կարողութեան մասին: Յիսուս մշտապէս կը տորվեցնէր. «Ան, որ լսելու ականջ ունի, թող լսէ» (Մատթէոս 11.15): Մենք կրնանք ըսել, որ այս ուսմունքին ներկայ բոլոր մարդիկ ականջներ ունէին, բայց ոչ բոլորը զանազանող սիրտ ունէին, որպէսզի լսէին Աստուծոյ Խօսքը, որ լաւագոյնս էր անոնց համար:

Քիչ մը ուշ մենք աւելի խորունկ պիտի քննարկենք հոգեւոր զանազանութիւնը: Այնուամենայնիւ, այս պահուն կրնանք կարելոր հետեւութիւն մը ընել. առաջին հայեացքէն անկարելի է ճշդօրէն զանազանել բարին եւ չարը: Մինչեւ այդ հանդիպումը Աստուծոյ հետ Սթոքհոլմի պանդոկի սենեակին մէջ, ես կը հաւատայի, որ բարին ու չարը հասկնալի են մեզի համար, որ ատոնք պարզ եւ ակնյայտ են: Բայց եւ այնպէս, յիշեցէ՛ք եւս ուրիշ օրինակ մը: Յիսուսի խումբի գլխաւոր ընկերներէն մէկը՝ Պետրոսը, խօսեցաւ Յիսուսի պաշտպանութեան եւ երկարատեւ կեանքին մասին: Այն, որ ան լաւ խորհուրդ կու տար իր Ղեկավարին, անվիճելի կը թուար: Չնայած ատոր՝ Յիսուս խստօրէն յանդիմանեց Պետրոսը՝ ըսելով, որ անոր շահերը՝ Աստուծոյ շահերը չէին (տե՛ս Մատթէոս 16.21-23): Բացի այս հատուածէն՝ Աստուածաշունչին մէջ կան շատ ուրիշ օրինակներ, որոնց միջոցով կրնամ ցոյց տալ, որ բարին եւ չարը պարզ ու ակնյայտ չեն:

Սողոմոնը աղօթեց. «Տո՛ւր ինձի իմաստուն սիրտ, որ ես կարենամ... գիտնալ տարբերութիւնը ճիշդին եւ սխալին միջեւ» (Գ. Թագաւորաց 3.9, NLT): Մարդը պէտք է լուսաւորուած եւ վարժուած սիրտ ունենայ՝ տարբերելու համար այն, ինչ որ Աստուած բարի կամ չար կ'անուանէ: Եւան կատարեալ էր բոլոր բնագաւառներուն մէջ. այն պարտէզը, ուր ան կ'ապրէր, լեցուն էր Աստուծոյ հզօր եւ ազդեցիկ ներկայութեամբ: Այնուամենայնիւ, այն, ինչ որ ան զանազանեց որպէս լաւ, հաճելի եւ փափաքելի, իրականութեան մէջ չար ու կործանարար էր անոր համար: Ան խաբուեցաւ եւ կրեց ատոր հետեւանքները:

Այս գիրքի նպատակն է՝ Աստուծոյ Խօսքի միջոցով եւ Սուրբ Հոգիին օգնութեամբ լուսաւորել, այսինքն՝ ցոյց տալ տարբերութիւնը բարերարի եւ կործանարարի միջեւ, այսինքն՝ այն բաներուն, որոնք բարի են, եւ այն բաներուն, որոնք, ի վերջոյ, պիտի կործանեն ձեզ: Եթէ Եւան, որ կատարեալ էր եւ կ'ապրէր անթերի միջավայրի մէջ, կրցաւ խաբուիլ, որքա՛ն աւելի դիւրին կերպով մենք, ունենալով ոչ կատարեալ միտք եւ ապրելով ապականած աշխարհին մէջ՝ խտորուած հասարակութեան մէջ, կրնանք մոլորիլ ճշմարտութենէն՝ բարի անուանելով այն, ինչ որ կործանարար է մեզի համար:

ԻՆՉՊԵՍ ԱՏԻԿԱ ՊԱՏԱՀՇԵՑԱԼ

«Այնպես որ, մի՛ խաբուիք, իմ թանկագին եղբայրներ եւ քույրեր: Այն ամէնը, ինչ որ բարի եւ կատարեալ է՝ պարգեւ է, որ կ'իջնէ մեր քով Աստուծմէ՝ մեր Հօրմէն...»:

— Յակոբոս 1.16, 17, NLT

(Քրիստոնեան) չի մտածեր, որ Աստուած կը սիրէ մեզ, քանի որ մենք բարի ենք, այլ՝ որ Աստուած բարի պիտի դարձնէ մեզ, քանի որ Ան կը սիրէ մեզ...

— Բ. Ս. Լուիս

Այդ օրը Շուէտի մէջ ես նստած էի իմ պանդոկի սենեակին մէջ, Ացնցուած էի. զգացումներս կը փոթորկուէին: Աստուած պատասխանեց տրտմութեանս, որուն պատճառը այդ հանրայայտ կնոջ մահն էր. ես երկիւղով պատուած էի, բայց, միաժամանակ, մտահոգ էի: Ես շփոթուած էի եւ բազմաթիւ հարցումներ ունէի: Տարիներ շարունակ ծառայութեան մէջ էի. գիրքեր գրած էի եւ սորվեցուցած էի հաւատացեալներուն բոլոր աշխարհամասերուն մէջ՝ բացի Անթարքիքայէն: Այնուամենայնիւ, քիչ առաջ բացայայտուեցաւ իմ անիրազեկութիւնը այն մասին, թէ իրականութեան մէջ ի՞նչ է բարին:

Գլխաւոր հարցումները, որոնք շփոթ կը ստեղծէին մտքիս մէջ, հետեւեալն էին. «Ես ուրիշ ի՞նչ բարի համարած եմ, սակայն բարի չէ Աստուծոյ համար», եւ հաւասարապէս կարեւոր հարցում մը. «Ինչպիսի՞ն էղած են ատոր հետեւանքները ինձի համար»:

Մինչեւ այս հարցումներուն անդրադառնալը, արժէ վերադառնալ հոն, ուրկէ այս ամէնը սկիզբ առաւ. Եդեմի պարտէզը: Ասիկա տրամա-

բանական է, քանի որ Սուրբ Հոգին օգտագործեց այս օրինակը, որպեսզի գրաւեր ուշադրութիւնս այդ պանդոկի սենեակին մէջ: Պարտէզին մէջ հարց մը կայ տեղի ունեցածին վերաբերեալ, որ տարիներ շարունակ հանգիստ չէ ձգած զիս եւ շատ ուրիշ մարդոց. ինչպէ՞ս օձը կարողութիւն ունեցաւ Եւան Աստուծոյ դէմ լարել:

Եկէ՛ք մանրամասնօրէն դիտարկենք այս հարցը: Եւան կ'ապրէր կատարեալ միջավայրի մէջ: Ոչ մէկ հայր, ամուսին, տնօրէն կամ ուսուցիչ վիրաւորած էր զինք: Ան կ'ապրէր բացարձակ խաղաղութեան եւ անդորրի մէջ: Ան առատութիւն ունէր ամէն ինչի մէջ. անոր կեանքին մէջ ոչ մէկ հիւանդութիւն կամ կարիք կար: Ամենակարեւորը այն էր, որ անոր կեանքը ներդաշնակ էր իր Արարիչին հետ: Աստուծոյ ներկայութիւնը կը տարածուէր երկրի մթնոլորտին մէջ: Ան յաճախ կը քալէր պարտէզին մէջ Ադամին եւ Եւային հետ: Ուրեմն, ինչպէ՞ս օձը կրցաւ կինն ու տղամարդը Աստուծոյ դէմ լարել:

Եթէ գտնենք այս հանելուկին պատասխանը, մենք պիտի հասկնանք, թէ ինչպէ՛ս թշնամին այսօր նոյն բանը կրնայ ընել: Եթէ գիտնանք անոր մարտավարութիւնը, մենք այդքան դիւրութեամբ խաբէութեան զոհ չենք դառնար եւ անհնազանդ չենք ըլլար մեր Արարիչին:

Հոյակապ պարտէզ

Սկիզբը Աստուած ստեղծեց կատարեալ աշխարհ: Այն գեղեցիկ եւ անթերի էր՝ լեցուած առատութեամբ եւ բերկրանքով: Աստուած չստեղծեց միայն քանի մը տեսակի կենդանիներ, ծառեր եւ բնատեսարաններ: Ան ստեղծեց կենդանի արարածներու աւելի քան մէկ միլիոն տեսակ, բոյսերու աւելի քան երկու հարիւր յիսուն հազար տեսակ, ծառերու աւելի քան հարիւր հազար տեսակ եւ քարերու, հողի ու բնական պաշարներու անթիւ տեսակներ: Երկիրը զլուխագործոց էր: Արդէն հազարաւոր տարիներ անցած են, իսկ գիտնականները տակաւին կ'ուսումնասիրեն այն եւ կը սքանչանան ասոր բարդութեամբ: Անոնք տակաւին չունին լիարժէք պատկերացում մեր աշխարհին մասին եւ, հաւանաբար, երբեք ալ չունենան:

Աստուած ստեղծեց այս ամէնը միայն Իր սիրոյ առարկայի՝ մարդուն համար: Եւ չնայած որ ամէն ինչ երկրի վրայ արդէն իսկ աներեւակայելի էր, Արարիչը չսահմանափակուեցաւ ատորմով եւ ա՛լ աւելի յառաջ գնաց: Ան երկրի վրայ անձամբ տնկեց եւ ոչ թէ հրաշալի պարտէզ ստեղծեց:

Ես կը սիրեմ բնապատկերներ եւ պարտէզներ: Անկեղծ ըսելու համար՝ ես պարտէզներու մէջ չեմ սիրեր աշխատիլ. հարցուցէ՛ք ասոր մասին կնոջս՝ Լիզային: Ան պիտի խոժոռէ դէմքը, երբ պատմէ, թէ ինչ-

պիսի արհամարհանքով ես կը վերաբերիմ այգեգործութեան: Ես պարզապէս կը սիրեմ նստիլ կամ զբօսնել խնամուած պարտէզներուն մէջ, պտղատու այգիներուն մէջ, խաղողի այգիներուն մէջ եւ ծառաստաններուն մէջ: Ես կը գմայլիմ գոյներով, բոյրերով, հողով եւ տարատեսակ ծառերով ու բոյսերով:

Վերջերս ես կը քարոզէի Գերմանիոյ Քոնսթանց քաղաքին մէջ, որ կը կրէ իր մօտակայքը գտնուող լիճին անունը: Քոնսթանց լիճը ամենամեծն է Գերմանիոյ մէջ. այն կը լեցուի Ալպեան լեռներու հալած ձիւնի ջուրերով: Լիզան եւ ես այցելած էինք մեր մտերիմ ընկերներուն՝ հովիւ Ֆրէյմութին (վերջինս լաւ գերմանական անուն է), եւ անոր կնոջը՝ Եոաննային:

Այդ ընթացքին մենք քանի մը ազատ օր ունէինք, եւ մեր հիւրընկալները սիրով առաջարկեցին մեզ շարք մը գուարձալի զբաղումներ՝ մեր ժամանակը յագեցած դարձնելու համար: Մենք գիտցանք, որ Քոնսթանցի մէջ անթիւ զբաղումներ կան. այնուամենայնիւ, անոնց առաջարկներու կարգին չկար այն, ինչ որ ես ամէնէն շատ կը փափաքէի:

Քոնսթանց լիճին վրայ վայր մը կայ, որ կը կոչուի Ծաղիկներու կղզի: Այդ կղզիի իսկական անուանումը Մայնաու է, բայց Ծաղիկներու կղզի անուանումը ատելի լաւ կը նկարագրէ այն, որովհետեւ ամբողջ կղզին մեծ պարտէզ մըն է: Ես կ'ուզէի զբօսնել հոն, բայց մենք պէտք է առաւօտեան ժամերէն մինչեւ երեկոյ հոն ըլլայինք՝ կղզին ամբողջութեամբ տեսնելու համար:

Սկիզբը Լիզան, Եոաննան եւ Ֆրէյմութը կը մտածէին, որ ես կատակ կ'ընէի, երբ խնդրեցի անոնցմէ այդ կղզին երթալ: Ի վերջոյ, ո՞վ պիտի պատկերացնէր, որ մարզանք եւ մրցակցային խաղեր սիրող մարդը այսպիսի ծանծրալի զբաղումը մը պիտի նախընտրէր: Երբ ես քանի մը անգամ ըսի այդ մասին, մեր ընկերները պատասխանեցին.

- Կը կարծէինք՝ դուն լուրջ չէիր խօսեր: Դուն իսկապէ՞ս կ'ուզես երթալ հոն:

- Այո՛, պատասխանեցի ես:

Այսպիսով, մենք ծրագրեցինք մեր շրջագայութիւնը, թէեւ ոչ ոք՝ բացի ինձմէ, խանդավառուած էր այս այցելութեամբ:

Այդ օրը շատ տպաւորիչ էր: Մենք ինքնաշարժով գացինք կղզի՝ անցնելով գետին վրայի կամուրջէն, մուտքի տոմսեր գնեցինք կղզիին դարպասին քովէն եւ սկսանք մեր շրջագայութիւնը: Այն գրեթէ անմիջապէս հրապուրեց զիս: Ես հիացած էի այդ իսկայ պարտէզի գեղեցկութեամբ եւ բազմազանութեամբ: Եւ ամենահրաշալիս այն էր, որ ես առանձին չէի. իմ երեք ուղեկիցներու կատակները եւ քնծիծաղները դադրեցան, երբ որ բոլորս սկսանք դիտել այդ գլուխգործոցը:

Ամէն ինչ այդ հսկայ պարտէզին մէջ բերկրանք կը պատճառէր մարդու աչքին: Գեղեցիկ, կանոնաւոր ծաղկամարգերը կ'ընդգծէին իրենց միջեւ գտնուող զբօսանքի արահետները այնպէս, որ ամէն մէկ բոյս առանձին կ'երեւէր: Հոն կային ծաղիկներէ պատրաստուած քարտէզներ, տարբեր ծառերէ, բոյսերէ եւ ծաղիկներէ պատրաստուած կենդանիներու, մանուկներու եւ նոյնիսկ տուններու արձաններ: Այդ սքանչելի տեսարանը կ'ամբողջանար բազմաթիւ հոյակապ ջրային աւազաններով՝ ցրուած կղզի-պարտէզով մէկ:

Բոլորիս համար ալ հաճելի էր այդ գեղեցիկ եւ ստեղծարար վայրը, որ ամբողջութեամբ տեսնելու համար կէս օրէն աւելի ժամանակ կը պահանջուէր (մենք ընդամէնը տեսանք ատոր կէսը): Այդ օրը ես յաճախ կը մտածէի. «Եթէ պարզ մարդիկ կարողութիւն ունեցած են այսպիսի չքնաղ պարտէզ մը ստեղծել ու մշակել, որ իսկական գեղեցկութեան տօն է աչքերու համար եւ լեցուած է բազմապիսի բուրմունքներով՝ մարդու հոտառութեան զմայլանք պատճառելու համար, ինչպիսի՞նքն պէտք է ըլլար Աստուծոյ պարտէզը»: Եղենը պատրաստուած չէր հմուտ այգեգործներու կամ բուսապատման մասնագէտներու կողմէն, այլ՝ անձամբ Տէր Արարիչի:

Աստուած տնկեց հարուստ գոյներով եւ առատ բուրմունքներով լեցուն Եդեմական պարտէզը, դրաւ հոն Ադամը եւ անոր քով բերաւ բոլոր կենդանիները: Տէրը կ'ուզէր տեսնել, թէ ինչպէ՛ս Ադամ պիտի անուանէր այս երկրին վրայ գոյութիւն ունեցող աւելի քան 1.25 միլիոն տեսակի կենդանի արարածները: Որքա՛ն խելացի պէտք է ըլլար այդ մարդը: Բայց Ադամը ոչ միայն կրնար անուններ տալ բոլոր կենդանի արարածներուն, այլեւ յիշել ամէն մէկուն անունը՝ առանց «iPad» ունենալու եւ «Google»-էն օգտուելու: Ադամը գերազանց միտք ունէր:

Այնուամենայնիւ, Աստուած չէր բերած կենդանիները Ադամին քով՝ պարզապէս ատոնք անուանելու համար. Ան նոյնպէս կ'ուզէր տեսնել, թէ Ադամը ո՞ր կենդանին պիտի ընտրէր՝ որպէս իր ընկեր:

Մարդը անուանեց բոլոր թռչունները եւ կենդանիները, բայց անոնցմէ ոչ մէկը յարմար էր անոր՝ որպէս ընկեր եւ օգնական: Այդ ժամանակ Տէր Աստուած խորունկ քուն բերաւ մարդուն վրայ, եւ երբ ան քնացած էր, հանեց անոր կողոսկրներէն մէկը եւ գոցեց միսը: Ան կին կազմեց այդ կողոսկրէն եւ բերաւ զինք մարդուն քով: Տեսնելով անոր՝ Ադամ ըսաւ.

«Վերջապէս, ահա անձ մը, որ իմ տեսակէն է՝ ոսկոր՝ վերցուած իմ ոսկորէն, եւ միս՝ վերցուած իմ միսէն: «Կին» է անոր անունը, որովհետեւ ան վերցուեցաւ մարդէն» (Շննդոց 2.23, TEV):

Կինը տղամարդուն կատարեալ ընկերն է: Անոնք կը լրացնեն եւ կ'ամբողջացնեն զիրար: Անոնք միասին առաջարկ ստացան՝ հսկել եւ պահպանել մոլորակը, եւ յատկապէս՝ պարտէզը:

Մինչեւ այն ժամանակ, երբ Եւան դուրս բերուեցաւ Ադամէն, Աստուած պարզ պատուէր տուած էր անոր. «Դուն կրնաս ուտել պարտէզի բոլոր ծառերէն՝ բացի այն ծառէն, որ գիտութիւն կու տայ այն մասին, թէ ինչն է լաւը եւ ինչն է վատը: Դուն պէտք չէ ուտես այդ ծառի պտուղէն. եթէ ուտես, նոյն օրը պիտի մահանաս» (Ծննդոց 2.16, 17, TEV):

Մենք չենք գիտեր, թէ ե՛րբ տեղի ունեցաւ յաջորդ գլուխին մէջ նկարագրուած պատմութիւնը: Ատիկա կրնար ըլլալ քանի մը շաբաթ, տարի կամ տասնամեակ յետոյ, թերեւս՝ շատ աւելի ուշ: Բայց եկաւ այն օրը, երբ ամենախորամանկ կենդանին՝ օձը, թիրախ դարձուց Եւան եւ վիճարկեց Աստուծոյ պատուէրը:

(Ինչպէ՞ս օձը կրնար խօսիլ: Անձամբ ես կը հաւատամ, որ մինչեւ մարդուն անկումը կենդանիները կրնային հաղորդակցիլ մարդուն հետ: Ատիկա է պատճառը, թէ ինչու Եւան չզգուշացաւ կամ չանհանգստացաւ, երբ օձը մօտեցաւ անոր: Գիտութիւնը այն մասին, որ կենդանիները կրնան խօսիլ, պէտք է որ փոխանցուած ըլլայ սերունդներով, քանի որ երբ Բաղաամի էշը խօսեցաւ Թուոց 22.21-35-ին մէջ, Բաղաամը նոյնպէս չգարմացաւ: Ան պարզապէս շարունակեց խօսակցութիւնը իր բեռնակիր անատունին հետ՝ առանց քիչ մը զարմանալու կամ յանկարծակիի գալու):

Ան ինչպէ՞ս ըրաւ ատիկա

Առիթ տուէ՛ք կրկնել, թէ ինչո՞ւ մենք կ'ուսումնասիրենք Եդեմի մէջ տեղի ունեցած այս իրադարձութիւնը: Մեր նպատակն է՝ հասկնալ, թէ ինչպէս սատանային կողմէն վերահսկուող օձը կարողացաւ դրդել Եւան, որ կ'ապրէր կատարեալ պայմաններու մէջ, դուրս ելլել Աստուծոյ դէմ: Տեսնենք, թէ ինչպէ՞ս ան մօտեցաւ Եւային.

«Եւ կնոջ ըսաւ. «Իրա՞ւ Աստուած ըսաւ, թէ Պարտէզին որեւէ ծառէն պիտի չուտէ՛ք»» (Ծննդոց 3.1):

Այս հարցումով օձը ըրաւ իր առաջին մարտավարական քայլը: Անոր նպատակն էր՝ հեռացնել Եւան աստուածային իմաստութենէն: Անոր խորամանկ հարցումը գայթակղեցուց կինը՝ մէկ ակնթարթի մէջ, հեռացնելով անոր տեսադաշտէն անթիւ պտղատու ծառերը, որոնցմէ ան կրնար օգտուիլ, եւ ուղղեց Եւային ուշադրութիւնը միակ արգիլուած ծառին:

Աստուած ըսած էր Ադամին եւ Եւային. «Դուք կրնաք ուտել պարտէզի ամէն ծառէ՛ բացի...»: Անոր առատածեռնութիւնը կը շեշտադրէր

հետեւեալը. «Դուք կրնաք ուտել ամէն ծառէ»: Ամբողջ աշխարհին մէջ գոյութիւն ունին հազարաւոր յայտնի պտղատու ծառեր, եւ կը կարծեմ՝ պարտէզին մէջ կար բոլորէն: Որքա՛ն խորամանկ էր օծը: Եւան կրնար ուտել հազարաւոր ծառերէն, բայց սատանային աղաւաղուած հարցումէն յետոյ ան չէր կրնար կտրել իր հայեացքը այն միակ ծառէն, որ արգիլուած էր:

Նոյնը տեղի կ'ունենայ այսօր: Աստուած այնքա՛ն շատ պարգեւներ տուած է իւրաքանչիւրիս՝ բոլոր երկնային օրհնութիւնները (տե՛ս Եփես. 1.3-ը): Անհրաժեշտ է ամբողջ գիրք մը գրել՝ պարզապէս աստուծոյ թուարկելու համար: Աստուծոյ Խօսքը նոյնպէս կ'ըսէ մեզի, որ ամէն բան մերն է Քրիստոս Յիսուսին մէջ (տե՛ս Ա. Կորնթ. 3.21-23): Իսկ ո՞րն է մեր թշնամիին մարտավարութիւնը: Նոյնը՝ ինչ որ պարտէզին մէջ: Ան կը ձգտի քողարկել Աստուծոյ առատածեռնութիւնը, որպէսզի մենք ընդամենը տեսնենք այն, ինչ որ «պահուած» է: Իսկ ինչո՞ւ Աստուած պէտք է ինչ որ բան մը ետ պահէ մեզմէ: Մենք պիտի խօսինք այս մասին քանի մը էջ յետոյ, բայց յստակ ըսելու համար՝ Ան կ'ընէ ատիկա մեր օգտին համար: Ան մեզմէ աւելի լաւ գիտէ, թէ ի՛նչն է աւելի օգտակար մեզի համար:

Եւան արագօրէն պատասխանեց խօսող օծին՝ հենուելով այն ճշմարտութեան վրայ, որ ան գիտէր.

«Պարտէզին ծառերու պտուղէն կրնանք ուտել, բայց պարտէզին մէջտեղը եղած ծառին պտուղին համար Աստուած ըսաւ. «Անկէ մի՛ ուտէք եւ անոր մի՛ դաչիք, որպէսզի չմեռնիք»» (Ծննդոց 3.2, 3):

Հետաքրքրական է նշել, թէ որքա՛ն անստոյգ էր Եւային պատասխանը: Աստուած ոչինչ ըսած էր այդ ծառի պտուղին չդաչելու մասին: Թերեւս այս դիտարկումը անկարելի թուայ, բայց այն կը բացատրէ, թէ ինչն'ու օծը ընտրեց յատուկ կինը, եւ ոչ թէ Ադամը:

Երբ այս պատուէրը տրուեցաւ, Եւան տակաւին չկար: Այնպէս որ, ան չէր լսած այն պատուէրը ուղղակի Աստուծոյ բերանէն, ինչպէս Ադամը: Անձամբ ես կը հաւատամ, որ մէկ անգամ՝ այդ դէպքէն առաջ, երբ Ադամն ու Եւան կը զբօսնէին այդ լայնատարած պարտէզին մէջ, անոնք մօտեցան բարիի եւ չարի գիտութեան ծառին: Ադամ մատնացոյց ըրաւ այն եւ պատմեց Եւային, թէ Աստուած ի՛նչ պատուիրած էր իրեն այդ ծառի մասին: Ես կ'անուանեմ այս տեսակի հաղորդակցութիւնը *փոխանցուած* գիտելիք: Ադամի պարագային այդ պատուէրը *յայտնուած* գիտելիք էր: Ո՞րն է տարբերութիւնը: Յայտնուած գիտելիքը այն է, երբ Աստուած ինչ որ բան մը ցոյց կու տայ անձամբ մարդուն:

Յայտնուած եւ փոխանցուած գիտելիք

Անգամ մը Յիսուս հարցուց Իր աշակերտներուն. «Մարդիկ Ինձի համար ո՞վ կ'ըսեն, որ մարդու Որդին ըլլայ» (Մատթէոս 16.13): Աշակերտները մէկ առ մէկ թուարկեցին այն ամէնը, ինչ որ անոնք լսած էին ուրիշներէն. յարութիւն առած Յովհաննէս Սկրտիչը, Եղիան, Երեմիան կամ ուրիշ մարգարէ մը. այսինքն բոլոր այն տարբերակները, որոնք անոնք լսած էին իրենց օրերու «Թուիթըր»-էն, «Ֆէյսպուք»-էն, «Ինսթագրամ»-էն եւ «պլոկ»-ներէն:

Հազիւ որ Յիսուս շրջանցեց այն ամէնը, ինչ որ անոնք գիտէին փոխանցուած գիտելիքի միջոցով, Ան հարցուց. «Հապա դուք Ինձի համար ո՞վ կ'ըսէք, թէ եմ» (Խօսք 15):

Աշակերտները լռեցին. անոնք պատասխան չունէին: Եթէ Յիսուսը առաջին հարցումը չտար, անոնք, հաւանաբար, պիտի պահէին այլ մարդոց կարծիքներու ազդեցութիւնը, եւ անոնց պատասխանները պիտի ըլլայն՝ փոխանցուած գիտելիքի համաձայն: Յիսուս մտադրուած տուաւ այս երկու հարցումները, որպէսզի հեռացնէր անոնցմէ երկրորդական գիտելիքը եւ գիտնար, թէ Աստուած ինչ յայտնած էր անոնց: Պետրոսը միակն էր, որ պատասխան ունէր: Ան փախցուց բերանէն. «Դուն ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ Որդին» (Խօսք 16):

Կրնամ պատկերացնել, որ Յիսուսը ժպտաց, ձեռքը Պետրոսին ուսին վրայ դրաւ՝ անոր խօսքերը հաստատելու համար, եւ յայտարարեց. «Մարմինը եւ արիւնը քեզի չյայտնեցին ասիկա, հապա Իմ Հայրը, որ Երկինքն է» (Խօսք 17): Պետրոսը պարզապէս չկրկնեց տեղեկութիւն մը, որը ան առջանց կարդացած էր կամ, պատահաբար, տեսած էր ինչ որ ամսագիրի մը մէջ: Ան ըսաւ այն ճշմարտութիւնը, որ Աստուած յայտնած էր յատուկ իրեն:

Անկէ յետոյ Յիսուս յայտարարեց, որ եկեղեցին պիտի կառուցուի ճիշդ այս *յայտնութեան գիտելիքին* վրայ, եւ դժոխքի ուժերը չեն կրնար կանգնեցնել անոնց, որոնք այս գիտելիքը ունին: Ասոր կը հետեւի, որ դժոխքի ուժերը կրնան աւելի դիւրութեամբ խաբել անոնց, որոնք ունին միայն *փոխանցուած գիտելիք*:

Կան շատ միջոցներ՝ յայտնուած գիտելիք ստանալու համար: Ատիկա կրնայ տեղի ունենալ, երբ մենք Աստուածաշունչ կամ որեւէ ոգեշնչուած գիրք կը կարդանք, երբ կը լռենք աղօթքի մէջ, երբ կը լսենք մեր հովիւին քարոզները, երբ տեսիլքներ կը ստանանք, ինչպէս Պետրոսը՝ տան տանիքին (տե՛ս Գործք 10.9-16), կամ՝ երբ պարզապէս Սուրբ Հոգին Աստուծոյ Խօսքը մեր սրտերուն մէջ կը յայտնէ: Դժուար

է ընդհանրացնել այն, թէ ինչպէս ասիկա տեղի կ'ունենայ: Երբեմն դուք կրնաք մեղմ, բարակ ձայն լսել ձեր սրտերուն մէջ: Այլ պարագաներու դուք պարզապէս *գիտէք*, որովհետեւ յայտնութիւնը ձեր հոգիին մէջ դրուած է: Երբեմն ձեր սիրտը կը սկսի արագօրէն բաբախել, եւ դուք կը զգաք Աստուծոյ ներկայութիւնը, երբ կը կարդաք Աստուծոյ խօսքը: Ինչ կերպով ալ ասիկա գայ, գլխաւորը այն է, որ դուք գիտէք, որ լսած էք Աստուծմէ, եւ ոչ ոք կրնայ խլել ձեզմէ այդ յայտնուած գիտելիքը:

Ի հակադրութիւն ասոր՝ փոխանցուած գիտելիքը կու գայ, երբ դուք ընդամէնը կը լսէք կամ կը կարդաք, թէ այլ մարդիկ ի՛նչ լսած են Աստուծմէ: Այս գիտելիքը կրնայ ճիշդ ըլլալ, բայց եթէ Հոգին ասիկա չի յայտնէր ձեր սրտին, այն կրնայ դիրութեամբ աղաւաղուիլ:

Օրինակ՝ ես լսած եմ, թէ ինչպէս որոշ մարդիկ համարծակ կը ցուցադրեն իրենց աստուածաշնչեան գիտելիքները. «Գիտես, Ճո՛ն, դրամը՝ բոլոր չարիքներու արմատն է»: Այս ապակողմնորոշուած մարդիկ կարդացած են կամ լսած են ծառայողի մը, որ մէջբերած է Ա. Տիմոթէոս 6.10-ը. «Որովհետեւ *սէրը* դրամի հանդէպ՝ ամէն տեսակ չարիքի արմատն է» (NLT):

Դրամը՝ ընդամէնը գործիք է, եւ վերջ: Դուք կրնաք ճիշդ կամ սխալ օգտագործել այն: Ատրճանակը՝ գործիք է: Գողի ձեռքին մէջ այն պիտի օգտագործուի սխալ ձեւով՝ գողութեան համար: Այնուամենայնիւ, ոստիկանի ձեռքին մէջ ատրճանակը առիթ չի տար, որ յանցագործը բռնաբարէ կամ սպաննէ ինչ որ կին մը: Երկու պարագային ալ ատրճանակը կ'օգտագործուի, որուն մէջ ոչ մէկ բարի կամ չար բան կայ: Նոյնը դրամն է. դրամը՝ գործիք է, եւ այն ամէն տեսակ չարիքի արմատը չէ: *Դրամի հանդէպ սէրը* ամէն տեսակ չարիքի արմատն է:

Այսպիսի սխալ մեկնաբանութիւններ ընող մարդիկ ունին փոխանցուած, ոչ թէ յայտնուած գիտելիք: Իմ փորձառութենէն կրնամ ըսել, որ երբեմն այս փոխանցուող գիտելիքը շատ աւելի վտանգաւոր է, քան գիտելիքի իսպառ բացակայութիւնը:

Այն, թէ ինչպէս Եւան նկարագրեց Աստուծոյ պատուէրը արգիլուած ծառի պտուղի մասին (ըսելով, որ ատոր կարելի չէ դաչիլ), ցոյց կու տայ, որ ան ընդամէնը փոխանցուած գիտելիք ունէր: Աստուծոյ ներկայութիւնը պարտէզին մէջ էր: Աստուած կը քալէր Ադամին եւ Եւային հետ, ամենայն հաւանականութեամբ՝ ամէն օր (տե՛ս Ծննդոց 3.8): Հրաշալի է, որ Ադամը պատմած էր իր կնոջը, թէ Աստուած ինչ պատուիրած էր, բայց կ'երեւի թէ ան անծամբ չէր փնտռած իր Արարիչը՝ Անոր ըսած խօսքը հասկնալու համար:

Աստուած փնտռող մարդոց առանձնայատկութիւններէն մէկը պէտք է ըլլայ Աստուծոյ աւելի խորունկ ճանչնալու եւ հասկնալու ձգտումը:

Տեսէ՛ք, թէ ի՛նչ ըրին Բերիայի մէջ ապրող մարդիկ, երբ Պօղոսը բերաւ անոնց այն ուղերձը, որ ստացած էր Երկինքէն.

«Եւ Բերիայի մարդիկ աւելի բաց միտք ունէին, քան Թեսաղոնիկեցիները, եւ անոնք պատրաստակամօրէն լսեցին Պօղոսին ուղերձը: Անոնք օրըստօրէ կը քննէին Սուրբ Գիրքը՝ տեսնելու համար, թէ արդեօ՞ք Պօղոսն ու Շիղան ճշմարտութիւնը կը սորվեցնէին» (Գործք 17.11, NLT):

Բերիացիները կը հասկնային, թէ ի՛նչ պէտք էր ընել: Անոնք ուշադրութեամբ լսեցին Պօղոսը, իսկ յետոյ սկսան անձամբ քննել Սուրբ Գիրքը: Ինծի հաճելի կը թուար «բաց միտք ունենալ» արտայայտութիւնը: Անոնց միտքը բաց էր՝ Սուրբ Հոգիին ձայնը լսելու համար: Հաղորդակցութիւնը անոնց հոգիին եւ մտքին միջեւ՝ ազատ էր, պատրաստ՝ ընդունելու յայտնուած գիտելիքը:

Ի տարբերութիւն այսօրուան բազմաթիւ հաւատացեալներու՝ բերիացիներու պատկերացումները չէին բաղկացած համացանցէն ներբեռնուած նիւթերէն, «պլոկ»-ներուն մէջ տեղադրուած յօդուածներէն, կամ քննարկումներէն՝ «Ֆէյսպուք»-ին եւ «Թուիթըր»-ին մէջ: Նոյն ձեւով, երբ Յիսուս կը խօսէր աշակերտներուն հետ Իր ինքնութեան մասին, Ան հետաքրքրուած չէր այն կարծիքներով, որոնք տարածուած էին Իր օրերու ընկերվարական ցանցերուն մէջ: Ան կը հարցնէր. «Տղաներ, Աստուած ի՞նչ յայտնած է *ձեզի*»:

Թերեւս անգամ մը, երբ Պետրոս Յիսուսին եւ աշակերտներուն հետ էր, լսեց ինչ որ մէկուն խօսքերը. «Յիսուսը պէտք է որ Քրիստոսը ըլլայ»: Այդ պահուն, Սուրբ Հոգիին ներկայութեան մղումով, այդ խօսքերը պայթեցան անոր մտքին եւ սրտին մէջ. «*Անշուշտ: Ան Աստուծոյ Որդին է: Ան Քրիստոսն է: Ճիշդ է: Մինչեւ հիմա ես չէի հասկցած, բայց հիմա գիտեմ, որ Ան է Քրիստոսը*»: Յաճախ Աստուած ճիշդ այսպէս կը յայտնէ է Իր ճշմարտութիւնը մեր սրտերուն:

Կարելի է՝ Պետրոսին հետ ատիկա ուրիշ ձեւով տեղի ունեցաւ: Այդ յայտնութիւնը անոր սրտին մէջ կրնար գիշերով եկած ըլլար՝ երբ ան արդէն կը քնանար, կամ ցերեկով՝ երբ ան կը քալէր մէկ քաղաքէն միւսը: Թերեւս ատիկա կատարուեցաւ այն պահուն, երբ ան Յիսուսին խօսակցութեան կը հետեւէր իր խումբի անդամներէն մէկուն հետ: Կամ, հաւանական է, որ պահ մը, առանց Պետրոսի հասկնալուն, Աստուած Քրիստոսի գալուստը նախագգուշացնող խօսք մը յիշեցուց անոր Հին կտակարանէն, օրինակ՝ Եսայեայ 9.6, 7-ը:

Նոյնպէս եւ Պետրոսի պայծառացումը կրնար այն պահուն ըլլալ, երբ Յիսուս ինչ որ մէկուն կը բժշկէր: Յանկարծ այս աշակերտը յիշեց

իր մանկությունը, երբ զինք ուսուցանող ռաբբունիներէն մէկը Հին կտակարանէն Մեսիայի գալստեան մասին մարգարէութիւն մը կը կարդար. «Ան մեր հիւանդութիւնները վեր առաւ եւ մեր ցաւերը կրեց» (Մատթէոս 8.17, որ կը հաստատէ Եսայեայ 53.4-ը):

Յայտնութիւնը Յիսուսի ճշմարիտ ինքնութեան մասին՝ կրնար Պետրոսին քով շատ տարբեր ձեւերով գալ. այնուամենայնիւ, կարելորդ այն է, որ *Ինքը՝ Աստուած յայտնեց* անոր *այդ մասին*:

Կը կարծեմ՝ ես կրնամ ըսել, որ Եւային հետ այսպիսի բան տեղի չէր ունեցած: Ան չունէր յայտնուած *գիտելիք*. ան բաւարարուած էր *փոխանցուած* գիտելիքով: Թեւեւ Ադամը հաղորդագրութիւն մը ուղարկած էր անոր «Թուիթթըր»-ով. «Սիրելի՛ս, ես տեսայ, որ դուն կը նայէիր բարիի եւ չարի գիտութեան ծառին: Չդպչի՛ս ատոր: Աստուած ըսաւ, որ մենք պիտի մահանանք, եթէ ուտենք այդ ծառին պտուղը»:

Երկրորդ փուլ

Այժմ՝ երբ օձը Եւային ուշադրութիւնը կեդրոնացուցած էր միակ արգիլուած ծառի վրայ, ան կրնար անցնիլ իր համոզիչ հնարքի երկրորդ քայլին: Այս նոր քայլը ուղղակիօրէն հակառակ էր այն խօսքին, որ Աստուած ըսած էր: Չնայած ատոր՝ այն ճարպիկօրէն ձեւակերպուած եւ տրամաբանական կը թուար, ինչպէս նաեւ օգուտ կը խոստանար: Ահա թէ ինչպէս սատանան հակառակեցաւ Աստուծոյ խօսքին.

«Եւ օձը կնոջ ըսաւ. «Ոչ թէ անշուշտ պիտի մեռնիք: Քանզի Աստուած գիտէ, թէ այն օրը, որ անկէ ուտէք, աչքերնիդ պիտի բացուին եւ Աստուծոյ պէս պիտի ըլլաք՝ բարին եւ չարը գիտնալով»» (Ծննդոց 3.4, 5):

Ուշադրութիւն դարձուցէ՛ք օձին բառերուն. «...քանզի Աստուած գիտէ...»: Ասիկա կը նշանակէ, որ Ադամէն եւ Եւայէն ինչ որ բան մը պահուած էր: Եւ ոչ թէ պարզ բան մը, այլ՝ այնպիսին, ինչ որ աւելի լաւ պիտի դարձնէր Ադամին ու Եւային կեանքը, այսինքն՝ պիտի բարելաւէր անոնց կեանքի որակը: Քանի որ այդ ծառին մէջ *բարի* կար, օձը մանրակրկիտ հաշուարկեց իր տրամաբանական քայլերը, որպէսզի ատոնք ողջամիտ թուային, եւ ամէն ինչ յաջողեցաւ:

«Կինը, տեսնելով, որ ծառը աղէկ (լաւ) էր ուտելու համար եւ հաճելի աչքերուն եւ փափաքելի իմաստուն ընելու համար, առաւ անոր պտուղէն եւ կերաւ» (Ծննդոց 3.6):

Եւան տեսաւ, որ ծառը լաւ էր, հաճելի էր, եւ որ այն իմաստութիւն պիտի տար իրեն: Այս երեքն ալ ցանկալի եւ օգտաւէտ յատկանիշներ էին:

Շարունակ նայելով ծառին՝ Եւային մտքերը նոր ուղղութեամբ ընթացան. «Մէկ վայրկեան. կը պարզուի՝ կայ ինչ որ բարի եւ օգտակար բան մը այդ ծառին մէջ, եւ Աստուած արգիլած է ատիկա: Անուսինիս եւ իմ կեանքը կրնայ աւելի լաւ ըլլալ: Մենք կրնանք աւելի իմաստուն ու երջանիկ ըլլալ, բայց ատիկա պահուած է մեզմէ: Ես կը մտածեի, որ մեր Արարիչը սիրող եւ շնորհալի էր, բայց ի յայտ եկաւ, թէ Ան կը խաբէ մեզ: Ան ինչ որ բարի բան մը կը պահէ մեզմէ»:

Այդ միտքը կը թափանցէր անոր գիտակցութեան մէջ, եւ ամէն վայրկեան այդ ծառին պտուղը ուտելու ցանկութիւնը աւելի կը զօրանար: Ան կ'արդարացնէր այդ ցանկութիւնը, քանի որ տակաւին կը հաւատար, որ այդ ծառին մէջ ինչ որ բարի բան մը կայ իրեն համար:

Օձին վերջնական նպատակն էր՝ աղաւաղել Եւային պատկերացումը Աստուծոյ բնաւորութեան մասին: Յաջողութեան հասնելու պարագային ան պիտի դրդէր Եւային Աստուծոյ դէմ ելլելու: Ինչո՞ւ: Որովհետեւ Աստուծոյ իշխանութիւնը հաստատուած է եւ կը պահուի Անոր բնաւորութեամբ:

Դաւիթ թագաւորը գրեց. «Արդարութիւն եւ իրաւունք են աթոռիդ (կամ՝ գահիդ) հաստատութիւնը» (Սաղմոս 89.14): Քանի որ Դաւիթը ինքը թագաւոր էր, անոր յայտնի էին յարատեւող առաջնորդի յատկանիշները: Եթէ թագաւորը ճշմարիտ, արդար եւ իմաստուն է, անոր թագաւորութիւնը չի վերջանար: Իսկ եթէ իշխանը ստախօս եւ անարդար է, անոր թագաւորութիւնը տեսական չ'ըլլար:

Աստուծոյ բնաւորութիւնը կատարեալ է, բայց օձին նպատակն էր՝ հակառակը համոզել Եւային: Ան կը ձգտէր խեղաթիւրել ակնյայտ փաստերը: Արգիլուած ծառը լաւ ու հաճելի տեսք ունէր: Կը թուար՝ այն կրնար իմաստութիւն տալ, բայց յաճախ արտաքինը խաբուսիկ կ'ըլլայ: Ահա թէ ինչու գրուած է. «Մենք կ'ուղղենք մեր ուշադրութիւնը ոչ թէ այն բաներուն, որոնք տեսանելի են, այլ այն բաներուն, որոնք անտեսանելի են» (Բ. Կորնթացիս 4.18, TEV): Անտեսանելին՝ Աստուծոյ Խօսքն է: Անոր Խօսքը արդար եւ ճշմարիտ է:

Մի՛ խաբուիք

Թշնամին կարողացաւ դրդել Եւային՝ դուրս ելլել իր Արարիչին դէմ՝ խաթարելով Աստուծոյ բնաւորութիւնը իր պատկերացման մէջ: Ես յաճախ ստիպուած կ'ըլլայի մարտնչիլ այսպիսի մտքերու դէմ իմ անձնա-

կան պայքարներու ամենաթեժ պահերուն, երբ աղօթքներս չէին պատասխանուիր այնքան արագ, որքան յոյս ունէի: Այսպիսի իրավիճակներու մէջ ես կը յիշեցնէի ինծի Աստուծոյ հաւատարմութեան մասին: Ես կը կրթի ինքզինքս հետեւեալ իրողութեամբ. *«Աստուած չէ խնդիրը: Ան ոչինչ կը պահէ ինձմէ: Ան բարի եւ ողորմած Հայր է»:*

Օձը դրոցեց Եւային՝ հաւատալ, որ Աստուած այնպիսի բան մը պիտի պահէր անորմէ, ինչ որ բարի էր անոր համար: Եթէ այս հնարը յաջողութեամբ պսակուեցաւ կատարեալ միջավայրի մէջ՝ կնոջ մը հետ, որուն երբեք ցաւ չէին պատճառած, չէին վիրաւորուած կամ շահագործած, որքան աւելի դիրացած է թշնամիին գործը այսօր՝ անկում ապրած աշխարհին մէջ, որ լեցուած է վիրաւորանքով, ապականութեամբ, այլասերութեամբ եւ խաբէութեամբ: Ահա թէ ինչու Յակոբոս առաքեալը խստօրէն կը զգուշացնէ մեզ.

«Մի՛ խաբուիք, իմ սիրելի՛ եղբայրներ» (Յակոբոս 1.16):

Ես կը սիրեմ ըսել, որ խաբէութիւնը միայն մէկ խնդիր ունի. այն կը խաբէ՝ մարդը: Խաբուած հաւատացեալը կը հաւատայ, որ ինքը ճիշդ է, բոլորովին կը գիտակցի ամէն բան եւ ճշմարտութեան կողմնակից է: Բայց իրականութեան մէջ, ան սխալ է, չի հասկնար, թէ ի՞նչ կ'ընէ, եւ ճշմարտութեան կողմնակից չէ: Որքան սարսափելի է:

Եւան խաբուեցաւ եւ, հետեւաբար, անօրինութիւն գործեց: Յակոբոսը չ'ուզեր, որ մենք իյնանք նոյն ծուղակին մէջ: Այնպէս որ, կարդանք այս հատուածը ամբողջութեամբ.

«Մի՛ խաբուիք, իմ սիրելի՛ եղբայրներս. ամէն բարի տուրք եւ ամէն կատարեալ պարգեւ վերէն է եւ լոյսի Հօրմէն կ'իջնէ, Որուն մէջ բնաւ փոփոխութիւն կամ դառնալու շուք մը չկայ» (Հակոբոս 1.16,17):

Յակոբոսը չ'ըսեր, որ Աստուծմէ կու գայ բարի պարգեւներու մեծ մասը: Շատերը ճիշդ այսպէս կը մտածեն: Ո՛չ. ան միանշանակ կ'ըսէ մեզ, որ Աստուծմէ կու գայ *ամէն* բարի եւ կատարեալ պարգեւ: Մենք կրնանք գրել այս արտայայտութեան համարժէքը. «Չկայ ոչ մէկ բարի բան ձեզի համար՝ առանց Աստուծոյ կամքին»: Թեթեւօրէն մի՛ վերաբերիք յաջորդ պնդումին, քանի որ ատոր մէջ մեծ խորութիւն կայ.

Եթէ ինչ որ բան հակառակ է Աստուծոյ իմաստութեան, կարելոր չէ, թէ որքան լաւ տեսք ունի ատիկա, որքանով ատիկա երջանիկ կը դարձնէ ձեզ, որքան զուարճալի է ատիկա, որքան հարուստ եւ յաջողակ դուք պիտի դառնաք ատոր պատճառով, որքան հոգեւոր կը թո-

*այ ատիկա, որքան ողջամիտ տպաւորութիւն կը ձգէ, որքան հանրա-
յայտ եւ ընդունուած է ատիկա եւայլն: Եթէ ինչ որ բան մը հակառակ է
Աստուծոյ իմաստութեան (կամ՝ Խօսքին), այն, ի վերջոյ, կործանում եւ
տրտմութիւն պիտի բերէ ձեր կեանքին մէջ:*

Եւան ամբողջ սրտով կը հաւատար, որ իմաստուն որոշում կը կա-
յացնէր, որ իր ընտրութիւնը լաւ էր, եւ որ այն պիտի բարելաւէր իր եւ իր
ամուսինին կեանքը: Եւ եթէ այսօր՝ հազարաւոր տարիներ յետոյ, դուք
կը կարծէք, որ ձեր իմաստութիւնը այն մասին, թէ ո՞րն է բարին ձեզի
համար, աւելի է Աստուծոյ իմաստութենէն, կը նշանակէ՝ դուք նոյնքան
խաբուած էք, որքան Եւան, եւ դուք մեծ տրտմութիւն պիտի ունենաք
ձեր որոշումներուն պատճառով:

Թերեւս մտածէք, որ ես չարակամօրէն տրամադրուած կամ նախա-
պաշարմունքներ ունեցող մարդ եմ, բայց իմ մտադրութիւնը բոլորովին
ուրիշ է: Ես պարզապէս կը զգուշացնեմ ձեզ: Այս գիրքին մէջ կան շատ
ցուցումներ, որոնք պիտի օգնեն գիտնալու, թէ իրականութեան մէջ ին-
չը բարի է ձեր կեանքին, ծառայութեան, գործին, փոխյարաբերութիւն-
ներուն եւ ուրիշ բնագաւառներուն համար: Այնուամենայնիւ, որպէսզի
լիարժէք կերպով ներկայացնեմ Յիսուս Քրիստոսի ուղերձը, ես պէտք
է ե՛ւ զգուշացնեմ, ե՛ւ սորվեցնեմ: Պօղոսը կը հաստատէ այս ճշմարտու-
թիւնը՝ գրելով.

«Որ մենք կը քարոզենք ու ամէն մարդու կը յորդորենք եւ կը
սորվեցնենք բոլոր իմաստութիւնով, որպէսզի ամէն մարդ կա-
տարեալ ընենք Քրիստոս Յիսուսով» (Կողոսացիս 1.28):

Թէ՛ դուք, թէ՛ ես չենք կրնար հասունութեան հասնիլ, եթէ մեր կեան-
քին մէջ ե՛ւ զգուշացումներ, ե՛ւ ուսմունքներ չըլլան: Ես պիտի բացատ-
րեմ այս սկզբունքը հետեւեալ օրինակով. ամէն անգամ, երբ դուք որեւէ
ելեկտրոնային գործիք կը գնէք, ասոր օգտագործման տեղեկաթեր-
թիկին առաջին կամ երկրորդ էջին մէջ գրուած կ'ըլլայ. «Զգուշացում.
կարդալ՝ օգտագործելէն առաջ»: Անկէ յետոյ արտադրողը կը թուարկէ
քանի մը զգուշացումներ այն մասին, թէ ինչ պէտք է ընել կամ, աւելի
յաճախ, թէ ինչ պէտք չէ ընել այդ գործիքին հետ: Այս զգուշացումնե-
րուն նպատակն է, որ դուք անզգուշաբար վնաս չհասցնէք դուք ձեզի
կամ այն սարքին, որ գնած էք: Այդ գործիքը տարիներ շարունակ հրա-
շալի կերպով պիտի ծառայէ ձեզի, եթէ չխախտէք այդ զգուշացումները:
Բայց եթէ արտադրող ընկերութիւնը գրի չառնէր այդ զգուշացումները,
դուք կարող էիք ակամայ վնաս հասցնել ձեր սարքին կամ, ընդհանրա-
պէս, զրկուէիք անկէ: Այդ պարագային դուք բարկացած՝ ելեկտրոնային

նամակ պիտի գրեիք արտադրող ընկերութեան եւ լաւ պիտի նախատեիք՝ ձեզի, ինչպէս որ պէտք է, չզգուշացնելու համար:

Պօղոս կ'ըսէ մեզի, որ մենք պէտք է ուշադրութիւն դարձնենք Նոր կտակարանի զգուշացումներուն: Եթէ այդպէս վարուինք, մենք պիտի ունենանք երկար տարիներու յաջողակ կեանք եւ ներդաշնակ յարաբերութիւններ՝ մեր Արարիչին հետ: Իսկ եթէ մենք անտեսենք կամ խախտենք այդ զգուշացումները, մենք պիտի տառապինք այնպէս, ինչպէս Ադամն ու Եւան: Այդ ժամանակ մենք կրնանք գրել յօդուածներ «պլոկ»-ներու մէջ կամ ուղարկել փոստային եւ էլեկտրոնային նամակներ՝ պատմելով այն մասին, թէ որքան անարդար է կեանքը՝ այն ներդրութիւններու եւ տառապանքներու պատճառով, որոնց հետ բախումքի մէջ ենք: Այդուհանդերձ, Աստուած յստակ կ'ըսէ.

«Շարունակ ուսումնասիրէ՛ այս Ուսուցումներու Գիրքը: Մտորէ՛ ատոր շուրջ ցերեկ ու գիշեր, որ համոզուած ըլլաս, որ պիտի հնազանդիս այն ամէնուն, ինչ որ գրուած է ատոր մէջ: Միայն այդ պարագային դուն *պիտի բարգաւաճիս* եւ *յաջողութեան պիտի հասնիս* այն ամէնուն մէջ, ինչ որ կ'ընես» (Յեսուայ 1.8, NLT):

Աստուած կ'երաշխատորէ յաջողակ եւ բարգաւաճ կեանք, եթէ մենք զգուշօրէն հնազանդինք այն ամէնուն, ինչ որ գրուած է Իր ցուցմունքներու գիրքին մէջ: Այնուամենայնիւ, այս Գիրքին մէջ չեն գրուած միայն խրախուսող եւ մխիթարող ուսուցումներ: Աստուծոյ Խօսքին մէջ զգուշացումներ կան նաեւ:

Դժբախտաբար, մեր օրերուն մէջ ծառայողներն ու ուսուցիչները յաճախ կը շրջանցեն այս կարեւոր զգուշացումները: Սուրբ Գիրքի այս հատուածները կրնան բացասական թուալ, իսկ մենք չենք ցանկար յուսալքող ուղերձներ քարոզել ամպիոնէն, որովհետեւ այս մէկը չի հրապուրեր մարդոց եւ կը նուազեցնէ յաճախելիութիւնը եկեղեցական հաւաքոյթներուն կամ համաժողովներուն: Այսպիսի մօտեցման վերջաւորութեան հաւատացեալներուն կեանքերուն մէջ ծագած են շատ խնդիրներ, որոնցմէ կարելի էր խուսափիլ, եթէ մարդոց ճիշդ ժամանակին սորվեցնէին կամ զգուշացնէին:

Ես կը յորդորեմ ձեզ՝ մէկընդմիջտ ընդունիլ հետեւեալ ճշմարտութիւնը. ձեզի համար ո՛չ մէկ բարի բան կայ, բացարձակապէս ոչինչ՝ առանց Աստուծոյ իմաստութեան կամ Խօսքին: Եթէ դուք կը հաւատաք այս սկզբունքին, շարունակենք փնտռել տարբերութիւնները բարիի եւ Աստուծոյ միջեւ:

ԲԱՐԻԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՉԱՓԱՆԻՇԸ

«Աստուծոյ ամէն մէկ բառը ճշմարիտ է»:
— Առակաց 30.5, NLT

Մենք լաւագոյնս կը հակառակինք սխալմունքին,
երբ հիմնարար գիտելիքներ կը տարածենք
ճշմարտութեան խօսքի մասին...
— Մէթու Վենրի

Այս գիրքին մէջ ես պիտի խօսիմ «բարի» հասկացութեան երեք Ակողմերուն մասին: Առաջինը կը վերաբերի Աստուծոյ հետ ունեցած մեր հիմքային փոխյարաբերութիւններուն, երկրորդը՝ մեր բնաւորութեան եւ վարքին, իսկ երրորդը՝ մեր ծրագրիրներուն: Այս երեքը սերտօրէն կապուած են, քանի որ առաջինը՝ մեր հիմքն է, երկրորդը՝ այն, ինչ որ մեր կեանքը միասնութեան մէջ կը պահէ, եւ երրորդը կը խորհրդանշէ մեր կեանքի կառուցումը: Եթէ առաջին երկուքը զօրաւոր ըլլան, մեր կեանքի գործը արդիւնաւէտ ու մնայուն պիտի ըլլայ: Բայց եթէ այս երեքէն թէկուզ մէկը թերի ըլլայ, մեր կեանքի գործը լիարժէք կերպով պիտի չիրականանայ, եւ ասոր արդիւնքները վաղանցիկ պիտի ըլլան:

Ես կը յիշեմ մեր առաջին տունին կառուցումը, ըսես ասիկա երէկ ըլլար: Լիզան եւ ես կլանուեցանք շինարարութեան ամբողջ ընթացքով՝ սկիզբէն մինչեւ վերջ: Ճիշդ ամենասկիզբէն մենք ամէն օր կ'երթայինք մեր տունին կառուցման վայրը՝ գործի ընթացքին հետեւելու համար:

Հիմքի կառուցումը այնքան ալ հետաքրքրական չէր, եւ մենք ամենաքիչ ժամանակը անցուցինք՝ այն ուսումնասիրելու համար: Այնուամենայնիւ, մենք ընկերներ ունինք, որոնք մօտաւորապէս միեւնոյն ժամանակ կառուցեցին շատ աւելի գեղեցիկ տուն, որ նոյնպէս անոնց առաջին տունն էր: Տեղափոխութենէն քանի մը տարի յետոյ անոնց տունին պատերուն վրայ խորունկ ճաքեր յայտնուեցան՝ յատակէն

մինչեւ առաստաղը: Անգամ մը ընթրիքի հրաւիրուած էինք անոնց տունը: Նկատելով այդ աչքի զարնուող խնդիրը՝ մենք հարցուցինք, թէ ինչն է պատճառը: Անոնք ակնյայտ տհաճութեամբ պատմեցին մեզի, որ իրենց տունին հիմքը սխալ կառուցուած էր: Անոնց տունին շինարարը գործը մեծ խնայողութիւններով կատարած էր, եւ փոխհատուցում ստանալու բոլոր փորձերը ապարդիւս եղած էին: Պարզուած էր, որ այդ խնդիրը շտկելը չափազանց սուղ եւ ժամանակատար էր: Անոնց փորձառութիւնը ցոյց տուաւ ինծի, թէ որքան կարելոր է լաւ հիմք ունենալը: Թէեւ հիմքը դնելը մեր տան շինարարութեան ամենաոգեշնչող եւ ամենահետաքրքրական մասը չէր, բայց այն ամենակարելորն էր՝ տեսական եւ դիմացկուն տուն կառուցելու համար:

Մեր տունին հիմքը դնելէն յետոյ յաջորդ քայլը շէնքի հիմնակառոյցն էր: Շինարարութեան այս փուլին մէջ մենք աւելի մեծ հետաքրքրութեամբ կ'այցելէինք մեր տան կառուցման վայրը: Մենք աւելի երկար կը մնայինք հոն, քանի որ արդէն կրնայինք զբօսնել մեր տունին մէջ: Մենք սրտի թրթռով կը հետեւէինք, թէ ինչպէս կը ձեւաւորուէին տան սենեակները, եւ աւելի յստակ պատկերացում կը ստանայինք այն մասին, թէ ինչպիսին պիտի ըլլար մեր տունը:

Վերջին փուլին հետեւիլը իսկական հաճոյք էր. այդ ընթացքին մենք աւելի շատ ժամանակ կը տրամադրէինք մեր տունը ուսումնասիրելու համար, քան միւս երկու փուլերուն մէջ: Տունին հիմնակառոյցի, պատերուն ու միջնապատերուն կառուցման աւարտէն յետոյ մենք կը հետեւէինք, թէ ինչպէս կը կատարուէր տունին ներքին յարդարումը, կը տեղադրուէր քիւերը, պահարանները, յատակը, տախտակածածկերը եւ, ի վերջոյ, լոյսերը: Ատիկա մեր առաջին տունն էր, եւ մենք հնարաւորութիւն ունէինք ձեւաւորելու՝ մեր ուզածին պէս: Ամէն օր մեզի համար իսկական տօն էր: Վերջապէս ամէն բան դասաւորուեցաւ:

Ես կ'ուզեմ նշել հետեւեալը. եթէ մեր տունին շինարարութեան առաջին երկու փուլերը՝ հիմքը եւ հիմնակառոյցը, որակեալ եղած չըլլային, մնացած ամէն ինչը պիտի վնասուէր կա՛մ անմիջապէս, կա՛մ՝ ինչպէս մեր ընկերներուն տունին պարագային՝ ժամանակի ընթացքին:

Նոյն ձեւով, այս գիրքի ուղերձի վերջին մասը՝ մեր կեանքի ծրագիրները, ամէնէն հաճելին է քննարկման համար: Այն կը վերաբերի մեր ընտրութիւններուն աշխատանքի, ծառայութեան կամ կեանքի միւս հարցերուն վերաբերեալ:

Բոլոր այս փուլերուն մէջ կան ընտրութիւններ, որոնք բարի կը թուան, սակայն յաճախ ատոնք այն լաւագոյնը չեն, որ Աստուած պատրաստած է մեզի համար: Եթէ որոշում կայացնենք քալել այդ ճամբաներով, մենք այդպէս ալ չենք ապրիր մեր առաւելագոյն ներուժով: Հետեւեալ արտա-

յայտութիւնը անփոփոխ ճշմարտութիւն է. «Բարութիւն մը պիտի չպակ- սեցնէ ուղղութեամբ (անարատութեամբ) քալողներէն» (Սաղմոս 84.11): Ան կ'ուզէ բարին ձեզի համար, եւ Անոր բարին միշտ հիանալի է:

Այս մասին պիտի խօսինք քիչ մը յետոյ: Իսկ հիմա, մեր շինարարին պէս, որ մանրակրկիտ ձեռով կեդրոնացաւ տունին կառուցման առա- ջին փուլերուն վրայ, այս գիրքին մէջ մենք նախ՝ պէտք է դնենք հիմքը եւ կեցնենք հիմնակառոյցը:

«Բարի» բառի սահմանումը

Ուսումնասիրենք *«բարի»* բառը: Եբրայերէն «բարի» բառը *«թով»*-ն է: *Այս բառի սահմանումներէն մէկ քանին «Աստուածաշնչեան բառերու լիարժէք ուսումնասիրութեան բառարան»*-ին մէջ հետեւեալն են. «ըլլալ երջանիկ, ընդունելի, լաւ եւ ճիշդ վարուիլ»: *«Աստուածաշնչեան բառե- րու նոր միջազգային հանրագիտարան»*-ը աւելի խոր ձեռով կ'ուսում- նասիրէ այս բառը.

«Այս պարզ բառը կը նշանակէ «լաւ» կամ «բարի»՝ ամենալայն իմաստով: Այն կ'ընդգրկէ այն ամէնը, ինչ որ գեղեցիկ, գրաւիչ, օգտա- կար, շահաւէտ, ցանկալի եւ բարոյապէս ճիշդ է:

Այն հասկացութիւնը, որ կը կապէ «բարի» բառին այս բոլոր գործա- ծութիւնները՝ գնահատումն է: Բարին որոշելու համար անհրաժեշտ է համեմատել առարկաները, յատկանիշները եւ գործողութիւնները ուրիշ առարկաներու, յատկանիշներու եւ գործողութիւններու հետ...

Արարչագործութեան պատմութիւնը կը ներկայացնէ «թով» բառը աստուածաշնչեան իմաստով, երբ Աստուած կը նայի Իր ամէն օրուան աշխատանքին եւ կը յայտնէ, որ այն բարի է: Աստուած նոյնպէս կը գնա- հատէ: Իրականութեան մէջ, մարդիկ գնահատելու ունակութիւն ունին այն պատճառով, որ Աստուած տուած է մարդկութեանը Իր պատկերը եւ նմանութիւնը: Այն բանէն յետոյ, երբ մեղքը մարդուն մէջ իրականութեան ընկալումը աղաւաղեց, Աստուած միայն կրարողութիւն ունեցաւ կատա- րելապէս ամէն ինչ գնահատել: Հին կտակարանի հեղինակները հա- մոգուած էին, որ Աստուած ոչ միայն բարին տուողը եւ բարիին չափա- նիշն է, այլեւ՝ որ միայն Աստուած գիտէ, թէ իրականութեան մէջ ինչը օգ- տակար է մեզի համար եւ ի՞նչն է բարոյապէս ճիշդ: Բարիին վերաբերեալ Իր չափանիշը Աստուած յայտնած է Իր Խօսքին մէջ, եւ ասիկա միակ հիմքն է, որով մենք, որ յուսացած ենք Անոր, կրնանք վստահօրէն պնդել, որ որոշակի երեւոյթ, յատկանիշ կամ գործելակերպ օգտակար է»¹:

Բանալի բառը՝ *գնահատումն* է: Ադամն ու Եւան որոշեցին գնա- հատել, թէ ի՞նչն է *բարին* եւ *ընդունելին*՝ առանց Աստուծոյ խորհուր-

դին: Անոնք օգտագործեցին ուրիշ արժեքներու համակարգ, որ սահմանուած էր իրենց իսկ կողմէն: Ահա թէ ուրկէ սկիզբ առած է մարդուն թշնամութիւնը իր Արարիչին հանդէպ: Այն տարբեր տեսակներ ու ձեւեր ընդունած է, բայց հիմնական շարժառիթը մշտապէս նոյնը մնացած է. «Ես գիտեմ, թէ ինչը ճիշդ է իմ կեանքին համար, եւ չեմ ուզեր ուրիշ բան լսել ոեւէ մէկէն»: Այնուամենայնիւ, Աստուած կը յայտարարէ. «Ճամբայ կայ, որ մարդուն շիտակ կ'երեւնայ, բայց անոր վերջաւորութիւնը մահուան ճամբան է» (Առակաց 16.25):

Առաջին գլուխին մէջ մէջբերեցի նոյն հատուածը, որ գրուած էր Առակաց 14.12-ին մէջ: Այս խօսքը ճիշդ այնպէս չի կրկնուիր: Ամէն անգամ, երբ Սուրբ Գիրքին մէջ ինչ որ բան կը կրկնուի, նպատակը՝ այդ խօսքը շեշտադրելն է: Մենք պէտք է միշտ յիշենք, որ կան բաներ, որոնք աւելի ծանրակշիռ են Աստուծոյ համար (տե՛ս Մատթէոս 23.23): Երբ Աստուածաշունչին մէջ որեւէ խօսք կը կրկնուի, մենք պէտք է շատ աւելի ուշադիր ըլլանք ասոր: Տուեալ պարագային ասիկա խիստ զգուշացում է:

Աստուած գիտէ, թէ որքան դիւրին կրնայ աղաւաղուիլ բարիի եւ չարի սահմանը: Եթէ ատիկա տեղի ունեցաւ Եդեմի պարտէզին մէջ, ատիկա որքան աւելի դիւրին կրնայ տեղի ունենալ այսօր: Աստուած կը զգուշացնէ, որ պիտի ըլլան ճամբաներ՝ վարուելակերպեր, մտածելակերպեր, համոզմունքներ, սովորոյթներ եւ նոյնիսկ՝ ասանդոյթներ, որոնք ընդունելի կը թուան մեզի, սակայն եթէ որոշենք մեր կեանքը ատոնց կառուցել վրայ, հետագային պիտի պարզուի, որ ատոնք թերի էին: Ատոնք պիտի գողնան մեր ժամանակը եւ մեծ կորուստներ պիտի պատճառեն մեզի: Թերեւս այսպիսի ընտրութեան բացասական հետեւանքները ամիսներ կամ տարիներ յետոյ երեւան, իսկ երբեմն ծածուկ մնան մինչեւ Դատաստանի օրը: Պօղոսը կը գրէ. «Յիշէ՛ որոշ մարդոց մեղքերը ակնյայտ են, եւ յայտնի է, որ ատոնք դատաստանի պիտի տանի անոնց: Բայց կան այլ մարդիկ, որոնց մեղքերը յայտնի պիտի դառնան շատ աւելի ուշ» (Ա. Տիմոթէոս 5.24, NLT): Չեմ գիտեր՝ ինչպէս դուք կը մտածէք, բայց այս խօսքի երկրորդ մասը սարսուռ կ'առաջացնէ իմ մէջ: Այն չի դրդեր զիս վախճնալ Աստուծմէ. աւելի շուտ՝ ես կը սարսափիմ, որ կրնամ հեռու ըլլալ Անորմէ:

Այսպիսով, ես իրականութեան մէջ կը հաւատամ, որ Աստուծոյ իմաստութիւնը կատարեալ է եւ կը վստահի՞մ Անոր այն հարցին մէջ, թէ որն է լաւագոյնը իմ կեանքին համար: Ամէն անձ իր սրտին մէջ պէտք է ունենայ այս հարցումին միանշանակ պատասխանը: Եւ այս հիմքային համոզմունքը չի կրնար վերաբերիլ որոշ հարցերու եւ չվերաբերիլ միւսներուն: Կա՛մ Աստուծոյ իմաստութիւնը կատարեալ է բոլոր պարա-

զաներու մէջ, կա՛մ այն թերի է, եւ աւելի լաւ է՝ մենք մեզի որոշումներ կայացնենք՝ Անորմէ անջատ:

Ի վերջոյ, ո՞րն է բարիի չափանիշը, որուն պէտք է վստահինք: Ի՞նչը կ'առաջնորդէ մեզ դէպի կեանքի ճանապարհը: Պօղոս առաքեալը կ'ըսէ մեզ.

«Ամբողջ Սուրբ Գիրքը ոգեշնչուած է Աստուծմէ եւ օգտակար է՝ սորվեցնելու մեզ, թէ ինչն է ճշմարիտը, եւ դրդելու մեզ՝ գիտակցիլ, թէ ինչն է սխալը մեր կեանքերուն մէջ: Այն կը շտկէ մեզ, երբ մենք սխալ ենք, եւ կը սորվեցնէ ճիշդ վարուիլ» (Բ. Տիմոթէոս 3.16, NLT):

Քանի մը կարելոր բան դիտարկենք Պօղոսի խօսքէն.

«Ամբողջ Սուրբ Գիրքը», ոչ թէ մէկ մասը: Ոչ թէ սոսկ այն հատուածները, որոնց հետ մենք համաձայն ենք: Ոչ թէ սոսկ այն խօսքերը, որոնք կը համապատասխանին մեր մտածելակերպին եւ համոզմունքներուն, այլ՝ ամբողջ Սուրբ Գիրքը: Անկեղծ եղէ՛ք դուք ձեր հետ. արդեօ՞ք դուք ճիշդ կը համարէք Աստուծոյ իմաստութիւնը որոշ բնագաւառներուն մէջ, բայց ուրիշ պարագաներու մէջ հինցած կամ անվաւեր կը համարէք այն:

Եւան գիտէր, որ Աստուած Արարիչն է: Ան կը վայելէր Աստուծոյ առատ օրհնութիւնները եւ հրաշալի ներկայութիւնը: Անոր շնորհուած էր գեղեցիկ միջավայր, խաղաղութիւն, ներդաշնակութիւն, բարեկեցութիւն, ինչպէս նաեւ մեծ առատութեամբ համեղ կերակուրներ՝ անթիւ ծառերէն: Այնուամենայնիւ, հազիւ որ ան սկսաւ մտածել, որ Աստուծոյ իմաստութեան բնագաւառներէն մէկը ճիշդ չէ, ան ինկաւ՝ յայտնուելով մահուան ճանապարհին: Եթէ Եւան կարողացաւ տեղի տալ այդ ազդեցութեան, անթերի միջավայրին մէջ, ի՞նչը կրնայ պաշտպանել մեզ այս ապականած աշխարհին մէջ. միմիայն Աստուծոյ խօսքը:

«Սուրբ Գիրքը օգտակար է՝ սորվեցնելու մեզ, թէ ինչը ճշմարիտ եւ արդար է»: Կան բաներ, որոնք արտաքուստ բարի կը թուան, բայց իրականութեան մէջ ճիշդ հակառակն են: Կան հասկացողութիւններ, ենթադրութիւններ, կարծիքներ, յատկանիշներ, տարբեր դատողութիւններ եւ մտածելակերպեր, որոնք ճիշդ եւ արդարացի կը թուան, թէեւ այդպիսին չեն: Հաշուի առնելով այս ծածուկ վտանգները՝ Աստուած կեանքի ուղեցոյց մը տուած է մեզի, որպէսզի մենք *անգիտակցաբար* չշեղինք ճշմարտութենէն եւ չյայտնուինք մահուան ճանապարհներուն մէջ: Այս ուղեցոյցը՝ Աստուածաշունչն է:

Թէ՛ դուք, թէ՛ ես պէտք է հարցնենք մենք մեզի (եւ անկեղծօրէն պատասխանենք). «Արդեօ՞ք ես կանոնաւոր ձեռով կը կարդամ իմ Աստուածաշունչը: Արդեօ՞ք ես կ'ուսումնասիրեմ այն: Արդեօ՞ք ես ժամանակ

կ'անցընեն՝ փնտռելով Աստուծոյ իմաստութիւնը իմ կեանքին համար: Թէ՞ կը համարեմ, որ գերազանց գիտեմ Աստուծոյ Խօսքը՝ ինչպէս Եւան: Մի՞թէ ես, ապրելով այս ապականած մոլորակին մէջ եւ պայքարելով փորձիչի դէմ, աւելի լաւ վիճակի մէջ եմ, քան Եւան. մի՞թէ ես աւելի լաւ կը հասկնամ Ճշմարտութիւնը եւ աւելի հաստատ կանգնած եմ Ճշմարտութեան ճանապարհին վրայ:

«Ամբողջ Սուրբ Գիրքը ոգեշնչուած է Աստուծմէ»։ այս արտայայտութիւնը չունի բացառութիւններ կամ պահուած վերապահումներ. այն պէտք է կա՛մ լիարժէք կերպով ընդունուի, կա՛մ բոլորովին մերժուի: Եթէ ամբողջ Սուրբ Գիրքը ոգեշնչուած չէ, կը նշանակէ՝ մեր ուղեցոյցը թերի է:

Աստուածաշունչի հաւաստիութիւնը

Վերանայինք որոշ փաստեր Աստուածաշունչի մասին: Այն բաղկացած է վաթսունվեց գիրքէ, որոնք գրուած են տարբեր լեզուներով, մօտաւորապէս 1.500 տարուան ընթացքին, աւելի քան քառասուն հեղինակներու կողմէն եւ երեք տարբեր աշխարհամասերու մէջ (Ափրիկէի, Ասիայի եւ Եւրոպայի մէջ): Աստուածաշունչի գիրքերը գրող մարդիկ ունէին տարբեր ծագումներ, զբաղումներ եւ պատկերացումներ կեանքի մասին: Անոնց կարգին էին ձկնորսներ, գառնարածներ, զինուորականներ, թագաւորներ, թագաւորի մը մատռուակ, բժիշկ մը, հարկահաւաք մը, վրանակար մը եւ այլք: Մէկ քանին կը գրէին բանտերուն մէջ, իսկ միւսները թողթին կը յանձնէին իրենց բառերը պալատներուն մէջ:

Թէեւ այդ մարդոց գիրքերը բազմաթիւ թեմաներ կ'ընդգրկեն, բոլոր այս գիրքերու մէջ նմանութիւն կայ, որ իրապէս ակնառու է, բայց ոչ մէկ պարագային՝ պատահական: Անոնց գլխաւոր թեման է՝ մարդկային մեղքի դժուար կացութիւնը, ատոր վերջաւորութեան յառաջացած բաժանութիւնը իրենց Արարիչէն, Անոր հետ փոխյարաբերութիւնները վերականգնելու մարդկային անկարողութիւնը եւ Աստուծոյ պատասխանը՝ ի դէմս Մեսիայի՝ Տէր Յիսուս Քրիստոսի: Այս յաջորդականութիւնը կարելի է գտնել ամբողջ Աստուածաշունչին մէջ՝ Ծննդոցէն մինչեւ Յայտնութիւն:

Այն, որ Աստուածաշունչի գրողները չէին հաւաքուած միասին (եւ ոչ ալ կրնային), որպէսզի ծրագրէին իրենց աշխատութիւնները, երկիւղածութիւն կը ներշնչէ: Ոչ մէկ անձնաւորութիւն կամ կոմիտէ չէր վերահսկեր կամ ղեկավարեր այդ գիրքերը գրելու ընթացքը: Աստուած Ի՛նքը կ'ընէր ատիկա: Քանի որ Սուրբ Գիրքերը գրուած են այդքան երկար ժամանակահատուածի մէջ, հեղինակներու մեծ մասը չէր ճանչնար մէկը միւսին եւ ո՛չ ալ կ'ապրէր նոյն ժամանակաշրջանին: Գիրքերը կ'աւելնային այն ներկայ ժողովածուին, որ մեր ձեռքին մէջն

է, 1.500 տարուան ընթացքին: (Կեցէ՛ք եւ մտածեցէ՛ք), թէ ինչ կը կատարուէր մեր օրերէն 1.500 տարի առաջ: Այդ ժամանակ չկար նոյնիսկ Բրիտանական կայսրութիւնը: Պարզապէս ապշեցուցի՛չ է):

Այժմ՝ սերունդներ յետոյ, պարզապէս աներեւակայելի է, որ Աստուածաշունչը, որ մենք կը կարդանք, մէկ Գիրք է՝ գրուած տարբեր մարդոց կողմէն, որոնք նոյնիսկ գաղափար չունէին ատոր ընդհանուր կառոյցի մասին: Անոնց դերերը կարելի է համեմատել տարբեր սերունդներու պատկանող տարբեր մարդոց հետ, որոնք վէպի գլուխներ կը գրեն, եւ անոնցմէ ոչ մէկը գիտէ պատմութեան ընդհանուր նկարագիրը կամ սիւժէն: Այս գիրքի զարմանալի փոխկապակցութիւնը՝ ատոր աստուածային ծագման ապացոյցն է: Այսպիսի երաժշտական սիմֆոնիայի՝ Աստուածաշունչի ամէն մէկ մասը իր ներդրումը ունի ընդհանուր բարեհնչիւնութեան մէջ եւ կը ղեկավարուի մէկ Աստուծոյ կողմէն:

Միայն այս փաստարկը արդէն անժխտելի ապացոյց է Սուրբ Գիրքի աստուածային ոգեշնչման մասին: Բայց քայլ մը առաջ երթանք՝ խօսելով տարբեր հեղինակներու ճշգրտութեան մասին:

Մարգարէութիւնները Մեսիայի գալստեան մասին՝ գրուած են տարբեր հինկտակարանեան գիրքերու մէջ հարիւրաւոր տարիներու ընթացքին: Անոնց մէկ մասը գրուած է Յիսուսի ծնունդէն աւելի քան հազար տարի առաջ: Աստուածաբաններու մեծ մասը համակարծիք է, որ Հին կտակարանին մէջ գոյութիւն ունի աւելի քան երեք հարիւր մարգարէութիւն Մեսիայի մասին: Գալով այս աշխարհ՝ Յիսուս Քրիստոսը դիմեց Իր Հօրը. «Ահա՛, Ես եկայ՝ կատարելու Քու կամքը, ո՛վ Աստուած, ինչպէս որ Իմ մասին գրուած է Սուրբ Գիրքերուն մէջ» (Եբրայեցիներու 10.7, NLT): Իսկ Յիսուս մարդոց հետեւեալը յայտարարեց. «Սուրբ Գիրքերը կը խօսին Ի՛մ մասին» (Յովհաննէս 5.39, TEV):

Այն, որ Յիսուսը կատարած է այս մարգարէական խօսքերը, անժխտելի ապացոյց է Սուրբ Գիրքի աստուածային ոգեշնչման մասին: Մարդիկ սովորաբար կը ժխտեն ասիկա՝ ըսելով, որ հնարաւոր է գտնել այլ պատմական դէմքերու, որոնք կրնան համապատասխան ըլլալ Մեսիայի մասին մարգարէութիւններուն: Ասիկա ճշմարիտ է. որոշ անհատներ կրնային կատարել մէկ, երկու կամ նոյնիսկ՝ քանի մը մարգարէութիւն: Այնուամենայնիւ, գործնականօրէն անհնար է գտնել այնպիսի մարդ, որուն կեանքին մէջ կատարուած են բոլոր այդ մարգարէութիւնները:

Առիթ տուէ՛ք բացատրել ասիկա: Յաջորդ քանի մը էջերը աւելի տեխնիկական, արդիականացուած եւ գիտական երանգ ունին, բայց կը հաւաստիացնեն ձեզ, որ այս տեղեկութիւնը կարելոր է, եւ դուք կրնաք մեծ հետաքրքրութեամբ մտորել այս մասին:

Աստուածաշունչի ճշգրտութիւնը

Մեր թուարկութեան քսաներորդ հարիւրամեակի կէսերուն Փիթըր Սթոունըր անունով գիտնական եւ փրոֆեսոր մը հրատարակեց «Գիտութիւնը կը խօսի» վերնագիրով գիրք մը: Այդ աշխատութեան մէջ ան Քրիստոսի մասին մարգարէութիւնները՝ կը դիտարկէր հաւանականութեան տեսութեան լոյսին տակ: Գիտութիւններու դոկտոր Հ. Հարոլդ Հարցլերը գրեց Սթոունըրի յայտնագործութիւններուն մասին «Գիտութիւնը կը խօսի» գիրքի նախաբանին մէջ.

««Գիտութիւնը կը խօսի» գիրքի թեքսթը մանրակրկիտ ձեւով զննուած է Ամերիկայի Գիտական միութեան անդամներու կողմէն: Նոյն կազմակերպութեան Գործադիր խորհուրդը համարած է, որ աշխատութեան մէջ ներկայացուած գիտական նիւթը՝ իր ամբողջութեամբ, վստահելի եւ ճշգրիտ է: Ընդգրկուած թուաբանական վերլուծութիւնը հիմնուած է հաւանականութեան սկզբունքներու վրայ, որոնք լիովին հիմնաւորուած են: Փրոֆեսոր Սթոունըրը կիրառած է այս սկզբունքները պատշաճ եւ արժանահաւատ կերպով»²:

Սթոունըրը միայնակ չէ կատարած այս հետազօտութիւնը, այլ ըրած է իր եզրակացութիւնները շարք մը հաշուարկներու հիման վրայ, որոնք կատարած են բնագիտական բաժինի տասներկու տարբեր խումբերուն մէջ սորվող աւելի քան վեց հարիւր ուսանողներ: Ան մանրակրկիտ ձեւով ուսումնասիրած ու համեմատած է անոնց հաշուարկները, իսկ յետոյ մաս առ մաս խմբագրած է ատոնք՝ ստացած տուեալները աւելի ճշգրիտ դարձնելու համար: Անոնց սկզբնական գնահատումը Յիսուս Քրիստոսի մասին՝ եղած է հետեւեալ ութ մարգարէութիւններու հիման վրայ.

1. Քրիստոսը պէտք է Բթթլեհեմի մէջ ծնէր (մարգարէութիւնը՝ Միքեայ 5.2. իրականացումը՝ Մատթէոս 2.1-7, Յովհաննէս 7.42, Ղուկաս 2.4-7):
2. Քրիստոսին պէտք է Աւետաբեր մը նախորդէր (մարգարէութիւնը՝ Եսայեայ 40.3, Մաղաքեայ 3.1. իրականացումը՝ Մատթէոս 3.1-3, 11.10, Յովհաննէս 1.23, Ղուկաս 1.13-17):
3. Քրիստոսը պէտք է Երուսաղէմ մտնէր՝ նստած աւանակի վրայ (մարգարէութիւնը՝ Չաքարեայ 9.9. իրականացումը՝ Ղուկաս 19.28-37, Մատթէոս 21.1-11):
4. Քրիստոսը պէտք է ընկերոջ կողմէն մատնուէր (մարգարէութիւնը՝ Սաղմոս 41.9, 55.12-14. իրականացումը՝ Մատթէոս 10.4, 26.47-50, Յովհաննէս 13.21-27):
5. Քրիստոսին պէտք է վաճառէին 30 արծաթով (մարգարէութիւնը՝ Չաքարեայ 11.12. իրականացումը՝ Մատթէոս 26.15, 27.3):

6. Այն գումարով, որ Քրիստոսը վաճառած էին, պետք է «գետին նետուէր բրուտի քով» Աստուծոյ տունը (մարգարէութիւնը՝ Չաքարեայ 11.13. իրականացումը՝ Մատթէոս 27.5-7):
7. Քրիստոսը պէտք է լուռ ըլլար Ջինք մեղադրողներուն առջեւ (մարգարէութիւնը՝ Եսայեայ 53.7. իրականացումը՝ Մատթէոս 27.12, Մարկոս 14.60, 61, 15.3-5):
8. Քրիստոսը պէտք է մահապատիժի ենթարկուէր խաչելութեամբ՝ գողի պէս (մարգարէութիւնը՝ Սաղմոս 22.16, Չաքարեայ 12.10, Եսայեայ 53.5. իրականացումը՝ Ղուկաս 23.33, Յովհաննէս 20.25, Մատթէոս 27.38, Մարկոս 15.24-27):

Մինչեւ շարունակելը, առիթ տուէք պարզ օրինակ մը բերել՝ հաւանականութեան տեսութիւնը բացատրելու համար: Պատկերացուցէ՛ք, որ վերցնենք ինը դեղին եւ մէկ սպիտակ թենիսի գնդակներ, կը դնենք մեծ դոյլի մէջ, իսկ յետոյ կը կապենք ինչ որ մէկուն աչքերը եւ կը խնդրենք անորմէ այդ դոյլէն գնդակ մը վերցնել: Սպիտակ գնդակը վերցնելու հաւանականութիւնը պիտի ըլլայ մէկէն տասը: Ասիկա հաւանականութեան պարզ օրինակ է:

Կատարելով իր հետազօտութիւնը՝ Փիթըր Սթոունըրը գրած է վերոյիշեալ թուարկուած ութ մարգարէութիւններուն մասին.

«...Մենք պարզեցինք հետեւեալը. հաւանականութիւնը, որ մինչեւ օրս ապրած մարդոցմէ ոեւէ մէկը կրնայ կատարել բոլոր այս ութ մարգարէութիւնները՝ 1-էն 100.000.000.000.000.000 է»³:

Այս տուեալները ապշեցուցիչ են, բայց եթէ դուք թուաբանագէտ կամ գիտնական չէք, դուք դժուարութեամբ պիտի հասկնաք ասիկա: Գիրքին մէջ Սթոունըրը խելացի օրինակ մը կը բերէ, որ պիտի ներկայացնենք աւելի պարզ ձեւով: Եթէ մենք կարենայինք 100.000.000.000.000.000 հատ արծաթէ մէկ տոլարանոց մետաղադրամ ունենալ, մենք պիտի կենայինք լուրջ խնդիրի մը առջեւ, քանի որ չէինք գիտեր, թէ ինչպէս կրնանք պահպանել ատոնք: Ամբողջ աշխարհին մէջ չկայ այդքան մեծ պահեստ կամ շինութիւն: Այդ մետաղադրամներու ծաւալը այնքան մեծ պիտի ըլլար, որ ատոնք պիտի ծածկէին Թեքսաս նահանգը ամբողջութեամբ (696.241 քկմ) 60 սանթիմէթըր հաստութեամբ: Ասիկա աննկարագրելի խոշոր քանակութիւն է:

Ենթադրենք՝ մենք կարողացանք այդքան մետաղադրամ գտնել: Եկէ՛ք որեւէ նշան դնենք այդ դրամներէն մէկուն վրայ, իսկ յետոյ խառնենք բոլորը եւ փռենք Թեքսաս նահանգի տարածքին: Իսկ հիմա կապենք ինչ որ մէկուն աչքերը, ուղղաթիռ նստեցնենք զինք եւ թռցնենք

նահանգին վրայէն, մինչեւ որ ան պատուիրէ ուղղաթիւր իջեցնել: Հազիւ որ ուղղաթիւր վայրէջք կատարէ, ան կրնայ դուրս ելլել եւ, առանց աչքերուն կապը հանելու, վերցնել մէկ մետաղադրամ: Հաւանականութիւնը, որ ան պիտի ընտրէ նշուած մետաղադրամը ամբողջ Թեքսաս նահանգի յատակին փռած մետաղադրամներէն, նոյնն է՝ եթէ որեւէ մէկը, մարգարէներու ժամանակուրդնէ սկսեալ մինչեւ մեր օրերը, կատարէր այս ութ մեսիական մարգարէութիւնները:

Սթոունըրը կը գրէ.

«Ասիկա կը նշանակէ, որ միայն այս ութ մարգարէութիւններու իրականացումը կ'ապացուցէ, որ Աստուած ոգեշնչած էր այս մարգարէութիւնները այնպիսի ճշգրտութեամբ, որ այն հեռու էր բացարձակ ճշգրտութենէն միայն մէկ հաւանականութեամբ [100.000.000.000.000.000-էն]»⁴:

Աներեւակայելի է մտածել այս հաւանականութիւններու շուրջ: Բայց եւ այնպէս, Սթոունըրը կանգ չ'առնէր սկզբնական ութը մարգարէութիւններուն վրայ: Ան կը շարունակէ՝ ընդգրկելով եւս ութ հինկտակարանեան մարգարէութիւն Յիսուսի կեանքի վերաբերեալ (ընդհանուր առմամբ՝ տասնվեց): Ան կը պնդէ.

Հաւանականութիւնը, որ մէկ մարդը կրնայ կատարել բոլոր տասնվեց մարգարէութիւնները՝ 1-էն 1045 է»⁵:

Ի՞նչ թիւ է ասիկա: Այն գրելու համար, պէտք է 45 զերօ աւելցնել 1 թիւէն յետոյ.

1.000.000.000.000.000.000.000.000.000.000.000.000.000.000.000

Սթոունըրը կը նկարագրէ, թէ ինչ կը նշանակէ այսպիսի հաւանականութիւն, եւ ես կրկին պիտի պարզեմ անոր օրինակը: Եթէ մենք այսքան արծաթէ մետաղադրամներ ունենայինք, Երկիր մոլորակը շատ փոքր պիտի ըլլար՝ ատոնք պահպանելու համար: Մենք ստիպուած պիտի ըլլայինք հաւաքել ատոնք՝ մեծ գունդ մը դարձնելով: Այս գունդի տրամագիծը վաթսուն անգամ աւելի երկար պիտի ըլլար, քան տարածութիւնը Երկիր մոլորակէն մինչեւ արեւը, այսինքն՝ 8.85 միլիառ քիլոմէթր:

Առիթ տուէ՛ք օգնել ձեզ՝ հասկնալու, թէ որքա՛ն մեծ պիտի ըլլար այդ շրջանը: Ես յաճախ կը ճամբորդեմ այլ երկիրներ՝ Աստուծոյ Խօսքը սորվեցնելու համար: Ջարմանալի է, որ այսօր մենք կրնանք օդանաւով պտոյտ կատարել ամբողջ երկրի շուրջ ընդամէնը քսանչորս ժամուան մէջ: Առաքեալներուն համար հաճելի պիտի ըլլային մեր օրերը: Այնուամենայնիւ, եթէ մենք ուզէինք օդանաւով թռչիլ մեր արծաթ

մետաղադրամներու գունդին շուրջ, պիտի չյաջողէինք, որովհետեւ ոչ մէկ մարդ մեր դարաշրջանին մէջ այդքան երկար ապրած է: Մեզմէ պիտի պահանջուէր թռչիլ առանց կանգառներու աւելի քան չորս հարիւր տարի՝ այդ արծաթէ մետաղադրամներու գունդին շուրջ, մէկ պտոյտ կատարելու համար: Եթէ մենք սկսէինք մեր թռիչքը այն օրը, երբ Ուխտագնացները իջան Մասաչուսեթս նահանգի Փլիմութ քաղաքի ակետրուն մ.թ. 1620 թուականին, մինչեւ օրս մենք տակաւին աւարտած չէինք ըլլար մեր պտոյտը արծաթէ մետաղադրամներու գունդին շուրջ:

Մենք պէտք է յիշենք, որ այս օրինակը չի նմանիր նախորդին, որուն արծաթէ մետաղադրամները Թեքսաս նահանգը վաթսուն սանթիմետր հաստութեամբ կը ծածկէին: Այս պարագային արծաթէ մետաղադրամներէն բաղկացած է ամբողջ գունդը:

Պատկերացուցէ՛ք, որ նշան կը դնէք այդ դրամներէն մէկուն վրայ, լաւ մը կը խառնէք այդ հսկայածաւալ գունդը, իսկ յետոյ կը կապէք ինչ որ մէկուն աչքերը եւ կը խնդրէք անորմէ վերցնել մէկ մետաղադրամ: Արդեօ՞ք դուք կ'ակնկալէք, որ անոր ձեռքին մէջ պիտի ըլլայ նշուած մետաղադրամը: Այժմ դուք գաղափար կազմեցիք, թէ ինչ հաւանականութեամբ մէկ մարդու կեանքին մէջ կրնար իրականանալ Յիսուսի ծնունդէն հարիւրաւոր տարիներ առաջ Անոր մասին գրուած մարգարէութիւններէն ընդամենը տասնվեցը:

Բայց ասիկա տակաւին ամէնը չէ: Կրկին, Սթոունըրը չկեցաւ տասնվեց մարգարէութեան վրայ, այլ շարունակեց՝ կատարելով հաշուարկներ քառասունութ մարգարէութեան համար: Ասիկա իսկապէս կը գերազանցէ մարդու միտքը, բայց փորձեցէ՛ք հասկնալ այն, ինչ որ ան կը գրէ այս մասին.

«Մեր քննարկման առարկան, մարդկային ընկալման բոլոր սահմաններէն դուրս հանելու համար, դիտարկենք քառասունութ մարգարէութիւններ (ատոնց մէկ մարդու կեանքին մէջ իրականանալու հաւանականութիւնը), ինչպէս այն ութ մարգարէութիւնները, որոնք դիտարկեցինք ամենասկիզբը, եւ օգտագործելով շատ աւելի սահմանափակ թիւ, քան կրնայ ըլլալ իրականութեան մէջ... Կիրառելով նոյն հաւանականութեան սկզբունքը, որ օգտագործուած է մինչեւ հիմա՝ մենք կը պարզենք, որ հաւանականութիւնը, որ ինչ որ մէկուն կեանքին մէջ կրնային իրականանալ բոլոր քառասունութ մարգարէութիւնները, 1-էն 10¹⁵⁷ է»⁶:

Այսինքն՝ 1 թիւը՝ 157 գերօներո՛վ: Ես պարապ տարածք պիտի վատնէի, եթէ փորձէի գրել այս թիւը: Սթոունըրը կրկին օգնեց մեզ պատկերացնելու այս նոր թիւը՝ բերելով եւս մէկ օրինակ: Այս թիւը նկա-

րագրելու համար արժաթէ մետաղադրամը՝ չափազանց մեծ առարկայ է: Մենք պէտք է շատ աւելի պզտիկ առարկայ ընտրենք:

Ելեկտրոնը՝ ամենափոքր առարկան է, որուն մասին մենք գիտենք: Ելեկտրոններն այնքա՛ն փոքր են, որ եթէ մէկ գիծով շարէինք ատոնք 2,5 սանթիմետր երկարութեամբ, պիտի պահանջուէր տասնինը միլիոն տարի, որպէսզի հաշուէինք ատոնց թիւը՝ մէկ վայրեանի մէջ 250 հատ հաշուելու պարագային: Ատոնք չափազանց փոքր են: Մի՛ մոռնաք, որ խօսքը ընդամէնը մէկ 2,5 սանթիմետրանոց գիծի մասին է: Ես չեմ ուզեր ծանրացնել ձեր միտքը այն ժամանակահատուածով, որ անհրաժեշտ պիտի ըլլար՝ այս թիւի քառակուսիի մէջ գտնուող ելեկտրոնները հաշուելու համար, եւ ոչ ալ՝ մէկ խորանարդի: Ատոր համար անըմբռնելիօրէն երկար ժամանակ պիտի պահանջուէր:

Մտապահելով ասիկա՝ եկէ՛ք հարց տանք, թէ որքա՞ն մեծ պիտի ըլլայ 10157 ելեկտրոններէն բաղկացած գունդը: Պարզ ըսելու համար՝ այդ գունդի շառաւիղը աւելի մեծ պիտի ըլլայ, քան մարդկութեան կողմէն տեսած ամենահեռաւոր կէտը տիեզերքին մէջ, որ տասներեք միլիարդ լուսատարի հեռաւորութեան վրայ է: Ի դէպ, լուսատարին հաւասար է լոյսի անցած տարածութեան մէկ տարուան մէջ՝ երկվայրկեանի մէջ 300.000 քիլոմետր արագութեամբ (երկվայրկեանին մէջ, ոչ թէ՛ ժամի մէջ): Եթէ մենք ելեկտրոններու գունդ ունենայինք, որուն շառաւիղը տասներեք միլիարդ լուսատարի պիտի ըլլար, ատոր մէջ տակաւին չէին տեղաւորուիր 10157 ելեկտրոններ: Իրականութեան մէջ, հոն շատ աւելի քիչ ելեկտրոններ պիտի ըլլային:

Եթէ ինչ որ մէկուն աչքերը կապէին եւ ձգէին այդ ելեկտրոններու շրջանի մէջ, հաւանականութիւնը, որ ան պիտի ընտրէր մէկ նշուած ելեկտրոնը, նոյնը պիտի ըլլար, ըսես՝ եթէ մարդ մը, ամբողջ աշխարհի պատմութեան ընթացքին կատարէր Քրիստոսի մասին բոլոր հինկտակարանեան մարգարէութիւններէն ընդամէնը քառասունութը՝ գրուած տարբեր հեղինակներու կողմէն:

Դուք կը փափաքէիք, որ ես շարունակէի մեր քննարկումը, մինչեւ հասնէի ընդհանուր առմամբ աւելի քան երեք հարիւր մարգարէութիւններուն: Հաւանաբար, կը մտածէք. «Կը խնդրե՛մ, պէ՛տք չէ»: Յոյսով եմ՝ դուք ճիշդ այսպէս ալ մտածեցիք, որովհետեւ տեսականօրէն ասիկա անհնար է նկարագրել այնպէս, որ մեր սահմանափակ միտքը կարենայ ընկալել:

Թոյլ տուէք ամփոփել: Հին կտակարանին մէջ կան աւելի քան երեք հարիւր մարգարէութիւններ՝ գրուած տարբեր մարդոց կողմէն, որոնք կ'ապրէին տարբեր երկիրներու մէջ եւ կը խօսէին տարբեր լեզուներով: Ատոնք գրած են հարիւրաւոր տարիներու ընթացքին եւ կատարուած են մէկ մարդու կեանքին մէջ: Ինչպէ՞ս ինչ որ մէկը կրնայ ժխտել, որ

Սուրբ Գիրքի ճշմարիտ հեղինակը՝ Ինքը Աստուած է: Արդեօ՞ք այս խօսքը Անոր շուրթերէն աւելի խորունկ իմաստ չստացաւ ձեզի համար:

«Աստուծոյ ամէն մէկ բառը ճշմարիտ է» (Առակաց 30.5, NLT): /

Ան Ինքը կը հռչակէ. «Ես կը հսկեմ եւ կը գործեմ՝ հետեւելով Իմ խօսքին, որ կատարեմ այն» (Երեմեայ 1.12, AMP): Ճիշդ այս պատճառով է, որ «բնաւ խօսք մը գետին չինկաւ այն ամէն բարի խօսքերէն, որ (Տէրը)... խօսած է» (Չ. Թագաւորաց 8.56):

Աստուծոյ խօսքը աւելի արժանահաւատ է, քան արեւը, որ կը ծագի ամէն առաւօտ: Յիսուսը կը հաստատէ ասիկա՝ ըսելով. «Երկինքն ու երկիրը կ'անցնին, բայց Իմ խօսքերը չեն անցնիր» (Մատթոս 24.35): Մեր Արարիչը ձգած է Իր անժխտելի մատնահետքերը, որպէսզի մենք գիտնանք, որ Ան Աստուած է, եւ որ Անոր կամքը յայտնուած է Սուրբ Գիրքին մէջ:

Ուշադրութեամբ ականջ դրէ՛ք

Ես պիտի կրկնեմ այն, ինչ որ Պօղոս առաքեալը ըսաւ Բ. Տիմոթէոս 3.16-ին մէջ. «Ամբողջ Սուրբ Գիրքը ոգեշնչուած է Աստուծմէ... եւ կը սորվեցնէ մեզի ընել այն, ինչ որ ճիշդ է (կամ՝ բարի է)»: Այս գաղափարը բարդ չէ. ընդհակառակը՝ այն շատ պարզ է: Սուրբ Գիրքը՝ Աստուծոյ խօսքն է, եւ մենք կրնանք վստահիլ ատոր՝ որպէս բարին ճշմարտապէս գնահատելու եւ որոշելու համընդհանուր չափանիշի: Եթէ դուք կը կարծէք, որ ձեր ընկերոջ, ոեւէ մասնագէտի կամ հասարակութեան իմաստութիւնը աւելի օգտակար է, քան Աստուծոյ իմաստութիւնը, կը խնդրեմ, վերանայեցէ՛ք ձեր կարծիքը, քանի որ Սուրբ Գիրքը կը յայտարարէ.

«Աստուած կը նայի Երկինքէն ամբողջ մարդկային ցեղին. Ան կը փնտռէ, որ տեսնէ, թէ արդեօ՞ք ինչ որ մէկը ճշմարտապէս իմաստուն է, արդեօ՞ք ինչ որ մէկը կը փնտռէ զԱստուած: Բայց ոչ. բոլորը իրենց երեսը դարձուցած են. բոլորն ալ ապականած են: Ոչ ոք բարի կը գործէ, չկայ նոյնիսկ մէկը» (Սաղմոս 53.2, 3, NLT):

Այս գլուխին մէջ տեսանք, որ Աստուած անժխտելի վկայութիւն տուած է Սուրբ Գիրքի վաւերականութեան մասին: Այս խօսքերուն մէջ սաղմոսերգուն կը շեշտադրէ, որ որեւէ իմաստութիւն, որ հակառակ է Աստուծոյ խօսքին, նոյնիսկ եթէ այն լաւ կը թուայ, իրականութեան մէջ ապականած է, ինչպէս նաեւ կործանարար է մեզի համար:

Կարդանք Պօղոսին խօսքերը Տիմոթէոսին՝ աւելի լայն համայօդուածով.

«Դուն պէտք է հաւատարիմ մնաս այն բաներուն, որոնք քեզի սորվեցուցած են: Դուն գիտես, որ ատոնք ճշմարիտ են... Քե-

զի սորվեցուցած են Սուրբ Գիրքերը մանկութենէն... Ամբողջ Սուրբ Գիրքը ոգեշնչուած է Աստուծմէ եւ օգտակար է՝ սորվեցնելու մեզ, թէ ինչն է ճշմարիտը, եւ դրդելու մեզ գիտակցիլ, թէ ինչը սխալ է մեր կեանքերուն մէջ: Այն կը շտկէ մեզ, երբ մենք սխալ ենք, եւ կը սորվեցնէ մեզի ճիշդ վարուիլ: Աստուած կ'օգտագործէ այն՝ Իր ժողովուրդը պատրաստելու եւ սպառազինելու համար...» (Բ. Տիմոթէոս 3.14-17, NLT):

Մենք պէտք է հաւատարիմ մնանք այն բաներուն, ինչ որ մեզի սորվեցուցած են: Պողոսը չի խօսիր մարդոց կարծիքներու, հոգեբանութեան, հասարակագիտութեան կամ այս աշխարհի համակարգին պատկանող իմաստութեան մասին. ան նկատի ունի Աստուածաշունչը: Առաքեալը կը յորդորէ իր հոգեւոր որդիին հաւատարիմ մնալ Աստուծոյ խօսքին: Ան կը շեշտադրէ, թէ որքան կարեւոր է, որ ան մշտապէս արթուն պահէ այն իր սրտին մէջ: Ինչպիսի՞ աշխարհի մէջ մենք պիտի ապրէինք, եթէ Ադամն ու Եւան այսպէս վարուէին:

Պատկերացուցէ՛ք վարկածային իրավիճակ մը. դուք պէտք է անցնիք մեծ ականապատուած դաշտի մէջէն: Բացի պահուած պայթուցիկ գործիքներէն՝ այդ տարածքին կան շարժուն աւազներ, մահացու ծուղակներ, թունաւոր բոյսեր եւ բնական խորունկ փոսեր:

Մինչեւ ճամբայ ելլելը, ձեզի քարտէզ կու տան, ուր պատկերուած են բոլոր ականները եւ բնական փոսերը, ու կը բացատրեն, թէ ինչպէս կարելի է խուսափիլ ծուղակներէն, շարժող աւազներէն եւ թունաւոր բոյսերէն: Ինչպէ՞ս կը վերաբերուէիք այդ քարտէզին: Արդեօ՞ք կը դնէիք այն ձեր ուսապարկին մէջ՝ ձեր սնունդի եւ ջուրի շիշի կողքին, եւ պիտի կարդայիք այն միայն՝ երբ ճամբան լուրջ խնդիրներու հանդիպէիք: Արդեօ՞ք կը համարէիք, որ այն պարզապէս ժամանակ առ ժամանակ ընթերցելու համար է: Արդեօ՞ք աչքէ պիտի անցնէիք այն միայն ճամբու սկիզբը՝ վստահ ըլլալով, որ կրնաք յիշել այն ամէնը, ինչ որ հոն գրուած է: Կարելի՞ է ըսել, որ դուք ճիշդ այսպէս պիտի վարուէիք: Այդ պարագային դուք դուրս պիտի ելլէիք այդ դաշտէն ծանր վիրաւորուած, կամ ալ հոնկէ ձեզ դուրս պիտի հանէին գոց պարկի մէջ:

Առիթ տուէ՛ք ըսել այն, ինչ որ արդէն իսկ ակնյայտ է: Իմաստուն մարդը ուշադրութեամբ պիտի կարդար քարտէզը, պիտի ուսումնասիրէր այն, պիտի խորհէր ասոր մէջ ներկայացուած տեղեկութեան շուրջ, իսկ յետոյ այնպիսի տեղ մը կը դնէր, որ դիւրին կարենար վերցնել: Ան յաճախ պիտի անդրադառնար այդ քարտէզին իր ճամբու ընթացքին եւ զգուշաբար պիտի ընտրէր իր շաւիղները՝ համաձայն իր գիտցածին: Եթէ ստիպուած ըլլայիք այսպիսի ճամբայ մը անցնիլ, արդեօ՞ք նոյնը պիտի չընէիք:

Իրականութեան մէջ, մենք այդպիսի ճամբայէ կ'անցնինք ամէն օր, եւ մեր քարտէզը՝ Աստուածաշունչն է: Ես պիտի թուարկեմ քանի մը բանալի խօսքեր: Կը խնդրեմ, պարզապէս աչքէ մի՛ անցընէք ատոնք, այլ ջանասիրաբար կարդացէ՛ք ամէն մէկ խօսքը: Ատոնք ե՛ւ կը խրախուսեն մեզ, ե՛ւ կը զգուշացնեն, թէ ինչպէս վարուինք մեր «սուրբգրային քարտէզի»ն հետ՝ այս աշխարհի մահացու դաշտէն անցնելու ժամանակ: Կարդալու ընթացքին ուշադրութիւն դարձուցէ՛ք «զգոյշ» կամ «զգուշութեամբ» բառերուն:

«Դուք պէտք է *զգուշանաք*, որ հնազանդիք ձեր Տէր Աստուծոյ բոլոր պատուիրաններուն՝ ամենայն մանրամասնութեամբ հետեւելով Անոր հրահանգներուն» (Երկրորդ Օրինաց 5.32, NLT):

Ոչ թէ քանի մը պատուիրանի, այլ՝ բոլոր պատուիրաններուն: Մենք պէտք է ամենայն մանրամասնութեամբ լսենք եւ հետեւինք Անոր հրահանգներուն: Ան խորապէս կը սիրէ մեզ եւ չ'ուզեր, որ մենք լուրջ վնասներ կրենք կամ մահանանք ճամբուն վրայ: Կրկին՝

«Ուշադիր լսէ՛... եւ *զգուշացի՛ր*, որ հնազանդիս: Այդ պարագային ամէն բան լաւ պիտի ըլլայ քեզի համար...» (Երկրորդ Օրինաց 6.3, NLT):

Երբ մենք ե՛ւ լսենք, ե՛ւ զգուշութեամբ հնազանդինք, ամէն բան մեզի համար լաւ պիտի ըլլայ: Աստուած Ինքը կ'երաշխարդէ ասկա՝ Իր խոստումին համաձայն: Մենք կը տեսնենք նոյն հրահանգը Երկրորդ Օրինաց 8.1, 12.28, 32 եւ 28.13 խօսքերուն մէջ: Կարդալով այս խօսքերը՝ դուք պիտի տեսնէք, որ եթէ ականջ դնենք Աստուծոյ պատուիրաններուն, մենք պիտի վայելենք լիարժէք կեանք, մեր աշխատանքը աւելի արդիւնաւէտ պիտի դառնայ, հասարակութեան մէջ մենք միշտ բարձր տեղ պիտի ըլլանք եւ երբեք ցած տեղ պիտի չըլլանք կամ ետեւ պիտի չմնանք: Դուք կը հասկնա՞ք, թէ որքան կարեւոր է զգուշութեամբ կարդալ Աստուածաշունչը, նաեւ լսել ու հնազանդիլ Անոր խօսքերուն:

Թերեւս դուք չհամաձայնիք՝ ըսելով. «Բայց ճո՛ն, այս հրահանգները տրուած էին օրէնքին տակ. ասոնք հինկտակարանեան պահանջներ են: Մենք շնորհքի նոր ուխտի տակ ենք: Արդե՞օ՞ք Յիսուսը չազատեց մեզ այս յոգնեցուցիչ բեռէն»: Յիսուսը իսկապէս ազատեց մեզ օրէնքէն, բայց ոչ՝ Աստուծոյ խօսքին ականջ դնելու շարունակական յորդորներէն, որոնք գրուած են Աստուածաշունչին մէջ: Այս պատուէրը մինչեւ օրս խիստ կարեւոր է մեզի համար: Կարդացէ՛ք այս հրահանգները, որոնք գրուած են Նոր կտակարանին մէջ.

«Մովսէս ըսաւ. «Ձեր Տէր Աստուածը պիտի բարձրացնէ ձեզի համար Մարգարէ մը [Յիսուսին] իմ նման՝ ձեր իսկ ժողովուրդէն: *Ձգուշութեամբ* լսեցէ՛ք այն ամէնը, ինչ որ Ան կը պատուիրէ ձեզի»» (Գործք 3.22, NLT):

Մենք եւս մէկ անգամ յանձնարարութիւն կը ստանանք՝ *զգուշութեամբ* լսելու Յիսուսի բոլոր խօսքերը (ոչ թէ ատոնց մեծ մասը), որոնք ուղղուած են մեզի: Լսեցէ՛ք Յակոբոս առաքեալին.

«Բայց եթէ դուք *զգուշութեամբ* նայիք այն կատարեալ օրէնքին, որ ազատ կ'արձակէ ձեզ, եւ եթէ դուք կատարէք այն, ինչ որ այդ օրէնքը կ'ըսէ, եւ չմոռնաք այն, ինչ որ լսեցիք, Աստուած պիտի օրհնէ ձեզ՝ ատիկա ընելու համար» (Յակոբոս 1.25, NLT):

Անկէ բացի՝ Աստուծոյ խօսքը կը սորվեցնէ մեզի.

«Մեր ներսը ապրող Սուրբ Հոգիին զօրութեան միջոցով, *զգուշութեամբ* հսկէ՛ այն սուղ ճշմարտութիւնը, որ վստահուած է քեզի» (Բ. Տիմոթէոս 1.14, NLT):

«Այնպէս որ, մենք պէտք է մեծ *զգուշութեամբ* ականջ դնենք այն ճշմարտութեանը, որ լսեցինք, որպէսզի չշեղինք անկէ» (Եբրայեցիս 2.1, NLT):

Առօրեայի ճանապարհէն շեղիլը, որպէս կանոն, գիտակցաբար տեղի չ'ունենար: Երբ դեռահաս էի եւ ծուկ կը բռնէի գետին մէջ, երբեմն այնքան կ'ուզէի շուտ սկսիլ, որ կը մոռնայի խարսխել նաւակը՝ ծուկ բռնելէն առաջ: Ես տարուած էի ձկնորսութեամբ, եւ կէս ժամ յետոյ, երբ վեր կը նայէի, չէի ճանչնար ակը: Ես անգիտակցաբար շեղած էի կամ հեռացած էի իմ գտնուած վայրէն:

Մենք կը շեղինք ճշմարտութենէն, երբ յատուկ ուշադրութիւն չենք դարձնէր ատոր: Ատիկա տեղի կ'ունենայ, երբ մենք բաւականին ժամանակ է, որ չենք կարդացած ու լսած Աստուծոյ խօսքը, չենք մտորած ատոր շուրջ եւ չենք հնազանդած ատոր: Այն, ինչին վրայ մենք չենք կեդրոնանար, ի վերջոյ կը մարի մեզի համար: Այդ պարագային դիրին կը շեղինք, եւ Աստուծոյ կամքը կը փոխարինուի մեզ շրջապատող մարդոց ազդեցութեամբ եւ հասարակութեան ձայներով: Մենք կը սկսինք ընդունիլ այն, ինչ որ բարի կը թուայ՝ ըստ մեր աղաւաղուած գնահատման:

Նախորդ գլուխին մէջ մենք հաստատեցինք կարեւոր ճշմարտութիւն մը. չկայ ոչ մէկ բարի բան մեզի համար՝ առանց Աստուծոյ կամքին: Դուք համաձայն էք, որ Աստուծոյ կամքը յայտնուած է Աստուածաշունչին մէջ: Եթէ ձեր պատասխանը դրական է, ժամանակն է կառուցել մեր հիմքը:

ՀԻՄՔԸ

«Աստուածապաշտ մարդիկ մնայուն հիմք ունին»:
— Առակաց 10.25, NLT

Եթէ դուք Աւետարանին մէջ կը հաւատաք
այն բաներուն, որոնք ձեզի համար հաճելի կը թուան,
եւ կը մերժէք այն բաները, որոնք հաճելի չեն թուար,
դուք կը հաւատաք ոչ թէ Աւետարանին,
այլ՝ դուք ձեզի:
— Սբ. Օգոստինոս Երանելի

Թոյլ տուէ՛ք յիշեցնել այս գիրքի ուղերձի երեք կողմերուն մասին:
Առաջինը՝ մեր հիմքն է, երկրորդը՝ այն, ինչ որ մեր կեանքը
միասնութեան մէջ կը պահէ, եւ երրորդը կը խորհրդանշէ մեր կեանքի
կառուցումը: Մենք պիտի խօսինք այս երեք կողմերուն մասին մինչեւ
գիրքի ավարտը:

Հիմքը անչափ կարեւոր է Աստուծոյ հետ ճիշդ փոխյարաբերութիւն-
ներ ունենալու համար: Եթէ դուք երկար ժամանակուան հաւատացեալ
էք, ես կը յորդորեմ ձեզ՝ անպայման ընթերցել այս խօսքերուն հետեւող
համառօտ դիտարկումը: Այն ոչ միայն պիտի ամրացնէ ձեր հիմքերը,
այլեւ՝ այն մարդոց, որոնց դուք կ'առաջնորդէք եւ որոնց կեանքին մէջ
ազդեցութիւն ունիք, եւ պիտի օգնէ փոխյարաբերութիւններ կառուցելու
մեր Արարիչին հետ:

Գրուած է.

«Սուրբ Գիրքը կ'ըսէ. «Ոչ ոք արդար չէ. չկայ նոյնիսկ մէկը: Ոչ
ոք ճշմարտապէս իմաստուն չէ... բոլորը իրենց երեսը դարձու-
ցած են. բոլորը անպէտք դարձած են: *Ոչ ոք բարի կը գործէ,
չկայ նոյնիսկ մէկը*» (Հռովմայեցիս 3.10-12, NLT):

Ոչ ոք բարի կը գործէ, չկայ նոյնիսկ մէկը: Բացի Յիսուս Քրիստոսէն՝
չկայ որեւէ մարդ, որ երբեք ապրած է կամ կ'ապրի այս երկրին մէջ, որ

հետևողականորեն բարի գործած է կամ կը գործէ՝ Աստուծոյ չափանիշներուն համաձայն: Պատճառը այն է, որ ամէն մարդ ծնած է որպէս ստրուկ: Այո, թէ՛ դուք, թէ՛ ես ծնած ենք որպէս ստրուկներ: Դուք կրնաք հարցնել. «Ինչի՞ ստրուկ»: Մեղքի: Պօղոս կը գրէ այն մարդոց, որոնք ազատ արծակուած են անկէ. «Ժամանակ մը դուք մեղքի ստրուկներ էիք» (Հռովմայեցիս 6.17, NLT):

Ադամն ու Եւան մահացան այն պահուն, երբ չինազանդեցան Աստուծոյ: Աստուած զգուշացուցած էր այդ դառն ճակատագրին մասին արգիլուած պտուղը ուտելէն շատ աւելի առաջ: Այնուամենայնիւ, շատ տարիներ անցան, մինչեւ որ երկուքն ալ մահացան բնական մահով:

Այսպիսով, հարց կը ծագի. ինչպէ՞ս Ադամն ու Եւան մահացան այն օրը, երբ կերան այդ պտուղը: Մահը տեղի ունեցաւ անոնց էութեան կեդրոնը՝ անոնց հոգիին մէջ: Անոնք բաժնուեցան Աստուծմէ՝ Կեանքը տուողէն, եւ ձեռք բերին ներյատուկ յատկանիշներ, որոնք հակառակ էին Անոր յատկանիշներուն: Որպէս հետեւանք՝ անոնց զաւակները ծնան նոյն ներքին յատկանիշներով, եւ ատոնք փոխանցուեցան սերունդէ սերունդ՝ մինչեւ մեր օրերը: Ծննդոց 5.3-ը կը հաստատէ այս փաստը. «Երբ Ադամ 130 տարեկան էր, ան որդի մը ունեցաւ, որ ճիշդ անոր պէս էր՝ անոր հոգիին եւ պատկերին համեմատ» (MSG):

Մարդկութիւնը արդէն անկարող էր ճշմարտապէս ճանչնալու կամ կատարելու բարին. անոնց ներքին բարոյական կողմնացոյցը թերի դարձած էր: Հետեւաբար, միայն Աստուծոյ ազդեցութիւնը այս երկրին մէջ կ'ուղղորդէր մարդկութիւնը դէպի ճշմարիտ բարութիւնն ու արդարութիւնը, քանի որ մարդը արդէն կ'առաջնորդուէր մեղքով: Առանց աստուածային առաջնորդութեան՝ բարին ու չարը աղաւաղուած էին անոր համար: Այժմ մարդկութեան նոր տէրը եւ անոնց կեանքերուն մէջ ներգործողը ան էր, որ Եդեմի պարտէզին մէջ մտած էր օձին մէջ՝ սատանան՝ անհնազանդութեան թագաւորը:

Աստուած մարդոց տուած էր երկիրը: Ան տուած էր անոնց իշխանութիւնը ամբողջ երկրի վրայ, բայց անոնք սատանային յանձնեցին զայն: Հազարաւոր տարիներ յետոյ սատանան բարձր լեռ մը տարաւ Յիսուսին, ցոյց տուաւ ամբողջ աշխարհը եւ համարձակ յայտարարեց. «Այս ամէն իշխանութիւնը ու անոնց փառքը Քեզի պիտի տամ, վասնզի [այն] ինձի յանձնուած է, եւ որու որ ուզեմ, կու տամ զանիկա» (Ղուկաս 4.6): Սատանան կրնար այդպէս խօսիլ, որովհետեւ այդ իշխանութիւնը տրուեցաւ անոր Եդեմի պարտէզին մէջ:

Աստուած չէր կրնար այս երկիրը զալ աստուածային կերպարանքով, որպէսզի փրկէր մեզ, քանի որ երկիրը մարդոց տրուած էր: Մարդ-

կութիւնը ինքը զիջած էր իրեն տրուած իշխանութիւնը. հետեւաբար, միայն մարդը կրնար ետ վերցնել զայն: Աստուած ծրագիր ունէր Ադամի օրինազանցութենէն շատ առաջ, քանի որ Ան կանխատեսեց Ադամի ընտրութիւնը մինչեւ ժամանակուան սկիզբը: Ան որոշեց երկիր գալ որպէս Մարդ եւ ետ գնել մարդկութեան ազատութիւնը՝ փրկելով զանոնք ստրկութենէն: Աստուած ուղարկեց Իր Որդին՝ Յիսուս Քրիստոսը: Ան ծնաւ կնոջմէն, որուն շնորհիւ Ան հարիւր տոկոսանոց մարդ էր, բայց բեղմնաւորուեցաւ Աստուծոյ Սուրբ Հոգիէն, որուն շնորհիւ Ան հարիւր տոկոսանոց Աստուած էր: Այս պատճառով, Յիսուս ազատ էր այն ստրկութեան անէծքէն, որուն ներքոյ մենք ծնած ենք:

Յիսուսի կեանքը այս երկրի վրայ կատարեալ էր: Ան ոչ մէկ անգամ անհնազանդ գտնուեցաւ Աստուծոյ: Որպէս միակ անմեղ Մարդ, որ երբեք ապրած էր այս երկրի վրայ՝ Ան տուաւ Իր կեանքը մարդկութեան ազատութեան համար: Խաչին վրայ Յիսուս Իր վրայ վերցուց անցեալին մէջ, ներկայի կամ ապագայի մէջ երբեք ապրած իւրաքանչիւր մարդու դատաստանը: Ան Իր թափած արքայական արիւնով զին վճարեց՝ մեզ ստրկութենէն ազատելու համար:

Ան մահացաւ եւ թաղուեցաւ: Քանի որ Անոր կեանքը Աստուծոյ առջեւ կատարեալ էր, երեք օր յետոյ Աստուծոյ Հոգին յարութիւն տուաւ Անոր մեռելներէն: Այժմ Ան նստած է Ամենակարող Աստուծոյ աջ կողմը, Որ այսպիսի հրաման արձակած է.

«Վասնզի եթէ քու բերնովդ Յիսուսը Տէր խոստովանիս ու սրտիդ մէջ հաւատաս, թէ Աստուած զԱնիկա մեռելներէն յարուցանեց՝ պիտի փրկուիս: Վասնզի սրտով կը հաւատայ մէկը արդարանալու համար ու բերանով կը խոստովանի փրկուելու համար» (Հռովմայեցիս 10.9, 10):

Այն պահուն, երբ կ'ընդունինք Յիսուս Քրիստոսը՝ որպէս մեր Տէր, աներեւակայելի հրաշք տեղի կ'ունենայ: Մեր մեղքի եւ մահուան բնութիւնը ակնթարթօրէն կը հեռանայ, եւ կը ծնի նոր մարդ՝ ստեղծուած Յիսուսի պատկերով: Այս նոր ծնունդը կը վերաբերի մեր հոգիին (մեր իրական էութեան), ոչ թէ մեր մարմինին: Մեր մարմինը տակաւին ապականած է եւ օր մը պիտի մահանայ: Այս նոր կեանքը կը տրուի միմիայն Աստուծոյ շնորհքի պարգեւին հիման վրայ. այն որեւէ կապ չունի մեր բարի վարքին հետ, եւ չի շնորհուիր մեզի՝ որպէս արժանի հատուցում մեր գործերուն համար: Այս ճշմարտութիւնը անփոփոխ է:

Կարելոր է նշել, որ վերոյիշեալ Հռովմայեցիս թուղթէն մէջբերուած հատուածը կը պնդէ, որ դուք պէտք է դաւանիք Յիսուսը որպէս *Տէր*,

ոչ թե որպէս *Փրկիչ*: Ահա եւ հիմնարար սխալմունք մը, որ կը գերիշխէ Արեւմուտքի երկիրներու Եկեղեցիին մէջ: «Տէր» բառը յունարէն լեզուին մէջ «*կիրորոս*»-ն է, որ կը նշանակէ՝ «տէր», «սեփականատէր», «գերագոյն իշխանութիւն ունեցող»:

Յիսուսին միայն որպէս Փրկիչ դաւանիլը ազատութիւն եւ նոր կեանք չի բերեր: Ես կը գիտակցիմ, որ ասիկա խիստ արտայայտութիւն է, որ հակառակ է այն ընդունուած ձեւին, որով մենք կը դիմենք կորսուած մարդոց, բայց այն կը համապատասխանէ Աստուածաշունչին:

Աստուածաշունչին մէջ «*փրկիչ*» բառը գրուած է 36 անգամ, սակայն «*տէր*» բառին կը հանդիպինք 7.800 անգամ: Ձեր կարծիքով Աստուած ինչի՞ վրայ կը շեշտադրէ: «Տէր» տիտղոսը ցոյց կու տայ այն *դիրքը*, որ Ան ունի մեր կեանքին մէջ, իսկ «Փրկիչ» տիտղոսը կը նկարագրէ այն *աշխատանքը*, որ Ան կատարած է մեզի համար: Մենք չենք կրնար մասնակից ըլլալ Անոր *աշխատանքին*, քանի որ տակաւին չենք հնազանդած այն *դիրքին*, որ Ան ունի՝ որպէս Տէր եւ Թագաւոր:

Մենք ծնած ենք որպէս ստրուկներ: Յստակ ըսելու համար՝ մենք մեղքի սեփականութիւնն էինք: Այնուամենայնիւ, մենք ստեղծուած ենք ազատ կամքով, եւ, հետեւաբար, պէտք է մենք մեզի հաստատ որոշում կայացնենք եւ հռչակենք, որ կը փոխենք մեր տէրը: Փրկութիւնը տրուած է ամէն մարդու, բայց իւրաքանչիւր անձ պէտք է անհատապէս որոշում կայացնէ ընդունելու այն՝ Աստուծոյ պայմաններով:

Բանտ՝ կղզիի վրայ

Ես պիտի պատմեմ յօրինուած պատմութիւն մը՝ այս ճշմարտութիւնը բացատրելու համար.

Պատկերացուցէ՛ք, որ ձեր ամբողջ ընտանիքը բանտի մէջ է՝ կղզիի մը վրայ, որուն տէրը շատ չար մարդ է: Շատ ժամանակ առաջ բարի թագաւոր մը՝ հեռու երկրէն, այդ կղզին ձեր մեծ հայրիկին նուիրած էր: Սակայն ձեր մեծ հայրիկը լուրջ սխալի մը առիթ տուած էր. ան չէր հսկած այն: Այդ չար տէրը՝ ապստամբ մարդոցմէ բաղկացած իր աւազակախումբով, գաղտնի եկած ու գրաւած էր այդ կղզին՝ ստրկացնելով ձեր մեծ հայրն ու անոր բոլոր ժառանգորդները: Երբ կղզին իրենցը դարձաւ, անոնք բանտեր կառուցեցին եւ բանտարկեցին ձեր ամբողջ ընտանիքը:

Կեանքը այդ կղզիին մէջ աստիճանաբար համապատասխանեցաւ այդ չար տիրոջ եւ անոր աւազակախումբի բնութեան՝ հասնելով բացարձակ ապականութեան եւ անառակութեան: Այդ պատճառով բարի թագաւորը կործանման դատապարտեց այդ կղզին: Բայց եւ այնպէս, քանի

որ ան կը սիրէր ձեր ընտանիքը, կղզին ոչնչացնելէն առաջ ան եկաւ եւ կըուեցաւ չար տիրոջ բանակին դէմ ու պարտութեան մատնեց զայն:

Անկէ յետոյ բարի թագաւորը բացաւ բոլոր բանտերու դռները եւ յայտարարեց. «Այժմ բոլոր բանտարկեալները ազատ են: Ձեզմէ իւրաքանչիւրը կրնայ դուրս ելլել բանտէն, եթէ ուրանայ չար տիրոջ իշխանութիւնը եւ հաւատարմութեան երդում տայ ինծի»:

Շնորհիւ անոր բարութեան՝ ձեր ընտանիքը ստացաւ երկար սպասուած ազատութիւնը: Այնուամենայնիւ, բարի թագաւորը չի ստիպեր ձեզ՝ հետեւելու իրեն: Ամէն բանտարկեալ ի՛նքը պէտք է քայլ առնէ (եթէ բարի թագաւորը ոչ թէ ընտրութեան հնարաւորութիւն տար, այլ պահանջէր աստիկա ամէն մէկէն, այդ կղզիին մէջ պարզապէս եւս մէկ բռնատիրութիւն պիտի հաստատուէր): Եթէ որոշում կայացնէք ընդունիլ ազատութիւնը, ձեզմէ պիտի պահանջուի, որ դուրս ելլէք ձեր բանտախուցէն, հետեւիք ձեր նոր թագաւորին՝ նստելով անոր նաւը, դառնաք անոր ենթականերէն մէկը եւ ապրիք անոր հրաշալի թագաւորութեան օրէնքներով: Ձեզի ընծայուած է այս հնարաւորութիւնը, բայց դուք պէտք է ընդունիք բարի թագաւորի պայմանները:

Բարի թագաւորը կը համարուի ձեր ընտանիքի *փրկիչը*: Այնուամենայնիւ, անոր փրկարար աշխատանքէն օգուտ քաղելու համար, ընտանիքի անդամներէն իւրաքանչիւրը պէտք է համաձայնի ի սրտէ հնազանդիլ անոր, այսինքն՝ հնազանդիլ անոր թագաւորութեան օրէնքներուն: *Ձեր բանտարկուած ընտանիքի անդամներէն ոչ ոք կրնայ ընդունիլ միայն թագաւորի փրկութիւնը եւ հեռանալ կղզիէն՝ առանց անոր իշխանութեան հնազանդելու:*

Եթէ որոշէք չհետեւիլ բարի գահակալին, դուք պարզապէս ձեր տեղը պիտի մնաք: Սակայն թագաւորին ռազմանաւերը արդէն տեղակայուած են կղզիին ափամերձ ջուրերուն մէջ՝ պատրաստ ռմբակոծելու եւ ոչնչացնելու դատապարտուած կղզին, հազիւ որ ան հեռանայ հոնկէ: Ձեր ընտանիքի անդամները, որոնք չեն ուզեր ընդունիլ բարի թագաւորին *իշխանութիւնը*, պիտի կրեն միեւնոյն հետեւանքները, ինչ որ կրեցին չար տէրն ու անոր աւազակախումբը, թէեւ թագաւորը պայքարած էր՝ բոլորիդ ազատ արծակելու համար, եւ բացած էր ձեր բանտախուցերու դռները:

Լսեցէ՛ք ինծի, սիրելի՛ ընթերցող: Աստուած չէ ստեղծած դժոխքը ոեւէ մէկուն համար: Ան ստեղծած է այն սատանային եւ անոր հրեշտակային բանակներուն համար: Դատաստանի օրը Յիսուս պիտի ըսէ անոնց, որոնք չէին ընդունած Անոր թագաւորական իշխանութիւնը.

«Մէկդի գացէ՛ք Ինծմէ, անիծեալներ, յաւիտենական կրակին մէջ, որ պատրաստուած է սատանային ու անոր հրեշտակներուն համար» (Մատթէոս 25.41):

Դժոխքը՝ շատ իրական վայր է: Յիսուս ասելի շատ կը խօսէր ատոր մասին, քան Երկինքին: Ան չէր դիտարկեր դժոխքի նկարագրութիւնը (այն, որ դժոխքին մէջ կայ չարչարանք, եւ որ դժոխքը վերջ չունի) որպէս գթասրտութեան պակաս: Դժոխքը՝ յաւիտենական տուն է մեռածներուն համար, որոնք կը մերժեն Անոր սիրոյ իշխանութիւնը:

Համաձայն Յիսուսի խօսքերուն՝ այս պատիժի եւ անտանելի չարչարանքներու վայրը պատրաստուած չէ եղած մարդոց համար, սակայն, ցաօք, մեր նախահայր Ադամը իր անհնազանդութեան պատճառով մեզ նոյնպէս ենթակայ դարձուց գալիք դատաստանին: Այժմ սատանային սպասուող ճակատագիրը կը սպասուի նաեւ մեզի, եթէ մենք չփոխենք մեր տէրը: Թէեւ Յիսուս փրկած է ամբողջ մարդկութիւնը Աստուծոյ բարկութենէն, շատերը դատաստանի պիտի ենթարկուին սատանային հետ, որովհետեւ անոնք տակաւին սատանային բնութիւնը կը կրեն: Ըստ էութեան, անոնք որոշեցին մնալ կղզիին մէջ:

Թերեւս հարցնէք. «Ինչո՞ւ Աստուած չի կրնար ողորմութիւն ցուցաբերել եւ առիթ տալ մարդոց մուտք գործելու Իր թագաւորութիւնը իրենց ներկայ վիճակին մէջ»: Պատճառը հետեւեալն է. այն մարդիկ, որոնք չեն ուզեր Յիսուսինը ըլլալ, իրենց ներսը տակաւին կը կրեն ապականած եւ չար հոգեւոր բնութիւնը: Հազիւ որ անոնք հեռանան այս երկրէն, այդ բնութիւնը յաւիտեան պիտի պատկանի անոնց: Եթէ անոնց առիթ տան մուտք գործելու Աստուծոյ յաւիտենական թագաւորութեան մէջ, անոնք պիտի ապականեն այն եւ վնաս պիտի հասցնեն շատ անմեղ մարդոց:

Ճիշդ ասիկա էր պատճառը, որ Աստուած հեռացուց Ադամն ու Եւան կեանքի ծառէն, որ կը գտնուէր Եդեմական պարտէզին մէջ:

«Եւ Տէր Աստուած ըսաւ. «Ահա մարդ արարածները Մեզի պէս դարձած՝ ճանչնալով ե՛ւ բարին, ե՛ւ չարը: Ի՞նչ պիտի ըլլայ, եթէ անոնք պարզեն իրենց ձեռքը, վերցնեն կեանքի ծառի պտուղէն եւ ուտեն այն: Այդ ժամանակ անոնք յաւիտեան պիտի ապրին»: Այնպէս որ, Տէր Աստուած վտարեց զանոնք Եդեմի պարտէզէն» (Ծննդոց 3.22,23, NLT):

Աստուծոյ սէրը պաշտպանեց մեզ յաւիտեան մահացած բնութիւն ունենալէն:

Իշխանութիւն

Արեւմուտքի եկեղեցին շեշտադրած է այն աշխատանքը, որ Յիսուսը կատարած է մեզի համար՝ որպէս Փրկիչ, շատ ասելի, քան Անոր դիրքը՝ որպէս Տէր: Այդ պատճառով մեր հնազանդութեան պակասը Անոր

իշխանական դիրքին՝ զգալի ճեղք կը ստեղծե՛ մեր հիմքին մէջ: Ահա թէ ինչ կը գրէ Պօղոսը.

«Ինչպէս որ դուք ընդունեցիք Քրիստոս Յիսուսը՝ որպէս ձեր Տէրը, այնպէս ալ պէտք է շարունակէք հետեւիլ Անոր: Թոյլ տուէք, որ ձեր արմատները աճին Անոր մէջ, եւ թող որ ձեր կեանքերը կառուցուին Անոր վրայ» (Կողոսացիս 2.6,7, NLT):

Պօղոսը չ'ըսէր. «Ինչպէս որ դուք ընդունեցիք Քրիստոս Յիսուսին՝ որպէս ձեր Փրկիչ»: Մեր կեանքերը պէտք է հնազանդին Անոր իշխանական դիրքին եւ կառուցուին այդ դիրքին վրայ, ոչ թէ այն աշխատանքին, որ Ան կատարած է՝ որպէս Փրկիչ: Կարելի է այսպէս ձեւակերպել. մենք կը հնազանդինք Անոր՝ որպէս մեր միակ գերագոյն Թագաւորի, եւ միայն այդ պարագային կ'օգտուինք Անոր փրկութենէն: Ասիկա գործնականօրէն կատարելու համար՝ մենք ամուր կերպով կը հարինք Անոր Խօսքին, իմաստութեան, խորհուրդին, ցուցմութեան, շտկումներուն եւ խրատներուն, անկախ այն բանէն՝ մենք իմաստ կը գտնե՞նք աստուծոյ մէջ, թէ՞ ոչ: Մենք այլեւս չենք սնուիր մեր ծառէն, այսինքն՝ չենք փորձեր մենք մեզի որոշել, թէ ի՞նչն է ճիշդը, եւ ի՞նչն է սխալ: Մենք կ'ապրինք Անոր մէջ. Անոր կեանքը կը դառնայ մերը:

Առիթ տուէ՛ք օրինակ մը բերել: Ես երեսուն տարի է՝ ամուսնացած եմ Լիզային հետ: Ատոր առաւելութիւններէն մէկը՝ հիանալի խոհարարի հետ ապրիլն է: Լիզան համեղ կերակուրներ պատրաստելու մէջ վարպետ է: Իմ ընկերներէն քանիներ կը խնդրէին Լիզայէն՝ իրենց կանանց սորվեցնել պատրաստել թանձրուկներ, համեմունքներ՝ աղցաններու համար, եւ տարբեր ախորժելի ուտեստներ:

Երբեմն ես կ'անուանէի Լիզային իմ «փոքրիկ վարպետ խոհարարը»: Ես այդպէս անուանած պիտի ըլլամ անոր տասէն աւելի անգամներ մեր ամուսնութեան ամբողջ ընթացքին, բայց աւելի յաճախ վերջին երեսուն տարիներու ընթացքին ես անուանած եմ զինք իմ կինը: Ինչո՞ւ: Որովհետեւ այս բառը ցոյց կու տայ այն *դիրքը*, որ ան կը զբաղեցնէ իմ կեանքին մէջ: Միւս անուանումը ցոյց կու տայ այն *առաւելութիւններէն* մէկը, որ ես ստացած եմ այն պատճառով, որ ան իմ կինն է:

Այն, որ Լիզան կերակուրներ կը պատրաստէ ինծի համար, տակաւին չի նշանակեր, որ ես կը պատկանիմ անոր: Երբ անուրի էի, մէկ անգամ ան չափազանց համեղ կերակուր պատրաստեց իմ ծննդեան օրուան առթիւ: Այնուամենայնիւ, ատիկա չէ, որ մնայուն յարաբերութիւններ կառուցեց մեր միջեւ: Մեր ամուսնական յարաբերութիւնները հաստատեց այն ուխտը, որ ես կնքեցի անոր հետ: Ես ուխտեցի ձգել բոլոր աղջիկները եւ տալ իմ սիրտը միմիայն անոր՝ ըլլալով անոր ամուսինը:

Մեր փոխյարաբերութիւնները Յիսուսին հետ կը նմանին այս օրինակին: Մենք պէտք է հնազանդինք Անոր թագաւորական իշխանութեան, որպէսզի ստանանք Անոր փրկութիւնը: Մենք անմնացորդ կը նուիրենք մեր կեանքերը, որովհետեւ կը հաւատանք Անոր կատարեալ իշխանութեան, բնաւորութեան եւ սիրոյ, եւ Ան գիտէ, թէ որն է լաւագոյնը մեզի համար: Թէեւ Ան ի սրտէ կը ցանկայ մտերմօրէն հաղորդակցիլ մեր հետ եւ կատարելապէս կը սիրէ մեզ, Ան թագաւորներու թագաւորը եւ տէրերու Տէրն է, եւ մուտք չի գործեր մեր կեանքերը՝ ըլլալով երկրորդը որեւէ բանէ կամ ոեւէ մարդէ յետոյ:

Ես անթիւ անգամներ ակնաւատես եղած եմ Հիւսիսային Ամերիկայի եւ այլ արեւմտեան երկիրներու եկեղեցիներուն մէջ, որ ծառայողները փրկութիւն կ'առաջարկեն Աստուծոյ փնտռող մարդոց՝ առանց յիշատակելու Յիսուսի իշխանութիւնը: Ծառայողները կ'ըսեն. «Ղո՛ւք պէտք է պարզապէս դաւանիք Յիսուսը որպէս Փրկիչ եւ Աստուծոյ զաւակ պիտի դառնաք», կամ՝ «Ինչո՞ւ չդարձնէք Յիսուսե ձեր Փրկիչը այսօր», կամ, օրինակ՝ «Եկէ՛ք բոլորս աղօթենք այս աղօթքը. «Յիսու՛ս, եկո՛ւր իմ սրտի մէջ եւ փրկէ՛ զիս այսօր: Շնորհակալութիւն Հայր, Զիս Աստուծոյ զաւակ դարձնելու համար: Ամէ՛ն»»: Անոնց բոլոր կոչերը Աստուծոյ ընտանիքին միանալու համար կ'ըլլան՝ առանց, նոյնիսկ, մէկ բառ ըսելու այն մասին, որ մարդիկ պէտք է ձգեն այս աշխարհի համակարգը եւ սեփական ճանապարհները՝ Յիսուսին հետեւելու համար:

Այս ուղերձը դրական ու բարի կը թուայ եւ կապուած է համայնօրուածէն անջատ քանի մը նորկտակարանեան հատուածներու հետ: Այնուամենայնիւ, արդեօ՞ք այդ ուղերձը կը համապատասխանէ Նոր կտակարանի ընդհանուր ուսմունքին: Արդեօ՞ք այն Աստուծոյ իմաստութիւնն է: Թէ՞ մենք կրճատած ու խմբագրած ենք փրկութեան ճշմարիտ ուղերձը՝ ստանալու համար այնպիսի ուղերձ, որ հաճելի է լսել, եւ որ կը համապատասխանէ Աստուծոյ փնտռող մարդոց ցանկութիւններուն: Կարելի՞ է, որ այսպէս վարուելով՝ մենք կը սնուինք մեր իսկ գնահատման ծառէն:

Ուրացի՛ր քո անձը

Տեսնենք Տիրոջ փրկութեան ուղերձը: Յիսուս ըսաւ մարդոց բազմութեան.

«Ով որ կ'ուզէ Իմ ետեւէս գալ, թող իր անձը ուրանայ եւ իր խաչը վերցնէ ու Իմ ետեւէս գայ: Վասնզի ով որ կ'ուզէ իր անձը ապրեցնել պիտի կորսնցնէ զանիկա եւ ով որ Ինձի եւ աւետարանին համար իր անձը կորսնցնէ պիտի ապրեցնէ զանիկա» (Մարկոս 8.34,35):

Մենք պետք է ուրանանք մեր անձը, եթե կը պատրաստուինք հետեւիլ Անոր: Ի՞նչ կը նշանակէ ասիկա: Պարզ ըսելու համար՝ դուք չէք կրնար ծառայել երկու տէրոջ, քանի որ եթէ երկուքն ալ իրար հակասող հրահանգներ տան կամ պահանջներ ներկայացնեն ձեզի, դուք կրնաք հաւատարիմ ըլլալ միայն մէկուն: Կ'ըլլան իրավիճակներ, երբ մեր մարմինը, որ տակաւին փրկագնուած չէ, ուրիշ բան կը ցանկայ, իսկ Աստուծոյ Խօսքը ուրիշ ձեւով կ'ամաչնորդէ մեզ: Եթէ մենք տակաւին չենք որոշած հետեւիլ Յիսուսին՝ որպէս մեր կեանքի բացարձակ Տիրոջ, մենք կրնանք դիրութեամբ ընտրել մեր ճանապարհը, բայց շարունակենք համարել Չինք մեր Փրկիչը եւ դաւանիլ այդ մասին: Կարելի է արդե՞օք, որ մենք մոլորած ենք եւ ճիշդ այդպէս ալ կը հաւատանք:

Թերեւս Յիսուս ճիշդ այս պատճառով ըսաւ. «Ուրեմն ինչո՞ւ Չիս միշտ «Տէ՛ր, Տէ՛ր» կը կանչէք, թէւ դուք չէք կատարարեր այն, ինչ որ Ես կ'ըսեմ» (Ղուկաս 6.46, NLT): Ուրիշ ձեւով ըսելու համար՝ «Տէր» բառը դատարկ ու անիմաստ տիտղոս կը դառնայ: Եթէ մենք իսկապէս նկատի չունինք մեր ըսածը, երբ «Տէր» կ'անուանենք Յիսուսը, աւելի լաւ պիտի ըլլայ, որ մենք «մեծ Ուսուցիչ» անուանէինք Չինք: Այդ պարագային մենք գոնէ օգուտ պիտի քաղէինք Անոր ուսմունքներէն եւ պիտի չխաբուէինք՝ մտածելով, որ կը պատկանինք Անոր, այնինչ կարելի է, որ այդպէս չէ:

Ըստ Մարկոս 8.34,35-ի եւ շատ այլ խօսքերու Նոր կտակարանին մէջ՝ մեր անձը ուրանալը պարզապէս տարբերակ չէ, եթէ մենք կ'ուզենք հետեւիլ Անոր եւ դուրս ելլել այս դատապարտուած աշխարհէն: Այն պարտադիր պայման է՝ գալիք բարկութենէն փրկուելու համար: Ես պարզած եմ, որ Արեւմուտքի մէջ ապրող մարդիկ մեծ դժուարութեամբ կ'ընկալեն այս գաղափարը: Կը կարծեն՝ պատճառը անիկա է, որ մարդիկ կը փորձեն հասկնալ *թագաւորութեան սկզբունքները*՝ ունենալով *ժողովրդավարական մտածելակերպ*: Ժողովրդավարութիւնը յաջողութիւն ունեցաւ Ամերիկայի եւ Արեւմուտքի միւս երկիրներուն մէջ, բայց մենք չենք կրնար կսպ հաստատել Աստուծոյ հետ այսպիսի մտածելակերպով: Ան Թագաւոր է՝ իսկական Թագաւոր, ոչ թէ դրածոյ գահակալ, ինչպէս որ, օրինակ, Անգլիայի մէջ է:

Ժողովրդավարութիւնը կը սահմանուի որպէս «կառավարում ժողովուրդի կողմէն. կառավարման ձեւ, որուն մէջ գերագոյն իշխանութիւնը կը պատկանի ժողովուրդին եւ կը գործադրուի անմիջապէս անոր կամ անոր կողմէն ընտրուած գործակալներուն կողմէն»: Մենք՝ Ամերիկայի եւ միւս արեւմտեան երկիրներու ժողովուրդներս, դաստիարակուած ենք այսպիսի մտածելակերպով: Ասիկա ծրագրուած է մեր հիմքային պատկերացումներու եւ դատողութիւններու մէջ: Հետեւաբար, եթէ ինչ որ բան մը մեզի հաճելի չի գար, մենք կը հաւատանք, որ կրնանք վի-

ճարկել կամ փոխել այն, որովհետև ունինք «անձեռնմխելի» իրաւունքներ եւ խօսքի ազատութիւն՝ մեր կարծիքը արտայայտելու համար:

Թոյլ տուէ՛ք կրկին շեշտադրելու այս գաղափարը: Այս կառավարման ձեւը յաջողութիւն ունեցաւ Միացեալ Նահանգներուն մէջ, քանի որ այն նախատեսուած է մահկանացու մարդոց համար, որոնք կ'ապրին բազմակարծիք հասարակութեան մէջ: Բայց այս գաղափարները անհնար է տեղափոխել Աստուծոյ թագաւորութեան մէջ: Թերեւս յաջորդ միտքը ցնցէ մեզ՝ Արեւմուտքի բնակիչներս, բայց Աստուած՝ միապետ է: Անշուշտ, հրաշալի է, որ Ան բարեացակամ ու առատաձեռն է, սակայն վերջին խօսքը այս կեանքի բոլոր հարցերուն կը պատկանի Անոր: Եթէ մենք տեղափոխենք մեր ժողովրդավարական մտածելակերպը Աստուծոյ հետ մեր ընթացքին մէջ, մենք սոսկ երեւակայական փոխարաբերութիւններ պիտի ունենանք:

Ճշմարիտ գահակալի իշխանութեան տակ կեանքը բոլորովին ուրիշ է: «Տէր» եւ «թագաւոր» բառերը հոմանիշներ են՝ «գերագոյն իշխանութիւն ունեցող» իմաստով: Եթէ մենք իրականութեան մէջ կը ցանկանք հետեւիլ Աստուծոյ, մենք չենք կրնար արձագանգել Անոր առաջնորդութեան ժողովրդավարական մտածելակերպով: Այդ պարագային մենք ոչինչով չենք տարբերիր Ադամէն ու Եւայէն, որոնք ընտրեցին բարիի եւ չարի գիտութեան ծառը: Մենք՝ մարդիկս, տակաւին դէկին նստած պիտի ըլլանք եւ մենք կ'որոշենք, թէ ինչն է լաւագոյնը մեր կեանքին համար:

Վերցո՛ւր քու խաչը

Յաջորդը՝ Յիսուսը հռչակեց, որ մենք պէտք է վերցնենք մեր խաչը: Ի՞նչ կը նշանակէ ասիկա: Յստակ ասիկա կը նշանակէ «*ուրանայ մեր անձը*», քանի որ ինչո՞ւ Յիսուս անտեղի պիտի կրկնէր Իր ըսածը: Մենք կը գտնենք այս արտայայտութեան բանալին Գաղատացիներուն ուղղուած Պօղոսի նամակին մէջ, ուր ան կը պնդէ.

«Վասնզի ես օրէնքով մեռայ օրէնքին, որպէսզի Աստուծոյ կենդանի ըլլամ: Քրիստոսին հետ խաչը ելայ եւ ալ կենդանի եմ ո՛չ թէ ես, հապա Քրիստոս կենդանի է իմ մէջս. Բայց ես որ հիմա մարմինով կ'ապրիմ՝ Աստուծոյ որդիին հաւատքովը կ'ապրիմ, որ զիս սիրեց ու Իր անձը ինձի համար մատնեց» (Գաղատացիս 2.19,20):

Պօղոսը չէր խօսեր մարմինով խաչուած ըլլալու մասին. եթէ այդպէս ըլլար, ան մահացած պիտի ըլլար եւ պիտի չկարենար գրել այս նամակը: Ան կը խօսէր Տիրոջ հետեւելու որոշման մասին, որ կայացուցած էր տարիներ առաջ: Պօղոսը վերցուցած էր իր խաչը: Այն, թէ ինչ կը նշանակէ ասիկա, գրուած է անոր խօսքերուն մէջ. «Այլեւս ես չեմ ապրիր,

այլ Քրիստոսը կ'ապրի մեր մէջ»: Ասիկա պէտք է ըլլայ Աստուծոյ իւրաքանչիւր ճշմարիտ զաւակի հռչակումը: Մենք արդէն անկախ չենք. մենք այլեւս չենք սնուիր մեր գնահատման ծառէն, այսինքն՝ մենք մեզի չենք որոշեր բարին ու չարը: Ո՛չ. այժմ մենք կ'ապրինք Անոր մէջ, եւ մեր կեանքը կը ստանանք Անորմէ: Մենք կախուած ենք խաչի մատակարարումէն. խաչի միջոցով մենք ստացած ենք ազատութիւն ստրկութենէն, որ կարենանք ապրիլ Աստուծոյնով զօրացած հնազանդ կեանքով:

Խաչը բոլորովին նոր տեսակի կեանք կ'առաջարկէ մեզ: Մէկ ուրիշ նամակին մէջ Պօղոսը կը յայտարարէ. «...ինչպէս Քրիստոսը Հօր փառքով յարութիւն առաւ մեռելներէն, այնպէս ալ մենք կեանքի նորոգութեան մէջ պտղտոհնք» (Հռովմայեցիս 6.4): Այս կեանքի նորոգութեան շնորհիւ մենք կրնանք հրաժարիլ այն բաներէն, ինչ որ առաջ չէինք կրնար: Մեղքի բռնակալութիւնը մեր կեանքին մէջ քանդուած է, բայց մենք պէտք է որոշենք գործադրել այն, ինչ որ ստացած ենք: Մենք պէտք է որոշում կայացնենք ամբողջովին յանձնուիլ Անոր կամքին:

Պօղոս կը շարունակէ բացատրել, թէ ինչպէս գործնականին մէջ կիրառել այս մէկը. «Անոնք, որ Քրիստոսիններն են, իրենց մարմինը խաչը կը հանեն՝ բնական կիրքերով եւ ցանկութիւններով մէկտեղ» (Գաղատացիս 5.24): Եւ կրկին՝ «Բայց ես քաւ լիցի, որ պարծենամ, հապա միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսին խաչովը, որով աշխարհը ինձի խաչ ելած է, ես ալ՝ աշխարհին» (Գաղատացիս 6.14): Խաչը կը զօրացնէ մեզ, որ ապրինք ազատ՝ մեղաւոր մարմինէն եւ այս աշխարհի համակարգի զօրաւոր ազդեցութենէն:

Երիտասարդ տարիքին՝ մինչեւ Յիսուսին հանդիպիլը, ես որոշ վարքագիծեր ունէի, որոնցմէ չէի կարենար ազատիլ: Ես կը զղջայի իմ յաճախ կրկնուող քայլերուն համար, որոնց հիմքը անարգանքը, հպարտութիւնը եւ կիրքն էին, բայց որքան աւելի կը փորձէի ազատիլ ատոնցմէ, այնքան աւելի կը հիասթափէի: Ես անյուսօրէն կապուած էի մեղքով եւ ենթակայ էի ատոր իշխանութեան: Այնուամենայնիւ, երբ խաչուեցայ Քրիստոսին հետ, ես կարողացայ մեղքէն ազատ ապրիլ:

«Մենք գիտենք, որ մեր հին մեղաւոր անձերը խաչուած են Քրիստոսի հետ, որպէսզի մեղքը կորսնցնէ իր իշխանութիւնը մեր կեանքերուն մէջ: Մենք այլեւս մեղքի ստրուկներ չենք, որովհետեւ երբ մահացանք Քրիստոսին հետ, մենք ազատեցանք մեղքի իշխանութենէն» (Հռովմայեցիս 6.6,7, NLT):

Յոյսով եմ՝ դուք պարզապէս աչքէ չէք անցըներ այս աստուածաշնչեան հատուածները: Ընդունեցէ՛ք այս բառերը մինչեւ ձեր սրտի

խորերը, որովհետեւ ատոնք շատ իրական են եւ կրնան ազատութիւն տալ ձեզի: Ճշմարտութիւնը իսկապէս ոգեշնչող է: Խաչին յարիլը ոչ միայն կ'ազատէ մեզ մեղքէն, այլեւ կարողութիւն կու տայ հնազանդ ըլլալու Անոր: Գրուած է. «Խաչի ուղերձը յիմարութիւն է անոնց համար, որոնք կործանման կ'երթան: Բայց մենք, որ փրկութեան ընթացքի մէջ ենք, գիտենք, որ այն Աստուծոյ իրական զօրութիւնն է» (Ա. Կորնթացիս 1.18, NLT): Այժմ մենք կրնանք ընել այն, ինչ որ առաջ չէինք կրնար մեր ուժերով. մենք կրնանք քալել Աստուծոյ ուղիներով: Այժմ մենք կրնանք նմանիլ Աստուծոյ: Այժմ մենք կրնանք հետեւիլ Յիսուսին:

Ամփոփելով՝ պիտի ըսեմ, որ անհնար է հետեւիլ Յիսուսին՝ առանց ուրանալու մեր անձը (ծգելու մեր ճամբաները եւ յարելու Անոր գերազանց իշխանութեան) եւ վերցնելու մեր խաչը (մարմնաւորելու խաչի զօրութիւնը, որուն շնորհիւ մենք կրնանք հեռանալ մեղքէն եւ այս աշխարհի համակարգէն): Մենք կ'ապրինք՝ հաւատալով, որ Անոր կարողութիւնը գործէ մեր կեանքի մէջ եւ մեր միջոցով: Ահա թէ որքա՛ն փառաւոր փրկութիւն Աստուած շնորհած է մեզի:

Հանդիսաւոր զգուշացում

Յիսուսը զգուշացուց, որ Իր երթալէն յետոյ պիտի յայտնուի ուրիշ ւաւետարան մը: Այն լայնօրէն պիտի քարոզուի եւ պիտի ընդունուի մարդոց կողմէն, եւ պիտի առաջարկէ փրկութիւն՝ առանց Իր իշխանութեան հնազանդելու: Աշակերտները ւաւելի յստակացուցին այս զգուշացումը՝ գրելով, որ ատիկա տեղի պիտի ունենայ, երբ մօտենայ Յիսուսին գալուստը, այսինքն՝ մեր օրերուն ընթացքին: Այս լայնատարած ուսմունքային հերձուածութիւնը (աղանդը) պիտի իմաստագրկէ «Տէր» բառը, եւ այն դիրքը, որ Յիսուս մարդոց կեանքերուն մէջ ունի, պիտի վերածէ պարզ տիտղոսի: Մարդիկ «Տէր» պիտի անուանեն Չինք, բայց չեն ուրանար իրենք զիրենք, չեն վերցնէր իրենց խաչը եւ չեն հետեւիր Անոր: Ուշադրութեամբ կարդացէ՛ք Յիսուսին խօսքերը.

«Ոչ թէ ամէն, ով որ Ինձի «Տէ՛ր, Տէ՛ր» կ'ըսէ, պիտի մտնէ Երկնքի Թագաւորութիւնը, հապա անիկա, որ Իմ երկնաւոր Հօրս կամքը կը կատարէ» (Մատթեոս 7.21):

Յիսուսը կը խօսէր այն մարդոց մասին, որոնք «Տէր» կ'անուանեն *Չինք*, ոչ թէ Մուհամմէտին, ժոզէֆ Սմիթին, Պուտտային, Կրիշնային, Քոնֆուցիոսին կամ մեր ժամանակաշրջանի ոեւէ այլ սուտ մարգարէի: Ո՛չ. այս մարդիկ կը հռչակէին, որ իրենց Տէրը՝ Յիսուս Քրիստոսն է, եւ կ'ընէին ատիկա մեծ ջերմեռանդութեամբ:

Ինչո՞ւ Յիսուս երկու անգամ օգտագործեց «Տէր» բառը այս խօսքին մէջ: Մենք կը հասկնանք, որ երբ Սուրբ Գիրքին մէջ որեւէ բառ կամ արտայայտութիւն կը կրկնուի, աստիկա պատահական չէ. հեղինակը կը շեշտադրէ աստոր վրայ: Այնուամենայնիւ, այսպիսի պարագաներուն մէջ կրկնութիւնը ոչ միայն կ'ընդգծէ ըսածին իմաստը, այլեւ՝ զգացմունքային շեշտադրում կը դնէ: Օրինակ՝ Հին կտակարանին մէջ, երբ Ղաւիթը գիտցաւ, որ Յովաբի բանակը սպաննած էր իր որդին, անոր պատասխանը խիստ զգացմունքային էր. «Թագաւորը իր երեսը ծածկեց, ու մեծ ձայնով կը կանչէր. «Որդեա՛կ իմ, Աբիսողո՛ւմ, Աբիսողո՛ւմ՝ որդեա՛կ իմ, որդեա՛կ իմ» (Բ. Թագաւորաց 19.4): Չեմ կարծեր, որ Ղաւիթը կրկնեց «որդիս» բառը: Փոխարէնը՝ հեղինակը կրկնակի գրեց այն, որպէսզի ընթերցողը հասկնար, թէ որքա՛ն զգացմունքային էր Ղաւիթի սգոյ աղաղակը:

Մենք կրնանք տեսնել նոյնը Յայտնութիւն գիրքին մէջ. «Նայեցայ ու երկնքի մէջ թռչող հրեշտակի մը ձայնը լսեցի, որ մեծ ձայնով կ'ըսէր. «Վա՛յ, վա՛յ երկրի վրայ բնակողներուն՝ այն մնացած փողի ձայներուն համար, որոնք երեք հրեշտակները պիտի հնչեցնեն» (Յայտնութիւն 8.13): Ուրիշ թարգմանութիւններու մէջ գրուած է, որ հրեշտակը «բարձրածայն կը գոչէր»: Եւ մէկ անգամ հեղինակը կը կրկնէ «վայ» բառը՝ զգացմունքային շեշտադրման համար:

Նոյն կերպով, Տէրը կը փոխանցէ այս մարդոց ուժգին զգացմունքները Իր հանդէպ: Անոնք ոչ միայն համաձայն են այն ուսմունքին, որ Յիսուս Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին է, այլեւ զգացմունքային եւ ջերմեռանդ են իրենց հաւատքին մէջ: Խօսքը այնպիսի մարդոց մասին է, որոնց համար հաճելի է քրիստոնէայ ըլլալը, որոնք կը համակին զգացումներով, երբ կը խօսին իրենց հաւատքի մասին եւ կու լան երկրպագութեան ժամանակ:

Անոնք ոչ միայն խորապէս համաձայն են Քրիստոսի ուսմունքին, այլեւ կը ծառայեն Անոր.

«Ես կրնամ տեսնել աստիկա. վերջին դատաստանին հազարաւորները վեհ կեցուածքով կը մօտենան Ինձի եւ կ'ըսեն. «Տէ՛ր, մենք կը քարոզէինք ուղերձը. մենք կը հանէինք դելետրուն. բոլորը կը խօսէին այն նախագիծերու մասին, որոնք մենք ստացած էինք Աստուծմէ՛» (Մատթէոս 7.22, MSG):

Ես կ'օգտագործեմ «Մէտէ՛ճ» Աստուածաշունչը՝ այս խօսքը մէջբերելու համար, որովհետեւ այն լաւագոյնս ցոյց կու տայ, որ այս մարդիկ դիտորդներ չէին եկեղեցւոյ մէջ: Անոնք անմիջականօրէն ներգրաւուած էին իրենց եկեղեցիներու աշխատանքին մէջ կամ կ'աջակցէին: Անոնք նոյնպէս յայտնի էին Աւետարանի հանդէպ իրենց հաւատքով. «Մենք կը քարոզէինք Ուղերձը»: Անոնք կ'օգնէին մարդոց՝ փոխելով անոնց կեանքերը:

Այս վերապատմուած թարգմանութիւնը կ'օգտագործէ *«հազարաւորներ»* բառը: Այնուամենայնիւ, գրեթէ բոլոր թարգմանութիւնները կ'օգտագործեն *«շատերը»* բառը: Յունարէնին մէջ այս բառը *«պոլետոս»*-ն է, որուն սահմանումն է՝ «մեծ թիւ, քանակ եւ չափ ունեցող»⁷: Ամէն պարագային, Յիսուսը չէր խօսեր մարդոց փոքր խումբի մասին, այլ՝ շատ մեծ խումբի, եւ նոյնիսկ հնարաւոր է՝ մեծամասնութեան մասին:

Այնպէս որ, եկէ՛ք ամփոփենք. Յիսուս կը խօսի այնպիսի մարդոց մասին, որոնք կը հաւատան Աւետարանի ուսմունքներուն, Տէր կ'անուանեն Ձինք, զգացմունքօրէն ներգրաւուածութիւն ունին, կը տարածեն Անոր ուղերձը եւ քրիստոնէական ծառայութեան մէջ են: Մենք դիրութեամբ քրիստոնէաներ կ'անուանէինք անոնց: Ուրեմն, ինչո՞վ անոնք կը տարբերին ճշմարիտ հաւատացեալներէն: Յիսուս կ'ըսէ մեզի.

«Այն ատեն յայտնապէս անոնց պիտի ըսեմ, թէ Ես բնաւ ձեզի չէի ճանչնար. մէկդի՛ գացէք քովէս դուք, որ անօրէնութիւն կը գործէիք» (Մատթէոս 7.23):

Այս խօսքի բանալի արտայայտութիւնը՝ *«անօրէնութիւն գործելն»* է, որ յունարէն *«անոմիա»* բառն է: Այն կը սահմանուի *«Թայրոյի Նոր կտակարանի յունարէն-անգլերէն բառարանին մէջ»* որպէս վիճակ, երբ մարդը առանց օրէնքի է՝ կամ օրէնքի մասին անգէտ ըլլալուն, կամ այն խախտելուն պատճառով: *«Աստուածաշնչեան բառերու հանրագիտարանը»* կ'օգտնէ մեզի աւելի խորունկ հասկնալ *«անոմիա»* բառը՝ ըսելով, որ այն կրնայ նշանակել «գործողութիւններ, որոնք... միանշանակ կերպով կը խախտեն թէ՛ աստուծային, թէ՛ ներքին բարոյական սկզբունքները»: Պարզ ըսելու համար՝ անօրէն մարդը չի հնազանդիր Աստուծոյ խօսքի իշխանութեան:

Այսպիսի մարդիկ *ժամանակ առ ժամանակ* չեն սայթաքիր. փոխարէնը՝ անոնք մշտապէս կ'անտեսեն եւ կ'անարգեն Աստուծոյ խօսքը, կամ չեն հնազանդիր ատոր: Եթէ անոնք ճշմարտապէս շնորհքով փրկուած ըլլային, ոչ միայն ատելութեան վերաբերմունք պիտի ունենան մեղանչելու մասին մտքերուն, այլեւ որոշում պիտի կայացնէին ձգել իրենց կրկնուող մեղքերը: Անոնք պիտի խաչէին իրենց մարմինը՝ կիրքերով ու ցանկութիւններով, եւ պիտի ձգտէին աստուածահաճոյ բնաւորութիւն ունենալ ու պտուղ բերել:

Հետաքրքրական է նշել, որ օր մը Յիսուս պիտի ըսէ անոնց. «Ես երբեք ձեզ չեմ ճանչցած»: *«Ճանչնալ»* բառը յունարէն *«կինոսքօ»* բառն է, որ կը նշանակէ՝ մտերմօրէն ճանչնալ: Այս մարդիկ երբեք ճշմարիտ փոխարաբերութիւններ չեն ունեցած Յիսուսին հետ: Թէեւ Ձինք Տէր կ'անուանեն, բայց Յիսուսը անոնց շուրթերուն վրայ պարզապէս տիտղոս է, քանի որ անոնք չէին կատարեր այն, ինչ որ Ան կ'ըսէր: Յիսուսին

հետ փոխյարաբերություններ ունենալու ապացոյցը այն է, որ մարդը պահէ Անոր խօսքը.

«Երբ մենք կը հնազանդինք Աստուծոյ, մենք վստահ ենք, որ կը ճանչնանք Ձինք: Բայց եթէ մենք կը պնդենք, թէ կը ճանչնանք Ձինք եւ չենք հնազանդիր, մենք կը ստենք, եւ ճշմարտութիւնը մեր սրտերուն մէջ չէ» (Յովհաննէս 2.3, 4, CEV):

Յակոբոսը նոյնպէս կը խօսի այս մասին, երբ կ'ըսէ. «Տոյց տուէ՛ք ինծի, թէ ինչպէս ինչ որ մէկը կրնայ հաւատք ունենալ՝ առանց գործերու: Ես ցոյց պիտի տամ ձեզի իմ հաւատքը՝ իմ գործերով» (Յակոբոս 2.18, TEV): Եւ այս հատուածները կատարեալ համաձայնութեան մէջ են այն խօսքի հետ, որմով Յիսուսը սկսաւ այս թեման. «Դուք մարդոց գործերէն կրնաք որոշել, թէ ինչպիսին են անոնք» (Մատթէոս 7.20, NLT): Այն գործերը, որոնք նկատուի ունէր Յիսուսը, չեն վերաբերիր քրիստոնէական ծառայութեան, Աւետարանի ուղերձը քարոզելուն կամ եկեղեցի յաճախելուն, որովհետեւ այն մարդիկ, որոնք չընդունուեցան Երկինք, կը կատարէին այս ամէնը:

Թիմ Քելլըրը կը գրէ Յիսուսի այս խօսքերուն մասին.

Այս խօսքը չափազանց խիստ է: Այս մարդիկ այնպիսի հաւատք ունին, որ կը խթանէ միտքը, զգացմունքային բաւականութիւն կը պատճառէ եւ կը դրդէ անոնց ազդեցութիւն գործելու իրենց շրջապատող հասարակութեան վրայ: Բոլորս կը ցանկանք ասիկա: Մենք կը ցանկանք, որ մեր միտքը խթանուի, մենք կը ցանկանք զգացմունքօրէն ներգրաւուած ըլլալ եւ մենք կը ցանկանք ընկերվարական տեսակէտէն օգտակար մարդիկ ըլլալ: Հնարաւոր է ցանկալ մտքի խթանում, զգացմունքային բաւականութիւն, ընկերվարական արդիւնաւետութիւն, բայց չցանկալ Աստուծոյ... քանի որ, եթէ Աստուած իրականութեան մէջ ձեր կեանքին մէջ է, դուք պէտք է ձգէք ձեր կամքը: Ճիշդ ասիկա ցոյց կու տայ՝ արդե՞օք մարդը իրականութեան մէջ կը փորձէ օգտագործել Աստուծոյ, թէ՞ կը փորձէ ծառայել Անոր»⁸:

Աստուծոյ օգտագործելը կը նշանակէ՝ փնտռել Ձինք այն բաներու համար, որոնք մենք կրնանք ստանալ Անորմէ, նոյնիսկ եթէ խօսքը ընդամէնը Երկինք երթալու մասին է: Աստուծոյ ծառայելը կը նշանակէ՝ բացառապէս առաջնորդուիլ Անոր հանդէպ սիրով, իսկ եթէ մենք կը սիրենք Ձինք, ուրեմն կը պահենք Անոր խօսքերը:

Այսօր շատերը Աստուծոյ զաւակ կը համարեն այն մարդը, որ Տէր կ'անուանէ Յիսուսը, կը հաւատայ Անոր ուսմունքներուն, զգացմունքօրէն ներգրաւուածութիւն ունի եւ գործուն կերպով կը ծառայէ եկեղեցւոյ մէջ: Այնուամենայնիւ, Յիսուսի խօսքերէն մենք պարզ տեսանք, որ այս

յատկանիշները որոշիչ գործոններ չեն՝ ճշմարիտ հաւատացեալները ճանչնալու համար:

Առիթ տուէ՛ք այսպէս ըսելու. անկասկած՝ դուք պիտի գտնէք այս յատկանիշները ռեւէ ճշմարիտ հաւատացեալի կեանքին մէջ: Իրականութեան մէջ, մարդը չի կրնար ճշմարիտ հաւատացեալ ըլլալ, եթէ չունենայ ատոնք: Այնուամենայնիւ, այս յատկանիշները ունենալը չի նշանակեր, որ տուեալ մարդը իրականութեան մէջ Աստուծոյ զաւակ է: Որոշիչ գործոնը այս հարցին մէջ հետեւեալն է. Արդեօ՞ք տուեալ մարդը ուրացած է ինքզինքը, վերցուցած է իր խաչը եւ կը հետեւի Անոր: Կարճ ըսելու համար՝ *արդեօ՞ք այդ մարդը հնազանդ է Աստուծոյ խօսքերուն:*

Ասիկա Յիսուսի հանրայայտ Լեռան քարոզի աւարտական թման էր: Իր՝ յանկարծակիի բերող խօսքը եզրափակելու համար, Ան աւելցուց.

«Արդ, ով որ Իմ խօսքերս կը լսէ եւ կը կատարէ զանոնք, զանիկա պիտի նմանցնեմ խելացի (հմաստուն) մարդու մը, որ իր տունը վէմի վրայ շինեց: Անծրեւ իջաւ, ու գետերը վազեցին, ու հովերը փչցին, զարկին այն տանը, բայց չփլաւ, վասնզի վէմի վրայ հաստատուած էր: Այն, որ այս խօսքերս կը լսէ ու չի կատարեր, կը նմանի անխելք մարդու մը, որ իր տունը աւագի վրայ հիմնեց: Անծրեւ իջաւ, ու գետերը վազեցին, ու հովերը փչեցին, եւ զարկին այն տանը, ու այն փլաւ: Մեծ էր անոր կործանումը» (Մատթէոս 7.24-27):

Այս առակը կը վերաբերի Անոր զգուշացման շատերուն, որոնց առիթ պիտի չտրուէր Երկինք մտնելու, քանի որ Ան կը կապէ այս եւ նախորդ հատուածները «արդ» (կամ՝ «որովհետեւ») բառով:

Եթէ ուսումնասիրէք այն երկու տեսակի մարդիկը, որոնց մասին կը պատմէ այս առակը, տարբերութիւնը անոնց միջեւ շատ աննկատ է: Երկուքն ալ կը լսեն Անոր խօսքերը, բայց առաջին խումբը «կը կատարէ ատոնք», իսկ երկրորդը «չի կատարեր»: Երկու տուներն ալ միեւնոյնն նիւթէն են՝ միեւնոյն ուսմունքներէն: Երկուքն ալ նման տեսք ունին երկրպագութեան ժամանակ եւ ծառայութեան մէջ: Էական տարբերութիւնը՝ հիմքն է: Մէկ տունը հիմնուած էր Յիսուս Քրիստոսի իշխանութեան վրայ: Միւսը ամրացած մնացած էր մարդկային գնահատման՝ բարիի եւ չարի մասին, նոյն փիլիսոփայական «ծառիւն», որուն դարձան Ադամն ու Եւան:

Այն միտքը, որ միեւնոյն յիմարութիւնը շարունակ կը կրկնուի՝ Եդեմի պարտէզէն մինչեւ մեր օրերը, պէտք է սթափեցնէ մեզ: Այն կը փոխէ իր ձեւերը, բայց արմատը նոյնն է: Կրկին, ասիկա կարելի է ամփոփել հետեւեալ հարցումով. *«Արդեօ՞ք մենք կը կարծենք, որ աւելի լաւ գիտենք՝ ինչպէ՞ս ապրիլ, թէ՞ կը հաւատանք, որ Աստուած գիտէ, թէ ո՞րն է լաւագոյնը»:*

ՄԻ՞ԹԵ ՑՁՆԿՈՒԹԻՒՆԸ ԲՁԻՂԿԱՆ Է

«Այնպէս որ, հիմա ալ աւարտեցէ՛ք
ատիկա ընելը, որ ձեր [խանդավառուած]
պատրաստակամութիւնը՝ այս բանը
ցանկալու մէջ, հաւասար ըլլայ ձեր
կողմէն այն իրականացնելուն...»:
— Բ. Կորնթացիս 8.11, AMP

Հոգեւոր կեանքը հասկնալու ոսկէ կանոնը
ոչ թէ միտքն է, այլ՝ հնազանդութիւնը:
— Օսվալտ Չէմպերս

Պատկերացուցէ՛ք այսպիսի պատմութիւն մը. Երիտասարդ մը կը
հանդիպի երիտասարդ աղջկայ մը: Այդ աղջիկը գրաւիչ, առողջ
եւ կրկիկ է. ան լաւ խոհարար է, կը սիրէ մանուկները եւ ամենակարեւո-
րը՝ հրաշալի անձնաւորութիւն է: Երիտասարդը կը սիրահարի անոր եւ
կ'որոշէ, որ այդ աղջիկը ճիշդ անձն է, որուն հետ ան կը փափաքի իր
կեանքի մնացեալ օրերը անցընել: Ան յատուկ պահ մը կը կազմակեր-
պէ, ծունկի կ'իջնէ, փոքրիկ տուփ մը կը բանայ՝ ցոյց տալով պսպղուն
ադամանդէ քարով մատանին, եւ առաջարկութիւն կ'ընէ:

Ի ուրախութիւն անոր՝ այդ աղջիկը լայն կը ժպտայ, կը բացականչէ
ուրախութենէն, կու լայ եւ ուշքի գալէն ետք՝ ոգեշնչուած կը պատասխանէ.

- Այո՛: Այո՛: Այո՛: Նոյնիսկ չեմ կրնար հաւատալ: Ես ցնցուած եմ եւ
շատ յուզուած: Ասիկա իմ կեանքի ամենաերջանիկ օրն է: Ես այնքան
կը սիրեմ քեզ: Այո՛, ես կ'ամուսնանամ հետդ:

Անոնք կը գրկախառնուին՝ բացարձակ երանութեան մէջ: Դեռեւս
բարձր ոգեւորութեամբ, աղջիկը կը նայի ուղիղ երիտասարդի աչքերուն
եւ եռանդագին կը խոստանայ.

- Մենք հրաշալի կեանք պիտի ունենանք: Ես պիտի ըլլամ լաւագոյն կինը, այնպէս պիտի հետեւիմ մեր տունին, որ այն միշտ գեղեցիկ եւ անթերի ըլլայ, համեղ կերակուրներ պիտի պատրաստեն քեզի եւ մեր մանուկներուն համար, առողջ պիտի մնամ, նորածնէ պիտի հագնիմ եւ քուկդ պիտի ըլլամ՝ երբ որ ուզես:

Երիտասարդը կը մտածէ. *«Հրաշալի՛ է: Կ'երեւի՝ ես աշխարհի ամենաբախտաւոր տղան եմ»:*

Յանկարծ այդ աղջիկը եւս մէկ ուշագրաւ բան մը կ'ըսէ.

- Անշուշտ, կան ուրիշ տղաներ, որոնց տակաւին կը սիրեմ, ես ժամանակ առ ժամանակ պիտի հանդիպիմ անոնց:

Յնցուած՝ երիտասարդը կը կմկմայ.

- Այդպէս չ'ըլլար:

- Ինչո՞ւ ոչ, թանկագի՛նս:

Երիտասարդը ապշած է: Անոր կազմակերպած յատուկ պահը անդառնալիօրէն ձախողեցաւ: Ջգացմունքային վերելքը ի չիք դարձաւ: Ան շփոթած կը մտածէ. *«Թերեւս ան կը կատակէ՞: Բայց արդեօ՞ք արժէր կատակ ընել այսպիսի բաներու մասին, յատկապէս՝ իմ առաջարկութենէն յետոյ»:*

Անյարմար լռութենէն յետոյ, որ, կը թուայ՝ պիտի չվերջանար, աղջիկը կը փորձէ վերականգնել նախկին տրամադրութիւնը եւ խանդավառուած փոխգիջման տարբերակ կ'առաջարկէ.

- Լաւ, ի՞նչ կ'ըսես, եթէ տարուան մէջ ընդամէնը մէկ օր անցընեմ իմ միւս ընկերներուն հետ: Ես պիտի ըլլամ միայն քուկդ տարուա մէջ 364 օր: Տո՛ւր ինձի միայն մէկ օր՝ անոնց հետ ըլլալու համար:

Երիտասարդը չի հաւատար իր ականջներուն: Հիմա ակնյայտ է, որ այս աղջիկը պիտի ջանձնուի. ան լուրջ կը խօսի: Երիտասարդը կը պատասխանէ.

- Ո՛չ, այդպէս չի՛ կրնար ըլլալ:

Աղջիկը տարակուսանքի մէջ է, բայց քանի որ շատ կը սիրէ այդ երիտասարդը, աւելի լաւ տարբերակ կ'առաջարկէ.

- Լաւ, ի՞նչ կ'ըսես տարուան մէջ չորս ժամուան մասին: Տո՛ւր ինձի ընդամէնը չորս ժամ ամէն օրացուցային տարուան մէջ՝ իմ միւս ընկերներուն հետ ժամանակ անցընելու համար:

- Ո՛չ,- այս անգամ երիտասարդը աւելի հաստատ է:

Ան կրկին կ'ընդդիմանայ.

- Իսկ տարեկան քսան վայրկեա՞ն: Ընդամէնը մէկ անգամ՝ մէկ ուրիշ տղու հետ:

- Ո՛չ:

Տակաւին հաշտութեան յոյս ունենալով՝ աղջիկը կ'աղաչէ.

- Թանկագիրնս, ես իսկապէս կը սիրեմ քեզ. ես կը խելագարուիմ քեզի համար: Ես կը սիրեմ քեզ աւելի, քան ոեւէ այլ տղամարդ: Բայց ես այսպիսի կարիք ունիմ: Պարզապէս պէտք է այլ տղաներու հետ ըլլամ: Ես չեմ կրնար միայն մէկ տղամարդու ըլլայ: Ես անկեղծ կը *ցանկամ* հաւատարիմ ըլլալ քեզի եւ գիտեմ, որ ճիշդը այն է, որ ձգեմ իմ միւս կապերը, բայց եկո՛ւր իրատես ըլլանք: Այս աշխարհի մէջ այնքա՛ն լաւ տղաներ կան, եւ ես կը սիրեմ անոնց ուշադրութիւնը գրաւել: Ինչո՞ւ պէտք է հրաժարիմ անկէ: Ինչո՞ւ չեմ կրնար երկուքն ալ ունենալ:

Երիտասարդը այնքա՛ն հիասթափած է, որ այս անգամ ան պարզապէս ոչինչ կը պատասխանէ: Ան միայն գլուխը կը կախէ: Եւս քանի մը անյարմար վայրկեաններէ յետոյ աղջիկը մեղմօրէն կ'ըսէ.

- Ես պէտք է անկեղծ ըլլամ: Չեմ կարծեր, որ շատ բան կը խնդրեմ քեզմէ: Ես ուղղակի կ'ուզեմ ամբողջութեամբ վայելել կեանքը:

Ասիկա արդէն բաւական էր երիտասարդին համար:

- Ասիկա անհեթեթութի՛ւն է: Մենք չենք ամուսնանար: Ես այլեւս չեմ ուզեր քեզ տեսնել:

Այսպէս, անոնց ճանապարհները կը բաժնուին:

Վերլուծենք այս պատմութիւնը: Երիտասարդը շլացուցիչ ընկերուիի ունի, որ նաեւ հրաշալի անձնաւորութիւն է: Այս աղջիկը գերազանց է ընտանեկան կեանքի համար, կը սիրէ այդ տղան, կը կամենայ ծառայել եւ կ'ուզէ նուիրել իր լաւագոյնը անոր: Ան շատ կը ցանկայ ամուսնանալ այդ տղուն հետ: Այս ամէնը շատ լաւ է: Պարզապէս այս երիտասարդը, տարուան մէջ քսան վայրկեան պէտք է զինք ուրիշ տղու մը տայ: Ինչո՞ւ այդ տղան չի համաձայնիր անոր պայմաններուն:

Պատասխանը ակնյայտ է. այդ աղջիկը չի տար անոր իր սիրտն ու կեանքը ամբողջութեամբ: Ան գիտէ, որ պէտք է այդպէս վարուի, եւ ինչ որ չափով կը ցանկայ աստիկա, բայց իրականութեան մէջ, ան շատ հրապուրուած է ուրիշ տղաներով: Ուրիշ բան է *ցանկայլը*, եւ բոլորովին ուրիշ բան՝ *կատարելը*:

Ոչ մէկ ողջամիտ տղամարդ երբեք չամուսնանար այսպիսի աղջկայ մը հետ: Այդ պարագային, ինչո՞ւ կը կարծէք, որ Յիսուս պիտի դառնայ այդպիսի վարք ունեցող հարսնցուի ետեւէն: Եւս մէկ անգամ կարդանք Անոր խօսքերը.

«Ով որ ուզէ Իմ ետեւէս գալ, թող իր անձը ուրանայ եւ իր խաչը վերցնէ ու Իմ ետեւէս գայ: Վասնզի ով որ կամենայ (կամ ուզէ) անձը ապրեցնել, պիտի կորսնցնէ զանիկա եւ ով որ Ինձի ու Աւետարանին համար իր անձը կը կորսնցնէ, պիտի ապրեցնէ զանիկա» (Մարկոս 8.34, 35):

Ուշադրութիւն դարձուցէ՛ք՝ եթէ մենք պարզապէս *ուզենք* փրկել մեր կեանքը, մենք պիտի կորսնցնենք ամէն ինչ: Յիսուս չըսաւ. «Ով որ *ուզէ* կորսնցնել իր կեանքը Ինձի համար, պիտի փրկէ զայն»: Այն, որ դուք ընդամենը *կ'ուզէք* ձեր կեանքը կորսնցնել, բաւական չէ: Այսպիսի մօտեցումը ոչինչով կը տարբերի մեր պատմութեան աղջկան մտածելակերպէն:

Որպէսզի տիեզերքի ամենաաւքանչելի Անձնաւորութեան հետ ուխտի մէջ մտնէք, դուք պէտք է լիարժէք ձեւով տրուիք Անոր, ինչ որ, անկասկած, կը նշանակէ՝ լիարժէք կերպով հետեւիլ Անոր առաջնորդութեան: Հետաքրքրական է, որ Աստուածաշունչը Աստուծոյ հետ մեր փոխյարաբերութիւնները կը նմանեցնէ ամուսին-կին փոխյարաբերութիւններուն: Պօղոս կը գրէ.

«Ինչպէս որ Սուրբ Գիրքը կ'ըսէ. «Տղամարդը կը ձգէ իր հայրն ու մայրը՝ ամուսնանալու համար, եւ կը դառնայ՝ ինչպէս մէկ մարդ՝ իր կնոջ հետ»: Ասիկա մեծ խորհուրդ է, բայց ես կը հասկնամ, որ այն նկատի ունի Քրիստոսը եւ Անոր եկեղեցին» (Եփեսացիս 5.31, 32, CEV):

Թեւ Պօղոսը օգտագործեց այս հաստուածը, որ խրատէր ամուսնական զոյգերը իրենց փոխյարաբերութիւններուն մէջ, ան նոյնպէս պարզ ձեւով ըսաւ, որ իրականութեան մէջ այն կը նկարագրէ մեր փոխյարաբերութիւնները Յիսուսին հետ: Ոչ մէկ տղամարդ կ'ամուսնանայ այնպիսի կնոջ հետ, որ ընդամենը միայն *կ'ուզէ* բոլորովին տրուիլ, նուիրուիլ անոր, բայց չ'ըներ ատիկա: Կը կարծէք՝ մենք կրնա՞նք այս ձեւով վարուիլ Յիսուսին հետ: Թերեւս Յակոբոսը ճիշդ այս պատճառով կը գրէ.

«Շնացողներ: Չէ՞ք հասկնար, որ ընկերութիւնը այս աշխարհին հետ Աստուծոյ թշնամին կը դարձնէ ձեզ: Կը կրկնեմ՝ եթէ կ'ուզէք այս աշխարհին ընկերը ըլլալ, դուք Աստուծոյ թշնամին պիտի դառնաք» (Յակոբոս 4.4, NLT):

Ինչպէս կը տեսնենք, անիկա մեծ շեշտադրում կ'ընէ այս կէտին վրայ, քանի որ կը կրկնէ այն: Ասիկա աննշան հարց չէ, այլ՝ Աստուծոյ հետ փոխյարաբերութիւններու հիմնարար կողմերէն մէկը:

Շնացողը անիկա է, որ ուխտի մէջ է ինչ որ մէկուն հետ, սակայն խախտելով այդ ուխտը, կը փնտռէ յարաբերութիւններ մէկ ուրիշին հետ: Այս անձնաւորութիւնը նուիրուած չէ իր ուխտի պարտաւորեցնող պայմաններուն:

Այն ուխտը, որ մենք կ'ընենք՝ Յիսուսին հետեւելու համար, ունի հետեւեալ պայմանները: Մենք պէտք է ուրանանք մեր անձը եւ հեռա-

նանք մեզ շրջապատող աշխարհի համակարգէն: Մենք պէտք է լիարժէք կերպով նուիրուինք եւ հնազանդինք Անոր: Մենք չենք կրնար առաջարկել Անոր ոչինչ՝ ասորմէ պակաս: Ասիկա կը նշանակէ, որ մենք կ'ընդունինք Անոր կամքը եւ ցանկութիւնները աւելի, քան մերը: Տալով Անոր մեր կեանքը՝ փոխարէնը կը ստանանք Անոր կեանքը: Այս ուխտը կը նմանի առողջ ամուսնութեան՝ տղամարդու եւ կնոջ միջեւ:

Ես տակաւին կը ցանկամ պահպանել իմ կեանքը

Կան այնքան շատ մարդիկ, որոնք ուրախութեամբ պիտի ընդունէին փրկութեան առաւելութիւնները, եթէ միայն, ատիկա ունենալու հետ մէկտեղ, կարենային պահպանել իրենց կեանքը: Հետաքրքրական է, որ մարդոց մեծամասնութիւնը կը գիտակցի, որ պէտք է շատ բաներ ձգել՝ Աստուծոյ հետեւելու համար, բայց պատրաստ չէ վճարելու այդ գինը: Այս մարդիկ անկեղծ են Աստուծոյ եւ իրենք իրենց հետ:

Ժամանակ մը ես դրացի մը ունէի (ես անոր Քեվլըն կ'անուանեմ), որ այսպիսի մարդոցմէն էր: Ան Ըմբշամարտի համաշխարհային ֆետերասիոնի ըմբիշներէն էր՝ անոնց գերաստղերէն մէկը: Ան իր ընտանիքով կ'ապրէր մեր փողոցին մէջ՝ մեր տունէն երեք տուն անդին: Երբ անոնք տեղափոխուեցան մեր թաղամասը, այդ մարդուն կինը զգուշացուց զինք, որ հեռու մնայ մեզմէ. «Անոնք խելագարուած հաւատացեալներ են», - ըսած էր ան:

Քանի մը ամիս յետոյ այդ կնոջ քով տագնապի ու անհանգստութեան ուժգին նոպաներ սկսան, եւ մէկ անգամ ան պարզապէս Լիզային գիրկը ինկաւ՝ լալով: Այս միջադէպը հնարաւորութիւն ստեղծեց, որ Լիզան պիտի բաժնեկցէր Աւետարանով, եւ ան փառաւոր ձեւով փրկուեցաւ: Կարճ ժամանակ յետոյ, այդ գոյգին երկու որդիները նոյնպէս իրենց կեանքերը յանձնեցին Յիսուսին:

Մեր ընտանիքները աւելի կը մտերմանային, եւ Քեվլըն ու ես լաւ ընկերներ դարձանք: Մենք շատ ժամանակ կ'անցընէինք միասին: Յաճախ շփվում կը հաղորդակցէինք ու պասքէթպոլ եւ կոլֆ կը խաղայինք մեր տղաներուն հետ:

Երեկոյ մը Աստուած ցոյց տուաւ ինձի քանի մը իրադարձութիւն, որոնք շուտով տեղի պիտի ունենային Քեվլընի կեանքին մէջ: Արդէն ուշ էր՝ գրեթէ ժամը 22:00-ը, բայց ես զգացի, որ պէտք է խօսիմ անոր հետ: Երբ ան բացաւ դուռը, ես պատմեցի այն երեք բաներուն մասին, որոնք տեղի պիտի ունենային անոր կեանքին մէջ յաջորդ ինը ամիսներու ընթացքին:

Կարճ ժամանակ յետոյ իմ կանխատեսած երեք իրադարձութիւններն ալ տեղի ունեցան: Ես կը մտածէի. «Հիմա Քեվլընը անպայման պիտի նուիրէ իր կեանքը Յիսուս Քրիստոսին»: Բայց ոչինչ տեղի ունեցաւ:

Քանի մը ամիս յետոյ Աստուած ցոյց տուաւ ինծի անգամ մը եւս իրադարձութիւն մը, որ տեղի պիտի ունենար Քեվլընի կեանքին մէջ: Ես կրկին խօսեցայ անոր հետ այդ մասին: Այս անգամ ես քայլ մը առջեւ գացի.

- Քեվլըն, դուն կրնաս անձամբ հաստատել, որ Աստուած երեք բան կանխատեսեց քու կեանքին մէջ, որոնք արդէն տեղի ունեցած են: Չե՞ս տեսներ, որ Ան քայլեր կ'առնէ դէպի քեզի: Ինչո՞ւ չես տար քու կեանքը Յիսուսին:

Քեվլընի հասակը 1.92 սանթիմէթր էր, իսկ կշիռքը՝ 108 քիլոկրամ, որմէ ճարպային մասը ընդամէնը 4 տոկոս կը կազմէր: Ան վախցնող արտաքին ունէր: Քեվլընը գլուխը ծռեց, որպէսզի նայի ինծի, եւ ըսաւ.

- Որովհետեւ ես գիտեմ, որ աստոր համար պէտք է գին վճարեմ: Ես գիտեմ, որ պէտք է նուիրեմ կեանքս Յիսուսին եւ հնազանդիմ Անոր, իսկ ես չեմ ուզեր ձգել իմ կեանքի ոճը:

Ան շարունակեց.

- Ճո՞ն, մեր ֆետերասիոնի մէջ շատ յայտնի ըմբիշ մը կայ: Ան կ'ըսէ, որ վերստին ծնած քրիստոնէայ է: Ան խօսած է Աստուծոյ մասին նոյն հեռուստահաղորդման մէջ, ուր հրաւիրած էին քեզ: Չնայած ասոր՝ ես գիտեմ, որ ան թմրադեղեր կ'օգտագործէ եւ սանձարձակ սեռական կեանք կը վարէ: Ըսէ՛ ինծի, ինչո՞վ է ան կը տարբերի ինձմէ: Ես ուղղակի չեմ ուզեր անոր պէս կեղծաւոր ըլլալ: Աւելի լաւ է՝ վայելեմ իմ կեանքը՝ ըլլալով բոլորին ուշադրութեան կեդրոնը եւ ընեմ այն, ինչ որ այս կեանքը առիթ կու տայ ինծի, քան պարզապէս դիմակ կրեմ:

Քեվլընի խօսքերը ջախջախիչ ազդեցութիւն գործեցին իմ վրայ, բայց ես գիտէի, որ այն, ինչի մասին ան կը խօսէր, միակ նման դէպքը չէր: Կան անթիւ մարդիկ, որոնք եկեղեցի կը յաճախեն, Փրկիչ կ'անուանեն Յիսուսը եւ կը յայտարարեն, որ իրենք Աստուծոյ զաւակներ են, բայց իրենց կեանքերը չեն նուիրած Տիրոջ: Արդեօ՞ք անոնք իրապէս փրկուած են:

Հնարաւոր է արդեօք մեր քրիստոնէական շրջանակներուն մէջ ծնունդ տալ այնպիսի դարձի եկածներու, որոնք Աստուծոյ զաւակներ չեն: Յիսուս ըսաւ Իր օրերու առաջնորդներուն. «Դուք ցամաք ու ծով կը կտրէք, որ մէկուն դարձի բերէք, իսկ յետոյ այդ մարդը կը դարձնէք երկու անգամ աւելի գեհեճի զաւակ, քան որ դուք էք» (Մատթէոս 23.15, NLT): Ես չեմ ըսեր, որ Արեւմուտքի եկեղեցւոյ առաջնորդները՝ դժոխքի առաջնորդներ են: Այնուամենայնիւ, իմ հարցը հետեւեալն է. ինչպիսի՞ դարձի եկածներու մենք ծնունդ կու տանք:

Երբ կոչ չենք ըներ Աստուծոյ երեսը փնտռողներուն՝ ուրանալ իրենց կեանքերը, մենք կը ստանանք դարձի եկածներ, որոնք բարելաւած են իրենց կեանքը եւ, ասորի հետ մէկտեղ, հանդերձեալ կեանքի խոստում ստացած են: Ծանօթ «ապաշխարութեան աղօթքը» ըսելէն յետոյ նորադարձի խիղճը կը խաղաղի: Տեսականօրէն, այդ մարդը այլեւս հեռու չէ Աստուծմէ: Այսպիսի մարդիկ կը սկսին պատկանիլ հաւատակիցներու համայնքին եւ հոն կ'ունենան կապեր ու պարտաւորութիւններ:

Եւ այժմ, ակնյայտօրէն *բարիի* կողէն ըլլալով՝ անոնք կը մտահոգուին ընկերվարական անարդարութեան զոհերու, աղքատներու եւ կարիքաւորներու կեանքերով, իսկ երբեմն կը միանան այդ մարդոց օգնութեան ձեռք մեկնողներուն: Աւելցուցէ՛ք ասոր ոգեւորիչ ուսմունքները եւ երկնային խոստումը ու պիտի ստանաք հրապուրիչ կարգավիճակ, որ շատերը պիտի ուզեն ունենալ:

Արդեօ՞ք այս դարձի եկածները փրկուած են, թէ՞ խաբուած են, որուն պատճառով անոնք աւելի մեծ դժուարութեամբ պիտի լսեն իրական ճշմարտութիւնը: Հնարաւոր է, որ ճիշդ այս ուղերձը պիտի ստեղծէ այն մոլորուած հաւատացեալները, որոնց մասին գրուած է Մատթէոս Աւետարանի 7-րդ գլուխին մէջ, որոնք պիտի լսեն Յիսուսի խօսքերը. «Հեռացէ՛ք Ինձմէ. Ես երբեք չեմ ճանչնար ձեզ»:

Արդեօ՞ք մեր ուղերձը նոյնն է, ինչ որ Անորը:

Մի՞թէ Յիսուս այսպէս կը հասներ կորսուած մարդոց: Վերադառնանք հարուստ երիտասարդ իշխանի պատմութեան:

Քանի մը տարի առաջ կը քարոզէի համաժողովի մը մէջ, ուր ներկայ էին երկու հարիւր հովիւներ, որոնց եկեղեցիները Ամերիկայի ամենամեծ եկեղեցիներու կարգին էին: Ես հարցուցի այդ խումբին.

- Պատկերացնենք, թէ ինչպէս հարուստ երիտասարդ իշխանը կը մօտենայ Յիսուսին: Կրնա՞ք մտովի տեսնել, որ ան դուրս կու գայ իր «Ռոլս Ռոյս» կառքէն, «Արմանի» թանկարժէք թիկնոցով, «Ռոլէքս» արեւային ժամացոյցը ձեռքին: Քանի մը օգնականներ կը հետեւին անոր, մինչ ան քայլելով կը մօտենայ Յիսուսին: Ան կը հարցնէ պաղ, զուսպ եւ պզտիկ մը ամբարտաւան ձայնով. «Բարի՛ Ուսուցիչ, ի՞նչ ընեմ՝ փրկուելու համար»: Կը կարծէք՝ այսօր ատիկա ճիշդ այդպէ՞ս պիտի ըլլար,- հարցուցի ես հովիւներուն:

Ցաւօք, մեծամասնութիւնը բարձրացուց ձեռքերը:

- Սուրբ Գիրքը այդպէս չ'ըսեր,- ըսի ես, եւ կարդացի, թէ իրականութեան մէջ ինչ գրուած է.

«Երբ Անիկա դուրս ելաւ ճամբուն մէջ, ահա մարդ մը վազեց ու Անոր առջեւ ծունկի գալով՝ հարցուց Անոր ու ըսաւ. «Բարի՛

վարդապետ, ի՞նչ ընեն, որ յաւիտենական կեանքը ժառանգեն»»: (Մարկոս 10.17):

Այս մարդը *վազեց* Յիսուսին ետեւէն մարդոց բազմութեան ներկայութեամբ, *ծունկի եկաւ Անոր առջեւ* եւ աղաչեց, որ բացատրէ, թէ ինչ պէտք է ընէ փրկուելու համար: Ան բոլորովին ամբարտաւան չէր:

Ես մտածեցի, որ աւելի լաւ էր՝ ցոյց տայի անոնց, թէ ինչ տեղի ունեցաւ: Ես խնդրեցի լսարանին մէջ նստած առաջնորդներէն մէկուն՝ կեցնել այդ դահլիճի մեծ հարթակի մէկ կողմը, իսկ ես հակառակ կողմը կեցայ: Ամբողջ արագութեամբ վազեցի անոր քով, եւ երբ մեր միջեւ մօտաւորապէս մէկ մեթր հեռաւորութիւն մնացած էր, իյնկայ ծունկերու վրայ, բռնեցի անոր վերնաշապիկէն եւ բարձրաձայն ու ջերմեռանդօրէն աղաչեցի. «Ի՞նչ պէտք է ընեն, որ փրկուիմ: Ի՞նչ պէտք է ընեն, որ ժառանգեն յաւիտենական կեանքը»:

Մինչեւ օրս թէ՛ իմ անձնական կեանքին մէջ, թէ՛ իմ ծառայութեան մէջ ոչ մէկ մարդ՝ հարուստ, թէ աղքատ, չէ վազած իմ ետեւէն, ծունկի չէ եկած եւ չէ աղաղակած. «Ի՞նչ պէտք է ընեն՝ վերստին ծնելու համար»: Անկասկած՝ այս երիտասարդ իշխանը ե՛ւ ջերմեռանդ էր, ե՛ւ անկեղծ:

Յիսուս հարցուց անոր. «Ինչո՞ւ Ջիս բարի կ'անուանես: Մէկէն զատ բարի չկայ, որ է Աստուած» (Մարկոս 10.18):

Ինչպէս արդէն նշեցի, այդ մարդը պատուեց Յիսուսին «Բարի Վարդապետ» տիտղոսով, քանի որ յոյս ունէր բարեհաճ պատասխան ստանալ Անորմէ: Այնուամենայնիւ, Յիսուսը առիթ չտուաւ, որ այդ շողոքորթութիւնը կուրցնէր Իր զանազանութիւնը: Ան «պարզ չդարձուց» փրկութիւնը՝ հասցնելով այն հարուստ երիտասարդի բարիի եւ չարի գնահատման մակարդակին:

Միւս կողմէն՝ այս մարդը իրականութեան մէջ անկեղծ էր: Ան չանուանեց Յիսուսը Տէր կամ Թագաւոր: Ան գիտէր, որ Յիսուսին Տէր անուանելու պարագային պէտք է վարուէր ճիշդ այնպէս, ինչպէս որ Ան կը խնդրէր: Քանիներ այսօր այսպիսի բնաւորութիւն ունին: Անոնք Տէր կ'անուանեն Յիսուսը եւ կը դաւանին իրենց հաւատքը Աստուածաշունչի հանդէպ: Այնուամենայնիւ, անոնք ընտրութիւններ կը կատարեն կեանքին մէջ՝ բարիի եւ չարի մասին ունեցած իրենց պատկերացման համաձայն, փոխարէնը, որ զգուշօրէն հետեւին այն ամէնուն, ինչ որ Տէրը Սուրբ Գիրքին մէջ կը խնդրէ իրենցմէ կատարել: Անոնք կը ժպտան եւ «ամէ՛ն» կ'ըսեն աստուածաշնչեան ուսմունքներուն, բայց եթէ ատիկա յարմար չէ անոնց նպատակներուն, անոնք պարզապէս կը փակուին այդ միտքին համար, ըսես այն չի վերաբերիր իրենց: Անոնք

կը լսեն, բայց կեանքին մէջ չեն կիրառեր այն, ինչ որ Հոգին կ'ըսէ: Յաճախ անոնք կը զգան, որ այդ ուղերձը կը վերաբերի այն մարդոց, որ կը կարծեն, թէ անոնցմէ «շատ աւելի վատ է»:

Լսեցէ՛ք, թէ ինչպէս Յիսուս դիմեց այն մարդուն, որ ջերմեռանդօրէն կ'ուզէր ստանալ յաւիտենական կեանքը.

««Պատուիրանները գիտես. շնութիւն մի՛ ըներ, սպանութիւն մի՛ ըներ, գողութիւն մի՛ ըներ, սուտ վկայութիւն մի՛ ըներ, զրկանք մի՛ ըներ, քու հայրդ եւ մայրդ պատուէ՛»: Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ Անոր. «Վարդապե՛տ, ատոնք ամէնքը իմ մանկութենէս ի վեր պահեր եմ»» (Մարկոս 10.19,20):

Յիսուսը մէջբերեց Տասը պատուիրաններու վերջին վեց պատուիրանները, որոնք կը վերաբերին մարդկային փոխյարաբերութիւններուն: Հարուստ երիտասարդը պատրաստակամօրէն պատասխանեց, որ ան պահած էր ատոնք իր ամբողջ կեանքին մէջ: Ես կը հաւատամ, որ ան չէր ստեր: Համաձայն այս չափանիշներուն՝ մենք կրնանք տեսնել, որ ան բարի, ազնիւ եւ արդար մարդ էր: Ան կը յենուէր այս բարի բնաւորութեան գիծերու վրայ՝ յոյս ունենալով, որ ատոնք բաւական պիտի ըլլան՝ Աստուծոյ բարեհաճութիւնը ստանալու համար:

Այնուամենայնիւ, Յիսուս միտումնաւոր չանդրադարձաւ առաջին չորս պատուիրաններուն: Այս պատուիրանները կը վերաբերին մարդուն եւ Աստուծոյ փոխյարաբերութիւններուն, եւ առաջինը այն մասին է, որ մարդը պէտք չէ որեւէ աստուածներ կամ կուռքեր ունենայ Ամենակարող Աստուծոյ առջեւ: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ մեր կեանքին մէջ ոչինչ պէտք չէ գերազանցէ մեր սէրն ու գորովանքը Անոր հանդէպ եւ մեր նուիրումն ու հնազանդութիւնը Անոր: Այս երիտասարդը չէր կատարած այդ պատուիրանները, եւ այդ պահուն ան չէր ալ ուզեր կատարել ատոնք: Յիսուս կը պատրաստուէր այնպիսի բան մը բացայայտել անոր կեանքին մէջ, ինչ որ, ի վերջոյ, առիթ պիտի չտար անոր բարեյաջող աւարտելու իր ընթացքը:

«Յիսուս անոր նայելով՝ սիրեց զանիկա ու ըսաւ անոր. «Մէկ բան պակաս է քեզի. գնա՛, ունեցածդ ծախէ՛, տո՛ւր աղքատներուն ու երկինքը գանձ պիտի ունենաս եւ խաչը վերցո՛ւր ու եկո՛ւր Իմ ետեւէս »» (Մարկոս 10.21):

Ուշադրութիւն դարձուցէք, որ Յիսուս կը սիրէր զինք: Բայց ինչպէ՞ս ցոյց տուաւ Իր սէրը հարուստ երիտասարդին հանդէպ. Ան զգուշացուց այդ Աստուծոյ փնտռող անձնաւորութեան: Յիսուս գիտէր՝ օր մը անոր

ունեցած դրամը անոր պիտի հեռացնէր Իր իշխանութեան հնազանդելէն: Յիսուս աւելի մտահոգուած էր այդ երիտասարդի ապահով ընթացքի մասին, քան ընդամենը լաւ սկիզբ ունենալու:

Այս մարդուն խոչընդոտը՝ անոր դրամն էր: Միւսներուն համար խոչընդոտներ կը դառնան զուգընկերները կամ զուգընկերուիները, մարգական նախասիրութիւնները, գնումներ կատարելով տարուած ըլլալը, գործը, փիլիսոփայութիւնը, կրթութիւնը, ուսելիքէն կախուածութիւնը կամ սեռական կողմնորոշումը: Իրականութեան մէջ, սայթաքման քար կրնար ըլլալ որեւէ բան, ինչին մենք կու տանք մեր սէրը եւ ուժերը աւելի, քան Յիսուսին:

Արդեօ՞ք Յիսուս սիրեց այդ երիտասարդը՝ լայնցնելով Իր ուղերձի սահմանները, որպէսզի Անոր սիրոյ առարկան տեղաւորուէր ատոր մէջ: Արդեօ՞ք ան թեթեւցուց ճշմարտութիւնը՝ զինք չվիրաւորելու համար: Ինչո՞ւ Ան պարզապէս չառաջարկեց անոր աղօթել ապաշխարութեան աղօթքը՝ յոյս ունենալով, որ աւելի ուշ ան պիտի ձգէր իր սէրը դրամին հանդէպ: Ի վերջոյ, ան շատ լաւ թեկնածու էր փրկուելու համար, եւ մեծ հետաքրքրութիւն կը ցուցաբերէր փրկութեան հանդէպ: Յիսուս ընդամենը պէտք է քաշէր ուռկանը եւ պիտի ստանար հարուստ, ջանասիրաբար ծառայող եւ ակնառու քրիստոնէայի:

Բայց Յիսուս ճշմարտապէս կը սիրէր այդ անձնաւորութիւնը: Ան ըսաւ այդ երիտասարդին ճշմարտութիւնը՝ իրական, խիստ ճշմարտութիւնը: Ան համարձակ քայլ կատարեց՝ գիտակցելով, որ կրնար կորսնցնել այդ ազդեցիկ մարդը, որ խանդավառ եկած էր Իր քով: Յիսուս նայեցաւ ուղիղ անոր աչքերուն եւ ըսաւ, որ ան ինչ որ բանի պակաս ունի: Այդ երիտասարդը չունէր եռանդի պակաս, բայց անոր սիրտը եւ միտքը պատրաստ չէին հնազանդելու թագաւորներու Թագաւորին՝ անկախ այն զինէն, որ պէտք էր վճարէր ատոր համար:

Ես համոզուած եմ՝ այդ մարդը Յիսուսին միմիայն Փրկիչ կը համարէր, ինչ կ'ենթադրէ, որ Անոր հնազանդիլը պարտադիր չէր: Եթէ ան *բարի* համարէր Յիսուսին խորհուրդը, ան պիտի հետեւէր ատոր: Սակայն եթէ որոշէր, որ Յիսուսին խորհուրդը *բարի* չէ, ան կրնար պարզապէս չկատարել այն:

Կը պատկերացնէ՞ք, եթէ Աստուծոյ երեսը փնտռող եռանդազին անձնաւորութեան ըսէք, որ ան ինչ որ բանի մը պակաս ունի, եւ որ ատիկա առիթ չի տար անոր ստանալու յաւիտենական կեանքը: Այնուամենայնիւ, եթէ դուք իրականութեան մէջ կը սիրէք ինչ որ մէկը, դուք պէտք է խօսիք ճշմարտութիւնը՝ նոյնիսկ գիտակցելով, որ կրնաք մերժում ստանալ:

Շատ քրիստոնեաներ եւ ծառայողներ կը շողոքորթեն իրենց ունկնդիրները, քանի որ կը վախճան մերժուելէն: Անոնց միակ նպատակը՝ ընդունուած ըլլալն է: Ես անկեղծ պիտի ըլլամ ձեր հետ. ես ալ այդպիսին էի: Անոնք, որոնք կը հաղորդակցէին հետս, կը սիրէին զիս, որով հետեւ ես միշտ կ'ըսէի այն, ինչ որ անոնք կ'ուզէին լսել: Ես կ'ընէի ամէն ինչ, որպէսզի խուսափէի մարդոց հետ բախելէն եւ անոնց կողմէն մերժուելէն: Բայց եկաւ ժամանակը, երբ Աստուած բացայայտեց իմ անպահովութիւնը եւ եսասիրական դրդապատճառները: Ան յայտնեց, թէ որն էր իմ սիրոյ առարկան: Իմ սիրոյ առարկան՝ ես էի, ոչ թէ այն մարդիկ, որոնց հետ կը խօսէի:

Շատ ատելի լաւ է՝ ըսել ճշմարտութիւնը, քան փոխզիջման երթալը եւ, փաստօրէն, դրդել մարդուն հաւատալ սուտին: Շատ ատելի լաւ է, որ այսօր մարդը լսէ ճշմարտութիւնը, քան հաւատայ, որ կրնայ տարբեր կուռքեր ունենալ իր կեանքին մէջ, եւ յանկարծ օր մը, երբ արդէն շատ ուշ ըլլայ, Տէրոջմէն լսէ. «Հեռացի՛ր. Ես բնաւ չե՛մ ճանչցած քեզ. դուն խաբուա՛ծ եղած ես»:

Իսկ այժմ, տեսէ՛ք Աստուծոյ երեսը փնտռող այս եռանդագին երիտասարդին պատասխանը՝ Յիսուսի խօսքերուն.

«Անիկա [հարուստ երիտասարդ իշխանը] այս խօսքին համար խոժոռելով՝ տրտմած գնաց, վասնզի շատ ստացուածք ունէր: Յիսուս, իր շուրջը նայելով, ըսաւ իր աշակերտներուն. «Որչա՛րի դժուար է Աստուծոյ թագաւորութիւնը մտնել անոնց, որ հարստութիւն ունին»» (Մարկոս 10.22, 23):

Այս երիտասարդը, որ այնքան ջերմեռանդ էր, տրտմած հեռացաւ:

«Յիսու՛ս, ինչպէ՛ս կրնայիր այդպէս վարուիլ: Երբ այդ մարդը եկաւ, խանդավառուած էր, բայց Քեզ լսելէն յետոյ՝ տրտմած հեռացաւ: Արդեօ՞ք Դուն պէտք չէր դրական ուղերձ մը տաս Աստուծոյ երեսը փնտռողներուն: Քու խօսքերը պէտք է մարդոց ոգեշնչեն եւ դրական զգացողութիւններ պարգեւեն, ոչ թէ տրտմեցնեն: Հովիւ Յիսու՛ս, մարդոց թիւը Քու եկեղեցիին մէջ պիտի նուագի, եթէ միշտ այսպէս վարուիս պատրաստակամօրէն յաճախողներուն հետ, յատկապէս՝ հարուստ եւ ազդեցիկ մարդոց: Գնա՛ անոր հետեւէն եւ մեղմացո՛ր Քու ուղերձը, եւ որոշ ժամանակ յետոյ ան անպայման պիտի ընդունի ամբողջ ճշմարտութիւնը»:

Ահա թէ այսօր Յիսուս ինչ պիտի լսէր Արեւմտեան եկեղեցւոյ Իր աւագներու խումբէն կամ եկեղեցական խորհուրդի անդամներէն: Անոր խստօրէն պիտի ընդդիմանային եւ նոյնիսկ պիտի խնդրէին հեռանալ Իր պաշտօնէն:

Ինչպե՞ս Ան համարձակեցաւ վիրաւորել այսպիսի մեծ նուիրատու մը, որ կրնար գրիչի մէկ շարժումով պանքային չէք ստորագրել՝ հոգալով եկեղեցւոյ ամբողջ տարուան անտարանչական ծախսերը: Թերեւս ան պիտի փակէր եկեղեցւոյ շէնքի պարտքը, որ քանի մը միլիոն տոլար կը հաշուէ: Հովիւ Յիսուսը պարզապէս չի հասկնար, թէ ինչպէս պէտք է մեծ, արդիւնաւէտ ծառայութիւն կառուցել: Թերեւս Ան նոյնիսկ մոռցած է, թէ ինչպէս դրականօրէն պէտք ազդել մարդոց վրայ: Ան պէտք է սկսի անլի մեղմ խօսիլ եւ խրախուսական ուսմունքներ տալ՝ քարոզել այնպիսի ուղերձներ, որոնք կը կառուցեն եւ կը բարձրացնեն մարդոց ինքնագնահատականը:

Ասիկա կրնար տեղի ունենալ Արեւմտեան եկեղեցւոյ մէջ, այնպէս չէ՞: Մենք ինկած ենք մեծ ծուղակի մէջ. մենք կ'ընենք գրեթէ ամէն ինչ՝ նորադարձները շահելու եւ հետեւորդներ ունենալու համար: Մենք կը յարմարինք հասարակութեան բոլոր ժամանակակից միտումներուն՝ եկեղեցի յաճախողներու թիւը անլցնելու համար. մենք հետեւորդներ կը կուտակենք «Թուիթթըր»-ին, կ'անլցնենք մեր էջերը հանողներու թիւը «Ֆէյսպուք»-ին մէջ կամ կը խնդրենք մարդոց՝ կարդալ մեր «պլոկ»-ները: Այս կերպով մենք պարզապէս կ'ընենք Աստուծոյ, որ մեր իմաստութիւնը անլի արդիւնաւէտ է, քան Իրենինը: Կրկին, ասիկա կը նշանակէ՝ գերադասել *բարին՝ Աստուծմէ*:

Անկասկած՝ մենք պէտք է մարդոց Քրիստոսին հետեւելու կոչեր ընենք, բայց մեր կոչերը պէտք է հիմնուած ըլլան ճշմարտութեան վրայ: Մենք պէտք է հասկնանք, որ Աստուած ոչ մէկ պարագային կանչած է մեզ՝ լայնցնելու Նոր կտակարանի ուղերձին սահմանները, այսինքն՝ դիրացնելու փրկութեան ճանապարհը անոնց համար, որոնք տակաւին չեն ուզեր կախուածութիւն ունենալ Անոր ճանապարհներէն: Անկարելի է փրկութիւն գտնել բարիի եւ չարի գիտութեան ծառէն, այսինքն՝ երբ մենք մեզի որոշում կը կայացնենք, թէ ի՞նչն է բարին եւ ի՞նչն է չարը: Փրկութիւնը կարելի է գտնել միայն կեանքի ծառէն՝ համաձայն Անոր Խօսքին: Ամէն մարդ պէտք է ձգէ իր սիրեկանները եւ կուռքերը, ինչպէս որ ամէն երիտասարդ աղջիկ, որ կը համաձայնի իրեն եղած ամուսնական առաջարկին, պէտք է հրաժեշտ տայ փոխարաբերութիւններուն ունէլ այլ տղամարդու հետ: Իւրաքանչիւրը պէտք է ընդունի Յիսուսը՝ որպէս Տէր, ոչ թէ ընդամէնը՝ որպէս Փրկիչ: Ահա թէ ինչ է կեանքի ծառը:

Իսկ հիմա տեսնենք, թէ ինչ ըրաւ Յիսուս այն բանէն յետոյ, երբ հարուստ երիտասարդը հեռացաւ.

«Յիսուս Իր շուրջը նայելով՝ ըսաւ Իր աշակերտներուն. «Ո՛րչափ դժուար է Աստուծոյ թագաւորութիւնը մտնել անոնց, որ

հարստութիւն ունին»: Աշակերտները զարմացան Անոր խօսքերուն վրայ. բայց Յիսուս նորէն շարունակեց ու անոնց ըսաւ. «Որ-դեակներ, ո՛րչափ դժուար է Աստուծոյ թագաւորութիւնը մտնել իրենց հարստութեան յուսացողներուն»» (Մարկոս 10.23, 24):

Անգամ մը ես կը մտածէի այս մասին, եւ Սուրբ Հոգին իմ ուշադրութիւնս հրաւիրեց շատ կարեւոր կէտի մը վրայ: Ես պատկերացուցի, թէ ինչպէս այդ հարուստ մարդը, որ մեծ յարգանք կը վայելէր իր բնակավայրին մէջ, դանդաղօրէն կը հեռանայ Յիսուսէն՝ գլուխը կախած եւ ընկճուած հայեացքով: Ես հասկցայ, որ Տէրը չվազեց անոր ետեւէն, չգրկեց անոր ուսերը եւ չըսաւ.

- Մէկ վայրկեան, ի՛մ ընկեր: Թոյլ տուր յիշեցնելու քեզ Սողոմոնի իմաստութիւնը: Առակաց 19.17-ին մէջ ան գրեց. «Եթէ դուն օգնես աղքատին, դուն պարտք կու տաս Տիրոջը, եւ Ան պիտի հատուցէ քեզ» (NLT): Ես ըսի քեզի, որ վաճառես ամբողջ ունեցածդ եւ տաս աղքատներուն, բայց յիշէ՛, որ համաձայն Առակաց գիրքին՝ Տէրը պիտի հատուցէ քեզ այն ամէնը, ինչ որ դուն կու տաս աղքատներուն: Ան ոչ միայն պիտի հատուցէ, այլեւ պիտի վերադարձնէ քեզ քու տուածին հարիւրապատիկը:

Այս հարուստ երիտասարդը պէտք է որ լաւ գործարար ըլլար: Եթէ Յիսուս այսպիսի մօտեցում ցուցաբերէր՝ զինք շահելու համար, թերեւս ան կրկին ոգեւորուէր եւ հարցնէր.

- Իսկապէ՞ս:

Այդ ժամանակ Յիսուս կրնար ըսել.

- Այո՛: Չե՞ս տեսներ, որ Ես կը փորձեմ օգնել քեզի, որպէսզի մեծ օրհնութիւն ստանաս, որ դրամական հունձք ունենաս: Այսպէս դուն պիտի ըլլաս ամենահարուստ մարդը քու երկրին մէջ, ոչ թէ պարզապէս քու բնակավայրին մէջ:

Այդ պահուն այդ երիտասարդը մեծ պատրաստակամութեամբ պիտի համաձայնէր հետեւիլ Յիսուսին:

Ճիշդ է, որ համաձայն Աստուծոյ խօսքին, երբ կու տանք, մենք նաեւ պիտի ստանանք, ինչպէս որ ցանած սերմը կը վերադառնայ հողագործին շատ աւելիով: Այս ճշմարտութիւնը հաստատուեցաւ անմիջապէս այն բանէն յետոյ, երբ հարուստ երիտասարդը հեռացաւ, քանի որ Պետրոսը, կէս չափ բողոքելով եւ կէս չափ հարցնելով, բերանէն փախցուց.

«Մենք ձգած ենք ամէն ինչ՝ Քեզի հետեւելու համար - ըսաւ ան:

- Այո՛,- պատասխանեց Յիսուսը,- եւ Ես կը վստահեցնեմ ձեզ, որ ամէն մէկը, որ ձգած է տուն կամ եղբայրներ կամ քոյրեր

կամ մայր կամ հայր կամ մանուկներ կամ ունեցուածք՝ յանուն Ինծի եւ յանուն Բարի լուրին, պիտի ստանայ հիմա հարիւր անգամ աւելի տուներ, եղբայրներ, քոյրեր, մայրեր, մանուկներ եւ ունեցուածք՝ հալածանքի հետ մէկտեղ: Եւ գալիք աշխարհին մէջ այդ մարդը յաւիտենական կեանք պիտի ունենայ» (Մարկոս 10.28-30, NLT):

Այդ պահուն Յիսուս նայեցաւ անոնց, որոնք արդէն իսկ ձգած էին ամէն ինչ՝ Իրեն հետեւելու համար, եւ ըսաւ. «Դուք պիտի ստանաք հարիւր անգամ աւելին այն ամէնէն, ինչ որ ձգած էք՝ տուներ ու հողեր՝ հալածանքներու հետ միասին: Դուք պիտի ստանաք ատիկա հիմա՝ այս կեանքին մէջ, իսկ գալիք աշխարհին մէջ յաւիտենական կեանք պիտի ունենաք»:

Ինչո՞ւ Յիսուս այս խօսքերը, կամ ալ՝ Առակաց գիրքէն Սողոմոնի խօսքերը չըսաւ այն հարուստ երիտասարդին, որ եռանդազին կ'ուզէր յաւիտենական կեանք ստանալ: Ինչո՞ւ այնպիսի տապաւորութիւն կը ստեղծուի, որ Ան կը պահէր այս բաները: Պատասխանը պարզ է. Յիսուս երբեք չէր օգտագործեր Աստուծոյ թագաւորութեան օրհնութիւնները, առաւելութիւնները եւ վարձատրութիւնները, որպէսզի մարդիկ հրապուրէր՝ Իրեն հետեւելու համար: Երբ Ան կանչեց Պետրոսին, Յակոբոսին, Յովհաննէսին եւ միւսներուն, Ան պարզապէս ըսաւ. «Հետեւեցէ՛ք Ինծի»: Ան չըսաւ. «Հետեւեցէ՛ք Ինծի, եւ Ես պիտի տամ ձեզի օրհնութիւններ, խաղաղութիւն, բարգաւաճում, բարեկեցիկ կեանք եւ շատ աւելին»: Ան չըսաւ. «Հետեւեցէ՛ք Ինծի այն բաներուն համար, որոնք Ես կրնամ ընել ձեզի համար», այլ՝ «Հետեւեցէ՛ք Ինծի այն բանին համար, թէ Ո՛վ եմ Ես: Ես Յիսուս Քրիստոսն եմ՝ ձեր Արարիչը, Տէրը եւ տիեզերքի Թագաւորը»:

Եթէ Պետրոսի, Յակոբոսի, Յովհաննէսի եւ Անդրէասի դրդապատճառը դրամը ըլլար, անոնք երբեք չէին ձգեր իրենց գործը: Այն օրը, երբ անոնք իրենց գործը ձգեցին, իրենց աշխատանքային գործունէութեան ամենաշահութաբեր օրերէն մէկն էր: Յիսուսին շնորհիւ անոնք երկու լեցուն նաւ ձուկ բռնած էին: Անոնք ոչինչ գիտէին «հարիւրապատիկ հատուցման» խոստման մասին եւ առաջին անգամ լսեցին այն, երբ հարուստ երիտասարդը հեռացաւ Յիսուսէն: Անոնք միայն գիտէին, որ Յիսուսին քով կեանքի խօսքեր կան, եւ այդ պատճառով անոնք ձգեցին ամէն ինչ: Դրա՛նը չէր անոնց որոշիչ գործօնը:

Աստուած երբեք չի պահանջեր, որ մարդը կատարեալ ըլլայ՝ Յիսուսին հետեւելու համար: Ան միայն կը խնդրէ յօժարութիւն ու պատրաստակամութիւն Իրեն հնազանդելու հարցին մէջ: Այս երիտասարդ իշխանը, հաւանաբար, շատ աւելի բարեկիրթ էր, քան Պետրոսը:

Այնուամենայնիւ, Պետրոսը պատրաստ էր կատարելու Յիսուսի ամէն մէկ խօսքը: Յիսուս մինչեւ օրս նկատի ունի նոյնը, երբ կոչ կ'ընէ մեզի ձգել ամէն բան եւ հետեւիլ Իրեն:

Իմ ծրագիրը՝ ընդդէմ Անոր ծրագիրին

Երբ 1979 թուականին Յիսուսը ընդունեցի որպէս Տէր, Աստուած անմիջապէս սկսաւ խօսիլ հետս ծառայութեան մէջ մտնելու մասին: Ես կը սորվէի «Փուրտեու» համալսարանի մեքենաշինական բաժինի մէջ եւ առաջադէմ ուսանող կը համարուէի: Ես սկսած էի համալսարանի թեմիսի խումբին հիմնական կազմին մէջ խաղալ: Բացի այդ՝ կը ծրագրէի ընդունուիլ Հարվըրտի համալսարան՝ Գործարար կառավարման մագիստրոսի աստիճան ստանալու համար: Ես կը ծրագրէի ամուսնանալ հրաշալի աղջկայ մը հետ եւ աշխատիլ միացեալ վաճառքի կամ գործարար կառավարման ոլորտին մէջ: Ես չէի ուզեր որեւէ առնչութիւն ունենալ ծառայութեան հետ: Բոլոր ծառայողները, որոնց ես հանդիպած էի, այնպիսի մարդիկ էին, որոնք, իմ կարծիքով, իրենց կեանքին մէջ այլեւս ոչինչի կրնային հասնիլ: Անոնց տուներէն միշտ վատ հոտ կու գար, իսկ անոնց մանուկները տարօրինակ էին: Ես մեծցած եմ քաղաքի մը մէջ, ուր 3.000 մարդ կ'ապրէր, եւ այսպիսի սահմանափակ պատկերացում ունէի ծառայութեան մասին: Երբեք չէի հանդիպած կամ հաղորդակցութիւն չէի ունեցած լաւ ծառայողի մը հետ, սակայն տարիներու ընթացքին պարզեցի, որ այսպիսի ծառայողներ շատ կան:

Անգամ մը, եկեղեցական ծառայութիւններէն մէկուն ժամանակ, Աստուծոյ Հոգին իջաւ վրաս եւ ըսաւ. «Ճո՛ն, Ես կանչած եմ քեզ՝ Իմ ծառայութեան մէջ ըլլալու համար: Ո՞րն է քու պատասխանը»:

Ես մտածեցի. *«Ընտանիքս պիտի հրաժարի ինծմէ, որովհետեւ բոլորը կաթողիկէ են: Ես պիտի վերջացնեմ կեանքս ինծի ծանօթ բոլոր ծառայողներուն պէս, որոնք կ'ապրին աղքատութեան եւ աղտի մէջ»*: Այնուամենայնիւ, ամենակարեւորը ինծի համար Աստուծոյ հնազանդիլն էր: Այնպէս որ, ես խոնարհեցուցի գլուխս եւ աղօթեցի. «Այո՛, Տէ՛ր: Ես պիտի հնազանդիմ Քեզի եւ պիտի քարոզեմ՝ անկախ այն գիւնէն, որ պէտք է վճարեմ: Ես պիտի երթամ՝ ուր որ Դուս պիտի պատուիրես երթալ, եւ պիտի ըսեմ այն, ինչ որ Դուն պիտի պատուիրես ըսել»:

Այդ որոշման վերջաւորութեան իմ կեանքին մէջ կատարուեցաւ այն, ինչ որ ես նոյնիսկ չէի կրնար պատկերացնել, բայց Աստուած նախապէս ցոյց չտուաւ ասիկա ինծի: Ան պարզապէս կը ցանկանար գիտնալ, թէ արդեօ՞ք ես պիտի ձգէի ամէն ինչ՝ Իրեն հետեւելու համար:

Եթե ուսումնասիրէք Պետրոսի, Պողոսի եւ միւս աշակերտներուն ծառայութիւնը Գործք առաքելոց գիրքին մէջ եւ անոնց նամակներուն մէջ, դուք պիտի համոզուիք, որ անոնց ուղերձները ճշգրտօրէն կը համապատասխանին այն ուղերձին, որ Յիսուս քարոզեց այդ հարուստ երիտասարդին: Այսօր մենք շեղած ենք այս ուղիէն, եւ ասիկա Ամերիկայի հոգեւոր անկման հիմնական պատճառն է: Ահա թէ ինչու շատերը կը կարծեն, թէ կը պատկանին Յիսուսին, այնինչ իրականութեան մէջ այդպէս չէ: Առողջ հիմք ունենալու համար մենք պէտք է վերադառնանք Յիսուսի իշխանութեան: Բոլորս ալ տակաւին կ'ուտենք սխալ ծառէն: Այն, ինչ որ *բարի* կը համարուի, կը գրկէ մեզ լաւագոյնէն, որ պատրաստուած է մեզի համար:

Աստուած կ'ուզէ մեծ օրհնութիւններ տալ մեզի, բայց մենք կը կորսնցնենք անոնցմէ շատերը, քանի որ ճշգրիտ սուրբգրային ուղերձը փոխարինած ենք այնպիսի ուղերձով, որ պահանջարկ ունի: Եկէ՛ք անկեղծ ըլլանք. եթէ այդ հարուստ երիտասարդը գար մեր օրերու որոշ առաջադէմ եկեղեցիները, ան «պիտի փրկուէր» եւ կարճ ժամանակ յետոյ պիտի համարուէր եկեղեցւոյ լաւագոյն անդամներէն մէկը: Հնարաւոր է՝ նոյնիսկ խնդրէին անորմէ միանալ եկեղեցւոյ խորհուրդին:

Ժամանակակից եկեղեցին շատ յաճախ առաջարկած է փրկութեան լաւ ուղերձ՝ առանց խօսելու Յիսուսի իշխանութեան մասին:

Մարդոց խաբէութեան մէջ չտանելու, եկեղեցւոյ զօրութեան, ճշմարտապէս Աստուծոյ օրհնութիւններով ապրելու համար եւ յանուն անոնց, որոնք օր մը պիտի լսեն «Հեռացի՛ր Ինձմէ՛» խօսքերը, եկէ՛ք ձգենք մեր անլիարժէք «բարի» աւետարանական ուղերձը եւ վերադառնանք կեանքի ծառին՝ Աստուածաշունչի փրկութեան ուղերձին:

ՄԵՐ ՆԵՐՔԻՆ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

«Իմ աչքերը սեւեռած են այն նպատակին վրայ,
որ Աստուած կը կանչէ մեզ...»:
— Փիլիպպեցիս 3.14, MSG

Աստուծոյ սիրահարիլը՝ մեծագոյն սիրավէպն է.
Զինք փնտռելը՝ մեծագոյն արկածն է. Զինք գտնելը՝
մեծագոյն մարդկային յաղթանակն է:
— Սբ. Օգոստինոս Երանելի

Մեր հիմքը՝ Յիսուս Քրիստոսի իշխանութիւնն է: Մեր կեանքի բո-
լոր բնագաւառները պէտք է կառուցուին այս յենարանին վրայ:
Եթէ այդպէս վարուինք, ատոնք տեսական պիտի ըլլան: Հակառակ պա-
րագային, ատոնք ի վերջոյ պիտի քայքայուին կամ պիտի մահանան:

Տունը կառուցելու յաջորդ փուլը հիմնակառոյցն է: Այս փուլին ամէն
մէկ մասը կը կառուցուի հիմքին վրայ: Շինարարութեան այս մասը
կ'ամփոփէ, կը դասաւորէ եւ տունին մէջ ամէն բան կը պահպանէ: Յա-
տակները, պատերը, առաստաղները, սենեակները, լոյսերը, յարդա-
րանքը, պատուհանները, բաղնիքները եւ բոլոր վերջնական միւթերն
ու առարկաները հզօր հիմնակառոյցի պէտք ունին՝ երկար դիմանա-
լու համար: Ունենալով հաստատ հիմք եւ ամուր հիմնակառոյց՝ մենք
կրնանք կառուցել երկարակեաց եւ յաջող տուն մը, այսինքն՝ *կեանք*:

Ձեր ներքին տեղորոշման համակարգը

Հաւատքի ծաղկուն կեանքի երկրորդ կողմը նկարագրելու համար
մենք պիտի ձգենք շինարարութեան օրինակը եւ պիտի դիմենք ուրիշ
օրինակի մը:

Ականք հետեւեալ հարցով. ո՞րն է ձեր գլխաւոր նպատակը: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ ո՞ր ցանկութիւնը ձեր մէջ կը գերակշռէ մնացած բոլոր ցանկութիւնները: Կրնա՞ք անկեղծ ըլլալ: Եթէ անկեղծ ըլլաք, դուք չէք յայտնուիր հոն, ուր որ չէիք ուզեր ըլլալ:

Պատկերացուցէ՛ք, որ ձեր հեռաձայնի տեղորոշման համակարգը կարգաւորուած է օդանաւակայան երթալու համար, իսկ դուք կ'ուզէք հանրախանութ երթալ, դուք խիստ պիտի վրդովիք, եթէ այն ազդարարէ՝ «Դուք հասած էք». եւ այն պահուն, երբ մօտենաք օդանաւակայանի վերջաւորութեան, պիտի տեսնէք օդագնացութեան (թռիչքի) ընկերութիւններու պաստառներ՝ հանրախանութի պաստառներու փոխարէն:

Չհաւատալով ձեր տեսածին՝ դուք պիտի բողոքէք. «Ի՞նչ տեղի ունեցաւ: Ինչպէ՞ս ես յայտնուեցայ հոս»: Ամէն ինչ շատ պարզ է: Ձեր տեղորոշման համակարգը տարաւ ձեզ այն վայրը, որուն համար կարգաւորուած էր:

Պօղոս առաքեալը կը յայտարարէ, թէ ինչպէս է *«կարգաւորուած իր տեղորոշման համակարգը»*. «Կը հետեւիմ դէպի նպատակը՝ Աստուծոյ վերին կոչման մրցանակին Քրիստոս Յիսուսին մէջ» (Փիլիպպեցիս 3.14): Ան գիտէր, թէ ինչին կը ձգտէր, եւ անոր տեղորոշման համակարգը կարգաւորուած էր: Թէեւ ան կը բախէր ընդդիմութեան, խոչընդոտներու եւ ուժգին հակառակութեան, ան կը ճեղքէր այդ ամէնը եւ չէր անցնէր զարտուղի ճանապարհներով՝ ընտրելով այլընտրանքային նպատակակէտ:

Ինչու՞ համար կարգաւորուած է ձեր ներքին տեղորոշման համակարգը: Շատ ընկերներ ունենալո՞ւ: Հանրայայտ ըլլալո՞ւ: Որոշակի կենսամակարդակ ունենալո՞ւ: Ձեր աշխատանքային ոլորտին մէջ լաւագոյնը ըլլալո՞ւ: Թերեւս՝ առողջութեան եւ յաջողութեան:

Դուք կրնաք պատասխանել. «Ես կ'ուզեմ ունենալ այս ամէնը»: Մեզմէ շատերը կը ցանկանան այս բաները, բայց ո՞ր ցանկութիւնն է, որ կը գերակշռէ մնացած բոլորը: Կարելոր է ընել այս տարանջատումը, քանի որ այն պիտի որոշէ, թէ ո՛ւր կ'երթաք դուք: Տարբեր նպատակակէտերու տանող ճանապարհները կրնան նոյնը ըլլալ որոշ հատուածներուն մէջ, բայց ձեր ընթացքին մէջ դուք անխուսափելիօրէն պիտի հասնիք կէտի մը, ուր ճանապարհները պիտի բաժնուին, եւ դուք ստիպուած պիտի ըլլաք ընտրելու ատոնցմէ մէկը:

Այսպիսով, ո՞րն է ձեր գլխաւոր նպատակակէտը: Եթէ ձեր վերջնական նպատակն է՝ ըլլալ բարոյապէս մաքուր, պահպանել բարքովարքի կանոնները, ունենալ լաւ բնաւորութիւն, առողջութիւն եւ նիւթական ապահովութիւն, դուք պիտի աւարտէք ձեր ընթացքը այնպէս, ինչպէս

այդ հարուստ երիտասարդ իշխանը. դուք կ'ունենանք բոլոր այս յատկանիշները, բայց տակաւին զուրկ կը մնաք ամենակարեւորէն:

Եթէ ձեր վերջնական նպատակը շատ ընկերներ ունենալն է, դուք պիտի դառնաք Մովսէսի եղբայր Ահարոնին պէս: Դուք պիտի յայտնաբերէք, որ լերան ստորոտը կը գտնուիք՝ զբաղած բազմաբնոյթ հասարակական գործունէութեամբ, որ կը գտնուիք մարդոց ուշադրութեան կեդրոնը եւ օգնութիւն կը ցուցաբերէք ձեր համայնքին, բայց ամբողջ ընթացքին պիտի հեռանաք Աստուծոյ սրտէն: Այն ոսկէ հորթը, որը պիտի ծուլէք, կրնայ հաճելի ըլլալ ձեր ընկերներուն եւ ծանօթներուն, բայց ի վերջոյ դուք ցաւով պիտի պարզէք, որ այն հեռացուցած է թէ՛ ձեզ, թէ՛ անոնց լաւագոյնէն, որ կրնայիք ունենալ ձեր կեանքին մէջ:

Եթէ դուք կը ձգտիք ըլլալ յայտնի քարոզիչ, երգիչ, առաջնորդ կամ պարզապէս հետեւորդներու որոշակի թիւ ունենալ «Թուիթըր»-ին մէջ կամ «Ֆէյսպուք»-ին մէջ, դուք կրնաք բարձր կարգավիճակ ունենալ նոյնիսկ ամբողջ քրիստոնէական աշխարհին մէջ, բայց աւարտել ձեր ընթացքը Ոգիա անունով մարդու պէս, որ մահացաւ մեկուսացման մէջ, թէեւ ամենայայտնի անձնաւորութիւնն էր իր երկրին մէջ (տե՛ս Բ. Մնաց. 26):

Ձեր ներքին տեղորոշման համակարգը կրնայ աւելի ազնիւ եւ բարերար ըլլալ: Թերեւս ձեր նպատակը՝ աղքատներուն եւ կարիքաւորներուն առատ օժանդակութիւն ցուցաբերելն է: Մեր օրերուն մէջ այս նպատակը գրաւիչ է շատերուն համար, եւ այդպէս ալ պէտք է ըլլայ: Մարդոց աչքերը կը լուսաւորուին, երբ մենք կը պատմենք, թէ ինչ կ'ընէ «Մեսէնճըր Ինթերնեշընլ» ծառայութիւնը՝ օգնելով աղքատներուն, կարիքաւորներուն եւ սոցիալական անարդարութեան զոհերուն: Այնուամենայնիւ, Պողոսը կը գրէ Կորնթոսի եկեղեցւոյ, որ ան կրնար տալ աղքատներուն իր ամբողջ ունեցուածքը, բայց, միեւնոյնն է, ոչինչ չչափէր (տե՛ս Ա. Կորնթ. 13.3):

Դուք կրնաք ձգտիլ, որպէսզի ըլլաք ամենաառատածէռն նուիրատուն ձեր եկեղեցւոյ մէջ, ինչ որ յարգանքի արժանի նպատակ է: Այնուամենայնիւ, յիշենք Անանիա անունով մարդ մը եւ անոր կնոջ՝ Սափիրայի պատմութիւնը: Անոնք Երուսաղմի եկեղեցւոյ մէջ անդամներն էին եւ բարի համբաւ ունէին: Անգամ մը անոնք մեծ արժէք ունեցող հողակտոր վաճառեցին եւ եկամտի մեծ մասը նուիրաբերեցին եկեղեցիին: Անոնք կը ցանկային ցոյց տալ, որ նուիրուած էին Աստուծոյ տունը կառուցելուն: Անոնք կը սպասէին գովեստներու, բայց փոխարէնը ենթարկուեցան դատաստանի (տե՛ս Գործք 5): Անոնց աւարտը ողբերգական էր:

Կար ժամանակ, երբ ես ազնիւ ու աստուածապաշտ կը համարէի ինձի: Ամէն օր՝ տասնութ ամիս շարունակ, կ'արթննայի առաւօտեան

Ժամը 05:00-ին եւ կ'աղօթէի մինչեւ ժամը 07:00-ը: Այս ժամանակուան զգալի մասը ես կը խնդրէի Աստուծոյն. «Տէ՛ր, օգտագործէ՛ զիս, որ բազմութիւնները առաջնորդեն դէպի փրկութիւն, զօրաւոր կերպով քարոզեն Աստուծոյ Խօսքը, բերեն ազգերը դէպի Քու թագաւորութիւնը, բժշկեն հիւանդները եւ ազատ արծակեն մարդոց»: Ամէն առաւօտ ես համառօրէն եւ ջերմեռանդօրէն կը խնդրէի այս ամէնուն համար:

Ամիսներ յետոյ Աստուած խօսեցաւ սրտիս հետ. «Որդի՛ս, քու աղօթքները ճիշդ չեն»:

Ես ցնցուեցայ: Արդե՞օ՞ք իմ Ստեղծողին համար գոյութիւն ունէին աւելի բարի, ազնիւ եւ հաճելի նպատակներ, քան այն, ինչ որ ես կը խնդրէի: Ես մտածեցի, որ թերեւս սխալ հասկցայ այն, ինչ որ լսեցի իմ սրտին մէջ: Ինչպէ՞ս այդ հրաշալի նպատակները կրնային սխալ ըլլալ:

Այսպէս մտածելէն անմիջապէս յետոյ ես կրկին լսեցի Աստուծոյ Հոգիին ձայնը. «Յուդան ձգեց այն ամէնը, ինչ որ ունէր՝ Ինծի հետեւելու համար: Ան տասներկու ընտրեալներուն կարգին էր: Ան կը քարոզէր Աստուծոյ թագաւորութիւնը, կը բժշկէր հիւանդները, ողորմութիւն կու տար աղքատներուն եւ ազատ կ'արծակէր մարդոց, բայց Յուդան դժոխքի մէջ է»:

Ես յանկարծակիի եկայ զարմանքէն եւ սկսայ դողալ: Հասկցայ, որ այն ամէնը, ինչին համար ես կ'աղաղակէի, Յուդան ունէր, բայց ան յաւիտեան կորսուած էր: Թերեւս, եթէ ան աւելի լաւ քննէր իր ներքին տեղորոշման համակարգը, անոր վերջը այդքան ողբերգական չէր ըլլար:

Ես հասկցայ, որ կրնայի անգիտակցաբար յայտնուիլ միեւնոյն վիճակին մէջ, որուն մէջ Յուդան էր, եւ անկեղծօրէն հարցուցի. «Ի՞նչը իմ գլխաւոր նպատակը պէտք է ըլլայ»:

Եւս հարուստ երիտասարդ իշխան մը

Այս անգամ Աստուած ցոյց տուաւ ինծի եւս հարուստ երիտասարդ մը իշխանի՝ ոչ թէ անոր, որ վազելով եկաւ Յիսուսին քով, այլ անոր, որուն արքայազնի պէս մեծցուցած էին Եգիպտոսի մէջ, որ այդ ժամանակ ամենաազդեցիկ պետութիւնն էր ամբողջ երկրի մէջ: Անոր անունը Մովսէս էր:

Մտածեցէ՛ք Մովսէսին մասին: Ան մեծցած էր՝ չունենալով դրամի, սնունդի, հագուստի, նիւթական ունեցուածքի կամ ուսման կարիք: Շատերն կը ցանկային անոր դիրքին ըլլային, որովհետեւ ան միշտ ամէն ինչին լաւագոյնը ունէր: Ամբողջ աշխարհին մէջ գոյութիւն չունէր այնպիսի բան, ինչ որ ան չէր կրնար ունենալ կամ ձեռք բերել: Մովսէսը

կը հազնէր նորածեւ հագուստ, կրնար գնումներ կատարել որեւէ ժամանակ եւ անսահմանափակ պիտճէով եւ, հաւանաբար, ունէր բոլոր «խաղալիքները», որոնք հասանելի էին այդ ժամանակ: Ան այնպիսի կառք ունէր, որ համարժէք էր այսօրուան «Մասերաթի», «Լամպորճինի» կամ «Ֆերարի» մակնիշի ինքնաշարժերուն, ինչպէս նաեւ՝ «Հարլի Տեվիտսոնի» բոլոր մակնիշներուն: Եւ եթէ ան չուզէր անձամբ վարել այն, անոր Լիմուզինի վարորդը մշտապէս կը սպասէր անոր կանչին:

Մովսէսը երբեք ստիպուած չէր եղած մաքրելու իր զուգարանը, հնձել իր սիգամարզը, լուալ իր լոզարանը, ինքնաշարժը, ակփէները, սպիտակեղէնը, ո՛չ ալ՝ որեւէ այլ տնային պարտականութիւն կատարել, որովհետեւ ան ծառաներ եւ սպասաւորներ ունէր՝ այդ գործերուն համար:

Ան արքունական խոհարարներ ունէր, որոնք կը պատրաստէին անոր քիմքին հաճելի որեւէ բան: Ան ամէն ժամանակ կրնար վայելել լաւագոյն կերակրատեսակները:

Անոր աշխատանքը՝ զուարճութիւն էր: Ցանկութեան պարագային ան կրնար առաջնորդել բանակներ, նախագծել շէնքեր կամ մեծ երեկոյթներ կազմակերպել: Եթէ ան ցանկար խաղալ, կրնար զբաղեցնել իր օրը տարբեր մրցոյթներով, իսկ երեկոն՝ զուարճանքներով: Ան կրնար ծրագրել իր օրերը՝ ինչպէս որ ուզէր:

Ան նոյնպէս ամենացանկալի ամուրի երիտասարդն էր ամբողջ երկրին մէջ: Ան կրնար ժամադրուիլ եւ ամուսնանալ իր ուզած աղջկան հետ, եւ նոյնիսկ հանդիպիլ այլ երկիրներուն մէջ ապրող կիներուն: Իրականութեան մէջ, եթէ Մովսէսը ցանկար, ան կրնար կիներէ ու հարձերէ բաղկացած հարեմ ունենալ:

Եթէ Մովսէսը ուզէր առատածեռն ըլլալ, ան կրնար մեծ նուէրներ տալ: Ան կրնար հրամայել գաղտնի ծառայութեան գործակալներուն կամ զինուորներուն պաշտպանել իր ընկերները: Ան կրնար օգնել աղքատներուն կամ անտեսել զանոնք: Ան կրնար ազդեցութիւն ձգել իր երկրի արուեստի եւ մշակոյթի վրայ՝ հրամայելով լաւագոյն կատարողներուն եւ դերասաններուն զուարճացնել զինք: Ոչինչ արգիլուած էր անոր՝ բացի թագաւորի գահէն: Մարդոց մեծամասնութեան համար անոր կեանքը փափաքելի երանութիւն պիտի թուար, սակայն ան ներքին բաւականութիւն չուներ: Գրուած է.

«Հաւատքով՝ Մովսէսը, երբ հասակ առաւ, հրաժարեցաւ Եգիպտոսի թագաւորական տան արտօնութիւններէն: Ան ընտրեց ծանր կեանքը Աստուծոյ ժողովուրդի հետ՝ ձգելով դիւրասէր, փափուկ կեանքը...» (Եբրայեցիս 11.24, 25, MSG):

Մովսէսը որոշում կայացուց ձգել այն ամէնը, ինչ որ կրնար առաջարկել անոր աշխարհի ամենահարուստ երկիրը: Ո՞րն էր այսպիսի կենսառճը ձգելու պատճառը: Մի՞թէ ան չէր կրնար բաւականութիւն ունենալ՝ ծառայելով Աստուծոյ եւ շարունակելով ապրիլ Փարաւոնի պալատին մէջ: Ո՛չ: Մովսէսի ներքին տեղորոշման համակարգը կը թելադրէր, որ ան չէր կրնար լրացնել իր սրտի ցանկութիւնը հոն, ուր ան այդ պահուն կը բնակէր, որովհետեւ Եբրայեցիս նամակի հեղինակը կը գրէ անոր մասին.

«Ան մտածեց, որ աւելի լաւ էր՝ չարչարուիլ յանուն Քրիստոսին, քան ունենալ Եգիպտոսի գանձերը, որովհետեւ ան կը նայէր դէպի ապագան՝ ակնկալելով իր *մեծ վարձատրութիւնը*» (Եբրայեցիս 11.26, NLT):

Ո՞րն էր այդ մեծ վարձատրութիւնը: Երբ ես այս հարցումը տարբեր լսարաններու մէջ կը հարցնեմ, շատերը կը պատասխանեն, որ խօսքը հոս Խոստումի երկրի մասին է: Բայց եթէ այդպէս է, մենք պէտք է հարցնենք. Արդեօ՞ք կաթ ու մեղր բխող երկիրը կրնար առաջարկել այնպիսի բան, ինչ որ Եգիպտոսի պտղաբեր երկրին մէջ չկար: Այդ ժամանակաշրջանին մէջ Եգիպտոսը ունէր հարուստ բնական պաշարներ եւ զարգացած գիւղատնտեսութիւն: Մի՞թէ Խոստումի երկիրը անկէ աւելի լաւն էր: Արդեօ՞ք Մովսէսը կրնար աւելի գեղեցիկ տուն կառուցել այդ նոր երկրին մէջ, քան այն պալատը, ուր ան կ'ապրէր արդէն: Կը կարծեմ՝ հասկնալի է, որ այս հարցումներուն պատասխանը միանշանակ «ոչ» է:

Այդ պարզային ի՞նչ վարձատրութիւն Մովսէսը կ'ակնկալէր: Ան չունէր յստակ պատկերացում իր ուզածին մասին այն օրը, երբ հեռացաւ թագաւորական ապարանքէն, բայց ան գիտէր, որ կար աւելին՝ շատ աւելին: Ան ճամբան էր, եւ միայն յետագային պիտի յայտնաբերէր այն, ինչ որ կը փնտռէր:

Կրնաք պատկերացնել ասիկա հետեւեալ կերպով. դուք կը սիրէք լողափնեայ տարածքներ ու տաք կլիմայ եւ կատէք ձիւնն ու ցուրտը: Չմեռուան կէսն է, եւ դուք Ամերիկայի Միացեալ Նահանգներու հիւսիսային նահանգներէն մէկուն՝ Վերմոնթի մէջ կը բնակիք: Դուրսը 20 աստիճան ցուրտ է, եւ ձեր մէջ ցանկութիւն կը յառաջանայ ըլլալ այն միջավայրին մէջ, որ կը սիրէք: Դուք կը նստիք ձեր ինքնաշարժը, կը հասնիք միջնահանգային մայրուղի, որ կը տանի դէպի երկրի հարաւը, եւ կը սկսիք ընթանալ ջերմութեան ուղղութեամբ: Դուք յստակ չէք գիտեր, թէ ուր կ'երթաք, բայց կը հասկնաք, որ ատիկա շատ աւելի լաւ է,

քան ձեր բնակավայրի ծինին մէջ մսիլը: Ճանապարհին՝ քարիւղի կայաններէն մեկուն մէջ, դուք կը նկատէք գովազդային թերթիկ մը, որուն վրայ պատկերուած է Ֆլորիտա նահանգի Փալմ Պիչ լողափը: Դուք կը ժպտաք՝ ըսելով դուք ձեզի. «Ահա՛ այն»: Եւ անմիջապէս կը կարգաւորէք ձեր տեղորոշման համակարգը այդ լողափին հասցէով: Այժմ դուք կ'երթաք դէպի յստակ վայր՝ այն լողափը, որուն մասին կ'երազէիք:

Ասիկա նման է այն իրավիճակին, որ տեղի ունեցաւ Մովսէսի հետ: Ան հեռացաւ իր պալատէն՝ իմանալով, որ կար աւելին, բայց ան գտաւ իր վարձատրութիւնը միայն քառասուն տարի յետոյ, անապատի խորքերուն մէջ՝ վառուղ մորենիի քով, ուր հանդիպեցաւ Աստուծոյ եւ վերապրեց Անոր ներկայութիւնը: Հազիւ որ ասիկա տեղի ունեցաւ, Մովսէսի ներքին տեղորոշման համակարգը յստակօրէն կարգաւորուեցաւ: Անոր վարձատրութիւնը՝ Աստուծոյ ներկայութիւնն էր, եւ մենք պիտի տեսնենք ասոր ապացոյցը աւելի ուշ՝ այն բանէն յետոյ, երբ ան հանեց Իսրայէլը Եգիպտոսի երկրէն:

Աստուծոյ արաջարկը մերժելը

Մովսէսի համար ատիկա շատ դժուար ժամանակ էր՝ լեցուն լարուած ու ճնշող իրավիճակներով: Ան եւ Իսրայէլի ժողովուրդը կը ճանապարհորդէին անջրդի անապատով, որ լեցուն էր բազմաթիւ դժուարութիւններով: Յաճախ այդ դժուարութիւնները կրնային մեղմանալ աստուածային միջամտութեամբ, որ, կը թուար, թէ շատ անգամ, կ'ուշանար: Ատոր գումարած՝ Մովսէսի վարկանիշը ժողովուրդին քով ամենացածը եղած էր: Այսպիսի անկայուն ժամանակներուն մէջ Աստուած խօսեցաւ անոր հետ.

«Հեռացի՛ր այս վայրէն՝ դուն եւ ամբողջ ժողովուրդը, որուն դուրս հանեցիր Եգիպտոսէն, եւ գնա՛ այն երկիրը, որ Ես խոստացայ տալ Աբրահամին, Իսահակին եւ Յակոբին եւ անոնց սերունդներուն: Ես հրեշտակ մը պիտի ուղարկեմ՝ ձեզ արաջնորդելու համար, եւ պիտի քշեմ քանանացիները, ամօրիացիները, քետացիները, փերեզացիները, խեւացիները եւ յեբուսացիները: Դուք հարուստ եւ պտղաբեր երկիր կ'երթաք: Բայց *Ես անձամբ չեմ գար ձեր հետ...*» (Ելից 33.1-3, TEV):

Պատկերացուցէ՛ք այն հանգամանքները, որոնց հետ Մովսէսն ու ամբողջ ժողովուրդը ամէն օր բախումի մէջ էին: Անոնք չունէին բարեկեցիկ կեանքի պայմաններ՝ գեղեցիկ մարգագետիններ, գետեր, անտառներ, մրգատու ծառեր, սառնորակ աղբիւրներ, բերրի հողատա-

րածքներ կամ արօտավայրեր՝ իրենց անասուններուն համար: Արդէն երկար ժամանակէ ի վեր՝ անոնք շուկաներու եւ խանութներու մէջ չէին եղած եւ իրենց համար նոր զգեստներ չէին գնած: Անոնց սննդակարգը անփոփոխ էր. տարօրինակ հաց, որ կը յայտնուէր գետնի վրայ շաքար լեց օր: Երբեմն անոնք լորեր կ'ուտէին՝ որպէս մսային կերակուր: Անոնց վիճակը նկարագրելու համար փորձեցէ՛ք քանի մը ամիս շարունակ ուտել մէկ տեսակի հաց եւ ուրիշ ոչինչ: Այդ ժամանակ դուք պիտի հասկնաք այս մարդոց:

Կեանքը շատ ծանր էր: Եգիպտոսի ստրկութիւնը սարսափելի էր, բայց անապատին մէջ դեգերիլը (թափառիլը) ոչ մէկ բանով լաւ կը թուար: Այնուամենայնիւ, մարդիկ յոյսով էին, որ պիտի հասնէին իրենց երկիրը՝ խոստման երկիրը, որ կը կոչուէր Քանան: Տարիներ շարունակ Աստուած ըսած էր անոնց, որ այն հարուստ եւ պտղաբեր երկիր է՝ առատութեան երկիր: Ամբողջ կեանքին մէջ անոնք լարած էին իրենց բոլոր ուժերը եւ կը ներդնէին բոլոր տաղանդները, որ քաղաքներ կառուցէին եգիպտացիներու համար, եւ իրենց աշխատանքի դիմաց ընդամենը կը ստանային անպէտք մնացորդներ եգիպտացիներու ունեցուածքէն: Շուտով անոնք հնարաւորութիւն կ'ունենային կառուցելու գեղեցիկ տուներ, բնակավայրեր եւ քաղաքներ, այս անգամ՝ իրենց համար: Անոնք պիտի ստեղծէին նոր մշակոյթ, որ յատուկ էր այն ժառանգութեանը, որ իրենք ունէին, եւ պիտի կարենային արժանի ժառանգութիւն ձգել իրենց մանուկներուն եւ թոռներուն:

Ի վերջոյ, Աստուած դասաւորեց ժողովուրդի առաջնորդին՝ Մովսէսին, Խոստման երկիր տանիլ անոնց: Ան ըսաւ, որ կայ ընտրութիւն. զօրաոր իրեշտակ մը կրնայ առաջնորդել եւ պաշտպանել անոնց: Այդ պատերազմող իրեշտակը պիտի քշէր ամէն տեսակի թշնամի: Այնուամենայնիւ, այս պայմանը մէկ «բայց» ունէր, որ Աստուած անձամբ չէր երթար անոնց հետ:

Պատկերացուցէ՛ք, թէ ինչ պիտի վերապրէիք, երբ այսպիսի խօսքեր լսէիք: Ինքը Աստուած կ'առաջարկէ այն, ինչ որ ձեր նախնիները սպասած են դարեր շարունակ: Այս առաջարկը կրնար վերջ տալ չորս հարիւր երեսուն տարի տեւող թափառական կեանքին, դժուարութիւններուն եւ գոյատեւման: Անկասկած՝ Մովսէս պէտք է ընդունէր այն, շտապ իջնէր լեռէն եւ ազդարարէր այդ անհաւատալի լուրը ժողովուրդի ծերերուն: Կերջապէս ամբողջ ժողովուրդը պիտի գովաբանէր զինք, եւ անոր վարկանիշը երբեք եղած ամենաբարձրը պիտի դառնար: Անոնք լաւ խնճոյք մը պիտի ընէին եւ ճանապարհի պիտի բանային դէպի երկար սպասուած խոստումը:

Ամէն ինչ ճիշդ այսպէս ալ պիտի ըլլար, եթէ «ընդունելի» բարին Մովսէսին համար որոշուած նպատակին հասնիլը ըլլար: Այնուամենայնիւ, ահա թէ ինչպէս Մովսէս պատասխանեց Աստուծոյ առաջարկին.

«Եթէ Քու ներկայութիւնդ (երեսդ) մեզի հետ չերթայ, մեզ այս տեղէն մի՛ հաներ» (Ելից 33.15):

Առիթ տուէք յիշեցնել, թէ ուր էր անոր ըսած «այս տեղ»-ը: Անոնք կը գտնուէին պակասութեան, նեղութիւններու, ճնշումներու եւ դժուարութիւններու վայրը՝ *անապատին մէջ*: Մովսէսի պատասխանը պիտի շփոթեցնէր սովորական մարդը, նոյնիսկ անհասկնալի պիտի թուար անոր: Ըստ էութեան, ան ըսաւ. «Եթէ ես պէտք է ընտրութիւն ընեմ Քու ներկայութեան եւ օրհնութեան միջեւ, ես պիտի ընտրեմ Քու ներկայութիւնը: Պիտի գերադասեմ Քու ներկայութիւնը՝ նոյնիսկ պակասութեան եւ նեղութեան վայրին մէջ, իսկ Քու օրհնութիւնը՝ բարենպաստ միջավայրին մէջ»:

Մի՞թէ Մովսէս խելագարուած էր: Թերեւս անապատի արեւը վնասած էր անոր միտքը: Ո՛չ: Անոր ներքին տեղորոշման համակարգը կարգաւորուած էր լաւագոյնի վրայ: Այն կ'ուղղորդէր զինք՝ կատարելու լաւագոյն ընտրութիւնը, թէեւ այդ պահուն Աստուած կ'առաջարկէր անոր լաւ տարբերակ մը, որ ան պէտք է ընդունէր ողջամտութեան եւ անբարենպաստ հանգամանքներու թելադրանքով:

Մովսէսի նպատակը, անոր վարձատրութիւնը՝ Աստուծոյ մտերմօրէն ճանչնալն էր: Դուք չէք կրնար ճշմարտապէս ճանչնալ ինչ որ մէկը, եթէ ժամանակ չանցընէք անոր ներկայութեան մէջ: Դուք կրնաք գիտելիքներ ունենալ ինչ որ մէկուն մասին՝ առանց անոր անմիջական ներկայութեան: Այնուամենայնիւ, եթէ ժամանակ չէք անցընէր ինչ որ մէկուն ներկայութեամբ, դուք չէք կրնար մտերմօրէն ճանչնալ զինք: Ճիշդ ասիկա էր Մովսէսին մեծագոյն վարձատրութիւնը: Անոր համար աւելի արժէքաւոր ոչինչ կար, եւ ոչ ոք կրնար տարհամոզել զինք, նոյնիսկ՝ այն բարին, որ Աստուած Ինք առաջարկեց: Կրնա՞ք պատկերացնել, թէ ատիկա ինչպիսի՛ հաճոյք պարգեւեց Աստուծոյ:

Թերեւս հարցնէք. «Ինչո՞ւ Աստուծոյ պէտք է հաճելի ըլլար Իր առաջարկին մերժումը»: Ես պիտի պատասխանեմ այս հարցումին իմ կեանքէս օրինակով մը:

Լիզան եւ ես ճանապարհորդութեան մէջ էինք, որուն ընթացքին քանի մը ազատ օր ունէինք: Մեր պանդոկի մօտակայքը շատ լաւ կոլֆի դաշտ կար: Ես կը սիրեմ կոլֆ խաղալ, ինչպէս նաեւ պարզապէս գտնուիլ գեղեցիկ կոլֆի դաշտերուն մէջ: Իմ ընկերներէն քանի մը հոգի հրաւիրեցին զիս խաղի, բայց ես ընդամէնը քանի մը օր ունէի Լիզային հետ:

Իմ զարմանալի կինը անկեղծօրէն ըսաւ.

- Ճո՛ն, գնա՛ կոլֆ խաղալու անոնց հետ:

- Ո՛չ, սիրելիս,- պատասխանեցի ես: - Աւելի լաւ է՝ ժամանակս հետդ անցընեմ:

Այդ քանի մը օրը պարզապէս հրաշալի էր: Լիզային ուրախութիւնը (որ ես ընտրեցի զինք, ոչ թէ կոլֆը) հող պատրաստեց այդ օրերուն համար: Ան գիտէր, թէ որքան կը սիրեմ այդ խաղը եւ իմ ընկերներուն հետ ժամանակ անցընելը: Լիզան անկեղծ առաջարկ ըրաւ ինծի, եւ ան պիտի չմտափոխուէր, եթէ ես ընդունէի այն: Այնուամենայնիւ, իր սրտի խորքին մէջ ան յոյս ունէր, որ ես պիտի ընտրէի զինք, ոչ թէ խաղը:

Միեւնոյն սկզբունքը Մովսէսի իրավիճակին մէջ էր: Աստուած առաջարկ ըրաւ անոր, որ կ'ուզէր կատարել: Ան պիտի ուղարկէր հրեշտակը, որ ապահով կերպով Խոստման երկիր կրնար հասցնել Մովսէսը եւ ամբողջ ժողովուրդը: Այնուամենայնիւ, այդ ընթացքը պիտի ըլլար առանց Աստուծոյ ներկայութեան: Ես համոզուած եմ, որ Աստուած ըրաւ այս անկեղծ առաջարկը՝ Իր սրտին մէջ ցանկալով, որ Մովսէսը նախընտրէր Ջինք աւելի, քան անապատէն արագ ազատիլը եւ աւելի դիւրին կեանքը՝ հարուստ ու գեղեցիկ երկրին մէջ:

Մովսէս ազդարարեց երկու բան, երբ մերժեց Աստուծոյ առաջարկը: Նախ եւ առաջ այն, որ Աստուծոյ ներկայութիւնը աւելի սուղ էր անոր համար, քան Աստուծոյ օրհնութիւնները վայելելը՝ առանց Անոր ներկայութեան: Երկրորդը՝ այն, որ Մովսէս առանց կասկածելու կը հաւատար Աստուծոյ ազնուութեան: Թէեւ Խոստման երկիր մուտք գործելը կը հետաձգուէր, Մովսէսը գիտէր, որ Աստուած ի վերջոյ Իսրայէլը հոն պիտի տանէր: Ան գիտէր, որ Աստուած պիտի կատարէ Իր Խօսքը: Եթէ Մովսէսի ներքին տեղորոշման համակարգը ճշգրտօրէն կարգաւորուած չըլլար, ապա հաշուի առնելով անոնց հանգամանքները՝ ան, անկասկած, այլ ընտրութիւն պիտի կատարէր:

Տեղորոշման համակարգի կարգաւորումը

Ի՞նչը սկիզբէն պատճառ դարձաւ, որ Մովսէս այս ձեւով կարգաւորէր իր ներքին տեղորոշման համակարգը այն պարագային, երբ մնացած բոլոր իսրայէլցիները զգալիօրէն կը տարբերէին անոնցմէ իրենց դրդապատճառներով: Մենք կը գիտնանք պատասխանը, եթէ քիչ մը անդրադառնանք անոր նախկին որոշումներուն եւ քայլերուն:

Ես յաճախ կը հարցնեմ մարդոց իմ համաժողովներու ընթացքին. «Մովսէսը ո՞ր կ'առաջնորդէր իսրայէլցիները՝ Եգիպտոսէն դուրս բերելէն յետոյ»:

Ամէն անգամ մեծամասնութիւնը կը պատասխանէ. «Դէպի Խոստման երկիր»:

Կը կարծէք՝ այս պատասխանը ճիշդ է: Ամէն անգամ, երբ Մովսէսը Փարաւոնին քով կ'երթար, ան կրկին ու կրկին կը փոխանցէր Եգիպտոսի թագաւորին այն, ինչ որ Աստուած ըսած էր իրեն. «Թոյլ տուր Իմ ժողովուրդին երթալ, որ անոնք երկրպագեն Ինծի *անապատին մէջ*» (Ելից 7.16, NLT, նոյնպէս՝ Ելից 5.1, 8.1,20, 9.1,13, 10.3): Մովսէսը եօթ անգամ ըսաւ Փարաւոնին, թէ ուր պիտի երթայ Իսրայէլը՝ ամէն անգամ նշելով երկրպագութիւնն ու անապատը: Ան չյիշատակեց Խոստման երկիրը նոյնիսկ մէկ անգամ:

Մովսէսի նպատակն էր՝ առաջնորդել ժողովուրդը դէպի Սինա անապատը՝ Աստուծոյ հանդիպելու եւ երկրպագելու համար: Ինչո՞ւ ան պէտք է ուզէր զանոնք Եգիպտոսէն անմիջապէս *Խոստման երկիր* առաջնորդել՝ առանց սկիզբը *Խոստացողին* քով տանելու: Այդպէս ընելով՝ Մովսէսը պիտի կարեւորէր Աստուծոյ խոստումները աւելի, քան Աստուծոյ ներկայութիւնը, ինչ որ պիտի խրախուսէր իսրայէլցիներու ներքին տեղորոշման համակարգի սխալ կարգաւորման:

Յաւօք, մեր օրերու քարոզիչները եւ ուսուցիչները ընտրած են խոստումներու տարբերակը: Ես կը յիշեմ, որ 1980-ական եւ 1990-ական թուականներուն աւելի շատ կը քարոզէին այն մասին, թէ Յիսուս ինչ կրնայ ընել մեզի համար, քան այն մասին, թէ ո՞վ է Ան: Այս տեսակի ուսուցումը առաջ բերաւ այնպիսի աշակերտներ, որոնք կարգաւորած էին իրենց ներքին տեղորոշման համակարգերը Աստուծոյ օրհնութիւններուն վրայ աւելի, քան Անոր ներկայութեան: Ասիկա նոյնն է, երբ կինը կ'ամուսնանայ տղամարդու մը հետ անոր ունեցուածքին համար: Հնարաւոր է՝ այդ կինը կը սիրէ զինք, բայց անոր սիրոյ դրդապատճառները սխալ են:

Ես զարմանալի հակադրութիւն կը գտնեմ Իսրայէլի եւ Մովսէսի միջեւ: Եթէ մտածէք Եգիպտոսի մէջ Իսրայէլի կեանքի մասին, անոնք, առնուազն, դաժանաբար շահագործման կ'ենթարկուէին: Անոնք կ'ապրէին աղտոտ, խարխուլած բնակարաններու մէջ, հին մթերքներով կը սնուէին եւ մաշած հագուստներ կը հագնէին: Անոնց ամբողջ կեանքը կ'անցնէր ուրիշին ժառանգութիւնը կառուցելու վրայ: Փարաւոնի գործավարները ծածկած էին իսրայէլցիներու մէջքերը սպիներով, իսկ անոր զինուորները կը սպաննէին անոնց որդիները:

Իսրայէլը հրաշքով փրկուեցաւ Եգիպտական գերութենէն, բայց իրենց անապատային արշաւի սկիզբէն կարճ ժամանակ յետոյ ժողովուրդը շարունակ կը տրտնջար եւ կը ցանկար Եգիպտոս վերադառ-

նալ: Իսրայելացիները կ'ըստին. «Լաւ չըլլա՞ր, որ Եգիպտոս դառնանք» (Թուոց 14.3), կամ «Աւելի լաւ է մեզի հոս Եգիպտացիներուն ծառայութիւն ընել» (Ելից 14.12):

Իսկ այժմ մտածեցէ՛ք Եգիպտոսի մէջ Մովսէսի յարմարաւէտ եւ ճոխ կեանքին մասին, որ ես արդէն նկարագրած եմ: Ան նոյնպէս հեռացաւ Եգիպտոսէն եւ բախում ունեցաւ նոյն խիստ անապատային պայմաններուն հետ, սակայն ան նոյնիսկ մէկ անգամ չտրտնջաց եւ չխօսեցաւ Եգիպտոս վերադառնալու մասին: Ի՞նչն էր պատճառը: Պատասխանը պարզ է. Մովսէս անգամ մը այրող մորենիին քով Աստուծոյ ներկայութեան հանդիպած էր: Ան արտօնութիւն ունեցած էր լսելու Աստուծոյ խօսքը անմիջապէս Արարիչէն: Իսրայէլը նոյնպէս այսպիսի հնարաւորութիւն ունեցաւ, բայց անոնք հրաժարեցան ատկէ: Առիթ տուէ՛ք պատմել այս մասին:

«Ձեզ... Քովս բերի»

Եգիպտոսէն դուրս ելլելէն անմիջապէս յետոյ Մովսէս առաջնորդեց Իսրայէլը դէպի Սինա լեռը՝ միեւնոյն վայրը, ուր ան հանդիպած էր Աստուծոյ մորենիին քով: Երբ անոնք հասան, Աստուած թելադրեց Մովսէսին՝ ըսել մարդոց.

«Ղուք տեսաք՝ ինչ որ ըրի Եգիպտացիներուն, եւ ձեզ արծիւի թելերուն վրայ վերցուցի ու Քովս բերի» (Ելից 19.4):

Կարդացէ՛ք Անոր խօսքերը. «...ձեզ... Քովս բերի», եւ խորհեցէ՛ք ատոնց շուրջ: Այս խօսքերուն իրական իմաստը ապշեցուցիչ է: Աստուած՝ տիեզերքի Արարիչը, յստակ յայտնեց, որ Իսրայէլը Եգիպտոսի ստրկութենէն դուրս հանելու գլխաւոր նպատակը՝ բոլորը Իր քով բերելն էր:

Մենք պետք է յիշենք, որ Աստուած հաղորդակցող է եւ հօր սիրտ ունի. Ան միշտ այսպիսին եղած է եւ միշտ ալ պիտի ըլլայ: Ան կը փափաքի ճանչնալ Իր զաւակները, ինչպէս որ ամէն հայր կամ մայր կը ձգտի փոխյարաբերութիւններ կառուցել իր նորածին մանուկին հետ:

Աստուած մորենիին քով Ինքզինքը Մովսէսին յայտնեց. Ան տուաւ Մովսէսին Իր ներկայութիւնը ճաշակելու արտօնութիւնը: Միայն այդ վերապրումը այնպիսի՝ արտօնակ ստեղծեց Մովսէսին մէջ, որ ան այլեւս չմտածեց Եգիպտոս վերադառնալու մասին՝ չնայած այն լաւ կեանքին, որ ունէր հոն: Այդ հանդիպումը նշանակալի ազդեցութիւն գործեց անոր վրայ եւ անխախտ կերպով կարգաւորեց անոր ներքին տեղորոշման համակարգը:

Մովսէս կ'ուզէր, որ Իսրայէլը նոյնը վերապրէր, բայց ապշեցուցիչը այն է, որ Աստուած նոյնպէս կը ցանկար ատիկա: Քանի որ Ան արդէն Մովսէսին հետ ժամանակ անցուցած էր մորենիին քով, Մովսէս կրնար Աստուած ներկայացնել ժողովուրդին, ինչպէս նաեւ՝ ժողովուրդի ներկայացնել Աստուծոյ: Աստուած պատուիրեց Մովսէսին պատրաստել Իր ներածական խօսքը՝ հետեւեալը ըսելով.

«Դուք յատուկ էք. քահանաներու թագաւորութիւն, սուրբ ազգ: Ես ճիշդ ասիկա կը ցանկամ, որ ըսես Իսրայէլի ժողովուրդին» (Ելից 19.5,6, MSG):

Ամբողջ ժողովուրդը յատուկ էր Անոր համար, եւ Ան կը ցանկար, որ անոնցմէ ամէն մէկը քահանայ ըլլար, որ անոնք ըլլային այնպիսի մարդիկ, որոնք կրնային անմիջապէս մօտենալ Իրեն՝ իրենց կամ ուրիշ մարդոց համար: Ըստ էութեան, Ան ծածուկ, ներքին հաղորդակցութիւն կ'առաջարկէր անոնց: Ինչպիսի՛ արտօսութիւն: Անկէ յետոյ Աստուած ըսաւ.

«Գնա՛ ժողովուրդին քով: Յաջորդ երկու օրուան ընթացքին պատրաստէ՛ մարդիկը՝ Սուրբ Աստուծոյ հանդիպելու համար: Պատուիրէ՛ անոնց տրորելով մաքրել իրենց հանդերձները, որպէսզի երրորդ օրը բոլորովին պատրաստ ըլլան, որովհետեւ երրորդ օրը Աստուած պիտի իջնէ Սինա լեռան վրայ եւ Իր ներկայութիւնը յայտնի պիտի դարձնէ ամբողջ ժողովուրդին» (Ելից 19.10,11, MSG):

Աստուած իջաւ լեռան վրայ երրորդ օրը, ինչպէս որ խոստացած էր, բայց մարդոց արծագանգը պարզապէս տրտմեցնող էր: Անոնք ետ քաշուեցան Տիրոջմէ Անոր մօտենալու փոխարէն: Անոնք աղաղակեցին Մովսէսին. «Դո՛ւն խօսիր մեր հետ, եւ մենք պիտի լսենք: Բայց առիթ մի՛ տար, որ անմիջապէս Աստուած խօսի մեր հետ, այլապէս մենք կը մեռնինք» (Ելից 20.19, NLT):

Իսրայէլի ժողովուրդը չէր կրնար դիմանալ Աստուծոյ ներկայութեան, որովհետեւ *Եզիպտոսը տակաւին անոնց սրտերուն մէջ էր*: Անոնք տակաւին իրենց շահերը կը սիրէին աւելի, քան Աստուծոյ շահերը: Զինք մտերմօրէն ճանչնալը անոնց առաջնահերթութիւններու ցուցակին մէջ չէր: Անոր յայտնուած ներկայութիւնը պարզապէս բացայայտեց անոնց ներքին տեղորոշման համակարգի կարգաւորումները՝ այն, ինչ որ անոնք չէին ուզեր փոխել:

Կրկին նայեցէ՛ք Աստուծոյ կարգադրութիւններուն, որոնց կարգին ժողովուրդին կը պատուիրէր մաքրել սեփական հանդերձները: Ո՞րն է

ատոր իմաստը: Մի՞թե Աստուած մանրախնդիր է մարմնական մաքրութեան սովորութիւններու հանդէպ: Այս հարցին պատասխանը գիտնալու համար մենք պէտք է յիշենք, որ յաճախ Հին կտակարանին մէջ արտաքին գործողութիւնները հոգեւոր իրողութիւններու նշանակութիւնը յայտնելու համար նախատեսուած էին: Եգիպտոսի պղծութիւնը դեռեւս մարդոց հագուստներու վրայ էր: Այն պէտք է հեռացուէր, մինչեւ որ մարդիկ կարենային մուտք գործել Աստուծոյ սուրբ ներկայութեան մէջ:

Եգիպտոս այս անկում ապրած աշխարհի համակարգին խորհրդապատկերն է: Այս աշխարհի մարդիկ կ'ապրին իրենց մարմինը հաճեցնելու, աչքերը գոհացնելու, ինչպէս նաեւ՝ կարգավիճակի, համբաւի եւ դիրքի կամ, ուրիշ ձեւով ըսելու համար, «այս կեանքի հպարտութեան» համար (տե՛ս Ա. Յովի. 2.16): Անոնց նպատակը՝ Աստուած ճանչնալը չէ. կեանքին մէջ անոնք կը նային ամէն ինչին՝ մտածելով. «Ի՞նչ կրնամ շահիլ ատկէ»:

Աստուած չի փնտռեր «դրամի որսորդները»

Ճամբորդութիւններու ժամանակ յաճախ կը տեսնեն տարեց հարուստ տղամարդիկ՝ այնպիսի կիներու հետ, որոնք տպաւորիչ արտաքին ունին եւ տասնհինգ-քսան տարիով երիտասարդ են անոնցմէ: Յաճախ նման տղամարդը արդէն լաւ մը ծերացած կ'ըլլայ, եւ զինք սխալմամբ այդ կնոջ հայրը կրնան համարել: Ինչո՞ւ այդ կանայք կ'ապրին կամ կ'ամուսնանան այդպիսի տղամարդոց հետ:

Եզակի պարագաներուն երկուքն ալ իսկապէս սիրահարուած կ'ըլլան իրար: Այնուամենայնիւ, հիմնական պատճառը ուրիշ է. այսպիսի կանանց կ'անուանեն «դրամի որսորդներ»: Ասիկա խօսակցական կամ արհամարհական արտայայտութիւն է, որ կը նկարագրէ այնպիսի երիտասարդ կնոջ, որ հետաքրքրուած չէ իր կողքին գտնուող տղամարդու անձով. զինք կը գրաւեն այն կենսառճը, որ ան կրնայ առաջարկել իրեն: Այս կիներ կ'ուզէ օգտուիլ իր կողքին գտնուող տղամարդու հարստութենէն եւ ազդեցութենէն: Այնուամենայնիւ, նման վերաբերմունքը միակողմանի չէ, քանի որ անոր հետ ապրող տղամարդու առաջնային հետաքրքրութիւնը նոյնպէս այդ կինը չէ, այլ՝ թէ ինչ կրնայ ան ընել իր եսակեդրոն անձին համար: Ան կ'ուզէ պատկերացնել, որ տակաւին երիտասարդ է եւ, անշուշտ կ'ուզէ, լաւ սեռական յարաբերութիւններ վայելել:

Պարզապէս ամէն մէկը եսասիրաբար կը ձգտի ստանալ այն, ինչ որ դիմացինը կրնայ տալ, ոչ թէ սրտանց կը հոգայ դիմացինին համար: Ինչ որ չափով, իւրաքանչիւրը գիտէ, թէ ինչ կ'ընէ միւսը, բայց կը հան-

դուրժէ ասիկա, որպէսզի շարունակէ գոհացնել իր սեփական կիրքն ու հպարտութիւնը: Անոնց դրդապատճառը՝ տեւական յարաբերութիւններ կառուցելը չէ, այլ՝ եսակեդրոն բաւականութիւն ստանալը:

Վերջերս կինս եւ ես կահ-կարասիի խանութ մը գացած էինք: Բացի մեզմէ եւ վաճառքի գործակալէն՝ խանութին մէջ կը գտնուէին միայն մէկ զոյգ՝ տարեց տղամարդ եւ երիտասարդ կին: Սկիզբը ես մտածեցի, որ անոնք հայր եւ դուստր էին, բայց լսելով անոնց խօսակցութիւնը վաճառքի գործակալի հետ՝ հասկցայ, որ կը սխալիմ: Անոնք ամուսնացած զոյգ էին եւ զնումներ կը կատարէին իրենց նոր տունին համար:

Մենք եւ այդ զոյգը այդ խանութը մնացինք գրեթէ քսան վայրկեան, եւ ես բաւական ժամանակ ունէի՝ անոնց հետեւելու համար: Իմ ուշադրութիւնը գրաւեց անոնց ցրուած եւ մակերեսային հաղորդակցութիւնը: Ակնյայտ էր, որ անոնց միջեւ քիչ ընդհանրութիւններ կային, եւ անոնք տարբեր հետաքրքրութիւններ ունեցող մարդիկ էին: Անոնց միջեւ սիրոյ եւ ուրախութեան բացակայութիւնը պարզօրէն աչքի կը զարնէր: Այդ կինը հագիւ կը նայէր անոր աչքերուն եւ ճնշուած դէմք ունէր: Ան շատ նեղ զգեստ հագած էր եւ չափէն դուրս շպարուած էր: Այդ տարեց տղամարդը նորածեւ երիտասարդի պահուածք ունէր. ան կը վարուէր հարուստ խաղամուլի պէս: Ան իր խօսելաձեւով հասկցուց վաճառքի գործակալին, որ դրամը խնդիր չէ իրեն համար:

Տեսնելով այս զոյգը՝ ես հասկցայ, թէ որքան իւրայատուկ են իմ յարաբերութիւնները Լիզային հետ: Ես շատ հոգ կը տանիմ անոր եւ չեմ ըներ այս մէկը անոր արտաքին հրապուրանքի պատճառով, թէեւ ան գեղեցիկ է: Լիզան նոյնպէս սրտանց հոգ կը տանի ինձի համար: Մենք լաւագոյն ընկերներ ենք եւ կը սիրենք միասին ժամանակ անցընել: Ես խղճահարութիւն զգացի այդ զոյգին հանդէպ, քանի որ անոնց յարաբերութիւններուն մէջ սէր չկար: Ես չեմ խօսիր այս մասին՝ անոնց դատելու համար. յոյսով եմ՝ անոնք պիտի աճին սիրոյ մէջ՝ մէկը միւսին հանդէպ, եւ հաճոյքով պիտի հաղորդակցին իրար հետ: Այնուամենայնիւ, որպէս կանոն՝ այդպէս չ'ըլլար, որովհետեւ անոնց յարաբերութիւնները սխալ հիմք ունին:

Իսրայէլի ժողովուրդը հակուած էր այս տեսակի փոխյարաբերութիւններու. ասիկա այն աղտն էր, որ անոնք իրենց հետ դուրս հանած էին Եգիպտոսէն: Այնուամենայնիւ, Աստուած չ'ուզեր մակերեսային յարաբերութիւններ սկսիլ. Ան կը ձգտի իրական յարաբերութիւններու: Ան չի փնտռեր «դրամի որսորդները»: Այս աշխարհի դրդապատճառները, որոնք տակաւին ամուր կառչած էին իսրայէլցիներու սրտերէն, անկարող են անկեղծ յարաբերութիւններ ստեղծել, քանի որ ատոնք եսակեդ-

րոն են: Իսրայելը կրնար ճանչնալ զԱստուած միայն՝ եթէ մաքրուէր այդ աղտէն:

Այնուամենայնիւ, Իսրայելը չկրցաւ ազատիլ իր ցանկութիւններէն՝ ինչպէս Մովսէսը: Մովսէսը ջերմեռանդօրէն կը ձգտէր անկեղծ յարաբերութիւններ ունենալ Աստուծոյ հետ, իսկ Իսրայելը կ'ուզէր շահ ստանալ Աստուծմէ: Ահա թէ որքան պարզ է ամէն ինչ:

Ի՞նչ տեղի կ'ունենայ այսօր

Այժմ մենք Նոր կտակարանի ժամանակաշրջանին մէջ ենք, բայց արդեօ՞ք ինչ որ բան մը փոխուած է: Կրնա՞յ ինչ որ մէկը այս աշխարհի աղտը իր սրտին մէջ կրել եւ ասոր հետ մէկտեղ Աստուծոյ հետ անկեղծ փոխյարաբերութիւններ ունենալ: Արդեօ՞ք Յիսուս Քրիստոսի շնորհքը չեղեալ կը դարձնէ այս աշխարհի աղտէն մաքրուելու անհրաժեշտութիւնը: Շարք մը աստուածաշնչեան խօսքեր, որոնք այսօր հազուադէպ կը շեշտադրուին, կը խօսին այս մասին.

«Ինչպէս որ Աստուած ըսաւ. «Ես կ'ապրիմ անոնց մէջ եւ պիտի քալեմ անոնց միջեւ: Ես պիտի ըլլամ անոնց Աստուածը, եւ անոնք պիտի ըլլան Իմ ժողովուրդը: Այդ իսկ պատճառով, դո՛ւրս ելէք անհաւատներու մէջէն եւ առանձնացուցէ՛ք դուք ձեզ անոնցմէ,- կ'ըսէ Տէրը:- Մի՛ դպչիք անոնց պղծութիւններուն, եւ Ես պիտի ընդունիմ ձեզ: Եւ Ես պիտի ըլլամ ձեր Հայրը, եւ դուք պիտի ըլլաք Իմ որդիներն ու դուստրերը,- կ'ըսէ Ամենակարող Տէրը»» (Բ. Կորնթացիս 6.16,17, NLT):

Սիրելի՛ ընկերներ, քանի որ մենք այս խոստումները ունինք, եկէ՛ք մաքրենք մենք մեզ այն ամէնէն, ինչ որ կրնայ պղծել մեր մարմինը կամ հոգին: Եւ գործենք դէպի կատարեալ սրբութիւնը, որովհետեւ մենք կը վախճանք Աստուծմէ (տե՛ս Բ. Կորնթ. 7.1, NLT):

Այս խօսքերը այնքան շատ բան կ'ըսեն: Առաջին հերթին ուշադրութիւն դարձուցէ՛ք «Ինչպէս Աստուած ըսաւ» արտայայտութեան: Ե՞րբ Աստուած առաջին անգամ ըսաւ այս խօսքերը եւ ի՞նչ համայօդուածով: Պօղոսը կը մէջբերէ այն խօսքերը, որոնք Աստուած ըսաւ Մովսէսին, երբ Անոր ներկայութիւնը Սինա լեռան վրայ էր.

«Ես կ'ապրիմ Իսրայելի ժողովուրդին մէջ եւ պիտի ըլլամ անոնց Աստուածը, իսկ անոնք պիտի ճանչնան, որ Ես եմ Տէրը՝ անոնց Աստուածը: Ես եմ Ան, որ դուրս բերաւ զանոնք Եգիպտոսի երկրէն, որպէսզի ապրիմ անոնց միջեւ» (Ելից 29.45,46, NLT):

Աստուած կրկնեց այն, ինչ որ ըսաւ Ելից 19-ին մէջ՝ Իր անկեղծ փոխյարաբերութիւններ ունենալու ցանկութիւնը: Ան կը ձգտէր ճիշդ այս նպատակին, բայց Իսրայէլը փոխադարձաբար չպատասխանեց Անոր: Միայն առանձին անհատներ, օրինակ՝ Մովսէսը, Դաւիթը, Դանիէլը, Եսային եւ խումբ մը ուրիշ մարդիկ կրցան հաղորդակցութիւն ունենալ Աստուծոյ հետ, քանի որ անոնք որոշում կայացուցին ազատիլ այս աշխարհի եսակեդրոն եւ շահադիտական դրդապատճառներէն: Այժմ Պօղոսը կ'օգտագործէ նոյն բառերը՝ դիմելով մեզ, որոնք մաքրուած են Յիսուս Քրիստոսի արեամբ եւ փրկուիլ Աստուծոյ շնորհքով:

Կրկին գրուած է. «Ես պիտի ապրիմ անոնց մէջ եւ պիտի քալեմ անոնց մէջ: Մի՛ դաչիք անոնց պղծութիւններուն, եւ Ես պիտի ընդունիմ ձեզ»: Ասիկա նոյնն է, ինչ որ Ան Իսրայէլին ըսաւ, բայց հիմա Աստուած կը խօսի նոր մարդոց՝ *մեր* հետ: Անոր մտերիմ հաղորդակցութեան ցանկութիւնը չէ փոխուած, բայց ասիկա չի կրնար տեղի ունենալ, եթէ այս աշխարհի աղտը տակաւին մեր հանդերձներուն վրայ է: Ան կը հրաւիրէ մեզ մտերիմ յարաբերութիւններ կառուցելու, բայց այս յարաբերութիւնները անպայմանական չեն: Ան եւս մէկ անգամ ցոյց կու տայ Իր հակակրանքը այն տեսակի յարաբերութիւններուն հանդէպ, որոնք «դրամի որսորդները» կը ձգտին կառուցել:

Մեր ներսի դրդապատճառները պահուած չեն Աստուծմէն: Ան կը պատուիրէ մեզ մաքրուիլ ամէն տեսակի աղտերէն՝ ոչ միայն մարմինի, այլ նոյնիսկ՝ սրտի եւ հոգիի: Ան գիտէ՝ արդեօ՞ք մեր հանդերձներու վրայ կայ Եգիպտոսի աղտը (եսասիրական, շահադիտական դրդապատճառները), թէ՞, ինչպէս Մովսէսը, մենք կը փնտռենք Անոր ցանկութիւնները աւելի, քան մերը: Այսպիսով, ինչպէս որ Մովսէս պատուիրեց Իսրայէլի ժողովուրդին մաքրել իրենց հանդերձները՝ Աստուծոյ հանդիպելու եւ Անոր հետ մտերիմ հաղորդակցութիւն ունենալու համար, այնպէս ալ Պօղոսը կը պատուիրէ մեզ. «Եկէ՛ք *մաքրենք մենք մեզ* այն ամէնէն, ինչ որ կրնայ պղծել մեր մարմինը կամ հոգին: Եւ եկէ՛ք գործենք դէպի կատարեալ սրբութիւնը, որովհետեւ մենք կը վախճանք Աստուծմէ՛»: Մաքրելով մեզ այս աշխարհի համակարգի պղծութենէն՝ մենք վստահ պիտի ըլլանք, որ մեր ներքին տեղորոշման համակարգը չի խախտիր եւ չ'ըներ լաւը՝ անտեսելով լաւագոյնը:

Մեր ներքին տեղորոշման համակարգի ամենանպաստաւոր կարգաւորումը՝ Աստուծոյ հետ մտերիմ հաղորդակցութիւն ունենալու ձգտումն է: Այն պահպանելու գլխաւոր գործօնը կարելի է արտայայտել մէկ բառով՝ «սրբութիւն»: Յաջորդ քանի մը գլուխներուն մէջ պիտի բացայայտենք այս ոգեշնչող իրողութիւնը:

ՆԱԽԱՆՁԱԲՈՐ՝ ՄԵՉԻ ՀԱՄԱՐ

«Որո՞նքն հետ պիտի համեմատե՞ք Ձիս: Ո՞վ հաւասար է Ինձի,- կը հարցնէ Սուրբը:- Նայեցէ՛ք երկինքներուն:

Ո՞վ ստեղծած է բոլոր աստղերը:

...անուանելով ամէն մէկը իր անունով:

Իր մեծ գօրութեան եւ անհամեմատելի

ուժին շնորհիւ, ատոնցմէ նոյնիսկ

մէկը չի պակսիր»:

— Եսայեայ 40.25,26, NLT

Քու Տէրը շատ նախանձաւոր է քու սիրոյն համար:

Ո՞վ հաւատացեալ, Ան ընտրա՞ծ է քեզ:

Ան չի կրնար հանդուրժել, եթէ դուն ուրիշը ընտրես:

— Չարլզ Սփերճըն

Ոչինչ աւելի բաւականութիւն կը պատճառէր մարդուն եւ բարեկայութեան մէջ ըլլալը: Պահ մը մտածեցէ՛ք այս մասին. ասիկա չի նշանակեր՝ հաղորդակցիլ անուանի մարզիկի մը, յայտնի գիտնականի, ճանչցուած գծագրիչի, հանրայայտ դերասանի կամ ազդեցիկ համաշխարհային առաջնորդի հետ, այլ՝ Անոր հետ, Որ արարած է ամէն ինչ՝ թէ՛ տեսանելին, թէ՛ անտեսանելին: Ան յօրինած է եւ կեանքի կոչած է այնքա՛ն մեծ տիեզերք, որ մարդկային միտքը չի կրնար պատկերացնել ատոր մեծութիւնը, սակայն այնքա՛ն մանրամասնօրէն կառուցուած է, որ տիեզերքի ամբողջ նիւթը եւ բոլոր կենդանի էակները բաղկացած են փոքրիկ ադոմներու(հիւլէներու) բարդ համադրութիւններէն: Այս ադոմները այնքան աննշան են, որ, ինչպէս նշուած էր նախորդ գլուխներէն մէկուն մէջ, պիտի պահանջուին միլիարտաւոր ադոմներ՝ քանի մը սանթիմէթր երկարութեամբ գիծ կազմելու համար: Նոյնիսկ ծաւալուն

հետազոտություններին յետոյ գիտնականները դեռևս բոլորովին չեն հասկնար ատոնց կազմությունը:

Գոյություն չունի ոչ մէկ օգտաւէտ իմաստություն, գիտություն կամ հասկացողություն՝ առանց Աստուծոյ: Չկայ այնպիսի բան, ինչ որ Ան պէտք է սորվի, որովհետեւ Ան իրականութեան մէջ գիտէ ամէն ինչ. Ան գիտէ նոյնիսկ վերջը՝ սկիզբէն: Ջօրաւոր հրեշտակները մշտապէս կը կենան Անոր առջեւ՝ ծածկելով իրենց երեսները, եւ կը պոռան՝ երկիւղած յարաճուն յայտնութենէն այն մասին, թէ ո՛վ է Ան: Ջարմանալի չէ, որ անցած սերունդներու իմաստուն տղամարդիկ եւ կանայք կը ջանալին ըլլալ այն արտօնեալներու կարգին, որոնք կրնան վայելել Անոր ընկերակցութիւնը:

Այն, որ ռեւէ մարդ կրնայ ըլլալ այսպիսի Էակի ներկայութեան մէջ, արդէն աներեւակայելի է: Բայց աւելի ապշեցնող է այն փաստը, որ Ան Ինքը կը փափաքի մեր ներկայութեան, նոյնիսկ աւելի, քան մենք՝ Անոր ներկայութեան: Յակոբոս առաքեալը կը պնդէ.

«Կամ թէ կը կարծէք, թէ Սուրբ Գիրքը պարա՞պ տեղ կ'ըսէ. «Նախանձի կը փափաքի մեր մէջ բնակող Հոգին»» (Յակոբոս 4.5):

«Փափաքիլ» բառը կը նշանակէ՝ ունենալ ուժգին ձգտում կամ ցանկութիւն ինչ որ բանի մը հանդէպ: Երբ կը մտածեմ այս զարմանալի Անձնաւորութեան մասին, Որ կը փափաքի ինձի, ի սրտէ կը համաձայնիմ Դաւիթի խօսքերուն հետ. «Որքա՛ն սուղ են Քու մտքերը իմ մասին, ո՛վ Աստուած: Ատոնք անթիւ են: Ես նոյնիսկ չեմ կրնար հաշուել. ատոնք կը գերազանցեն աւագի հատիկները» (Սաղմոս 139.17,18, NLT): Դաւիթ կը խօսէր Աստուծոյ մտքերուն մասին՝ ուղղուած անհատապէս ձեզ կամ զիս, ոչ թէ ընդհանուր առմամբ՝ Իր ժողովուրդին: Անոր մտքերը ձեր մասին աւելի շատ են, քան մեր մոլորակի բոլոր աւագահատիկները: Մտածեցէ՛ք այն մասին, թէ քանի՛ աւագահատիկ կայ բոլոր լողափերուն, անապատներուն, կոլֆի դաշտերուն եւ խաղահրապարակներուն մէջ: Անպատմելի շատ աւագ, եւ՝ անպատմելի շատ միտքեր:

Թոյլ տուէք օգնել ձեզի, որ պատկերացնէք ասիկա: Ես խորապէս սիրահարուած եմ իմ կնոջը: Մենք աւելի քան երեսուն տարի է՝ ամուսնացած ենք: Ես շատ հաճելի միտքեր ունեցած եմ անոր մասին՝ անթիւ միտքեր: Այնուամենայնիւ, եթէ ես կարենայի հաշուել բոլոր միտքերը անոր մասին, որոնք ունեցած եմ, ես նոյնիսկ կօշիկի տուփ մը չէի լեցնէր աւագով, քանի որ գիտնականները պարզած են, որ ծովափի աւագի տասը խորանարդ սանթիմետրի մէջ մօտաւորապէս 600 միլիոն աւագահատիկ կայ:

Եկե՛ք քիչ մը անելի մտածենք այս մասին: Դուք երբեք հանդիպա՞ծ էք չափազանցնող մարդու, օրինակ՝ ձկնորսի: Դուք գիտե՞ք, թե ինչպէս ատիկա կ'ըլլայ. ան կ'ըսէ. «Ես այսքա՛ն մեծ ձուկ բռնած եմ», եւ ձեռքերով ցոյց կու տայ իր բռնած ձուկին չափը: Սակայն եթէ իրականութեան մէջ տեսնէիք այդ ձուկը, այն շատ անելի պզտիկ պիտի ըլլար:

Կամ, օրինակ, ինչ որ տղամարդու, որ վիճակագրական տուեալներ կը յօրինէ՝ իր խօսքը հաստատելու համար: Ան համարձակ կը յայտարարէ. «Տղամարդոց ինսուլինը տոկոսը չի սիրեր մելտրամաներ»: Ան ոչ մէկ անգամ կարդացած է վիճակագրական տուեալներ այդ մասին, բայց ան չափազանցութեան առիթ կու տայ ինքնիրեն, որպէսզի արդարացնէ իր տհաճութիւնը այդ ժանրին նկատմամբ:

Կամ, օրինակ, ինչ որ մարդու, որ կ'ըսէ. «Ես կ'աղօթեմ ձեզի համար», սակայն եթէ ան ճիշդը ըսէ, թերեւս աղօթած է միայն մէկ անգամ, եւ այն ալ՝ ոչ ամբողջ սրտով: Կը կարծեմ՝ ամէն մէկը ժամանակ առ ժամանակ կը չափազանցնէ, բայց եկէ՛ք անկեղծ ըլլանք. չափազանցութիւնը՝ սուտ է: Այնուամենայնիւ, կայ անհաւատալի ճշմարտութիւն մը. Աստուած չի կրնար ստել (տե՛ս Թուոց 23.19 եւ Տիտոս 1.2): Եթէ Ան սուտ խօսէր, պէտք է հնազանդէր «սուտի հօրը»՝ սատանային, իսկ ատիկա երբեք տեղի պիտի չունենայ:

Եթէ Աստուած կը պնդէ, որ Անոր մտքերը ձեր մասին անելի շատ են, քան այս մոլորակի բոլոր աւագահատիկները, կրնաք չկասկածիլ ատոր մէջ:

Կրնա՞ք պատկերացնել, թէ որքա՛ն Ան կը մտածէ ձեր մասին: Պատկերացուցէ՛ք ասիկա ձեր իսկ մտքին օրինակով: Արդեօ՞ք դուք շատ կը մտածէք ինչ որ մէկուն մասին, որուն հետ չէք ուզեր մտերմօրէն հաղորդակցիլ: Ան ալ այդպէս չի վարուիր: Աստուծոյ Հոգին, Որ կը բնակի ձեր մէջ, կը *փափաքի*, ջանասիրաբար կը ձգտի եւ կ'ուզէ հաղորդակցիլ մեր հետ: Պարզ ըսելու համար՝ Աստուած կ'ուզէ մտերիմ հաղորդակցութիւն ունենալ ձեր հետ՝ ինչպէս ամենամօտ ընկերոջ:

Աստուծոյ նախանձաւորութիւնը

Կրկին կարդանք Յակոբոսի խօսքերը. «Կամ թէ կը կարծէք՝ Սուրբ Գիրքը պարա՞պ տեղը կ'ըսէ. «Նախանձով կը փափաքի Հոգին, որ բնակուած է մեր մէջ»»: Բանալի բառը այս խօսքին մէջ «*նախանձով*» (կամ՝ «*խանդով*») բառն է: Ո՞րն է այս արտայայտութեան իմաստը: Առիթ տուէ՛ք բացատրելու: Արդեօ՞ք կինս մտերմօրէն պիտի հաղորդակցի հետս՝ պիտի բաժնեկցի իր սրտի գաղտնիքներով, ձգտումներով եւ ցանկութիւններով, եթէ ես յարաբերութիւններ ունենամ այլ կինե-

րու հետ: Ո՛չ մէկ պարագային: Եթէ նայինք այս խօսքին համայօդուածով, այս արտայայտութենէն անմիջապէս առաջ գրուած է.

«Շնացողներ, չէք գիտե՞ր, թէ այս աշխարհին սէրը Աստուծոյ դէմ թշնամութիւն է» (Յակոբոս 4.4):

Ըստ էութեան, ասիկա կը նշանակէ. «Դուք կը ձգտիք ընկերանա՞լ աշխարհի հետ: Այդ պարագային, դուք շնացող էք»:

Յակոբոսը կը գրէր միայն քրիստոնէաներուն, քանի որ այս նամակին մէջ ան տասնհինգ անգամ կ'օգտագործէ «եղբայրներ» բառը: Անոր խօսքը ակնյայտօրէն ուղղուած է անոնց, որոնք հաղորդակցութիւն ունին Աստուծոյ հետ եւ ընդունած են Յիսուս Քրիստոսը իրենց կեանքին մէջ: Ահա ճշմարտութիւնը. մենք շնութիւն կը գործենք Աստուծոյ դէմ, երբ սիրախաղ կ'ընենք այս աշխարհին հետ:

Առիթ տուէք շարունակելու իմ օրինակը. եթէ ես յարաբերութիւն ունենայի ուրիշ կնոջ մը հետ, Լիզան ոչ միայն մտերմօրէն չէր բաժնեկցեր հետս, այլեւ բարկութիւն ու խանդ կ'ունենար եւ իրաւացի պիտի ըլլար: Թէեւ ես խոստացած էի ըլլալ անոր եւ միայն անորը, բայց ես խախտած կ'ըլլայի խոստումս, եւ բացի այդ՝ ստած կ'ըլլայի անոր վրայ:

Մինչ այդ Յակոբոսը կը գրէ. «Կամ թէ կը կարծէք՝ Սուրբ Գիրքը... կ'ըսէ...»: Ան կ'օգտուի քանի մը հինկտակարանեան խօսքերէն, ոչ թէ միայն մէկէն: Աստուած շարունակ կ'ըսէ Իր մասին.

«...Կասնզի Ես՝ քու Եհովա Աստուածը, նախանձոտ Աստուած եմ...» (Ելից 20.5):

«...Տէրը, Որուն անունը ճիշդ Նախանձաւոր է, Աստուած է, Որ նախանձաւոր է ձեր հետ ունեցած փոխարաբերութիւններուն համար» (Ելից 34.14, NLT):

«Աստուծոյն՝ ձեր Աստուծոյն, պետք չէ թեթեամտօրէն վերաբերիլ. Ան սպառող կրակ է եւ նախանձաւոր Աստուած է» (Երկրորդ Օրինաց 4.24, MSG):

Կան շատ ուրիշ հատուածներ Աստուածաշունչին մէջ, որոնք կը խօսին Աստուծոյ նախանձաւորութեան մասին: Եւ բոլոր այդ խօսքերը, ի վերջոյ, Անոր եւ մեր փոխարաբերութիւններուն մասին են:

Մինչեւ յառաջ երթալը, առիթ տուէք պարզաբանելու. Աստուած չ'ըսեր, որ Ինքը նախանձաւոր է *ձեր հանդէպ* (ինչ որ պիտի սահմանափակէ ձեր կեանքը), այլ՝ *ձեզի համար*: Այս երկուքին միջեւ մեծ տարբերութիւն կայ: Ան կը փափաքի, որ դուք յաջողութեան հասնիք. Ան կ'ուզէ, որ դուք մեծ ըլլաք. Ան կը լեցուի բերկրանքով, երբ ձեր կեանքը

քին մէջ առատութիւն կայ. Ան կ'ուզէ, որ դուք արդիւնաւէտ ըլլաք (տե՛ն 3ետուայ 1.8, Առակ. 4.8 NLT, Մատթ. 25.29 եւ Յովի. 15.8): Անոր նախանձաւորութիւնը միմիայն կը վերաբերի ձեր քով ըլլալու ցանկութեան: Ան չի ցանկար կիսել ձեզ ուրիշ սիրեկանի մը հետ, որ հիմնականին այս աշխարհն է: Յակոբոսը պարզապէս կը յիշեցնէր հաւատացեալներուն, թէ ինչպէս Աստուած կը դիտարկէ անհաւատարմութիւնը: Եթէ մենք շնութիւն գործենք Անոր դէմ, Անոր նախանձաւոր բարկութիւնը պիտի բորբոքի, եւ ատիկա աննշան բան չէ:

Բայց եւ այնպէս, բարկութիւնը՝ միակ զգացումը չէ, որ կ'առաջանայ, երբ ուխտի մէջ անհաւատարմութիւն տեղի կ'ունենայ: Ես այնքա՛ն յաճախ խօսած եմ մարդոց հետ, որոնց սիրտը կոտրուած է դաւաճանութեան պատճառով: Անոնք կը պատմեն իրենց սրտին մէջ բարձրացող հիասթափութեան, տարակուսանքի, վիշտի եւ զայրոյթի մասին: Անոնց լքած կամ դաւաճանած են այն մարդիկ, որ անոնք իրենց ամբողջ կեանքը տուած էին, եւ անոնց սրտի խորքը զգացմունքներու տարափ կ'առաջանայ: Կին մը, որուն հետ խորհրդատուութիւն կ'անցընէի, բացարձակ շփոթութեան մէջ էր: Ան լացակումած կը հարցնէր. «Ինչո՞ւ ամուսինս այդպէս վարուեցաւ հետս. չէ՞ որ ես մանուկներ ծնայ անոր համար եւ նուիրեցի անոր կեանքիս լաւագոյն տարիները»:

Կրնա՞ք պատկերացնել, թէ ինչ կը զգայ Աստուած: Կրնա՞ք պատկերացնել, թէ ինչ զգացումներ կը փոթորկին Անոր ներսը, երբ մենք անհաւատարիմ ենք: Պողոսը կը գրէ. «Որովհետեւ ես նախանձաւոր եմ ձեզի համար՝ անձամբ Աստուծոյ նախանձաւորութեամբ» (Բ. Կորնթացիս 11.2, NLT):

Խօսելով Աստուծոյ անունէն՝ Պողոսը ցոյց կու տայ Աստուծոյ զգացումները մեր հանդէպ այն պարագային, երբ մենք կը ձգտինք ինչ որ մէկուն կամ ինչ որ բանի այնպէս, ինչպէս պէտք է ձգտէինք Անոր: Երեմիան կ'ընէ նոյնը. «Իմ տրտմութիւնը աւելին է, քան բժշկութիւնը. Իմ սիրտը կոտրուած է» (Երեմեայ 8.18, NLT): Մենք պէտք է յիշենք, որ ստեղծուած ենք Անոր պատկերով: Այնպէս որ, Աստուած կը զգայ նոյն կերպով, ինչպէս որ՝ մենք:

Աստուած նախանձաւոր է, որովհետեւ Ան տուած է Իր կեանքը մեզի համար: Ան զոհած է ամէն ինչ, որպէսզի հնարաւոր դարձնէ յարատեւ յարաբերութիւնները մեր եւ Իր միջեւ: Անոր սիրտն ու անձը խորունկ բարկութիւն եւ տրտմութիւն կ'ապրին, երբ մենք անհաւատարիմ ենք Անոր: Լսեցէ՛ք Անոր խօսքերը.

«...Իմ ժողովուրդը մոռցած է Ձիս: Ինչպիսի՛ դաւեր կը հիւսէք եւ որոգայթներ կը լարէք՝ ձեր սիրեկանները շահելու համար:

Նոյնիսկ փորձառու մարմնավաճառը կրնար սորվիլ ձեզմե: Եւ չնայած ատոր՝ դուք կ'ըսէք. «Ես ոչ մէկ սխալ գործած եմ»» (Երեմեայ 2.32,33,35, NLT):

Շատ յաճախ մենք չենք գիտեր, որ շնութիւն կը գործենք Անոր դէմ, առաւել եւս՝ թէ որքա՛ն ծանր է մեր անհաւատարմութիւնը Անոր համար: Միայն ճշմարտութիւնը կրնայ բանալ մեր աչքերը: Մեր սրտերը անզգայ կը դառնան Անոր կտորուած սրտին եւ տրտմած Անձին հանդէպ: Աստուած կը հարցնէ. «Արդեօ՞ք անոնք կ'ամչնան իրենց գարշելի գործերէն: Բոլորովին ո՛չ. անոնք նոյնիսկ ամչնալ չեն գիտեր» (Երեմեայ 6.15, NLT): Երեմիան եւ ուրիշ մարգարէներ ցոյց կու տային Իսրայէլի անհաւատարմութիւնը Հին կտակարանին մէջ: Պօղոսն ու Յակոբոսը Նոր կտակարանին մէջ նոյնը կ'ընէին:

Այս աշխարհը

Ես պիտի շարունակեմ մեկնել Յակոբոսի շատ կարեւոր խօսքը: «Ընկեր» եւ «ընկերութիւն» բառերը յունարէնին մէջ համապատասխանաբար «ֆիլոս»-ը եւ «ֆիլիա»-ն են: «Ֆիլոս» բառի սահմանումն է՝ «սրտանց», «ընկերական» եւ «հաղորդակցիլ», իսկ «ֆիլիա» բառինը՝ «ընկեր» կամ «ընկերանալ»: Վ. Է. Վայնը կը գրէ «ֆիլիա» բառի մասին իր Ընդարձակ բառարանին մէջ. «Այն կ'ընդգրկէ սիրելու եւ սիրուած ըլլալու գաղափարը»: Մտածեցէ՛ք այս մասին Յիսուսին խօսքերուն լոյսին տակ.

«Աշխարհը պիտի սիրէր ձեզ՝ իրենին պէս, եթէ դուք իրենինը ըլլայիք, բայց դուք արդէն այս աշխարհի մասը չէք: Ես ընտրեցի ձեզ, որ դուրս ելլէք աշխարհէն, այդ պատճառով ալ այն կ'ատէ ձեզ» (Յովհաննէս 15.19, NLT):

Դուք այլեւս չէք պատկանիր այս աշխարհին, թէեւ ժամանակ մը այդպէս էր: Այժմ դուք կը պատկանիք Աստուծոյ: Այն հին մարդը, որ կ'ապրէր ձեր մարմինին մէջ, մահացաւ այն պահուն, երբ դուք ձեր անձը Յիսուսին տուիք: Ծնաւ նոր ստեղծուածը: Դուք վերածնաք, քանի որ Աստուծոյ հետ ուխտի մէջ մտաք:

Յիսուս ըսաւ, որ Իրեն պատկանելու ճշմարիտ նշանը՝ այս աշխարհի կողմէն ատելի ըլլալն է: Անկեղծօրէն հարցուցէ՛ք դուք ձեզ. «Արդեօ՞ք այս աշխարհը կ'ատէ զիս»: Արդեօ՞ք այս աշխարհը կ'ատէ այն քրիստոնէաները, որոնց դուք կը ճանչնաք: Եթէ այդպէս է, այդ պարագային ինչպէ՞ս մենք կրնանք ապրիլ, գործել եւ պտղաբեր ըլլալ այս աշխարհին մէջ: Ինչպէ՞ս կրնանք հասնիլ այս աշխարհին: Մի՞թէ մենք չէինք կրնար աւելի

մեծ ազդեցություն գործել կորսուածներուն վրայ, եթէ այս աշխարհը սիրէր մեզ: Այս դժուար հարցումները պէտք է պատասխանուին, եւ մենք պիտի անդրադառնանք ատոնց յաջորդ գլուխներուն մէջ:

Յովհաննէս առաքեալը ցոյց կու տայ Յիսուսին խօսքին հակառակ կողմը: Ան համարձակ կը պատուիրէ մեզի. «Մի՛ սիրէք աշխարհը, ո՛չ ալ ինչ որ աշխարհի մէջ է: Եթէ մէկը աշխարհը կը սիրէ, անոր ներսիդին Հօր սէրը չկայ» (Ա. Յովհաննէս 2.15,16):

Յիսուսը, Յակոբոսը եւ Յովհաննէսը խստօրէն կը խօսէին այն մարդու մասին, որ, Աստուծոյ հետ փոխյարաբերութիւններ ունենալով, կապ կը հաստատէ այս աշխարհին հետ, եւ՝ հակառակը: Անոնք կը կապէին այս աշխարհին հետ ընկերութիւն ընելու, այս աշխարհը սիրելու եւ այս աշխարհին կողմէն սիրուելու գաղափարները շնութեան, ատելութեան, թշնամանքի եւ այնպիսի վիճակի հետ, երբ Աստուծոյ սէրը մեր մէջ չէ:

Այսպիսով, մինչ շարունակելը այս խիստ յայտարարութիւններու մասին մեկնաբանութիւններ ընելն ու բացատրելը, թէ ինչ կը նշանակէ ընկերութիւնը այս աշխարհին հետ, մենք նախ՝ պէտք է սահմանենք, թէ ինչ է աշխարհը:

Յունարէն «*աշխարհ*» բառը «*քոսմոս*»-ն է: Այն կը սահմանուի որպէս «ներկայ աշխարհը, ներկայ իրադրութիւնը՝ ի հակադրութիւն Քրիստոսի Թագաւորութեան, եւ, հետեւաբար, այն մշտապէս կը կրէ վաղանցիկութեան, անարժէքութեան եւ... անպարկեշտ ցանկութիւններու գաղափարը»⁹: Քննարկենք այս բառերէն ամէն մէկը:

«*Վաղանցիկ*» բառի գոյականը՝ «*վաղանցիկութիւն*»-ը, կը սահմանուի որպէս «ոչ տեւական, մնայուն կամ մշտական»: Եթէ մենք կարենայինք կողքէն նայիլ մեր հասարակութեան ժամանակներու ընթացքին, պիտի տեսնէինք, որ այն մշտապէս կը փոխուի: Որպէս կանոն, փոփոխութիւնը՝ դրական երեւոյթ է. այն կ'ենթադրէ առաջընթաց, զարգացում եւ աճ: Այնուամենայնիւ, բարոյական փոփոխութիւններու պարագային, շատ յաճախ մարդիկ կը հեռանան այն չափանիշներէն, որոնք ճշմարտապէս բարի են Աստուծոյ համար:

Այն, *ինչ որ բարոյապէս ընդունելի եւ սովորական է* մեր հասարակութեան մէջ *այսօր, անսովոր էր, ինչպէս նաեւ բարոյապէս ու սոցիալապէս (ընկերվարական կերպով) սխալ էր երէկ*: Որպէս օրինակ՝ դիտարկենք ակնյայտ միտում մը: Ընտրեցէ՛ք սովորական ֆիլմ, որ խորհուրդ չի տրուիր դիտել մինչեւ 13 տարիքի մանուկներուն: Մարդոց բազմութիւնը կարգի կը կենայ կինոթատրոններու դրամարկղերու քով՝ նորագոյն ֆիլմերը դիտելու համար: Այնուամենայնիւ, շատ յաճախ յաջող ֆիլմերը լեցուած են բացայայտ անբարոյութեամբ: Այսպիսի ֆիլ-

մի մէջ կը ցուցադրուին սեռական պղծութիւն, համասեռամոլութիւն եւ շնութիւն՝ ֆիլմի հեղինակներու նախընտրած չափով: Որպէս կանոն՝ այն պիտի ընդգրկէ անպարկեշտ վարք կամ խօսքեր, գողութիւն, սպանութիւն եւ նոյնիսկ՝ կախարդութիւն: Եւ այսպիսի վարքը յատուկ է ոչ միայն պատմութեան բացասական հերոսներուն, այլեւ՝ դրական հերոսներուն եւ անոնց ընկերներուն: Խօսակցութիւնները շատ անգամ համեմուած են հայհոյանքներով, որոնց կարգին հերոսները պարապ տեղը Աստուծոյ անունը կու տան:

Մենք պարզապէս ընդունած ենք եւ նոյնիսկ կը սպասենք այս ամէնը շատ ֆիլմերու մէջ: Այնուամենայնիւ, եթէ նոյն ֆիլմը ցուցադրուէր կինոթատրոններուն մէջ 1950-ական թուականներուն, կինոթատրոններ գացած մարդիկ պիտի սարսափէին: Ամերիկացիները խիստ պիտի վրդովէին հայհոյանքներէն, մերկութենէն եւ բացայայտ անբարոյութեան տեսարաններէն: Ամբողջ ազգը ձայն պիտի բարձրացնէր՝ ըսելով. «Ինչո՞ւ այս ֆիլմը դրականօրէն կը նկարագրէ երկու չամուսնացած մարդոց կեանքը, որոնք միասին կ'ապրին, եւ նոյնիսկ ցոյց կու տայ զանոնք անկողինին մէջ: Ինչո՞ւ ասիկա կը ներկայացուի՝ որպէս սովորական կենսաոճ: Ասիկա անհաւատալի՞ է, ամօթալի՞ եւ վրդովեցուցիչ՞»: Լայն հասարակութիւնը կը խայտառակէր եւ կ'արգիլէր այս ֆիլմը:

Այդ պարագային, ի՞նչ տեղի ունեցաւ: Արդեօ՞ք Աստուած սովորական, ընդունելի եւ բարի վարքի նոր չափանիշներ որոշած է: Արդեօ՞ք սահմանագիծերը տեղաշարժած են: Կամ, թերեւս, մենք աւելի հասո՞ւն դարձած ենք, իսկ 1950-ական թուականներուն ապրող մարդիկ չափազանց կաշկանդուա՞ծ էին: Մի՞թէ ասիկա առաջընթաց է:

Եթէ ուսումնասիրենք հասարակութեան վիճակագրական տուեալները, մենք պիտի պարզենք, որ ֆիլմերու մէջ տեղի ունեցած փոփոխութիւնները ընդամենը կ'արտացոլեն հասարակութեան փոփոխուող բարոյական չափանիշները: Համաձայն վերջին վիճակագրական հետազօտութիւններէն մէկուն՝ իրենց զուգընկերոջ հետ ապրող երիտասարդ կանանց թիւը կրկնապատկուած է՝ 1982 թուականի տուեալներուն համեմատ¹⁰: Համաձայն «Միացեալ Նահանգներու եւ աշխարհի նորութիւններ»-ու՝ 2006 եւ 2010 թուականներու միջեւ Միացեալ Նահանգներուն մէջ ապրող տասնհինգէն քառասունչորս տարեկան կանանց զրեթէ կէսը (48 տոկոսը) ապրած է ռեւէ զուգընկերոջ հետ մինչեւ ամուսնանալը, որ 11 տոկոսով աւելի է 2002 թուականի եւ 41 տոկոսով աւելի՝ 1995 թուականի ցուցանիշներէն¹¹: Ես կրնայի աւելի շատ վիճակագրական տուեալներ ներկայացնել մեր փոփոխական մշակոյթի մասին, բայց ատիկա չէ իմ նպատակը:

Այս աշխարհին մէջ նոյնպէս կայ *անարժէքութիւն*: Անշուշտ, մեր հասարակութեան մէջ կան արժէքաւոր զարգացումներ եւ փոփոխութիւններ: Այն առաջընթացը, որ մենք ունինք գիտութեան, տեխնիկական ոլորտի, հեռահաղորդակցման միջոցներու, բժշկութեան եւ ուրիշ ոլորտներուն մէջ, օգուտ կը բերեն մարդկութեան՝ աւելցնելով մեր արդիւնաւետութիւնը: Ասիկա կը համապատասխանէ Աստուծոյ առաջին պատուիրանին, որ Ան տուած էր մարդոց՝ «աճիլ եւ շատանալ» (Ծննդոց 1.28):

Այնուամենայնիւ, արդեօ՞ք մեր բարոյական փոփոխութիւնները արժէքաւոր են: Թէ՞ աստուծոյ հիմնուած են ազահութեան, կիրքի եւ կարգավիճակ ձեռք բերելու ձգտման վրայ: Մի՞թէ մենք բարելաւած ենք մանուկներու դաստիարակութիւնը՝ տալով անոնց երկու կիներէ կամ երկու տղամարդոցմէ բաղկացած ամուսնական զոյգեր: Այդ պայմանները աւելի լա՞ւ են մանուկին համար հոգատար մայր եւ առնական հայր ունենալէն, թէ՞ այս փոփոխութիւնը եղած է՝ մարդոց *անպարկեշտ ցանկութիւնները* («*քոսմոս*» բառի սահմանման վերջին բնութագիրը) բաւարարելու համար:

Արդեօ՞ք միասին ապրող տղամարդը եւ կինը, որոնք ամուսնական կապեր չեն կնքած իրար հետ, ապահովութիւն կու տան մանուկներուն, թէ՞ ասիկա թոյլատրուած է ծնողներու եսասիրական ցանկութիւններու եւ անպարտաճանաչ բնաւորութեան պատճառով: Արդեօ՞ք փաստերը կեղծելը եւ խաբէութիւններու դիմելը՝ ապրանքներու վաճառքը աւելցնելու համար, օգուտ կու տայ գնորդին, թէ՞ կը գոհացնէ վաճառողի ազահութիւնը: Արդեօ՞ք օրինականացուած թարմացնող մարիխուանան կը բարելաւէ ուղեղի բջիջներու աշխատանքը: Չէ՞ որ գրեթէ բոլոր հրատարակուած գիտական հետազոտութիւնները ցոյց կու տան, որ ուղեղի բջիջները կը քայքայուին այս թմրանիւթը օգտագործելու պատճառով: Արդեօ՞ք այս ընդունուած անօրէն ցանկութիւնները կը մօտեցնեն մեզ մեր Արարչին:

Աստուածաշունչը կ'ըսէ, որ մեր աշխարհի ընթացքը կ'որոշուի չար հոգիներու կողմէն, որոնք խորամանկօրէն կը գործեն մեր սերնդակիցներու միջոցով (տե՛ս Եփես. 2.2): Կարելի է ըսել, որ «*քոսմոս*»-ը՝ մշակոյթ մըն է, որ խաւարած միտքեր ունեցող մարդիկ կը ստեղծեն: Յովհաննէս առաքելը կը փարատէ բոլոր երկմտութիւնները՝ գրելով. «Մեզ շրջապատող աշխարհը չարին վերահսկողութեան տակ է» (Ա Յովհաննէս 5.19, NLT): Այն աստիճանաբար աւելի ու աւելի կը հեռանայ Աստուծոյ սրտէն եւ իշխանութենէն: Արտաքուստ այս աշխարհը բարիին հակառակ կամ չար տեսք չունի: Ատոր փոփոխութիւնները դիմակաւորուած են *առաջընթացի* կամ *բարիի* տեսքով: Բայց ցաւալին այն է, որ իրականութեան մէջ այս աշխարհը կը զայթակղեցնէ իր բնակիչները՝ հեռացնելով զանոնք Արարիչին սրտէն:

«Աստուածաշնչեան բառերու նոր միջազգային հանրագիտարան»-ը աւելի խորունկ սահմանում կ'առաջարկէ ձեզի. «Աշխարհիկութիւնը պարտադիր չէ, որ նշանակէ մարդու մասնակցութիւնը ոմանց կողմէն վիճարկուող գործերուն: Այն կրնայ նշանակել մեր մշակոյթի հեռանկարները, արժէքները եւ դիրքորոշումները անմտածուած կերպով ընդունիլը՝ առանց դիտարկելու ատոնք Աստուածաշունչի տեսանկիւնէն»¹²: Պարզ ըսելու համար՝ աշխարհիկութեան պարագային մենք կը սահմանենք բարին եւ չարը: Հասարակութեան չափանիշները որոշող հեռանկարները, արժէքները եւ դիրքորոշումները արմատացած են մարմինի ցանկութիւններուն առիթ տալու, աչքերու ցանկութիւնները գոհացնելու եւ կարգավիճակին, համբաւին ու ճանաչելիութեանը ձգտելու մէջ.

«Մի՛ սիրէք այս աշխարհը, ո՛չ ալ այն բաները, որոնք այն կ'առաջարկէ ձեզի, որովհետեւ երբ դուք կը սիրէք այս աշխարհը, դուք չունիք Հօր սէրը ձեր մէջ: Որովհետեւ *այս աշխարհը միայն կ'առաջարկէ* ուժգին ցանկութիւն մարմնական հաճոյքներու հանդէպ, ուժգին ցանկութիւն այն ամէնուն հանդէպ, ինչ որ մենք կը տեսնենք, եւ հպարտութիւն՝ մեր յաջողութիւններու եւ ունեցուածքի պատճառով: Այս բաները Հօրմէն չեն, այլ՝ այս աշխարհէն» (Ա. Յովհաննէս 2.15,16, NLT):

Ուշադրութիւն դարձուցէ՛ք «այս աշխարհը միայն կ'առաջարկէ» բառերուն: Այս հատուածը ցոյց կու տայ, թէ ինչպէս ճանչնալ այս աշխարհի ազդեցութիւնը կամ, ըստ Յակոբոսին՝ ինչպէս նկատել շնացողները, որոնք կը ձգտին գայթակղեցնել ձեզ:

Կը խնդրեմ, լսեցէ՛ք ինձի, սիրելի՛ Քրիստոսի հետեւորդներ. *այս աշխարհը կը ձգտի գայթակղեցնել ձեզ*: Այս աշխարհը կ'առաջարկէ ձեզ յարաբերութիւններ իր հետ՝ օգտագործելով հրապուրիչ խօսքեր, տրամաբանական փաստարկներ, շողոքորթութիւն, հնարաւորութիւններ նաեւ իր իշխանութիւնը եւ ազդեցութիւնը՝ մշտապէս խոստանալով շահ կամ հաճոյք: Օձը հրապուրեց Եւան ճիշդ այս ձեւով:

Նոյնը տեղի կ'ունենայ, երբ շնացող կիներ կը ցանկայ գայթակղեցնել ուրիշ տղամարդ մը: Ան այնպիսի տպաւորութիւն կը գործէ, ըսես իր նպատակը ճիշդ այդ տղամարդն է, մինչդեռ ան ոստայն կը գործէ անոր շուրջը: Անոր ոստայնը աննկատ կ'որսայ իր զոհը, որպէսզի ան կարենայ իր ցանկութիւնները կատարել անոր միջոցով:

Այս աշխարհը գաղտնաբար իր ոստայնի մէջ կ'որսայ իր զոհերը՝ անոնց, որոնք կը դաւանին, որ քրիստոնէայ են, որպէսզի կատարէ իր ցանկութիւնը՝ հրապուրանքով հեռացնել հաւատացեալները Աստուծոյ ներկայութենէն, կեանքէն եւ օրհնութիւններէն: Առակաց գիրքի հեղինա-

կը պարզօրէն յայտարարեց, որ այս աշխարհի անկողինը՝ մահուան սենեակներ են, եւ անոր ճանապարհը՝ դժոխքի ճանապարհն է: Հեղինակը կը զգուշացնէ, որ *անոր հրապուրիչ ազդեցութիւնը մահուան մատնած է բազմաթիւ ուժեղ տղամարդիկ եւ կիներ* (տե՛ս Առակ. 7.21-27):

Ի՞նչ չէ այս աշխարհը

Այս աշխարհը սահմանելու հարցին մէջ մարդիկ շատ աւելի շեշտադրած են ձեւը, քան դրդապատճառը: Իմ սիրտը կը տրտմի, երբ կը լսեմ անկեղծ հաւատացեալներու դատողութիւնները, որոնք կ'ամ դաստիարակուած են *օրինապաշտութեան* մէջ, կ'ամ հասուն տարիքին ատոր ծուղակը ինկած են: Մարդիկ յաճախ կը խօսին օրինապաշտութեան մասին եւ շատ ազատ կը գործածեն այս բառը: Այնպէս որ, մինչեւ առաջ անցնիլը, սահմանենք այն: *Օրինապաշտութեան* բառարանային սահմանումն է՝ «խստօրէն յարիլը... օրէնքին կամ դրոյթներուն, առաւելապէս՝ տարրին, քան հոգիին»: Այս բառին միւս սահմանումն է՝ «մարդկային վարքը դատելը՝ օրէնքներուն ճշգրտօրէն յարելու չափանիշով»:

Մեզմէ շատերը սարսափելի պատմութիւններ լսած են՝ կապուած քրիստոնէութեան այս կեանքէն զուրկ ձեւի հետ: Հովիւները Աստուածաշունչով կը հարուածեն ամպիոնին՝ հռչակելով այն դրոյթներն ու կանոնները, որոնց պէտք է ճշդօրէն հետեւիլ եւ հնազանդիլ: Անոնք աշխարհիկի պիտակ կը դնեն կանանց վրայ, եթէ անոնք տաբատ, նորածե զգեստներ կամ զարդեր կը դնեն, կը շպարուին, փիրսին կ'ընեն, կարճ, գեղեցիկ կտրուածքով կամ ներկուած մազեր ունին: Տղամարդիկ նոյնպէս չեն խուսափիր անոնց ինքնահնար օրէնքներէն. մանրակրկիտ ձեւով կը ստուգուին անոնց նորածե հագուստը, փիրսին կը եւ մազերու երկարութիւնը:

Եւ ասիկա տակաւին ամէնը չէ: Դատապարտութեան տակ կը յայտնուին նաեւ անոնք, որոնք մեղաւորներու հետ կը մասնակցին խնձոյքներու: Այն մարդիկ, որոնք կ'ինոթատորն կ'երթան կամ կը մասնակցին այլ զուարճալի միջոցառումներու, կը քննադատուին: Ընդունուած շրջանակներէն դուրս ընկերներ ունենալը բացասական կ'ընկալուի, իսկ կորուածներուն ստեղծարար կերպով հասնելու որեւէ փորձ կը պիտակուի որպէս նահանջ: «Կարելի չէ»-ներու կարգին են պարելը, տարբեր հասարակական միջոցառումներու մասնակցիլը, ամէն տեսակի աշխարհիկ երաժշտութիւնը, հեռատեսիլի դիտելը, մթնոլորտի խթանիչներ (լուսային էֆեքթներ կամ ծուխի մեքենաներ) օգտագործելը՝ եկեղեցիին մէջ: Ահա ընդամէնը քանի մը հատ այն բազմաթիւ

օրինապաշտական կանոններին, որոնք կը պահանջուին «Յիսուսին հետեւելու եւ աշխարհէն գերօ մնալու համար»:

Ես թուարկեցի օրինապաշտ մարդոց քանի ակնյայտ թիրախներ, սակայն գոյութիւն ունին օրինապաշտութեան աւելի աննկատ ծեւեր, որոնք հաւասարապէս վտանգաւոր են: Խօսքը սահմանուած (յաճախ՝ ինքնասահմանուած) չափանիշներու մասին է, որոնց մարդիկ պէտք է խստօրէն հարին, որպէսզի փրկութիւն ստանան, հոգեւորապէս աճին կամ կարենան դատել մարդիկը ըստ անոնց արտաքինին: Ատոնց կարգին են ժամեր շարունակ աղօթելը, ծոմապահութիւնը կամ ամէն օր որոշակի չափով Աստուածաշունչ կարդալը: Անշուշտ, այս բաները շատ օգտաւէտ սովորութիւններ են, բայց ատոնք պէտք չէ ըլլան ինչ որ ծելով հոգեւոր գերազանցութիւն վաստակելու համար:

Կարելի է՝ մենք կը դժուարանանք ներում ընդունիլ մեր կատարած գործերուն համար, եւ առիթ կու տանք մենք մեզի պատժելու ինչ որ ծելով՝ որպէս հատուցում այն սխալին համար, որ գործած ենք: Այդ պարագային մենք կը հեռացնենք մեր հայեացքը Յիսուսին արհունէն եւ կրկին կը նայինք մեր գործերուն:

Նոյնպէս օրինապաշտութիւն է, երբ կը հաւատանք, որ աւելի ընդունուած ենք Աստուծոյ առջեւ, քանի որ որեւէ գործ ջանասիրաբար կը կատարենք Անոր համար կամ կը ծառայենք եկեղեցւոյ մէջ: Կամ եթէ մենք կը հաւատանք, որ մեր աղօթքները աւելի արագ կը լսուին, որովհետեւ վերջերս մենք ոչ մէկ ծանր մեղք գործած ենք: Այս անխօս մտածելակերպի հիմնական գաղափարը այն է, որ մենք կրնանք «համալրել մեր հոգեւոր հաշուեհամարը» լաւ վարքով եւ բարի գործերով: Օրինապաշտութիւնը առիթ չի տար մարդուն հանգստանալ կամ վայելել կեանքը, քանի որ անոր կեանքին մէջ կայ մշտապէս զբաղած ըլլալու ճնշում՝ «Աստուծոյ ծառայելու» համար, թէ՛ եկեղեցւոյ կառավարման, թէ՛ կամաւոր ծառայութեան, թէ՛ աղքատներուն օգնելու մէջ: Դրդապատճառը ոչ թէ սէրն է, այլ Աստուծոյ բարեհաճութիւնը վաստակիլը:

Օրինապաշտութեան այս տեսակի դասական օրինակը այն փարիսեցին է, որ կը դատէր իրենց քաղաքի ամենայայտնի մեղաւորը՝ համեմատելով իր կեանքը այդ հարկահաւաքի կեանքին հետ (որ նոյնն է, թէ՛ մաֆիայի անդամը մեր օրերուն մէջ): Փարիսեցին մակերեսայնօրէն գոհացաւ Աստուծոյ իր բարի վարքին համար. ան մեղք չէր գործած, մարդոց չէր խաբած՝ ինչպէս այդ մաֆիայի անդամը, շնութիւն չէր գործած, կանոնաւոր ծոմ կը պահէր, կ'աղօթէր եւ առատ նուիրատուութիւններ կ'ընէր ժողովարանին մէջ: Զաւեշտական է, որ ճիշդ նոյն պահուն, երբ այս հոգեւոր առաջնորդը կը պարծենար իր վարքով եւ կը նշէր այդ յանցագործ պարագլուխի սխալները, այդ վատահամբաւ մեղաւորը կե-

ցած էր ժողովարանի վերջաւորութեան եւ կ'աղաչէր Աստուծոյ ողորմութեան համար: Յիսուսը ըսաւ, որ արդարացաւ երկրորդ մարդը, ոչ թէ «կատարեալ» կանոններ պահող առաջնորդը:

Այս տեսակի օրինապաշտութիւնը խորունկ արմատացած է այս աշխարհի հոգիին մէջ, քանի որ այն կը կեդրոնանայ մարդուն կարգավիճակի եւ հպարտութեան վրայ, ինչպէս նաեւ՝ ինքնագոհութեան, որ ան կը զգայ, երբ կը հետեւի իր կամ ուրիշ մարդոց կողմէն սահմանուած կանոններուն: Այսպէս վարուելով՝ մենք այլեւս հաշուի չենք առներ, որ կախուած ենք Աստուծոյ կարողութենէն, եւ կը սկսինք կեդրոնանալ մեր ուժերուն վրայ: Օրինապաշտութիւնը նոյնպէս կը գողնայ մեզմէ այն ուրախութիւնը, որ մեր հետ է Աստուծոյ ներկայութեան շնորհիւ:

Ես ընկեր մը ունիմ, որ գործարար է եւ շատ արդիւնաւէտ է Աւետարանը մարդոց հասցնելու մէջ: Ան մեծցած էր օրինապաշտական միջավայրի մէջ, բայց հետագային ազատած էր այդ ազդեցութենէն: Անգամ մը ըսաւ ինծի. «Ճո՛ն, ես կը մտածեի, որ այն ամէնը, ինչ որ հաճելի է կամ ծիծաղ եւ ուրախութիւն կ'առաջացնէ, այս աշխարհէն եւ առաքինութեան սահմաններէն դուրս է»: Անոր հովիւը եւ առաջնորդները կը կեդրոնանային մարդու արտաքին կեցածքին վրայ, ոչ թէ սրտի դիրքին: Անոր եկեղեցին գրեթէ ազդեցութիւն չունէր ոեւէ մէկուն վրայ՝ իրենց խումբէն դուրս: Ցաւօք, այդ եկեղեցւոյ առաջնորդները այդպէս ալ չհասկցան Պօղոսին խօսքերը. «Որովհետեւ Աստուծոյ Թագաւորութիւնը այն չէ, ինչ որ մենք կ'ուտենք եւ կը խմենք, այլ բարութեամբ, խաղաղութեամբ եւ *ուրախութեամբ* ապրիլն է Սուրբ Հոգիին մէջ» (Հռովմայեցիս 14.17, NLT):

Մենք մեծ եւ տեսական ուրախութիւն ունինք, երբ Հոգիի մէջ ենք: Ուրախութիւնը կը գրաւէ կորսուածները, քանի որ այս աշխարհին մէջ ուրախութիւն չկայ: Յիսուսը գրաւիչ էր բոլոր անկեղծ մարդոց համար, այդ կարգին՝ հասարակութեան ամենավատահամբաւ մեղաւորներու: Ոեւէ մարդ, որ կը փորձէ վաստակիլ իր փրկութիւնը, կամ աճիլ Քրիստոսի մէջ օրինապաշտական ուսմունքներով կամ համոզմունքներով, չունի ճշմարիտ ուրախութիւն: Այս մարդիկ կ'ապրին շատ սահմանափակ աշխարհի մէջ, քանի որ անոնք, որոնք չեն մտածեր իրենց պէս, «կը գտուին» իրենց կեանքէն:

Լաւ կ'ըլլար, եթէ իմ գործարար ընկերոջ առաջնորդները աւելի շատ մտորէին Պօղոսի խօսքերու շուրջ, որ ան գրած է մէկ ուրիշ նամակին մէջ.

«Ղուք մահացած էք Քրիստոսին մէջ, եւ Ան ազատ արծակած է ձեզ այս աշխարհի հոգեւոր ուժերէն: Այդ պարագային, ինչն^օւ կը շարունակէք հետեւիլ այս աշխարհի կանոններուն, օրինակ՝ «Մի՛ վերցնէր: Մի՛ ճաշակէր: Մի՛ դաչիր»: Այսպիսի կանոնները սոսկ մարդկային ուսմունքներ են այն բաներուն մասին, որոնք կը քայքայուին, երբ մենք կ'օգտագործենք ատոնք: Այս կա-

նոնները կրնան իմաստուն թուալ, որովհետեւ ատոնք կը պահանջեն ուժգին նուիրում, բարեպաշտական անձնուրացութիւն եւ խիստ մարմնական կարգապահութիւն: Բայց ատոնք ոչինչով կ'օգնեն *մարդուն չար ցանկութիւնները յաղթելուն համար*» (Կողոսացիս 2.20-23, NLT):

Հետաքրքրական է, որ Պօղոսը վերագրեց նուիրում, անձնուրացութիւն եւ խիստ մարմնական կարգապահութիւն պահանջող օրինապաշտական կանոնները այս աշխարհի ուժերուն: Անշուշտ, ասիկա չի նշանակեր, որ անսանձ կիրքերը, սեռական անբարոյութիւնը, զողութիւնը, հարբեցողութիւնը եւ միւս նման բաները մեղք չեն: Ասիկա պարզապէս աշխարհիկութեան ուրիշ տեսակ է: Օրինապաշտութեամբ բռնուած մարդիկ յաճախ չեն գիտակցիր, որ կը գտնուին նոյն աշխարհի համակարգի գերութեան մէջ, որմէ հեռու մնալու մասին այդքան եռանդուն կերպով կը քարոզեն:

Պօղոսի խօսքերուն բանալին «մարդու չար ցանկութիւնները յաղթելը» արտայայտութիւնն է: Օրինապաշտութիւնը չի մաքրեր մարդու սիրտը, հակառակ որ սիրտը այս աշխարհի թիրախն է. այս աշխարհի ուժերը կ'ուզեն վարակել ճիշդ մարդուն սիրտը: Ահա թէ ինչու խօսքը կը պատուիրէ մեզի. «Հսկէ՛ քու սիրտը մնացած ամէն ինչէն աւելի, որովհետեւ այն կ'որոշէ քու կեանքի ընթացքը» (Առակաց 4.23, NLT):

Յիսուս կ'ըսէ. «Բարի մարդը իր սրտի բարի գանձէն բարիքներ կը հանէ, եւ չար մարդը չար գանձէն չար բաներ կը հանէ» (Մատթէոս 12.35): Ամէն ինչ կը բխի այն բանէն, թէ մենք ինչ կը պահպանենք եւ կ'արժեւորենք մեր ներսը: Մաքրեցէ՛ք սիրտը, եւ արտաքին կեանքը ինքնին պիտի կարգաւորուի՝ կատարելապէս համապատասխանելով այն ամէնուն, ինչ որ Աստուած բարի կը համարէ:

Որպէս ամփոփում՝ այս աշխարհը կը վերահսկէ մարդուն ոչ թէ արտաքուստ, այլ՝ ներքուստ: Այս վերահսկողութիւնը կը վերաբերի սրտի եւ մտքի ցանկութիւններուն, մտադրութիւններուն եւ դրդապատճառներուն: Ահա մեր մարտադաշտը. ահա թէ ուր կը գործէ այս աշխարհի ոստայնը: Ահա թէ ուր կը սկսի ընկերութիւնը կամ այս աշխարհին հետ շնութիւնը, եւ ահա թէ ուր կը հասնի այն իր աւարտին: Եւ ասիկա կրնայ հաւասարապէս տեղի ունենալ թէ՛ այն մարդուն հետ, որ հազուադէպ եկեղեցի կը յաճախէ, թէ՛ անոր, որ ոչ մէկ եկեղեցական հաւաքոյթ կը փախցնէ եւ լրջօրէն ներգրաւուած է ծառայութեան մէջ:

Աւելի լաւ պատկերացնելով, թէ ի՞նչ է աշխարհը եւ ի՞նչ այն չէ՝ եկէ՛ք ուղղենք մեր ուշադրութիւնը *ընկերութեան* վրայ: Ինչպէ՞ս մենք յարաբերութիւններու մէջ կը մտնենք կամ կ'ընկերանանք այս աշխարհին հետ: Ինչպէ՞ս շնութիւն կը գործենք այս աշխարհին հետ: Մենք պիտի խօսինք այս մասին յաջորդ գլուխին մէջ:

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

...Մեր ընկերութիւնը Աստուծոյ հետ
վերականգնուեցաւ Անոր Որդիին մահով...
— Հռովմայեցիս 5.10, NLT

Այն, ինչին որ կը յարի եւ կը վստահի
ծեր սիրտը, ձեր իրական Աստուածն է:
— Մարթըն Լիւթըր

Ընկերներ: Բոլորս ընկերներ ունինք եւ կը սիրենք զանոնք: Մանկութեանս տարիներուն երկու շատ մտերիմ ընկեր ունէի՝ Տենին եւ Կլենը: Անոնց հետ կ'անցընէի գրեթէ ամբողջ ազատ ժամանակս: Մենք մարզական խաղեր կը խաղայինք, հեծանիւ կը քշէինք, կը զբօսնէինք բնութեան գիրկը, տարբեր խաղեր կը յօրինէինք, քաղաք կ'երթայինք կամ, պարզապէս, նստած կը զրուցէինք: Մեր զրոյցը կ'ընթանար մեզի համար կարեւոր թեմաներու շուրջ: Մենք կը խօսէինք այլ ընկերներու, աղջիկներու, դասերու, միջոցառումներու, մարզանքի, մեր ապագայ մասնագիտութիւններու ընտրութեան եւ անթիւ այլ թեմաներու մասին: Մեր ընկերութիւնը մեծ մասամբ առողջ էր: Մենք կը խրախուսէինք միմեանց՝ ըլլալ աւելի լաւ, աւելի զօրաւոր, աւելի իմաստուն, եւ հասնիլ այն ներուժին, որ մեր մէջ էր: Մենք կը պաշտպանէինք իրար, շնորհներ կ'ընէինք մէկս միւսին եւ կ'օգնէինք դժուար իրավիճակներուն մէջ: Մէկ խօսքով, ամէնէն շատ կը ցանկայի անոնց հետ ժամանակ անցընել:

Իսկ դո՞ւք: Յիշեցէ՛ք ձեր անցած տարիներու ընկերները: Հարցուցէ՛ք դուք ձեզի, թէ ինչէն բաղկացած է ընկերութիւնը: Համոզուած եմ՝ դուք պիտի նշէք միասին հաճոյքով ժամանակ անցընելը, իրար հետ հաղողակցութիւնը, իրար հասկնալը եւ ընդհանուր հետաքրքրութիւններ ունենալը: Սէրը, վստահութիւնը, յարգանքը, կատակը եւ փոխադարձ համակրանքը նոյնպէս մեծ նշանակութիւն ունին: Ընկերութիւնը կրնայ ունենալ աւելի շատ բաղկացուցիչ մասեր, ինչ որ կախուած է մարդոց

անհատականութենէն. այնուամենայնիւ, բոլորիս համար ամենակարեւորը այն է, որ մենք հաճոյքով ժամանակ կ'անցընենք միասին:

Աստուծոյ խօսքը դրականօրէն կը խօսի ընկերութեան մասին: Իմ ամենասիրելի աստուածաշնչեան խօսքերէն մէկը հետեւեալն է. «Ինչպէս որ անուշաբոյր քսուկները զգացնունքային բերկրանք կը պատճառեն, այնպէս ալ հաճելի ընկերութիւնը անձը կը թարմացնէ» (Առակաց 27.9, MSG): Մենք ստեղծուած չենք միայնակ սաւառնելու համար. ընկերութիւնը անոյգութիւն կը հաղորդէ մեզ: Այն գլխաւոր տարրն էր, որ կը բացակայէր Աստուծոյ սկզբնական ստեղծագործութեան մէջ: Ան ըսաւ. «Լաւ չէ, որ մարդը առանձին ըլլայ» (Ծննդոց 2.18): Մենք ստեղծուած ենք Անոր պատկերով, այդ պատճառով ալ կը ձգտինք ընկերութեան եւ կը վայելենք այն:

Այնուամենայնիւ, գոյութիւն ունի ասոր հակառակ կողմը: Յիսուսը, Յակոբոսը եւ Յովհաննէսը *բացասաբար* կը խօսին ընկերութեան տեսակի մը մասին: Կրկին լսեցէ՛ք առաքելի խօսքերը. «Շնացողներ: Չէ՞ք հասկնար, որ ընկերութիւնը այս աշխարհի հետ, ձեզ Աստուծոյ թշնամին կը դարձնէ: Կը կրկնեմ՝ եթէ կ'ուզէք այս աշխարհին ընկերը ըլլալ, դուք Աստուծոյ թշնամին կը դառնաք» (Յակոբոս 4.4, NLT): Անոր խօսքը ոչ միայն բացասական երանգ ունի, այլեւ շեշտակի, կտրուկ եւ խիստ է: Այդ պարագային, հարցնենք հետեւեալը. որո՞նք են այս աշխարհի հետ յարաբերութիւններ սկսելու ցուցանիշները:

Դասական սիրավէպ

Նախորդ գլուխին մէջ գիտցանք, որ «*Ֆիլիա*» բառը կը սահմանուի «ընկեր ըլլալ» կամ «ընկերանալ» բառերով եւ կը կրէ «սիրելու կամ սիրուած ըլլալու» գաղափարը: «*Աստուածաշնչեան բառերու հանրագիտարանը*» կը շարունակէ. «Յունական մշակոյթին մէջ ընկերութեան գաղափարը լաւ զարգացած էր: «*Ֆիլիա*» բառը... իր լայն իմաստով կը նշանակէր «ընկեր» կամ «ծանօթ», իսկ աւելի նեղ իմաստով՝ անձնական եւ խորունկ սիրային կապ»: Ըստ էութեան, Յակոբոսը կ'օգտագործէ այս բառը լայն իմաստով եւ կը խօսի ընկերութեան մասին: Բոլորս գիտենք, որ գոյութիւն ունի ընկերութեան երեք մակարդակ, եւ այն, ինչի մասին որ կը խօսի Յակոբոսը, երեքն ալ կ'ընդգրկէ: Հետեւաբար, ընկերութեան բոլոր տեսակները անմիջականօրէն կապուած են անհաւատարմութեան հետ:

Աստուծոյ դէմ շնութիւն գործելը շատ չի տարբերիր ամուսնացած տղամարդու դաւաճանութեան բնորոշ երեւոյթէն: Այնպէս որ, դիտար-

կենք այն քայլերը, որոնք կը տանին սովորական սիրավէպի: Որպէս կանոն՝ ամուսինը եւ անոր սիրուիին չեն յայտնուիր անկողինին մէջ իրենց առաջին հանդիպման ժամանակ: Կայ սիրահետման ընթացք, որ կրնայ ըլլալ միտումնաւոր կամ ոչ միտումնաւոր:

Ամէն ինչ կը սկսի պարզապէս հանդիպելէն եւ միմեանց հետ *ժամօթանայէն*: Անոնց հանդիպումը կրնայ տեղի ունենալ ընկերվարական ցանցերու միջոցով կամ սովորական պայմաններու մէջ: Կայծը կը բռնկի ծանօթութեան պահուն: Յաճախ տղամարդու հետաքրքրութեան պատճառը՝ մտերմութեան պակասն է իր կնոջ հետ: Աւելի հազուադէպ՝ ան պարզապէս կը ձգտի նոր յարաբերութիւններու: Սկզբնական շրջանին անոնց հաղորդակցութիւնը անվնաս կը թուայ, բայց ամէն հանդիպման ժամանակ անոնց հետաքրքրութիւնը միմեանց նկատմամբ կ'աւելնայ: Ի վերջոյ, անոնք կը փոխանակեն բջիջային հեռաձայնի թիւերը եւ ելեկտրոնային հասցէները:

Հրապուրանքը անոնց միջեւ կը շարունակուի աւելնալ, երբ անոնք կը հաղորդակցին՝ միմեանց ուղարկելով տեքստային հաղորդագրութիւններ, ելեկտրոնային նամակներ, հեռախօսազանգեր կամ ուղղակի «պատահաբար հանդիպելով»: Անոնց հաղորդակցման մակարդակը աւելի կը խորանայ: Անոնք բուռն կերպով կը ցանկան իրար, բայց անոնցմէ ոչ մէկը կը խոստովանի ատիկա: Անոնք ներքին թրթիռ կը զգան իրենց փոխյարաբերութիւնները զարգացնելու ժամանակ, եւ այս անխօս հրապուրանքն ա'լ աւելի հազեցած կը դարձնէ այդ ընթացքը: Այս փուլին մէջ անոնք արդէն իսկ անցած են ընկերութեան թոյլատրելի սահմանները:

Ի վերջոյ, անոնք կը ծրագրեն եւս մէկ քայլ ընել՝ միասին սուրճ խմել, ճաշել կամ հանդիպիլ որեւէ առանձին վայրի մէջ: Սովորաբար, այս ժամանակ է, որ անոր զգացմունքները միմիանց հանդէպ կը սկսին արտայայտուիլ:

Ան արդէն շարունակ կը մտածէ այդ կնոջ մասին եւ անոր հետ ըլլալու տենչանք կը զգայ: Ան կ'երեւակայէ ու կը ծրագրէ, թէ ինչպէս կրնան հանդիպիլ, որ իր կինը եւ ընկերները չգիտնան: Անոր սիրտը այլեւս չի ձգտիր իր կնոջը, այլ՝ միւս կնոջը: Երբ ան իր կնոջ հետ է, կարծես ուրիշ տեղ մը ըլլայ, որովհետեւ անոր միտքը եւ երեւակայութիւնը իր սիրուիին հետ են: Միայն ժամանակի հարց է, թէ ե'րբ անոնք անկողինին մէջ պիտի յայտնուին:

Ինչպէ՞ս սկսաւ ամէն ինչ: Ամէն ինչ սկիզբ առաւ ծանօթութեան փուլին մէջ ոչ պատշաճ մտքերէն եւ գրոյցներէն: Ո՞ր պահուն ատիկա շնութիւն դարձաւ: Կարելի՞ է ըսել՝ այն պահուն, երբ անոնք փոխանցեցին

իրենց տուեալները: Թէ՛ երբ անոնք գաղտնի հանդիպեցան: Թէ՛ երբ ան առաջին անգամ դպաւ այդ կնոջը: Թերեւս անոնց առաջին համբոյրի ժամանակ: Թէ՞ ատիկա տեղի ունեցաւ, երբ նրանք մերկացան եւ սեռական կապի մէջ մտան:

Իրականութեան մէջ, ատիկա տեղի ունեցաւ այս բոլորէն առաջ: Յիսուսը լոյս կը սփռէ այս հարցին վրայ՝ պնդելով. «Բայց մի՛ մտածէք, որ դուք պահպանեցիք ձեր առաքինութիւնը՝ պարզապէս անկողին չմտնելով: Ձեր սիրտը կրնայ ապականիլ կիրքով նոյնիսկ աւելի արագ, քան ձեր մարմինը» (Մատթէոս 5.28, MSG): Սիրտը այն է, ուր մենք կ'ապրինք. արտաքուստ եղող գործերը պարզապէս կը հետեւին մեր սրտի վիճակին: Շնորհիւնը սկիզբ առաւ, երբ այդ տղամարդու զգացումները ուղղութեան դէպի այդ կինը, այսինքն՝ *ժանօթութեան* փուլի ինչ որ հատուածի մը մէջ:

Ընկերութիւն այս աշխարհի հետ

Այս աշխարհը նմանատիպ կերպով կը հրապուրէ մեզ՝ հեռացնելով մեր «առաջին սէրէն»: Այն կը սկսի հետաքրքրութիւն առաջացնել մեր մէջ: Այն կրնայ հրաւեր ուղղել մեզի կատակի, հաճոյքի, յարմարաւէտութեան, ոգեշնչման, գաղտնի սիրային յարաբերութեան կամ յաջողութեան տեսքով. Մէկ խօսքով՝ որեւէ բանով, ինչ որ կրնայ գրաւիչ ըլլալ մեզի համար: Ինչպէս վերոյիշեալ օրինակին մէջ, ժանօթութեան փուլը կրնայ տեղի ունենալ համացանցային կայքերու, հեռուստատեսութեան կամ անձնական հանդիպման միջոցով: Յաճախ ասիկա տեղի կ'ունենայ, քանի որ մենք բաւականաչափ մտերիմ չենք Աստուծոյ հետ: Մենք մեր մէջ կորսնցուցած ենք Անոր ընկերութեան թրթիռը: Մեր հաղորդակցութեան ժամանակ Անոր հետ չոր եւ ձանձրալի է: Եւ ընկերական հաղորդակցութեան պարագային այլ տեղեր կը տանի մեզ:

Այս աշխարհի հրապուրանքը կ'աճի՝ զուգահեռ այն ժամանակին, որ կը տրամադրենք ասորը: Շատ չանցած՝ մեր մտքերը եւ զգացումները կը տարուին այս աշխարհով: Եթէ ուսումնասիրենք Պօղոսի խօսքերը՝ ուղղուած երկու տարբեր եկեղեցիներու, եւ ուշադրութիւն դարձնենք անոր զգուշացումներուն, մենք պաշտպանուած պիտի ըլլանք այս աշխարհի հետ շնութենէն:

«Արդ, եթէ Քրիստոսին հետ յարութիւն առիք, ուրեմն վերի բաները փնտռեցէ՛ք (*խնդրեցէ՛ք*), ուր Քրիստոս կը նստի Աստուծոյ աջ կողմը: Վերի բաներուն մասին *մտածեցէ՛ք*, ոչ թէ այս երկրին վրայիններուն» (Կողոսացիների 3.1,2):

Պուք ուշադրութեամբ կարդացիք այս հատուածը: Եթէ ոչ, կրկին կարդացէք այս խօսքերը եւ յատկապէս ուշադրութիւն դարձուցէ՛ք «խնդրել» (կամ՝ «փնտռել») եւ «մտածել» բառերուն: Մենք կը մտածենք այն բաներուն մասին, որոնք կը *խնդրենք* կամ կը *փնտռենք*: Մինչ շարունակելը, ուշադրութեամբ կարդանք Պօղոսին խօսքերը՝ ուղղուած հռոմէացիներուն: Կրկին ուշադրութիւն դարձուցէ՛ք «մտածել» բառին:

«Քանզի մարմնաւոր եղողները մարմինի բաները կը *մտածեն* ու հոգեւոր եղողները՝ հոգիին բաները [*կը մտածեն*]: Վասնզի մարմնաւոր խորհուրդը մահ է, իսկ հոգեւոր խորհուրդը՝ կեանք ու խաղաղութիւն: Քանզի մարմնաւոր խորհուրդը Աստուծոյ դէմ թշնամութիւն է...» (Հռովմայեցիս 8.5-7):

Ուշագրաւ է, որ այս խօսքին մէջ կ'օգտագործուի «թշնամութիւն» բառը՝ նոյն յունարէն բառը, որ Յակոբոս 4.4-ին մէջ է՝ «էխթրա»-ն: «Սթրոնկի բառարանը» կը սահմանէ այն որպէս «թշնամանք... ընդդիմութեան պատճառ»: Պօղոսը եւս մէկ անգամ խօսք կ'ուղղէ այն հաւատացեալին, որ կապ կը հաստատէ աշխարհին հետ:

Այն, որ ես շնութիւն չեմ գործեր Լիզայի նկատմամբ, միայն անոր սիրոյ պատճառով չէ: Ես նոյնպէս չեմ ցանկար կրել անոր բարկութիւնը: Եթէ ընէի ատիկա, ես պիտի դառնայի անոր թշնամութեան առարկան: Ես չեմ ցանկար, որ իմ սիրելի անձնաւորութիւնը թշնամաբար տրամադրուի իմ հանդէպ, բարկանայ իմ վրայ եւ հիասթափի ինձմէ: Այնուամենայնիւ, ատիկա ոչինչ է՝ համեմատած այն բանին հետ, ինչ որ նկատի ունին Պօղոսն ու Յակոբոսը, որովհետեւ ոչ մէկ ողջամիտ քրիստոնեայ կը ցանկայ կրել Աստուծոյ թշնամութիւնը (յիշեցէ՛ք, որ Յակոբոսն ու Պօղոսն իրենց խօսքը հաւատացեալներուն կ'ուղղէին):

Յովնանը կրեց Աստուծոյ թշնամութիւնը եւ յայտնուեցաւ մեծ ձկան փսխածին մէջ: Սամսոնը կրեց այն եւ յայտնուեցաւ ստրկութեան մէջ, ինչպէս նաեւ՝ կորսնցուց տեսողութիւնը: Հեղին կրեց այն եւ մահացաւ նոյն օրը, երբ իր որդիներուն կեանքը երկրին վրայ աւարտեցաւ: Կան այլ օրինակներ՝ Սաւուղը, Բաղասանը, Յովաբը, Աղեքսանդրոս դարբինը եւ շատ ուրիշ մարդիկ: Աստուծոյ բարկացնելը՝ վատ գաղափար է:

Եթէ կ'ուզէք աւելի շատ օրինակներ, կրնաք բանալ Նոր կտակարանը եւ կարդալ Յիսուսին խօսքերը՝ Յայտնութիւն գիրքի եկեղեցիներուն: Յիսուս սպառնաց այն եկեղեցիներէն մէկուն, որ փոխզիջման գացած էր Իր հետ հաղորդակցութեան բնագաւառին մէջ, հեռացնել անոնց ճրագակալը՝ անոնց լոյսը (տե՛ս Յայտն. 2.5): Մէկ ուրիշ եկեղեցի նախապէս զգուշացուեցաւ, որ Աստուած «պիտի պատերազ-

մի անոնց հետ» (տե՛ս Յայտն. 2.16): Աստուած մէկ ուրիշ եկեղեցւոյ սպառնաց «հիւանդութեան մահիճով» եւ «մեծ պատուհասով» (տե՛ս Յայտն. 2.22): Միւսը զգուշացում ստացաւ, որ Աստուած «պիտի գայ անոնց վրայ գողի պէս» (տե՛ս Յայտն. 3.3): Ան ըսաւ եւս մէկ եկեղեցւոյ, որ «պիտի փսփսէ» զինք Իր բերանէն: (տե՛ս Յայտն. 3.16): Այնպէս որ, դժուար թէ ցանկանք բախիլ Աստուծոյ թշնամութեան:

Հռոմէացիներու 8.5 խօսքին մէջ ուշադրութիւն դարձուցէ՛ք «կը մտածեն» (անգլերէնի մէջ՝ «կ'ուղղեն իրենց միտքը») արտայայտութեան: Դիտարկենք օրինակով մը, թէ ինչ կը նշանակէ՝ ուղղել միտքը ինչ որ բանի մը վրայ:

Պատկերացուցէ՛ք, որ ձմեռ է, եւ ձեր տան ջերմակարգաւորիչը կարգաւորուած է 21°C ջերմաստիճանի վրայ: Դուրսի ջերմաստիճանը -20°C է: Ձեր ընտանիքի անդամներէն մէկը շատ արագ տունէն դուրս կ'ելլէ եւ լաւ չի փակեր դուռը: Ան կը նստի ինքնաշարժը եւ կ'երթայ, բայց քանի մը վայրկեան յետոյ քամին լայն կը բանայ դուռը: Դուք տան միւս մասն էք եւ կարճ ժամանակ յետոյ կը զգաք, որ ջերմաստիճանը շատ նուազած է: Դուք կը սկսիք փնտռել ատոր պատճառը եւ կը տեսնէք, որ տան դուրսի դուռը լայն բաց է, եւ տունը պաղ օդ լեցուած է: Անմիջապէս կը գոցէք դուռը, բայց ձեր տունին ջերմաստիճանը արդէն 15°C է: Եւ ի՞նչ տեղի կ'ունենայ այդ պահուն: Հազիւ որ ջերմաստիճանը նուազի, ջերմակարգաւորիչը միանալու ազդանշան կ'ուղարկէ տաքութեան ցուցիչին, եւ այն կ'աշխատի, մինչեւ որ տան կարգաւորուած ջերմաստիճանը կը վերականգնուի: Առանց ձեր կողմէն որեւէ միջամտութեան՝ ջերմաստիճանը կրկին կը դառնայ 21°C:

Վերադառնանք շնութիւն գործող տղամարդու օրինակին: Տարիներ առաջ, երբ ան կը սիրահետէր իր ապագայ կնոջը, անոր զգացումները եւ ցանկութիւնները ուղղուած էին այդ աղջկան: Այդ տղամարդը կ'երագէր անոր կողքին ըլլալ, մտերմանալ անոր հետ, կ'երեւակայէր, թէ ինչպէս ամուսնութեան առաջարկութիւն պիտի ընէր անոր: Այդ աղջիկը իր մտքին մէջ էր, երբ ան կ'արթննար, երբ աշխատավայրի մէջ էր, երբ մեքենայով խճողումի կախուած էր, եւ յատկապէս՝ գիշերը, երբ կը պառկէր քնանալու: Պարզ ըսելու համար՝ երբ այդ տղամարդուն միտքը չէր գործեր ինչ որ ուղղութեամբ, այն կը վերադառնար ինն, ուր ուղղուած էր՝ այդ աղջկան:

Անոր ընկերները յաճախակի ցրուածութիւն կը նկատէին անոր քով, նոյնիսկ կը հարցնէին. «Ի՞նչ կը կատարուի հետդ»: Ան կը շփոթէր եւ անփութօրէն կ'ըսէր. «Ուղղակի շատ բաներու մասին կը մտածեմ»: Ան չէր ուզեր ճիշդը ըսել: Ան չէր ուզեր վիրաւորել իր ընկերները՝ ցոյց տալով, որ անոնց հետ հաղորդակցութեան ամբողջ ընթացքին ան կը մտածէր այդ աղջկան մասին: Անոր մտքերը ուղղութիւն ունէին:

Այնուամենայնիւ, տարիներ յետոյ՝ նշանադրութենէն, հարսանիքէն եւ քանի մը զաւակ ունենալէն ետք, ան արդէն շնութեան մէջ է: Ան անբարոյ կապի մէջ մտած է օտար կնոջ հետ: Անոր մտքին մէջ կը գործէր միեւնոյն յաջորդականութիւնը: Ան մշտապէս կը մտածէր իր սիրուիին մասին: Երբ կարիք չէր ունենար մտածելու ինչ որ բանի մասին, անոր մտքերը կը վերադառնային իրենց *«դասաւորումներուն»*: Նոյնիսկ երբ ան կնոջ հետ էր, անոր զգացումները *ուղղուած* էին իր սիրուիին: Ան կը ձգտէր եւ կը փափաքէր անոր, որովհետեւ անոր միտքի *ուղղուած* էր այդ կնոջը: Ինչպէս որ ջերմակարգաւորիչը ինքնաբերաբար կը վերականգնէ տունին ջերմաստիճանը՝ ըստ կարգաւորումներու, այնպէս ալ միտքը ամէն անգամ կը վերադառնայ իր *կարգաւորումներուն կամ ուղղուածութեան*:

Ի՞նչ կապ ունի ասիկա հաւատացեալին հետ: Երբ նոր կը փրկուինք, մենք համակուած ենք սիրով: Մենք կը մտածենք Յիսուսին մասին ամբողջական արթննալու ժամանակ, նախաճաշի, ինքնաշաժին մէջ, աշխատավայրին մէջ, ճաշի ժամուն, աշխատանքէն յետոյ, երբ ամանձին ենք, եւ յատկապէս՝ գիշերը, երբ կը պառկինք անկողինին մէջ: Մենք անհամբեր կը սպասենք Անոր Հոգիին հետ մեր հաղորդակցութեան ժամերուն: Մենք մեծ ոգեշնչմամբ կ'ակնկալենք, որ պիտի մասնակցինք յաջորդ հաւաքոյթին, պիտի պատմենք մարդոց Յիսուսին մասին կամ պիտի խօսինք քրիստոնեաներէն մէկուն հետ Աստուծոյ ճանապարհներուն մասին: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ մեր միտքերը կլանուած են Անորմով: Մեր զգացումները ուղղուած են Անոր:

Ժամանակը կ'անցնի: Մենք վարժուեր էինք սպասումով մասնակցիլ հաւաքոյթներուն, վերապրիլ Անոր ներկայութիւնը, երկրպագել եւ լսել Անոր Խօսքը: Իսկ հիմա մենք ֆիզիքապէս հոն ենք, բայց իրականութեան մէջ ներկայ չենք: Մեր մտքերը դիւրին կը շեղին դէպի մեր նախասիրած մարզական խումբը, զեղչերը՝ մօտակայ հանրախանութիւն մէջ, սպասուող կարելոր ամսաթիւը, որ կը մօտենայ. այն գործարքը, որ կրնայ չկայանալ, այն երեկոյթը, որուն հրաւիրուած ենք, եւ այլն: Ի՞նչ պատահեցաւ: Մեր միտքերը իսկապէ՞ս կը շեղին, թէ՞ կ'երթան հոն, ուր *ուղղուած* են՝ դէպի այն, ինչին ջանասիրաբար կը *ձգտինք*: Հնարաւոր է, որ մենք անգիտակցաբար սիրեկաններ ունենանք:

Իմ պատմութիւնը

Առիթ տուէ՛ք պատմել իմ պատմութիւնը: Երբ երկրորդ քուրսի ուսանող էի «Փուրտեու» համալսարանին մէջ, մեր ուսանողական հանրակացարանի տղաներէն երկուքը իմ սենեակը եկան եւ պատմեցին «Ճամ-

բարային հաւաքոյթներուն» քարոզուող Չորս հոգեւոր օրէնքներուն մասին: Իմ հոգեւոր աչքերը բացուեցան, եւ կէանքս Յիսուսին նուիրեցի: Ես անմիջապէս լեցուեցայ Աստուծոյ հանդէպ կրակով ու ջերմեռանդութեամբ: Ան այնքա՛ն իրական էր: Ես խորապէս սիրահարուեցայ Յիսուսին եւ անասելի կերպով շնորհակալ էի այն ազատութեան համար, որ Ան տուած էր ինձի: Անոր մասին կը պատմէի անոնց, որոնք կ'ուզէին լսել, եւ նոյնիսկ անոնց, որոնք չէին ուզեր: Մեր տղաները կը փորձէին հեռացնել ինձի հանրակացարանէն, որովհետեւ ես կը խօսէի Յիսուսի մասին միւս ուսանողներուն հետ մեր բոլոր երեկոյթներուն ժամանակ:

Մեր կողքին գտնուող աղջիկներու հանրակացարանին մէջ կային քանի մը ուսանողուհիներ, որոնց մենք «փոքրիկ քոյրիկներ» կ'անուանէինք: Անոնցմէ երկուքը իսկական քոյրեր էին, եւ միասին անոնք կենակցած էին վաթսուն տղաներէ բաղկացած հանրակացարանի աւելի քան կիսուն հետ: Եթէ տղաներէն ինչ որ մէկը սեռական ցանկութիւն ունենար, ան գիտէր, որ այդ աղջիկները դիւրին եւ արագ տարբերակ են:

Ես եւ ուրիշ տղայ մը անոնցմէ մէկուն առաջնորդեցինք ընդունելու Յիսուսը, եւ քսանչորս ժամուան ընթացքին իր քոյրն ալ կէանքը նուիրեց Յիսուսին: Տակաւին չէինք հասած անոնց հետ անբարոյ վարքի մասին խօսելու, անոնք դադրեցան սեռական կապեր ունենալէ հանրակացարանի տղաներուն հետ: Փոխարէնը, անոնք սկսան վկայել այն տղաներուն, որոնց հետ կը կենակցէին: Ասիկա շատ բարկացուց մեր հանրակացարանի տղաները: Անոնք կը համարէին զիս այդ խումբի ղեկավարը, որովհետեւ այդ ժամանակ ես արդէն նոյն մեր հանրակացարանին մէջ Աստուածաշունչի ուսումնասիրութեան դասեր կ'անցընէի ամբողջ համալսարանին համար:

Ի վերջոյ, մեր ուսանողական հանրակացարանի փոխնախագահը եկաւ իմ սենեակ եւ ըսաւ. «Ճո՛ն, մենք պիտի հեռացնե՛նք քեզ»: Ապա շարունակեց (եւ ասիկա ճիշդ անոր խօսքերն են). «Ճո՛ն, ինչո՞ւ դուն այս հանրակացարանի միւս քրիստոնեաներուն պէս չես»: Ան կը խօսէր այլ տղաներու մասին, որոնք կիրակի օրերուն եկեղեցի կը յաճախէին, բայց պորնիկութիւն կ'ընէին իրենց զուգընկերուհիներուն հետ, կը գինովնային մեր երեկոյթներուն եւ կը մասնակցէին միւս անվայել արարքներուն, որոնք ընդունուած էին մեր հանրակացարանին մէջ:

Այդ շրջանը դիւրին չէր ինձի համար, բայց թէւ մեր ուսանողական հանրակացարանի փոխնախագահը խոստացաւ վճռուել զիս, ատիկա այդպէս ալ տեղի չունեցաւ: Հետաքրքրական է, որ անոնք չէին կրնար բաւականաչափ քուէներ հաւաքել՝ զիս հեռացնելու համար: Մենք բաւականին շատ ուսանողներ առաջնորդած էինք դէպի Քրիստոսը, եւ անոնք իմ կողմնակիցները դարձած էին:

Յիսուսին հանդիպելն եւ սիրահարուելն քանի մը ամիս յետոյ սկսաւ ամերիկեան ֆուտպոլի խաղաշրջանը: Ես արդէն նախավերջին ուսումնական տարին էի եւ, ինչպէս նախորդ տարիներուն, կրնայի ներկայ գտնուիլ մեր խաղաշրջանի բոլոր խաղերուն: Նախորդ երկու տարիներուն ընթացքին նոյնիսկ մէկ խաղ չէի կորսնցուցած, բայց այժմ այնքան՝ ոգեշնչուած էի Յիսուսով, որ այդ ժամանակը օգտագործեցի Աստուածաշունչը ուսումնասիրելու համար: Մեր տղոց հանրակացարանը շատ խաղաղ էր, որովհետեւ բոլորը խաղերը դիտելու կ'երթային: Ատիկա հրաշալի հնարաւորութիւն էր Աստուծոյ հետ հաղորդակցութեան եւ աղօթքի համար: Ոչ ոք կրնար ըսել ինձի. «Դուն պէտք չէ ամերիկեան ֆուտպոլի խաղերու երթաս», եւ իմ միտքով նոյնիսկ չէր անցած, որ խաղերու երթալը սխալ է: Յաջորդ տարի ես ներկայ գտնուեցայ շատ խաղերու: Այդ տարին չի գացի խաղեր դիտելու, քանի որ ինձի համար ատիկա Աստուծոյ հետ ըլլալու հնարաւորութիւն էր: Ես ջերմեռանդօրէն կ'ուզէի ճանչնալ Ջինք: Իմ միտքը ուղղուած էր դէպի վերինները:

Երբ աւարտեցի համալսարանը, մեր հանրակացարանի տղաներէն շատերը, ինչպէս նաեւ բազմաթիւ այլ ուսանողներ, արդէն կը ճանչնային Տէրը: Անոնց կարգին էր Լիզան՝ իմ ապագայ կինը, որ այդ ժամանակ կը համարուէր համալսարանի վատահամբաւ աղջիկներէն մէկը: Իմ ջերմեռանդ սէրը Յիսուսին հանդէպ վարակիչ էր. այնպէս որ, մարդիկ կան կը սիրէին, կան կ'ատէին զիս: Չկար միջին վերաբերմունք. եթէ դուք հանդիպէիք Ճոն Պիվիին, շատ շուտով պիտի գիտնայիք, թէ ուր ուղղուած է անոր սիրտն ու միտքը, որովհետեւ Աստուծոյ հանդէպ սէրը պարզապէս կը յորդէր ինձմէ: Ես կը նմանէի ռեւէ մարզական խումբի խանդավառ երկրպագուի կամ՝ մինչեւ ականջները ինչ որ աղջկայ սիրահարուած տղայի:

Ես տեղափոխուեցայ Թեքսաս նահանգի Տալլաս քաղաքը: Վեց ամիս յետոյ Լիզան նոյնպէս Տալլաս տեղափոխուեցաւ, եւ շուտով մենք ամուսնացանք: Ես կ'աշխատէի «Ռոքուէլ Ինթերնեշնլ» ընկերութեան մէջ՝ որպէս ճարտարագէտ: Եւս մէկ անգամ ես բախեցայ այնպիսի մարդոց, որոնց հաճելի չէր իմ եռանդը Յիսուսին հանդէպ: Անոնք կը մտածէին, որ ես չափէն աւելի կ'արտայայտեմ համոզմունքներս, եւ չէին հասկնար, թէ ինչու չէի մասնակցեր անոնց անբարոյ կատակներուն, անպարկեշտ խօսակցութիւններուն եւ աշխատանքէն յետոյ հաղորդակցութեան՝ ոգելից խմիչքի շուրջ: Այնուամենայնիւ, մասնագիտական միջավայրի մէջ մարդիկ աւելի կը հանդուրժէին իմ հայեացքներն ու վարքը, քան համալսարանի հանրակացարանին մէջ:

Քսաներկու ամիս յետոյ ինձմէ խնդրեցին միանալ մեր եկեղեցւոյ աշխատակազմին: Ամերիկայի մէջ այն ամենամեծ եւ ամենայայտնի

Եկեղեցիներէն էր եւ ազդեցութիւն ունէր ամբողջ աշխարհին մէջ: Եկեղեցւոյ աշխատակազմը բաղկացած էր աւելի քան չորս հարիւր մարդոցմէ, որոնք զբաղած էին բազմաթիւ ծառայութիւններով: Այն, որ ինծմէ խնդրեցին միանալ այդ խումբին, գրեթէ անհրապարհ էր ինծի համար: Միակ բանը, որ կրնար ատկէ աւելի լաւ ըլլալ ինծի համար, Երկինք երթալն էր: Ահա եւ վերջ իմ հալածանքներուն, որովհետեւ այժմ պիտի աշխատէի քրիստոնէաներու հետ: Ես մէկընդմիջտ պիտի ազատէի այն լարուած պայքարներէն, որոնք տեղի կ'ունենային համալսարանի հանրակացարանին մէջ եւ «Ռոքուէլ Ինթերնեշնլ» ընկերութեան մէջ:

Այդ ժամանակ Տալլասի Քոուպոյները Ֆուտպոլի ազգային լիկայի լաւագոյն խումբերէն մէկն էր: Ես անոնց երկրպագուն չէի, քանի որ մեծցած էի Միշիկըն նահանգին մէջ, բայց ամէն երկուշաբթի կը լսէի, որ Եկեղեցւոյ աշխատողները կը խօսէին Քոուպոյներու մասին: Անոնք կը հաւաքուէին սուրճի սեղանին շուրջ եւ բուռն կերպով կը քննարկէին նախորդ օրուան խաղը, լաւագոյն մարզիկները, խումբի յաղթանակը կամ պարտութիւնը:

Հետաքրքրութենէն մղուած՝ ես սկսայ դիտել Քոուպոյներու խաղը հեռատեսիլով: Ամէն ինչ սկսաւ մէկ կամ երկու խաղակէս դիտելէն: Քոուպոյները ինծի համար հաճելի եղան, քանի որ անոնց խաղը շատ տպաւորիչ էր: Իմ դիտումները ունէին եւս մէկ առաւելութիւն. այժմ ես կրնայի լուրջ կեցուածք ընդունիլ եւ քննարկել խաղերը Եկեղեցւոյ գրասենեակի միւս աշխատողներուն հետ:

Սկիզբը ամէն ինչ անմեղ ու անվնաս կը թուար: Բայց որոշ ժամանակ յետոյ իմ հետաքրքրութիւնը Քոուպոյներու հանդէպ աւելցաւ, եւ ես սկսայ ամբողջութեամբ դիտել խաղերը: Ոգեւորութեամբ կը խօսէի հեռատեսիլին հետ, կը գովէի խաղացողները, իսկ երբեմն՝ կը պոռայի անոնց վրայ: Ի վերջոյ, ամէն ինչ այն աստիճան լուրջ դարձաւ, որ չէի կորսնցներ խաղ, եւ ոչ ալ՝ որեւէ հատուած խաղերէն: Նոյնիսկ խաղաշրջաններու միջեւ մեր աշխատողները եւ ես կը շարունակէինք խօսիլ այն մասին, թէ ինչ անձնակազմով Քոուպոյները հանդէս պիտի գան յաջորդ տարի, եւ թէ ինչպիսին պիտի ըլլար անոնց խաղը: Ես յաճախ կը մտածէի այդ խումբին մասին, նոյնիսկ երբ չէի խօսեր անոնց մասին մեր աշխատակիցներուն հետ: Ես արդէն լիարժէք երկրպագու էի:

Իմ ոգեւորութիւնը սահման չունէր, երբ սկսաւ յաջորդ խաղաշրջանը: Ամէն կիրակի՝ ծառայութենէն յետոյ, ես արագ տուն կ'երթայի եւ հեռատեսիլը կը բանայի, նոյնիսկ՝ առանց հազուստս փոխելու: Ես անյարմար հազուստով էի՝ քոստիւնով եւ փողկապով, եւ բաղնիք երթալու պէտք ունէի, սակայն չէի ուզեր կորսնցնել խաղը նոյնիսկ մէկ վայրկեանով:

Խաղի կիսուն՝ ընդմիջման ժամանակ, ես սենեակս կ'երթայի եւ հազուստս կը փոխէի: Եթէ Լիզան ինչ որ բանի մը մէջ օգնութեան կարիք

ունենար, ան պէտք է մոռնար այդ մասին. «Սիրելի՛ս, Քուպոյնները կը խաղան»: Մենք կը ճաշէինք խաղի կիսուն, կամ, նոյնիսկ, խաղէն յետոյ, բայց խաղի ընթացքին՝ երբե՛ք:

Ես արդէն գիտէի Քուպոյններու բոլոր վիճակագրական տուեալները: Ուշադրութեամբ կ'ուսումնասիրէի ատոնք եւ շարունակ կը մտածէի, թէ ինչպէս Քուպոյնները կրնային աւելի լաւ խաղալ: Ես արդէն աշխատավայրին մէջ խաղերու մասին բոլոր խօսակցութիւնները կը վարէի: Ես կը պարծենայի մարզիկներու ցուցաբերած խաղով: Այս խօսակցութիւնները տեղի չէին ունենար միայն երկուշաբթի օրը, այլ՝ ամբողջ շաբթուան ընթացքին: Եկեղեցւոյ մէջ կային մարդիկ, որոնք անվճար տոմսեր ունէին, եւ ես մեծ պատրաստակամութեամբ կ'ընդունէի այդ խաղերուն երթալու բոլոր հրաւերները:

Եկէ՛ք անցնինք յաջորդ խաղաշրջանին՝ մէկ տարի յետոյ: Խաղերը սկսելէն կարճ ժամանակ առաջ ես աղօթք մը ըրի, որ, իմ կարծիքով, շատ պարզ եւ անկարելի էր: Չէի պատկերացներ, որ այն պիտի փոխէր կեանքս: Իմ աղօթքը այսպիսին էր. «Տէ՛ր, կը խնդրեմ, մաքրէ՛ իմ սիրտը: Ես կ'ուզեմ ըլլալ սուրբ եւ առանձնացուած Քեզի համար. Այնպէս որ, եթէ իմ սրտին մէջ կայ այնպիսի բան, ինչ որ հաճելի չէ Քեզի, բացայայտէ՛ եւ հեռացո՛ւր»: Ես չէի պատկերացներ, թէ ինչ խորութիւն ունէր այս աղօթքը, եւ թէ ինչ այն պիտի բացայայտէր իմ մէջ:

Այդ տարուան խաղաշրջանը աւարտին կը մօտենար. եզրափակիչ խաղերուն շատ քիչ ժամանակ մնացած էր: Ես կը դիտէի որոշիչ խաղերէն մէկը՝ Քուպոյնները ընդդէմ Ֆիլատելֆիայի Արծիւներուն: Յաղթողը պիտի մասնակցէր եզրափակիչ խաղերուն, իսկ պարտուողը դուրս պիտի մնար: Ես քարացած էի հեռատեսիլին առջեւ: Նոյնիսկ չէի նստած բազմոցին վրայ, այլ կեցած էի: Խաղը շատ լարուած էր՝ նստելու համար: Վերջին խաղակէսն էր, եւ խաղի աւարտին ընդամէնը ութ վայրկեան մնացած էր: Քուպոյնները կը պարտուէին չորս միաւորով, երբ խումբը առաջ շարժեցաւ անոնց հանրայայտ յարձակողին առաջնորդութեամբ: Ես առջեւ ետեւ կը քալէի յարձակումներու ժամանակ եւ զայրոյթէն կը պոռայի, երբ խաղի ընթացքը վատանար, իսկ ի սրտէ կ'ուրախանայի, երբ լաւ ընթացք կ'ունենար: Խաղի անորոշ աւարտը տեսակ մը աշխուժութիւն կ'առաջացնէր:

Յանկարծ, առանց որեւէ նախազգուշացման, Աստուծոյ Հոգին աղօթքի դրոշմ գիւ: Անոր անսպասելի ներքին մղումը լիովին համակեց գիւ. «Աղօթէ՛, աղօթէ՛, աղօթէ՛»: Ատիկա բեռ էր՝ ուժգին եւ ծանր զգացում սրտիս խորքը: Ես գիտէի, որ այդպիսի մղում կ'առաջանայ, երբ Աստուծոյ Հոգին կը ցանկայ, որ առանձնանամ եւ աղօթեմ:

Լիզան հեռու էր այդ սենեակէն. այնպէս որ, ես բարձրաձայն ըսի. «Տէ՛ր, խաղը վերջանալուն ընդամէնը ութը վայրկեան մնացած է: Ես կ'աղօթեմ, երբ այն վերջանայ»: Չնայած ատոր՝ մղումը չդադրեցաւ եւ չթուլցաւ:

Քանի մը վայրկեան անցաւ: Տակաւին ցանկալով թեթեւութիւն ստանալ՝ ես բացականչեցի. «Տէ՛ր, ես հինգ ժամ պիտի աղօթեմ, երբ խաղը վերջանայ: Ընդամէնը վեց վայրկեան մնացած է»:

Գնդակը Քոուպոյներուն քովն էր: Ես գիտէի, որ անոնք պիտի յաղթէին այդ կարեւոր խաղը: Բայց եւ այնպէս, աղօթքի մղումը չէր թոյլնար. այն աւելի կը զօրանար: Ես յուսահատութեան զգացում ունեցայ: Չէի ուզեր խաղը ձգել: Եւ բարձրաձայն ըսի. «Տէ՛ր, ես պիտի աղօթեմ մինչեւ օրուան վերջը, նոյնիսկ՝ ամբողջ գիշեր, եթէ կ'ուզես»:

Ես մինչեւ վերջ դիտեցի խաղը: Քոուպոյները յաղթեցին: Դահլիճը պարզապէս կը պայթէր խանդավառութենէն: Ես միացայ մարդոց ուրախութեան: Այնուամենայնիւ, խոստում տուած էի Աստուծոյ: Ես անմիջապէս անջատեցի հեռատեսիլը եւ բարձրացայ երկրորդ յարկ՝ իմ աշխատասենեակը, փակեցի դուռը եւ ծունկի եկայ գորգին վրայ՝ աղօթելու համար: Բայց աղօթքի մղումը այլեւս չկար: Այլեւս աղօթքի բեռ չկար: Նոյնիսկ թեթեւ զգացում չկար. ես ոչինչ կը զգայի:

Փորձեցի բորբոքել այդ զգացումը: Ես փորձեցի աղօթել, բայց իմ խօսքերը չոր ու միապաղաղ էին: Շատ ժամանակ չպահանջուեցաւ, մինչեւ որ հասկցայ, թէ ինչ էր պատահածը: Ես գերադասեցի Քոուպոյներու խաղը Աստուծոյ խնդրանքէն: Ես խոնարհեցայ՝ դպցնելով երեսս գորգին եւ հառաչեցի. «Աստուած, եթէ ինչ որ մէկը հարցնէր ինձի. «Ո՞վ աւելի կարեւոր է քու կեանքին մէջ, Աստուած, թէ՞ Տալլասի Քոուպոյները», ես անվարան պիտի պատասխանէի. «Անշուշտ Աստուած»: Բայց ճիշդ նոր ես ցոյց տուի, թէ ո՞վ աւելի կարեւոր է: Դուն ունէիր իմ կարիքը, իսկ ես գերադասեցի խաղը, ոչ թէ Քեզ: Կը խնդրեմ, ներէ՛ ինձի»:

Ես անմիջապէս լսեցի սրտիս մէջը. «Որդի՛ս, Ես չեմ ցանկար հինգ ժամանոց աղօթքի զոհաբերութիւն: Ես կը ցանկամ հնազանդութիւն»:

Բաժնուած հաւատարմութիւն

Ես համակուած էի տրտմութեամբ, քանի որ անհաւատարիմ գտնուեցայ Անոր հանդէպ, Որ նուիրաբերած էր Իր կեանքն ինձի համար: Ես կը փափաքէի ինչ որ բան ստանալ այս աշխարհէն՝ այն, ինչ որ կը սնուցէ կեանքի այլ աղբիւր չունեցող մարդոց սրտերը, անձերը եւ մտքերը: Իմ սէրը ակնյայտօրէն ուղղուած էր այդ խումբին:

Այս ամէնուն լոյսին տակ կրկին ուշադրութեամբ կարդացէ՛ք Յակոբոսին խօսքերը.

«Շնացողներ: Չէ՞ք հասկնար, որ ընկերութիւնը այս աշխարհին հետ՝ ձեզի Աստուծոյ թշնամին կը դարձնէ: Կը կրկնեն՝ եթէ կ'ուզէք այս աշխարհին ընկերը ըլլալ, դուք պիտի դառնաք Աստուծոյ թշնամին: Ձեր կարծիքով, ի՞նչ նկատի ունի Աստուծոյ Խօսքը՝ ըսելով, որ այն Հոգին, որ Աստուած դրած է մեր մէջ, լեցուած է նախանձով [խանդով]: Մօտեցէ՛ք Աստուծոյ, եւ Աստուած պիտի մօտենայ ձեզի: Լուացէ՛ք ձեր ձեռքերը, դո՛ւք՝ մեղաւորներ. մաքրեցէ՛ք ձեր սրտերը, որովհետեւ ձեր հաւատարմութիւնը բաժնուած է Աստուծոյ եւ այս աշխարհին միջեւ» (Յակոբոս 4.4, 5, 8, NLT):

Իմ հաւատարմութիւնը բաժնուած էր: Հաւատարմութիւնը կ'երեւի մեր որոշումներէն, ոչ թէ պարզապէս խօսքերէն: Շատերը կը պնդեն, որ հաւատարիմ են, բայց անոնց գործերը հակառակը ցոյց կու տան: Թերեւս ճիշդ այս պատճառով Աստուծոյ Խօսքը կ'ըսէ. «Շատերը պիտի ըսեն, որ իրենք հաւատարիմ ընկերներ են, բայց ո՞վ կրնայ գտնել ճշմարտապէս վստահելի մարդը» (Առակաց 20.6, NLT):

Մինչեւ այդ պահը ես համոզուածութեամբ պիտի պնդէի. «Յիսուսը ամենակարեւորն է իմ կեանքին մէջ՝ աւելի, քան որեւէ բան կամ ոեւէ անձնաւորութիւն», այնինչ՝ իմ ընտրութիւնը ապացուցեց հակառակը: Գործերը՝ հաղորդակցման աւելի բարձր մակարդակ են, քան խօսքերը:

Յովհաննէս առաքեալը կը գրէ Առակաց 20.6-ի համարժէքը Նոր կտակարանին մէջ. «Եկէ՛ք սիրենք ոչ միայն ըսելով, որ կը սիրենք... եկէ՛ք ցոյց տանք ճշմարտութիւնը մեր գործերով» (Ա. Յովհաննէս 3.18, NLT): Իրականութեան մէջ, Տալլասի Քուպոյները գրաւած էին առաջին սիրոյ տեղը իմ սրտին մէջ: Ես բորբոքած էի իմ մէջ բնակող Հոգիի նախանձաւորութիւնը (կամ՝ խանդը): Ես կարդացած էի Աստուածաշունչին մէջ, որ պէտք չէր այդպէս վարուի, բայց կարծես չէի նկատած այդ զգուշացումը: Աստուած Իր ողորմութեամբ ցոյց տուաւ իմ սխալը:

Յովհաննէսը նոյնպէս կը գրէ.

«Սիրելի՛ մանուկներ, հեռո՛ւ մնացէ՛ք որեւէ բանէ, ինչ որ կրնայ զբաղեցնել Աստուծոյ տեղը ձեր սրտերուն մէջ» (Ա. Յովհաննէս 5.21, NLT):

Այժմ մեզ կը զգուշացնէ ոչ թէ Յակոբոսը, այլ սիրելի Յովհաննէսը: Արժէ նշել, որ այս խօսքը վերջինն է անոր երկար նամակին մէջ: Այդ օրերուն առաքեալները չէին կրնար զանգահարել, հաղորդագրութիւններ գրել, երկտողեր տեղադրել «Ֆէյսպուք»-ին մէջ, կամ մէկ օրուան մէջ նամակներ ուղարկել իրենց սիրելիներուն: Նամակը հագուա-

գիւտ բան մըն էր, եւ այն տեղ մը հասցնելու համար մեծ ջանք կը պահանջուէր: Այնպէս որ, եթէ դուք Սուրբ Հոգիէն ոգեշնչուած նամակ գրէիք, Ան, ամենայն հաւանականութեամբ, ամենակարեւոր տեղեկութիւնը վերջաւորութեան պիտի ձգէր:

Միանալով Յակոբոսին եւ Յովհաննէսին՝ Պօղոսը նոյնպէս կը զգուշացնէ, որ թոյլ չտանք այս աշխարհին զբաղեցնելու Յիսուսին տեղը մեր սրտին մէջ: Ան կ'ըսէ.

«Դուք չէք կրնար ապրիլ երկու ձեռով ալ՝ Տիրոջ հետ մէկ օր խնճոյքի ըլլալ եւ միւս օրը դեւերու հետ թափառիլ: Աւելին՝ Տէրը չի հանդուրժեր ատիկա: Ան կը ցանկայ մեզ՝ ամէնը կամ ոչինչ: Կը կարծէք՝ դուք կրնա՞ք ազատիլ աւելի քիչով: Մէկ կողմէն՝ դուք կրնաք ըսել. «Ամէն բան թոյլատրելի է: Աստուծոյ անսահման առատութեան եւ շնորհքի շնորհիւ, մենք ստիպուած չենք մանրակրկիտ ձեռով դիտարկել ու ծանրութեթեւ ընել ամէն մէկ գործողութիւն՝ տեսնելու համար, թէ արդեօ՞ք այն ընդունուած եւ պատշաճ կը համարուի»: Բայց իմաստը՝ պարզապէս հազիւ ապրիլը չէ: Մենք կ'ուզենք լաւ ապրիլ...» (Ա. Կորնթացիս 10.21-24, MSG):

Ես երկիւղած եմ այս խօսքերէն: Ատոնք այնքա՛ն համապատասխան են մեր օրերուն: Ինծի նոյնպէս հաճելի է կարդալ Պօղոսին խօսքերը «Նիւ Լիվինկ» թարգմանութեամբ. «Արդեօ՞ք մենք կը համարձակինք բորբոքել Տիրոջ նախանձաւորութիւնը (կամ՝ խանդը): Կը կարծէք՝ մենք Անորմէ՞ գօրաւոր ենք: Դուք կ'ըսէք. «Ինծի համար ամէն ինչ կարելի է», բայց ամէն ինչ չէ, որ լաւ է ձեզի համար» (խօսք 22,23, NLT): Կրկին, մենք կը տեսնենք, որ Աստուած նախանձաւոր է մեզի համար:

Այլեւս ոչ մէկ ամերիկեան Ֆուտպո՛լ

Կրնայ հարցում մը յառաջանալ. «Մի՞թէ ես պէտք չէ մարզական միջոցառումներ դիտեմ: Մի՞թէ պէտք չէ մասնակցութիւն ունենամ որեւէ բանի մէջ, ինչ որ կը գործածէ այս աշխարհը: Այդ պարագային, ինչպէ՞ս կրնամ ապրիլ եւ գործել այս աշխարհին մէջ:

Առիթ տուէք պատասխանը այսպէս ձեւակերպելու: Արդեօ՞ք այն, որ ես ամուսնացած տղամարդ եմ, կը նշանակէ, որ պէտք չէ հաղորդակցիմ ուրիշ կնոջ հետ՝ բացի իմ կնոջմէն: Պատասխանն է՝ ոչ: Ես մշտապէս կը հաղորդակցիմ կիներու հետ: Իմ թռիչքներու ժամանակ ես կը նստիմ կիներու քով: Ճիշդ հիմա ես այս տողերը կը տպեմ օդանաւի մէջ, եւ քովս կին մը նստած է: Ես կ'աշխատիմ կիներու հետ, կը հաղորդակցիմ անոնց հետ շատ ուրիշ վայրերու եւ տարբեր հանգամանքներու մէջ:

Ըլլալով ամուսնացած տղամարդ՝ ես կը փորձեմ սիրալիք ըլլալ կիներու հետ, յատկապէս այն պատճառով, որ այսօր անոնցմէ շատերը անարդար վերաբերմունք կը ստանան տղամարդոցմէ: Շատ յաճախ կիներուն վերածած են միսի կտորի՝ տղամարդու կիրքերը բաւարարելու համար, եւ չեն դիտարկած որպէս տղամարդոց հաւասար: Ասիկա բարկութիւն կ'առաջացնէ իմ մէջ, որովհետեւ ես գիտեմ՝ Աստուած Իր պատկերով ստեղծած է ե՛ւ տղամարդիկ, ե՛ւ կիներ: Ան տուած է Քրիստոսի միտքը ե՛ւ տղամարդոց, ե՛ւ կանանց, որոնք ուխտի մէջ են Իրեն հետ: Ան չունի կողմնակալ վերաբերմունք եւ չի գերադասեր տղամարդիկը՝ կիներէն: Ուրեմն, ինչո՞ւ մենք պէտք է այսպիսի կողմնակալութիւն ցուցաբերենք, նոյնիսկ՝ եկեղեցիին մէջ:

Այնուամենայնիւ, ես կը զգուշանամ, իմ սիրտն ու զգացումները ռեւէ կնոջ՝ սիրային կամ ոչ պատշաճ կերպով բանալէ: Ես ուխտ ունիմ Լիզային հետ: Երբ ամուսնացայ անոր հետ, ես հրաժեշտ տուի բոլոր կիներուն այս մոլորակին վրայ՝ նուիրելով իմ սէրը միայն Լիզային: Այնպէս որ, պէտք է կանանց հետ հաղորդակցելու պատշաճ ձեւ ունենամ:

Եկէ՛ք զուգահեռներ անցնենք մեր օրինակին եւ այս աշխարհին հետ ընկերութիւն ընելու միջեւ: Տակաւին ինծի համար հաճելի է ամերիկեան ֆուտպոլ դիտելը, թէեւ հազիւ կը դիմանամ մինչեւ խաղի աւարտին: Իմ մէջ չկայ այլեւ այն զօրաւոր ձգտումը, որ ունէի, երբ իմ սիրտը ուղղուած էր Քրուպոյներուն: Այժմ ես կը ձգտիմ կատարել Տիրոջ ցանկութիւնները՝ սէր եւ հոգատարութիւն ցուցաբերել իմ ընտանիքին, աշխատիլ՝ մարդոց օգնելու համար, աշխատիլ մեր ծառայութեան համար եւ հետեւիլ, որ իմ ուշադրութիւնն ու զգացումները համակուած ըլլան Աստուծոյ իմաստութեամբ եւ խորհուրդով:

Արդեօ՞ք եղած են ուրիշ բաներ, որոնք սխալ դիրք գրաւած են իմ կեանքին մէջ: Ցաւոք՝ այո՛: Սուրբ Հոգին կ'օգնէր ինծի՝ ճանչնալու այդ բաները, քանի որ ես խնդրած էի Անորմէ: Կոլֆը, սնունդը, ֆիլմերը եւ նոյնիսկ ծառայողական գործունէութիւնը՝ ընդամէնը քանի մը բան են այն ամէնէն, ինչին վրայ որ ես պէտք էր աշխատէի, եւ նոյնիսկ ինչէն պէտք էր հրաժարէի որոշ ժամանակով, որպէսզի սրտիս դիրքը կրկին շտկուէր:

Երբ կոլֆի հանդէպ իմ սէրը սխալ դիրք գրաւած էր մէջս, Սուրբ Հոգին դրոյց զիս՝ իմ կոլֆի մականներու ամբողջ հաւաքածուն նուիրել հովիւի մը: Ինչո՞ւ Սուրբ Հոգին ըրաւ այդ մէկ: Պարզապէս՝ կոլֆը ճիշդ տեղն էր այդ հովիւին կեանքին մէջ, բայց սխալ տեղ էր իմ կեանքին մէջ:

Մէկ ու կէս տարի կոլֆ չխաղալէն յետոյ Տէրը մասնագիտական կոլֆ խաղացողի մը սրտին դրաւ՝ նուիրել ինծի իր կոլֆի պարագաներու հաւաքածուն, որ հազարաւոր տղարներ արժէր: Այդ անձնաւորութիւնը, որ աղօթքի մարդ էր, ըսաւ ինծի. «Ճո՛ւն, ես գիտեմ, որ պէտք է ընեմ ասիկա»:

Քանի մը ամիս յետոյ հովիւ մը, որ օգնեց աշխարհի տարածքին ներկայիս ամենամեծ եկեղեցին (որ կը գտնուի Հարաւային Քորեայի մէջ) սկսիլ, ըսաւ ինծի, որ Աստուած իր սրտին մէջ դրած է, որ ինծի նուիրէ մականներու հաւաքածուն: Ես իսկապէս խանգարուեցայ: Եւ հարցուցի Տիրոջը. «Ի՞նչ ընեն այս մականները»: «Կոլֆ խաղա՛», - լսեցի իմ սրտին մէջ: «Բայց մէկ ու կէս տարի առաջ Դուն պատուիրեցիր, որ նուիրեն իմ բոլոր մականները»: Ես լսեցի, թէ ինչպէս Աստուած ըսաւ. «Կոլֆը արդէն սխալ տեղը չէ քեզի համար: Այն դարձած է հանգիստի եւ հաճելի ժամանցի միջոց»:

Անկէ յետոյ ես վերադարձայ կոլֆ խաղալուն: Աստուած հրաշալի կերպով օգտագործեց այս խաղը՝ տալով ինծի հանգիստ եւ թարմութիւն՝ այն դարձնելով հաղորդակցման հարթակ իմ որդիներուն, այլ եկեղեցական առաջնորդներու եւ մեր ծառայութեան գործընկերներուն հետ: Մեր ծառայութիւնը «Մեսէնճըրի գավաթ» կոչուող կոլֆի մրցոյթ կ'անցընէ, եւ ես կրնամ ըսել, որ այս գիրքը գրելուն նախորդող երեք տարիներու ընթացքին «Մեսէնճըր Ինթերնեշնլ»-ն աւելի քան երեք միլիոն տոլարի հանգանակութիւններ ստացած է միսիայի եւ աւետարանչական նախագիծերու համար իմ ընկերներուն եւ գործընկերներուն հետ կոլֆ խաղալու շնորհիւ: Եթէ ես մինչեւ կեանքիս վերջ բոլորովին հրաժարէի կոլֆէն, այսպիսի բան տեղի պիտի չունենար:

Մենք երբեք պէտք չէ վախճանք, երբ Տէրը հնազանդութիւն կը պահանջէ: Իրականութեան մէջ, հնազանդիլը դիրին է, երբ Անոր պահանջքը կը համապատասխանէ մեր ձգտումներուն: Այլ պարագաներուն հնազանդիլը դժուար է:

Աստուածային տրտմութիւն

Յակոբոսը պարզօրէն կը նշէ, թէ ինչ կ'առաջացնէ Սուրբ Հոգիին նախանձաւորութիւնը կամ խանդը. ընկերութիւնը այս աշխարհին հետ: Ես խօսեցայ այս ընկերութեան մէկ կողմի մասին, բայց գոյութիւն ունին աւելի շատ կողմեր: Յաջորդ գլուխին մէջ պիտի խօսիմ աշխարհի հետ ընկերութեան հիմնական պատճառի մասին, բայց այս պահուն կարելոր է նշել, թէ ինչ պէտք է ընենք, երբ սխալ ձգտումներ ունինք: Դիտարկենք Յակոբոսի խորհուրդը այն հաւատացեալներուն, որոնք յայտնուած են անպատշաճ յարաբերութիւններու մէջ այս աշխարհին հետ.

«Լուացէ՛ք ձեր ձեռքերը, դո՛ւք՝ մեղաւորնե՛ր. մաքրեցէ՛ք ձեր սրտերը, որովհետեւ ձեր հաւատարմութիւնը բաժնուած է Աստուծոյ եւ այս աշխարհին միջեւ: Թող որ ձեր աչքերուն ար-

ցունքներ ըլլան այն բաներուն համար, ինչ որ դուք ըրած էք: Թող տրտմութիւն եւ խորունկ վիշտ ըլլայ» (Յակոբոս 4.8,9, NLT):

Հազիւ որ Աստուած յայտնեց, թէ ինչ ըրած էի (ես ընտրած էի Քրուպոյները՝ աղօթքի փոխարէն), եւ տրտմութիւն եւ խորունկ վիշտ ապրեցայ: Հասկցայ, որ ցաւ պատճառած էի Անոր, Որ զոհած էր Իր կեանքը ինձի համար՝ անտեղի «փոխյարաբերութեան» միջոցով:

Վերջերս ես կը խօսէի տղամարդու մը հետ, որ շնութիւն գործած էր իր կնոջ հանդէպ, բայց հետագային վերականգնուած էր: Ան կը պատմէր ինձի, որ այդ մեղքի մէջ եղած էր վեց ամիս շարունակ, եւ պատմելու ընթացքին անդադար կու լար: Ան զօրաւոր մարդ է. ուսանողական տարիներուն ամերիկեան ֆուտպոլի խումբի անդամ եղած է, իսկ ներկայիս յաջողակ գործարար է. այդ մարդը հաստատ լացկան չէ: Ես զարմացայ՝ տեսնելով անոր «տղամարդկային լացը»: Ան չէր լար, քանի որ կը կարծէր, որ Տէրը կամ իր կինը պիտի չնետէին զինք: Այդ պահուն անոր ամուսնութիւնը աւելի ամուր էր, քան երբեք: Ան կու լար այն պատճառով, որ այդպէս վարուած էր այն անձնաւորութեան հանդէպ, որուն խորապէս կը սիրէր: Ան կը տրտմէր, որ մեծ ցաւ պատճառած էր անոր: Պարզապէս հրաշալի էր տեսնել այդ մարդուն խորունկ զգացումները եւ հոգատարութիւնը իր կնոջ հանդէպ:

Անոր վարքը ցոյց տուաւ աստուածաշնչեան ճշմարտութիւն մը. նոյն ձեւով պէտք է վարուի այն հաւատացեալը, որ անպատշաճ յարաբերութիւններ ունեցած է այս աշխարհին հետ: Ինչպէս կը գրէ Յակոբոսը՝ «Թող տրտմութիւն եւ խորունկ վիշտ ըլլայ»:

Այս մարդը չէր մեղադրեր իր կինը եւ իսկապէս կը ցաւէր իր արարքին համար: Անոր անկեղծ խոնարհութիւնը շատ տպաւորեց զիս: Ես խօսած եմ այլ մարդոց հետ, որոնք շնութիւն գործած էին իրենց կողակիցներուն հանդէպ, բայց անոնք ուրիշ ձեւով կը նկարագրէին իրավիճակը: Անոնց «խոստովանութեան» կամ «վկայութեան» ընթացքին անոնք ի վերջոյ կ'ըսէին, որ գործած էին այդ մեղքը մասամբ իրենց կողակիցներու սիրոյ պակասի կամ այլ թերացումներու պատճառով:

Սուրբ Գիրքին մէջ գրուած է «*Աստուծոյ ուզած ձեւով տրտմութեան*» եւ «*աշխարհի տրտմութեան*» մասին (տե՛ս Բ. Կորնթ. 7.10): Դաւիթ թագաւորը Աստուծոյ ուզած կերպով տրտմող մարդու օրինակ էր: Ան խորապէս վշտացաւ, քանի որ շնութիւն եւ սպանութիւն գործելով՝ ցաւ պատճառած էր Անոր, Չոր կը սիրէր: Ան կ'աղաղակէր. «Քո՛ւ դէմ, եւ միմիայն Քո՛ւ դէմ մեղանչած եմ. ես գործած եմ այն, ինչ որ Դու չարիք կը համարես» (Սաղմոս 51.4, NLT): Ան չորս օր շարունակ կու լար եւ կը սգար՝ երեսնիվայր ծունկի եկած, եւ անոր մտքէն նոյնիսկ չէր անցած,

թէ ինչ պիտի մտածէին ծառաները իր սգալուն մասին: Ան չէր փորձեր պահպանել իր արժանապատուութիւնը. անոր սիրտը կը փշրուէր վիշտէն: Անկէ յետոյ ան վերականգնուեցաւ:

Սաւուղ թագաւորը ուրիշ էր: Ան նոյնպէս ցաւցուց Աստուծոյ սիրտը՝ ընտրելով այն, ինչ որ կ'ընտրէ այս աշխարհը: Ան սկսաւ հաճեցնել իր անձը եւ հպարտացաւ, Աստուծոյ խօսքին հնազանդելու փոխարէն: Ան նոյնպէս կը ցաւէր իր ըրածին համար, բայց տրտմած էր ուրիշ պատճառներով: Ան հրապարակաւ յանդիմանութիւն ստացած էր եւ անյարմար կացութեան մէջ յայտնուած էր իր հպատակներու առջեւ՝ այն մարդոց, որոնք պէտք էր պատուէին զինք: Բացի այդ՝ անոր սխալ որոշումները կրնային վնաս հասցնել անոր իշխանական դիրքին: Սաւուղը տրտմած էր այս աշխարհի տրտմութեամբ: Ան ի սրտէ չխոստուանեցաւ, Դաւիթին պէս կամ այն գործարարին, որուն մասին ես պատմեցի: Սաւուղը խաբուած եւ ապականուած էր իր մտքին մէջ: Անոր միտքը փոխուեցաւ կարճ ժամանակով, բայց ի վերջոյ երեւեցան անոր ճշմարիտ դրդապատճառները՝ հպարտութիւնը եւ իր անձը հաճեցնելու ձգտումը: Ան այդպէս ալ մտքի իրական փոփոխութիւն չապրեցաւ:

Պօղոս առաքեալը կը յայտարարէ. «Այն տեսակի տրտմութիւնը, որ Աստուած կ'ուզէ, որ մենք ապրինք, կը հեռացնէ մեզ մեղքէն» (Բ. Կորնթացիս 7.10, NLT): Այս տրտմութիւնը տրուած է Աստուծմէ. այն արմատացած է Անոր հանդէպ մեր ունեցած սիրոյ մէջ: Եթէ մենք կը սիրենք այն, ինչ որ Ան կրնայ ընել մեզի համար, աւելի քան Զինք սիրելը, մեր գործերը ոչինչով կը տարբերի Սաւուղի գործերէն:

Յաջորդ երկու գլուխներուն մէջ պիտի տեսնենք, թէ ինչպէս ընկերութիւնը այս աշխարհին հետ կ'ազդէ մեր եւ Աստուծոյ յարաբերութիւններուն վրայ: Մենք ցոյց պիտի տանք, թէ որքան սուղի նայած է մեր վրայ Աստուծոյն բարիով փոխարինելը՝ թէ՛ անձնական, թէ՛ համաեկեղեցական մակարդակի վրայ: Բայց մինչեւ այս էջը թերթելը արժէ ժամանակ յատկացնել աղօթքի համար եւ խնդրել Աստուծմէ՝ օգնել ձեզի, որ տեսնէք եթէ որեւէ անպատշաճ յարաբերութիւն ունիք այս աշխարհին հետ:

Հայր, Յիսուսի անունով, կը խնդրեմ, որ քննես իմ ներսը եւ ճանչնաս զիս, ստուգես իմ ճանապարհները եւ դրդապատճառները: Եթէ կայ որեւէ բան իմ կեանքին մէջ, որ կը ստանայ այն սէրը, որ պէտք է միայն Քուկդ ըլլայ, կը խնդրեմ, բացայայտէ՛ ատիկա Քու Հոգիով: Ոչինչ չեմ պահեր Քեզմէ: Թող որ ես ճշմարտապէս Քեզ սիրող մարդ դառնամ եւ մնամ այդպիսին: Ըլլամ այնպիսի մարդ, որ ուրացած է իր անձը՝ Տէր Յիսուս Քրիստոսին հետեւելու եւ ծառայելու համար: Ես կը խնդրեմ ասիկա Յիսուսի անունով: Ամէն:

Շնորհքը մեզի տուաւ Անոր բնութիւնը,
երբ փրկուեցանք, բայց մեզի անհրաժեշտ
է աւելի ու աւելի շնորհք, որ **կը գորացնէ**
մեր բնութիւնը, որպէսզի կարենանք
ապրիլ՝ ինչպէս Յիսուսը:

- Ճոն Պիվիր, «Բարի՞ թե՞ Աստուած»



Մեզի անհրաժեշտ է Անոր
ներկայութիւնը՝
Ֆոխուելու համար:

– Ճոն Պիփր, «Բարի՞, թէ՞ Աստուած»







Յիսուսի
պատուիրանները պահելու
օգտակարությունը...





...Անոր
ներկայութեան խոստումն է:
- ձոն Պիվիր, «Բարի», թէ՛ Աստուած»



Մենք պէտք է վերադառնանք
Ֆիսուսի իշխանութեան,
որպէսզի առողջ
հիմք ունենանք:

– Ճոն Պիվիր, «Բարի», թէ՛ Աստուած»



Ունեցէ՛ք երկարատեւ կեանք,
ձգտեցէ՛ք սրբութեան
եւ ձեր նախաձեռնութիւններուն մէջ
հասէ՛ք յաջողութիւններու:

Այսպէս վարուելով՝ դուք դրական
փոփոխութիւններու պատճառ
պիտի դառնաք տարբեր
մարդոց կեանքերուն մէջ:

- Ճոն Պիվիր, «Բարի՞, թե՞ Աստուած»



Դիտեցէ՛ք տեսանիւթեր եւ ներբեռնեցէ՛ք գիրքեր՝
բազմաթիւ լեզուներով, հետեւեալ կայքէն.



CloudLibrary.org



ԱՆՏԵՍՈՒԿԾ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

«...Աշխատեցէ՛ք սուրբ կեանքով
ապրելու համար, որովհետեւ անոնք,
որոնք սուրբ չեն, պիտի չտեսնեն Տիրոջը»:
— Եբրայեցիս 12.14, NLT

Որքա՛ն քիչ բան գիտեն անոնք, որոնք
կը կարծեն, թէ սրբութիւնը ծանծաղի է:
Երբ մարդը կը վերապրի իրական սրբութիւնը...
այն անդիմադրելի կը դառնայ:
— Բ. Ս. Լուիս

Սրբութիւն: Յիշատակեցէ՛ք այս բառը եւ պիտի տեսնէք, թէ ինչպէս մարդիկ կը խուսափին անկէ եւ արագօրէն կը փոխեն խօսակցութեան թեման: Շատերուն համար այն բացասական երանգ ունի, քանի որ այն «նորածեւ» չէ եւ կրնայ զսպել կամ կաշկանդել իրենց կեանքը: Շատ յաճախ սրբութիւնը կը համարեն փրկութիւնը գործերով վաստակելու հոմանիշ, կամ՝ օրինապաշտութեան կողմերէն մէկը: Խօսելով սրբութեան մասին՝ դուք յաճախ պիտի լսէք հետեւեալը. «Ես ազատ եմ եւ կ'ապրիմ Աստուծոյ շնորհքով: Մի՛ փորձէք օրէնքի տակ դնել զիս»:

Այնուամենայնիւ, Նոր կտակարանին մէջ սրբութիւնը նոյնիսկ քիչ մըն ալ կապ չունի օրէնքի գործերուն կամ օրինապաշտութեան հետ: Իրականութեան մէջ, այն կեանքի հրաշալի ոճ է, որ ցանկալի է շատ առումներով: Մեր օրերուն, անկասկած, այն հիմնականօրէն սխալ կը հասկցուի:

Ինչո՞ւ մենք այս մասին չենք խօսիր

Ո՞րն է պատճառը, որ Աստուծոյ գաւակը կը խուսափի սրբութեան մասին խօսելէն, այնինչ մենք յստակ պատուէր ունինք. «Վտտեւեցէ՛ք...

սրբութեան, որ առանց անոր ոչ ոք Տէրը կը տեսնէ» (Եբրայեցիս 12.14): Դուք հասկցա՞ք, թէ որքան միանշանակ է այս խօսքը. սրբութիւն չունենալու անմիջական հետեւանքը՝ Տիրոջը չտեսնելն է: Ես պէտք է մեծ ուշադրութիւն դարձնեմ այս խօսքին. իսկ դո՞ւք:

Օրինակ մը բերենք Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահի վերաբերեալ: Քանի որ ես այս երկրի քաղաքացին եմ, իսկ ան՝ մեր երկրի առաջնորդը, ես «փոխարաբերութիւններ» ունիմ անոր հետ: Ես անոր իշխանութեան տակ եմ եւ կը կրեմ անոր որոշումներու ազդեցութիւնը՝ մեր երկրի բոլոր 320 միլիոն քաղաքացիներուն պէս: Բայց թէեւ ես այսպիսի յարաբերութիւններ ունիմ նախագահին հետ, մինչեւ օրս ես անոր հետ անձնական հանդիպման արտօնութիւն չեմ ստացած: Ես Ամերիկայի քաղաքացի եղած եմ ամբողջ կեանքիս ընթացքին եւ արդէն յիսունը անց եմ, բայց մինչեւ օրս տակաւին չեմ հանդիպած մեր նախագահներէն ոեւէ մէկուն:

Այնուամենայնիւ, կան ուրիշ ամերիկացիներ, որոնք պարբերաբար կը հանդիպին երկրի նախագահին: Անոնք այդ մարդուն ընկերներն են կամ կ'աշխատին անմիջապէս անոր հետ: Ամէն պարագային, այն մարդուն, որ Սպիտակ տունին մէջ կ'ապրի, անոնք շատ աւելի լաւ գիտեն, քան ես:

Նմանապէս, կան միլիոնաւոր քրիստոնեաներ, որոնք կը գտնուին Յիսուս Քրիստոսի իշխանութեան տակ: Ան այն Թագաւորն է, Որուն անոնք կը դաւանին: Ան կը պաշտպանէ եւ կը սիրէ զանոնք, կը մատակարարէ զանոնք, նաեւ կը պատասխանէ անոնց խնդրանքներուն: Այնուամենայնիւ, հարց կ'առաջանայ. արդե՞օք անոնք կը տեսնեն կամ կը հանդիպին Անոր: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ արդե՞օք անոնք կը վերապրին Անոր ներկայութիւնը: Եբրայեցիներու նամակին մէջ գրուած է. «Մենք կրնանք տեսնել Յիսուսը» (2.9, AMP): Պօղոսը աւելի մանրամասնօրէն կը ներկայացնէ այս արտօնութիւնը.

«...Բոլորս, որ հեռացուցած ենք այդ քողը, կրնանք տեսնել եւ արտացոլել Տիրոջ փառքը» (Բ. Կորնթացիս 3.18, NLT):

«Տիրոջ փառքը» արտայայտութիւնը յաճախ ճիշդ չի հասկցուիր, եւ ատոր համար այսօր այն շատ չի գործածուիր: Մենք կրնանք փոխարինել այն «Տիրոջ մեծութիւնը» արտայայտութեամբ: Մեր այսօրուան լեզուով, Պօղոսը կ'ըսէ. «Բոլորս, որ հեռացուցած ենք այդ քողը, կրնանք տեսնել Տիրոջ մեծութիւնը»:

Յիսուսը նոյնպէս կը խօսի անոնց մասին, որոնք պիտի տեսնեն կամ պիտի վերապրին Իր ներկայութիւնը: Վերջին ընթրիքին Ան ըսաւ հետեւեալը. «Ընդամէնը քիչ մը ժամանակ յետոյ աշխարհը այլեւս չի տես-

ներ Ձիս, բայց դուք պիտի տեսնէք Ձիս, որովհետեւ ես կենդանի եմ, եւ դուք շուտով պիտի կենդանանաք» (Յովհաննէս 14.19, MSG):

Այս հատուածին մէջ կայ երկու ականյայտ փաստեր: Առաջինը՝ քրիստոնէութեան իրական կողմերէն մէկը՝ Ձինք տեսնելն է: Երկրորդը՝ մենք կրնանք տեսնել Ձինք այնպէս, ինչպէս այս աշխարհը չի կրնար տեսնել:

Ինչո՞ւ Աստուծոյ տեսնելը կարելոր է: Նախ եւ առաջ, ինչպէս եւ նախագահի պարագային, եթէ մենք չտեսնենք, չենք կրնար ճանչնալ Ձինք, այլ միայն կրնանք գիտնալ Անոր մասին:

Կայ եւս մէկ պատճառ, որ հաւասարապէս կարելոր է: Առանց Անոր տեսնելու՝ մենք չենք փոխուիր եւ չենք դառնար Անոր պէս: Նոյն խօսքին մէջ, որ մէջբերեցինք վերը, Պօղոսը կը նշէ, որ Տէրը տեսնողները «կը վերափոխուին դէպի նոյն պատկերը՝ փառքի մէկ մակարդակէն միւսը» (Բ. Կորնթացիս 3.18, ESV): Վերափոխումը անչափ կարելոր է հաւատացեալի կեանքին մէջ:

Դուք երբեք հանդիպած էք այնպիսի մարդու, որ երկար ժամանակ է՝ կը դաւանի, որ ճանաչնայ Յիսուս Քրիստոսը, բայց այնպէս կ'ապրի, ըսես երբեք չէ հանդիպած Անոր: Ո՞րն է պատճառը: Այս անձնաւորութիւնը պարզապէս վերափոխման ընթացք չապրիր: Ան չի փոխուիր Յիսուս Քրիստոսի նմանութեամբ:

Պօղոսը մարգարէացաւ, որ մեր օրերը դժուար պիտի ըլլան: Հետաքրքրական է, որ ըստ անոր՝ այս ծանր ժամանակներու պատճառը չ'ըլլար հաւատքի համար հալածուիլը՝ ինչպէս իր օրերուն մէջ, այլ՝ քրիստոնէաները, որոնք պիտի դաւանին Յիսուսին, բայց չեն պահեր Անոր խօսքերը: Անոնք պիտի վարուին Աստուծոյ չճանչցող մարդոց պէս: Անոնք պիտի սիրեն իրենց անծերն ու ունեցած փողը, անհնազանդ պիտի ըլլան իրենց ծնողներուն, կոպիտօրէն պիտի վերաբերին մարդոց, պիտի հրաժարին ներել, պիտի ձգտին հռչակ ու համբաւ շահիլ, պիտի դաւաճանեն իրենց ընկերներուն, պիտի սիրեն հաճոյքը աւելի, քան Աստուած, եւ այլն: Պօղոսը պարզ ըսաւ. «Անոնք պիտի հարին մեր կրօնի արտաքին կերպարանքին, բայց պիտի մերժեն ատոր իրական զօրութիւնը» (Բ Տիմոթէոս 3.5, TEV): Այն զօրութիւնը, որ անոնք պիտի մերժեն՝ շնորհքի վերափոխող կարողութիւնը, որ ճշմարիտ քրիստոնէութեան հիմնադրոյթներէն մէկն է: «Ենփոխֆայտ» Աստուածաշունչին մէջ գրուած է. «Անոնց վարքը կը հերքէ անոնց դաւանանքին ճշմարիտ ըլլալը»:

Այս դաւանող հաւատացեալները խաբուած են, որովհետեւ անոնք «...միշտ կը սորվին, բայց բնաւ չեն կրնար ճշմարտութիւնը ճանչնալ»

(Բ. Տիմոթեոս 3.7): Ես միշտ կ'ըսեմ, որ խաբէութիւնը մեծ խնդիր մը ունի. այն կը խաբէ մարդը: Մենք կրնանք սրտանց հաւատալ, որ լաւ յարաբերութիւններ ունինք Աստուծոյ հետ, այնինչ՝ իրականութեան մէջ այդպէս չէ: Այսպիսի շատ «հաւատացեալներ» կը յաճախեն եկեղեցիներ, Աստուածաշնչեան դպրոցներ, համաժողովներու, երկրպագութեան երեկոներու, եւ տնային հաւաքոյթներու: Անոնք կը սիրեն սորվիլ, բայց անոնց բնաւորութիւնը եւ վարքը չեն փոխուիր:

Իմաստը հետեւեալն է...

Իմաստը հետեւեալն է. միայն սրբութեան մէջ ապրողները կրնան տեսնել զԱստուած, այսինքն՝ *մուտք գործել Անոր ներկայութեան մէջ*: Յիսուսը չէր կրնար աւելի պարզ բացատրել, երբ ըսաւ. «Քիչ մը ատենէն ա՛լ աշխարհը Ձիս պիտի չտեսնէ. բայց դուք պիտի տեսնէք Ձիս, վասնզի Ես կենդանի եմ, եւ դուք կենդանի պիտի ըլլաք... Ան որ Իմ պատուիրներս կը բռնէ ու կը պահէ զանոնք, անիկա է Ձիս սիրողը... Ես պիտի սիրեմ զանիկա եւ Ինքզինքս պիտի յայտնեմ անոր» (Յովհաննէս 14.19,21):

«Յայտնել» բառի սահմանումն է՝ «պարզ կամ ակնյայտ դարձնել աչքին կամ մտքին. պարզօրէն ցոյց տալ»: «Աստուածաշնչեան բառերու ուսումնասիրութեան լիակատար բառարանը» կը սահմանէ այս բառը՝ «էմֆանիզօ»-ն, որպէս «ակնյայտ դարձնել, տեսանելի դարձնել, ցոյց տալ»: Այն նոյնիսկ աւելի որոշակի բացատրութիւն կ'առաջարկէ. «Անձի վերաբերյալ... այն իմաստով, որ ինչ որ մէկը թոյլ կու տայ մտերմօրէն ճանչնալ կամ հասկնալ զինք»:

Յիսուս ըսաւ, որ Ան պարզօրէն պիտի յայտնէ Ինքզինք միայն Իր պատուիրանները պահող մարդոց: Անոնք են, որ պիտի տեսնեն Ձինք, մուտք պիտի գործեն Անոր ներկայութեան մէջ եւ այդ պատճառով ալ մտերմօրէն պիտի ճանչնան Ձինք: *Այս արտօնութիւնը խոստացուած չէ բոլոր հաւատացեալներուն*, այլ միայն անոնց, որոնք պիտի ձգտին հնազանդիլ Անոր Խօսքին՝ անոնց, որոնք պիտի ձգտին սրբութեան:

1980-ական թուականներուն ինձմէ խնդրեցին հիւրընկալել աշխարհի ամենամեծ եկեղեցւոյ գլխաւոր հովիւ՝ դոկտոր Տէյվիտ Եոնկի Չոն: Ան Սէուլէն է՝ Հարաւային Քորէայէն: Այդ ժամանակ անոր եկեղեցիին մէջ 750.000 մարդ կար: Որպէս զինք հիւրընկալող կողմ մեր եկեղեցւոյ մէջ՝ ես շարք մը պարտականութիւններ ունէի, որոնցմէ մէկը զինք հիւրանոցէն եկեղեցի տանիլն էր: Ընդամէնը քանի մը տարի եղած էր քրիստոնէայ ըլլալուս, եւ այսպիսի արտօնութիւն ստանալը աներեւակայելի էր ինձի համար:

Դոկտոր Չոն կը ճամբորդէր իր եկեղեցիէն մօտաւորապէս տասնհինգ գործարարի հետ: Այդ խումբի ղեկավարը մօտեցաւ ինծի հաւաքոյթի օրը եւ ըսաւ.

- Պարոն Պիվի՛ր, Դուք պէտք է ուղեկցիք դոկտոր Չոյին երեկոյեան ծառայութեան, ճի՞շդ է:

- Ճի՛շդ է, պարո՛ն:

Ան ըսաւ ինծի հանդիսաւոր կերպով.

- Պարոն Պիվի՛ր, ես պէտք է կարեւոր բաներ ըսեմ ձեզի: Առաջինը եւ ամենակարեւորը՝ մի՛ խօսիք դոկտոր Չոյին հետ հաւաքոյթի երթալու ճամբուն ընթացքին: Ան չի սիրեր խօսիլ ծառայութենէն առաջ:

Այդ հրահանգը միակը չէր, բայց գլխաւորն էր առաջնահերթ հրահանգներու ցուցակին մէջ:

Այդ երեկոյ ես հիւրանոց եկայ ինքնաշարժով եւ սպասեցի՝ մինչեւ որ դոկտոր Չոյին հետ ճանապարհորդող մարդիկ իմ ինքնաշարժին դուռը բացին: Դոկտոր Չոն նստեցաւ առջեւը՝ կողքիս նստարանին, եւ Աստուծոյ ներկայութիւնը լեցուց իմ ինքնաշարժը: Ես ամբողջովին համակուեցայ Անոր ներկայութեամբ. Աստուծոյ մեծութիւնն ու սէրը շատ իրական եւ ակնյայտ էին:

Երբ ինքնաշարժը կը քշէի, արցունքները կը հոսէին այտերէս, թէեւ ես շուտ լացող մարդ չեմ: Ճանապարհի կիսուն մենք կեցանք ազդալոյսի կարմիր լոյսին պատճառով, եւ ես այլեւս չէի կրնար դիմանալ: Ես ըրի այն, ինչ որ այդ ծառայողի գլխաւոր օգնականը պատուիրեց՝ չընել: Ես երկիւղածութեամբ ըսի իմ ուղեւորին.

- Դոկտոր Չօ՛, Աստուծոյ ներկայութիւնը այս ինքնաշարժին մէջ է:

Ան նայեցաւ ինծի եւ ըսաւ.

- Այո՛, ես գիտեմ:

Ես շատ ժամանակ անցուցի այս մարդուն հետ, անոր այցելութեան ժամանակ: Մենք միասին կոլֆ խաղացինք: Ես զինք ինքնաշարժով տարբեր վայրեր կը տանէի եւ կը ճաշէի անոր հետ: Ես անոր օդակայանէն ուղեկցած էի եւ մեկնելու ժամանակ կրկին օդակայանէն ուղեկցեցայ: Ամէն իրավիճակի մէջ՝ թէ՛ մարդոց առջեւ, թէ՛ մարդոց աչքերէն հեռու, դոկտոր Չօն աստուածապաշտ, աստուածավախ, անկեղծ եւ խոնարհ էր իր վերաբերմունքով եւ գործերով: Ես կը մտածէի այն մասին, որ ան ամէն օր ժամեր շարունակ կը հաղորդակցէր Տիրոջ հետ: Ակնյայտ է, որ ճիշդ այդ պատճառով Աստուծոյ ներկայութիւնը այդքան ուժգին էր անոր կեանքին մէջ: Ան իսկապէս կը ձգտէր ճշգրտօրէն կատարել Յիսուսին խօսքերը:

Ես յաճախ նոյն ձեւով վերապրած Տիրոջ ներկայութիւնը հաւաքոյթներու, աղօթքի եւ Աստուծոյ խօսքը ընթերցելու ժամանակ, կամ պար-

զապէս օրուան ընթացքին: Ես կը հասկնամ, թէ ինչու Մովսէսը ձգեց ամէն ինչ այս աներեւակայելի ներկայութեան համար: Իմ կեանքին մէջ եղած են պահեր, երբ Աստուծոյ ներկայութիւնը հեռու եղած է ինձմէ, երբեմն այն պատճառով, որ ես չէի պահեր Անոր խօսքերը: Այլ պարագաներու ես փորձութիւններու հնոցին մէջ էի: Ես կը հասկնամ, որ երկրորդը անխուսափելի է, բայց առաջինը հնարաւոր է կանխել:

«Յայտնել» բառը պարզապէս չի փոխանցեր «տեսնելու» իմաստը, այլեւ կ'ընդգրկէ այն ամէնը, ինչ որ կը հետեւի Անոր ներկայութեան մէջ ըլլալուն: Յայտնելը կը նշանակէ՝ բերել անտեսանելիէն՝ տեսանելին, անլսելիէն՝ լսելին, եւ անյայտէն՝ յայտնին: Այդ ժամանակ է, երբ Աստուած Ինքզինքը ճանաչելի կը դարձնէ մեր մտքին եւ զգայարաններուն: Ան կու տայ մտերմիկ հասկացողութիւն, գիտելիք եւ խորաթափանցութիւն Իր եւ Իր ճանապարհներուն մէջ: Եբրայեցիներու նամակի հեղինակը նկարագրեց այս արտօնեալները՝ անուանելով զանոնք այնպիսի մարդիկ, «որոնք գիտակցաբար ճաշակած են երկնային պարզելը եւ դարձած են Սուրբ Հոգիին մասնակիցները» (6.4, AMP): Թէեւ Անոր յայտնուած ներկայութիւնը հասանելի է Աստուծոյ իւրաքանչիւր զաւակին, միայն Անոր խօսքերուն հնազանդողները (ճշմարիտ արբութեամբ վարուողները) պիտի վերապրին այս արտօնութիւնը:

Պօղոս կը մէջբերէ Աստուծոյ լսելի բառերը Մովսէսին: Այս խօսքը անփոփոխ ճշմարտութիւն է, որ կը վերաբերի ոչ միայն Հին ուխտին, այլեւ՝ Նորին, եւ ուղղուած է այն մարդոց, որոնք արդէն Անոր կը պատկանին:

«Ղուրս ելէք անհաւատներուն միջէն եւ առանձնացէ՛ք անոնցմէ,- կ'ըսէ Տէրը:- Մի՛ դաչիք անոնց պիղծ բաներուն, եւ Ես պիտի ընդունիմ ձեզ» (Բ Կորնթացիս 6.17, NLT):

Ակնյայտ է, որ Աստուած կ'ընդունի մեզ Իր ներկայութեան մէջ որոշ պայմաններով, ոչ թէ ինքնաբերաբար: Մենք պէտք է կատարենք Անոր խնդրանքը մինչեւ Անոր հետ հանդիպման հնարաւորութիւն ստանալը: Պօղոսի արտայայտութիւնը կատարելապէս կը համապատասխանի Յիսուսի խօսքերուն: «Մեսի՛ճ» Աստուածաշունչը շրջասութեան կ'ենթարկէ այս խօսքը:

«Ուրեմն, ձգեցէ՛ք ապականութիւնը եւ փոխզիջումը. մէկընդմիշտ ձգեցէ՛ք այն,- կ'ըսէ Աստուած:- Մի՛ կապուիք անոնց հետ, որոնք պիտի պղծեն ձեզ: Ես կ'ուզեմ ձեզ ամբողջովին՝ Ինձի համար»:

Անկէ յետոյ Պօղոս ցոյց կու տայ, թէ ինչպէս պէտք է արձագանգենք Աստուծոյ պայմանական խոստումին:

«...Եկէ՛ք մաքրուինք այն ամէնէն, ինչ որ կրնայ ապականել մեր մարմինը կամ հոգին: Եւ եկէ՛ք գործենք լիակատար սրբութեան համար, որովհետեւ մենք կը վախնանք Աստուծմէ» (Բ. Կորնթացիս 7.1, NLT):

Եւս մէկ անգամ տեսնենք, որ իրական սրբութեան ձգտելու նպատակը այն է, որ արժանանանք Աստուծոյ յայտնուած ներկայութեան մէջ ընդունուելու պատուին:

Մթնոլորտ, թէ՞ ներկայութիւն

Այն բանէն յետոյ, երբ մենք առաքեալներու, Յիսուսի եւ Հայր Աստուծոյ խօսքերը պարունակող մէջբերումներ կարդացինք Նոր կտակարանէն, մենք պէտք է հարցնենք, թէ ինչու Նոր ուխտի քրիստոնէութեան այս կարեւոր կողմը աւելի յաճախ չի քննարկուիր, ուսուցանուիր եւ քարոզուիր: Արդեօ՞ք թշնամին խորամանկ ծրագիր մշակած է՝ հանդգելով մեզ ընդունիլ այնպիսի փրկութիւն, որ զուրկ է իրական սրբութենէն, քանի որ այդ պարագային մենք չենք կրնար տեսնել Ջինք եւ, հետեւաբար, չենք փոխուիր: Թշնամիի այս խորամանկ մարտավարութիւնը գործած է ոչ միայն անհատական, այլեւ՝ խմբային մակարդակի վրայ: Ինչ կը վերաբերի մեր հաւաքոյթներուն, հնարաւոր է, որ մենք *Աստուծոյ ներկայութիւնը* փոխարինած ենք եկեղեցական *մթնոլորտով*:

Մեծագոյն յառաջխաղացումներէն մէկը, որ եկեղեցին ունեցած է վերջին քսան տարուան ընթացքին, մեր հաւաքոյթներու վայրերուն մէջ աւելի լաւ մթնոլորտ ստեղծելն է: Տարիներ առաջ, մտնելով սովորական եկեղեցի, դուք, որպէս կանոն, պիտի տեսնէիք ընդունուած չափանիշներուն չհամապատասխանող շէնք՝ հնացած ձեւաւորմամբ, եւ պիտի մասնակցէիք ծանծրալի ծառայութեան: Մեր երաժշտութիւնը տհաճ էր, ուղերձները՝ տարօրինակ եւ ոչ տեղին, իսկ հագուստը, մեղմ ըսած՝ շատ հնաճ: Մենք կը հանդուրժէինք գրեթէ ամէն ինչ՝ թէ՛ երաժշտական կատարումներու, թէ՛ հաւատացեալներուն քարոզուող ուղերձներու մէջ, քանի տակաւին ասիկա կը կատարուէր «Տիրոջ անունով»: Անկեղծ ըսելու համար՝ մենք լիովին անհետեւ կը թուայինք հասարակութեան: Գոյութիւն ունէին հազուագիւտ բացառութիւններ, բայց քանի մը տասնամեակ առաջ եկեղեցիները, ընդհանուր առմամբ, այսպիսին էին:

Իմաստուն առաջնորդներու շնորհիւ մենք փոխեցինք այս արմատացած նմուշը: Այժմ մենք ուշագրաւ երաժշտութիւն ունինք, որ ճշմարտապէս ոգեշնչուած է եւ համապատասխան է մեր ժամանակներուն: Մենք կառուցած ենք յարմարաւէտ եկեղեցական շէնքեր՝ ժամանակա-

կից ձայնային եւ լուսային համակարգերով: Մեր ծառայութիւնները համակարգուած եւ արդիական են: Մենք ստեղծած ենք գրաւիչ եւ հաճելի միջավայր մանուկներու եւ դեռահասներու համար: Այժմ շատ եկեղեցիներու նախասրահներուն մէջ կայ սրճարան, ուր մարդիկ կրնան հաղորդակացիլ իրար հետ, ինչպէս նաեւ՝ մեծ տեսականի ունեցող գրախանութ: Մենք կ'առաջնորդենք մեր ծառայութիւնները այնպէս, որ կորսուածներուն համար տհաճ չըլլան: Պարզ ըսելու համար՝ մենք հրաշալի մթնոլորտ ստեղծած ենք մեր հաւաքոյթներու վայրերուն մէջ, եւ ես կը հաւատամ, որ Աստուծոյ հաճելի է մեր գերազանցութիւնը այս ոլորտին մէջ:

Այնուամենայնիւ, հնարաւոր է, որ այս արտաքին պարագաները մեր նպատակը դարձած են: Մթնոլորտը հրաշալի է, եթէ այն մարդիկ կը նախապատրաստէ ճշմարտապէս կարեւորին՝ Աստուծոյ ներկայութեան: Մթնոլորտը կը ստեղծուի մարդու կողմէն: Հոլիուտը, Լաս Վեկասը, Տիզնիս, Պրոտուէյը եւ այլ ժամանցային ընկերութիւնները վարպետացած են զգացումներ արթնցնելու մէջ: Թերեւս մենք անցում կատարած ենք անոնց մեթոտներո՞ւն: Հնարաւոր է, որ մենք կը բաւարարուինք միայն մեր ծառայութիւններուն յաճախող մարդոց զգացումները բորբոքելով: Արդեօ՞ք մենք վստահ ենք, որ մեր սրբարանները լեցուած են Աստուծոյ իրական ներկայութեամբ, թէ՞ պարզապէս քրիստոնէութեան շրջանակներուն մէջ կ'ընենք այն, ինչ որ ուրիշներուն քով շատ աւելի լաւ ձեւով կը յաջողի:

Իրականութիւնը հետեւեալն է. *մեզի անհրաժեշտ է Անոր ներկայութիւնը՝ փոխուելու համար:*

Թերեւս ճիշդ ասիկա՞ է պատճառը, որ եկեղեցիներուն մէջ կան մարդիկ, որոնք ի սրտէ կ'ընդունին քրիստոնէութիւնը, կը սիրեն երկրպագութիւնը եւ կը շարունակեն սորվիլ, բայց չեն փոխուիր: Այդ պարագային, հետեւանքները շատ ծանր կ'ըլլան. այդ մարդիկ չեն վերափոխուիր Յիսուսի պատկերով: Տարիներ առաջ մենք կը հանդուրժէինք վատ մթնոլորտը, բայց ես կը յիշեմ Աստուծոյ զարմանալի ներկայութեամբ լեցուած հաւաքոյթները: Ես ճշմարտապէս կը փոխուէի, թէեւ միշտ չէ, որ կրնայի բացատրել, թէ ինչպէս ատիկա տեղի կ'ունենար:

Հարցը հետեւեալն է. ինչո՞ւ մենք չենք կրնար ունենալ Ե՛ւ մթնոլորտը, Ե՛ւ ներկայութիւնը: Անշուշտ, մենք կրնանք երկուքն ալ ունենալ. պէտք չկայ, որ ընտրենք աստուծոյ միջեւ: Այնուամենայնիւ, Աստուծոյ ներկայութիւնը ունենալու համար մենք պէտք է սրբութեան ձգտինք:

Թշնամին իր հերթին խորամանկ ծրագիր մշակած է. ան կը ցանկայ քրիստոնէութիւնը սրբութենէն զրկել, որպէսզի Յիսուս Քրիստոսի Աւետարանը անզօր կրօնի տպաւորութիւն ձգէ շատ կորսուածներու հա-

մար, եւ Յիսուսին հետեւիլը գրաւիչ չթուայ անոնց, այնինչ իրականութեան մէջ ատիկա ամենաաներեւակայելի կեանքն է, որ հնարաւոր է ապրիլ այս երկրին վրայ:

Ի՞նչ է սրբութիւնը

Այսպիսով, ի՞նչ է սրբութիւնը: Յունարէն լեզուին մէջ այն *«հակիոս»* բառն է: *«Թայլըրի Նոր կտակարանի Յունարէն-անգլերէն բառարանին մէջ»* այս բառի սահմանումներէն մէկն է՝ «առանձնացուած՝ Աստուծոյ համար. ըլլալ, այսպէս ըսած, բացառապէս Անորը»: Այս սահմանման լոյսին տակ առիթ տուէք կրկին մէջբերելու Աստուծոյ խօսքերը. «Մի՛ կապուիք անոնց հետ, որոնք կը պղծեն ձեզ: Ես կը ցանկամ ձեզ ամբողջովին՝ Ինծի համար» (Բ. Կորնթացիս 6.17, MSG):

Երբ Լիզան եւ ես ամուսնացանք, ան դարձաւ բացառապէս իմս, իսկ ես՝ բացառապէս անորինը: Ան նուիրուեցաւ ինծի, որպէսզի ապրէր ինծի համար, իսկ ես նուիրուեցայ անոր: Մինչեւ Լիզային հետ ծանօթանալն ու ամուսնանալը, ես հաշուի չէի առներ Անոր ցանկութիւններն ու երազանքները. ես պարզապէս չէի ճանչնար զինք: Լիզան չի սիրեր մութ գոյնով կահոյք, անոր հաճելի չէ դիտել արհեստավարժ (փրոֆեսիոնալ) մարզական խաղեր եւ որոշ տեսակի ֆիլմեր, լսել ճազային կամ ուրիշ բարձրաձայն երաժշտութիւն, օգտագործել «Հազար կղզիներ» եւ «Պլուս չիզ» թանձրուկները, եւ շարք մը ուրիշ բաներ: Ես կը սիրէի, կը դիտէի, կը լսէի եւ կ'օգտագործէի գրեթէ այդ ամէնը: Այնուամենայնիւ, երբ մենք ամուսնացանք, ես հրաժարեցայ այդ բաներէն, քանի որ գիտէի, որ ատոնք հաճելի չէին Լիզային: Կան բազմաթիւ ուրիշ բաներ, որոնք մենք հաճոյքով կ'ընենք միասին:

Աւելին՝ ես սկսայ հեռու մնալ որեւէ ոչ պատշաճ կապերէն այլ կանանց հետ: Մինչեւ մեր ամուսնանալը ես շատ ընկերուհիներ ունէի, եւ ինծի համար սովորական էր տարբեր միջոցառումներու հրաւիրել զանոնք, պարզապէս հաղորդակցիլ անոնց հետ եւ նոյնիսկ ժամադրութիւն տալ անոնց: Բայց այն օրը, երբ ես «այդ» ըսի Լիզային, մնացած բոլոր կանանց հետ իմ փոխյարաբերութիւնները անդառնալիօրէն փոխուեցան:

Ուրիշ ձեւով ըսելու համար՝ ես ինքնամոռաց կերպով սիրահարուած էի Լիզային, եւ ինծի համար հաճելի էր ապրիլ անոր ցանկութիւններուն համար, ոչ թէ միայն՝ իմ:

Ես հանդիպած եմ ամուսիններու, որոնց շատ չեն մտահոգեր իրենց կանանց ցանկութիւնները. անոնք եսասիրաբար կը մտածեն: Անոնք փաստացի ամուսնացած են, բայց այդպիսի գոյգերու միջեւ չկայ սերտ

մտերմութիւն: Ամուսնական ուխտ կնքելով՝ մենք կը պարտաւորուինք ծառայել մեր կողակիցներուն մինչեւ մեր կեանքի վերջը: Լաւ ամուսնութեան մէջ տեղ չկայ եսասիրութեան համար:

Մինչեւ Յիսուսին հետ ուխտի մէջ մտնելը, մենք այս աշխարհէն էինք եւ սիրուած էինք այս աշխարհին կողմէն: Մեզի համար բոլորովին բնական էր ապրիլ մեր մարմինի եւ աչքերու ցանկութիւններով: Մենք կը ձգտէինք ձեռք բերել կարգավիճակ, համբաւ եւ որեւէ բան, ինչ որ պիտի ծառայէր մեր հպարտութեանը եւ եսասիրութեան:

Այժմ, երբ մենք հանդիպած ենք Յիսուսին եւ յարաբերութիւններ ունինք Անոր հետ, պէտք է անկեղծօրէն տանք հետեւեալ հարցումը. մենք կ'ապրինք մենք մե՞զի համար, թէ՞ Անոր համար: Մենք կրնանք փաստացի «կապ ունենալ» Յիսուսին հետ, բայց չվերապրիլ Անոր մտերմութիւնը (չունենալ Անոր յայտնուած ներկայութիւնը): Այդ պարագային, մենք ոչինչով կը տարբերինք եսասէր ամուսինէն:

Պօղոսը կը գրէ. «Անոնք, որոնք կը ստանան Անոր նոր կեանքը, այլեւս չեն ապրիր իրենք իրենց համար: Փոխարէնը՝ անոնք կ'ապրին Քրիստոսի համար» (Բ. Կորնթացիս 5.15, NLT): Ասիկա միակ ձեւն է, որով մենք կրնանք առողջ յարաբերութիւններ (կամ՝ ամուսնութիւն) ունենալ Անոր հետ:

Ուսումնասիրելով այն հատուածը, որուն մէջ Յակոբոսը կ'անդրադառնար այս աշխարհին հետ շնութեան՝ մենք պիտի տեսնենք, որ ան կ'ընդդիմանար այն հաւատացեալներուն, որոնք վերադարձած էին *եսասիրական* կեանքին.

«...Եթէ ձեր սիրտը լեցուած է... *եսասիրութեամբ*, մի՛ պարծենաք կամ մի՛ ստէք՝ ճշմարտութիւնը պահելու համար: Այս տեսակի իմաստութիւնը չի գար ի վերուստ: Այն երկրային եւ *եսասիրական* է, եւ կու գայ անձամբ սատանայէն: Երբ մարդիկ... *եսասէր* են, անոնք խնդիրներ կը յարուցանեն եւ ամէն տեսակի դաժան արարքներ կը գործեն:

...Ինչո՞ւ կը կռուիք եւ կը վիճիք իրար հետ: Մի՞թէ պատճառը այն չէ, որ դուք լեցուած էք *եսասիրական* ցանկութիւններով, որոնք կը պայքարին՝ ձեր մարմինը վերահսկելու համար: Դուք կ'ուզէք այնպիսի բան, ինչ որ չունիք, եւ ամէն ինչ կ'ընէք, որ ունենաք ատիկա... Բայց, միեւնոյնն է, դուք չէք կրնար ստանալ ձեր ուզածը եւ չէք ստանար ատիկա՝ կռուելով ու վիճելով: Դուք պէտք է աղօթէք ասոր համար: Չնայած, նոյնիսկ ձեր աղօթքները չեն պատասխանուիր, որովհետեւ դուք միայն կ'աղօթէք *եսասիրական* դրդապատճառներով: *Դուք հաւատարիմ չէք Աստուծոյ* [դուք շնացող էք՝ թէ՛ տղամարդիկ, թէ՛ կանայք]: Մի՞թէ չէք գիտեր, որ եթէ սիրէք այս աշխարհը, դուք Աստուծոյ թշնամիներն էք: Եւ

եթե որոշած էք ընկեր ըլլալ այս աշխարհին, դուք Աստուծոյ թշնամին կը դարձնէք դուք ձեզ» (Յակոբոս 3.14-16, 4.1-4, CEV):

Կը տեսնէ՞ք, թէ որքան յաճախ «եսասէր» բառը կ'օգտագործուի այս խօսքերուն մէջ: Յակոբոսը կ'ընէ ասիկա, որովհետեւ գոյութիւն ունի ընդամէնը երկու վարուելակերպ՝ *նուիրաբերող* եւ *վերցնող*: Ան, որ միայն կը վերցնէ, եսասէր, աշխարհիկ եւ անհաւատարիմ է Աստուծոյ: Այն հաւատացեալը, որ այսպէս կ'ապրի, շնացող կը կոչուի: Յիսուսի պատուիրանները առաջնահերթութիւն չեն անոր համար: Փոխարէնը՝ անոր առաջնահերթութիւնը *սեփական ցանկութիւններն են*:

Այս աշխարհը կ'առաջնորդուի եսասիրութեամբ, ինչպէս նաեւ այն հաւատացեալը՝ որ սուրբ չէ: Ան լիովին նուիրուած չէ Աստուծոյ: Ան եսակեդրոն է, եւ այդ պատճառով ալ կը հրապուրուի այն բաներով, որոնք բաւականութիւն կը պատճառեն մարմինին ու աչքերուն, ինչպէս նաեւ կը նպաստեն կարգավիճակ եւ համբաւ ձեռք բերելուն:

Մեղքի դրդապատճառը եսասիրութիւնն է: Ան, որ կը գողնայ, ատիկա իր անձին համար կ'ընէ: Ան, որ կը ստէ, ատիկա ինքզինքը պաշտպանելու կամ իր շահերը ապահովելու համար կ'ընէ: Ան, որ շնութիւն կը գործէ իր կնոջ հանդէպ, հաշուի կ'առնէ ոչ թէ իր կնոջը եւ մանուկներուն, այլ՝ իր ցանկութիւնները: Ան, որ կը սպաննէ, ատիկա իրեն համար կ'ընէ: Ան, որ անհնազանդ է իշխանութեան, համոզուած է, որ աւելի լաւ գիտէ, թէ ինչ պէտք է ընէ, եւ ինքնիրեն համար ամենալալը կ'ուզէ: Այն մարդը, որ կը ձգտի սիրուած եւ ճանչցուած ըլլալ, կ'ընէ ատիկա իր անապահովութեան զգացումի եւ հպարտութեան պատճառով: Երբ ես խաղ կը դիտէի, հրաժարեցայ Աստուծոյ խօսքին հնազանդելէն, այսինքն՝ անշատելի հեռատեսիլը եւ աղօթել, ես ատիկա ինձի համար ըրի:

Նոր բնութիւն

Այս աշխարհի մարդիկ ստրկացած են նման վարուելակերպին, քանի որ անոնք կը կառավարուին մարմնական (եսասիրական) ցանկութիւններով եւ ձգտումներով: Հաւատացեալը ազատած է այս ստրկութենէն (տե՛ս Հռովմ. 6.11-14): Որդին ճշմարտապէս ազատ արձակած է մեզ:

Հին կտակարանին մէջ Աստուծոյ ժողովուրդին պատուիրուած էր չմեղանչել, բայց անոնք չէին կրնար հնազանդիլ, քանի որ անոնց բնութիւնը մեղանչական (եսասիրական) էր: Հին կտակարանը վճռականօրէն կապացուցէ, որ մարդը իր կարողութեամբ երբեք չի կրնար *բարի* կեանք վարել՝ համաձայն Աստուծոյ չափանիշներուն: Մարդիկ իրենց

մարմնական ցանկություններու եւ ձգտումներու ստրուկներն էին, ինչ որ հակառակ էր Աստուծոյ ցանկութեան:

Մենք՝ նոր ստեղծուածներս, նոր բնութիւն ունինք: Մենք կենդանի ենք ներսէն, վերստեղծուած ենք Յիսուսի պատկերով, եւ բարի կեանք վարելու ներյատուկ կարողութիւն ունինք: Կարդանք Պօղոսի խօսքերը.

«Տիրոջ իշխանութեամբ ես կ'ըսեմ հետեւեալը. Այլեւս մի՛ ապրիք այնպէս, ինչպէս հեթանոսները, որովհետեւ անոնք անյուսալիօրէն շփոթուած են: Անոնց մտքերը լեցուն են խաւարով. անոնք կը թափառին՝ հեռանալով այն կեանքէն, որ Աստուած կու տայ, որովհետեւ անոնք փակած են իրենց մտքերը եւ խստացուցած են իրենց սրտերը Անոր դէմ: Անոնք չունին ամօթի զգացում: Կ'ապրին դիւրասէր հաճոյքներու համար եւ պատրաստակամօրէն ամէն տեսակի պղծութիւն կը գործեն» (Եփեսացիս 4.17-19, NLT):

Անհաւատը ստրկացած է իր մարմինի ցանկություններով: Անոր հոգին մահացած կամ անկեանք է: Ան չունի Աստուծոյ առջեւ *բարի* կեանք վարելու ներյատուկ կարողութիւն: Ինծի համար տարօրինակ է, երբ քրիստոնէաները կը զարմանան անհաւատներու վարքի պատճառով: Անոնք չեն հասկնար, որ վերստին ծնունդ չունեցող մարդը կրնայ վարուիլ միայն իր բնութեան համեմատ: Ան կը մեղանչէ: Ան եսասէր է: Եթէ ան մեծ կամքի ուժ ունենայ, կրնայ բարի կեցուածք ընդունիլ եւ նոյնիսկ անձնանուէր թուալ: Բայց նոյնիսկ չկասկածիք, որ ան իր անկում ապրած բնութեան ստրուկն է:

Պօղոսը կը շարունակէ նկարագրել ճշմարիտ հաւատացեալը.

«Քանի որ դուք լսած էք Յիսուսին մասին եւ սորված էք ճշմարտութիւնը, որ կու գայ Անորմէ, մէկ կողմ նետեցէ՛ք ձեր հին մեղանչական բնութիւնը եւ ձեր նախկին կեանքի ոճը, որ ապականուած է կիրքով ու խաբէութեամբ: Փոխարէնը՝ թոյլ տուէք, որ Հոգին նորոգէ ձեր մտքերը եւ դիրքորոշումները: Հազէ՛ք նոր բնութիւնը, որ ստեղծուած է Աստուծոյ նմանութեամբ՝ ճշմարտապէս արդար եւ սուրբ» (Եփեսացիս 4.21-24, NLT):

Ի տարբերութիւն չփրկուած մարդուն՝ հաւատացեալը ներքուստ նոր բնութիւն ստացած է: Աստուծոյ Խօսքը կը պատուիրէ մեզի հնազանդիլ այդ բնութեան՝ սուրբ կեանքով ապրելու համար: Քրիստոնէան ունի ընտրութիւն, որմէ անհաւատը զուրկ է: Քրիստոնէան կրնայ զիջիլ նոր ստեղծուածի զօրաւոր ներքին բնութեան կամ շարունակել հնազանդիլ իր մարմինի ցանկություններուն. ընտրութիւնը մերն է:

Դիրք եւ վարուելակերպ

Այս պահուն կարելոր է պարզաբանել, թէ ինչի մասին մենք կը խօսինք: Սրբութիւնը ունի երկու կարելոր կողմ, եւ երկուքն ալ ներկայացուած են Նոր կտակարանին մէջ: Շփոթութիւնը սրբութեան վերաբերեալ միշտ կ'առաջանայ, երբ մարդիկ կը փորձեն միախառնել այս երկուքը:

Առաջինը կը վերաբերի մեր *դիրքին* Քրիստոսի մէջ: Պօղոսը կը գրէ. «Նոյնիսկ մինչեւ աշխարհի ստեղծելը, Աստուած սիրեց մեզ եւ ընտրեց մեզ Քրիստոսին մէջ՝ ըլլալու *սուրբ* եւ անարատ Իր առջեւ» (Եփեսացիս 1.4, NLT): Այս սրբութիւնը կը վերագրուի մեզի զուտ այն աշխատանքին պատճառով, որ Յիսուսը կատարեց մեզի համար, եւ ցոյց կու տայ մեր դիրքը Քրիստոսին մէջ: Մենք ոչ մէկ պարագային կրնայինք վաստակիլ այս դիրքը մեր վարուելակերպով. ասիկա Յիսուսին պարգեւն է մեզի:

Երբ Լիզան իմ կինը դարձաւ, ան չվաստակեցաւ իր նոր դիրքը, այլ ստացաւ այն, քանի որ ես իմ սիրտը անոր տուի: Ան ըրաւ նոյնը ինձի համար: Մենք մէկընդմիշտ ուխտ կնքեցինք իրար հետ:

Սրբութեան երկրորդ կողմը *վարուելակերպն* է, որ սրբութեան դիրքը զբաղեցնելու հետեւանքն է: Հազիւ որ Լիզան իմ կինը դարձաւ, անոր վարքը արտացոլեց անոր հաւատարմութիւնը իմ հանդէպ: Ան այլեւս չէր սիրախօսեր այլ տղամարդոց հետ եւ հաղորդակցութիւն չէր փնտռեր անոնց հետ: Անոր գործերը համապատասխան էին հետս ունեցած անոր անսասան ամուսնական յարաբերութիւններուն: Եւ, անշուշտ, որպէս անոր ամուսին՝ ես նոյն ձեւով կը վարուէի:

Այս գիրքին մէջ ես կը նկարագրեմ սրբութեան ճիշդ այս կողմը: Պետրոսը կը խօսի այս մասին.

«Այնպէս որ, դուք պէտք է ապրիք որպէս Աստուծոյ հնազանդ զաւակներ: Ետ մի՛ նահանջէք դէպի ձեր նախկին կեանքի ճանապարհները՝ ձեր ցանկութիւնները բաւարարելու: Այդ ժամանակ դուք շատ բաներ չէիք հասկնար: Բայց հիմա պէտք է սուրբ ըլլաք ձեր բոլոր գործերուն մէջ, ինչպէս որ Աստուած, Որ ընտրեց ձեզ, Սուրբ է: Որովհետեւ Սուրբ Գիրքը կ'ըսէ. «Դուք պէտք է սուրբ ըլլաք, որովհետեւ Ես Սուրբ եմ»: Եւ յիշեցէ՛ք, որ երկնային Հայրը, Որուն դուք կ'աղօթէք, չունի համակրելիներ: Ան պիտի դատէ կամ պիտի վարձատրէ ձեզ ըստ *ձեր գործերուն*: Այնպէս որ, դուք պէտք է ապրիք՝ երկիւղած Անորմէ, այն ժամանակի մէջ, որ կ'անցընէք որպէս «օտարականներ այս երկրին մէջ»» (Ա. Պետրոս 1.14-17, NLT):

Ակնյայտ է, որ Պետրոսը կը խօսէր Աստուծոյ զաւակներուն հետ, ոչ թէ կորսուածներու: Ան կ'ըսէ, որ Աստուած պիտի դատէ կամ պի-

տի վարձատրե՛ մեզ ըստ *մեր գործերուն*, ինչ որ կը խօսի մեր *գործողութիւններուն* մասին, ոչ թէ Քրիստոսի մէջ ունեցած *դիրքի*: Յիսուսին արհւնը կը ներէ բոլոր մեղքերը, բայց գոյութիւն ունի որոշակի դատաստան, որուն ենթակայ պիտի ըլլան Աստուծոյ գաւակները՝ համաձայն *իրենց գործերուն*: Պօղոսը կը հաստատէ այս փաստը Բ. Կորնթացիս 5.9-11-ին մէջ: Համառօտէն անհնազանդութեան մէջ ապրիլը՝ աննշան բան չէ: Եթէ մենք ճշմարտապէս Անորն ենք, մենք պէտք է ջանասիրաբար ձգտինք մեղքի մէջ չապրիլ եւ ցաւ չպատճառել Անոր սրտին:

Ինչպէս Յակոբոսն ու Պօղոսը, Պետրոսը նոյնպէս կը հաստատէ, որ մեր կեանքի հին ճանապարհները կ'առաջնորդուէին եսասիրական ցանկութիւններով, եւ կը քաջալերէ մեզ սուրբ ըլլալ մեր բոլոր *գործերուն մէջ*: Առիթ տուէ՛ք կրկին գրաւել ձեր ուշադրութիւնը. ան կը խօսի մեր *վարքի եւ կենսատճի մասին*, ոչ թէ Քրիստոսին մէջ ունեցած *դիրքին*: Այս նոյն հատուածի մէկ ուրիշ թարգմանութեան մէջ գրուած է, որ մենք պէտք է «սուրբ ըլլանք մեր բոլոր վարքերուն եւ ապրելակերպին մէջ» (խօսք 15, AMP): Պետրոսի խօսքերուն մէջ անհասկնալի եւ շփոթեցնող ոչինչ կայ: Համաձայնելով Պօղոսին հետ՝ ան պարզապէս կը պնդէ հետեւեալը. եթէ մենք շնորհքով փրկուած ենք, մեր նոր բնութիւնը կարողութիւն կու տայ ապրելու ուրիշ ձեւ, քան այս աշխարհը, այսինքն՝ ապրելու սուրբ կեանքով:

Յիշեցէ՛ք Եբրայեցիներու 12.14-ը, որ կը պատուիրէ մեզի ձգտիլ սրբութեան: Վերջերս ես գտայ Չարլզ Սփերճընի քարոզներէն մէկը, որ գրաւեց իմ ուշադրութիւնը: Այս քաղուածքը ցոյց պիտի տայ ձեզի ատոր պատճառը.

«Որոշ անտինոմիականների (հակօրինականների) կողմէն յուսահատ փորձ եղած է՝ ազատելու այն կարգադրութենէն [սրբութեան ձգտելէն], որ Սուրբ Հոգին կը ցանկայ պարտադրել այս հատուածին մէջ: Անոնք ըսած են, որ խօսքը հոս Քրիստոսի սրբութեան մասին է, որ վերագրուած է մեզի: Մի՞թէ անոնք չեն գիտեր, որ կեղծիք կը խօսին՝ բացայայտ կերպով գրուածքը աղաուաղելով... Մենք պէտք է հետեւինք սրբութեան. այս սրբութիւնը պէտք է ըլլայ գործնական եւ պղծութեան հակառակը, ինչպէս գրուած է. «Որովհետեւ Աստուած չկանչեց մեզ պղծութեան մէջ, այլ՝ սրբութեան մէջ»... Ասիկա ուրիշ տեսակի սրբութիւն է: Այս յորդորանքի միտքը, փաստօրէն... գործնական, կենսական սրբութիւնն է: Այս սրբութիւնը կը նշանակէ՝ համապատասխանութիւն Աստուծոյ կամքին եւ հնազանդութիւն Տիրոջ պատուիրաններուն»¹³:

Հրաշալի՛ մեկնաբանութիւն: Ակնյայտ է, որ սրբութեան գաղափարը առաջին անգամ չէ, որ յարձակման կ'ենթարկուի եկեղեցիին մէջ, որով-

հետև Սփերճընը կը սորվեցնէր 1800-ական թուականներուն: Բայց երբ մեր միտքը հիմնուած է Սուրբ Գիրքի ճշմարտութեան վրայ, մենք կրնանք հասկնալ, որ սրբութիւնը կապ ունի ե՛ւ Քրիստոսին մէջ ունեցած մեր ինքնութեան, ե՛ւ Անոր Խօսքը պահելու հետ:

Կարելոր ճշմարտութիւն մը կայ. մենք չենք վաստակիր կամ ծեռք բերեր մեր սեփական արժանիքներով եւ ուժերով ո՛չ մեր *դիրքը* Քրիստոսի մէջ, ո՛չ ալ մեր *վարուելակերպը*: Երկուքն ալ ծրիաբար տրուած են մեզի: Այնուամենայնիւ, ինչ կը վերաբերի երկրորդին, մենք պէտք է համագործակցինք մեր նոր բնութեան հետ կամ զիջինք ատոր՝ բարի վարուելակերպ ունենալու համար:

Սրբութեան ուրիշ սահմանում մը

Ինչպէս կը տեսնենք, սրբութիւնը կը նշանակէ աւելին, քան սոսկ Անորը ըլլալ: Այն կը նշանակէ այնպիսի վարուելակերպ, որ բարոյապէս ընդունելի է Աստուծոյ համար: Մենք կրնանք անդրադառնալ սրբութեան եւս մէկ սահմանումի: Յունարէն «հակիոս» բառը նոյնպէս կը խօսի «մաքուր, անմեղ եւ արդար» վարքի մասին: Այս իմաստը կը վախճնէ ոմանց, բայց այդպէս պէտք չէ ըլլայ: Ես կրնամ բացատրել, թէ ինչ նկատի ունիմ՝ պատմելով պատմութիւն մը իմ մանկութենէն, երբ ես անյարմար վիճակի մէջ յայտնուած էի:

Մեր ընտանիքին մէջ վեց գաւակ կար, եւ ես միակ տղան էի. այնպէս որ, մեր բակին հետ կապուած բոլոր գործերը՝ իմ պարտականութիւնն էին: Ես կը լուայի մեր ինքնաշարժը, կը հնծէի սիգամարզը (գագոնը), կը հաւաքէի թափած տերեւները, կը մաքրէի ծիւնը եւայլն: Քանի որ ընկերներս եւ ես կը սիրէինք մարզական խաղեր, սովորաբար արագօրէն կը կատարէինք մեր գործերը, որպէսզի ժամանակ շահէինք մեր խաղերուն համար:

Գարունը նոր սկսած էր, եւ խոտը կրկին կ'աճէր երկարատեւ ծմեռէն յետոյ: Ընկերներս ու ես որոշած էինք, որ պիտի հանդիպինք դասերէն յետոյ՝ միասին խաղալու համար: Ես քիչ մը անտեսած էի սիգամարզը, եւ խոտը երկարած էր: Նախորդ երեկոյեան հայրս ըսած էր, որ ես կրնայի ընկերներուս հետ խաղալ միայն սիգամարզը հնծելէն յետոյ: Բացի այդ՝ այդ յանձնարարութիւնը պէտք է կատարուած ըլլար մինչեւ անոր աշխատանքէն տուն վերադառնալը:

Դասերէն յետոյ ես արագօրէն տուն գացի, փոխեցի հագուստս եւ առաջին անգամ այդ գարնան կառատունէն դուրս հանեցի սիգամարզ հնծող մեքենան: Ես գիտէի, որ պէտք է արագ ընէի ամէն ինչ, քանի որ շուտով ընկերներս պատրաստ պիտի ըլլային խաղի համար: Ես քանի

մը անգամ քաշեցի շարժիչի լարը, բայց այն չաշխատեցաւ: Անկէ յետոյ քանի մը անգամ սեղմեցի կարգաւորող կափարիչին կոճակը, որ քարպիւրաթորի մէջ աւելի շատ վառելիք երթար: Ես կրկին ու կրկին քաշեցի շարժիչի լարը, բայց ոչինչ տեղի ունեցաւ:

Ես մտածեցի. *«Թերեւս ես թրջած եմ քարպիւրաթորը եւ պէտք է քանի մը վայրկեան սպասեմ, որ այն չորնայ»:*

Ես սպասեցի եւ այդ ընթացքին ստուգեցի իւրը: Այնուհետեւ ստուգեցի բոլոր անջատիչները՝ համոզելու համար, որ ատոնք միացուած էին: Կը թուար՝ ամէն ինչ կարգին էր. ուղղակի պէտք էր քանի մը վայրկեան սպասէի: Ես կրկին փորձեցի, իսկ յետոյ՝ եւս մէկ անգամ, բայց շարժիչը չէր աշխատեր:

Ես յուսահատեցայ. ստուգեցի լուցամոմը. հնարաւոր է, որ այն աղտոտած ըլլար: Բայց այն վնասուած չէր: *«Ո՞րն է խնդիրը»*, - մտածեցի ես: Ամէն վայրկեան աւելի կը բարկանայի: Եթէ հնձող մեքենան չմիանար, ես չէի հնձեր սիգամարզը, չէի գոհացներ հայրս եւ չէի կարենար ընկերներուս հետ խաղալ:

«Ի՞նչ կրնամ ընել», - մտածեցի ես: - *Եթէ վերանորոգման կէտ տանիմ այն, ես տուն պիտի վերադառնամ արդէն ուշ երեկոյեան եւ պիտի կորսնցնեմ խաղը: Թերեւս հնձող մեքենայ խնդրեմ ինչ որ մէկէն... Բայց ատոր համար շատ ժամանակ պիտի պահանջուի»:* Մենք ձեռքի մեծ մկրատներ ունէինք, բայց ես հազիւ թէ կարենայի կտրել ամբողջ խտը մինչեւ ուշ երեկոյ, եւ նոյնիսկ այդ պարագային սիգամարզը անյար պիտի ըլլար եւ շատ վատ տեսք պիտի ունենար: Այդպէս չէր յաջողեր:

Ես բարկացայ այդ հին մեքենային վրայ. *«Ատոր պատճառով ես լաւ խաղ պիտի կորսնցնեմ»*, - մտածեցի: Ես գիտէի, որ մեքենան արուած էր: Ես անլուծելի իրավիճակի մէջ էի. ոչ մէկ պարագային կը հասցնէի խտը հնձել եւ ժամանակին ընկերներուս հանդիպիլ:

Իմ ընկերներէն մէկը, որ խաղի պիտի երթար հետս, եկաւ քովս:

- Ճո՛ն, պատրա՞ստ ես, - հարցուց ան:

- Ո՛չ: Հայրս ըսած է, որ պէտք է հնձեմ սիգամարզը մինչեւ երթալը, իսկ հնձող մեքենան չ'աշխատիր, - ըսի ես: - Ես ժամանակ չունիմ, որ նորոգեմ այն, մէկ ուրիշ մեքենայ պիտի խնդրեմ ինչ որ մէկէն կամ ձեռքով պիտի կտրեմ սիգամարզը: Այսօր ես խաղի չեմ կրնար գալ:

Իմ ընկերը, որ ինձմէ քիչ մը իմաստուն էր, ըսաւ.

- Առիթ տո՛ւր նայիմ:

- Անշո՛ւշտ, - յուսահատօրէն ըսի ես:

Ան առաջին հերթին բացաւ վառելիքի բաքը (պենզինի տակառը), նայեցաւ բաքին մէջ եւ սկսաւ ծիծաղիլ.

- Ահա եւ քու խնդիրը, Ճո՛ն: Բաքին մէջ վառելիք չկայ:

Ես անյարմար զգացի ինձի, բայց նաեւ՝ թեթեւութիւն:

«Ծանկ գլուխ,- մտածեցի ես,*- դուն պէտք է ստուգէիր ատիկա առաջին հերթին»:* Ես լեցուցի բաքը, եւ մեքենան անմիջապէս աշխատեցաւ: Ես արագ հնձեցի սիգամարզը, եւ մենք գացինք խաղալու մեր ընկերներուն հետ:

Ի՞նչ կապ ունի այս պատմութիւնը սրբութեան հետ: Երբ մենք տեսնենք սրբութեան սահմանումը (*«մաքուր»*, *«անմեղ»* եւ *«արդար»* բառերը), կը յուսահատինք՝ մտածելով. *«Ասիկա անհնա՛ր է»:* Պատճառը այն է, որ մենք կը փորձենք պատկերացնել, թէ ինչպէս պիտի ընենք ատիկա մեր սեփական ուժերով: Ասիկա կը նմանի, որ փորձէք մեծ մկրատով կտրել ամբողջ բակի խոտը եւ ժամանակին հասնիք խաղին: Ասիկա լիովին անհնա՛ր է: Դուրսը արդէն պիտի մթննայ, իսկ դուք չէք հասցներ աւարտել բակին նոյնիսկ մէկ պզտիկ մասը:

Այնուամենայնիւ, մենք նոր բնութիւն ունինք, որ կարելի է համեմատել սիգամարզ հնձող մեքենային հետ: Սակայն եթէ բաքի մէջ վառելիք չըլլայ, մեր վիճակը նոյնքան վատ կ'ըլլայ, որքան այն ժամանակ, երբ չունէինք այդ մեքենան: Բաքին մէջ պէտք է վառելիք ըլլայ, որ մեքենան սկսի աշխատիլ:

Յաջորդ գլուխին մէջ մենք պիտի տեսնենք, թէ ինչ կը բորբոքէ մեր նոր բնութիւնը, այսինքն՝ ինչի շնորհիւ մենք կրնանք անարատ վարուիլ Աստուծոյ առջեւ:

ՎԱՌԵԼԻՔԸ

«...ծեզի կը ցուցնենք (կ'իմացնենք) Աստուծոյ շնորհքը,
որ Մակեդոնացիներու եկեղեցիներուն տրուած է...
վասնզի ես կը վկայեմ, թէ իրենց կարողութեան չափովը ու
կարողութենէն ալ աւելի...»:
— Բ. Կորնթացիս 8.1-3

...«Կատարեալ եղէ՛ք»-ը... անհնարինը
կատարելու պատուիրան չէ: [Աստուած]
պիտի դարձնէ մեզ այնպիսի ստեղծուածներ, որոնք
կրնան հնազանդիլ այդ պատուիրանին:
— Բ. Ս. Լուիս

Սրբութեան ձգտիլը ինքնանպատակ չէ. այն դուռ է դէպի Յիսուսի ներկայութիւնը: Տէրը պարզ կ'ըսէ. «Այն մարդը, որ ունի Իմ պատուիրանները եւ կը պահէ ատոնք, ան է, որ [իրականութեան մէջ] կը սիրէ Ձիս... եւ ես [նոյնպէս] կը սիրեմ զինք եւ ցոյց պիտի տամ (պիտի յայտնեմ, պիտի դրսեւորեմ) Անձս անոր: [Ես պարզօրէն տեսանելի պիտի դարձնեմ Ինձի անոր, եւ իրական պիտի դարձնեմ Ինքզինքս անոր համար]» (Յովհաննէս 14.21, AMP): Մենք մտերմօրէն կը ճանչնանք Տէրը այն ժամանակ, երբ կը պահենք Անոր խօսքերը:

Եբրայեցիներու նամակի հեղինակը կը հաստատէ ասիկա. «Հետեւեցէ՛ք... սրբութեան, որ առանց անոր ոչ ոք Տէրը պիտի տեսնէ» (Եբրայեցիս 12.14): Անէն ինչ պարզ է. առանց սրբութեան մարդը չի կրնար տեսնել Տէրը, այսինքն՝ չի կրնար մտնել Անոր ներկայութեան մէջ:

Սրբութեան իմաստն է՝ ըլլալ բացառապէս Անորը, ըլլալ առանձնացած Անոր համար: Այն նոյնպէս կը նշանակէ՝ ըլլալ «մաքուր, անմեղ, արդար»: Այս երկու սահմանումները անբաժան են իրարմէ: Անոր պատկանիլը կը նշանակէ՝ ապրիլ Անոր համար, հաճեցնել Ձինք մեր վարքով: Կողոսացիներու 1.10-ին մէջ գրուած է, որ Ան կը ցանկայ, «որ դուք քալէք (ապրիք եւ վարուիք) Տիրոջը արժանի կերպով՝ բոլորովին հաճեցնելով Ձինք» (AMP): Ի վերջոյ, Ան պիտի վերադառնայ փառա-

ւոր եկեղեցւոյ ետեւէն, «որ չունենայ արատ կամ խորշոմութիւն մը կամ ուրիշ բաներ, որ սուրբ եւ անարատ ըլլայ» (Եփեսացիս 5.27):

Հետաքրքրական է, որ ասիկա միակ նկարագրութիւնն է այն մարդոց մասին, որուն համար Ան կը վերադառնայ: Ստածեցէ՛ք այս մասին. Սուրբ Գիրքը չի նկարագրեր Անոր Հարսնցուն որպէս զօրաւոր, արդիական, լաւ առաջնորդներ եւ հասարակութեան մէջ լաւ կապեր ունեցող, երկրպագող կամ ուրախ: Այս ամէնը հրաշալի առաւելութիւններ են, բայց գերակշռող յատկանիշը, որ Ան կը ցանկար Իր Հարսնցուին մէջ՝ «սուրբ եւ անարատ» ըլլալն է:

Գոյութիւն ունի եւս մէկ հետաքրքրական փաստ այս մասին. սրբութիւնը գերակշռող յատկանիշն է, որմով Սուրբ Գիրքը կը նկարագրէ զԱստուած: Եսայի մարգարէն եւ Յովհաննէս առաքեալը կը գրեն Աստուծոյ գահի սրահը տեսնելու մասին: Երկուքն ալ չէին կրնար չնկատել, որ զօրաւոր հրեշտակները, որոնք կը շրջապատէին Ջինք, անդադար կ'աղաղակէին. «Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ» (տե՛ս Եսայեայ 6.3 եւ Յայտն. 4.8): Անոնք չէին զոչեր. «հաւատարի՛մ», «սիրո՛ղ», «բարի՛» կամ «առատածե՛ռն»: Ան ունի բոլոր այս հրաշալի յատկանիշները, բայց սրբութիւնը կը գերակշռէ այդ ամէնը:

Երկու տարբերակ

Մաքուր, անմեղ եւ արդար ըլլալու պատուէրը մշտապէս առաջացուցած է հետեւեալ հարցումը. «Ինչպէ՞ս կրնանք այսպէս ապրիլ»: Մենք փորձած ենք ընել ատիկա մեր զօրութեամբ եւ բոլորովին ծախողած ենք: Մենք կ'ուզէինք հնազանդիլ Աստուծոյ օրէնքին, որ կը բնակի մեր խղճին մէջ (տե՛ս Հռովմ. 2.14,15), բայց շարունակ կը ծախողէինք:

Այնուամենայնիւ, եկաւ Աստուծոյ *շնորհքը*: Մենք չէինք կրնար վաստակիլ այն մեր բարի վարքով, եւ մինչեւ օրս ալ չենք կրնար: Մենք արժանի չէինք ատոր, եւ մինչեւ օրս ալ արժանի չենք: Աստուծոյ պարգեւը բոլորովին կը ներէ մեզ, եւ պիտի շարունակէ ներել, երբ մենք կրկին ծախողինք: Մենք փրկուա՛ծ ենք մեր մեղքերէն:

Թեւեւ մենք ունինք այս զարմանալի գիտելիքը, սակայն մինչեւ օրս յուսահատ ենք, քանի որ չենք կրնար պահել Անոր պատուիրանները: Ինչո՞ւ մենք այդպիսի պայքարի մէջ ենք: Մենք վերստին ծնած ենք եւ նոր բնութիւն ունինք: Այդ պարագային, ինչո՞ւ մենք շարունակ կը ծախողինք:

Մենք կը սկսինք մտածել մէկ ուրիշ տարբերակի մասին, որ կրնայ թեթեւցնել մեր դրութիւնը: Մենք կրնանք սորվեցնել, որ սրբութիւնը միայն կը վերաբերի մեր դիրքին Քրիստոսին մէջ եւ, ընդհանրապէս,

անտեսենք, որ Աստուածաշունչը կոչ կ'ընէ մեզ սուրբ վարք ունենալ՝ մեղմացնելով այն դատապարտութիւնը, որ կը զգանք: Մենք կրնանք արդարացնել այն փաստը, որ մեր կեանքը չի փոխուիլ՝ ըսելով, որ մենք սովորական մարդիկ ենք եւ մշտապէս սխալներ պիտի գործենք: Մենք կրնանք ընդամենը կեդրոնանալ շնորհքի համառօտ վարդապետութեան վրայ՝ այն, որ շնորհքը կը ծածկէ մեր անցեալ, ներկայ եւ ապագայ մեղքերը: Եթէ մենք այսպէս սորվեցնենք եւ միայն այսպէս հաւատանք, մենք կեղծ ապահովութիւն պիտի ստեղծենք, քանի որ պարզապէս կը լռեցնենք մեր խիղճը: Այնուամենայնիւ, եթէ աւելի ուշադրութեամբ ականջ դնենք մեր սրտին, մենք պիտի լսենք աստոր աղաղակը. «Պէտք է աւելի՛ն ըլլայ»:

Յաւոք, մեզմէ շատերը բաւարարուած են այս տարբերակով եւ, փաստօրէն, անտեսած են բազմաթիւ նորկտակարանեան խօսքերը, որոնք կոչ կ'ընեն մեզ աստուածահաճոյ վարուելակերպ ունենալ: Ես կրնայի բազմաթիւ սուրբգրային հատուածներ թուարկել այս թեմայով, եւ ատոնք շատ էջեր պիտի զբաղեցնէին, բայց առիթ տուէք սկսիլ միայն նման հատուածէ մը.

«Իմ թանկ գաւակներ, ես կը գրեմ ասիկա ձեզի, որ դուք չմեղանջէք... Եւ մենք կրնանք վստահ ըլլալ, որ կը ճանչնանք Ջինք, եթէ մենք կը հնազանդինք Անոր պատուիրաններուն: Եթէ ինչ որ մէկը կը պնդէ. «Ես կը ճանչնամ զԱստուած», բայց չի հնազանդիր Աստուծոյ պատուիրաններուն, այդ անձը ստախօս է եւ չապրիր ճշմարտութեան մէջ: Բայց անոնք, որոնք կը հնազանդին Աստուծոյ խօսքին, ճշմարտապէս ցոյց կու տան, թէ ինչպէս լիարժէք կերպով սիրել Ջինք: Ահա թէ ինչպէս մենք գիտենք, որ կ'ապրինք Անոր մէջ: Անոնք, որոնք կ'ըսեն, որ կ'ապրին Աստուծոյ մէջ, պէտք է ապրին իրենց կեանքերը՝ ինչպէս Յիսուսը» (Ա. Յովհաննէս 2.1,3-6, NLT):

Յովհաննէսը չգրեց. «Մի՛ անհանգստանաք, եթէ մեղք գործէք. չէ՞ որ մենք մարդ ենք»: Ո՛չ, ան միանշանակ կը գրէ. «...որ դուք չմեղանջէք»: Ահա թէ ինչ պէտք է ըլլայ մեր նպատակը: Եթէ մենք վրիպինք, անշուշտ, մեր կեանքին մէջ կայ Յիսուսի արիւնը, որ կը մաքրէ մեզ: Բայց եւ այնպէս, մեր նպատակը պէտք է ըլլայ Յիսուսին պէս ապրիլը: Եւ համաձայն Սուրբ Գիրքին՝ ատիկա անհասանելի նպատակ չէ: Հետեւաբար՝ եթէ ինչ որ մէկը անտեսէ կրկնուող մեղքը՝ արդարացնելով այն իր «մարդկային բնութեամբ», չի համապատասխանիր Յովհաննէսի խօսքերուն եւ բազմաթիւ ուրիշ հատուածներու Նոր կտակարանին մէջ:

Արդեօ՞ք մենք չունինք այն, ինչ որ անհրաժեշտ է մեզի: Արդեօ՞ք Աստուած չէ կանխատեսած մեր երկընտրանքը եւ չէ ապահոված ասոր լուծումը: Անշուշտ, Ան այդպէս ալ ըրած է: Այս տարբերակին մասին աւելի քիչ կը խօսի, բայց այն կատարելապէս կը համապատասխանի Նոր կտակարանի ուսմունքին: Խօսքը շնորհքի այն կողմի մասին է, որ անյայտ է շատերուն համար: Ատիկա այն վառելիքն է, որ զօրութիւն կու տայ մեր նոր բնութեան: Պարզապէս՝ շնորհքը կը զօրացնէ մեզ, որ ճշմարտապէս բարի կեանք ունենանք:

Անյայտ ճշմարտութիւնը շնորհքի մասին

2009 թուականին ամբողջ Ամերիկայի տարածքին մէկ հարցում մը տրուած էր հանրութեան, որուն մասնակցած էին հազարաւոր քրիստոնէաներ: Խօսքը հաւատացեալներու մասին է՝ վերստին ծնած, Աստուածաշունչին հաւատացող եւ տարբեր եկեղեցիներ յաճախող մարդոց: Բոլորին կը տրուէր հետեւեալ հարցումը. «Ըսէ՛ք Աստուծոյ շնորհքի երեք կամ աւելի սահմանում»: Պատասխաններուն գերակշռող մեծամասնութիւնն էր. «*Վիրկութիւն*», «*անարժանաբար տրուող շնորհք*» եւ «*մեղքերու ներում*»:

Շատ լաւ է, որ ամերիկացի քրիստոնէաները կը հասկնան, որ մենք փրկուած ենք միայն շնորհքով: Փրկութիւնը չի տրուիր ջուր ցողելով, եկեղեցական պատկանելիութիւն ունենալով, կրօնական օրէնքներ պահելով, չար գործերը գերազանցող բարի գործեր ընելով եւ այլն: Ամերիկացի աւետարանական հաւատացեալներու մեծ մասը հաստատ գիտէ այս հիմնարար ճշմարտութիւնները Աստուծոյ շնորհքի մասին, քանի որ ատոնք քարոզուած են մեր բեմերէն, եւ ես համոզուած եմ, որ Աստուծոյ համար հաճելի է այդ մէկը:

Այնուամենայնիւ, ողբերգութիւնը այն է, որ հարցումին մասնակցող հազարաւոր քրիստոնէաներէն ընդամենը 2 տոկոսը պատասխանած է, որ շնորհքը՝ Աստուծոյ *զօրութիւնն* է¹⁴: Այնուամենայնիւ, Աստուած ճիշդ այսպէս սահմանեց եւ նկարագրեց Իր շնորհքը: Ան կ'ըսէ.

«Իմ շնորհքը՝ այն ամէնն է, ինչ որ պէտք է քեզի, որովհետեւ Իմ զօրութիւնը լաւագոյնս կը գործէ քու տկարութեան մէջ»
(Բ. Կորնթացիս 12.9, TEV եւ NLT):

Աստուած կ'ըսէ, որ Իր շնորհքը՝ Իր զօրութիւնն է: «*Տկարութիւն*» բառը այստեղ կը նշանակէ անկարողութիւն: Աստուած կ'ըսէ. «Իմ

շնորհքը՝ Իմ զօրութիւնն է, եւ այն նախատեսուած է այնպիսի իրավիճակներու համար, որոնք կը գերազանցեն քու կարողութիւնը»:

Պետրոս առաքեալը նոյն ձեւով կը սահմանէ Աստուծոյ շնորհքը: Ան կը գրէ. «Շնորհքն ու խաղաղութիւն շատնան ձեր վրայ... Ինչպէս որ Անոր աստուածային զօրութիւնը շնորհեց մեզ այն ամէնը, որ կեանքի եւ աստուածապաշտութեան համար պէտք է...» (Բ. Պետրոս 1.2, 3): Շնորհքը եւս մէկ անգամ կը կոչուի «Անոր աստուածային զօրութիւնը»: Պետրոս կը պնդէ, որ բոլոր միջոցները եւ կարողութիւնները, որոնք անհրաժեշտ են աստուածապաշտ եւ սուրբ կեանքի համար, հասանելի են շնորհքի զօրացման միջոցով:

Այնուամենայնիւ, այդ հետազօտութիւնը ցոյց տուաւ, որ ամերիկացի քրիստոնէաներու միայն 2 տոկոսը գիտէ այս մասին, ինչ որ մեծ խնդիր է: Առիթ տուէք բացատրել: Մենք պէտք է հաւատանք, որպէսզի ստանանք Աստուծմէ: Ճիշդ այս պատճառով Նոր կտակարանը կը կոչուի «հաւատքի խօսք» (տե՛ս Հռովմ. 10.8): Պարզապէս՝ եթէ մենք չհաւատանք, մենք չենք ստանար:

Ահա պարզ օրինակ մը: Յիսուս մահացաւ ամբողջ աշխարհի մեղքերուն համար, բայց կը փրկուին միայն անոնք, որոնք կը հաւատան ատոր: Այնպէս որ, մենք շատ մեծ խնդիր ունինք. եթէ քրիստոնէանէրու 98 տոկոսը չի գիտեր, որ Աստուծոյ շնորհքը՝ Անոր զօրութիւնն է, կը նշանակէ՝ քրիստոնէանէրու 98 տոկոսը կը փորձէ սուրբ ըլլալ սեփական կարողութեամբ: Վերջաւորութեան՝ անոնք կը պարտուին եւ կը յուսահատին: Անոնց նոր բնութիւնը ուժ չի ստանար. այլ ձեւով ըսելու համար՝ անոնց բաքին մէջ վառելիք չկայ:

Մէկ քայլ առաջ երթանք յունարէնի մէջ: Այն բառը, որ Նոր կտակարանին մէջ ամէնէն յաճախ կը թարգմանուի «շնորհք» բառով, «խարիս»-ն է: «Սթրոնկի լիակատար համաբարբառը» այն կը սահմանէ որպէս «նուէր», «օգուտ», «բարեհաճութիւն», «գթասրտութիւն» եւ «առատածեռնութիւն»:

Եթէ վերցնէք այս սկզբնական սահմանումը եւ համադրէք այն քանի մը խօսքերու հետ Հռոմէացիներու, Գաղատացիներու եւ Եփեսացիներու նամակներէն, դուք պիտի ստանաք «շնորհք» բառի այն սահմանումը, որուն ծանօթ է Ամերիկայի մեծ մասը: Այնուամենայնիւ, «Սթրոնկի բառարանի» սահմանումը շարունակութիւն ունի. «աստուածային ազդեցութիւն մարդու սրտի վրայ եւ ատոր արտացոլումը անոր կեանքին մէջ»: Մենք կը տեսնենք, որ գոյութիւն ունի մարդու սրտին մէջ կատարուած աշխատանքի արտաքին վկայութիւն, որ նաեւ շնորհքի զօրացման ապացոյցն է:

Գործք առաքելոց գիրքին մէջ Բառնաբասը եկաւ Անտիոքի եկեղեցի եւ տեղ հասնելով՝ «տեսաւ Աստուծոյ շնորհքի ապացոյցը» (Գործք 11.23, NIV): Ան չլսեց շնորհքի մասին. ան տեսաւ ասոր ապացոյցը: Անտիոքի եկեղեցւոյ անդամներու վարքը կը հաստատէր, որ անոնց սրտերուն մէջ կը գործէր շնորհքի զօրութիւնը:

Ահա թէ ինչո՞ւ Յակոբոս առաքեալը կը գրէ. «Ցո՛յց տուր ինձի քու հաւատքը [շնորհքը]՝ առանց քու գործերու, իսկ ես ցոյց պիտի տամ քեզի իմ հաւատքը [շնորհքը]՝ իմ գործերով» (Յակոբոս 2.18, NKJV): Ես օգտագործեցի «շնորհք» բառը «հաւատք» բառի փոխարէն, քանի որ մենք կը ստանանք Աստուծոյ շնորհքը հաւատքով (այսինքն՝ հաւատալով Աստուծոյ խօսքին). «Մենք մուտք ունինք հաւատքով այս շնորհքի մէջ» (Հռովմայեցիս 5.2, NKJV): Առանց հաւատքի (այսինքն՝ հաւատալու)՝ չկայ զօրութիւն (շնորհք): Յակոբոսը կը շեշտէ. «Ցո՛յց տուր ինձի զօրացման ապացոյցը»: Ահա եւ ճշմարիտ ցուցանիչը այն մասին, որ մենք շնորհք ստացած ենք հաւատքի միջոցով:

Շնորհքը՝ *պարգեւ* է: Ընդլայնենք մեր պատկերացումը շնորհքի մասին՝ մտապահելով այն, ինչ որ նոր սորվեցանք: Փրկութիւնը՝ *շնորհքի պարգեւ* է: Ներումը՝ *շնորհքի պարգեւ* է: Բժշկութիւնը՝ *շնորհքի պարգեւ* է: Մատակարարումը՝ *շնորհքի պարգեւ* է: Այս ամէնը Անոր բարեհաճութեան դրսեւորումներն են մեր կեանքին մէջ, եւ մենք չենք կրնար վաստակիլ անկէ որեւէ բան կամ արժանանալ անկէ:

Զօրացում ըսելով՝ մենք նկատի ունինք, որ *շնորհքը մեր բնական կարողութիւնը գերազանցելու կարողութիւն կու տայ մեզի*: Մենք չունինք մենք մեզ դժոխքէն ազատելու կարողութիւն, բայց շնորհքը ըրաւ ատիկա: Մենք պէտք չէ ապրէինք ազատութեան մէջ, բայց շնորհքը կու տայ մեզի այդ կարողութիւնը: Մենք չէինք կրնար փոխել մեր բնութիւնը, բայց շնորհքը կատարեց ատիկա մեզի համար: Մենք չունինք սրբութեամբ ապրելու կարողութիւն, բայց կը ստանանք այն շնորհքի միջոցով: Ահա թէ ինչո՞ւ մենք զարմանալի կ'անուանենք այն:

Հարցում, որ պիտի դրդէ ձեզ մտածելու

Վերջերս՝ աղօթքի ժամանակ, Տէրը հարցուց ինձի. «Որդի՛ս, ինչպէ՞ս ես ներկայացուցած եմ *շնորհքը* Իմ գիրքին՝ Նոր կտակարանին մէջ»:

Ես տասէն անելի գիրքեր գրած եմ. այնպէս որ, ինձի համար այդ հարցը շատ կարեւոր էր: Առիթ տուէք բացատրել, թէ ինչո՞ւ: Երբ նոր հասկացութիւն մը կը ներմուծեմ որեւէ գիրքի մէջ՝ այնպիսին, որուն ոչ շատերը ծանօթ են, ես կը ներկայացնեմ այդ հասկացութեան գլխաւոր

սահմանումը այն առաջին անգամ օգտագործելու ժամանակ: Արդեն յաջորդ էջերուն մէջ ես կրնամ ներկայացնել ատոր երկրորդական սահմանումները: Այնպէս որ, երբ փորձառու հեղինակի գիրքի մէջ նոր հասկացութիւն կը ներմուծուի, ես կը համարեմ, որ այն կը ներկայացուի իր գլխաւոր սահմանումով:

«Չեմ գիտեր»,- պատասխանեցի ես Տիրոջը:

Ես անվարան վերցուցի իմ Աստուածաշունչի համաբարբառը եւ գտայ այն հատուածը Նոր կտակարանին մէջ, ուր Աստուած առաջին անգամ կ'օգտագործէ «շնորհք» բառը. «Եւ Անոր լիութենէն մենք ամէնքս առինք շնորհք՝ շնորհքի տեղ» (Յովհաննէս 1.16):

Ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ Յովհաննէսը կը գրէ. «Շնորհք՝ շնորհքի տեղ»: Ես ընկեր մը ունիմ, որ ծնած է եւ կ'ապրի Յունաստան՝ Աթէնքի մէջ: Յունարէնը անոր մայրենի լեզուն է, եւ բացի այդ՝ ան հին յունարէնի մասնագէտ է: Ան այն մարդոցմէն մէկն է, որուն ես կը դիմեմ, երբ յունարէնի հետ կ'ապուած հարցեր ունենամ: Ան ըսաւ ինձի, որ իրականութեան մէջ առաքեալը կ'ուզէր ըսել, որ Աստուած փոխանցած էր մեզի «շնորհքի մեծ առատութիւնը»: Այսինքն՝ Յովհաննէս առաքեալը կ'ըսէր մեզի, որ մենք կը ստանանք Յիսուս Քրիստոսի լիութիւնը շնորհքի առատութեան միջոցով: Դուք հասկցա՞ք ասիկա. *Անձամբ Յիսուս Քրիստոսի լիութիւնը*: Ասիկա շատ բան կը նշանակէ, յատկապէս՝ շնորհքի կողմէն տրուած բնութիւնը, կարողութիւնը եւ զօրութիւնը ունենալու իմաստով:

Եկէ՛ք քանի մը օրինակ բերենք՝ ցոյց տալու համար, թէ որքա՛ն նշանակալի է այս արտայայտութիւնը:

Պատկերացուցէ՛ք, որ ես կը մօտենամ դպրոցական պասքէթպոլային խումբի խաղացողի, որ իր խումբի ակնառու անդամներէն է: Ան միշտ կը նստի փոխարինողներու նստարանին, մինչեւ որ խաղի աւարտին կը մնայ երկու վայրկեան, եւ անոր խումբը կա՛մ կը յաղթէ, կա՛մ կը պարտուի քսան միաւորով:

Ես կը հրեմ զինք ու կ'ըսեմ.

- Մենք գիտական յայտնագործութիւն ըրած ենք, որուն շնորհիւ կրնանք տալ քեզի լաւագոյն պասքէթպոլիստներէն մէկուն՝ ԼեՊրոն Ճէյմսի լիութիւնը:

Ձեր կարծիքով, ի՞նչ պիտի պատասխանէ: Ան պիտի ըսէ.

- Այո՛, ըրէ՛ք ատիկա ճիշդ հիմա: Ի՞նչ պէտք է ես ընեմ:

Դուք կրնաք գուշակել, թէ ինչ տեղի պիտի ունենայ, հազիւ որ մենք ընենք ատիկա: Ան ոչ միայն պիտի դառնայ իր դպրոցական խումբի լաւագոյն խաղացողը, այլեւ անոր խումբը պիտի յաղթէ իր նահանգի առաջ-

նութիւնը: Ան ամբողջական կրթաթոշակով պիտի ընդունուի որեւէ համալսարան եւ, ի վերջոյ, պիտի ըլլայ առաջինը «Ամերիկայի Պասքէթպոլային միութեան» ընտրուած յաւակնորդներու ցուցակին մէջ:

Կամ, օրինակ, ես կը մօտենամ գործարարի մը, որ մեծ խնդիրներ ունի, եւ կ'ըսեմ.

- Մենք գիտական յայտնագործութիւն մը ըրած ենք, որուն շնորհիւ կրնանք տալ քեզի միաժամանակ Տոնալտ Թրամփի, Սթիվ Ճոպսի եւ Պիլլ Կեյթսի լիութիւնը:

Ձեր կարծիքով, ի՞նչ պիտի ըսէ ան: Ան խանդավառուած պիտի բացականչէ.

- Ես կ'ուզեմ աստիկա: Ըրէ՛ք աստիկա ճիշդ հիմա:

Եւ ի՞նչ պիտի ընէ ան՝ այդ մարդոց լիարժէք կարողութիւնները ստանալէն յետոյ: Ան պիտի տեսնէ ներդրումային հնարաւորութիւններ, որոնք նախկինին անոր մտքէն չեն անցած, եւ մեծ յաջողութեան պիտի հասնի:

Շնորհքը չէ տուած մեզ ԼեՊրոն Ըէյմսի, Սթիվ Ճոպսի, Տոնալտ Թրամփի, Պիլլ Կեյթսի, Ալպերթ Էյնշթեյնի, Եոհան Սեպաստիան Պախի, Ռոճէ Ֆետերերի, եւ ո՛չ ալ պատմութեան ընթացքին ապրած ոեւէ ականաւոր տղամարդու կամ կնոջ լիութիւնը: Ո՛չ. այն կու տայ մեզի անծամբ Յիսուս Քրիստոսի լիութիւնը: Դուք կը հասկնա՞ք, թէ ի՞նչ մեծութեան մասին է խօսքը:

Այսպիսով, թերեւս ասիկա զարմացնէ շատերը, բայց Նոր կտակարանին մէջ Աստուած առաջին անգամ չէ ներկայացուցած շնորհքը՝ որպէս ծրիաբար տրուող պարգեւ, փրկութիւն կամ մեղքերու ներում: Առիթ տուէք պարզ բացատրել ասիկա: Ես յաւիտեան շնորհակալ եմ այս զարմանալի առաւելութիւններու համար, բայց ատոնք աւելի ուշ Նոր կտակարանին մէջ կը յայտնուին: Աստուած առաջին անգամ ներկայացուց շնորհքը՝ որպէս Յիսուս Քրիստոսի լիութեան փոխանցում: Ասիկա կը նշանակէ, որ այն ընդունողը կը ստանայ Անոր բնութիւնը եւ զօրութիւնը: Ահա թէ ինչու Յովհաննէսը համարձակ կը հռչակէ. «..որովհետեւ ինչպէս Ան [Յիսուսն] է, այնպէս ալ մենք ենք այս աշխարհին մէջ» (Ա. Յովհաննէս 4.17):

Դուք երբեք լսա՞ծ էք, որ ինչ որ ծառայող ըսէ. «Մենք ոչինչով կը տարբերինք մեղաւորներէն. մենք ընդամէնը ներուած ենք», կամ՝ «Մենք պարզապէս անարժան որդեր ենք», կամ՝ «Մենք՝ մարդիկս, մեղաւոր բնութիւն ունինք եւ ատոր գերին ենք»: Ինչպէ՞ս կրնայ Աստուածաշունչ կարդացող մարդը այսպիսի բաներ ըսել: Նոյնիսկ բնութիւնը աւելի լաւ կ'ուսուցանէ մեզ:

Դուք երբեք լսած էք, որ առիւթէն սկիւռ ծնի: Կամ՝ որ զտարիւն ազնուացել ձիէն որդ ծնի: Սուրբ Գիրքը կը յայտարարէ, որ մենք ոսկոր ենք՝ Անոր ոսկորէն, եւ մարմին ենք՝ Անոր մարմինէն (տե՛ս Եփես. 5.30): Խօսքը կ'ըսէ. «Սիրելիներ, հիմա մենք Աստուծոյ որդիներ ենք» (Ա. Յովհաննէս 3.2): Ոչ թէ *հետագային*՝ երբ Երկինք երթանք, այլ *հիմա* մենք արդէն Աստուծոյ որդիներ եւ դուստրեր ենք: Արդե՞օք Աստուած կրնայ ծնունդ տալ անարժան որդիի: Մենք ծնած ենք Աստուծմէ, եւ Անոր սերմը մեր մէջ է, այսինքն՝ մենք ունինք Անոր աստուածային բնութիւնը: Ինչպէս Ան, այնպէս ալ մենք ենք այս աշխարհին մէջ: Ոչ թէ հանդերձեալ կեանքին մէջ, այլ՝ *այս աշխարհին մէջ*:

Կրկին կարդանք Պետրոսի խօսքերը.

«Թող Աստուած *աւելի ու աւելի* շնորհք տայ ձեզի... Իր աստուածային զօրութեամբ [շնորհքով] Աստուած տուած է մեզի այն ամէնը, ինչին, որ կարիքը մենք ունինք՝ աստուածապաշտ կեանքով ապրելու համար» (Բ. Պետրոս 1.2,3, NLT):

Ջօրացման առումով, շնորհքի պարգեւը չի տրուիր մէկ անգամ՝ փրկութեան պահուն: Այն մշտապէս անհրաժեշտ է մեզի. մենք «աւելի ու աւելի շնորհքի» կարիքը ունինք: Ահա թէ ինչու Խօսքը կը պատուիրէ մեզի. «Ուրեմն, համարձակութեամբ մօտենանք շնորհքի աթոռին, որ... շնորհք գտնենք՝ պատշաճ ժամանակին օգնելու (կամ՝ կարիքի ժամանակ)» (Եբրայեցիս 4.16): Շնորհքը այն վառելիքն է, որմով մեր պահեստը միշտ պէտք է լեցուն ըլլայ:

Իսկ հիմա կարդացէ՛ք, թէ Յակոբոսը ինչ կը գրէ հաւատացեալներուն այն բանէն յետոյ, երբ կը ծածկագերծէ անոնց եսակեդրոն, շնացող կենսաոճը.

«Շնացողներ: Չէ՞ք հասկնար, որ ընկերութիւնը այս աշխարհին հետ, Աստուծոյ թշնամին կը դարձնէ ձեզ... Բայց Ան *նոյնիսկ աւելի շատ շնորհք* կու տայ մեզի՝ այդպիսի չար ցանկութիւններուն հակառակ կենալու համար... Ուրեմն, խոնարհեցուցէ՛ք դուք ձեզ Աստուծոյ առջեւ» (Յակոբոս 4.4,6, NLT):

Կրկին ուշադրութեամբ կարդացէ՛ք այս խօսքերը: «Ան *նոյնիսկ աւելի շատ շնորհք* կու տայ մեզի»՝ եսասիրական ցանկութիւններուն ընդդիմանալու համար: Աստուածաշունչի «Էմփիլիֆայտ» թարգմանութիւնը այսպէս կը վերարտադրէ այս խօսքը. «Բայց Ան մեզի աւելի ու աւելի շնորհք կու տայ»: Այս անարժանաբար ստացուած զօրութիւնը սուրբ կեանքով ապրելու կարողութիւն կու տայ մեզի, որ նախկինին չունէինք:

Այս շնորհքը կը հպի անոնց, որոնք կը խոնարհեցնեն իրենք զիրենք՝ հաւատալով Անոր Խօսքին: Այն կը ներարկէ, կը լեցնէ Անոր աստուածային բնութեան ուժը մեր էութեան մէջ: Հպարտ մարդիկ կը կեդրոնանան իրենց կարողութեան վրայ, իսկ խոնարհները կախուած են Աստուծոյ զօրութենէն: Դաւիթի աւագ եղբայրը՝ Եղիաբը, հպարտ մարդ էր: Ան կախուած չէր Աստուծոյ զօրութենէն, այդ պատճառով ալ պէտք է իր ուժերով բախէր Գողիաթին հետ (տե՛ս Ա. Թագաւորաց 16,17 գլխ.): Դաւիթը խոնարհ մարդ էր. ան Աստուծոյ ուժով հակառակուեցաւ այդ հսկային: Մենք զիտենք, թէ ինչպէս ամէն ինչ աւարտեցաւ:

Յիսուսը ցոյց տուաւ մեզի, թէ ինչ կը նշանակէ Աստուծոյ շնորհքէն կախուած ըլլալը: Գեթսեմանիի պարտէզին մէջ Ան անասելի պայքարի մէջ էր: Անոր մարմինը կը ցանկար փախչիլ այն բանէն, ինչ որ պատուիրած էր Անոր Հայրը, բայց Ան խոնարհեցուց Ինքզինքը աղօթքի մէջ, մինչ Անոր աշակերտները քնացած էին: Ան աղաղակեց այս «վառելիքի» համար, որպէսզի կարողանար յաղթահարել Իր մեծագոյն պատերազմը եսասիրութեան դէմ: Ատիկա կարիքի ժամանակ էր, եւ Ան համարձակ եկաւ, որպէսզի Իր Հօր զօրացնող շնորհքը ստանար եւ յաղթահարէր այդ պայքարը: Անոր աշակերտները ծախողեցան, սակայն Յիսուսը նախապէս զգուշացուցած էր զանոնք. «Հոգին կը կամենայ, բայց մարմինը թոյլ է» (Մատթէոս 26.41, NLT):

Իմ պատմութեան մէջ, երբ պէտք էր սիզամարզը հնծէի մինչեւ խաղին երթալը, ես չէի գնած ո՛չ սիզամարզ հնծող մեքենան, ո՛չ վառելիքը, եւ չէի ալ արժանացած ատոնց: Երկուքն ալ պարգեւ էին իմ հօրմէն: Սիզամարզ հնծող մեքենան կրնար խորհրդանշել մեր նոր բնութիւնը, որ կը տրուի միայն մէկ անգամ: Ունենալով այն՝ ես սիզամարզ հնծելու ներուժ ստացած էի, սակայն վառելիք չունենալուն պարագային ես նոյն վիճակին մէջ էի, ինչ որ այն ժամանակ, երբ հնծող մեքենայ չունէի: Վառելիքը կը խորհրդանշէ շնորհքի *զօրութիւնը*: Վառելիքը մէկ անգամուան պարգեւ չէ. ինծի վառելիք պէտք էր ամէն անգամ, երբ կը հնծէի սիզամարզը:

Շնորհքը մեզի Անոր բնութիւնը տուաւ, երբ փրկուեցանք, բայց մենք աւելի ու աւելի շնորհքի պէտք ունինք, որպէսզի զօրացնենք մեր բնութիւնը եւ ապրինք Յիսուսին պէս:

«Կարելիներ» եւ «կարելի չէ»-ներ

Կրկին կարդանք Պօղոսի խօսքերը՝ ուղղուած եփեսացիներուն: Ատոնք աւելի իմաստաւորուած պիտի դառնան մեզի համար այն բանէն յետոյ, ինչ որ մենք նոր բացայայտեցինք:

«Տիրոջ իշխանութիւնով եւ հետեւեալը կ'ըսես՝ այլեւս մի՛ ապրիք այնպէս, ինչպէս հեթանոսները, որովհետեւ անոնք անյուսօրէն շփոթուած են... Անոնք ամօթի զգացում չունին: Անոնք կ'ապրին դիրասէր հաճոյքներու համար եւ պատրաստակամօրէն ամէն տեսակի պղծութիւն կը գործեն... Հագէ՛ք նոր բնութիւնը, որ ստեղծուած է Աստուծոյ նմանութեամբ՝ ճշմարտապէս արդար եւ սուրբ» (Եփեսացիս 4.17,19,24, NLT):

Կորսուածներու եւ հաւատացեալներու միջեւ պէտք է յստակ տարբերութիւն ըլլայ. այն պէտք է ըլլայ ոչ միայն մեր դաւանանքին մէջ, այլեւ՝ մեր կեանքին: Պատճառը այն է, որ մենք նոր բնութիւն ունինք: Բայց պէտք է հագնինք զայն: Պարզապէս՝ մենք պէտք է խոնարհեցնենք մենք մեզ՝ հաւատալով եւ առիթ տալով շնորհքի զօրացմանը: Նայեցէ՛ք ասոր հետեւեալ ձեւով. հայրս կրնար սիզամարգ հնձող մեքենան նուիրել ինձի, բայց այն անօգուտ պիտի ըլլար, եթէ ես վառելիք չլեցնէի ասոր մէջ, չմիացնէի շարժիչը եւ չօգտագործէի այն: Մեր նոր բնութիւնը հագնիլը կը նշանակէ *օգտագործել այն*:

Պօղոսը կը շարունակէ նկարագրել, թէ ինչպէս ասիկա պէտք է գործնականօրէն կատարուի.

«Ուրեմն, դադրեցէ՛ք սուտեր խօսելէ: Եկէ՛ք ճշմարտութիւնը խօսինք մեր մերձաւորներուն, որովհետեւ բոլորս միեւնոյն մարմինի անդամներն ենք: Եւ «մի՛ մեղանչէք՝ թոյլ տալով, որ բարկութիւնը վերահսկէ ձեզ»: Թոյլ մի՛ տաք, որ ձեր բարկութիւնը մնայ արեւը մայր մտնելէն յետոյ, որովհետեւ բարկութիւնը ոտքի դնելու տեղ կու տայ սատանային: Եթէ դուք գող էք, դադրեցէ՛ք գողնալէ: Փոխարէնը՝ քրտնաջան աշխատեցէ՛ք ձեր ձեռքերով եւ առատօրէն տուէ՛ք անոնց, որոնք կարիքի մէջ են: Մի՛ օգտագործէք աղտոտ կամ վիրաւորական խօսքեր» (Եփեսացիս 4.25-29, NLT):

Մարդիկ կ'ըսեն. «Հին կտակարանը լեցուն է «կարելիներով» եւ «կարելի չէ»-ներով, բայց Նոր կտակարանը կը խօսի միայն շնորհքի մասին: Այժմ համաժողովներու ընթացքին եւ եկեղեցիներուն մէջ մարդոց նոյնիսկ կը սորվեցնեն, որ Աստուծոյ շնորհքը կ'ազատէ մեզ պատուիրանները պահելէն, եւ շատերը համոզուած են ասոր մէջ: Այնուամենայնիւ, Յիսուս ըսաւ, որ միայն Իր *պատուիրանները* լսողներն ու կատարողները պիտի վերապրին Իր յայտնուած ներկայութիւնը: Այս ուսուցիչները կը կարծեն, որ ազատութիւն կու տան իրենց ունկնդիրներուն, այնինչ, իրականութեան մէջ անոնք ժողովուրդը կը հեռացնեն Աստուծոյ ներկայութենէն: Որքա՛ն ցաւալի է:

Այն, որ Յիսուսը պատուիրաններ կու տայ մեզի, փաստ է: Ան կը յանձնարարէ մեզի. «Ուրեմն, գացէ՛ք բոլոր ազգերը աշակերտեցէ՛ք... անոնց սորվեցնելով, որ ամէն ինչ, որ ձեզի *պատուիրեցի*, պահեն» (Մատթէոս 28.19,20): Ան չըսաւ. «Ամէն ինչ, որ ձեզի *առաջարկեցի*»:

Այսօր շատերը կը սիրեն Յիսուսին խօսքերը Իր գերագոյն իշխանութեան մասին, բայց թեթեւօրէն կը վերաբերին այն հատուածներուն, որոնց մէջ Ան կոչ կ'ընէ աստուածապաշտ վարք ունենալ: Անկասկած՝ Աստուած գերիշխան է, սակայն առանց հասկնալու, որ մարդը ազատ ընտրութիւն ունի՝ մենք կրնանք յայտնուիլ այնպիսի վիճակի մէջ, որ սկսինք դիտարկել Անոր պատուիրանները աստուածապաշտ կեանքի մասին ընդամէնը որպէս առաջարկներ:

Պատուիրաններ

Առաքեալները փոխանցեցին մեզի Յիսուսին պատուիրանները: Առիթ տուէք կրկնել Յովհաննէսին խօսքերը. «Մենք կրնանք վստահ ըլլալ, որ կը ճանչնանք Ձինք, եթէ կը հնազանդինք Անոր պատուիրաններուն» (Ա. Յովհաննէս 2.3, NLT): Նոյն ուղերձին մէջ ան կը գրէ. «զԱստուած սիրելը կը նշանակէ՝ պահել Անոր պատուիրանները» (Ա. Յովհաննէս 5.3, NLT):

Պօղոս կը գրէ. «Որովհետեւ գիտենք, թէ ինչպիսի պատուիրաններ տուինք ձեզի Տէր Յիսուսին մէջ» (Ա. Թեսաղոնիկեցիս 4.2): Անմիջապէս անկէ յետոյ ան կը գրէ. «Աստուծոյ կամքը ձեզի համար՝ սուրբ ըլլալն է» (Ա. Թեսաղոնիկեցիս 4.3. NLT): Մենք պէտք է պահենք Յիսուսին պատուիրանները, որպէսզի սուրբ ապրինք:

Պետրոսը պարզօրէն կը խօսի սուրբ ապրելու պատուիրանի մասին: Ան կը նշէ այն ողբերգական իրողութիւնը, որ վերջին օրերուն մէջ մարդիկ պիտի նահանջեն հաւատքէն: Ան կը գրէ, որ անոնք պիտի մերժեն «այն *պատուիրանը, որ տրուեցաւ անոնց՝ սուրբ կեանքով ապրելու համար*» (Բ. Պետրոս 2.21, NLT): Այնպէս որ, Նոր կտակարանին մէջ մենք ստացած ենք պատուիրաններ, որոնք միասնաբար կարելի է անուանել «պատուիրան... սուրբ կեանքով ապրելու համար»:

Ուսումնասիրելով Պօղոս առաքեալի խօսքերը Եփեսացիներու 4.25-29-ին մէջ՝ մենք կը տեսնենք սուրբ կեանքով ապրելու միանշանակ պատուիրաններ.

Սուտեր մի՛ խօսիք:

Մի՛ մեղանչէ՛ք՝ առիթ տալով, որ բարկութիւնը վերահսկէ ձեզ:

Մի՛ գողնաք:

Մի՛ օգտագործէք աղտոտ կամ վիրաւորական խօսքեր:

Կրնա՞ք հիմա ըսել, որ Նոր կտակարանին մէջ չկան «կարելի չէ»-ներ: Այս պատուիրանները ճիշդ այդպիսին կը թուան ինծի: Իսկ ձե՞զի:

Նայեցէ՛ք ատոնց հետեւեալ կերպով. երբ մանուկ էի, հայրս պատուիրեց ինծի. «Որդի՛ս, փողոց մի՛ վազեր գնդակիդ ետեւէն՝ առանց երկու կողմերը նայելու»: Ասիկա «կարելի չէ» էր, բայց այն խիստ կամ բացասական չէր: Հայրս կու տար ինծի այս պատուիրը, որ ես յանկարծակի արկածի չենթարկուէի եւ երկարատեւ կեանք ունենայի:

Աստուած պարզապէս կ'ըսէ մեզի, թէ ինչ պէտք է չընենք, որ լիարժէք, արդիւնաւետ եւ երկարատեւ կեանք ունենանք: Եւ ամենալաւը այն է, որ մենք ունինք աստուածային բնութիւն եւ շնորհքի վառելիքը՝ Անոր պատուիրանները կատարելու համար:

Ղադրեցէ՛ք սուտեր խօսել

Քննարկենք այն «կարելի չէ»-ները, որոնք ես թուարկեցի:

Իմ ճամբորդութիւններու ընթացքին ես տեսած եւ լսած եմ շատ ցաւալի պատմութիւններ այն մասին, թէ ինչպիսի հետեւանքներ ունեցած են քրիստոնեաներու անազնիւ արարքները:

Վերջերս տասնհինգ գործարար տարած էի Մաչու Փիքչու՝ չորսօրեայ արշաւի Ինկերու արահետով: Հրաշալի ժամանակ էր. մենք կը դիտէինք տեսարժան վայրերը, կը ծառայէինք իրար եւ, պարզապէս, ծանր մարզում կը կատարէինք:

Ամէն մէկուն հետ քանի մը ժամ արշաւելու ընթացքին ես շարունակ պատմութիւններ կը լսէի այլ քրիստոնեայ գործարարներու մասին, որոնք կը ստէին՝ վաճառք իրականացնելու կամ գործարք կնքելու համար: Հաւատակից եղբայրներու հետ գործ ունենալու ժամանակ դատարկ եւ չկատարուած խոստումները սովորական բան էին, ոչ թէ բացառութիւն: Ինծի կը պատմէին քրիստոնեաներու մասին, որոնք կ'օգտագործէին անորակ նիւթեր, կը խախտէին ընդունուած աշխատանքային չափանիշներն ու կանոնները, կ'առաջարկէին ծառայութիւններ, որոնք, ի վերջոյ, չէին մատուցեր եւ չէին կատարեր իրենց երաշխիքային պարտաւորութիւնները եւ աւելին:

Այդ գործարարներէն մէկը, որ շինարար էր, պատմեց ինծի մէկ ուրիշ շինարարի մասին: Անոնք կ'աշխատէին միեւնոյն տարածքին մէջ: Այդ «եղբայրը» փոսեր փորած էր ուրիշ սեփականատէրերու հողատարածքներուն մէջ (նաեւ այն մարդուն, որ կ'արշաւէր հետս) եւ ատոնց մէջ իր շինարարական մնացուկները լեցուցած էր: Անկէ յետոյ ան պար-

զապէս հողով ծածկած էր ատոնք, փոխարէնը պէտք վճարէր՝ ատոնք պատշաճ կերպով տեղափոխելու համար: Ես շատ աւելի վատ պատմութիւններ լսեցի այդ արշաւի ընթացքին, բայց այս մէկը յատկապէս տպաւորուեցաւ մէջս, որովհետեւ այդ «եղբայրը» այդ համայնքի աւետարանական եկեղեցիներէն մէկուն փառաբանութեան խումբի առաջնորդն էր:

Սուտը տարածուած չէ միայն գործարար ոլորտին մէջ. այն գոյութիւն ունի կառավարական, կրթութեան, հոգեւոր ծառայութեան եւ առողջապահութեան ոլորտներուն մէջ, ինչպէս նաեւ՝ ընտանիքի անդամներուն եւ ընկերներուն միջեւ: Մենք կը ստենք, որ դուրս ելլենք դժուար իրավիճակներէն, պաշտպանենք մեր անունը, դիրք կամ պաշտօն ունենանք կամ աւելի արագ հասնինք մեր ցանկալի նպատակներուն: Ստելը գրաւիչ է. այն կրնայ արագացնել այնպիսի բաներու ընթացքը, որոնց համար մենք պէտք է Աստուծոյ վստահինք:

Որքա՛ն յաճախ մենք կ'ըսենք մարդոց, որ կ'աղօթենք իրենց համար, այնինչ իրականութեան մէջ չենք աղօթեր: Մենք խոստումներ կու տանք մեր զաւակներուն եւ մինչեւ վերջ չենք կատարեր: Մենք կը խախտենք պայմանաւորուածութիւնները՝ խոստանալէն յետոյ: Մենք չափազանցութիւններ կ'ընենք՝ մեր փաստարկները ծանրակշիռ դարձնելու համար: Այս ամէնը սուտեր են, որոնց վերջաւորութեան մենք անխուսափելիօրէն վնաս կը պատճառենք մարդոց:

Թոյլ տուէք կրկին շեշտադրել այս կարեւոր փաստը. պահելով Յիսուսի պատուիրանները՝ մենք պիտի ստանանք *Անոր ներկայութեան խոստումը*: Սաղմոսերգուն կը հաստատէ այս ճշմարտութիւնը՝ հարցնելով. «Ո՞վ կրնայ մուտք գործել Քու [Աստուծոյ] ներկայութեան մէջ» (Սաղմոս 15.1, NLT): Անկէ յետոյ ան կը պատասխանէ. այն մարդիկ, որոնք «կը պահեն իրենց խոստումները, նոյնիսկ՝ երբ ատիկա ցաւ կը պատճառէ անոնց» (խօսք 4): «Մեսիճ» Աստուածաշունչը հետեւեալ կերպով կը վերարտադրէ այս խօսքը. «Պահէ՛ քու խօսքը, նոյնիսկ՝ երբ ատիկա սուղ արժէ քեզի համար»:

Եթէ որոշենք անտեսել Պօղոսին պատուէրը չստելու մասին, որ ան ուղղած էր եփեսացիներուն, մենք կրնանք դառնալ Յակոբոսի պատուէրին: Ան կը գրէ. «Մի՛ պահէք ճշմարտութիւնը՝ պարծենալով եւ ստելով» (3.14, NLT): Պօղոսը եւս մէկ այսպիսի պատուէր կ'ուղղէ կողոսացիներուն. «Մի՛ ստէք իրար» (3.9, NLT): Կրնա՞ք պատկերացնել: Պօղոսը, որուն Աստուած գործածեց՝ շնորհքի մասին մեծագոյն յայտնութիւնը տալու համար, «կարելի չէ»-ներ կը պատուիրէ մեզի: Եթէ մենք

բազմաթիւ արտայայտութիւններ առանձնացնէինք Նոր կտակարանէն, որոնք գրած են թէ՛ Պօղոսը, թէ՛ միւս առաքեալները, մենք կրնայինք մեղադրել զանոնք շնորհքի ուսմունքը հակասելու մէջ, այնինչ՝ իրականութեան մէջ անոնց խօսքերուն մէջ հակասութիւն չկայ:

Եթէ մենք միայն կեդրոնանանք այն փաստի վրայ, որ շնորհքը՝ մեր ծածկոցն է, եւ չսորվեցնենք հաւատացեալներուն զօրացած կեանքի մասին, որ շնորհքի բաղկացուցիչ մասն է (այս պարագային՝ չստելու մասին), եկեղեցիին մէջ կը գտնուին մարդիկ որ կ'արդարացնեն այս վարքագիծը՝ իրենց նպատակներուն հասնելու համար: Կարելի՞ է ըսել, որ ոչ հաւասարակշռուած ուսմունքը եւ համոզմունքները շնորհքի մասին, որոնք չեն շեշտադրեր սրբութիւնը, այսպիսի արդիւնքի կը յանգեցնեն: Կարելի՞ է ըսել, որ այդպիսի ուսմունքը կը սորվեցնէ մեզի՝ անտեսել մեր խիղճը:

Թոյլ մի՛ տաք, որ բարկութիւնը վերահսկէ ձեզ

Երկրորդը մեր ցուցակին մէջ հետեւեալն է. *«Մի՛ մեղանչէ՞ք՝ թոյլ տալով, որ բարկութիւնը վերահսկէ ձեզ»*: Ես տեսած եմ այն կանանց եւ տղամարդոց դէմքերը, որոնք կ'ապրին բարկացկոտ կողակիցի հետ: Անոնք կը պատմէին, թէ ինչպիսի՛ վախ կը տիրէր անոնց տունին մէջ, երբ այդ մարդիկ, որոնք կը դաւանէին, որ հաւատացեալ էին, բարկութեան պոռթկումներ կ'ունենային: Իսկ ի՞նչ կը զգան այն մանուկները, որոնց ծնողներու բարկութիւնը կ'ուղեկցի բռնութեամբ: Այսպիսի պոռթկումներ ունեցող մարդիկ մարմնական վնասներ կը հասցնեն իրենց ընտանիքի անդամներուն եւ կը փճացնեն տան գոյքը: Չոհերը կ'ապրին սարսափի մէջ՝ սպասելով յաջորդ պոռթկման: Բարկութիւնը կործանարար ազդեցութիւն կը ձգէ ընտանիքի մթնոլորտին վրայ, եւ ընտանիքը կը դադարի ապաստարան ըլլալէն: Կիրակի առաւօտեան եկեղեցիին մէջ անոնք կը նմանին սովորական ընտանիքի, բայց ատիկա ընդամենը ձեւականութիւն է: Ցաւօք, մենք որոշած ենք թեթեւօրէն վերաբերիլ այս պատուիրանին կամ անտեսել զայն:

Այս ցուցմունքը միակը չէ: Առաքեալներու նամակներուն մէջ կարելի է գտնել այլ պատուիրաներ բարկութիւնը ձգելու մասին: Պօղոսը ատելի անմիջական կը գրէ. «Ազատեցէ՛ք ամբողջ դառնութենէն, զայրոյթէն, բարկութենէն [եւ] կոպիտ բառերէն» (Եփեսացիս 4.31, NLT): Յակոբոս կը պատուիրէ. «Բոլորդ պէտք է ըլլաք... դանդաղ՝ բարկանալու հա-

մար: Մարդու բարկությունը չի կատարեր այն արդարությունը, որ Աստուած կ'ուզէ» (Յակոբոս 1.19,20, NLT): Պողոսը կրկին կը պատուիրէ կողոսացիներուն. «Ազատեցէ՛ք բարկութենէն [եւ] զայրոյթէն» (3.8, NLT):

Թոյլ տուէ՛ք կրկին հարցնել. Արդե՞օք այս խօսքերը՝ գրուած այն մարդոց կողմէն, որոնք ստացած են Աստուծոյ շնորհքի մասին յայտնութիւնը, չեն նմանիր «կարելի չէ»-ներուն: Հնարաւօ՞ր է, որ մենք ինչ որ բան ճիշդ չենք հասկցած:

Մի՛ գողնաք

Ղադրեցէ՛ք գողնալէ: Որքա՞ն յաճախ մենք պարտքով գումար կ'առնենք եւ չենք վերադարձներ: Որքա՞ն յաճախ մենք կը յայտնուինք մեծ պարտքերու մէջ: Մենք կը հաւատանք, որ ի վերջոյ պիտի ստանանք Աստուծոյ օրհնութիւնը, եւ կը շարունակենք անարգել իմաստութիւնը՝ իյնալով աւելի մեծ պարտքերու մէջ: Ի վերջոյ՝ մենք կրնանք սնանկ յատարարել մենք մեզ: Այս ընդունած բառը առիթ կու տայ մեզի չխոստովանիլ, որ մենք չենք վճարած այն, ինչ որ պարտք առած էինք մարդոցմէ:

Որքա՞ն յաճախ մենք օգտագործած ենք մեր ընկերութեան միջոցները մեր անձնական կարիքներուն համար: Ատիկա կը կոչուի ուրիշի ունեցուածքին իւրացում: Մենք վստահօրէն կը հռչակենք. «Ես քրիստոնէայ եմ եւ փրկուած եմ Աստուծոյ շնորհքով», բայց չենք հնազանդիր Յիսուսի պատուիրաններուն, որոնք Ան Իր առաքեալներու միջոցով տուած է:

Հովիւ մը, որուն հետ ես կ'աշխատէի, կը յաճախէր եկեղեցական բոլոր հաւաքոյթներուն, կը տեսներ այն հրաշքները, որոնք տեղի կ'ունենային ծառայութիւններու ընթացքին, եւ անգամ մը նոյնիսկ կը պարծենար քովս, որ կարող էր դիրութեամբ աղօթել երկարատեւ ծոմի ժամանակ: Բայց ամբողջ այդ ընթացքին ան հազարաւոր տոլարներ կ'իրացնէր եկեղեցիէն: Ի վերջոյ ան բռնուեցաւ: Ասիկա միայն պատմութիւն մըն է այն մասին, որ քրիստոնէաները կը գողանան եւ ինչ որ ձեռով կ'արդարացնեն ասիկա:

Մեզմէ քանի՞ները սխալ հարկային տուեալներ ներկայացուցած են՝ չնշելով եկամուտներու մէկ մասը: Այս պարագային մենք կ'անտեսենք մէկ ուրիշ պատուիրան, որ Պողոսը տուած է. «Վճարեցէ՛ք ձեր հարկերը» (Հռովմայեցիս 13.6, NLT): Մենք կ'արդարացնենք մեր գողութիւնը աշխարհիկ առաջնորդներու «սխալ կառավարմամբ», բայց ե՞րբ պէտք է հասկնանք, որ սխալը սխալով չի շտկուիր:

Մի՛ օգտագործէք աղտոտ կամ վիրաւորական խօսքեր

Աստուածաշունչի «Եմփիլիֆայտ» թարգմանութիւնը հետեւեալ կերպով կը ներկայացնէ այս պատուիրանը. «Թող ոչ մէկ աղտոտ կամ պիղծ խօսքեր, ոչ մէկ չար բառ եւ ոչ մէկ անառողջ կամ անարժէք խօսակցութիւն [երբեք] ելլէ ձեր բերանէն» (Եփեսացիս 4.29): Ես յաճախ ծառայած եմ մարդոց, որոնք վիրաւորանքներ ստացած են ուրիշ հաւատացեալներէ: Կտրուկ եւ վիրաւորական խօսքերը մեծ ցաւ պատճառած են անոնց: Անոնց անձերը վերքեր ստացած են, որոնց բժշկութեան համար ժամանակ կը պահանջուի:

Ես շատ անգամներ պարապ խօսակցութիւններ լսած եմ հաւատացեալներու միջեւ, նոյնիսկ՝ անբարոյ կատակներ ծառայողական գրասենեակներուն մէջ: Իսկ անվայել խօսքերը ամպիոնէն՝ արդէն չլսուած բան չէ:

Վերջերս կը ճաշէի երիտասարդ զոյգի մը հետ, որոնք հրաշալի եկեղեցի մը կը հովվեն: Անոնք կը համակրէին միջազգային ծառայութեան մը՝ համարելով այն օրինակ իրենց համար: Անգամ մը այդ զոյգին հնարաւորութիւն ընծայուած է ճաշելու այդ կազմակերպութեան անուանի առաջնորդներէն մէկուն հետ: Ճաշի ընթացքին այդ մարդը քանի մը անգամ խիստ անվայել արտայայտութիւններ օգտագործած է: Այդ օրուրնէ քանի մը ամիս անցած էր, բայց այդ զոյգը տակաւին ուշքի չէր եկած տեղի ունեցած դէպքէն:

Մենք թերագնահատած ենք շնորհքը

Ի՞նչ տեղի ունեցած է: Արդեօ՞ք մենք այնքան իւրայատուկ դարձած ենք, որ արդէն մէկ կողմ նետած ենք աստուածապաշտ վարքը: Արդեօ՞ք մենք զոհաբերած ենք մեր վկայութիւնը, որպէսզի աւելի համապատասխանինք մեզ շրջապատող աշխարհին: Ես միանշանակ կողմ եմ ժամանակակից, առաջադէմ եւ զարգացած ըլլալուն, բայց ոչ՝ Աստուծոյ խօսքը փոխզիջման ենթարկելու հաշուին:

Մենք պէտք է հետեւեալ հարցը տանք. եթէ առաքեալները անհրաժեշտ համարեցին պատուիրաններ տալը մեզ աստուածապաշտ կեանքի մասին, ինչո՞ւ մենք չենք յիշատակեր ատոնք: Մի՞թէ մենք աւելի շատ գիտենք, քան անոնք: Մի՞թէ մենք աւելի շատ բան գիտենք, քան Յիսուսը:

Հնարաւոր է, որ թշնամին գայթակղեցուցած է մեզ, Եւային պէս: Այս անգամ ամէն բան քիչ մը ուրիշ ձեւով ընթացած է: Եւան լաւ գիտէր, որ Աստուած պատուիրած էր չուտել բարիի եւ չարի գիտութեան ծառի պտուղը: Այնպէս որ, թշնամին պէտք է համարձակ ըլլալով դիմէր՝ անմիջականօրէն հակառակելով Աստուծոյ Խօսքին, քանի որ անոր ծրագիրը կրնար բացայայտուիլ: Այս առաջադրանքը զգուշութիւն եւ խորամանկութիւն կը պահանջէր անորմէ:

Մենք աւելի դիրացուցած ենք սատանային գործը: Մենք պարզապէս յարմարաւէտ կերպով շարք մը հատուածներ անտեսած Աստուծոյ Խօսքէն: Կը յիշէ՞ք, որ Աստուած պատուիրեց. «Պարտէզին բոլոր ծառերէն համարձակ կէ՛ր, բայց բարիի ու չարի գիտութեան ծառէն մի՛ ուտեր, քանզի այն օրը, որ անկէ ուտես, անշուշտ պիտի մեռնիս» (Ծննդոց 2.16,17): Ի հակադրութիւն ասոր՝ ոմանք այսօր պիտի ըսէին. «Պարտէզի ամէն ծառերէն համարձակ կէ՛ր», եւ վերջ՝ առանց շարունակութեան: Անոնք կ'անտեսեն «...բայց... մի՛ ուտեր»-ը կամ «կարելիին չէ՛»-ն այն ամէնը, ինչ որ կապուած է ոչ աստուածապաշտ վարքի հետ:

Ըստ էութեան՝ մենք թերագնահատած ենք Աստուծոյ շնորհքը: Մենք հռչակած ենք, որ այն կը փրկէ, կը ներէ, եւ որ այն Աստուծոյ ծրագրաւոր շնորհուած պարգէն է: Անշուշտ, այս ամէնը ճշմարիտ է: Այնուամենայնիւ, մենք չենք հռչակած, որ այն կը փոխէ մեր ներքին էութիւնը եւ կը զօրացնէ մեզ, որ չապրինք առաջուան պէս: Մենք չենք ըսած մարդոց, որ այժմ անոնք զօրացած են՝ ոչ աստուածահաճոյ վարքագծերը ձգելու համար: Այսպիսի լռութեան արդիւնքը այն է, որ հաւատացեալները աստուածապաշտութեան մասին գիտելիք չունին, հետեւաբար կը զրկուին Աստուծոյ ներկայութենէն:

Մեր գործերը կարելոր են

Վերջերս՝ առաւօտուն, երբ հասած էի իմ Աստուածաշունչի ընթերցանութեան կիսուն, հետեւեալը պատահեցաւ: Ես պէտք է Սաղմոսներու եւ Եբրայեցիներու գիրքերէն կարդայի: Ես աւարտած էի իմ հատուածը Սաղմոսներէն եւ արդէն կը բանայի Եբրայեցիներու նամակը, երբ շատ պարզ զգացի, որ Սուրբ Հոգին կ'ըսէ ինձի. «Ո՛չ. մի՛ կարդար Եբրայեցիներու նամակը, կարդա՛ Յայտնութեան գիրքը»:

Ես սկսած էի կարդալ Յայտնութեան գիրքը քանի մը շաբաթ առաջ, կրկին՝ Սուրբ Հոգիին մղումով: Ես կարդացած էի առաջին երկու գլուխը, բայց, ցաւով կ'ըսեմ, կորսնցուցած էի հետաքրքրութիւնս, եւ յաջորդ օրը վերադարձած էի իմ ծրագրած ընթերցանութեան: Եւ ահա, երկու

շաբաթ յետոյ, ես վերադարձայ այն տեղը, ուրկէ դադրած էի կարդալ՝ երրորդ գլուխը: Քիչ մնացած էր, որ իյնայի աթոռէն, երբ կարդացի Յիսուսին խօսքերը Սարդեսի (Սարդիկէի) եկեղեցիին մէջ.

«Ես գիտեմ այն ամէնը, ինչ որ դուն կ'ընես եւ որ դուն համբաւ ունիս, որ ողջ ես, բայց դուն մեռած ես» (Յայտնութիւն 3.1, NLT):

Առաջինը՝ ուշադրութիւն դարձուցէք, որ Յիսուսը կը պնդէ. «Ես գիտեմ այն բաները, որոնք դուն կ'ընես», ոչ թէ «այն բաները, որոնց դուն կը հաւատաս»: Ան ո՛չ ալ կ'ըսէ. «Ես գիտեմ քու մտադրութիւնները»: Մէկ ուրիշ թարգմանութեան մէջ Ան կ'ըսէ. «Ես գիտեմ քու գործերը»: Ակնյայտ է, որ Ան չի խօսիր եկեղեցւոյ արդարութեան մասին՝ որպէս դիրքի, այլ անոնց արտաքին սրբութեան մասին՝ անոնց գործերու, վարքի, ընտրութիւններու եւ այլն:

Ան ցոյց կու տայ, որ այս եկեղեցիին ողջ ըլլալու համբաւ ունի: Ի՞նչը նման տպաւորութիւն կը ձգէր: Թերեւս անոնց անդամներու թիւը կ'աւելնար, անոնք հանրայայտ էին, անոնց ծառայութիւնները ոգեշնչող էին, եւ մթնոլորտը պարզապէս ելեկտրականացուած էր: Յիշեցէ՛ք, որ մենք կրնանք ոչ կանխամտածուած կերպով Աստուծոյ ներկայութիւնը փոխարինել լաւ մթնոլորտով: Եթէ սովորական համերգի երթանք, դուք պիտի տեսնէք մեծ բազմութիւն, վարակիչ խանդավառութիւն եւ մեծ ակնկալիք տպաւորիչ երեկոյին համար, բայց արդեօ՞ք բոլոր այդ միջոցառումները կը համապատասխանին Աստուծոյ սրտին մէջ եղածին:

Կարելոր հարց մը կայ, որ լիովին կը բացայայտէ եկեղեցւոյ ողջ կամ մեռած ըլլալը. արդեօ՞ք մենք կը հնազանդինք Յիսուսի խօսքերուն, թե՞ մեր համայնքը իրականութեան մէջ կը շեղի Անոր պատուիրաններէն: Եւս մէկ հարց՝ արդեօ՞ք մենք կը հռչակենք ճշմարտութիւնը, որ կը բացայայտէ մարդու սրտի վիճակը եւ վերջաւորութեան կը փոխէ անոր վարքը, թե՞ կը քարոզենք ուղերձներ, որոնք կը շոյեն մեր զգացումները եւ կ'ոգեշնչեն մեր միտքը:

Իր բացման խօսքէն յետոյ Յիսուս կը շարունակէ.

«Արթնցի՛ր: Զօրացո՛ւր այն փոքրը, ինչ որ դեռ կը մնայ, որովհետեւ ունիսկ այն, ինչ որ մնացած է, գրեթէ մեռած է: Ես կը համարեմ, որ քու գործերը չեն համապատասխանիր Իմ պահանջներուն» (խօսք 2, NLT):

Կրկին՝ Յիսուս կը խօսի անոնց գործերուն մասին, ոչ թէ համոզմունքներուն: Ինչպէս արդէն նշեցի, Նոր կտակարանին մէջ կան «կարելիներ» եւ «կարելիներ չէ »-ներ, եւ այդ պատուիրանները ուղղուած

են մեր գործերուն: Համաձայն Յիսուսին՝ այս եկեղեցին չի ձգտիր եւ չի յարիր սրբութեան կեանքին: Ան կը շարունակէ.

«Վերադարձի՛ր այն բանին, ինչը որ դուն լսեցիր եւ ինչին հաւատացիր սկիզբը. հաստատ յարի՛ր ատոր: Ապաշխարէ՛ եւ կրկին դարձիր Ինձի: Եթէ չարթննաս, ես յանկարծակի պիտի գամ քովդ՝ այնքան անսպասելի, որքան գողը» (Յայտնութիւն 3.3, NLT):

Յիշեցէ՛ք՝ Յիսուս կը դիմէր Սարդեսի (Սարդիկէի) եկեղեցւոյ, ոչ թէ քաղաքին: Բայց եթէ Անոր խօսքերը միայն նախատեսուած ըլլային այս պատմական եկեղեցւոյ համար, ատոնք չէին յայտնուիր Սուրբ Գիրքին մէջ: Այն, որ Անոր խօսքերը գրուած են, կը նշանակէ, որ ատոնք մարգարէական գործածութիւն ունին մեր օրերուն համար: Եւ ատոնք կը վերաբերին հաւատացեալներուն, ինչպէս եւ այն ժամանակուան, երբ խօսուած էին: Անոր խօսքերը ուղղուած են մեզի, քանի որ Աստուծոյ Խօսքը կենդանի է: Այնպէս որ, ես պիտի անդրադառնամ Յիսուսի խօսքերուն այս համայօդուածով:

Յիսուս կը թելադրէ մեզի վերադառնալ այն բաներուն, որոնց մենք կը հաւատայինք սկիզբը: Ուրիշ ձեւով եթէ ըսենք՝ մենք շեղած ենք սուրբ կեանքէն: Մենք շնորհքի այնպիսի վարդապետութիւն կազմած ենք, որ առիթ կու տայ մեզի ապրիլ՝ ինչպէս մեզ շրջապատող անհաւատ մարդիկ: Այս ուսմունքը լաւ կը թուայ, բայց արդեօ՞ք այն Աստուծոյ Խօսքն է:

Յիսուս կը պատուիրէ եկեղեցիին ապաշխարել եւ վերադառնալ Իր խօսքերուն: Կան ժամանակակից ուսուցիչներ, որոնք կը յայտարարեն, որ քրիստոնէայ դառնալուն պէս մենք այլեւս ապաշխարելու կարիք չունինք, որովհետեւ մեր բոլոր անցեալ, ներկայ եւ ապագայ մեղքերը ինքնաբերաբար կը ներուին: Եթէ ասիկա ճիշդ է, ինչո՞ւ Յիսուս կը պատուիրէ մեզի՝ Իր եկեղեցւոյ, ապաշխարել եւ վերադառնալ Իրեն:

Եթէ ուշադրութիւն դարձնէք այն ոչ հաւասարակշռուած «շնորհքի» ուսմունքներուն, որոնք այսօր կը գրաւեն բազմաթիւ մարդոց, այդ նիւթերը քարոզող առաջնորդները մեծ մասամբ մեծցած են օրինապաշտական միջավայրի մէջ եւ սրբութեան մասին խեղաթիրուած ուսմունքներու ազդեցութեան տակ: Այո՛, սրբութիւնը խեղաթիրուած է բազմաթիւ շրջանակներու մէջ, սակայն սրբութիւնը հիմնադրոյթ է քրիստոնէութեան մէջ, եւ ասիկա անփոփոխ փաստ է: Եկեղեցւոյ պատմութեան ամբողջ ընթացքին կանչը դէպի սրբութիւնը եղած է ե՛ւ մեր միաս-

նական առաքելության, ե՛լ անձնական ընթացքի էապէս կարելոր մար: Մենք պէտք է վերադառնանք մեր հիմքերուն՝ այն ամենուն, ինչ որ «լսած ենք» եւ ինչին «հաւատացած ենք սկիզբը»:

Յիսուս կը շարունակէ.

«Սակայն կան քանի մը անձեր Սարդեսի (Սարդիկէի) եկեղեցւոյ մէջ, որոնք չեն աղտոտած իրենց հանդերձները չարութեամբ: Անոնք պիտի քալեն հետս՝ սպիտակ հագած, որովհետեւ անոնք արժանի են» (Յայտնութիւն 3.4, NLT):

Ուշադրութիւն դարձուցէ՛ք «աղտոտել իրենց հանդերձները» արտայայտութեան: Յիշեցէ՛ք Պօղոսին խօսքերը, որոնք կը պատրաստեն մեզ Աստուծոյ ներկայութեան համար. «...մեր անձերը սրբենք հոգիի եւ մարմինի ամէն պղծութենէն, սրբութիւնը կատարենք Աստուծոյ ահով» (Բ. Կորնթացիս 7.1): Յիսուս կը շտկէ այս եկեղեցւոյ ընթացքը՝ կոչ ընելով վերադառնալ սուրբ կեանքին եւ չաղտոտել մարմինի եւ հոգիի հանդերձները անաստուած վարուելակերպով: Կատարելով Անոր պատուէրը՝ մենք պատրաստ պիտի ըլլանք թէ՛ Անոր ներկայութեանը, թէ՛ Անոր վերադարձին, որովհետեւ այս խօսքին մէջ Ան կ'ըսէ. «Օրհնուած են անոնք, որոնք կը սպասեն Ինծի, որոնք պատրաստ կը պահեն իրենց հանդերձները» (Յայտնութիւն 16.15, NLT): Ան կ'ամփոփէ՝ ըսելով.

«Բոլոր յաղթողները սպիտակ պիտի հագնին: Ես երբեք չեմ ջնջեր անոնց անունները Կեանքի գիրքէն, բայց պիտի յայտնեմ Իմ Հօրը եւ Անոր հրեշտակներուն առջեւ, որ անոնք Իմս են: Որեւէ անձնաւորութիւն, որ լսելու ականջներ ունի, պէտք է լսէ Հոգին եւ հասկնայ, թէ ինչ կ'ըսէ Ան եկեղեցիներուն» (Յայտնութիւն 3.5,6, NLT):

Կեանքի գիրքէն ինչ որ մէկուն անունը ջնջելը շատ լուրջ բան է: Այնուամենայնիւ, այս խօսքերը դուրս ելան անմիջապէս Փրկիչին շուրթերէն: Շատ կարելոր է, որ մենք մեծ ուշադրութեամբ լսենք այն, ինչ որ Աստուծոյ Հոգին կը խօսի Աստուծոյ՝ գրուած խօսքի միջոցով: Նոյնպէս կարելոր է, որ մենք չանտեսենք այն հատուածները, որոնք չեն համապատասխաներ մեր անձնական համոզմունքներուն եւ ներկայիս տարածուած ուսմունքներուն:

Աստուած արդարացուցած է մեզ. մենք ոչինչ կրնանք ընել, որ վաստակինք այս դիրքը Քրիստոսի մէջ: Այնուամենայնիւ, ակնյայտ կը դառնայ, որ Ան մեծապէս կը՝ կարելորէ այս դիրքին համապատասխան սուրբ կեանք վարելը:

Պօղոս կը գրէ. «Որովհետեւ Աստուած յայտնած է Իր շնորհքը՝ մարդոց փրկութեան համար: Այդ շնորհքը կը խրատէ մեզ, որ ձգենք անաստուած կեանքը եւ աշխարհիկ ցանկութիւնները, եւ այս աշխարհին մէջ ապրինք զուսպ, արդար եւ աստուածապաշտ կեանքով» (Տիտոս 2.11,12, TEV): Ասիկա պարզ ցուցմունք է: Այդ պարագային, ինչո՞ւ մենք չենք ազդարարեր այս ճշմարտութիւնը մեր ամպիոններէն:

Եկէ՛ք երբե՛ք չդադրինք սորվեցնելէ, որ մենք չենք կրնար վաստակիլ Աստուծոյ բարեհաճութիւնը, ներումը եւ փրկութիւնը: Եկէ՛ք շարունակենք ազդարարել այս բարի լուրով: Այնուամենայնիւ, եկէ՛ք դադրի՛նք թերագնահատելէ Անոր շնորհքը: Եկէ՛ք հռչակենք ամբողջ ճշմարտութիւնը շնորհքի մասին:

ԲԱՐԻ՞, ԹԷ՞ ՕԳՏԱԿԱՆ

«Դուք կ'ըսեք՝ ինձի թոյլատրուած է ընել
որեւէ բան, բայց ամէն
ինչ չէ, որ օգտաւէտ է»:
— Ա. Կորնթացիս 10.23, NLT

...Ամբողջական սրբացումը ոչ միայն էապէս
կարելոր է՝ որպէս Երկինք մտնելու պայման, այլ...
նոյնպէս անհրաժեշտ է՝ երկրային
քրիստոնէական կեանքին մէջ առաւելագոյն
արդիւնքներու հասնելու համար:
— Տական Քլարք

Որպէս ծառայող, որ յաճախ կը քարոզէ եւ «կը բաժնեկցի» խօսքով՝ վրաս յատկապէս թարմացնող ազդեցութիւն կը գործէ Աստուծոյ այլ ծառայողներու ուղերձները լսելը: Վերջերս այսպիսի հնարաւորութիւն ունեցայ: Այն հովիւը, որ կը քարոզէր, մեծ յարգանք կը վայելէ մեր երկրին մէջ, մեծ եկեղեցւոյ առաջնորդ է եւ յայտնի է իր իմաստութեամբ տեղական եկեղեցւոյ աճի հարցին մէջ: Անոր ուղերձը հետաքրքրական էր, խրախուսող եւ յայտնութիւններ կը փոխանցէր: Հաւաքոյթին ներկայ հազարաւոր մարդիկ ուշադրութեամբ կը լսէին անոր:

Ինչ որ պահ մը ան դիտողութիւն մը ըրաւ, որ լաւ, իմաստուն եւ խոնարհ կը թուար, բայց այն անհանգստութիւն պատճառեց ինձի: Ան ըսաւ. «Այն, ինչ ես կը պատրաստուիմ ըսել, կրնայ քիչ մը բացասական թուալ: Սովորաբար ես այսպէս չեմ խօսիր, որովհետեւ ես չեմ յանդիմաներ մարդիկ իմ ուղերձներով: Ամբողջ յանդիմանութիւնը կը ձգեմ Սուրբ Հոգիին վրայ»:

Ես փորձեցի վանել ինձմէ այն բարկութիւնը, որ բարձրացաւ հոգիս մէջ, բայց չկարողացայ: Անցեալին մէջ լսած էի այսպիսի խօսքեր այլ առաջնորդներէ: Այդ արտայայտութիւնը տրամաբանական կը թուար.

ուրեմն, ինչո՞ւ ես մտահոգ էի: Այդ պահուն յիշեցի Պողոս առաքելի խօսքերը Տիմոթեոսին՝ իր երիտասարդ աշակերտին: Հաւաքոյթէն յետոյ ես գտայ այդ խօսքը.

«Խօսքը քարոզէ. անոր հասիր թէ՛ ժամանակին ըլլայ, թէ՛ ժամանակէն դուրս, յանդիմանէ՛, սաստէ՛, յորդորէ՛...» (Բ. Տիմոթեոս 4.2):

Առիթ տուէք նախ՝ ներկայացնել այս խօսքի համայօդուածը: Այն ժամանակ, երբ Պողոս կը գրէր այս նամակը, Տիմոթեոսը Եփեսոսի մէջ գտնուող շատ մեծ եկեղեցւոյ հովիւն էր: Նոր կտակարանի այս գլուխը՝ Պողոսի գրած վերջին խօսքերն են, ոչ միայն իր երիտասարդ աշակերտին, այլեւ՝ բոլորիս: Կը կարծեմ՝ ան կը զգար այդ աւարտը, եւ շատ զգուշօրէն ընտրած է թէ՛ իր թեման, թէ՛ բառերը:

Ես չէի ուզեր միայն մակերեսային գիտելիք ունենալ այն մասին, թէ ինչ նկատի ունէր Պողոսը «յանդիմանէ՛, սաստէ՛, յորդորէ՛» բառերով. այնպէս որ, սկսայ ուսումնասիրել այս խօսքը: Նախ՝ ես բացի Աստուածաշունչի «Էմփիլիֆայտ» թարգմանութիւնը՝ այն աւելի պարզ հասկնալու համար, բայց մինչեւ վերոյիշեալ խօսքի ընթերցումը, նախորդ խօսքը գրաւեց իմ ուշադրութիւնը.

«Ես ԿԸ ՊԱՏՈՒԻՐԵՄ [քեզ] Աստուծոյ առջեւ եւ Յիսուս Քրիստոսին, որ պիտի դատէ կենդանիները ոհւ մեռելները...» (Բ. Տիմոթեոս 4.1):

«Կը պատուիրեմ» բառը գրուած է գլխագիրերով: Ես չէի սխալած. ատիկա եղած էր շեշտադրման համար: Ես կապուեցայ իմ ընկեր Ռիք Ռենների հետ, որ տարիներէ ի վեր յունարէն լեզուի մասնագետ է, եւ հարցուցի այս բառին նշանակութիւնը: Ահա անոր պատասխանը.

«Յունարէն լեզուի մէջ «ՊԱՏՈՒԻՐԵՄ» բառը «տիւամարթուրոմայ»-ն է. այն կ'օգտագործուի, երբ պաշտօնեաները երդում կու տան պետական ծառայութեան համար: Երդումը ընդունող անձնաւորութիւնը մեծ լրջութեամբ կը կանչէ բոլոր աստուածները՝ հետեւելու եւ լսելու համար, իսկ յետոյ կոչ կ'ընէ երդումը տուողին՝ պատասխանատուութեամբ կատարել իր գործը եւ յիշել, որ աստուածները կը հետեւին անոր: Տիմոթեոսի պարագային, Պողոս կ'ըսէր (շրջասութեան տեսքով). «Ես կը կանչեմ զԱստուած՝ ականատես ըլլալու, երբ դուն ընդունիս այն խօսքերը, որոնք ես կը պատրաստուիմ ըսելու քեզի...»: Այս բառը խիստ հանդիսաւոր էր, եւ այն հասկնալի կը դարձնէր Տիմոթեոսին, որ աւելի լաւ է՝ ինքը լրջօրէն ականջ դնէր, որովհետեւ Աստուած անձամբ պիտի լսէր եւ հետեւէր իրեն: Ճիշդ ասիկա է պատճառը, որ այս խօսքի

մնացած մասը դատաստանի մասին է: Պողոս կը ցանկար, որ Տիմոթէոսը հասկնար այն խօսքի լրջութիւնը, որ կը պատրաստուէր ըսել, եւ որ իր երիտասարդ աշակերտը պիտի լսէր: «Պատուիրել» բառը մեծ պատասխանատուութիւն էր խօսքը ստացողին համար»:

Պողոսը շատ խիստ կը խօսէր այդ երիտասարդին հետ (նաեւ՝ մեր հետ)՝ ցոյց տալով, որ իր պատուէրը պէտք չէ ոչ պարտադիր համարուի: Ինչպէս նշեց Ռիկը՝ Պողոս երդում ըրաւ Տիմոթէոսին Աստուծոյ եւ Յիսուս Քրիստոսի ներկայութեամբ: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ Աստուած պիտի դատէր Տիմոթէոսը, ինչպէս նաեւ ոեւէ ուրիշ ծառայող, եթէ ան չկատարէր այս յանձնարարութիւնը:

«Ազդարարէ՛ եւ քարոզէ՛ Խօսքը: Պահէ՛ քու հրատապութեան գգացումը [եղի՛ր հասանելի, մօտիկ եւ պատրաստ], անկախ այն բանէն՝ հնարաւորութիւնը բարենպաստ կը թուայ, թէ՞ ոչ [Անկախ այն բանէն՝ ատիկա յարմար է, թէ՞ անյարմար, ցանկալի՞ է, թէ՞ անցանկալի, դուն՝ որպէս Խօսքի քարոզիչ, պէտք է ցոյց տաս մարդոց, թէ ինչ ձեւով անոնց կեանքերը սխալ են]» (Բ. Տիմոթէոս 4.2, AMP):

Աւետարանի ծառայողը պէտք է «ցոյց տայ մարդոց, թէ ինչ կերպով անոնց կեանքերը սխալ են». շատ տպաւորիչ է:

Ես անմիջապէս մտածեցի այն ուղերձի մասին, որ լսած էի. «Ձարմանալի չէ, որ այդ հովիւի արտայայտութիւնը անհանգստութիւն պատճառեց ինձի»: Այն լաւ կը թուար, բայց ճշմարտութիւնը չէր: Թէ՛ գիտակցաբար, թէ՛ անգիտակցաբար՝ ան ընտրած էր այն, ինչ որ լաւ կը թուայ, Աստուծոյ ծրագիրները ընտրելու փոխարէն: Այդ առաջնորդը դրած էր պատասխանատուութիւնը Սուրբ Հոգիին վրայ, այնինչ որ Պողոսը պարզ կ'ըսէ, որ այս հարցին մէջ մե՛նք պատասխանատու ենք:

Վերջերս շատ յայտնի հովիւ իր կնոջ հետ հարցազրոյցի հրաւիրուած էր միջազգային հաղորդման մը: Հաղորդավարը բարձրացուց սեռական անբարոյութեան թեման, եւ անոնք պատասխանեցին. «Մենք չէ, որ պէտք է ըսենք մարդոց՝ ինչպէս ապրիլ»:

Ես գիտեմ, որ այդ զոյգը կը սիրէ մարդկութիւնը: Անոնք կը ցանկան, որ կորսուածները լսեն Աւետարանը եւ ճանչնան Յիսուսը: Անոնք մեծ տեսիլք ունին: Իսկապէս աներեւակայելի պիտի ըլլար, եթէ բոլոր ծառայողները ունենային անոնց եռանդը եւ վճռականութիւնը: Այնուամենայնիւ, կարելի՞ է, որ մենք *Աստուծոյ* անմիջական պատուէրը, որն է՝ «ցոյց տալ մարդոց, թէ ինչ ձեւով անոնց կեանքերը սխալ են», կը փոխարինենք մեր *բարի* փիլիսոփայութեամբ, որն է՝ «չըսել մարդոց, թէ ինչպէս պէտք է անոնք ապրին»:

Մի՞թե առաքելները կ'օգտագործէին այս մարտավարութիւնը: Մէկ անգամ Պօղոս առաքելը յայտարարեց իր մարտավարութիւնը չփրկուած թագաւորի մը.

«Այսպիսով, Ագրիպաս թագաւոր, ես հնազանդեցայ այդ տեսիլքին՝ Երկինքէն: Ես քարոզեցի նախ՝ անոնց, որոնք Ղամասկոսի մէջ էին, յետոյ՝ անոնց, ոոնք Երուսաղէմի մէջ եւ ամբողջ Յուդայի մէջ էին, եւ նոյնպէս՝ հեթանոսներուն, որ բոլորը պէտք է ապաշխարեն իրենց մեղքերէն եւ դառնան Աստուծոյ, եւ իրենց բարի գործերով ապացուցեն, որ իրենք փոխուած են» (Գործք 26.19,20, NLT):

Այն, որ ինչ որ մէկը կը պատուիրէ չփրկուած մարդոց *ապաշխարել իրենց մեղքերէն*, իսկ դարձի գալէն յետոյ *ապացուցել, որ իրենք փոխուած են*, անմիջական կապ ունի այն բանին հետ, թէ *ինչպէս պէտք է անոնք ապրին*: Ցաւօք, Պօղոսի եւ այդ զոյգի աւետարանչական փիլիսոփայութիւնները բոլորովին հակառակ են իրար: Մէկը՝ *Աստուծոյն է, միւսը՝ բարի է*:

Պօղոս ցոյց տուաւ իր վճռականութիւնը աստուածային մարտավարութեան հետեւելու հարցին մէջ, երբ առիթ ունեցաւ խօսելու մէկ ուրիշ ակնառու չփրկուած առաջնորդի եւ անոր կնոջ հետ: Ուսումնասիրեցէ՛ք այն մարտավարութիւնը, որ ան կը կիրառէր՝ հետեւելով անոր կողմէն բարձրացող թեմաներուն.

«Քանի մը օր յետոյ Փելիքսը եւ անոր կինը՝ Դրուսիլան, որ հրեայ էր, կանչեցին Պօղոսը եւ լսեցին անորմէ Յիսուս Քրիստոսին հաւատալու կեանքի մասին: Երբ Պօղոսը շարունակեց շեշտադրել արդար յարաբերութիւնները Աստուծոյ եւ Անոր ժողովուրդի հետ եւ խօսիլ բարոյական կարգապահութեան ու գալիք դատաստանի մասին, Փելիքսն զգաց, որ ատիկա չափէն աւելի կը մօտենայ իր յարմարաւէտութեան եւ պատուիրեց անոր հեռանալ: «Բաւական է այսօրուան համար: Ես կրկին պիտի կանչեմ քեզ, երբ յարմար ըլլայ»» (Գործք 24.24,25, MSG):

Փելիքսը պատուիրեց բերել Պօղոսին բանտախուցէն, որովհետեւ ինքը եւ իր կինը կ'ուզէին լսել Պօղոսի ուղերձը յաւիտենական կեանքի մասին: Խօսելով այս չփրկուած մարդոց հետ՝ Պօղոսը բարձրացուց երկու հիմնական թեմա. բարոյական կարգապահութիւնը եւ գալիք դատաստանը: Պօղոսի խօսքը այնքա՛ն խիստ էր, որ անոնք ակնյայտօրէն անյարմար զգացին իրենց: Որքանով ասիկա կը հակասէ մեղաւորնե-

րուն ծառայելու մեր ժամանակակից մարտավարութեան: Կան եկեղեցական առաջնորդներ, որոնց առաջնահերթ նպատակն է՝ այնպէս ընել, որ Աստուծոյ փնտռողները վերադառնան յաջորդ կիրակի: Անշուշտ, այն, որ անոնք կրնան դրդել մարդոց եկեղեցի վերադառնալ, ողջունելի է, բայց ատիկա չէ գլխաւոր նպատակը: Պօղոսին նպատակը մարդոց մէջ եւս մէկ հաւաքոյթի գալու ցանկութիւն առաջացնելը չէր, այլ՝ ճշմարտութիւնը հաւատարմօրէն խօսիլը:

Վերջերս ես մասնակցեցայ հանրայայտ երիտասարդ հովիւի մը հաւաքոյթներէն մէկուն: Ան կը շրջագայէր տարբեր քաղաքներով եւ կը քարոզէր Աստուծոյ սիրոյն մասին: Հերթական լեւի-լեցուն լսարանին մէջ հաւաքուած էր աւելի քան հազար մարդ՝ զինք լսելու համար: Մթնլորտը ըսես ելեկտրականացուած (լարուած) ըլլար. մարդիկ ոգեշնչուծով կը սպասէին՝ այդ երիտասարդ առաջնորդին լսելու համար: Մինչեւ ուղերձը սկսիլը, մարդոց երկու անգամ տեղեկացուցին (քարոզիչի օգնականը եւ յատուկ ինքը՝ քարոզիչը), որ այդ երեկոյ մենք պիտի լսենք միայն «Բարի լուրը» եւ, որ ան պիտի չի խօսեր ոչ մէկ «բացասական բան»: «Բարի լուրը» կը ներկայացուէր որպէս «բացասականի» հակաանիշը: Այնուամենայնիւ, կան դէպքեր, երբ Բարի լուրը սկիզբը բացասական կը թուայ, յատկապէս եթէ այն մեր կեանքի ուղղուածութիւնը կը փոխէ: Այնուամենայնիւ, եթէ այդ փոփոխութիւնը կը փրկէ մեզ մահուան ճանապարհէն, ինչպէ՞ս մենք պէտք է դիտարկենք այն:

Բեմ բաձրանալուն պէս այդ հովիւը կապ ստեղծեց հանդիսատեսին հետ՝ առաջին քսան վայրկեանի ընթացքին սրամիտ կատակներ ընելով: Անկէ յետոյ ան պատմեց, թէ որքա՞ն ջերմեռանդօրէն Յիսուսը կը սիրէ մեզ: Անոր ուղերձը յուզիչ եւ ոգեշնչող էր: Աւարտելով՝ ան փրկութեան կոչ ըրաւ մարդոց: Ան կոչ չըրաւ մեղաւորներուն՝ շտկել իրենց կեանքը, այսինքն՝ ձգել աշխարհի հանդէպ սէրը եւ Աստուծոյ հանդէպ անհնազանդութիւնը: Ան ոչինչ ըսաւ մեղքերէն ապաշխարելու մասին՝ այն հիմնարար ուսմունքի, որ պէտք է ուղեկցի փրկութեան (տե՛ս Եբր. 6.1): Այդ երեկոյ շատե՛րը արծագանգեցին անոր կոչին:

Արդեօ՞ք այս հովիւի ուղերձը կը համապատասխանէր այն ուղերձին, որ Պօղոսը խօսեցաւ ինչպէս Ագրիպաս թագաւորին, այնպէս ալ՝ Փելիքսին եւ Դրուսիլային: Արդեօ՞ք անոր ուղերձը համահունչ էր Պետրոսի խօսքերուն, որ խստօրէն պատուիրեց անոնց, որոնք կը ցանկային փրկուիլ. «Ապաշխարեցէ՛ք ձեր մեղքերէն եւ դարձէ՛ք Աստուծոյ, որ ձեր մեղքերը մաքրուին» (Գործք 3.19, NLT): Արդեօ՞ք զԱստուած փնտռող մարդիկ, որոնք կը հեռանային այդ հովիւի երեկոյեան հաւաքոյթէն, փրկուած էին:

Հակառակ ծայրայեղությունները

Եկէք եւս մէկ հարցում մը տանք. ինչո՞ւ այդքան դիրին է տեղաշարժել ճոճանակը դէպի հակառակ կողմը՝ այնքան հեռանալով ատելի օրինապաշտութենէն, որ արդէն սկսինք չկարելորել Աւետարանի հիմնադրոյթները:

Մերօրեայ առաջնորդներէն շատերը դաստիարակուած են այնպիսի մարդոց կողմէն, որոնց այսօր կը համարեն եկեղեցւոյ խիստ հայրեր: Քսաներորդ դարուն մէջ այս հայրերը չէին վախճար հակառակի մեղքին եւ բացայայտել այն. անոնք կոչ կ'ընէին մեզի ապրիլ սուրբ կեանքով: Այդ տարիներուն չկային այնքան մեծ եկեղեցիներ, որքան այսօր: Անոնց անասան եւ յանդիմանող սուրբգրային ուղերձները յաճախ կը վանէին անոնց, որոնք անկեղծօրէն չէին փնտռեր զԱստուած:

Որոշ ժամանակ յետոյ խումբ մը առաջնորդներ մարտավարական քայլ ըրին՝ այդ միտման դէմ: Անոնք եզրակացուցին, որ կարելի է մեծաքանակ հետեւորդներ ունենալ՝ քարոզելով բացառապէս *դրական, ոգեշնչող ուղերձներ*: Մենք պակսեցուցինք յանդիմանութիւնը, խրատը եւ ուղղումը եւ սկսանք խրախուսական ուղերձներ որոնել Աստուածաշունչին մէջ: Մենք դադրեցանք քարոզել այն մարդոց, որոնք անհնազանդ են Աստուծոյ Խօսքին: Ասիկա դարձաւ մեր մարտավարութիւնը քսանմէկերորդ դարուն մէջ: Այնուամենայնիւ, լսեցէ՛ք Տիմոթէոսին ուղղուած Պօղոս առաքեալի յանձնարարարութեան շարունակութիւնը.

«[...դուն՝ որպէս Խօսքի քարոզիչ, պէտք է ցոյց տաս մարդոց, թէ ինչ ձեւով անոնց կեանքերը սխալ են]: Եւ համոզէ՛ զանոնք՝ յանդիմանելով եւ շտկելով, զգուշացնելով եւ յորդորելով եւ խրախուսելով՝ առանց թուլանալու եւ յոգնելու, համբերութեամբ եւ սորվեցնելով» (Բ. Տիմոթէոս 4.2, AMP):

Այս Խօսքին մէջ կ'օգտագործեն երեք կարելոր բառեր՝ «էլեկչօ», «էփիթիմասօ» եւ «փարաքալէօ»: «Սթրոնկի բառարանը» կը սահմանէ «էլեկչօ» բառը որպէս «դատապարտել, մատնանշել սխալը, յանդիմանել, խրատել»: «Աստուածաշնչեան բառերու ուսումնասիրութեան լիակատար բառարանը» աւելի յստակ սահմանում կ'առաջարկէ. «Նոր կտակարանին մէջ՝ յանդիմանել, ապացուցել, որ ինչ որ մէկը սխալ է, եւ ատորմով անչցնել զինք»: Իսկապէս որ ազդեցիկ սահմանում է:

Երկրորդ բառը՝ «էփիթիմասօ»-ն, կը սահմանուի որպէս «(ուղղակիօրէն) մեղադրանք ներկայացնել, յանդիմանել»: Այդ բառի իմաստը իսկապէս որ շատ միանշանակ է: Երրորդ բառը՝ «փարաքալէօ»-ն, կը

սահմանուի որպէս «մխիթարել, խրախուսել»: Ասիկա ոգեշնչող կողմն է, որ, անկասկած, անհրաժեշտ է:

Եթէ անդրադառնանք առաջին երկու բառերուն, պիտի տեսնենք, որ Պօղոսը պատուիրեց ծառայողներուն՝ քարոզել այնպիսի ուղերձներ, որոնք կը մեղադրեն յանցանքի մէջ, կը յանդիմանեն, կը խրատեն, կը մատնանշեն սխալը եւ կ'ապացուցեն ինչ որ մէկուն սխալը: Այս բառերու սահմանումը կը դրդէ մեզ վիճարկել այն մեթոտները, որոնք կը կիրառուին ժամանակակից արեւմտեան եկեղեցիները առաջնորդելու համար: Արդեօ՞ք այս ժամանակակից մարտավարութիւնը Աստուծոյ իմաստութիւնն է, թէ՞ *բարիի* իմաստութիւնը: Որպէս լրիւ ժամանակուան ծառայող, որ աւելի քան քսանհինգ տարի է՝ կը քարոզէ համաժողովներուն մէջ եւ եկեղեցիներուն մէջ, ես կրնամ ըսել, որ մենք շեղած ենք դէպի *բարին*:

Այս մասին կրնամ կիսուիլ անթիւ պատմութիւններով, բայց թոյլ տուէք ատելցնել ընդամենը մէկը: Ինծմէ խնդրեցին քարոզել Միացեալ Նահանգներու հիւսիս-արեւմուտքին մէջ գտնուող շատ մեծ եկեղեցիի մէջ: Ես հաւանութեամբ կը վերաբերէի այդ եկեղեցւոյ առաջնորդին եւ անոր կատարած աշխատանքին ու անհամբեր կը սպասէի այն ժամանակուան, որ պիտի անցընէի այդ մարդու, անոր կնոջ, ծառայողական խումբի եւ եկեղեցւոյ հետ:

Միջոցառումէն քանի մը շաբաթ առաջ ելեկտրոնային նամակ ստացայ այդ հովիւէն, որուն մէջ գրուած էր. «Ճո՛ն, մենք անհամբեր կը սպասենք գալուդ եւ այն խօսքին, որ պիտի ուղղես մեր եկեղեցիին: Քանի որ դուն տակաւին կը պատրաստես քու ուղերձները, լաւ պիտի ըլլար, որ պատմէի քեզի մեր եկեղեցւոյ մշակոյթի մասին: Մենք դրական եկեղեցի ենք. մեր անդամները չեն վարժուած բացասական ուղերձներ լսելուն: Այնպէս որ, երբ դիմես մեր համայնքին, կը խնդրե՛մ, թող քու ուղերձները խրախուսող, դրական երանգ ունենան»:

Կրկին հարց կ'առաջանայ. որքանո՞վ այս «իմաստութիւնը» կը համապատասխանէ այն պատուիրին, որ Պօղոսը տուաւ Տիմոթէոսին: Որպէս համեմատութիւն՝ ես պիտի թուարկեմ այս երեք յունարէն բառերու «դրական» եւ մեր օրերուն մէջ «բացասական» համարուող իմաստները:

Դրական. 1) «*ψιχαρμαλιτο*» - մխիթարել, խրախուսել

Բացասական. 1) «*էլեկչօ*» - դատապարտել, մատնանշել սխալը, յանդիմանել, խրատել, ապացուցել, որ ինչ որ մէկը սխալ է

2) «*էփիթիմաօ*» - (ուղակիօրէն) մեղադրանք ներկայացնել, յանդիմանել

Պօղոսը երեք պատուեր կու տայ, որոնցմէ երկուքը կը համարուին «բացասական», եւ միայն մէկը՝ «դրական»: Թոյլ տուէք ուրիշ կերպ ըսել ասիկա. 67 տոկոսը «ուղղումներ բերող» են, իսկ 33 տոկոսը՝ «հաւանութիւն տուող»: Ես չեմ ուզեր ըսել, որ մեր քարոզներու 67 տոկոսը պէտք է շտկումներ բերող ըլլայ: Այնուամենայնիւ, մենք պէտք է հարց տանք՝ արդեօ՞ք մենք ոչ հաւասարակշռուած վիճակի մէջ ենք: Եթէ մեր նպատակը 100 տոկոսով խրախուսական եւ ոգեշնչող ուղերձներ քարոզելն է մեր եկեղեցիներուն մէջ, հնարաւո՞ր է որ մեր քով շատցած են դրական մարդիկ, որոնք կը հաւատան, որ ճիշդ յարաբերութիւններ ունին Աստուծոյ հետ, այնինչ՝ իրականութեան մէջ անոնք աւելի ու աւելի կը հեռանան Անոր բնաւորութենէն եւ ներկայութենէն:

Պատուիրանի էութիւնը

Եբրայեցիներու նամակի հեղինակը կը գրէ հետեւեալը.

«Ոչ մէկ խրատ հաճելի չէ ներկայ պահուն. այն ցաւո՛տ է: Բայց յետագային այս ծելով *վարժուածները* արդար կեանքի խաղաղ վարձք կը ստանան» (Եբրայեցիս 12.11, NLT):

Այս խօսքին մէջ կայ երկու կարեւոր միտք: Առաջինը՝ խրատը, յանդիմանութիւնը, շտկումը եւ սխալը ցոյց տալը *ցաւոտ են*, իսկ խրախուսանքը՝ ոչ: Երկրորդը՝ այն խրատը, որուն մասին կը գրէ Եբրայեցիներու նամակի հեղինակը, կը *վարժեցնէ* սուրբ կեանքի համար:

Այժմ մենք պէտք է տանք հետեւեալ հարցը. ինչպէ՞ս Աստուած կը վարժեցնէ մեզ: Եթէ վերադառնանք այն խօսքերուն, որոնք Պօղոսը գրեց Տիմոթէոսին, ամէն ինչ պարզ կը դառնայ.

«Ամէն սուրբգրային հատուած ոգեշնչուած է Աստուծմէ (տրուած է Անոր ոգեշնչմամբ) եւ օգտակար է խրատի, յանդիմանութեան եւ մեղքի մէջ նախատելու համար, սխալմունքը ուղղելու եւ հնազանդութեամբ խրատելու համար, [եւ] արդարութեան մէջ *վարժեցնելու* համար (*սուրբ կեանքի* մէջ, համապատասխան Աստուծոյ կամքին՝ մտքով, նպատակներով եւ գործողութիւններով), որպէսզի Աստուծոյ մարդը կատարեալ եւ հմուտ դառնայ, իսկապէս համապատասխան եւ հանգամանօրէն սպառազինուած ամէն բարի գործի համար: Ես ԿԸ ՊԱՏՈՒԻՐԵՍ [քեզ] Աստուծոյ եւ Քրիստոս Յիսուսի ներկայութեամբ, Որ պիտի դատէ կենդանիները եւ մեռածները, ե՛ւ Անոր գալուստով, ե՛ւ Անոր թագաւորութեամբ (ատոնց լոյսի ներքոյ). ազդարարէ՛ եւ քարոզէ՛ խօսքը» (Բ. Տիմոթէոս 3.16-4.2, AMP):

Դուք ուշադրութիւն դարձուցի՞ք «խրատ», «յանդիմանութիւն», «մեղքի մէջ նախատել», «սխալմունքը ուղղել» եւ «հնազանդութեամբ խրատել» բառերուն եւ արտայայտութիւններուն: Նոյնպէս, դուք ուշադրութիւն դարձուցի՞ք, որ Սուրբ Գիրքը կը վարժեցնէ մեզ *սուրբ կեանքով ապրելու համար*, եւ որ անկէ յետոյ Պօղոսը պատուիրեց Տիմոթէոսին եւ մեզ՝ *քարոզել խօսքը* (Աստուածաշունչը): Ամփոփելով բոլոր այս խօսքերը՝ ահա մեզի տրուած պատուիրանը՝ ըստ էութեան.

Տիմոթէո՛ս, եւ ոեւէ այլ Աւետարանի ծառայո՞ղ, ճշմարտութիւնը այն է, որ աստուածային խրատը ցաւոտ է, բայց այն կը վարժեցնէ մեզ սուրբ կեանքի համար: Աստուած կը տնօրինէ այս խրատի (վարժուելու) ընթացքը Աստուծմէ՛ն ոգեշնչուած խօսքով՝ Աստուածաշունչով, որ նոյնպէս պատշաճ կերպով կը սպառագինէ այն տղամարդը կամ կիւնը, որ պէտք է խօսի Աստուծոյ անունէն: Այդ իսկ պատճառով, քարոզէ՛ խօսքը՝ Աստուածաշունչը, քանի որ քու պարտականութիւնն է՝ որպէս Աստուծոյ ւետաբեր, ցոյց տալ մարդոց, թէ որոնք են անոնց կեանքի սխալները: Ասիկա կարելի է ընել Աստուածաշունչը պատշաճ կերպով գործածելու, սիրով խրատելու, մեղքի մէջ նախատելու, յանդիմանելու, շտկելու եւ հնազանդութեան մէջ խրատելու նաեւ խրախուսելու միջոցով: Ահա այն աստուածային ընթացքը, որ կը վարժեցնէ լսողներուն սուրբ կեանքի համար (շրջասութիւն):

Ես կը գիտակցիմ, որ ասիկա այն աստիճան հակառակ է մեր քսանմէկերորդ դարի եկեղեցական մշակոյթին, որ նոյնիսկ կրնայ զարմացնել մարդը: Այնուամենայնիւ, մենք կը ցանկանք ունենալ ուժե՞ղ, թէ՞ մոլորուած եկեղեցի: Մենք կը ցանկանք աւելցնել հոգեւորապէս առե՞ղջ, թէ՞ խաբուած մարդոց թիւը: Այս հրահանգները տրուած են, որպէսզի մենք անգիտակցաբար չհեռանանք Աստուծոյ սրտէն: Եթէ մենք կ'ուզենք ապահով ընթացք ունենալ Յիսուսի մէջ, պէտք է արմատացած ըլլանք Աստուածաշունչին մէջ: Անկարելի է համապատասխանեցնել մեր ներկայ մշակոյթը Նոր կտակարանի ցուցումներուն: Եկէ՛ք կատարենք այս փոփոխութիւնը եւ առողջ եկեղեցի պիտի տեսնենք:

Փափաքելի՞, թէ՞ օգտակար

Հոգիէն ստացած յայտնութեամբ Պօղոսը նախապէս ըսաւ, որ պիտի ըլլան ծառայողներ եւ այլ հաւատացեալներ, որոնք ականջ պիտի չդնեն այս պատուիրանին, եւ ցոյց տուաւ ասոր վնասակար հետեւանքները.

«Որովհետեւ կու գայ այն ժամանակը, երբ [մարդիկ] չեն հանդուրժեր (դիմանար) առողջ եւ ողջամիտ ուսմունքը, բայց, քա-

նի որ անոնց ականջները սաստիկ կը փափաքին (ինչ որ հաճելի եւ բաւականութիւն պատճառող բանի համար), անոնք մէկը միւսին ետեւէն իրենց համար ուսուցիչներ կը համախմբեն՝ հասցնելով զգալի թիւի, որոնք ընտրուած են՝ զոհացնելու իրենց ցանկութիւնները եւ փայփայելու այն սխալմունքները, որոնց իրենք կը յարին» (Բ. Տիմոթէոս 4.3, AMP):

Բարով եկաւ այդ ժամանակը: Եկէ՛ք հարցնենք, թէ ի՞նչը աւելի ցանկալի է. խրախուսական, ուրախ, դրական եւ թեթեւ ուղերձները, թէ՞ այնպիսիք, որոնք զգուշացում, յանդիմանութիւն, շտկում եւ խրատ կը պարունակեն, նաեւ ցոյց կու տան մարդոց սխալները:

Բոլորը, ներառեալ՝ ես, պիտի գերադասէին առաջին տեսակի ուղերձ լսել: Ես դրական մարդ եմ, եւ բնականօրէն հակուած եմ լաւատեսական ուղերձներու: Ընտրութիւն ունենալու պարագային ոեւէ մարդ միեւնոյն կերպով պիտի վարուէր:

Եթէ ըլլային իրար քով գտնուող երկու եկեղեցիներ, եւ դուք գիտնայիք, որ ատոնցմէ մէկուն մէջ պիտի լսէք այնպիսի քարոզ, որ պիտի յանդիմանէ յատուկ ձեր մեղքը, իսկ միւս եկեղեցոյ մէջ՝ լաւատեսական, խրախուսող քարոզ կայ, դուք պիտի երթայիք երկրորդ եկեղեցին: Պօղոս կ'ըսէր, որ ի վերջոյ պիտի կատարուի ճիշդ ասիկա. մարդիկ պիտի ընտրեն *բարին*, ոչ թէ Աստուած: Պէտք չէ հարցնել, թէ ո՞րն է աւելի փափաքելի, այլ՝ թէ ո՞րն է աւելի օգտակար:

Եկէ՛ք անկեղծ ըլլանք. մարդոց մեծամասնութիւնը չի սիրեր այս նիւթին շուրջ խօսիլ: Բայց նկարագրենք այս երեւոյթը օրինակով մը: Մարդ մը, որուն անունը Սթիվ է, անոր մօտ քաղցկեղ կ'ախտորոշեն: Ուռեցքը իր առաջին շրջանին մէջ է, եւ այն վիրահատական ճանապարհով հեռացնելը դիւրութեամբ կը խափանէ վտանգը: Բժիշկը կ'ըսէ անոր. «Մենք կրնանք հեռացնել այն՝ թեթեւ վիրահատութիւն կատարելով»:

Սթիվը ուրիշ բժիշկի մը քով կ'երթայ, որ չի հետաքրքրուիր բժշկական հետազօտութիւններով եւ չի հետեւիր այն ցուցմունքներուն, որ ան ստացած էր, երբ բժշկական համալսարանին մէջ սորվելու ընթացքին: Անոր պարզապէս հաճելի էր բժիշկ ըլլալը եւ մարդոց օգնելը, բայց՝ իր ձեւով: Այս բժիշկը կ'ըսէ Սթիվին, որ ան կրնայ չանհանգստանալ. ամէն ինչ լաւ է, եւ անոր հրաշալի կեանք կը սպասուի: Այս բժիշկը խանդավառութեամբ կ'ըսէ. «Սթիվ, առողջութիւնդ գերազանց է»:

Սթիվը թեթեւցած կը հեռանայ երկրորդ բժիշկէն: Ան կը մտածէ. «Որքա՛ն լաւ բժիշկ է: Ան լաւ խօսեցաւ իմ մասին: Ես այնքա՛ն խրախուսուած եմ»: Ան նոյնիսկ քիչ մըն ալ բարկացած է առաջին բժիշկէն, քանի որ ան շատ բացասական տրամադրուած էր եւ կը խնդրէր անոր

այնպիսի բան ընել, ինչ որ անյարմար, ցաւոտ եւ ծախսատար պիտի ըլլար: Ան ըսած էր Սթիվին, որ անոր վիճակը լուրջ է: Ան չափազանց ուղիղ խօսած էր եւ բոլորովին չէր խրախուսած Սթիվը:

Շնորհիւ երկրորդ տարբերակին՝ Սթիվը համոզուած է, որ իրեն ոչինչ կը սպառնայ: Այնուամենայնիւ, երկու տարի յետոյ Սթիվին վիճակը կտրուկ կը վատթարանայ, եւ անոր ընդամէնը քանի մը շաբթուան կեանք կը խոստանան, որովհետեւ այն փոքրիկ ուռեցքը աճած է՝ վերածուելով իրական սպառնալիքի: Այն թափանցած է մարմինի կենսականօրէն շատ կարեւոր օրկաններ: Այժմ ոչ մէկ բուժում կ'օգնէ Սթիվին:

Երկու տարի առաջ աւելի դիւրին էր լսել դրականօրէն տրամադրուած բժիշկին: Բայց ի՞նչը աւելի անհրաժեշտ էր այդ ժամանակ. ճշմարտութի՞ւնը, թէ՞ շողոքորթութիւնը, իրավիճակը շտկող միջոցնէ՞ր, թէ՞ դրական խօսքեր: Սթիվին ըսած էին, որ ան առողջ էր, սակայն՝ հիւանդ էր: Եւ արդէն շատ ուշ է: Երանի՛ այն ժամանակ ան ճշմարտութիւնը լսէր:

Կարելի՞ էր արդեօք, որ Արեւմուտքի եկեղեցին հոգեւորապէս նոյն վիճակի մէջ էր՝ թէ՛ ծառայողները, թէ՛ եկեղեցիներու անդամները:

Իսրայէլի պատմութեան մէջ կարճ ժամանակ մը, երբ կրօնական առաջնորդներու ծառայութիւնը բաղկացած էր բացառապէս դրական ուղերձներէն: Անոնք կը խուսափէին արեւմուտքէն, եւ անոնց քարոզները միայն լաւատեսական էին: Աստուած ցոյց տուաւ, թէ ինչպէս կը վերաբերի այսպիսի մօտեցման. «Անոնք մակերեսային բուժումներ կ'առաջարկեն Իմ ժողովուրդին մահացու վէրքին համար: Անոնք կը հաւաստիացնեն, որ խաղաղութիւն է, այնինչ՝ խաղաղութիւն չկայ» (Երեմեայ 8.11, NLT): Հետաքրքրական է, որ անոնց քարոզած ուղերձը, ըստ էութեան, ոչինչով կը տարբերի այն խորհուրդէն, որ երկրորդ բժիշկը տուաւ Սթիվին:

«Ինձի հաճելի չեն անոր քարոզները»:

Ճշմարտութիւնը եւ շտկումը չընդունիլը այնպիսի խնդիր է, որ միշտ եղած է: Իսրայէլի թագաւորներէն մէկը կը պատրաստուէր մեծ ու համարձակ նախաձեռնութեան: Ան կանչեց հարիւրաւոր հոգեւոր խորհրդականներ եւ հարցուց, թէ արդեօք իր ծրագիրները յաջողութեամբ պիտի պսակուին: Այս խորհրդականները թագաւորին ճշմարտութիւնը ըսելու մեծ հնարաւորութիւն ունէին, բայց իւրաքանչիւրը պատասխանեց. «Այո՛, դուն յաջողութիւն պիտի ունենաս»: Անոնք շարունակեցին կանխասել, թէ ինչ բարիքներով պիտի պսակուէր թագաւորի նախաձեռնութիւնը:

Յուդայի թագաւորը, որուն սիրտը զգայուն էր Աստուծոյ հանդէպ, նոյնպէս ներկայ էր: Ան կը ցանկար լսել ճշմարտութիւնը՝ իրավիճակը իրապէս զանազանելու համար: Ան չզգաց Աստուծոյ ծայնը, թէւ բոլոր

հոգեւոր խորհրդականները նոյնը կը կրկնէին: Ան տակաւին կը սպաւեր այն խօսքին, որուն իր սիրտը կ'արձագանգէր:

Ի վերջոյ, Յուդայի թագաւորը հարցուց Իսրայէլի առաջնորդին.

- Դուն չունի՞ս այլ խորհրդականներ, որոնք ճշմարտապէս կը մարգարէանան:

Իսրայէլի թագաւորը պատասխանեց.

- Իրականութեան մէջ, մնացած է մէկ այդպիսի մարդ մը, բայց ես կ'ատենմ զինք: Ան երբեք ոչ մէկ լաւ բան կը քարոզէր ինծի համար. միայն կործանում, կործանում, կործանում (Գ. Թագաւորաց 22.8, MSG):

Բայց ես այնպէս, իր համախոհին հաճեցնելու համար, Իսրայէլի թագաւորը պահանջեց, որ այդ «բացասական» խորհրդականին արքունիք բերեն:

Այդ մարգարէին անունը Միքեայ էր, եւ թագաւորի սուրհանդակը, որ գտաւ զինք, ըսաւ.

- Լսէ՛, մնացած բոլոր մարգարէները մէկ մարդու պէս յաջողութիւն կը կանխատեսեն թագաւորին համար: Թող որ քու խօսքն ալ համաձայն ըլլայ անոնց խօսքին. խօսի՛ր բարեհաճութեամբ (Գ. Թագաւորաց 22.13, NIV):

Միքիան պատասխանեց.

- Կենդանի է Տէրը, ես պիտի ըսեմ միայն՝ ինչ որ Տէրը պատուիրէ ըսել ինծի (Գ. Թագաւորաց 22.14, NLT):

Ան այդպէս ալ վարուեցաւ: Անոր խօսքը շտկում կը պահանջէր, եւ այն բարկացուց թագաւորը: Այնուամենայնիւ, պարզուեցաւ, որ բոլոր դրական խորհրդականները սխալ խօսած էին թագաւորի նախածեռնութեան արդիւնքի մասին, իսկ Միքիան ճիշդ էր:

Ո՞ր են Միքիայի պէս խորհրդականներն ու ծառայողները այսօր: Ինչո՞ւ մենք աւելի յաճախ չենք լսեր անոնց պաշտպանող յանդիմանութիւնները եւ զգուշացումները: Ինչո՞ւ անոնց գիրքերը, որոնք մեզ սուրբ ապրելու կոչ կ'ընեն, հանրաճանաչ չեն դառնար: Ինչո՞ւ այդ մարդիկ համաժողովներուն հրաւիրուող ամենայայտնի քարոզիչները չեն: Ինչո՞ւ անոնք ամէնէն շատ դիտուող ծառայողները չեն «YouTube»-ի մէջ:

Աստուած, Պօղոս առաքեալի միջոցով, պարզօրէն փոխանցեց Իր հրահանգները մարդիկ առաջնորդելու մասին, սակայն մենք ուրիշ կերպ կը սորվեցնենք: Անգամ մը կը ճաշէի շատ յայտնի հովիւի մը հետ, որ ըսաւ ինծի.

- Ճո՛ն, եթէ նայիս այն հովիւներուն մեծամասնութեան, որոնք յաջողակ եկեղեցիներ ունին մեր երկրին մէջ, անոնց քարոզներու թեման յոյս, շնորհք եւ խրախուսանքն է:

Անոր օգնականներին մէկը աւելցուց.

- Ճո՛ն, չե՞ս ուզեր վերանայիլ քու ուսմունքները շնորհքի մասին:

Ան չէր կրնար լիարժէք կերպով ընդունիլ շնորհքի զօրացնող եւ վերափոխող կողմը:

Անկասկած, մենք յոյսի եւ խրախուսանքի կարիք ունինք, բայց մեզի նոյնպէս շտկում, խրատ եւ յանդիմանութիւն անհրաժեշտ է: Պօղոսը ճիշդ ասիկա *պատուիրեց* Տիմոթէոսին: Ինչո՞ւ մենք պէտք է տեղաշարժենք ճոճանակը դէպի հակառակ կողմը: Ինչո՞ւ անպայման պէտք է երկու ծայրայեղութիւններէն մէկուն մէջ պիտի ըլլանք: Եկէ՛ք տանք մարդոց այն ամէնը, ինչի մասին Պօղոսը ըսաւ Տիմոթէոսին:

Գլխաւոր բաղադրիչը

Առիթ տուէք ուրիշ օրինակ մը բերել: Օգտագործուած ինքնաշարժներ վաճառող խորամանկ եւ կեղծաւոր գործակալը միշտ կ'ըսէ ձեզի այն, ինչ որ դուք կ'ուզէք լսել: Ան պիտի ժպտայ, պիտի ծիծաղի ձեր հետ, պիտի հաւաստացնէ, որ դուք հրաշալի անձնաւորութիւն էք եւ շատ խելամիտ էք, քանի որ ընտրեցիք անոր քով եղած ամենալաւ մեքենան: Դուք կրնաք մտածել. *«Նոյնիսկ կիներ այսպէս չի խրախուսեր զիս»*: Պատճառը այն է, որ ձեր կիներ կը սիրէ ձեզ, իսկ այդ մարդը կը շողոքորթէ, որպէսզի դրամ ստանայ ձեզմէ: Այսպիսով, մենք կը տեսնենք մեր ուղերձները կառուցելու գլխաւոր բաղադրիչը՝ *սէրը*: Քրիստոսի մարմինին մէջ մեր ուղերձները պէտք է պարուրուած ըլլան սիրով եւ բխին գթաբառատ սրտէ:

Անգամ մը, երիտասարդ մը, հաւաքոյթէն յետոյ մօտեցաւ գիրքերուս վաճառքի սեղանին: Ան ժպտալով ըսաւ.

- Ես կանչուած եմ, որ մարգարէաբար շտկում բերեմ եկեղեցիին մէջ՝ ինչպէս եւ դուք:

Ես անհանգստացայ անոր խօսելածեւէն: Ջգացի, որ մարդոց յանդիմանելու ցանկութիւնը անոր մէջ աւելին էր, քան անկեղծ մտահոգութիւնը անոնց մասին:

- Կ'ուզե՞ս գիտնալ մարգարէանալու գաղտնիքը,- հարցուցի անոր:

Անոր երեսը պայծառացաւ. ան պատրաստուեցաւ խորհուրդ ստանալու՝ յաջողակ ծառայութեան համար:

- Ամբողջ ընթացքին, երբ դուն յանդիմանական ուղերձ կը քարոզես կամ կոչ կ'ընես մարդոց,- ըսի ես,- դուն պէտք է ամբողջ սրտով սիրես զանոնք, որոնց որ դիմում կ'ընես:

Այդ երիտասարդը նայեցաւ ինձի ապշահար հայեացքով: Քանի մը վայրկեան յետոյ պատասխանեց.

- Կը կարծեմ՝ Աստուած տակաւին պէտք է աշխատանք կատարէ մէջս:

Ես հպարտացայ այդ երիտասարդով, քանի որ ան խոստովանեցաւ:

Յաճախ իմ մէջ նոյնպէս պայքար կ'ընթանար՝ կապուած յանդիմանական ուղերձներ քարոզելու հետ: Ես ի սրտէ կը սիրեմ մարդիկ, եկեղեցին եւ Աստուծոյ ծառայողները: Այս գիրքը գրելու ժամանակ կամ այլ յանդիմանական ուղերձներ քարոզելու ժամանակ իմ սիրտը կը ցաւի, որովհետեւ ես կը ցանկամ խրախուսել եւ հաստատել մարդկութիւնը: Բայց միւս կողմէն՝ գիտեմ, որ սէրը չի շողոքորթեր. այն ճշմարտութիւնը կը խօսի: Սէրը կը խօսի այն, ինչ որ անհրաժեշտ է՝ իր ունկնդիրները հոգեւորապէս առողջ դարձնելու համար: Պօղոս կը գրէ, որ մենք պէտք է ճշմարտութիւնը սիրով խօսինք. այդ պարագային հաւատացեալները հոգեւորապէս պիտի աճին եւ պիտի հասունանան Քրիստոսի մէջ (տե՛ս Եփեսացիս. 4.15):

Եղած են ծառայողներ, որոնք հռչակած են յանդիմանական ուղերձներ եւ շեշտադրած են սրբութիւնը՝ լեցուած բարկութեամբ: Անոնք ունեցած են քիչ կամ գրեթէ ոչ մէկ գթասրտութիւն այն մարդոց հանդէպ, որոնց քարոզած են: Ասիկա ողբերգական է եւ շատ ծանր հետեւանքներ ունի: Բոլորս պէտք է դրդուինք, շարժինք եւ նոյնիսկ կլանուած ըլլանք սիրով այն մարդոց հանդէպ, որոնց կը քարոզենք, կամ՝ ընդհանրապէս պէտք չէ խօսինք: Մենք պէտք է ի սրտէ ձգտինք անոնց բարեկեցութեան՝ աւելի, քան որեւէ ուրիշ բանի: Մենք պէտք չէ մտածենք. «Չէ՞ որ ես կ'ըսէի քեզի», «Ես գիտեմ աւելին, քան դուն», կամ՝ «Ես քեզմէ լաւն եմ»: Մենք պէտք է խօսինք մարդոց հետ ջերմեռանդութեամբ, անոնց համար լաւագոյնը ցանկալով: Մենք պէտք է մեզմէ աւելի կարելոր համարենք մեր հետեւորդները կամ ոեւէ մարդ մը, որուն կը հանդիպինք: Հայր Աստուած, Յիսուս Քրիստոսը եւ Հոգին ճիշդ այսպիսի վերաբերմունք ունի:

ՍՈՒՐԲ ԿԵԱՆՔԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

«Վերքերը՝ անկեղծ ընկերոջմէն,
աւելի լաւ են, քան շատ համբոյրները՝ թշնամիէն»:
— Առակաց 27.6, NLT

Որեւէ բան, ինչ որ կը փոքրացնէ կամ
կ'անտեսէ Աստուծոյ սրբութիւնը՝ սխալմամբ դիտարկելով
Աստուծոյ սէրը, հաւատարիմ չէ Աստուծոյ յայտնութեան,
որ տրուած է Յիսուս Քրիստոսի միջոցով:
— Օսվալտ Չէմպըրս

Անձնական խորհրդատուն՝ այնպիսի մասնագիտութիւն է, որուն
Անպատակն է՝ օգնել մարդոց բարելաւելու իրենց կեանքի որա-
կը: Ինչ որ առումով, Պօղոս առաքեալը կը խրատէ մեզ ըլլալ հոգեւոր
խորհրդատուներ: Հետեւելով Աստուծոյ ճանապարհներուն՝ մենք կը
բարելաւենք ոչ միայն մեր կեանքը, այլեւ՝ անոնց, որոնց կեանքին մէջ
խորհրդատուի դեր կը կատարենք:

Մենք չենք կրնար բարելաւել Աստուծոյ ճանապարհները: Ադամն ու
Եւան փորձեցին ընել ատիկա եւ ծախողեցան՝ յայտնուելով թշուառ վի-
ճակի մէջ: Անոնք առաջինն էին այն բազմաթիւ մարդոցմէ, որոնք փոր-
ձեցին գործել այս յիմարութիւնը: Հետեւաբար, որպէս խորհրդատու-
ներ՝ մենք պէտք է ոչ միայն խրատենք, այլեւ՝ զգուշացնենք եւ շտկենք:
Շտկում չբերելով՝ մենք առիթ կու տանք, որ անոնք, որոնց կեանքերուն
մէջ մենք ազդեցութիւն կը ձգենք, շարունակեն քալել տրտմութեան
եւ կործանման ուղիով: Ահա թէ ինչու Պօղոսը կը քաջալերէ Տիմոթէո-
սը. «Դուն՝ որպէս Խօսքի քարոզիչ, պէտք է ցոյց տաս մարդոց, թէ ինչ
ծելով անոնց կեանքերը սխալ են» (Բ. Տիմոթէոս 4.2, AMP):

Եփեսոսի եկեղեցիին ուղղուած նամակի ամենասկզբէն Պօղոսը կը
խօսի մեր նոր բնութեան մասին, որ օժտուած է զօրացնող շնորհքով:
Հաւատացեալը կրնայ բոլորովին փոխել իր կեանքը ճիշդ այս երկու

բաղադրիչներու շնորհիւ: Այս կերպով ան կրնայ նոյնացնել ինքզինքը Քրիստոսին հետ եւ հեռու մնալ ամէն փորձանքէ:

Պօղոսը շարք մը պատուէրներ կու տայ, որոնք այս նոր կեանքը կը բնութագրեն: Այս պատուէրները ծանր կամ անկարելի չեն, ինչպէս Հին կտակարանի պատուէրները, այլ ընդամէնը կը վերաբերին այն վարքին, որ կը սպասուի մեզմէ, քանի որ մենք նոր բնութիւն ունինք:

Այժմ կարդանք այս ցուցակի մնացած մասը.

«Թող ձեր միջուկը չըլլայ ոչ մէկ սեռական անբարոյութիւն, պղծութիւն կամ ազահութիւն: Այսպիսի մեղքերը տեղ չունին Աստուծոյ ժողովուրդին մէջ: Անպարկեշտ պատմութիւններ, յիմար խօսակցութիւններ եւ աղտոտ կատակներ. այդ ամէնը ձեզի համար չէ: Փոխարէնը, թող ձեր մէջ ըլլայ գոհութիւն Աստուծոյ... Մի՛ հարբիք գինիով...» (Եփեսացիս 5.3,4,18, NLT):

Կրկին, ասիկա մնան է «կարելի չէ»-ներու ցուցակին: Ես կ'ուզեմ եւս մէկ անգամ շեշտել հետեւեալը. ասիկա պատուիրաններու ցուցակ չէ, որ ատոնք պահելով՝ մենք պիտի փրկուինք: Այս ցուցակին նպատակն է՝ հեռու պահել մենք մեզ աշխարհի հետ շնանալէն, որպէսզի շարունակ մնանք Յիսուսի յայտնուած ներկայութեան մէջ: Առիթ տուէք կրկին թուարկել բոլոր այս մեղսալի վարքագիծերը.

- Սուտեր մի՛ խօսիք:
- Մի՛ մեղանչէք՝ առիթ տալով, որ բարկութիւնը վերահսկէ ձեզ:
- Մի՛ գողնաք:
- Մի՛ օգտագործէք աղտոտ կամ վիրաւորական խօսքեր:

Ահա եւ այս ցուցակին մնացած կէտերը.

- Մի՛ ըլլաք սեռականօրէն անբարոյ:
- Մի՛ ըլլաք պիղծ:
- Մի՛ ըլլաք ազահ:
- Մի՛ պատմէք անպարկեշտ պատմութիւններ:
- Մի՛ մասնակցիք յիմար խօսակցութիւններու:
- Մի՛ ընէք աղտոտ կատակներ:
- Մի՛ գինովնաք գինիով:

Նոր կտակարանը՝ շնորհքի ուղերձ է, եւ ոմանք կ'ըսեն, որ շնորհքի ուղերձին մէջ չկան պատուիրաններ եւ «կարելի չէ»-ներ: Այդպիսի մարդոց համար այս ցուցակը, որ գրուած է Նոր կտակարանի քսաներօ գիրքերէն ընդամէնը մէկուն մէջ, արդէն շատ կ'երկարի: Նոյնիսկ աւելի զաւեշտական է, որ այս ցուցակը կազմած է այն առաքեալը, որ շնորհքի խորութիւններու մասին յայտնութիւն ստացած է: Կը կարծեք՝ այս պատուիրանները պէտք է անտեսե՞լ, թէ՞ արժէ լրջօրէն վերաբերիլ ատոնց:

Ո՛չ՝ սեռական անբարոյութան

Մեր նոր ցուցակի առաջին կետն է՝ *«ո՛չ՝ սեռական անբարոյութան»*: Որպէս Աստուծոյ որդիներ եւ դուստրեր՝ մենք պէտք չէ շնանանք, ըլլանք միասեռ յարաբերութիւններու մէջ եւ ունենանք որեւէ սեռական յարաբերութիւն՝ մինչեւ ամուսնանալը:

Շատ յաճախ ես հանդիպած եմ միասին ապրող զոյգերու, որոնք կը դաւանին, որ քրիստոնէայ են: Ասիկա հազուադիւս երեւոյթ չէ. Իրականութեան մէջ, ասիկա շատ տարածուած է եկեղեցիին մէջ: Այսպիսի զոյգերէն շատերը կը յաճախեն անետարանական եկեղեցիներ, բացայայտ կը խօսին իրենց հաւատքի մասին եւ յաճախ ոգեւորութեամբ կը պատմեն, թէ «Աստուած ինչ կ'ընէ» իրենց կեանքերուն մէջ: Անոնք չունին յանդիմանութեան, կակիծի կամ տրտմութեան որեւէ նշոյլ: Անոնք պարզապէս չեն հաւատար, որ մինչեւ ամուսնանալը միասին ապրիլը սխալ է: Ինչո՞ւ: Կարելի է՝ անոնք եկեղեցւոյ ամպիոնէն չեն լսած աստուածապաշտ եւ առաքինի կեանքի կոչ ընող ուղերձներ, ինչպիսիք կը քարոզէին Պօղոսը, Պետրոսը, Յակոբոսը, Յովհաննէսը եւ Յուդան: Անոնց հովիւներու կիրականօրեայ քարոզները լաւատեսական եւ խրախուսական են, բայց ոչ՝ մեղքին հակառակուող եւ յանդիմանող: Անոնց չեն խրատած սուրբ կեանքի մէջ:

Մեր հասարակութեան մէջ համատեղ ապրիլը, ամուսնութենէն առաջ սեռական կեանք վարելը եւ միասեռ յարաբերութիւններ ունենալը ընդունուած են, եւ նոյնիսկ լաւ կը համարուին: Ցաւօք, մեր՝ անետարանական քրիստոնէաներու աստուածաշնչեան գիտելիքները յաճախ մակերեսային են: Առանց՝ ուշադրութեամբ Աստուծոյ Խօսքը ուսումնասիրելուն՝ մեզմէ շատերը ընդունած են մեր մշակոյթի ապրելածեւերը: Այս մարդոց զլխաւոր փաստարկը հետեւեալն է. *«Եթէ մենք կը սիրենք իրար, ինչո՞ւ միասին չապրինք»*:

Իսկ միասեռութի՞ւնը: Այն նոյնպէս տարածուած է, բայց ոչ միայն անոնց կեանքին մէջ, որոնք ոչ մէկ առնչութիւն ունեցած են եկեղեցւոյ հետ: Վերջերս ինծի կնոջ մը ֆէյսպութեան էջ ցոյց տուին, որ առաջ ծառայութեան մը մէջ կ'աշխատէր: Հիմա ան սիրահարուած է ուրիշ կնոջ մը, եւ անոնք կը ծրագրեն ամուսնանալ: Ես մեծ տրտմութեամբ կը դիտէի անոնց նշանդրեքի եւ այլ մտերիմ պահերու լուսանկարները:

Անցեալին Աստուծմէ՛ն նահանջած մարդիկ գիտէին իրենց նահանջի մասին: Այնուամենայնիւ, այդ կինը խանդավառութեամբ կը խօսէր Աստուծոյ սիրոյ եւ Աստուծոյ նուիրուած ըլլալու մասին: Ինչպէ՞ս ան կրնայ ամուսնանալ մէկ ուրիշ կնոջ հետ, երբ Յիսուս պարզօրէն կ'ըսէ. «Մի՞թէ չէք կարդացած ձեր Աստուածաշունչին մէջ, որ Արարիչը սկիզբը ստեղծեց տղամարդն ու կինը իրար համար, արու եւ էգ... Քանի որ

Աստուած ստեղծեց երկու սեռերու այս բնական միութիւնը, ոչ ոք պէտք է պղծէ Անոր արուեստի գործը» (Մատթէոս 19.3-6, MSG): Յիսուս ցոյց կու տայ, որ ամուսնութիւնը մէկ տղամարդու եւ մէկ կնոջ համար է, այսինքն՝ երկու սեռերու: Ինչո՞ւ այդ կինը տեղեակ չէ, որ ան կը պղծէ Աստուծոյ կողմէն հիմնուած հաստատութիւնը: Մի՞թէ եկեղեցւոյ ամպիոնէն այդ մասին պարզօրէն չէ խօսուած:

Ես կը հասկնամ, երբ հասարակութիւնը կը հեռանայ Աստուծոյ սկզբնական մտադրութենէն ամուսնութեան մասին: Չփրկուած մարդիկ մեղաւոր բնութիւն ունին: Կորսուած տղամարդիկ եւ կանայք այս աշխարհին մէջ կ'ապրին առանց Աստուծոյ, եւ անոնց գիտելիքը բարիի եւ չարի մասին՝ սահմանափակ է: Անոնց վարքը պէտք չէ վշտացնէ մեզ, քանի որ անոնք կը մտածեն եւ կ'ընեն այն, ինչ որ բնութիւնը կը թելադրէ իրենց: Կը մտահոգէ այն փաստը, որ հաւատացեալները կ'ընդունին այն, ինչ որ այս աշխարհը բարի եւ Աստուծոյ ընդունելի կ'անուանէ: Համաձայն վիճակագրական տուեալներու՝ եկեղեցիներուն մէջ կ'աւելնայ միասեռ կեանքը եւ ամուսնութիւնները խրախուսելու միտումը: Այնուամենայնիւ, եկեղեցիները կը խրախուսեն աստիկա ոչ միայն խօսքով, այլեւ՝ լռութեամբ: Ուշադիր կարդացէ՛ք այս խօսքերը.

«Եթէ արդար մարդ մը շրջուի (ետ դառնայ) իր արդարութենէն... ան պիտի մահանայ. քանի որ դուն չես զգուշացուցած զինք. ան պիտի մահանայ իր մեղքին մէջ, եւ անոր արդար արարքները, որոնք գործած է, չեն յիշուիր, բայց անոր արիւնը Ես պիտի պահանջեմ քու ձեռքէն» (Եզեկիէլ 3.20, AMP):

Այս խօսքը հաւատացեալին՝ արդար մարդուն զգուշացնելու մասին է: Եթէ մենք չզգուշացնենք հաւատացեալները անոնց մեղքերու մասին, հետեւանքները լուրջ պիտի ըլլան:

Թերեւս դուք չհամաձայնիք հետս՝ ըսելով. «Բայց ճո՛ն, ասիկա գրուած է Հին կտակարանին մէջ: Ինչպէ՞ս կրնաս ըսել, որ Նոր կտակարանի ժամանակաշրջանին մէջ ծառայողներու ձեռքէն արիւն պիտի պահանջուի»:

Անգամ մը ես կը քարոզէի առաջնորդական համաժողովի մը մէջ, ուր հովիւ մը ընդդիմացաւ ինծի ճիշդ այս հարցով: Ան բարկացած ըսաւ.

- Ինչպէ՞ս կը համարձակիք ըսել, որ մեր ձեռքէն արիւն պիտի պահանջուի: Ատիկա գրուած է Հին կտակարանին մէջ:

Ես պատասխանեցի.

- Կրնա՞ք բանալ Գործք առաքելոցի 20-րդ գլուխը եւ ինծի համար կարդալ 26 եւ 27 խօսքերը:

Այդ հովիւը կարդաց ինծի հետեւեալը. «Ես մաքուր եւ անմեղ եմ *ծեզմէ՛* իւրաքանչիւրին արիւնէն եւ պատասխանատու չեմ ատոր համար: Քանի

որ երբեք չեն ընկրկած կամ չեն պահած կամ չեն զանց առած, որ ազդարարեն ձեզ Աստուծոյ ամբողջ նպատակը, ծրագիրը եւ խորհուրդը» (AMP):

Այդ հովիւը ցնցուած նայեցաւ ինծի եւ ըսաւ.

- Ճո՛ւն, ես կարդացած էի այս հատուածը, բայց երբեք չէի տեսած ասիկա: Կը խնդրե՛մ, ներե՛՛, որ կը մեղադրէի քեզ:

Ես գնահատեցի անոր անկեղծութիւնը:

Ճիշդ հիմա ես կը ցանկան ղիմել եկեղեցական առաջնորդներուն: Ճիշդ է, որ Պօղոսը կ'ուղղէր այս խօսքերը իր կողմէն նշանակուած առաջնորդներուն Եփեսոսի մէջ, բայց մենք նոյնպէս մեղաւոր կը համարուինք, եթէ չազդարարենք Աստուծոյ խորհուրդը ամբողջութեամբ, երբ կը սորվեցնենք ու կը քարոզենք Անոր ժողովուրդին: Եթէ մենք միայն «դրական» ուղերձներ քարոզենք, մենք կը պահենք Աստուծոյ խորհուրդի բաւարար ծաւալուն մասը: Վերջաւորութեան մեր մարդիկ պիտի ձգտին դէպի այս աշխարհի բարին, ինչպէս անդաստիարակ զաւակները, որոնք կը շեղին խոհեմութենէն եւ կը սկսին յիմարաբար վարուիլ: Եթէ այսպէս ըլլայ, անոնց արիւնը մեր ձեռքերուն պիտի ըլլայ:

Առիթ տուէք եւս ուրիշ օրինակ մը բերել: Ես կը դիտէի համացանցային հեռարձակմամբ, թէ ինչպէս հովիւ մը յայտարարեց իր եկեղեցւոյ անդամներուն, որ ինքը համասեռամոլ է: Ան պատմեց, թէ որքան յոգնած է պահուրտելէն. Ան չէր ցանկար, որ այլ մարդիկ ներգրաւուէին այսպիսի կեանքի մէջ եւ շարունակ յանդիմանութիւն զգային (ան կ'օգտագործէր «դատապարտութիւն» բառը):

Ան մէկը միւսին ետեւէն թուարկեց Աստուածաշունչին մէջ յիշուած բոլոր խօսքերը, որոնք կը յայտնէին Աստուծոյ կարծիքը միասեռութեան մասին, եւ մէկ առ մէկ վարկաբեկեց ատոնք: Անկէ յետոյ համարձակ ըսաւ զինք դիտողներուն. «Պօղոս առաքեալը հրաշալիօրէն կը խօսէր այն մասին, որ մենք «Քրիստոսի մէջ» ենք, բայց ան շատ վատ կ'ըմբռնէր մարդկային յարաբերութիւնները»: Այս խօսքերով ան չեղեալ դարձուց Պօղոսի հրահանգները սեռական կեանքի մասին: Այս հովիւը շարունակեց՝ ըսելով, որ Պօղոսը սխալած էր Հռոմէացիներու առաջին գլուխին մէջ, երբ կը գրէր, որ մենք կը հանգինք միասեռութեան Աստուծոյ չերկրպագելու արդիւնքին պատճառով (տե՛ս Հռովմ. 1.21-27): Ըստ այդ հովիւին խօսքերուն՝ Պօղոս առաքեալին գրածը չի կրնար ճիշդ ըլլալ, որովհետեւ «Ամերիկայի փառաբանութեան ծառայողներու կէսը համասեռամոլ է» (հետաքրքրական է՝ ո՞ր հետազօտութեան տուեալներէն ան կ'օգտուէր): Մինչ ես անոր քարոզը կը դիտէի, անոր համայնքը քանի մը անգամ յոտնկայս ծափահարեց իրեն:

Այն բանէն յետոյ, երբ լսեցի այդ հովիւին աղաւաղուած խօսքերը, Աստուած խօսեցաւ հետս՝ ըսելով. «Կարդա՛ Հռոմէացիներու առաջին գլուխը»: Ահա թէ ինչ գրուած է հոն.

«Ահա թէ ինչու Աստուած ձգեց զանոնք իրենց ամօթալի ցանկութիւններուն համար: Նոյնիսկ կանայք հակառակեցան սեռական յարաբերութիւններ ունենալու բնական ձեւին եւ փոխարէնը տրուեցան միմեանց հետ սեռական յարաբերութիւններուն: Եւ տղամարդիկ, փոխարէնը սովորական սեռական յարաբերութիւններ ունենալին կանանց հետ, կիրքով բորբոքեցան մէկը միւսին հանդէպ: Տղամարդիկ ամօթալի բաներ ըրին այլ տղամարդոց հետ, եւ այս մեղքի վերջաւորութեան իրենց մէջ կրեցին այն պատիժը, որուն արժանի էին: Անոնք գիտեն Աստուծոյ արդարութեան պահանջը, որ անոնք, որոնք այդպիսի բաներ կ'ընեն, արժանի են մահուան, սակայն, միեւնոյնն է, անոնք կ'ընեն այդ բաները: Աւելի վատը անիկա է, որ անոնք կը խրախուսեն այլ մարդոց, որ նոյնը ընեն» (Հռովմայեցիս 1.26,27,32, NLT):

Ինչպէ՞ս այդ ծառայողը կրնար վարկաբեկել այն խօսքը, որ միասեռ յարաբերութիւնները ամօթալի կ'անուանէր: Կարիք չկայ, որ մարդը հոգեւոր ըլլայ՝ հասկնալու համար, որ այսպիսի սեռական վարքը բնական չէ: Նոյնիսկ կենդանիները այսպիսի բաներ չեն ըներ: Ինչո՞ւ մենք կը կարծենք, որ Աստուած կ'անտեսէ, կ'ընդունի կամ կը խրախուսէ ատիկա:

Մտածեցէ՛ք այն մարդոց մասին, որոնք տակաւին լիարժէք հաստատուած չեն հաւատքի մէջ եւ կը պայքարին այս կրքոտ ցանկութեան եւ մեղսալի վարքագիծին առիթ տալու դէմ: Ի՞նչ պիտի ըլլայ, եթէ անոնք լսեն այս ուղերձը: Անոնց խիղճը կ'ըսէ. «Աստուծոյ զաւակը պէ՛տք չէ այսպէս վարուի»: Ցաւօք, այս հովիւին խօսքերը պիտի օգտագործուին՝ անոնց ներքին ծայրը լռեցնելու համար: Ան ոչ միայն իր անձը կը դարձնէ դատաստանի ենթակայ, այլեւ կը խրախուսէ ուրիշները՝ գործելու միեւնոյն մեղքը:

Իսկ ի՞նչ կարելի է ըսել այդ եկեղեցիին մէջ գտնուող մարդոց յոտնկայս ծափահարութիւններուն մասին: Աստուածաշունչի «Էմփիլիֆայտ» թարգմանութեան Հռովմայեցիս 1.32-ին մէջ գրուած է՝ որոնք «*հաւանութիւն կու տան* եւ կը *ծափահարեն* անոնց, որոնք կ'ընեն» այսպիսի բաներ, ենթակայ են դատաստանի:

Այդ պարագային, ի՞նչ ընենք Պօղոսի խօսքերուն հետ:

«Չէ՞ք հասկնար, որ անոնք, որոնք սխալ կը գործեն, չեն ժառանգեր Աստուծոյ թագաւորութիւնը: Մի՛ խաբէք դուք ձեզ: Անոնք, որոնք սեռական մեղքին կը տրուին, կամ՝ անոնք, որոնք կ'երկրպագեն կուռքերու, կամ շնութիւն կը գործեն, կամ տղամարդ մարմնավաճառներ են, կամ միասեռ են, կամ գողեր են, կամ ազահ մարդիկ են, կամ հարբեցողներ են, կամ բռնացող են, կամ կը խաբեն մարդիկ՝ ասոնցմէ ոչ մէկը կը ժառանգէ Աստուծոյ թագաւորութիւնը» (Ա. Կորնթացիս 6.9,10, NLT):

Ակնյայտ է, որ կան այլ վնասակար մեղքեր: Բայց մենք պետք է անտեսենք այն, ինչ որ այս խօսքերը կը յայտնեն շեղած սեռական վարքագիծերու մասին:

Այս աշխարհի ճանապարհը թունաւորուած է: Եթէ մենք մեր ամպիոններէն չհռչակենք ճշմարտութիւնը սեռական անբարոյութեան մասին, մարդիկ չեն գիտնար, թէ ինչ է աստուածապաշտ վարքը, եւ պիտի խաբուին չարէն: Անոնք պիտի ընդունին այն, ինչ որ այս աշխարհը բարի եւ Աստուծոյ կողմէն ընդունելի կը համարէ:

Ո՛չ՝ պղծութեան

Մեր «կարելի չէ»-ներու ցուցակի յաջորդ կէտն է՝ *«ո՛չ՝ պղծութեան»*: Մենք պետք է հեռու մնանք պոռնոկրաֆիայէն, ամէն տեսակի անպարկեշտ տեսանիւթերէն եւ ցանկասէր մտքերէն: Յիսուս կ'ըսէ. «Ուել մարդ, որ նոյնիսկ կը նայի կնոջ մը կիրքով, արդէն շնութիւն գործած է անոր հետ իր սրտին մէջ» (Մատթէոս 5.28, NLT): Սաղմոսներգուն կը գրէ. «Ես ոչ մէկ անվայել կամ պիղծ բան չեմ դներ իմ աչքերուն առջեւ» (Սաղմոս 101.3, AMP):

Պոռնոկրաֆիան կը խթանէ մեր զգացումները եւ բաւականութիւն կը պատճառէ ատոնց, քանի որ այն հաճելի է մեր մարմնական բնութեանը: Այնուամենայնիւ, պոռնոկրաֆիան կը քայքայէ թէ՛ մեր կողակիցի, թէ՛ Աստուծոյ հետ մտերիմ ըլլալու կարողութիւնը: Վերջաւորութեան մեր ներսը դժգոհութիւն կ'առաջանայ մեր կողակիցին, ինչպէս նաեւ՝ մեր հանդէպ: Կը թուայ՝ պոռնոկրաֆիան պարզապէս պզտիկ կայծ մը կու տայ, սակայն այդ կայծը կրնայ առաջացնել շփոթմունքի, մեղքի զգացմունքի, ամօթի եւ անապահովութեան պայթիւն:

Մինչեւ վերջերս պոռնոկրաֆիկ կայքերը ամէնէն շատ դիտուողներն էին համացանցի մէջ. այժմ ընկերվարական ցանցերը գերազանցած են ատոնց ցուցանիշները: Տասը կայքերէն աւելի քան մէկը պոռնոկրաֆիկ է: Աւելի քան քառասուն միլիոն ամերիկացի պարբերաբար մուտք կը գործէ այդ կայքերը, եւ ամէն վայրկեան համացանցի 28.258 օգտուող պոռնոկրաֆիա կը դիտէ¹⁵:

Այս խնդիրը չի վերաբերիր միայն տղամարդոց: Մօտաւորապէս հինգ կիներէն մէկը առնուազն շաբաթը մէկ անգամ պոռնոկրաֆիա կը դիտէ համացանցի մէջ, եւ շատերը կ'ըսեն, որ անկարող են հակառակելու ձեռնաշարժութեան ցանկութեան¹⁶: Թէ՛ տղամարդիկ, թէ՛ կանայք կը կերակրեն իրենց կախումներունը համացանցէն դուրս՝ ամսագրերով եւ սեռական բնոյթի գիրքերով (վերջինը յատկապէս տարածուած է կիներուն քով)¹⁷:

Իսկ ի՞նչ կը կատարուի եկեղեցւոյ մէջ: *«Քրիստոնէութիւնը այսօր»* ամսագիրը հարցախոյզ կատարեց՝ խնդրելով շարք մը հովիւներէ նշել,

թէ արդեօ՞ք անոնք այցելած են որեւէ պոռնոկրաֆիկ կայք նախորդ մէկ տարուան ընթացքին: Յիսունհինգ տոկոսը դրական պատասխանած է: Եւ ասոնք մեր եկեղեցական առաջնորդներն են: Այլ վիճակագրական տուեալներ ցոյց կու տան, որ աւետարանական քրիստոնէայ տղամարդոցմէ աւելի քան 50 տոկոսը կախուածութիւն ունի պոռնոկրաֆիայէն¹⁸, իսկ «CNN» հեռուստաալիքի կողմէ հարցախոյզ մը ցոյց կու տայ, որ քրիստոնէայ տղամարդոց 70 տոկոսը կը պայքարի ատոր դէմ¹⁹:

Այնպէս որ, մենք պէտք է հարց տանք. հնարաւո՞ր է, որ այս համաճարակը, որ այսօր տարածուած է աւելի քան երբեք, առաջացած է՝ քանի որ եկեղեցիներու ամպիոններէն հիմնականին լաւատեսական ուղերձներ կը քարոզուին:

Ես խնդիրներ ունէի պոռնոկրաֆիայի հետ մինչեւ քսաներօթ տարեկան. այդ ժամանակ արդէն քանի մը տարուան ծառայութեան մէջ էի: Ես համոզուած էի, որ այդ մեղքը պիտի դադրէր, հազիւ որ ամուսնանայի գեղեցիկ աղջկայ մը հետ. այնուամենայնիւ, այն ոչ միայն չդադրեցաւ, այլեւ աւելի բարդացաւ: Այն պատ կառուցեց Լիզային եւ իմ միջեւ: Ես չազատեցայ անկէ մինչեւ 1984 թուականի աշնան, երբ կախուածութեանս մասին ծառայողի մը պատմեցի: Ան ոչ երկիմաստ կերպով ըսաւ ինձի. «Վերջ տուր ատոր»: Ան խստօրէն յանդիմանեց զիս: Ես խրախուսական ուղերձ չստացայ անորմէ, այլ ստացայ ցուցմունքներ եւ զգուշացումներ, որոնք համակեցին զիս Աստուծոյ երկիւղով:

Այդ մարդուն խօսքերը որոնումներու սկիզբ դրին կեանքիս մէջ. ես սկսայ փնտռել զԱստուած՝ ազատելու համար: Ինչը ամիս յետոյ բոլորովին ազատեցայ այդ մեղքէն, եւ մինչեւ օրս կ'ապրիմ ազատութեան մէջ: Ես յայտնաբերեցի, թէ որքան զօրաւոր է Աստուծոյ շնորհքը: Այն կրնայ ազատ արծակել մարդու մը, որ տասնմէկ տարեկանէն կախուածութիւն ունեցած է պոռնոկրաֆիայէն: Ասիկա հերթական պատճառն է, որ կը տրտմեցնէ զիս, երբ կը տեսնեմ, որ ծառայողները չեն սորվեցներ Աստուծոյ շնորհքի բոլոր առաւելութիւններուն մասին: Եթէ ես չյայտնաբերէի շնորհքը՝ ոչ միայն որպէս ձրիաբար տրուող պարգեւ, մեղքերու ներում եւ փրկութիւն, այլեւ՝ որպէս Աստուծոյ զօրութիւն, որ աշիթ կու տայ գերազանցել իմ բնական կարողութիւնները, եւ մինչեւ օրս այդ գերութեան մէջ պիտի ըլլայի:

Ո՛՛՛՛՛ ազահութեան

«Ազահութիւն» բառի սահմանումն է՝ «ուժգին եւ եսակեղրոն ձգտում ինչ որ բանի մը հանդէպ, յատկապէս՝ հարստութեան, իշխանութեան կամ կերակուրի»: Որքան յաճախ հաւատացեալները, իրենց ազահութեան պատճառով, կ'աղաւաղեն Աստուծոյ խոստումները՝ մեզ օրհնելու, յա-

ջողակ եւ բարգաւաճ դարձնելու մասին: Անոնք կը կեդրոնանան իրենք իրենց վրայ, ոչ թէ մարդոց ծառայելու եւ օրհնելու հնարաւորութեան: Ազահութիւնը կամ ընչաքաղցութիւնը կռապաշտութիւն է (տե՛ս Կողոս. 3.5): Երբ մենք ազահ ենք, մենք մեր ցանկութիւնները, ծգտումները, յաւակնութիւնները, համբաւը, կարգավիճակը, ճանչցուած ըլլալը եւ դրամական անհագութիւնը կը դասենք աւելի բարձր, քան Աստուած եւ այլ մարդիկ:

Կարելի է շատ պատմութիւններ պատմել այն մասին, թէ ինչպէս ազահութիւնը կը ներթափանցէ հաւատացեալներու կեանքը: Բաղասանը կորսնցուց իր յարաբերութիւնները Աստուծոյ հետ ճիշդ այս պատճառով, ինչպէս եւ Կայէնը, Կորիսը եւ շատ մարդիկ, որոնք ժամանակ մը Աստուծոյ ներկայութեան մէջ էին: Շատերը ազահութեան մէջ կ'իյնան, քանի որ զգուշացումներ չեն ստացած: Մենք պէտք է զգուշացնենք մարդոց ուսուցումներու եւ քարոզներու միջոցով, իսկ ատոր համար անհրաժեշտ է դադրեցնել միայն դրական եւ լաւատեսական ուղերձներ քարոզելը: Եթէ մենք կը ցանկանք օգնել մարդոց հասունանալ Քրիստոսի մէջ, մենք պէտք է ոչ միայն *սորվեցնենք*, այլեւ՝ *զգուշացնենք* (տե՛ս Կողոսացիս 1.28):

Երբ մանուկ էի, ինձի հաճելի էր, երբ ծնողներս կը սորվեցնէին ինձի, բայց ես ուշադրութիւն չէի դարձնէր անոնց զգուշացումներուն: Այնուամենայնիւ, հետագային գիտցայ, որ ճիշդ զգուշացումները փրկեցին իմ կեանքը: Եթէ հայրս չզգուշացնէր զիս պտուտակահանը ելեկտրական վարդակի մէջ մտցնելու մասին, ես կրնայի ընել ատիկա՝ հետաքրքրասիրութենէն մեկնած, եւ մահանալ ելեկտրական հոսանքէն:

Պօղոսը ըսաւ իր սիրելի եկեղեցիներէն մէկուն. «Արթուն կեցէ՛ք եւ միտքերնիդ բերէ՛ք, թէ երեք տարի գիշեր ու ցերեկ չդադրեցայ ամէն մէկը արցունքով խրատելի» շարունակ եւ չեմ դադրած գիշեր ու ցերեկ արցունքներով զգուշացնել ամէն մէկուն» (Գործք 20.31): Ամէն օր ու գիշեր՝ երեք տարուան ընթացքի՛ն: Եւ ան կ'ընէր ատիկա արցունքներով: Արդեօ՞ք մենք կը զգուշացնենք մարդոց: Արդեօ՞ք կ'ընենք ատիկա ամէն օր: Թէ՞ մենք՝ քարոզողներս եւ սորվեցնողներս, յոյս ունինք, որ մեր խրախուսական ուղերձները ետ պիտի պահեն մեր ունկնդիրները ազահութենէն: Ատիկա մեզի ընդհանրապէս կ'անհանգստացնէ՞: Արդէն երկար տարիներ է՝ եւ չեմ լսած նոյնիսկ մէկ ուղերձ ազահութենէն հեռանալու մասին:

Պօղոսը՝ այն առաքեալը, որ կը քարոզէր շնորհքի մասին, նոյնպէս իր սրտի աղաղակը կ'ուղղէր Եփեսոսի եկեղեցւոյ մէջ, ինչպէս նաեւ մեզ. «Մի՛ իյնաք ազահութեան մէջ»:

Լսեցէ՛ք նաեւ Յակոբոս առաքեալի խօսքերը.

«Ի՞նչը վիճաբանութիւններ եւ կռիւներ կ'առաջացնէ ձեր միջեւ: Մի՞թէ ատոնք չեն գար այն չար ցանկութիւններէն, որոնք

կը պատերազմին ձեր մէջ: Դուք կը ցանկաք այն, ինչ որ չունիք, եւ դաւեր կը հիւսէք... աստիկա ստանալու համար: Դուք կը նախանձիք այն ամէնուն, ինչ որ ունին ուրիշները, բայց չէք կրնար ունենալ ատոնք. այնպէս որ, դուք կը կռուիք եւ կը պատերազմիք՝ այդ բաները անոնցմէ խլելու համար: Դուք չունիք այն, ինչ որ կը ցանկաք, որովհետեւ չեք խնդրեր Աստուծմէ: Եւ նոյնիսկ երբ կը խնդրէք, չեք ստանար, որովհետեւ ձեր դրդապատճառները բոլորովին սխալ են. դուք միայն կը ցանկաք այն, ինչ որ հաճոյք կը պատճառէ ձեզի: Շնացողներ՝» (Յակոբոս 4.1-4, NLT):

Տէ, Յակոբոս, այդքան բացասական մի՛ ըլլար: Մի՞թէ այս առաքեալը մռայլ, դժկամ եւ խիստ մարդ էր: Թէ՞ ան իսկապէս կը սիրէր այն մարդիկը, որոնց կը գրէր: Թերեւս ասիկա՞ էր պատճառը, որ ան սթափեցնող ճշմարտութիւնը կը խօսէր անոնց՝ մասսայականութիւն վայելող լաւատեսական ուղերձ քարոզելու փոխարէն: Թերեւս Աստուած ճիշդ ա՞յս պատճառով գործածեց զինք՝ Նոր կտակարանի մէկ մասը գրելու համար, փոխարէնը ընտրէր այդ օրերուն մէջ ապրող ուրիշ ծառայող մը, որ ավելի ոգելորիչ ուղերձներ ունէր:

Ո՛չ՝ անպարկեշտ խօսակցութիւններուն

Մեր «կարելի չէ»-ներու ցուցակի յաջորդ կէտն է՝ *«մի՛ մասնակցիք յիմար խօսակցութիւններուն* եւ մի՛ պատմէք անպարկեշտ պատմութիւններ եւ կատակներ»: Այս կէտին մէջ կը մտնէ նման տեսանիւթեր դիտելը եւ երգեր կամ այլ ծայնագրութիւններ լսելը:

Ինծմէ խնդրած էին օգնել խումբ մը երիտասարդներու, որոնք ծառայողական խումբերու անդամներ էին: Անոնք շփոթուած էին, քանի որ անոնց աւագները կ'օգտագործէին աղտոտ արտայայտութիւններ, անպարկեշտ կատակներ կ'ընէին, եւ անոնց բառապաշարը ոչինչով կը տարբերէր կորսուած մարդոց բառապաշարէն: Ինչո՞ւ անոնց աւագները այդպէս կը վարուէին: Հնարաւո՞ր է արդեօք, որ մենք չենք ըսեր Աստուծոյ առաջնորդներուն եւ ժողովուրդին. «Այսպիսի վարքը վայել չէ Արքայութեան քաղաքացիին»:

Պօղոս կը գրէ Կողոսացիներուն. «Թող ձեր խօսքը շնորհքով լեցուած եւ գրաւիչ ըլլայ» (4.6, NLT): Մեր խօսքը պէտք է շնորհքով լեցուած ըլլայ:

Մի՛ գինովնաք

Յաջորդը. *«մի՛ գինովնաք»*՝ ո՛չ գարեջուրով, ո՛չ գինիով, ո՛չ որեւէ ոգելից խմիչքով (մենք կրնանք վերագրել նոյն խօսքը թմրանիւթերուն՝ թէ՛ օրինա-

կան, թե՛ անօրինական եւ նոյնիսկ՝ բժիշկներու կողմէն դուրս գրուող թմրեցնող միջոցներուն): Կրկին, գոյութիւն ունի այնպիսի բան, ինչ որ *կարելի չէ*:

Ալքոհոլը գայթակղիչ է (տե՛ս Առակ. 23.31-33): Այն կրնայ դիւրաբար հրապուրել մեզ, որ խմենք աւելին՝ չհասկնալով, թէ երբ պէտք է կենանք: Ալքոհոլը կը նուազեցնէ եւ, ի վերջոյ, կը սպառէ ողջամտութիւնը: Արգելքները կ'անտեսուին, եւ սրտի ու մտքի բնական պաշտպանիչ գործառոյթները կը դադրին ազդել մարդու վրայ: Ասիկա կարելի է համեմատել համակարգիչի ներքին ցանցի եւ համացանցի միջեւ գտնուող անվտանգութեան համակարգը (հրապատը) հեռացնելու հետ: Խոհեմութիւնը կը սկսի աստիճանաբար նուազիլ, եւ մենք աւելի բաց կը դառնանք վնասակար միտքերու համար: Ըստ էութեան, ալքոհոլը կը հեռացնէ մեր ուղեղի պաշտպանական համակարգը: Նոյնիսկ եթէ մենք գիտենք, թէ որն է մեր չափը, եւ կրնանք չխմել անկէ աւելի, կարելի է, որ անգիտակցաբար գինովութեան դրդենք ուրիշները: Առիթ տուէք պատմութիւն մը պատմել:

Եկեղեցւոյ մը գլխաւոր հովիւը խմիչք կ'օգտագործէր իր քաղաքի ճաշարաններէն մէկուն մէջ: Անոր անդամներէն մէկը, որ վերջերս դարձի եկած էր, կը ճաշէր նոյն ճաշարանին մէջ: Ան հարուստ գործարար էր, որ մինչեւ փրկուիլը խմիչքի հետ կապուած խնդիրներ ունեցած էր: Իր դարձի գալէն յետոյ ան այլեւս խմիչք չէր օգտագործած. ան այն մարդոցմէն էր, որ «ծեւով մը փախած էր խաբէութեան կեանքէն» (Բ. Պետրոս 2.18, NLT):

Այդ դէպքէն կարճ ժամանակ յետոյ այդ գործարարը երեք օր տեսող գինովութեան մէջ էր: Այդ երեք օրուան ընթացքին ան շատ անխոհեմ որոշումներ կայացուց եւ դրամական առումով կորսնցուց գրեթէ ամէն ինչ: Աւելի սարսափելիւն այն է, որ ան կորսնցուց իր ընտանիքը: Որոշ ժամանակ յետոյ անոր հարցուցին, թէ ինչո՞ւ այդպէս վարուած էր: Ան պատասխանեց. «Ես տեսայ, որ իմ հովիւը խմիչք կ'օգտագործէր, եւ մտածեցի, որ *եթէ անոր կարելի է, ուրեմն, ինձի ալ կարելի է*»:

Անշուշտ, ի վերջոյ, ինքն է պատասխանատուն իր սխալ ընտրութեան համար, բայց մի՞թէ այս դէպքը պէտք չէ դրդէ մեզ հաշուի առնել այն ազդեցութիւնը, որ մենք ունինք մարդոց վրայ:

Վերջերս աւելի շատ ծառայողներ ազատօրէն խմիչք կ'օգտագործեն հասարակական վայրերուն մէջ: Անոնք կ'օգտագործեն աստուածաշնչեան խօսքերը՝ ապացուցելու համար, որ ունին այս իրաւունքը: Ատոնցմէ մէկը Ա. Տիմոթէոս 3.3-ն է, որուն մէջ Պօղոսը կ'ըսէ Տիմոթէոսին, որ եկեղեցւոյ առաջնորդները պէտք չէ «գինեմու» ըլլան: Յունարէնին մէջ կ'օգտագործուի «*փարոհնու*» բառը, որուն սահմանումներէն մէկը, ըստ «*Աստուածաշնչեան բառերու ուսումնասիրութեան լիակատար բառարանին*», հետեւեալն է. «Գինիի հետ առնչուող, գինով: Այս բառը չի նշանակեր ալքոհոլի պատասխանատու եւ չափաւոր օգտագործում, այլ՝ չարա-

շահում կամ անդադար օգտագործում: Այս բառը կը պատկերէ մարդ մը, որ սեղանին վրայ մշտապէս շիշ (կամ՝ գինիի տիկ) դրուած է, եւ կ'արտայայտէ կախումաւորութիւն: «Նիւ Լիվինկ» թարգմանութիւնը կը վերարտադրէ այս խօսքը որպէս «... չըլլայ գինեմոլ» (Ա. Տիմոթէոս 3.3, NLT):

Ուրիշ հատուածի մը մէջ Պօղոսը խորհուրդ կու տայ Տիմոթէոսին. «...քիչ մըն ալ գինի խառնէ ստամոքսիդ եւ յաճախակի հիւանդութիւններուդ համար» (Ա. Տիմոթէոս 5.23): Տիմոթէոսին կարելի է անուանել Եփեսոսի եկեղեցւոյ գլխաւոր հովիւ: Այսօր շատ ծառայողներ կը մտածեն. «Եթէ եկեղեցւոյ առաջնորդը պէտք չէ նոյնիսկ դպչէր գինիին, ինչպէս ուխտաւորները Հին կտակարանին մէջ, Պօղոսը չէր պատուիրէր հովիւ Տիմոթէոսին գինի օգտագործել, նոյնիսկ ասոր առողջարար յատկանիշներու համար»:

Ամենայաճախ մէջբերուող հատուածը այս բանավէճին մէջ այն է, որ Յիսուսը ջուրը գինի դարձուց (տե՛ս Յովի. 2.1-11): Գաղափարը հետեւեալն է. «Յիսուս ջուրը գինիի չէր դարձնէր հասարակական միջոցառման ժամանակ, եթէ այն կարելի չըլլար խմել»:

Եթէ մենք հաշուի առնենք բացառապէս այս խօսքերը, մարդիկ կրնան վիճարկել, որ հասարակական վայրին մէջ խմիչք օգտագործող հովիւը արդարացի վարուած էր: Այնուամենայնիւ, մենք կ'ապրինք հասարակութեան մէջ, ուր գինովութիւնը լայնօրէն տարածուած է: Ամէն տարի Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ խմիչքի հետ առնչուող պատահարներու պատճառով կը մահանայ գրեթէ 88.000 մարդ²⁰: Գինովութիւնը կը համարուի մահուան երրորդ առաջատար կանխարգելիչ պատճառը²¹: 2007 թուականին «Ուաշինկթոն Փոստ» պարբերականը հաղորդած է, որ ամէն երրորդ ամերիկացին ունի կամ ունեցած է խնդիրներ խմիչքի հետ²²: Համաձայն «Ալքոհոլի չարաշահման եւ ալքոհոլիզմի ազգային ինսթիթիւթի» տուեալներերուն՝ 2012 թուականին տասնութ տարին ամբողջացուցած քաղաքացիներու 25 տոկոսը տեղեկացուցած է, որ նախորդ ամսուան ընթացքին ներգրաւուած է եղած է գինովութեան մէջ: Այս տուեալները սարսափելի են. ամեն չորսէն մէկը՝ ընդամէնը մէկ ամսուան մէջ: Ես կրնայի շատ աւելի վիճակագրական տուեալներ բերել, բայց իմաստը այն է, որ ամերիկացիները խմիչքը չարաշահելու հակումաւորութիւն ունին:

Խմիչքի չարաշահումը լայնօրէն տարածուած է ոչ միայն Միացեալ Նահանգներուն մէջ: 2012 թուականին ամբողջ աշխարհին մէջ բոլոր մահուան դէպքերու (3.3 միլիոն) 6 տոկոսը տեղի ունեցած է խմիչքի սպառման պատճառով: Ամբողջ աշխարհին մէջ խմիչքի չարաշահումը վաղաժամ մահուան եւ հաշմանդամութեան հիմնգրորդ առաջատար ռիսքի (վտանգ սպառնացող) գործօնն է. իսկ արդէն 15-49 տարիքային խումբին մէջ՝ այն առաջինն է²³:

Այս ալքոհոլային համաճարակի պայմաններուն մէջ մենք՝ որպէս պատասխանատու հաւատացեալներ, պէտք է քայլ մը առաջ երթանք մեր տրամաբանութեան մէջ: Մենք պէտք է աւելի լայնօրէն կիրառենք այն ցուցմունքները, որոնք Պօղոսը տուաւ կուռքերուն զոհաբերած միսը ուտելու վերաբերեալ: Ան կը գրէ. «Եթէ այն, ինչ որ կ'ուտեմ, մեղքի կը դրդէ ուրիշ հաւատացեալ մը, ես այլեւս միս չեմ ուտեր, քանի տակաւին կ'ապրիմ, որովհետեւ չեմ ուզեր ուրիշ հաւատացեալի մը սայթաքման պատճառ դառնալ» (Ա. Կորնթացիս 8.13, NLT): Պօղոսը պարզ ըսաւ, որ կուռքերուն զոհաբերուած միսը ուտելը մեղք չէ: Այնուամենայնիւ, ան ըսաւ, որ եթէ այդ պատճառով աւելի տկար եղբայրը կը գայթակղի եւ կը սայթաքի հաւատքի մէջ, ան այլեւս չ'ուտեր այն:

Կարելի է փաստարկներ առաջադրել, որոնք պիտի սատարեն փոքր չափերով խմիչք օգտագործելու քրիստոնեայի իրաւունքը, բայց որպէս հաւատացեալներ (եւ յատկապէս անոնք, որոնք եկեղեցական առաջնորդներ են)՝ մենք պէտք է պատասխանենք հետեւեալ հարցին: Մի՞թէ մենք կը ցանկանք գայթակղութեան քար դառնալ անոնց համար, որոնք հազիւ ազատած են զինովութեան մեղքէն, կամ կրկին ետ մղել զանոնք կախուածութեան մէջ՝ յատկապէս հաշուի առնելով, որ մենք կ'ապրինք այնպիսի հասարակութեան մէջ, որուն մէջ այս չարաշահումը անվերահսկելի չափերու կը հասնի: Եթէ այն աւագ հովիւր, որ խմիչք կ'օգտագործէր ճաշարանին մէջ, ապրէր այս իմաստութեամբ, թերեւս այդ գործարարը խուսափէր իր ողբերգական եռօրեայ զինովութենէն:

Մենք պէտք է փախչինք զինովութեան որեւէ ձեւէ: Այս վարքը Աստուծոյ զաւակին չի վայելեր, եւ ասիկա աննշան հարց չէ: Մենք խիստ զգուշացում ստացած ենք. «Չէ՞ք հասկնար, որ անոնք, որոնք սխալ կը գործեն, չեն ժառանգեր Աստուծոյ թագաւորութիւնը: Մի՛ խաբէք դուք ձեզ: Անոնք, որոնք կը տրուին սեռական մեղքին... կա՛մ գողեր են, կա՛մ ազահ մարդիկ են, կա՛մ *զինովներ* են, կա՛մ բռնացող են, կա՛մ կը խաբեն մարդիկ՝ ասոնցմէ ոչ մէկը պիտի ժառանգէ Աստուծոյ թագաւորութիւնը» (Ա. Կորնթացիս 6.9,10, NLT):

Կայ եւս մէկ կարեւոր կողմ մը, որ պէտք է հաշուի առնենք: Մենք հոգեւոր մրցավազքի մէջ ենք, եւ մեր Մարզիչը կը պատուիրէ մեզ՝ «...ազատինք ամէն ծանրութենէ, որ կը դանդաղեցնէ մեր ընթացքը, յատկապէս՝ այն մեղքէն, որ այնքա՛ն դիւրին ծուղակի մէջ կը նետէ մեզ» (Եբրայեցիս 12.1, NLT): Կան մեղքեր, որոնք աւելի դիւրին կը պաշարեն մեզ, քան միւսները: Ասիկա կարելի է տեսնել վերոյիշեալ վիճակագրութիւններու օրինակով, որոնց մէջ խմիչքի չարաշահումը իսկապէս բարձր տեղ կը գրաւէ: Ուրեմն, արժէ՞ սիրախաղ ընել բանի մը հետ, ինչ որ շատերուն կործանած է:

Որպէս ամփոփում՝ հարց մը տանք. ինչո՞ւ մենք, ունենալով Սուրբ Հոգին լեցունութեան փորձառութիւնը, կը ձգտինք խաղաղութիւն ստանալու կամ լարուածութիւնը թեթեւցնելու արհեստական միջոցներու: Հնարաւոր է, որ մենք Հոգիով լեցուած ենք միայն անուանապէս, ոչ թէ փորձառութեամբ, եւ այդ պատճառով ալ ուրիշ միջոցներու կարիք ունինք:

Մի՛ խաբուիք

Մենք ուսումնասիրեցինք ընդամենը մէկ գլուխ Եփեսացիներու նամակէն: Նոր կտակարանին մէջ կան շատ ուրիշ պատուիրաններ: Կրկին, յիշեցէ՛ք, որ դուք չէք պահեր այս պատուիրանները՝ փրկուելու համար. այսպիսի կենսառճը յատուկ է այն մարդոց, որոնք կը բնակին Աստուծոյ յայտնուած ներկայութեան մէջ:

Ահա թէ ինչպէս Պողոս կ'ամփոփէր իր «կարելի չէ»-ներու ցուցակը.

«Մի՛ խաբուիք անոնցմէ, որոնք կը փորձեն արդարացնել այս մեղքերը, որովհետեւ Աստուծոյ բարկութիւնը պիտի թափի անոնց վրայ, որոնք անհնազանդ են Անոր: Մի՛ մասնակցիք այն բաներուն մէջ, որոնք այս մարդիկ կ'ընեն... Ջգուշօրէն որոշեցէ՛ք, թէ ինչը հաճելի է Տիրոջը: Մի՛ մասնակցիք չարին եւ խաւարին անարժան գործերուն. փոխարէնը, բացայայտեցէ՛ք ատոնք: Նոյնիսկ խօսիլը այն բաներուն մասին, ինչ որ այդ անաստուած մարդիկ կը գործեն ծածուկին մէջ, ամօթալի է... Այնպէս որ, զգո՛յշ եղէք, թէ ինչպէս կ'ապրիք» (Եփեսացիս 5.6,7,10-12, NLT):

Մի՛ խաբուիք անոնցմէ, որոնք կը փորձեն արդարացնել իրենց մեղքերը: Ատոնց հետեւանքները շատ վատ պիտի ըլլան: Մենք պէտք է զգուշօրէն, ոչ թէ թեթեւօրէն որոշենք, թէ ինչը մեր կեանքին մէջ հաճելի է Աստուծոյ: Մեզմէ շատերը այնպէս կը վարուին, կարծես խաղաիրապարակի մէջ են, այնինչ, իրականութեան մէջ մենք պատերազմի դաշտին մէջ ենք: Մենք պատերազմի մէջ ենք. մեր գլուխները՝ թշնամիի թիրախն են, եւ ան կը գործէ առանց հանգիստի, որպէսզի կործանէ մեզ: Բայց եթէ մենք մնանք լոյսի մէջ, ան պիտի ձախողի, քանի որ մեր կեանքին մէջ կայ Աստուծոյ զարմանալի շնորհքը:

Ես կը խրախուսեմ ձեզ. նկրտեցէ՛ք դէպի այս բարձրագոյն կեանքը: Ապաւինեցէ՛ք շնորհքին, որպէսզի ապրիք աստուածապաշտ եւ անարատ կեանքով այս այլասերուած եւ մահացող աշխարհին մէջ: Դուք ունիք այն ամէնը, ինչ որ կը պահանջուի, որովհետեւ Աստուած ծրիաբար տուած է ձեզի Իր աստուածային բնութիւնը: Մի՛ վատնէք, ո՛չ ալ պարապ տեղը ընդունեցէ՛ք Աստուծոյ զարմանալի շնորհքը:

ՄԵՐ ԴՐՈՒՄՆԵՐԸ

«Այդ իսկ պատճառով ես մշտապես կը յիշեցնեմ ձեզի այս բաներուն մասին, թէ եւ դուք արդէն գիտէք ատոնք եւ հաստատ կեցած էք այն ճշմարտութեան մէջ, որ սորված էք: Եւ ես ճիշդ պիտի վարուիմ, որպէսզի շարունակեմ յիշեցնել ձեզի, քանի տակաւին կ'ապրիմ: Որովհետեւ մեր Տէր Յիսուս Քրիստոսը ցոյց տուաւ ինձի, որ ես շուտով պիտի ձգեմ այս երկրային կեանքը. այնպէս որ, ես պիտի ջանամ, որ միշտ յիշէք այս բաները, երբ ես այլեւս չըլլամ այս աշխարհին մէջ»:
— Բ. Պետրոս 1.12-15, NLT

...Մենք կը համարենք, որ Աստուծոյ ընկերութենէն զրկուիլը՝ միակ սարսափելի բանն է, եւ Աստուծոյ ընկերը դառնալը կը համարենք միակ բանը, որ արժանի է պատուի, եւ արժէ փափաքի:
— Գրիգոր Նիսացի

Սուրբ ապրելու կանչը ո՛չ առաջարկ է, ո՛չ էլ խորհուրդ: Ասիկա այնպիսի բան մը չէ, ինչին մենք պէտք է ձգտինք, բայց իրականութեան մէջ անկարող ենք հասնելու: Ասիկա պատուիրան է, եւ ասիկա կատարելը կը սպասուի մեզմէ:

Պետրոս առաքեալը պարզ ըսաւ, որ անչափ կարեւոր է կրկնել մեր Տէր Յիսուս Քրիստոսի կողմէն տրուած առանցքային ճշմարտութիւններն ու պատուիրանները: Յիշեցնելու գաղափարը երեք անգամ գրուած է վերոնշեալ չորս խօսքերուն մէջ: Պետրոսի նամակը կարդացող մարդիկ արդէն գիտէին, թէ ինչ գրուած էր. այնուամենայնիւ, ան ցոյց տուաւ, որ նոյնիսկ իր Երկինք երթալէն յետոյ իր ընթերցողները պէտք է շարունակ վերյիշէին այս կարեւոր ճշմարտութիւնները: Արժէ, որ մենք նոյնպէս աւելի ուշադիր ըլլանք այս կարեւոր ուղերձին:

Իր երկու նամակներու սկիզբը Պետրոս կը գրէ. «Դուք *պէտք է* սուրբ *ըլլաք* ձեր բոլոր գործերուն մէջ» (Ա. Պետրոս 1.15, NLT): Սուրբ Գիրքին մէջ յաճախակի կը կրկնուին երկու տեսակի յորդորներ՝ առաջարկներ եւ պատուիրաններ: Մենք իմաստուն ենք, եթէ ուշադրութիւն դարձնենք առաջարկներուն, բայց յիմար ենք, եթէ անտեսենք պատուիրանները: Պետրոսի այս խօսքերը՝ պատուիրան է:

Ակնյայտ է, որ առաքեալը կը խօսի մեր կենսաոճի մասին: Այս պատճառով մենք պէտք չէ երկչոտութեամբ ընկրկինք, սարսափինք կամ յուսահատինք: Մենք խոստում ունինք. «Անոր պատուիրանները ծանր չեն» (Ա. Յովհաննէս 5.3): Ասիկա կը նշանակէ, որ պատուիրանները կատարելը հնարաւոր է, ոչ թէ անիրատեսական:

Իր առաջին նամակի մնացած մասին մէջ Պետրոս կը շարունակէ խօսիլ գործնականօրէն սուրբ ապրելու մասին, եւ աւելի շատ՝ երկրորդ նամակին մէջ: Ահա անոր խօսքերէն մէկը. «Ես կը զգուշացնեմ ձեզ՝ որպէս «ժամանակաւոր բնակիչներ եւ օտարերկրացիներ», հեռու մնալ աշխարհիկ ցանկութիւններէն, որոնք կը պատերազմին ձեր իսկ անձեռուն դէմ» (Ա. Պետրոս 2.11, NLT):

Պատերազմի դաշտը՝ մեր միտքն է: Մենք պէտք է զսպենք մեր միտքերը, զգացումները եւ կամքը: Բոլոր մեղքերը կը սկսին հոսկէ: Պայքարը սովորաբար տեղի կ'ունենայ, երբ մենք ամենաքիչը կը սպասենք. յաճախ այն տեղի կ'ունենայ, երբ մենք անհաւատներու կամ փոխգիշման գացող հաւատացեալներու հետ ենք: Պետրոսը դիպուկ կը խօսի այս մասին. «Ձգո՛յձ եղէ՛ք, որ պատշաճ ձեւով ապրիք ձեր անհաւատ հարեւաններու միջեւ» (Ա. Պետրոս 2.12, NLT):

Առաքեալը կը խօսի, այն մասին որ մենք պէտք է սուրբ վարք ունենանք թէ՛ աշխատանքի, թէ՛ ամուսնութեան եւ թէ ուրիշ տեսակի փոխյարաբերութիւններու մէջ: Ան կը շեշտադրէ, որ ամենաարդիւնաւէտ կերպով մենք կրնանք տալ մեր քրիստոնէական վկայութիւնը մեր անհավատ դրացիներուն, աշխատակիցներուն, համադասարանցիներուն, յատկապէս՝ անոնց, որոնց հետ մտերիմ հաղորդակցութիւն ունեցած է՝ մինչեւ Քրիստոսին ընդունիլը: Ան կ'ըսէ.

«Անշուշտ, ձեր հին ընկերները չեն հասկնար, թէ ինչու դուք այլեւս ձեր հին շրջապատին հետ չէք: Բայց դուք պէտք չէ բացատրութիւններ տաք անոնց: Անոնք են, որ պատասխանատուութեան պիտի կանչուին, եւ այն ալ՝ անձամբ Աստուծոյ առջեւ» (Ա. Պետրոս 4.4,5, MSG):

Իր երկրորդ նամակի սկիզբը Պետրոս կը խրատէ մեզ. «...ջանք ըրէք, որ ապացուցէք, որ իսկապէս այն մարդոց կարգին էք, որոնց

Աստուած կանչած եւ ընտրած է: Ըրէ՛ք այս բաները, եւ դուք երբեք ետ չէք մնար» (Բ Պետրոս 1.10, NLT): Մեր իսկութիւնը ապացուցելու համար մենք պէտք է շարք մը վարքագիծեր ունենանք, որոնց կարգին են բարոյական գերազանցութիւնը, զսպուածութիւնը, համբերութիւնը, երկայնամտութիւնը, աստուածապաշտութիւնը, բարութիւնը եւ սէրը: Ասոնք շնորհքի պտուղներն են, որոնք մենք հաւատքով կը հասունցնենք: Եթէ ընենք այս բաները, «...այդ ժամանակ Աստուած թոյլ պիտի տայ ձեզի շքամուտքէն մտնել մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի յաւիտենական թագաւորութիւնը» (խօսք 11):

Պետրոս կը շարունակէ զգուշացնել, որ պիտի բարձրանան ուսուցիչներ, որոնք «խորամանկութեամբ կործանարար հերձուածութիւններ կը սորվեցնեն» (Բ. Պետրոս 2.1, NLT): Անոնք մեծ լսարաններ պիտի գրաւեն. «Շատերը պիտի հետեւին անոնց չար ուսմունքին եւ ամօթալի անբարոյութեան» (խօսք 2): «Մեսիճ» Աստուածաշունչին մէջ գրուած է այս կեղծ ուսուցիչներուն մասին. «Անոնք կեցած են դէպի կործանումը տանող արագ սահանքի վրայ, բայց ասիկա տեղի չունենար, մինչեւ որ հաւաքագրեն բազմութիւն մը՝ բաղկացած խառնիխուռն հետեւորդներէն, որոնք ճիշդը սխալէն չեն տարբերեր: Անոնք վատ ձեւով կը խօսին ճշմարտութեան ճանապարհի մասին» (խօսք 1,2, MSG):

Այս ուսուցիչները պիտի ըլլան «մեր միջեւ»՝ մեր համաժողովներուն, եկեղեցիներուն եւ տնային խմբակներուն մէջ: Խօսքը կը զգուշացնէ մեզ. «Այս մարդիկ կ'ուտեն ձեր հետ Տիրոջ սիրոյ յիշատակին նուիրուած միացեալ հացկերոյթներուն» (Յուդայ 12, NLT, նոյնպէս՝ Բ. Պետրոս 2.13): Անոնց կեղծ ուսմունքներու մէջ այնքա՛ն ճշմարտութիւն խառնուած պիտի ըլլայ, որ պիտի կատարուի երկու բան:

Առաջինը՝ մարդիկ այլեւս պիտի չկարենան տարբերել ճիշդը սխալէն: Այն վարքը, որ կը հեռացնէ մեզ Աստուծոյ սրտէն, պիտի համարուի ընդունուած, իսկ որոշ պարագաներուն՝ լաւ: Աստուծոյ Խօսքը պահելը եւ հռչակելը պիտի դիտարկուի որպէս օրինապաշտական եւ ուրիշները դատող վերաբերմունք:

Ապականուած «քրիստոնէական» կենսառճ ներմուծելու հետ մէկտեղ, այս ուսմունքները պիտի մթազնեցնեն մարդոց զանազանութիւնը: Այս խաբէութիւն բերող ծառայողները եւ ուսուցիչները պիտի ըլլան օժտուած, գերազանց հռետորներ. անոնք ազդեցութիւն պիտի ունենան շատերու վրայ եւ պիտի մոլորեցնեն շատերը: Քանի որ Աստուծոյ Խօսքի *ամբողջական* խորհուրդը այլեւս բացարձակ չափանիշ չի համարուիր, մարդիկ պիտի իյնան անհնազանդութեան ծուղակը՝ աւելի շատ, քան երբեք՝ անցեալին մէջ:

Երկրորդ հետեւանքը պիտի ըլլայ այն, որ Աւետարանը վատ համբաւ պիտի ունենայ: Ասիկա կրնայ տեղի ունենալ միայն՝ եթէ այդ ուսուցիչները օգտագործեն ճշմարտութեան բառապաշարը.

«Որ ուղիղ ճամբան ձգած՝ մոլորեցան...»

(Բ. Պետրոս 2.15):

Այս առաջնորդները սկսան իրենց ընթացքը որպէս աստուածապաշտ քրիստոնեաներ, բայց չյարատեւեցին: Ահա թէ ինչպէս պատահած է, որ անոնք գիտեն քրիստոնէութեան լեզուն, թէեւ հաւատարիմ չեն ասոր ճշմարտութեան:

Պետրոս կը նշէ, որ եթէ հետեւինք սուրբ կեանքին, մենք անկում չենք ունենար՝ երբեք առիթ չենք տար այդ սուտ ուսուցիչներու ազդեցութեան: Մեր ապահովութիւնը ճիշդ ասոր մէջ է: Անկէ յետոյ ան կը դիմէ անմիջապէս այդ ուսուցիչներու զոհերուն՝ այն մարդոց, որոնք պիտի իրապարտուին անոնց կեղծ ուսմունքներով եւ կենսառճով.

«Եւ երբ մարդիկ կը փախչին այս աշխարհի պղծութենէն՝ ճանչնալով մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսին, իսկ յետոյ կրկին կ'իյնան մեղքի կապանքներու մէջ, եւ կը ստրկանան ատկէ, անոնք կը յայտնուին աւելի վատ վիճակի մէջ, քան նախկինին էին: Աւելի լաւ պիտի ըլլար, որ անոնք երբեք չճանչնային արդարութեան ճանապարհը, քան ճանչնային, իսկ յետոյ մերժէին *սուրբ կեանքով ապրելու պատուիրանը, որ ստացած էին*» (Բ. Պետրոս 2.20,21, NLT):

Այս խօսքերը հազիւ կը տեղաւորուին մարդու մտքին մէջ: Եկէ՛ք անգամ մը եւս կրկնենք այն, ինչ որ գրուած է այս հատուածին մէջ: Այս մեծանուն առաքեալը կը գրէ անոնց մասին, որոնք իսկապէս փախած էին մեղքի գերութենէն՝ ընդունելով Յիսուս Քրիստոսը իրենց կեանքին մէջ: Այնուամենայնիւ, ոչ ողջամիտ վարդապետութեան, սխալ կերպով հաւատալու եւ զանազանութիւնը կորսնցնելու պատճառով անոնք ետընթաց կ'ապրին դէպի անաստուած կեանքը: Պետրոսը, փաստօրէն, կ'ըսէ, որ հիմա անոնք աւելի վատ վիճակի մէջ են, քան մինչեւ Յիսուսին ընդունիլը, եւ որ անոնց համար աւելի լաւ պիտի ըլլար, որ ընդհանրապէս չճանչնային ճշմարտութեան ճանապարհը, քան մերժէին սուրբ ապրելու պատուիրանը: Որքա՛ն սթափեցնող է:

Կրկին, մենք կը տեսնենք, որ սուրբ ապրիլը՝ պատուիրան է, եւ այն ակ՝ շատ վճռական:

Երկու անպարտելի ուժեր

Տիրոջ պատուիրանները ծանր չեն, քանի որ մեր նոր բնութիւնը՝ շնորհքի զօրացման հետ միասին, ատոնք պահելու կարողութիւն կու տայ մեզի: Բայց եկէ՛ք իրատես ըլլանք. այս կարողութիւնը ունենալով հանդերձ՝ ի՞նչը կը դրդէ մեզ՝ պահել սուրբ ապրելու պատուիրանը մեր պայքարի ամենաթէժ պահերուն: Պատասխանն է՝ երկու անպարտելի ուժերը:

Առիթ տուէ՛ք կառուցել իմ բացատրութիւնը առաջին ուժի մասին պատմութիւնով մը: Այն տեղի ունեցած 1980-ական թուականներուն, երբ ես տակաւին երիտասարդական ծառայութեան հովիւ էի: Մէկ անգամ քարոզ կը պատրաստէի մեր ծառայութեան համար եւ զգացի, որ Տէրը կը կամենար խօսիլ հետս: Ես հանդարտեցուցի ինքզինքս եւ լսեցի սրտիս մէջ. «Կարդա՛ Յովհաննէս 14.15-ը»:

Ես գաղափար չունէի, թէ ինչ գրուած էր Յովհաննէս 14.15-ին մէջ, այնպէս որ արագօրէն բացի, եւ նկատեցի, որ իմ Աստուածաշունչին մէջ այն նոր պարբերութենէն կը սկսէր: Ես կարդացի Յիսուսին խօսքերը. «Եթէ Ձիս կը սիրէք, Իմ պատուիրանները պահեցէ՛ք...»:

Անկէ յետոյ ես կարդացի տասնհինգերորդէն մինչեւ քսանչորրորդ խօսքերը: Բոլոր այս խօսքերը կապ ունէին Յովհաննէս 14.15-ին հետ: Այս բաժինի թեման՝ Յիսուսին խօսքերը պահելն է: Կարդալով այս խօսքերը՝ ես հասկցայ. «Ղուք կ'ապացուցէք, որ կը սիրէք Ձիս՝ պահելով Իմ պատուիրանները»: Երբ կարդացի վերջին խօսքը, Տէրը խօսեցաւ սրտիս. «Ղուս չհասկցար այս հատուածը. կրկին կարդա՛ այն»:

Ես կրկին կարդացի այս տասը խօսքերը: Եւ կրկին տպաւորութիւն ստեղծուեցաւ, որ այս հատուածի ըսելիքը հետեւեալն է. «Ղուք կ'ապացուցէք, որ կը սիրէք Ձիս՝ պահելով Իմ պատուիրանները»: Ես կրկին լսեցի Տիրոջ ձայնը. «Ղուս չհասկցար այս հատուածը. կրկին կարդայ այն»:

Ես արդէն լրջօրէն հետաքրքրուեցայ այս հատուածով: Եւ կրկին կարդացի այս տասը խօսքերը ու լսեցի Տիրոջմէն նոյնը. «Կրկին կարդա՛»: Երբ նոյն ձայնը կրկնուեցաւ եօթ կամ ութ անգամ, ես լրջօրէն յուսահատեցայ:

Որոշեցի չշտապել եւ կարդալ այս տասը խօսքերը կրիայի արագութեամբ: Ես կարդացի «Եթէ» բառը, կեցայ, բարձրաձայն ըսի այդ բառը եւ մտածեցի ատոր մասին: Ատկէ յետոյ անցայ յաջորդ՝ «դուք» բառին եւ կրկնեցի նոյնը: Եւ այդպէս կարդացի ամբողջ հատուածը, որ շատ ժամանակ պահանջեց ինձմէ: Գրեթէ տասնհինգ վայրկեան յետոյ ես աւարտեցի բոլոր տասը խօսքերը եւ անմիջապէս լսեցի Հոգիին. «Ղուս չհասկցար այս հատուածը: Կրկին կարդա՛ այն»:

Ես սրտնեղած աղաղակեցի. «Տէ՛ր, կը խնդրեմ, ներէ՛ իմ տգիտութիւնը: Թերեւս ես բթամիտ եմ: Բա՛ց իմ աչքերը, որ տեսնեմ, թէ ինչ կ'ըսես»:

Ապա ես կրկին կարդացի 15-րդ խօսքը. «Եթէ Ձիս կը սիրէք, Իմ պատուիրանները պահեցէ՛ք...»: Ես նկատեցի, որ «պահեցէ՛ք» բառին վրայ աստղիկ կայ: Նայեցայ լուսանցքի վրայի ծանօթագրութեան, ուր գրուած էր, որ աւելի ճշգրիտ թարգմանութիւնն է՝ «դուք պիտի պահէք»:

Երբ փոխարինեցի «պահեցէ՛ք» բառը այս բառակապակցութեամբ, եղաւ այսպէս. «Եթէ Ձիս կը սիրէք, դուք պիտի պահէք Իմ պատուիրանները»: Այսպէս կարդալէն յետոյ ներսս ըսես պայթիւն ըլլար. հիմա ես հասկցայ:

Անկէ յետոյ լսեցի Աստուծոյ ձայնը. «Ճո՛ն, Ես չէի ըսած, որ եթէ պահես Իմ պատուիրանները, դուն կ'ապացուցես, որ կը սիրես Ձիս: Ես արդէն գիտեմ՝ դու կը սիրե՞ս Ձիս, թէ՞ ոչ: Ես կ'ըսէի, որ եթէ մինչեւ ականջներուդ վերջը սիրահարուիս Ինծի, դուն Իմ պատուիրանները պահելու դրդապատճառ կ'ունենաս»:

Իմ սկզբնական պատկերացումը այս խօսքին մասին օրինապաշտական էր, իսկ նոր պատկերացումը՝ սիրային յարաբերութիւններու օրինակով, ճիշդ դրդապատճառ ունենալու բանալին էր:

Կրակոտ սէր

Առիթ տուէ՛ք բացատրել ասիկա օրինակով մը: Դո՛ւք երբեք սիրահարուա՞ծ էք: Երբ ես նշանուեցայ կնոջս՝ Լիզային հետ, մինչեւ ականջներս սիրահարուած էի անոր: Ես մշտապէս կը մտածէի անոր մասին: Կ'ընէի կարելիին չափ ամէն ինչ՝ անոր հետ ժամանակ անցընելու համար: Կը յիշեմ՝ անգամ մը մենք քանի մը ժամ միասին էինք: Ես հրաժեշտ տուի անոր եւ դուրս ելայ անոնց տունէն, բայց քիչ յետոյ Լիզան հեռաձայնեց ինծի եւ ըսաւ.

- Ճո՛ն, դուն բաճկոնդ մեր տունը ձգած ես:

Ես այնքա՛ն ուրախացայ, որ մոռցած էի բաճկոնս, որովհետեւ կրկին պիտի տեսնէի Լիզան: Ես պատասխանեցի.

- Կը կարծեմ՝ պէտք է ճիշդ հիմա գամ եւ վերցնեմ այն:

Երկուքս էլ խնդացինք: Ատիկա առիթ էր, որ ես քանի մը ժամ միասին պիտի անցընէինք:

Եթէ Լիզան ինչ որ քանի պէտք ունենար, եւ ատիկա կարելի ըլլար գտնել, անկախ այն բանէն, թէ որքանով անյարմար էր ինծի՝ ես պիտի գտնէի ատիկա: Եթէ ան հեռաձայնէր ինծի կէսգիշերին եւ ըսէր. «Սիրելիս, ես պաղպաղակ կ'ուզեմ», ես պիտի պատասխանէի. «Ինչպիսի՞ համով: Ես հինգ վայրկեանէն հոն կ'ըլլամ»: Ես պիտի ընէի ամէն բան,

որ կատարէի անոր բոլոր խնդրանքները: Իմաստը այն է, որ *անոր ցանկութիւնը՝ բերկրալի հրաման էր ինձի համար:*

Քանի որ ես սիրահարուած էի Լիզային, ուրախութեամբ կը կատարէի անոր ցանկութիւնները: Անոր խնդրանքներէն ոչ մէկը դժուարութիւն կը պատճառէր ինձի: Ես չէի կատարեր անոր ցանկութիւնները՝ ապացուցելու համար, որ կը սիրէի զինք. ես կ'ընէի այդ ամէնը, որովհետեւ սիրահարուած էի անոր:

Յիսուս ճիշդ ասիկա նկատի ունի: Երբ սիրահարուած ենք Անոր, մենք բերկրանք կը զգանք՝ կատարելով Անոր ցանկութիւնները: Անոր Խօսքը ծանր կամ սահմանափակող չէ. այն մեր սրտի այրող ցանկութիւնն է:

Եկէ՛ք քանի մը տարի առջեւ երթանք, երբ մենք արդէն ամուսնացած էինք: Իմ զբաղուածութիւնը ծառայութեան մէջ աւելցաւ, եւ առանց հասկնալու՝ իմ սէրը Լիզային հանդէպ նուազեցաւ: Այժմ Լիզային ցանկութիւնը այլեւս պատուիրան չէր ինձի համար: Յաճախ այն անյարմար էր, իսկ երբեմն՝ ծանր: Ես կը ծառայէի զինք բոլորովին այլ վերաբերմունքով: Ես չէի ծառայեր զինք ոգեւորութեամբ՝ ինչպէս այն ժամանակ, երբ նոր կը հանդիպէինք: Ես արդէն չէի ըսեր. «Ինչպիսի՞ համով: Հիմա հոն կ'ըլլամ»: Ես կ'ըսէի. «Իսկապէ՞ս: Սիրելի՛ս, ես այնքան գործեր ունիմ»: Ես չէի փնտրեր հնարաւորութիւններ՝ անոր հետ ժամանակ անցընելու համար, այլ՝ ժամանակ կ'անցընէի անոր հետ, որովհետեւ ատիկա ճիշդ էր: Իմ նոր ձգտումը՝ աշխատանքս էր: Լսեցէ՛ք, թէ Յիսուս ինչ կ'ըսէ եկեղեցւոյ մը.

«Գիտեմ քու գործերդ եւ քու աշխատութիւնդ եւ քու համբերութիւնդ... բայց քեզի դէմ բան մը ունիմ՝ քու առաջուան սէրդ ձգեցիր: Միտքդ բեր՝ հիմա, ուրկէ որ ինկար ու ապաշխարէ՛ եւ առաջին գործերդ ըրէ՛...» (Յայտնութիւն 2.2,4,5):

Կրկին կարդացէ՛ք Յիսուսին խօսքերը. «Գիտեմ քու գործերը... Դուն իյնկած ես. ապաշխարէ՛ եւ ըրէ՛ *առաջին գործերը*»: Հոս գրուած է տարբեր գործերու մասին: Առաջին գործերը դրդուած էին Յիսուսի հանդէպ եկեղեցւոյ ջերմեռանդ սիրով՝ նոյն վերաբերմունքով, որ ես ունէի, երբ կ'ըսէի. «Ինչպիսի՞ համով: Ես հինգ վայրկեանէն հոն կ'ըլլամ»: Որոշ ժամանակ յետոյ եկեղեցւոյ գործերը սկսան ըլլալ պարտաւորութենէն դրդուած՝ նման իմ դրդապատճառին, երբ կ'ըսէի. «Իսկապէ՞ս: Սիրելի՛ս, հիմա ես շատ զբաղած եմ»:

Մենք կրնանք ամփոփել ասիկա հետեւեալ կերպով. սկիզբը, երբ սիրահարուած էինք Յիսուսին, մենք խանդավառութեամբ կ'ընէինք որեւէ բան Անոր համար. այժմ, երբ մեր կրակը մարած է, հնազանդութիւնը պարտականութիւն դարձած է:

Ինչպե՞ս շտկել այս սխալը: Աւելի շատ ժամանակ անցընելով Անոր հետ՝ Խօսքի, աղօթքի եւ երկրպագութեան մէջ: Դարձնելով մեր մտքերը Անոր՝ ոչ միայն եկեղեցիին մէջ կամ մեր առաւօտեան աղօթքի եւ ընթերցանութեան ժամանակ, այլեւ ամբողջ օրուան ընթացքին՝ գիտակցելով, որ Ան մեզի հետ է: Մենք նոյնպէս պէտք է խնդրենք Սուրբ Հոգիէն՝ մեր մշտական Ուղեկցէն, որպէսզի ամէն օր լեցնէ մեր սրտերը Աստուծոյ սիրով:

Դուք չէք կրնար չափէն շատ սիրել զԱստուած. Անոր սէրը միայն պիտի աւելցնէ ձեր ձգտումը Անոր հանդէպ: Մի՛ մոռնաք. «Սէրը երբեք չի վերջանար» (Ա. Կորնթացիս 13.8):

Սուրբ երկիւղ

Երկրորդ ուժը՝ աստուածային երկիւղն է: Պօղոսը յատկապէս կը նշէ այս առաքինութիւնը՝ ցոյց տալով, որ այն կրնայ պահել մեզ սրբութեան ճանապարհին.

«...մաքրե՛նք մեր անձերը մարմնի ու հոգիի ամէն կերպ պղծութենէ եւ սրբութիւնը կատարելագործե՛նք Աստուծոյ ահով (վախով)» (Բ Կորնթացիս 7.1):

Սրբութիւնը կը կատարուի կամ կը հասունանայ Աստուծոյ երկիւղով: Այս ճշմարտութիւնը կարելի է տեսնել ամբողջ Նոր կտակարանին մէջ:

Պօղոսը կը գրէ ուրիշ եկեղեցւոյ մը. «...ահով եւ դողալով գործեցէ՛ք ձեր անձերու փրկութիւնը» (Փիլիպպեցիս 2.12): Կը Պահանջուի խորունկ երկիւղածութիւն, դող եւ սուրբ ահ՝ Աստուծոյ պատուիրաններուն հնազանդելու համար: Պետրոս կը գրէ սուրբ կեանքով ապրելու պատուիրանը պահելու մասին. այնպէս որ, դուք պէտք է ապրիք՝ երկիւղած Անորմէ, այն ժամանակի մէջ, որ կ'անցնիք որպէս «օտարականներ այս երկրին մէջ» (տե՛ս Ա. Պետր. 1.17, NLT):

Եբրայեցիներու նամակի հեղինակը կը յորդորէ մեզ ձգտիլ սրբութեան՝ այս խօսքերով. «Ուստի, անշարժ թագաւորութիւն ընդունած ըլլալով, պինդ բռնենք այն շնորհքը, որմով կը պաշտենք հաճութեամբ Աստուծոյ, ահով եւ երկիւղածութեամբ» (Եբրայեցիս 12.28): Աստուծմէ երկիւղ ունենալը կը նշանակէ՝ հաճութեամբ կամ ընդունելի կերպով ծառայել Զինք:

Շատերը չունին ճիշդ պատկերացում Տիրոջ երկիւղի մասին եւ կը շփոթեն այն վախի հետ: Անոնք կը մտածեն. «Մի՞թէ մենք չենք ազատած *վախէն*: Ի՞նչ տեղ ունի այն մեր կեանքին մէջ հիմա՛»:

Աստուած սէր է: Ան մեր Հայրն է: Այնուամենայնիւ, մենք պէտք է խօսինք Անորմէ *երկիւղ* ունենալու մասին, քանի որ այս մասին յաճախ կը խօսուի Նոր կտակարանին մէջ:

Ոմանք նուազեցուցած են Տիրոջ երկիւղի իմաստը՝ ըսելով. «Այն պարզապէս կը նշանակէ՝ երկրպագել Աստուծոյ»: Ես համաժողովի մը ներկայ էի Հարաւային Ափրիկէի մէջ, եւ համաշխարհային համբաւ ունեցող ուսուցիչ մը ըսաւ ինծի այս միտքը ծառայողներու հանգիստի սենեակին մէջ, իմ քարոզելէն անմիջապէս առաջ: Ես հարցուցի անոր. «Այդ պարագային, ինչո՞ւ Պօղոս Նոր կտակարանին մէջ չորս անգամ կը գրէ ահի եւ դողի մասին, եթէ ասիկա ընդամէնը կը նշանակէ՝ «երկրպագութիւն»: Դողալը աւելին է, քան երկրպագելը:

Յունարէն «թրոմոս» (դողալ) բառը «Սթրոնկի բառարանին մէջ» ունի միայն մէկ սահմանում՝ «վախէն ցնցուիլ»: Այս պարագային մեզի պատուիրուած է «կատարել մեր փրկութիւնը՝ վախէն ցնցուելով»: Ասիկա կ'ենթադրէ *խորին յարգանք* եւ նոյնիսկ՝ *առողջ սարսափ*, ինչ որ քիչ մը աւելին է, քան մեր պատկերացումը երկրպագութեան մասին:

Երբ խօսքը երկիւղի մասին է, մարդիկ կ'ըսեն. «Ասիկա հինկտակարանեան ուսմունք է: Մենք պէտք չէ վախնանք Աստուծմէ, որովհետեւ Ան չէ տուած մեզի վախի հոգի, այլ՝ սիրոյ»: Անոնք կը շփոթեն վախի հոգին Տիրոջ երկիւղին հետ:

Երբ Մովսէսը Սինա լեռան քով բերաւ Իսրայէլի ժողովուրդը, եւ Աստուած յայտնեց Իր ներկայութիւնը, բոլորը փախսան լեռան քովէն եւ գլուխները կորսնցուցած աղաղակեցին Մովսէսին, որ ան աղաչէր Աստուծոյ՝ չյայտնել Իր մեծութիւնը իրենց: Լսեցէ՛ք Մովսէսի պատասխանը Իսրայէլին.

«Մի՛ վախնաք, վասնզի Աստուած ձեզ փորձելու եկաւ, այնպէս որ Անոր վախը ձեր առջեւ ըլլայ, որպէսզի չմեղանչէք» (Ելից 20.20):

Այնպիսի տպաւորութիւն է, որ Մովսէս կը հակասէ ինքն իրեն. «Մի՛ վախնաք... Աստուած... է եկած... որ Անոր վախը ձեր առջեւ ըլլայ...»: Բայց ան պարզապէս տարբերակում կը մտցնէր *Աստուծմէ վախցած ըլլալու* եւ *Տիրոջ երկիւղը ունենալու* միջեւ: Տարբերութիւնը շատ մեծ է: Հազիւ թէ Աստուած ուզէր, որ մենք *վախնայիինք* Իրմէ: Ոչ ոք կրնայ մտերիմ ըլլալ անոր հետ, որմէ որ կը վախնայ, իսկ Աստուած ջերմեռանդօրէն կ'ուզէ մտերիմ ըլլալ մեր հետ:

Աստուծմէ վախցող մարդը պահելու բան ունի, որ ճիշդ անոր վախի պատճառն է: Առաջինը, ինչ որ Ադամն ու Եւան ըրին, երբ մեղանչեցին Աստուծոյ դէմ, Անոր ներկայութենէն պահուրտիլն էր (տե՛ս Ծննդ. 3.8): Իսկ այն մարդը, որ երկիւղ ունի Աստուծմէ, պահելու ոչինչ ունի. ան աւելի շատ կը վախնայ, որ կրնայ հեռու ըլլալ Աստուծմէ:

Այսպիսով, Տիրոջ երկիւղի առաջին սահմանումն է՝ *սարսափած ըլլալ Աստուծմէ հեռու ըլլալու միտքէն*: Աստուծմէ երկիւղ ունենալը կը նշանակէ՝ ակնածել եւ պաշտել Ջինք: Մենք ամբողջ սրտով կը յարգենք, կը պատուենք եւ կ'արժեւորենք Ջինք, նաեւ երկիւղածութիւն կը տածենք Անոր հանդէպ շատ աւելի, քան որեւէ երեւոյթի կամ ոեւէ մարդու:

Սուրբ երկիւղը կու տայ Աստուծոյ այն փառաւոր դիրքը, որուն Ան արժանի է. մենք կը ցնցուինք եւ կը դողանք Անոր առջեւ խորունկ ահով: Մենք ամուր կը յարինք Անոր սրտին՝ արժեւորելով Անոր ցանկութիւնները աւելի, քան ոեւէ մարդու ցանկութիւնները, ներառեալ՝ մերը: Մենք կը սիրենք այն, ինչ որ Ան կը սիրէ, եւ կ'ատենք այն, ինչ որ Ան կ'ատէ: Այն, ինչ որ կարելի է Անոր համար, կարելի է մեզի համար: Ահա թէ ինչու գրուած է. «Անոնք, որոնք կը վախնան Տիրոջէն, կ'ատեն չարը» (Առակ. 8.13, NLT):

Ելից 20.20-ը կը պնդէ, որ աստուածային երկիւղը հեռու կը պահէ մեզ մեղքէն: Աստուծոյ խօսքը նաեւ կը յայտնէ մեզի. «Տիրոջմէն վախնալով՝ մարդիկ կը խուսափին չարէն» (Առակաց 16.6, NLT): Պօղոս նոյնպէս կը գրէ, որ Տիրոջ երկիւղը այն ուժն է, որ կը դրդէ մեզ հեռանալ մեղքէն (տե՛ս Բ. Կորնթ. 7.1):

Այս խօսքերը իրական դարձան ինծի համար, երբ այցելեցի յայտնի հեռուստաաւետարանիչի մը, որ բանտն էր: Այդ մարդը, որ ամենայայտնի ծառայողն էր ամբողջ աշխարհին մէջ 1980-ական թուականներուն, խախտած էր մեր երկրի պետական օրէնքները, ինչպէս նաեւ շնութիւն գործած էր:

Ան արդէն շուրջ հինգ տարի ուղղիչ հաստատութեան մէջն էր, բայց իր պատիժը կրելու վաղ շրջանին հանդիպում ունեցած էր Յիսուսին հետ իր բանտախուցին մէջ, ինչ որ փոխած էր անոր կեանքը: Իմ գիրքերէն մէկը խորապէս դպած էր անոր, եւ ան խնդրած էր, որ այցելէի զինք:

Ես երբեք չեմ մոռնար այն պահը, երբ ան ներս մտաւ ուղղիչ հաստատութեան այցելութիւններու սենեակը: Ան զիս իր գիրկը մէկ վայրկեանէն աւելի պահեց՝ արցունքը աչքերուն: Այնուհետեւ գրկեց ուսերս եւ ջերմօրէն հարցուց.

- Դո՞ւք այդ գիրքը գրած էք, թէ՞ այն գրուած է վարձու հեղինակի կողմէն:

- Ո՛չ, ես գրած եմ այդ գիրքը՝ սկիզբէն մինչեւ վերջ:

- Մենք այնքա՛ն բանի մասին պէտք է խօսինք, եւ ընդամէնը իննսուն վայրկեան ունինք,- ոգելորուած ըսաւ ան եւ անմիջապէս նստեցաւ ու պատմեց ինծի իր պատմութիւնը:

Մեր խօսակցութեան գրեթէ ամենասկիզբը ան ըսաւ.

- Ճո՛ն, այս բանտը՝ Աստուծոյ դատաստանը չէր ինձի համար, այլ՝ Անոր ողորմութիւնը: Եթէ շարունակէի ապրիլ այնպէս, ինչպէս կ'ապրէի, ես պիտի յայտնուէի դժոխքին մէջ եւ յաւիտեան կորուստի պիտի մատնուէի:

Անոր խօսքերը ապշեցուցին զիս, իսկ պարզասրտութիւնն ու խոնարհութիւնը շատ տպաւորեցին:

Գրեթէ քսան վայրկեան անոր լսելէն յետոյ հարցում մը տուի, որ կը յուզէր զիս: Ես գիտէի, որ ան շատ կը սիրէր Յիսուսը եւ իր ծառայութեան սկզբնական շրջանին լեցուած էր Աստուծոյ կրակով, ես կ'ուզէի գիտնալ, թէ ինչպէս կորսնցուց իր ջերմեռանդութիւնը:

Ի վերջոյ, ես պարզապէս հարցուցի անոր.

- Ե՞րբ դուք դադրեցաք Յիսուսը սիրելէն: Ո՞ր պահէն: - Ես կ'ուզէի գիտնալ Յիսուսին հանդէպ սէրը կորսնցնելու նշանները, յատկապէս՝ ծառայողի կեանքին մէջ:

- Երբե՛ք,- համոզուածութեամբ պատասխանեց ան:

Ես ցնցուեցայ եւ քիչ մը շփոթեցայ անոր պատասխանէն: Ինչպէ՞ս ան կրնար այդպիսի բան ըսել: Ես ընդդիմացայ.

- Ի՞նչ նկատի ունիք: Դուք շնութիւն գործեցիք: Դուք դրամաշորթութեամբ կը զբաղէիք, որուն պատճառով ալ բանտն էք: Ինչպէ՞ս կրնաք ըսել, որ չէիք դադրած Յիսուսը սիրելէն:

Կրկին, ան նայեցաւ ուղիղ աչքերուս մէջ եւ անվարան ըսաւ.

- Ճո՛ն, ես կը սիրէի Յիսուսը այդ ամէնը գործելու ամբողջ ընթացքին: Ես լուռ էի. համոզուած եմ, որ դէմքիս մեծ շփոթմունք մը պատկերուած էր: Ան շարունակեց.

- Ճո՛ն, ես կը սիրէի Յիսուսը, բայց չէի վախճնար Անորմէ:

Քանի մը վայրկեան լռութիւն տիրեց: Ան թոյլ տուաւ, որ ընկալէի իր ըսածը: Ներսս ամէն ինչ տակնուվրայ կ'ըլլար: Ան խախտեց լռութիւնը՝ լրջօրէն ըսելով.

- Ճո՛ն, կան միլիոնաւոր ամերիկացիներ, որոնք ճիշդ ինձի պէս են: Անոնք կը սիրեն Յիսուսը, բայց չեն վախճնար Աստուծմէ:

Երեւակայական Յիսուսը

Այդ հանդիպումը շրջադարձային էր ինձի համար, քանի որ անկէ յետոյ իմ մէջ քաղց յառաջացաւ՝ աւելի շատ պատասխաններ գտնելու համար: Ինչպէ՞ս կրնայ այն մարդը, որ կը սիրէ զԱստուած, իյնալ մշտական եւ նոյնիսկ՝ ծանր մեղքի մէջ: Ինչպէ՞ս կրնան միլիոնաւոր մարդիկ, որոնք կը սիրեն զԱստուած, ապրիլ անսուրբ կեանքով: Անոնք կ'երկրպագեն եւ կը ծառայեն իրենց տեղական եկեղեցիներուն մէջ ու ձգտում ունին Աստուծոյ հանդէպ. այնուամենայնիւ, անոնք կ'ապրին

անկանոն սեռական կեանքով, կախուածութիւն ունին պորնոկրաֆիայէն, շարունակ կը ստեն, գինովութեան մէջ են, կ'ամուսնալուծուին ոչ սուրբգրային պատճառներով... այս ցուցակը կարելի է շարունակել: Անոնք կը սիրեն Յիսուսը, ինչպէս այդ ծառայողը. այդ պարագային, ինչն է չեն պահեր Անոր խօսքերը: Յիսուս ըսաւ, որ եթէ մենք սիրէինք Ջինք, Անոր հնազանդելու ուժ պիտի ունենայինք: Ի՞նչ է սխալը:

Թերեւս պատասխանը անհկա է, որ անոնք կը սիրեն ինչ որ մէկը, որ իրականութեան մէջ չեն ճանչնար: Հնարաւոր է, որ այդ հեռուստաաւետարանիչը եւ այն բազմաթիւ մարդիկ, որոնց մասին ան կը խօսէր, ինչ որ կերպար ստեղծած են իրենց մտքին մէջ, որ նման չէ իրական Յիսուսին: Եւ որ այս երեւակայական Յիսուսը անոնց մարմնաւոր բնութեան կու տայ այն, ինչ որ անոնք անզուսպ կերպով կը ցանկանան:

Մտածեցէ՛ք այս մասին. մեր երկրին մէջ շատերը կը հետաքրքրուին մարգիկներով եւ հոլիուտեան դերասաններով: Անոնց անունները սովորական դարձած են մեր տունը, իսկ զանգուածային լրատուամիջոցները կը պատմեն անոնց անձնական կեանքի մասին անթիւ հեռուստաաւետարանի հարցազրոյցներու եւ թերթային կամ ամսագրային յօդուածներու միջոցով: Ես լսած եմ, որ այդ հանրաճանաչ մարդոց սիրահարները կը խօսին անոնց մասին, ըսես անոնք իրենց ընկերներն են: Ես տեսած եմ, որ մարդիկ զգացականօրէն կ'ազդուին անոնց ամուսնական խնդիրներէն եւ նոյնիսկ կը տրտմին, երբ անոնք ողբերգութիւններու կը հանդիպին, ըսես անոնց ընտանիքի անդամներէն մէկը ըլլային:

Այնուամենայնիւ, եթէ այդ երկրպագուներէն մէկը փողոցը հանդիպէր իր հանրաճանաչ «ընկերօջը», ան նոյնիսկ բարեւ չէր ստանար այդ մարդէն: Եթէ ան այնքան համարձակ գտնուէր, որ կեցնէր իր «ընկերօջը», ան պիտի պարզէր, որ այդ անձնաւորութիւնը իրականութեան մէջ շատ կը տարբերի իր մտքին մէջ ստեղծած կերպարէն: Իմաստը անհկա է, որ այդ մարդու փոխարաբերութիւնները երեւակայական են:

Իսրայէլը ճիշդ այսպէս վարուեցաւ Եգիպտոսէն դուրս ելլելէն յետոյ: Երբ Մովսէս լեռ բարձրացաւ եւ քառասուն օր ու գիշեր ժողովուրդին հետ չէր, Աստուած լռեց, ոչ թէ Մովսէսին համար, այլ՝ ժողովուրդին: Ահարոնը եւ միւս առաջնորդները, որոնք հեռու էին Աստուծոյ ներկայութենէն, ստեղծեցին «աստուած» մը, որ ազատօրէն կը յարմարուէր իրենց մարմնաւոր բնութեան եւ անզուսպ ցանկութիւններուն:

Տարիներ շարունակ ես շատ կարելոր բան մը չէի նկատած այս պատմութեան մէջ, քանի որ չէի ուսումնասիրած այս հատուածը եբրայերէն բնագիրին հետ: Ահարոնն անուանեց իր ծուլած հորթին «ԵՎՎՎ» կամ «Եհովա», որ Աստուծոյ անունն է (տե՛ս Ելից 32.5): Բացի այս դէպքէն՝ «ԵՎՎՎ» անունը այլեւս չ'օգտագործուիր Աստուածաշունչին մէջ՝

որեւէ կեղծ Աստուած կամ կուռք անուանելու համար: Այս անունը այն-քան սուրբ է, որ հրեայ գրողները ձայնաւորներ չէին աւելցնել ասորը (մենք կ'աւելացնենք ձայնաւորներ կը գրենք ու կ'արտասանենք այն որպէս «Եսհվէհ»):

Ահարոնը միայնակ չէր: Ժողովուրդը նոյնպէս այս ձեւով ընդունեց անոր ծուլած հորթը՝ յայտարարելով. «Ասիկա է *Էլոհիմը*, որ ազատեց մեզ Եգիպտոսէն» (տե՛ն Ելից 32.4,8): Այս եբրայերէն բառը կ'օգտագործուի երեսուններկու անգամ միայն Ծննդոց գիրքի առաջին գլուխին: Աստուածաշունչի առաջին խօսքին մէջ գրուած է. «Սկիզբէն *Էլոհիմը* ստեղծեց երկինքները եւ երկիրը»:

Ի տարբերութիւն «Եսհվէհ» բառի՝ Աստուածաշունչին մէջ «*Էլոհիմ*» բառի բոլոր գործածութիւններու 90 տոկոսը կը վերաբերի Ամենակարող Աստուծոյ: Մնացած պարագաներուն (10 տոկոսը) այն կ'օգտագործուի սուտ աստուածները անուանելու համար: Քանի որ Ահարոնը այդ հորթը «*Եսհվէհ*» անուանեց, մենք կրնանք ենթադրել, որ մարդիկ նկատի ունէին նոյնը, ինչ որ ան:

Իմաստը հետեւեալն է. ամբողջ ազգը կ'ընդունէր, որ Եսհվէհը փրկած էր զիրենք, ազատած էր գերութենէն եւ հոգացած էր իրենց կարիքները: Այնուամենայնիւ, անոնք ստեղծած էին երեւակայական «եսհվէհ», որ բոլոր կը տարբերէր իրական Եսհվէհէն, որ լերան վրայ էր՝ Մովսէսին հետ:

Գրուած է. «Տէրոջ վախը՝ գիտելիքի սկիզբն է» (Առակաց 1.7, NKJV): Կարելի է հարցնել՝ ի՞նչ գիտելիքի: Այս խօսքը չի կրնար սուրբգրային գիտելիքի մասին ըլլալ, քանի որ փարիսեցիները եւ դպիրները Սուրբ Գիրքի գիտականեր էին, բայց հեռու էին Աստուծոյ ներկայութենէն եւ հաճելի չէին Անոր: Ուրեմն, ի՞նչ գիտելիք պէտք է ունենանք: Պատասխանը գրուած է Առակաց 2.5-ին մէջ. «...պիտի հասկնաս Տիրոջ երկիւղը, եւ *Աստուծոյ գիտութիւնը* պիտի գտնես»:

Առիթ տուէ՛ք այսպէս ձեւակերպել. ունենալով ճիշդ տեսակի վախ կամ երկիւղ՝ դուք մտերմօրէն պիտի ճանչնաք Աստուած: Դուք պիտի ճանչնաք ճշմարիտ Աստուածը՝ ճշմարիտ Յիսուսը, ոչ թէ երեւակայական կերպար մը: Պողոսը կը յանդիմանէ կորնթացիները՝ ըսելով. «Դուք ուրախութեամբ կը հանդուրժէք այն, ինչ որ ոեւէ մարդ կ'ըսէ ձեզի, նոյնիսկ եթէ անոնք կը քարոզեն *ուրիշ Յիսուսի*, քան՝ որուն մենք կը քարոզենք» (Բ. Կորնթացիս 11.4, NLT):

Այդ հանրայայտ հեռուստաաւետարանիչը, ինչպէս նաեւ բազմաթիւ մարդիկ, որոնց մասին ան կը խօսէր, չեն սիրեր այն անգուգական Յիսուսը, որ նստած է Աստուծոյ աջ կողմը: Անոնք կը սիրեն երեւակայական Յիսուսը, որ կ'անտեսէ եւ նոյնիսկ կը թոյլատրէ այն կենսատճը, որ

անոնք կը ցանկան: Այդ մարդիկ կան երբեք ճշմարտապէս չեն ճանչցած Ջինք, կան շեղուած են Անոր հետ իրենց յարաբերութիւններէն: Երկրորդ տարբերակը կարելի է նմանցնել այսպիսի օրինակի. երկու ընկերներ, որոնց բաժնած է կեանքը, տարիներ յետոյ կը հանդիպին եւ կը պարզեն, որ զգալիօրէն փոխուած են: Երեւակայական Յիսուսին սիրելը չի տար մեզի գօրութիւն՝ իրական Յիսուս Քրիստոսի խօսքերը կատարելու համար: Ըստ էութեան, դժուար է ճշմարտապէս սիրել ինչ որ մէկը, որ իրականութեան մէջ չէք ճանչնար:

Առանց Տիրոջ սուրբ երկիւղի՝ մենք չենք կրնար ճշմարտապէս ճանչնալ Աստուծոյ: Մովսէսը մտերմօրէն կը ճանաչնար Ջինք: Ան յստակ կը լսէր Աստուծոյ ձայնը եւ կը տեսնէր Անոր ճանապարհները: Իսրայէլը կը ճանչնար զԱստուած միայն Անոր գործերով՝ այն բանով, թէ ինչպէս Ան կը պատասխանէր իրենց աղօթքներուն: Իսրայէլի համար Աստուծոյ ձայնը՝ ամպրոպ էր: Աստուած թոյլ տուաւ Մովսէսին մօտիկ ըլլալ Իր ներկայութեան, իսկ Իսրայէլին պատուիրեց վերադառնալ իրենց վրանները եւ եկեղեցի խաղալ (տես Երկրորդ Օրինաց 5.29,30):

Ինչպէ՞ս սուրբ երկիւղ ունենալ

Այս պարագային մեր ամենակարեւոր հարցը հետեւեալն է. ինչպէ՞ս ստանալ Աստուծոյ սուրբ երկիւղը: Մենք պարզապէս պէտք է խնդրենք, բայց՝ անկեղծօրէն:

Յիսուս կ'ըսէ. «Ուստի եթէ դուք, որ չար էք, ձեր զաւակներուն աղէկ ընծաներ տալ գիտէք, որչա՛փ աւելի Հայրը երկինքէն Սուրբ Հոգին պիտի տայ անոնց, որ Իրմէ կը խնդրեն» (Ղուկաս 11:13): Թերեւս հարցնէք. «Չէ՞ որ Յիսուս կը խօսի Սուրբ Հոգիի մասին, ոչ թէ Տիրոջ երկիւղի»: Ահա թէ ինչ կը գրէ Եսային Յիսուսի եւ Սուրբ Հոգիին մասին.

«Յեսսէին բունէն Շառաւիղ մը պիտի ելլէ եւ անոր արմատէն Ընծիւղ մը պիտի բուսնի, ու Անոր վրայ պիտի հանգչի Տիրոջ Հոգին, իմաստութեան ու հանճարի Հոգին, խորհուրդի ու զօրութեան Հոգին, գիտութեան եւ Աստուծոյ վախի (Տիրոջ երկիւղի) Հոգին: Եւ Անոր ախորժանքը Տիրոջ երկիւղն է...» (Եսայեայ 11:1-3):

Աստուծոյ Հոգիին վերջին բնութագիրը, որ թուարկուած է հոս, «Տիրոջ երկիւղի Հոգին» է: Անձամբ ես կը հաւատամ, որ ասիկա ամենակարեւոր կողմն է, որ մենք պէտք է խնդրենք: Իմ համոզմունքը երկու պատճառ ունի: Առաջինը այն է, որ ինչպէս գրուած է՝ Տիրոջ երկիւղը

իմաստութեան, խորհուրդի, հասկացողութեան եւ գիտութեան սկիզբն է (տե՛ս Սաղմ. 111.10, Առակ. 1.7, Առակ. 8 եւ 9): Երկրորդը եւ ամէնէն համոզիչ պատճառը անիկա է, որ Տիրոջ երկիւղը՝ Յիսուսի ախորժանքը կամ բերկրանքն է: Մի՞թէ Անոր բերկրանքը պէտք չէ ըլլայ նաեւ մեր բերկրանքը: Աստուծոյ խօսքին մէջ գրուած է, որ Յիսուս լսուեցաւ Իր աստուածային երկիւղի (կամ՝ բարեպաշտութեան) *պատճառով* (տե՛ս Եբր. 5.7): Ուրիշ բան է *աղօթելը*, բայց ուրիշ բան է *լսուած* ըլլալը:

Թե՛ Տիրոջ երկիւղը, թե՛ Աստուծոյ սէրը՝ Անոր Հոգիով լեցուած ըլլալու հետեւանքներն են. Պօղոս կը գրէ. «Աստուծոյ սէրը մեր սրտերուն մէջ տարածուած է Սուրբ Հոգիին միջոցով, որ մեզի տրուեցաւ» (Հռովմայեցիս 5:5): Ես կը յորդորեմ ձեզ անկեղծօրէն խնդրել, որ լեցուիք սուրբ երկիւղի Հոգիով եւ Աստուծոյ կրակոտ, այրող սիրով:

Աղտոտ անօթներ

Խօսելով այս մասին՝ մենք չենք կրնար չանդրադառնալ մեծ ճգնաժամի մը, որ գոյութիւն ունի այսօր: Մենք լուրջ պակաս ունինք քսանմէկերորդ դարի եկեղեցւոյ մէջ. ոչ թէ անօթներու, այլ *մաքուր* անօթներու, որոնց մէջ Աստուած պիտի թափէ Իր Հոգին: Վերադառնանք Պօղոսի գրած վերջին խօսքերուն: Ան համարձակութեամբ կը պնդէ.

«Բայց այն հաստատ հիմքը, որը Տէրը դրած է, չի կրնար սասանուիլ, եւ ատոր վրայ գրուած են այս բառերը. «Տէրը կը ճանչնայ զանոնք, որոնք Իրենինն են» եւ «Անոնք, որոնք կ'ըսեն, որ կը պատկանին Տիրոջը, պէտք է հեռանան անօրէնութենէն»» (Բ. Տիմոթէոս 2.19, TEV):

Պօղոս ցոյց կու տար, թէ ինչը անասան կը դարձնէ մեզ՝ որպէս եկեղեցի եւ որպէս անհատներ: Այն հիմքի վրայ, որուն մասին ան կը խօսի, գրուած է երկու արտայայտութիւն: Համաձայն «*Քինկ Ճէյմս*» Աստուածաշունչի՝ ատոնք «կնքուած» են հիմքին, իսկ համաձայն «Մեսիճ» Աստուածաշունչին՝ ատոնք «*փորագրուած*» են:

Առաջինը՝ Տէրը գիտէ անոնց, որոնք կը պատկանին Իրեն: Այս խօսքերը մխիթարող են: Երբ մենք բոլորովին կը տրուինք Անոր, Ան չի մոռնար մեզ: Մենք կը դառնանք Անոր աչքի բիրը:

Հիմքի վրայ փորագրուած երկրորդ արտայայտութիւնը հետեւալն է. «Անոնք, որոնք կ'ըսեն, որ կը պատկանին Տիրոջը, պէտք է հեռանան անօրինութենէն»: Մենք կը տեսնենք այս խօսքին մէջ «*պէտք է*» բառը. կրկին՝ ասիկա *պատուիրան* է, ոչ թէ *առաջարկ*: Այս արտայայտութիւնը

շատ խիստ է, քանի որ ատոր նպատակն է՝ ցոյց տալ անօրէն կեանքէն հեռանալու կարելորութիւնը: Ինչո՞ւ: Պատասխանը գրուած է յաջորդ երկու խօսքերուն մէջ.

«Մեծ տան մէջ կայ սպասք, որ պատրաստուած է ոսկիէն կամ արծաթէն, իսկ միւսները պատրաստուած են փայտէն կամ կաւէն: Անոնցմէ մէկ քանին յատուկ են, իսկ միւսները՝ ոչ: Նոյնը մարդու պարզային է: Անոնք, որոնք դադարին չարիք գործելէն եւ մաքրեն իրենք իրենց, յատուկ պիտի դառնան: Անոնց կեանքերը պիտի ըլլան սուրբ եւ հաճելի Տիրոջը, եւ անոնք պիտի կարենան ամէն տեսակի բարի գործեր ընել» (Բ. Տիմոթէոս 2.20,21, CEV):

Յունարէնի մէջ «սպասք» բառը պարզապէս կը նշանակէ «անօթներ» կամ «ամաններ»: Եթէ մենք մաքուր ենք՝ որպէս անօթներ, յարմար ենք Տիրոջ գործի համար: Մենք յարմար ենք՝ Անոր զօրաւոր ներկայութեամբ լեցուելու համար:

Աշխարհի տարածքին ուր ալ ըլլան, ամէն առտու եւ կ'ուտեմ նոյն նախաճաշը: Ես կը սկսիմ բաժակ մը գաղջ կիտրոնաջուր խմել, որուն կը յաջորդէ գաւաթ մը յասմիկ ծաղիկի սպիտակ թէյը: Տասնհինգ վայրկեան յետոյ ես կ'ուտեմ ապուրաման մը գարիի փաթիլներ՝ չիայի եւ կանեփի սերմերով եւ աղացած կտաւատով (քթանի հատիկներ)՝ խառնուած նուշի կաթին եւ դրքիի(ծառատեսակ) մաքուր անուշահիւթին հետ: Այս նախաճաշին համար ինծը պէտք է սպասք՝ թէյի գաւաթ, պարզ բաժակ եւ ապուրաման: Ես երբեք չեմ գործածած աղտոտ գաւաթ կամ ապուրաման իմ նախաճաշին համար: Ինծի հաճելի է իմ նախաճաշի համը. այդ պատճառով ես միշտ մաքուր ափսէներ կը փնտռեմ: Ես կը սիրեմ իմ նախաճաշի համը եւ չեմ ուզեր փճացնել այն: Եթէ սպասքի՝ ապուրամանի, ափսէի, գաւաթի կամ բաժակի մէջ որեւէ աղտոտ բան ըլլայ, որեւէ լաւ բան, լեցուելով ատոր մէջ, պիտի աղտոտի: Ինչո՞ւ Աստուած պէտք է ուզէ Իր Հոգին աղտոտ անօթի մէջ լեցնել:

Համաձայն Պօղոսի խօսքերուն՝ մենք պատասխանատու ենք մեր անձը մաքրելու համար: Ան չըսաւ. «Յիսուսի արիւնը կը մաքրէ մեզ բոլոր անցեալ, ներկայ եւ ապագայ մեղքերէն. այնպէս որ, մի՛ անհանգստանաք այն մեղքին պատճառով, որուն մէջ կ'ապրիք, որովհետեւ դուք ծածկուած էք արեամբ»: Ո՛չ, Ան ըսաւ. «Այսպիսով, ով որ մաքրէ ինքզինքը [այն ամէնէն, ինչ որ անարգ եւ անմաքուր է, որ առանձնացնէ ինքզինքը ապականող եւ պղծող ազդեցութիւններէն], պիտի ըլլայ [ինքը] առանձնացուած եւ օգտակար անօթ» (Բ. Տիմոթէոս 2.21, AMP):

Մենք պէտք է մաքրենք մեր անձը եւ վե՛րջ: Այս հատուածին մէջ Պօղոսը նկատի չունէր մեր յարաբերութիւնները Քրիստոսի հետ՝ ըստ մեր

դիրքին: Ան չէր խօսեր այն դիրքին մասին, որ մենք ձեռք բերած ենք Քրիստոսի կատարած աշխատանքին շնորհիւ: Ան կը խօսէր մեր վարքի մասին: Կրկին կարդացէ՛ք անոր խօսքերը. «Անոնք, որոնք դադարին չարիք գործելէն եւ մաքրեն իրենք իրենց, յատուկ պիտի դառնան»:

Եւս մէկ անգամ կը տեսնենք, որ Աստուծոյ ներկայութիւնը՝ Անոր Հոգին, չի թափիր աղտոտ անօթի մէջ. Ան կը թափի մաքուր անօթի մէջ:

Հետեւանքը

Աստուծոյ խօսքէն գիտենք, որ անօրէնութիւնը (անհնազանդութիւնը Աստուծոյ) խորհուրդ է եւ կը գործէ հասարակութեան մէջ: Բայց բարի լուրն այն է, որ գոյութիւն ունի այն զսպող կամ խափանող ուժ:

«...անօրէնութեան խորհուրդը արդէն կը գորանայ. միայն թէ մինչեւ որ մէջտեղէն վերանայ ինքը՝ այժմ խափանողը (արգիլողը)» (Բ. Թեսաղոնիկեցիս 2:7)

Մենք պէտք է հարց տանք. ո՞վ կը խափանէ անօրինութիւնը: Կրնայ ըլլալ ընդամենը երկու տարբերակ՝ Սուրբ Հոգին կամ Քրիստոսի մարմինը: Անգլերէն Աստուածաշունչին մէջ գրուած է. «...մինչեւ որ Ան վեր առնուի ճանապարհէն»: Ակնյայտ է, որ գրելով «Ան» բառը մեծատառով՝ թարգմանիչները համոզուած էին, որ խօսքը Սուրբ Հոգիին մասին է: Եկէ՛ք ենթադրենք, որ անոնք ճիշդ են:

Այս գիրքը գրելու պահուն ես արդէն յիսունը անց եմ, եւ իմ կեանքի ընթացքին տակաւին չեմ տեսած, որ անօրինութիւնը այդչափ շատնայ մեր երկրին մէջ: Ես երբեք չեմ տեսած, որ կառավարութիւնը, լրատուամիջոցները եւ հասարակութիւնը այսպիսի վճռականութեամբ բարի անուանեն անօրէն կենսառճը: Պատճառը հետեւեալն է. խափանող ուժը՝ Սուրբ Հոգին, այնքան ազդեցիկ չէ մեր օրերուն մէջ: Աստուծոյ ներկայութիւնը քսանմէկերորդ դարի սկիզբը արագօրէն կը պակսի Արեւմուտքին մէջ:

Ո՞րն է պատճառը: Եթէ մենք հռչակենք այնպիսի Աւետարան, որ չի շեշտադրեր անձի վերափոխումը, մենք մաքուր անօթներու պակաս պիտի ունենանք, որուն հետեւանքով Աստուծոյ յայտնուած ներկայութիւնը երկրի վրայ պիտի պակսի: Յիշեցէ՛ք՝ ճիշդ այն պահուն, երբ Յիսուս մահացաւ խաչին վրայ, տաճարի քողը պատռուեցաւ՝ վերէն վար: Աստուծոյ ներկայութիւնը անմիջապէս դուրս ելաւ ձեռակերտ վայրէն՝ պատրաստ՝ թափուելու անձեռակերտ անօթներու մէջ, այսինքն՝ վերստին ծնած տղամարդոց եւ կիներու սրտերուն մէջ:

Աստուծոյ Հոգին տաճարէն չտեղափոխուեցաւ արեւամուտի, ծառի, գեղեցիկ բնատեսարանի, երգի, տեսանիւթի կամ ուելէ այլ միջնորդի մէջ: Ան տեղափոխուեցաւ մարմին եւ արիւն ունեցող անօթներու մէջ: Եթէ անօթները աղտոտ են, Աստուծոյ ներկայութիւնը հասարակութեան մէջ կը նուազի. հետեւաբար, անօրինութիւնը աւելի քիչ կը խափանուի կամ կը զսպուի:

Մենք չենք կրնար փոխել այս արագընթաց անկումը՝ քուէարկելով լաւ քաղաքական թեկնածուներու օգտին, ազդեցութիւն գործելով մեր կառավարութեան վրայ, աշխատանքէն հեռացնելով լրատուամիջոցներու ամբողջական աշխատակազմեր, բողոքելով արհեստական վիժեցում կատարող հիւանդանոցներու քով կամ շատ նման բաներ ընելով: Անօրինութեան հետ իրական պայքարի միակ միջոցը մեզի համար՝ Աստուծոյ շնորհքի զօրութեան տրուիլն ու աստուածապաշտ կեանքով ապրիլն է: Այս կերպով մենք աւելի լսելի ձայն եւ ազդեցութիւն պիտի տանք Սուրբ Հոգիին մեր հասարակութեան մէջ:

Ճշմարիտ սրբութեան մասին չքարոզելը շատ սուղ նստած է մեր վրայ՝ անձնական, համայնքային եւ ազգային մակարդակներու վրայ: Այնուամենայնիւ, մենք կրնանք փոխել ասիկա: Հովիւներ, աւագներ եւ Աստուծոյ ժողովուրդ, եկէ՛ք միաբան հաստատ կենանք եւ հռչակենք Սուրբ Գիրքին մէջ գրուած Աստուծոյ ամբողջական խորհուրդը: Եկէ՛ք կառուցենք ամուր հիմք եւ հիմնակառոյց մեր ազդեցութեան տակ գտնուող մարդոց կեանքերուն մէջ: Եկէ՛ք զսպենք անօրինութիւնը մեր հասարակութեան մէջ Սուրբ Հոգիին խափանող զօրութեամբ, որուն արդիւնքը պիտի ըլլայ մարդոց առատ հունձքը Աստուծոյ թագաւորութեան համար:

ՄԵՐ ՉՋՓՁՆԻՇՆԵՐԸ

«Անոնք, որոնք նպաստաւոր կերպով
կ'օգտագործեն այն, ինչ որ ստացած են,
նոյնիսկ աւելին պիտի տրուի իրենց, եւ անոնք
առատութիւն պիտի ունենան»:
— Մատթէոս 25.29, NLT

Նշանակութիւն ունի ոչ թէ
իմ կարողութիւնը, այլ իմ արծագանգը՝
Աստուծոյ կարողութեան:
— Քորի Թեն Պուս

Եկէ՛ք վերադառնանք տուն կառուցելու մեր օրինակին:
Սկիզբը մենք խօսեցանք Յիսուսի իշխանութեան մասին, որ մեր
հիմքն է: Այնուհետեւ անդրադարձանք մեր հիմնակառոյցին, այսինքն՝
սրբացուած կեանքին: Այժմ անցնինք շինարարութեան ընթացքի վեր-
ջին փուլին: Այն կը վերաբերի մեր եզակի գործունէութեան՝ մեր պտղա-
բերութեան, երազանքներուն, ծրագիրներուն, մարտավարութիւննե-
րուն եւ որոշումներուն: Պօղոսը կը գրէ.

«Մենք Աստուծոյ գլուխգործոցն ենք: Ան նոր կերպով ստեղ-
ծած է մեզ Քրիստոս Յիսուսին մէջ, որպէսզի կարենանք ընել
այն բարի բաները, որոնք Ան շատ շատոնց ծրագրած է մեզի
համար» (Եփեսացիս 2.10, NLT):

Մենք ստեղծուած ենք Քրիստոս Յիսուսին մէջ ոչ միայն որպէս
Աստուծոյ զաւակներ, այլ նոյնպէս՝ Անոր թագաւորութեան արդիւնաւէտ
քաղաքացիներ:

Իսկական տան շինարարութեան մէջ ասիկա կարելի է համեմատել
պահարաններու, փայտեղէն շինուածքներու, սալիկներու, ծածկերու եւ
լուսաւորութեան տեղադրման, ինչպէս նաեւ՝ ներկման աշխատանքներու
հետ, որոնք վերջնական տեսք կը հաղորդեն տունին: Բայց այս փուլին մէջ

կատարուած աշխատանքները լաւ տեսք պիտի ունենան եւ տեւական պիտի ըլլան միայն՝ եթէ առաջին երկու փուլերու շինուածքները ամուր են:

Մենք յաճախ կը կենանք կեանքի ընտրութիւններու առջեւ, որոնք լաւ կը թուան. այնուամենայնիւ, շատ անգամ ատոնք Աստուծոյ լաւագոյնը չեն մեզի համար: Մենք բազմիցս կը զգանք, որ մեր ընտրութիւնը սահմանափակ է: Աբրահամը եւ Սառան այն եզրակացութեան եկան, որ որդի ունենալու միակ հնարաւորութիւնը այն էր, որ Աբրահամը ամուսնանար Սառայի աղախինին՝ Հագարին հետ: Անոնց որոշումէն ծնաւ Իսմայէլը: Այնուամենայնիւ, Աստուծոյ Խօսքը պարզօրէն կ'ըսէ, որ «...աղախինին որդին ազատ կնոջը որդիին հետ ժառանգութիւն պիտի չառնէ» (Գաղատացիս 4:30): Այս պարագային Աստուած շտկեց անոնց ընտրութեան սխալը, սակայն միշտ չէ, որ այդպէս կ'ըլլայ: Յաճախ սխալ ընտրութիւններու պատճառով մենք պիտի զրկուինք մեր առաւելագոյն ներուժը իրագործելէն:

Սաւուղը, որ բազմաթիւ այսպիսի օրինակներէն մէկն է Հին կտակարանին մէջ, ճնշման տակ սխալ որոշում կայացուց՝ մատուցելով զոհաբերութիւնը մինչեւ Սամուէլին գալը: Այս պարագային, անոր ընտրութեան սխալը չշտկուեցաւ. Սաւուղը կորսնցուց թագաւորութիւնը (տե՛ս Ա. Թագաւորաց 13):

Մտածեցէ՛ք կարելոր որոշումներ կայացնելու մասին այս կերպով. եթէ դուք արշաւի զացած էք եւ կը տեսնէք ամենաբանուկ արահետը, դուք բնականօրէն կը ցանկաք անցնիլ ատորմով: Այնուամենայնիւ, եթէ փորձառու զբօսավարի հետ էք, ան կրնայ գիտնալ ուրիշ արահետի մասին, որ աւելի գեղատեսիլ է եւ աւելի արագ կը հասցնէ ձեզ հոն, ուր որ կ'երթաք: Ձեր զբօսավարը պիտի օգնէ ձեզի աւելի լաւ որոշում կայացնելու:

Գրուած է. «Քու Խօսքը ճրագ է՝ իմ ոտքերը առաջնորդելու համար, եւ լոյս՝ իմ արահետին համար» (Սաղմոս 119.105, NLT): Աստուծոյ Խօսքը քաջ գիտնալը կը լուսաւորէ մեր ճանապարհը, որ էապէս կարելոր է՝ կեանքին մէջ իմաստուն որոշումներ կայացնելու համար:

Թէ՛ Աբրահամը, թէ՛ Սառան սահմանափակեցին Աստուծոյ. ասիկա յաճախ տեղի կ'ունենայ, երբ մենք մեր ճանապարհով քալելու որոշում կը կայացնենք: Այնպէս որ, եկէ՛ք ուսումնասիրենք Աստուծոյ Խօսքը, որպէսզի այն առաջնորդէ մեզ որոշումներ կայացնելու հարցին մէջ:

«Հասանելի չէ ձեր տան համար»

Մեր ամուսնութեան առաջին քանի մը տարիներուն ընթացքին Լիզան եւ ես կ'ապրէինք երկու տարբեր քաղաքներու մէջ՝ Տալլասի եւ Օռլանտոյի մէջ: Մենք հազիւ կրցանք գնել մեր առաջին երկու տուները: Սկզբնական շրջանին կ'ապրէինք բնակարաններու մէջ, որովհե-

տեւ չունէինք բաւականաչափ գումար տունի համար: Մենք պարբերաբար կ'երթայինք վաճառքի համար նախատեսուած տուներ տեսնելու, բայց միայն երազելու համար:

Հազիւ որ մենք կրցանք տուն գնել, գերակշռող գործօնը՝ տան արժէքն էր: Մենք չէինք կրնար ձեռք բերել տուներու մեծ մասը, քանի որ իմ աշխատավարձը ընդամէնը տարեկան 18.000 տոլար էր Տալլասին մէջ եւ 27.000 տոլար՝ Օռլանտոյի մէջ: Մենք այլեւս չէինք կրնար ապրիլ բնակարանին մէջ, որովհետեւ այդ ժամանակ արդէն երկու զաւակ ունէինք, եւ կ'ուզէինք բակ ունենալ, ուր անոնք կրնային խաղալ: Երկու քաղաքներուն մէջ ալ մենք շաբաթներ շարունակ կը փնտռէինք ամենամատչելի թաղամասերը, որոնք պատշաճ հեռաւորութեան վրայ էին մեր եկեղեցիէն եւ աշխատավայրէն: Երկու պարագային ալ մենք պարզեցինք, որ ամենամատչելի տարբերակը նոյնատիպ ցածրարժէք տուներէն բաղկացած թաղամասերն էին: Երկու շինարարներն ալ, որոնց մենք դիմած էինք, հինգ-վեց տեսակի տուներ ունէին, որոնցմէ մենք կրնայինք ընտրել, եւ երկու պարագային ալ ընտրեցինք ամենաժան տարբերակները:

Այդ տուներէն մէկը գնելու ժամանակ մենք այնքա՛ն ոգեւորուած էինք, նամանաւանդ երբ եկած էր ներքին յարդարումը ընտրելու օրը: Մեր վաճառքի գործակալը մեզ ընդհանուր ցուցասրահը տարաւ, ուր բազմաթիւ գեղեցիկ նիւթեր ցուցադրուած էին՝ տարբեր տեսակի մարմարէ եւ տրավերտինէ (տիբուրեան քարէ, կրաքարէ) սալիկներ, փայտէ մանրայատակներ, գեղեցիկ դարակներ եւ անթիւ գեղեցիկ ծածկեր: Մենք տեսանք նրբաճաշակ քիւեր եւ իւրայատուկ քարէ ձեւաւորումներ՝ բուխարի (կրակարանի) համար:

Մեր վաճառքի գործակալը տարաւ մեզ ցուցասրահի ուրիշ բաժին մը, ուր մենք կրնայինք ընտրել մեր նիւթերը: Այդ բաժինին մէջ ընդհանրապէս սալիկներ չկային: Հոն նոյնպէս ցուցադրուած չէին պահարաններ դռքիէ, կաղինէ կամ սոճիէ: Չկային նրբաճաշակ քիւեր, քարեր՝ բուխարի համար, եւ ո՛չ ալ՝ փայտէ մանրայատակներ՝ մեր ընտրութեան համար: Մեր տրամադրութեան տակ էին միայն ցած կարգի ծածկեր, լինուելումէ (կտակալէ՝ յատակի ծածկ) յատակ եւ աժան դարակներ՝ խտացուած փայտէ:

Մենք շարունակ կը խնդրէինք անոնցմէ տրամադրել աւելի որակեալ նիւթեր, բայց ամէն անգամ կը ստանայինք երկու պատասխաններէն մէկը. «Ասիկա հասանելի չէ ձեր տունին համար», կամ՝ «Այդ պարագային դուք պէտք է յաւելավճար կատարէք»: Երբ մենք կը հարցնէինք, թէ որքան կը կազմէր յաւելավճարը, անոնք այնպիսի գումար կ'առաջարկէին, որ մենք, չէինք կրնար թոյլ տալ մեզի: Լիզան եւ ես հեռացանք ցուցասրահէն՝ փորձելով խրախուսել զիրար, բայց իրականութեան մէջ ընկճուած էինք:

Կրնայ ընել

Մենք կ'ապրինք այնպիսի աշխարհի մէջ, որ նման է մեր փորձառութեան շինարարական ընկերութեան ցուցասրահին մէջ: Մարդոց յաճախ կ'ըսեն. «Դուք չէ՛ք կրնար», «Յոյս մի՛ ունենաք», «Ատիկա շա՛տ բարձր գաղափար է», «Յարմարեցէ՛ք եւ ապրեցէ՛ք սովորականի պէս», կամ՝ «Ատիկա ձեզի համար չէ՛»: Այս սահմանափակող արտայայտութիւնները անթիւ են: Յաճախ ատոնք ողջամիտ տրամաբանութեան եւ լաւ խորհուրդի նման են, բայց ո՞րն է ճշմարտութիւնը:

«Ան, որ կարող է աւելի առատացնել ամէն բան, քան որ մենք կը խնդրենք կամ կը խորհինք, այն զօրութիւնովը, որ մեր մէջ կը ներգործուի» (Եփեսացիս 3.20):

Այն, ինչ որ կը յայտնէ մեզ այս աստուածաշնչեան խօսքը, շատ կը տարբերի շինարարական ընկերութեան ցուցասրահին մէջ մեր լսածէն: Աստուած սահմանափակող չափանիշներ չի տար մեզի: Անոր սահմանները աւելին են, քան այն, ինչ որ մենք կրնանք տեսնել, երազել, պատկերացնել, յուսալ կամ խնդրել:

Բանալին հոս «կարող» բառն է: Առիթ տուէ՛ք բացատրել ասիկա օրինակով մը:

Միլիառատէր մը կը մօտենայ երեք երիտասարդ գործարարի եւ կ'առաջարկէ.

- Ես կ'ուզեմ ֆինանսաւորել ձեր երազանքի գործը: Ես չեմ սպասեր որեւէ հատուցում ատոր համար. Պարզապէս կը ցանկանամ, որ դուք յաջողակ ըլլաք: Ես *կարող եմ* տալ ձեզի այնքան սկզբնական միջոցներ, որքան ձեզի անհրաժեշտ է՝ սկսելու համար:

Առաջին գործարարը երիտասարդ կին մըն է, որ կ'որոշէ հացի եւ խմորեղէնի խանութ բանալ: Անոր անհրաժեշտ է խանութի ցուցափեղկ, քանի մը վառարան, մետաղեայ տարաներ՝ հացը թխելու համար, այլ՝ պարագաներ, դրամարկղ, բաղադրամասեր եւ քանի մը ուրիշ բաներ: Ան կը ներկայացնէ իր ծրագիրը այդ միլիառատիրոջ եւ կը խնդրէ 100.000 տոլար: Այդ մարդը անվարան կը փոխանցէ պահանջուած գումարը անոր հաշիւին:

Երկրորդ գործարարը երիտասարդ մըն է: Ան կ'որոշէ տուններ կառուցել: Անոր անհրաժեշտ է գնել քանի մը հողատարածք, շինարարական նիւթեր եւ բեռնատար մեքենայ, ինչպէս նաեւ՝ փոքրիկ տարածք վարձել գրասենեակի համար: Ան կը ներկայացնէ իր ծրագիրը եւ կը խնդրէ 250.000 տոլար: Կրկին, այդ միլիառատէրը կը փոխանցէ գումարը անոր հաշիւին:

Երրորդ գործարարը ուրիշ երիտասարդ կին մըն է, որ կը ցանկայ կառուցել առեւտրական կեդրոն՝ յարակից ժամանցային կեդրոնով եւ

ընդարձակ պարտեզով: Ան հազար ակր վաճառուող հողատարածք կը գտնվէ քաղաքին մէջ: Ատիկա քաղաքի լաւագոյն հողատարածքներէն մէկն է եւ արդէն երկար ժամանակ է ի վեր՝ վաճառքի դրուած է, քանի որ քիչերը կրնան գնել այն: Ան գնային առաջարկ կը ներկայացնէ այդ հողատարածքի համար, որ կ'ընդունուի:

Ան ճարտարապետներու խումբ կը կազմէ՝ իր երազանքը նախագծելու համար: Կը յանձնարարէ անոնց նախագծել զոյգ տասներկու յարկանի գրասենեակային շէնքեր՝ ընդարձակ բակով: Միւս հատուածին մէջ ան կը ծրագրէ գեղեցիկ բացօթեայ ժամանցային կեդրոն՝ բազմաթիւ բարձրակարգ խանութներով եւ ճաշարաններով, որոնք պիտի գտնուին բարձրայարկ ճոխ բնակարանային շէնքերու առաջին յարկերուն մէջ: Ան նոյնպէս կը յանձնարարէ նախագծել ճոխ հինգաստղանի հիւրանոց՝ իր համալիրի տարածքի անմիջապէս մէջտեղը: Ան կը պահէ իր տարածքի վերջին հատուածը գեղեցիկ ընդարձակ պարտեզի համար: Ան փարթամ ծառեր կը տնկէ բոլոր փողոցներուն մէջ, հեծանուղիներու ճանապարհներ կը կառուցէ եւ կ'աւարտէ այդ ամէնը տպաւորիչ ծառաստանով եւ ծաղիկներու պարտեզով՝ ժամանցային կեդրոնին քով:

Անոր նպատակն է՝ գրաւել յաջողակ գործարարներու, բնակիչներու նաեւ հիւրերու՝ հիւրանոցի համար: Ան պիտի առաջարկէ անոնց բարձրակարգ պայմաններ գնումներու համար, խաղաղ միջավայր, իւրօրինակ մթնոլորտ իր ընդարձակ այգիին մէջ եւ գերազանց ճաշարաններ: Անոր հիւրանոցը պիտի առաջարկէ բարձրակարգ պայմաններ իր առետուրի կեդրոնին տարածքներ վարձակալած գործարարներու հիւրերու համար: Ան նոյնպէս կ'ուզէ, որ իր համալիրը յայտնի ժամանցային վայր դառնայ: Ան յոյս ունի գրաւել ողջ երկրի տարածքին գտնուող մարդոց, որոնք պիտի թռչին հոն հանգստանալու, գնումներ կատարելու եւ իր ընդարձակ պարտեզին մէջ ժամանակ անցընելու համար:

Ան կը մշակէ իր ծրագիրը իր ճարտարապետներու խումբին հետ, մինչեւ որ այն անթերի կը դառնայ՝ նման՝ իսկական արուեստի գործի: Ան կ'այցելէ այդ միլիառատիրոջ, կը ներկայացնէ իր ծրագիրը եւ կը խնդրէ 245 միլիոն տոլար: Ինչպէս եւ նախորդ երկու գործարարներու պարագային, ան անմիջապէս կը փոխանցէ անհրաժեշտ գումարը այս երիտասարդ կնոջ հաշուին:

Երեք տարի յետոյ այդ միլիառատէրը հանդիպման կը հրաւիրէ երեք երիտասարդ գործարար: Ան կը ցանկայ տեսնել, թէ ինչպէս կ'ընթանան անոնց գործերը: Անոնք կարգով կը ներկայացնեն իրենց առաջընթացը: Հացի ու խմորեղէնի խանութը ամսական ընդամենը քանի մը հազար տոլարի շահոյթ ունի: Շինարարը տակաւին չորս տուն կառուցած է եւ

ընդամենը զուտ երկու հարիւր հազար տոլարի շահոյթ ստացած է երեք տարուան ընթացքին:

Երրորդ երիտասարդ գործարարը ոտքի կը կենայ եւ զեկոյց կը ներկայացնէ իր համալիրի մասին: Ներկայիս անոր հիւրանոցը զբաղած է 90 տոկոսով, իսկ բարձրակարգ գրասենեակային տարածքները՝ 87 տոկոսով: Անոր կառուցած բոլոր բնակարանները վաճառուած են: Անոր ժամանցային կեդրոնը 98 տոկոսով լեցուած է բարձրակարգ խանութներով եւ ճաշարաններով: Ան ամսական միլիոնաւոր տոլարներու շահոյթ ունի: Ան կը պատմէ, որ քաղաքապետարանը ամսաթիւ նշանակած է՝ իր համալիրի պարգեւատրման արարողութեան համար, քանի որ այն մեծ օգուտ տուած է ամբողջ քաղաքին տարբեր ծեսով. այն կը ներկայացնէ գեղագիտական արժէք, ստեղծած է բազմաթիւ աշխատատեղեր, գրուած է զբօսաշրջիկներ՝ ապահովելով յաւելեալ ֆինանսական ներհոսք, եւ բերած է հարկային եկամուտ: Ան նոյնպէս օգտագործած է իր եկամուտներու մէկ մասը՝ բանալու համար տաք սնունդի կէտեր քաղաքի աղքատ շրջաններուն մէջ:

Բայց ասիկա տակաւին ամենը չէ: Ան կը զեկուցէ, որ իր բազմամիլիոնանոց մեծ մասը յատկացուած է՝ կառուցելու համար նմանատիպ համալիրներ երեք այլ քաղաքներու մէջ, որոնք պիտի բացուին վեց ամիսը մէկ՝ յաջորդ մէկ ու կէս տարուան ընթացքին: Ան կազմած եւ պատրաստած է երեք կազմակերպչական խումբ, որոնք պիտի տնօրինեն այս նոր համալիրները: Յաջորդ հինգ տարիներու ընթացքին ստացուած եկամուտներով ան կ'ակնկալէ կառուցել եւս հինգ նման համալիրներ այլ խոշոր քաղաքներուն մէջ:

Անոր զեկոյցը լսելէն յետոյ միւս երկու գործարարները կը լռեն՝ իջեցնելով զլուխները: Նկատելով ասիկա՝ միլիառատէրը կը հարցնէ, թէ որն է անոնց վիատելուն պատճառը:

Երիտասարդ կինը, որ հացի ու խմորեղէնի խանութ մը բացած էր, առաջինը կը պատասխանէ.

- Անշուշտ, անոր գործերը աւելի լաւ են, քան մերը, որովհետեւ ան աւելի մեծ գումար խնդրած է, քան մենք: Ան կրնայ աւելին ընել, որովհետեւ դուք աւելին տուիք անոր:

Միլիառատէրը կը նայի երիտասարդ շինարարին.

- Դուք համաձայն էք անոր հետ:

- Անկեղծ ըսելու համար՝ այո՛, - կը պատասխանէ ան: Այդ կինը աւելի մեծ հնարաւորութիւններ ունէր:

Միլիառատէրը կը պատուիրէ իր քարտուղարուին՝ բերել իրենց առաջին հանդիպման արձանագրութիւնները: Քանի մը վայրկեան յետոյ ան ներս կը մտնէ՝ բերելով ատոնք: Բարերարը կը խնդրէ իր քարտուղարուին.

- Կարդացէ՛ք այն, ինչ որ ես ըսի այս երեք գործարարներուն երեք տարի առաջ:

Քարտուղարուհին կը կարդայ.

- «Ես կը ցանկանայիմ որքան ձեր երազանքի գործը: Ես *կարող եմ* տալ ձեզ այնքան սկզբնական միջոցներ, որքան ձեզի անհրաժեշտ է՝ սկսելու համար»:

Այդ միլիառատէրը կը նայի երկու գործարարներուն, որոնք իջեցուցած էին գլուխները, եւ կը հարցնէ.

- Ինչո՞ւ կը նախանձիք այն բանին, ինչ ան ստացած է: Ինչո՞ւ կը մտածէք, որ ան ինչ որ առաւելութիւն ունի ձեզմէ: Ես ըսի իւրաքանչիւրիդ, որ *կարող էի* տալ ձեզի այնքան միջոցներ, որքան անհրաժեշտ էր՝ ձեր տեսիլքը իրականացնելու համար: Ես ոչ մէկ սահման չդրի՝ օգնելու ձեզի, եւ տուի ճիշդ այնքան, որքան դուք խնդրեցիք: Ինչո՞ւ չունեցաք աւելի մեծ երազանքներ եւ ծրագիրներ:

Ան կը դիմէ հացի ու խմորեղէնի խանութ ունեցող կնոջը՝ հարցնելով.

- Ինչո՞ւ դուք չծրագրեցիք աւելի մեծ հացի ու խմորեղէնի խանութ ունենալ: Ես պիտի տայի ձեզի միջոցներ ատոր համար: Ինչո՞ւ չխնդրեցիք ֆինանսաւորում աւելի արդիւնաւէտ կառավարման համար: Մարդոց հաճելի են ձեր ապրանքները. դուք յաջողութիւն կունենայիք այս գործին մէջ: Բայց իմ ամենամեծ հարցը հետեւեալն է. ինչո՞ւ չծրագրեցիք ունենալ աւելի շատ հացի ու խմորեղէնի խանութներ ամբողջ քաղաքով, եւ ի վերջոյ, չծրագրեցիք վստահագրեր տրամադրել ամբողջ երկրով՝ ձեր գործը զարգացնելու համար:

Ատկէ յետոյ ան կը դիմէ տունէր կառուցող երիտասարդին.

- Ինչո՞ւ դուք չտրվեցուցիք քանի մը աւագ օգնականներու եւ չվարձեցիք քանի մը ենթակապալառուներ (միջնորդ վարձակալներ), որպէսզի մէկի փոխարէն տարեկան քսան տուն կառուցէիք: Դուք կրնայիք շատ աւելի աշխատատեղեր ստեղծել: Ինչո՞ւ աւելի մեծ հողատարածք չգնեցիք: Ինչո՞ւ չկազմակերպեցիք մասնաձիւղեր ամբողջ երկիրով, որ բազմաթիւ գեղեցիկ տունէր կառուցէիք տարբեր քաղաքներուն մէջ: Ես պիտի ֆինանսաւորէի ձեր տեսիլքը, որովհետեւ դուք պիտի օգնէիք այդ քաղաքներուն մէջ ապրող ընտանիքներուն, եւ ի վերջոյ՝ ձեր երկրին: Ձեր գործունէութեան շրջանը սահմանափակ էր, քանի որ ձեր սկզբնական միջոցները սահմանափակ էին, քանի որ ձեր տեսիլքը սահմանափակ էր:

Առատութիւն

Մենք՝ քրիստոնէաներս, յաճախ ենթագիտակցօրէն կը մտածենք, որ պէտք չէ շատ բան ունենանք: Սակայն որքանո՞վ այդպիսի մտածելակերպը կը համապատասխանէ Աստուծոյ խօսքին: Յիսուս կը յայտարարէ.

«Անոնք, որոնք նպաստաւոր կերպով կ'օգտագործեն այն, ինչ որ ստացած են, նոյնիսկ աւելին պիտի տրուի, եւ անոնք առատութիւն պիտի ունենան» (Մատթեոս 25.29, NLT):

Աստուած դէմ չէ առատութեան: Ան դէմ է, երբ առատութիւնը կը տիրէ մեզ: Տարբերութիւնը հետեւեալն է. այն մարդը, որուն կեանքին մէջ կը տիրէ նիւթական առատութիւնը, կը ձգտի օրհնութիւններու, գոյքի, փողի, կարողութեան կամ իշխանութեան՝ պարզապէս իր եսակեդրոն ցանկութիւնները կատարելու համար: Կամ ան միջոցներ կը կուտակէ՝ վախէն ելլելով:

Շատերը, քսաներորդ դարի վերջաւորութեան լսելով բարգաւաճման մասին ուսմունքը, լեցուեցան այսպիսի ցանկութիւններով: Անոնց ազահութեան պատճառով շատ ուսուցիչներ եւ հաւատացեալներ դադրեցան բարգաւաճման մասին Աստուծոյ ճշմարտութիւնը խօսելէ: Շատերը սկսան խորշիկ *«բարգաւաճում»* բառէն: Բայց ճշմարտութիւնը այն է, որ մեզի անհրաժեշտ է առատութիւնը, որպէսզի աւելի մեծածաւալ եւ արդիւնաւէտ աշխատանք կատարենք Արքայութեան համար: Թերեւս Աստուած յատուկ այս պատճառով ըսաւ. «Սիրելի՛ս, ամէն ինչէն առաւել ես կ'ուզեմ, որ դուն բարգաւաճիս եւ առողջ ըլլաս՝ ինչպէս որ քու անձը կը բարգաւաճի» (Պ. Յովհաննէս 2, KJV):

Մեր օրինակի մէջ միլիառատէր բարերարը ամէն գործարարի չտուաւ 245 միլիոն տոլար՝ ինչպէս վերջին երիտասարդ կնոջը: Ան ամէն մէկուն տուաւ՝ ըստ անոր տեսիլքին: Եթէ ուսումնասիրէք այն առակը, ուր Յիսուս կը խօսի առատութեան մասին, դուք պիտի տեսնէք, որ ծառաները չսկսան հաւասարաչափ գումարով: Անոնք տարբեր գումարներ ստացան. «Ան տուաւ հինգ պարկ արծաթ՝ մէկուն, երկու պարկ արծաթ՝ միւսին, եւ մէկ պարկ արծաթ՝ վերջինին՝ բաժնելով ըստ անոնց կարողութեան չափին» (Մատթեոս 25.15, NLT): Անոնց կարողութիւնը կ'որոշուէր այն բանով, թէ ինչ կը տեսնէին իրենց ապագայի համար:

Իմ օրինակին մէջ առաջին երիտասարդ կինը կը տեսնէր միայն մէկ փոքրիկ հացի ու խմորեղէնի խանութ: Երիտասարդ գործարարը կը տեսնէր ընդամենը քանի մը տուն՝ տարուան մէջ: Երրորդ երիտասարդ կնոջ կարողութիւնը՝ այն, ինչ որ ան կը տեսնէր, կը պահանջէր շատ աւելին:

Մենք նպաստաւոր կերպով կ'օգտագործենք Աստուծոյ զօրութիւնը, երբ կը կառուցենք մարդոց կեանքերը եւ Աստուծոյ թագաւորութիւնը: Եթէ ուշադրութեամբ կարդանք այս առակը, հետաքրքրական փաստ մը պիտի նկատենք: Ծառաներէն երկուքը հաւատարիմ էին իրենց տիրոջը. անոնք բազմապատկեցին այն, ինչ որ տրուած էր իրենց (մեր պատմութեան մէջ երեք գործարարներէն միայն մէկը բազմապատկեց իր ստացածը): Յիսուսի պատմած առակին մէջ տէրը *լաւ* կամ *բարի* անուանեց անոնց բազմապատկումը (տե՛ս Մատթեոս 25.21,23):

Տէրը ծոյլ անուանեց այն ծառային, որ պահպանեց իրեն վստահուածը: Ան ետ վերցուց իր մէկ պարկ արծաթը եւ տուաւ առատութիւն ունեցողին՝ անոր տասը պարկը տասնմէկ դարձնելով: Նման մօտեցումը շատ հեռու է *սոցիալիստականէն (համայնավարականէն)* աւելի շուտ՝ այն իր բնոյթով *կապիտալիստական (դրամատիրական)* է:

Մենք կը մտածենք, որ լաւ քրիստոնեան պէտք է պահպանէ այն, ինչ որ ունի: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ մարդիկ կը բաւարարուին, եթէ անոնց ունեցածը ընդամէնը կը բաւականացնէ հազիւ ապրելուն, այնինչ իրականութեան մէջ անոնք *ծոյլ* են: Աստուծոյ առաջին պատուիրանը մարդկութեանը՝ հետեւեալն էր. «Աճեցէ՛ք եւ շատցէ՛ք» (Ծննդոց 1.28): Ան չէր խօսեր միայն մանուկներ ունենալու մասին, այլ՝ կը յայտարարէր. «Ես կ'ակնկալեմ, որ դուք շատցնէ՛ք՝ բազմապատկէ՛ք այն ամէնը, ինչ որ կու տամ ձեզի, եւ վերադարձնէ՛ք աստիկա Ինծի»:

Աստուած սորվեցնելու կարողութիւն վստահած է ինծի: Անոր շնորհքով (այն զօրութեամբ, որ կը գործէ մեր խումբի, գործընկերներու, կնոջս եւ իմ մէջ) այդ պարզեւը բազմապատկուած եւ վերադարձած է Անոր՝ ամբողջ աշխարհին մէջ իմ ուսմունքները տարածելու, գիրքեր գրելու, մեր ուղերձները համացանցին մէջ հասանելի դարձնելու, ամբողջ աշխարհին մէջ գտնուող հովիւներուն եւ աւագներուն միլիոնաւոր ուսուցողական նիւթեր տրամադրելու, «պլոկ»-ներուն մէջ նիւթեր տեղադրելու, այլ ուսուցիչներ բարձրացնելու եւ շատ ուրիշ գործերու միջոցով: Մինչեւ օրս Ան իրագործած է շատ աւելին, քան ես կրնայի երագել, երբ երիտասարդ էի: Այնուամենայնիւ, տեսնելով մինչեւ օրս տեղի ունեցածը՝ երկու միտք կը ծագի: Առաջինը՝ ես կը մտածեմ, թէ արդեօ՞ք որեւէ ձեւով սահմանափակած եմ Անոր: Երկրորդը՝ ինծի բերկրանք կը պատճառէ այն ամէնը, ինչ որ կատարուած է Անոր կարողութեամբ: Այս երկու միտքը կ'օգնէ ինծի միաժամանակ խոնարհ եւ ջերմեռանդ մնալ:

Մեր անօթը

Այնքա՛ն շատ բան կայ, որ Ան կրնայ ընել իւրաքանչիւրիս միջոցով: Անկախ այն բանէն՝ մենք կը հասկնա՞նք, թե՞ ոչ՝ բոլորս ալ սահմանափակումներ ունինք: Համաձայն Եփեսացիներու 3.20-ի՝ ատոնք կ'որոշուին այն բանով, թէ ինչ կրնանք «խնդրել կամ մտածել»՝ այլ մարդոց օգնելու համար: Աստուծոյ պարզ ուղերձը մեզ՝ հետեւեալն է. «Իմ շնորհքը կրնայ տարածուիլ շատ աւելի հեռու այն սահմանէն, որ դուք որոշած էք»: Յիսուս կ'ըսէ. «Ամէն բան կարելի է անոր, որ կը հաւատայ» (Մարկոս 9.22, NKJV):

Մեր սահմանները (այն, ինչ որ մենք կրնանք ընդգրկել) կ'որոշեն, թե որքանով մենք բաժին պիտի ունենանք Աստուծոյ անսահմանափակ մատակարարումէն: Մեր պատմութեան մէջ, որ միլիառաատիրոջ եւ երեք գործարարներու մասին էր, առաջին մարդուն անօթը տեսիլք մըն էր, որուն համար անհրաժեշտ էր 100.000 տոլար, երկրորդին անհրաժեշտ էր 250.000 տոլար, իսկ երրորդին՝ 245 միլիոն տոլար:

Ազնուօրէն ըսելու համար՝ Աստուծոյ կը սահմանափակէ ճիշդ մեր անօթի չափը: Կարելի՞ է արդեօք, որ Աստուած հարցնէ մեզ. «Ինչո՞ւ կը մտածէք միայն այնքանի մասին, որքան բաւական է ձեզի եւ ձեր ընտանիքին: Ինչո՞ւ չէք վերցնէր այն ներուժէն, որ դրած եմ ձեր մէջ: Ինձի համար այս մտածելակերպը *բարի* չէ. ասիկա *ծուլութիւն* է»:

Ահա թէ ինչու Պօղոսը ջերմեռանդօրէն կ'աղօթէ, որ մենք գիտնանք եւ հասկնանք, թէ՛

«...ինչ է Անոր զօրութեան *անչափելի* եւ *անսահման* եւ *գերազանց մեծութիւնը* մեր մէջ եւ մեզի համար, որ կը հաւատանք...» (Եփեսացիս 1.19, AMP):

Ուշադրութեամբ կարդացէ՛ք այն բառերը, որոնք ես ընդգծած եմ այս խօսքին մէջ: Կեցէ՛ք եւ մտորեցէ՛ք ամէն մէկուն շուրջ: *Անչափելի*: Դուք չէք կրնար չափել այն: *Անսահման*: Այն չունի ոչ մէկ սահման: *Գերազանց մեծութիւն*: Ամբողջ տիեզերքին մէջ չկայ ատկէ մեծ ուժ:

Ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ այդ զօրութիւնը ամբողջութեամբ *մեր մէջ* է: Այնպէս չէ, որ մենք կրնանք պարբերաբար ստանալ այս զօրութիւնը Աստուծոյ Գահի սրահէն: Անոր զօրութիւնը արդէն մեր մէջ է:

Այն նոյնպէս *մեզի համար* է: Այն բազմապատկման կարողութիւն կու տայ մեզի: Կ'օգնէ պտղաբեր ըլլալ: Այն արդիւնաւետ կը դարձնէ մեզ՝ այլ մարդոց օգնելու համար: Ատրմով մենք կը փայլինք պայծառ լոյսերու պէս:

Այս զօրութիւնը ճիշդ Աստուծոյ շնորհքն է:

Իշխել կեանքին մէջ²⁴

Աստուծոյ շնորհքը աներեւակայելի՛ է: Այս անարժանաբար տրուած պարգեւի շնորհիւ մենք ունինք փրկութիւն, ներում, նոր բնութիւն եւ զօրութիւն՝ աստուածապաշտ կեանքով ապրելու համար: Այն նոյնպէս կարողութիւն կու տայ մեզի բազմապատկուելու, պտղաբեր ըլլալու եւ կեանքին մէջ իշխելու համար: Շնորհքը ճշմարտապէս զարմանալի է: Ուշադրութեամբ կարդացէ՛ք Պօղոսի խօսքերը.

«Անոնք, որոնք կ'ընդունին Աստուծոյ առատ շնորհքը եւ ձրիաբար կ'արդարանան Անոր առջեւ, պիտի իշխեն կեանքին մէջ Քրիստոսի միջոցով» (Հռովմայեցիս 5.17, TEV):

Այս խօսքի մեծութիւնը չափազանց ոչ ճշմարիտ կը թուայ՝ իրական ըլլալու համար, քանի որ անկէ բխող եզրակացութիւնները պարզապէս ապշեցուցիչ են: Թերեւս ճիշդ ասիկա է պատճառը, որ շատերը անտեսած են այն: Աստուծոյ շնորհքով մենք պէտք է իշխենք կեանքին մէջ: Մենք զօրացած ենք, որ յաղթահարենք ամէն մէկ խոչընդոտ, որ այս աշխարհը կը փորձէ կեցնել մեր առջեւ: Կեանքը այս երկրին վրայ պէտք է խլէ լաւագոյնը մեզմէ. փոխարէնը՝ մենք պէտք է իշխենք կեանքին մէջ: Մենք նշանակուած ենք, որ մեծ հետք ձգենք մեր ազդեցութեան շրջանակին մէջ: Ասիկա մեր առաքելութիւնն է:

Ինչպէ՞ս ասիկա տեղի կ'ունենայ գործնականին մէջ: Մենք պէտք է դուրս ելլենք մեր ներկայ կարգավիճակէն, գերազանցենք սահմանուած չափանիշները: Մենք կանչուած ենք, որպէսզի ազդեցութիւն ձգենք եւ ըլլանք գլուխ, ոչ թէ պոչ, ըլլանք բարձր դիրքի վրայ, ոչ թէ ցած (տե՛ս Երկրորդ Օրինաց 28.13): Մենք ոչ միայն պէտք է բարձրանանք կեանքի բացասական հանգամանքներէն, այլեւ պէտք է ըլլանք աւելի ակնառու, քան անոնք, որոնք չունին ուխտ Աստուծոյ հետ: Մենք պէտք է առաջնորդներ ըլլանք չլուսաւորուած աշխարհին մէջ: Գլուխը կ'որոշէ ուղղութիւնը, ընթացքը եւ միտումները, իսկ պոչը միայն կը հետեւի: Մեր հասարակութեան բոլոր բնագաւառներուն մէջ մենք պէտք է առաջնորդներ ըլլանք, ոչ թէ հետեւորդներ: Արդեօ՞ք ներկայիս այսպէս է: Հնարաւո՞ր է, որ մենք չենք համապատասխանիր այն չափանիշին, որ Աստուած բարի կ'անուանէ:

Առիթ տուէ՛ք աւելի պարզ բացատրել ասիկա: Եթէ դուք կ'աշխատիք առողջապահութեան ոլորտին մէջ, Աստուծոյ շնորհքով կրնաք հիւանդութիւնները բուժելու նոր կամ աւելի նորարար միջոցներ յայտնագործել: Ձեր ներուժը անչափելի եւ անսահման է: Ձեր աշխատակիցները պէտք է հիացմունքով հետեւին ձեր յայտնագործութիւններուն, եւ ձեր աշխատանքը պէտք է ոգեշնչէ անոնց: Ձեր նորարարութիւնը եւ իմաստութիւնը պիտի դրդէ անոնց զարմացած ըսելու. «Ո՞րկէ ան կը ստանայ այս գաղափարները»: Դուք ոչ միայն կրնաք փայլիլ, այլեւ բազմապատկել ձեր արդիւնաւէտութիւնը ձեր աշխատանքային ոլորտին մէջ: Մարդիկ պիտի ձգտին հետեւիլ ձեր քայլերուն եւ պիտի ցանկան գիտնալ ձեր կարողութեան աղբիւրի մասին:

Եթէ դուք համակարգչային ձեւաւորող-տիզայնըր էք, ձեր ստեղծած գործերը պէտք է թարմ եւ նորարար ըլլան՝ այն աստիճան, որ միւսները նմանակեն ձեր գործը: Դուք եւ ձեր բնագաւառի միւս հաւատացեալ-

ները պետք է սահմանէք գերակշռող միտումներ, որոնց պիտի հետեւի ամբողջ հասարակութիւնը: Դուք պահանջարկ պիտի ունենաք ձեր գործի համար եւ յայտնի պիտի ըլլաք ձեր նորարարական մտեցմամբ: Դուք այնքա՛ն առաջադէմ կ'ըլլաք, որ միւսները ձեր բնագաւառին մէջ զարմանքով պիտի հարցնեն իրար. «Ո՞րկէ ան կը ստանայ իր ստեղծարարութիւնը»: Դուք բազմապատկում կ'ունենաք՝ փոխանցելով ձեր գիտելիքները այլ մարդկոց, ընդլայնելով ձեր բնագաւառը եւ Աստուծոյ թագաւորութեան մէջ ներդրումներ ընելով:

Եթէ դուք դպրոցի ուսուցիչ կամ ուսուցչուհի էք, այն զօրացնող շնորհքով, որ ձեր մէջ է, մարգեցէ՛ք ձեր աշակերտները, որպէսզի անոնք ձեռք բերեն գիտելիքներ, հասկացողութիւն եւ իմաստութիւն փոխանցելու թարմ, ստեղծարար եւ նորարար միջոցներ, որոնք ձեր կրթական համակարգի այլ ուսուցիչներու մտքով նոյնիսկ չէ անցած: Դուք կրնաք չափանիշներ սահմանել եւ այնպէս ոգեշնչել ձեր աշակերտները, որ միւսները միայն զարմանան: Միւս ուսուցիչները պիտի հարցնեն մէկը միւսին. «Ո՞րկէ ան կը ստանայ այս գաղափարները»: Դուք բազմապատկում կ'ունենաք՝ փոխանցելով ձեր ունակութիւնները ձեր աշակերտներուն եւ կրթելով նոր ուսուցիչներ:

Եթէ դուք գործարար էք, կրնաք առաջարկել նոր ապրանքներ եւ վաճառքի մեթոտներ, որոնք կը գերազանցեն միւսները: Դուք կ'առաջադրէք արդիւնաւէտ շուկայավարական մարտավարութիւններ, որոնք շատ աւելի առաջադէմ պիտի ըլլան ներկայ միտումներէն: Դուք պիտի զգաք, թէ ինչը եկամուտ կը բերէ, եւ ինչը՝ ոչ: Դուք պիտի գիտնաք՝ ե՛րբ գնել եւ ե՛րբ վաճառել, ո՛րուն ներգրաւել եւ ո՛րուն հեռացնել: Միւս գործարարները զարմանքով կը փորձեն հասկնալ, թէ ինչու այդքան յաջողակ էք: Դուք բազմապատկում կ'ունենաք՝ կրթելով երիտասարդ գործարարներու եւ առատածեռն զոհաբերելով Աստուծոյ թագաւորութեան կառուցման համար:

Միեւնոյն սկզբունքը կիրառելի է, եթէ դուք երաժիշտ էք, գիտաշխատող էք, մարզիկ էք, գիտնական էք, ոստիկան էք, ուղեկցորդ կամ ուղեկցորդուհի էք, մայր եւ տնային տնտեսուհի էք, եթէ կ'աշխատիք հեռուստատեսութեան մէջ, զինուորական ծառայութեան մէջ էք, կամ որեւէ այլ բնագաւառին մէջ: Բոլոր այս օրինակները, որքան ալ տպաւորիչ թուան, կը պատկերեն մեր առաքելութեան նմուշը:

Մեզմէ ամէն մէկը կանչուած է հասարակութեան տարբեր ոլորտներուն մէջ: Ուր ալ գտնուիմք, մենք պետք է ըլլանք առաջնորդներ եւ առաջատարներ: Մեր ձեռնարկութիւնները պետք է ծաղկունք ապրին, նոյնիսկ եթէ միւսները խնդիրներ ունին: Մեր բնակավայրերը պետք է ըլլան անվտանգ, աւելի գեղեցիկ ու յարմարաւէտ, նաեւ՝ աւելի ապահովուած:

Մեր աշխատավայրերը պետք է զարգացում ապրին: Մեր երաժշտութիւնը պետք է ըլլայ թարմ եւ ինքնատիպ, եւ աշխարհիկ երաժիշտները պետք է ընդօրինակեն այն: Նոյնը պետք է կատարուի մեր գրաֆիկական ձեւաւորման, տեսամոնթաժի կամ ճարտարապետական նախագծման բնագավառներներուն մէջ: Մեր ստեղծարարութիւնը պետք է ոգեշնչէ մարդոց եւ պահանջարկ ունենայ բոլոր մակարդակներու վրայ:

Մեր աշխատանքը՝ մարզական, ժամանցային, արուեստի, լրատուամիջոցներու կամ որեւէ այլ ոլորտի մէջ, պետք է կարկառուն ըլլայ: Երբ կ'իշխեն արդարները, մեր քաղաքները եւ երկրները պետք է ծաղկունք ապրին: Այն դպրոցները, ուր մենք կը կրթենք եւ առաջնորդենք, պետք է գերազանցութիւն ցուցաբերեն: Երբ հաւատացեալները ներգրառուած են որեւէ բանին մէջ, ուր պետք է ըլլայ ստեղծարարութեան, նորարարութեան, արդիւնաւէտութեան, խաղաղութեան, ըմբռնողութեան եւ անկեղծութեան առատութիւն: Մենք՝ Յիսուսի աշակերտներս, պետք է լոյս ըլլանք այս խաւար աշխարհին մէջ: Ըստ էութեան, Աստուծոյ շնորհքով մենք պետք է *նախապատուութիւն ստանանք* կամ *աչքի իյնանք* մեր խաւար հասարակութեան մէջ:

Գերազանցել սահմանուած չափանիշները

Կարդացէ՛ք այս վկայութիւնը Դանիէլի մասին.

«Դանիէլը այն աստիճան *աչքի ինկաւ* (կամ՝ *նախապատու եղաւ*) կառավարիչներու եւ սատրապներու միջեւ իր բացառիկ յատկանիշներով, որ թագաւորը կը ծրագրէր նշանակել անոր ամբողջ թագաւորութեան վրայ» (Դանիէլ 6.3, NIV):

Իսկապէս ապշեցուցիչ է: Առաջինը՝ գրուած է, որ Դանիէլը *աչքի ինկաւ* կամ *նախապատու եղաւ*: Գրուած չէ. «Աստուած նախապատուեց Դանիէլը»: Աստուածաշունչի բոլոր հեղինակաւոր թարգմանութիւնները կ'ըսեն, որ ճիշդ է Դանիէլը *նախապատու եղաւ*: «Մեսիճ» Աստուածաշունչին մէջ գրուած է, որ ան «բոլորովին գերազանցեց միւս» առաջնորդներուն:

Ինչպէ՞ս Դանիէլին յաջողեցաւ ասոր մէջ: Ան բացառիկ կարողութիւններ ունէր, քանի որ կը հաղորդակցէր Աստուծոյ հետ: Ուե՛ մարդ, որուն ներսը Աստուծոյ Հոգին կը բնակի, պետք է ճիշդ այսպիսին ըլլայ:

«Նոր Ամերիկեան Սթանտարթ» Աստուածաշունչին մէջ գրուած է. «Դանիէլը սկսաւ աչքի իյնալ... որովհետեւ ան *արտասովոր* հոգի ունէր»: «*Արտասովոր*» ըլլալը կը նշանակէ «գերազանցել սահմանուած չափանիշները, դուրս գալ ներկայ կարգավիճակէն, ընել սովորականէն աւելին»: Երբեմն մենք կրնանք աւելի լաւ հասկնալ որեւէ բան՝ տեսնե-

լով, թե ինչ չի նշանակեր այն, այսինքն՝ ուսումնասիրելով այդ բառի հակահիշները: «Արտասովոր» բառի հակահիշներն են՝ «պարզ», «սովորական», «նորմալ»: Կը նշանակե՛ սովորական կեանքով ապրիլը հակառակ է արտասովոր հոգիով ապրելուն:

Դանիելի հոգին արտասովոր էր: Եթե մեր հոգին արտասովոր ըլլայ, մեր միտքը եւ մարմինը ճիշդ այդպիսին պիտի ըլլան: Եթե մեր հոգին առաջնորդէ մեզ, ստեղծարարութիւնը, հնարամտութիւնը, իմաստութիւնը, գիտութիւնը եւ կեանքի մնացած բոլոր կողմերը այլ պիտի ըլլան, քան եթե մենք պարզապէս ապրինք մեր ուժերով: Եթե մենք իրականութեան մէջ հասկնանք այն շնորհքը, որ *մեր մէջ է* եւ *մեզի համար է*, մենք պիտի գիտնանք, որ մեր կեանքին մէջ չկայ ոչ մէկ սահմանափակում:

Չմոռնանք այն արտայայտութիւնը, որ կը նկարագրէ Աստուծոյ զօրութիւնը մեր մէջ՝ *անչափելի, անսահմանափակ եւ գերազանց մեծութիւն*: Դանիելը վերցուց այն, ինչ որ հասանելի էր իրեն՝ Աստուծոյ հետ իր փոխյարաբերութիւններու արդիւնքին: Ան գիտէր, որ համաձայն Ամենակարողի հետ իր ուխտին՝ ինքը պէտք է ըլլար գլուխ, ոչ թէ պոչ: Իսկ մեր ուխտը Աստուծոյ հետ աւելի մեծ է, քան Դանիելի ուխտը:

Աւելի մանրամասնօրէն դիտարկենք Դանիելի կեանքը: Ան եւ անոր երեք ընկերները գերի տարուեցան Իսրայէլէն, որ փոքր երկիր էր, եւ տարուեցան աշխարհի ամենաազդեցիկ երկիրը: Եթե դուք ամերիկացի էք եւ կը մտածէք, որ վերջին մէկ դարի ընթացքին մեր երկիրը ազդեցիկ էր, բայց ճշմարտութիւնը այն է, որ այն նոյնիսկ մօտ չէ եղած Բաբելոնի իշխանութեան եւ ազդեցութեան: Բաբելացիները կը տիրէին ամբողջ երկրի վրայ՝ բառացիօրէն ամբողջ երկրի: Անոնք թիւ մէկն էին տնտեսական, քաղաքական, ռազմական, հասարակական, գիտական, կրթական եւ արուեստի ոլորտներուն մէջ:

Բաբելոնը ամենակատարելագործուածն էր զրեթէ բոլոր բնագաւառներուն մէջ եւ կը գերազանցէր ամբողջ աշխարհը: Այնուամենայնիւ, մենք կը կարդանք Դանիելին եւ անոր ընկերներուն մասին. «Ինչ հարցում ալ, որ թագաւորը հարցնէր կամ ինչ որ խնդիր ալ բարձրացնէր, այս չորսը գիտէին տասը անգամ *աւելի*, քան թագաւորութեան միւս իշխանները» (Դանիել 1.20, TEV): Այլ թարգմանութիւններուն մէջ գրուած է, որ անոնք տասը անգամ լաւ էին, տասը անգամ խելացի եւ տասը անգամ աւելի կը հասկնային: Անոնք այնպիսի գաղափարներ կը գործադրէին, որոնք այդ առաջատար երկրի իմաստուններուն մտքով նոյնիսկ չէր անցած, եւ այդ գաղափարները արդունաւէտ էին: Ըստ էութեան, անոնց ստեղծարարութիւնը, նորարարութիւնը եւ իմաստութիւնը տասը անգամ աւելի ազդեցիկ էին, քան այլ առաջնորդներունը, որոնք չունէին Տիրոջ Հոգին:

Աւելի մեծ, քան Ղանիէլը

Մտապահելով ասիկա՝ կարդացէ՛ք Յիսուսի խօսքերը. «Յովհաննէսը աւելի մեծ է, քան ռեւէ մարդ, որ երբեք ապրած է» (Ղուկաս 7.28, TEV): Ասիկա կը նշանակէ, որ Յովհաննէս Մկրտիչը աւելի մեծ էր, քան Ղանիէլը: Մի՛ փորձէք համեմատել այս երկուքը անոնց գործերով: Յովհաննէսը հոգեւոր ծառայութեան մէջ էր, իսկ Ղանիէլը կառավարական պաշտօնեայ էր: Այնուամենայնիւ, Յիսուսը պարզօրէն կը յայտնէ, որ Յովհաննէսը գերազանց էր: Անկէ յետոյ կը շարունակէ.

«Բայց Աստուծոյ Թագաւորութեան մէջ ամենափոքրը աւելի մեծ է, քան Յովհաննէսը» (Ղուկաս 7.28, TEV):

Ինչո՞ւ ամենափոքրը Աստուծոյ Թագաւորութեան մէջ աւելի մեծ է, քան Յովհաննէսը: Յիսուսը տակաւին չէր բարձրացած խաչը՝ մարդկութեանը փրկագնելու համար, այսինքն՝ Յովհաննէսի հոգին վերածնած չէր: Յովհաննէսի մասին անկարելի էր ըսել. «Ինչպէս Յիսուսն է, այնպէս ալ Յովհաննէս Մկրտիչն է այս աշխարհին մէջ» (տե՛ս Ա. Յովհ. 4.17): Այնուամենայնիւ, մեր մասին ճիշդ այսպէ՛ս գրուած է: Յովհաննէսը չէր բարձրացած եւ նստած Քրիստոսին հետ երկնաւորներուն մէջ (տե՛ս Եփեսացիս 2.6): Այնուամենայնիւ, ասիկա կը վերաբերի մեզի՛: Ահա թէ ինչու այսօր ամենափոքրը Աստուծոյ Թագաւորութեան մէջ աւելի մեծ է, քան Յովհաննէսը: *Ղուք կը հասկնա՞ք ասիկա:*

Որոշ աստուածաբաններ համոզուած են, որ Յիսուսի յարութենէն մինչեւ մեր օրերը այս երկրին վրայ աւելի քան երկու միլիառ քրիստոնէայ ապրած է: Եթէ յանկարծ պարզուի, որ դուք այդ երկու միլիառ հաւատացեալներէն ամենափոքրն էք (թէեւ ատոր հաւանականութիւնը գրեթէ աննշան է), միեւնոյնն է դուք տակաւին աւելի մեծ էք, քան Յովհաննէս Մկրտիչը, ինչ որ կը նշանակէ, որ դուք *աւելի մեծ էք, քան Ղանիէլը:*

Այս պարագային, կ'առաջանան շարք մը հարցեր: Ղուք լիարժէք կը հասկնա՞ք, թէ ո՞վ էք: Ղուք աչքի՞ կ'իյնաք կամ նախապատի՞ւ կ'ըլլաք: Կարելի՞ է ըսել, որ դուք տասը անգամ աւելի խելացի, լաւ, իմաստուն, ստեղծարար եւ նորարար էք, քան այն մարդիկ, որուն հետ կ'աշխատիք, որոնք ուխտի մէջ չեն Աստուծոյ հետ Յիսուս Քրիստոսի միջոցով: Եթէ ոչ, ո՞րն է պատճառը: Հնարաւո՞ր է, որ դուք չէք հաւատար, որ կարող էք Աստուծոյ շնորհքի աւելի մեծ չափ ստանալ:

Եկէ՛ք քիչ մը աւելի խորհի՛նք այս մասին: Յիսուսը յայտնեց, որ մենք «աշխարհի լոյսն» ենք (տե՛ս Մատթ. 5.14): Նոր կտակարանին մէջ մէկ անգամ չէ, որ կենքը կը համեմատուի լոյսի հետ՝ խաւար աշխար-

հին մէջ (տե՛ս Մատթ. 5.14-16, Յովհ. 8.12, Գործք 13.47, Հռովմ. 13.12, Եփես. 5.8,14, Կողոս. 1.12, Փիլիպպ. 2.15, Ա. Թեսաղ. 5.5 եւ Ա Յովհ. 1.7, 2.9,10): Այս ճշմարտութիւնը պէտք է ըլլայ մեր քրիստոնէական կեանքի կեդրոնին մէջ:

Ի՞նչ կը նշանակէ՝ ըլլալ այս աշխարհի լոյսը: Շատերը կը համարեն, որ աստիկա կը վերաբերի միայն մեր վարքին, այսինքն՝ մենք պէտք է սիրալիր, բարի եւ հաճելի ըլլանք, ինչպէս նաեւ գոց գիտնանք Յովհաննէս 3.16-ը: Ի՞նչ պիտի պատահէր, եթէ Դանիելը այդ կերպով լոյս ըլլար: Ինչպէ՞ս ամէն ինչ պիտի յաջողէր, եթէ ամէն օր պետական գրասենեակներ մտնելու ժամանակ անոր նպատակը ըլլար իր աշխատակիցներու հետ հաճելի կերպով վարուիլը եւ ըսելը. «Լսեցէ՛ք, բաբելացի առաջնորդներ, Սաղմոս 23-ին մէջ գրուած է. «Տէրը՝ իմ Հովիւն է, ես բանի մը կարօտութիւն չեմ ունենար...»:

Ի՞նչ պիտի խօսէին բոլոր կառավարիչները եւ իշխանները Դանիելի մասին, երբ ճաշի ժամուն ան հեռանար գրասենեակէն՝ աղօթելու համար (ինչ որ ան կ'ընէր ամէն օր): Համոզուած եմ՝ անոնք պիտի ըսէին. «Այնքա՛ն ուրախ եմք, որ այդ մոլեռանդը գնաց այստեղէն: Յոյսով եմք՝ ան պիտի աղօթէ մինչեւ օրուան վերջը: Ան շատ *տարօրինակ* է»:

Ինչո՞ւ անոնք այնպիսի օրէնք ընդունեցին, որ կ'արգիլէր Դանիելը աղօթել (տե՛ս Դանիել 6.6-8): Թերեւս այն պատճառով, որ ան տասը անգամ աւելի խելացի, իմաստուն, նորարար եւ ստեղծարար էր, քան իրենք: Դանիելը շարունակ յառաջխաղացում կը ստանար՝ իր պաշտօնով գերազանցելով անոնցմէ ամէն մէկուն, մինչեւ որ դարձաւ բոլոր կառավարիչներու ղեկավարը, եւ հնարաւոր է՝ այդ մարդիկ քիչ մը կը նախանձէին անոր:

Այդ կառավարիչները փակուղիի առջեւ էին. անոնք, հաւանաբար, կը խորհրդակցէին իրար հետ. «Մենք չենք հասկնար: Մեզ կրթած են այնպիսի ուսուցիչներ, գիտնականներ եւ կառավարիչներ, որոնք ամենագիտուն, ամենաօժտուած եւ ամենաիմաստունը եղած են ամբողջ աշխարհին մէջ: Ան եկած է աննշան, փոքր երկրէ մը: Ուրկէ՞ ան կը ստանար իր գաղափարները: Ինչպէ՞ս է, որ ան շատ աւելի արդիւնաւէտ է, քան մենք: Պատճառը, հաւանաբար, անոր՝ օրը երեք անգամ աղօթելն է: Եկէ՛ք օրէնք ընդունինք, որ կ'արգիլէ զինք աղօթել, որ ան այլեւս շուքի մէջ չձգէ մեզ (անշո՛ւշտ, անոնք նաեւ կ'ուզէին ձերբակալել Դանիելը):

Դանիելը վառ լոյս էր, քանի որ ան աներեւակայելի անհատակաւորութիւն ունէր: Ան վառ կը շողար իր ժամանակակիցներու համար՝ իր բացառիկ յատկանիշներուն շնորհիւ: Զինք շրջապատող մարդոց աստիկա հաճելի չէր թուար, որովհետեւ անոնք կը նախանձէին Դանիելին:

Այնուամենայնիւ, կրնամ պատկերացնել, որ շատերը, որոնց կարգին նաեւ թագաւորն էր, կը տեսնէին կենդանի Աստուծոյ գոյութեան ապացոյցը Ղանիէլի կարողութիւններու շնորհիւ: Ատիկա գրաւիչ էր անոնց համար եւ կը դրդէր գանոնք՝ պատուել Ղանիէլի Աստուծոյ:

Ղանիէլը կը գրաւէր մարդոց ուշադրութիւնը ոչ թէ Աստուածաշունչը լաւ գիտնալու, բարեհամբոյր ըլլալու եւ օրը երեք անգամ աղօթելու պատճառով, այլ՝ որովհետեւ ան շատ ատելի արդիւնաւէտ էր իր աշխատանքային ոլորտին մէջ եւ աստուածապաշտ բնաւորութիւն ունէր: Անոր անծնական «հիմքը, հիմնակառոյցը եւ յարդարման նիւթերը» ակնառու էին:

Աստուծոյ շնորհքի վկայութիւնը իմ կեանքին մէջ

Ես անծնապէս ականատես եղած եմ Աստուծոյ շնորհքի զօրութեան դրսեւորման իմ կեանքին մէջ: Դպրոցական տարիներուն ամենադժուար առարկան ինծի համար անգլերէնն էր, իսկ ամենադժուար առաջադրանքը՝ շարադրութիւններ գրելը: Ես խիստ կը դժուարանայի ամէն անգամ, երբ ինծի երեք էջէ բաղկացած շարադրութիւն կը յանձնարարէին: Ես կը գրէի ժամեր շարունակ եւ հազիւ կը լեցնէի նոթատետրի էջին կէսը: Ես կը պատռէի եւ մէկ կողմ կը նետէի իմ սարսափելի գրաւորի էջերը: Դպրոցի աւարտական քննութիւններուն անգլերէնին ստացայ՝ 800-էն ընդամէնը 370 միւտ: Որպէսզի հասկնաք, թէ որքան ցածր գնահատական է ասիկա, կրնամ ըսել, որ իմ ճանապարհորդելու բոլոր տարիներուն ընթացքին ես հանդիպած եմ ընդամէնը մարդու մը, որ ատելի ցած գնահատական ստացած էր:

1991 թուականին աղօթքի ժամանակ Աստուած յայտնեց ինծի, որ կ'ուզէ, որ ես գիրք գրեմ: Երբ ասիկա տեղի ունեցաւ, ես կարծեցի, որ Ան խառնած էր ուրիշ մէկու մը հետ: Հին կտակարանին մէջ գրուած Սառային պատմութեան պէս ես լաւ մը խնդացի: Ինչպէ՞ս կրնայի նոյնիսկ մէկ գլուխ գրել, առաւել եւս՝ ամբողջ գիրք մը: Այդ ժամանակ ես հաշուի չէի առած Աստուծոյ շնորհքի անչափելի, անսահմանափակ եւ գերազանց մեծութիւնը իմ մէջ:

Աստուծմէ գիրք գրելու ցուցմունքը ստանալէն գրեթէ տասը ամիս յետոյ երկու կին տարբեր նահանգներէն երկու շաբթուան տարբերութեամբ եկան քովս եւ ըսին հետեւեալը. «Ճո՛ն, Աստուած կ'ուզէ, որ դուն գրես: Եթէ չգրես, Ան պիտի տայ այդ ուղերձները մէկ ուրիշին»: Անկէ յետոյ ես պայմանագիր կնքեցի Աստուծոյ հետ՝ ընդունելով իմ բացարձակ կախուածութիւնը Անոր շնորհքէն: Ես պիտի պատմեմ այս պատմութեան մնացած մասը յաջորդ գլուխին մէջ, բայց այս գլուխին մէջ

ընդամենը պիտի ըսեն, որ ես արդեն գրել եմ տասնինը գիրք, որոնք թարգմանուած են աւելի քան իննսուն լեզուով եւ միլիոնաւոր օրինակներով տարածուած են աշխարհով մէկ:

Շնորհքը տուաւ ինծի ոչ միայն գիրքեր գրելու, այլեւ քարոզելու կարողութիւն: Առաջին անգամ, մեր ամուսնութենէն յետոյ, երբ Լիզան լսեց իմ քարոզը, ան առաջին շարքին նստաւ քնացաւ: Ես այդքան վատ կը քարոզէի: Լիզային ընկերուիին, որ նստած էր անոր կողքին, այնքա՛ն խորունկ քնացած էր, որ անոր բերանէն թուք կը հոսէր: Ատիկա բոլորովին խրախուսական չէր: Հիմա մարդիկ չեն քնանար, երբ ես քարոզեմ: Առաջ ես կ'ընէի այդ մէկը իմ ուժերով. հիմա տրված եմ հաւատալ Անոր շնորհքին, կախուած ըլլալ Անոր շնորհքէն եւ առիթ տալ, որ Անոր շնորհքը գործէ:

Թէեւ իմ սեփական կարողութեամբ ես չունէի յաջողութիւն այս երկու ոլորտներուն մէջ, բայց Աստուած արտօնութիւն տուաւ ինծի, որ ծառայեմ միլիոնաւոր մարդոց յատկապէս ատոնց միջոցով:

Ճշմարտապէս լաւ կեանք

Ամփոփենք մեր չափանիշները լաւ կեանքի համար: Եթէ դուք կրնաք հաւատալ, ձեզի համար անկարելի ոչինչ պիտի ըլլայ, քանի որ Ան կրնայ առատութեամբ գործել ձեր միջոցով՝ ընելով ամէն բաներէն աւելի, քան դուք կը խնդրէք եւ կ'իմանաք: Այս ներքին զօրութիւնը, որուն միջոցով Ան պիտի կատարէ Իր աշխատանքը ձեր կեանքին մէջ, անչափելի է, անսահման է եւ կը գերազանցէ որեւէ ուժ: Ձեր կեանքը պէտք չէ այսպէս ըլլայ իմ եւ Լիզային վերապրումին շինարարական ընկերութեան ցուցասրահին մէջ, երբ մենք յարդարման նիւթեր կ'ընտրէինք մեր նոր տան համար: Դուք չունիք ոչ մէկ սահմանափակում, քանի որ ձեր ինքնութիւնը եւ գործերը կը կրեն Աստուծոյ շնորհքի ազդեցութիւնը: Այսպիսով, առիթ տուէք Սուրբ Հոգիին՝ ընդլայնել ձեր տեսիլքը: Երագեցէ՛ք մեծ բաներու մասին, հաւատացէ՛ք եւ առաջ գացէ՛ք՝ համապատասխան քայլեր ընելով:

Գոյութիւն ունի գործօն մը, որ վճռական դեր կը խաղայ այս գլուխին մէջ գրուածի իրականացման համար: Չունենալով այս յատկանիշը՝ մենք, ամենայն հաւանականութեամբ, պիտի հիասթափինք եւ նոյնիսկ պիտի ապակողմնորոշուինք՝ ձգտելով արդիւնաւէտ ըլլալ եւ բազմապատկում ունենալ: Մեր յաջորդ գլուխին մէջ մենք պիտի խօսինք այս յատկանիշի մասին, որ կը կոչուի *զանազանութիւն*:

ՉԱՆԱՉԱՆՈՒԹԻՒՆ

«Բայց կատարեալներուն համար է հաստատ
կերակուրը, որոնց զգայարանները
վարժողութեամբ կրթուած են՝
բարին եւ չարը զանազանելու»:
— Եբրայեցիս 5.14

Սրբութիւնը ճոխութիւն չէ՝
քանի մը անձի համար նախատեսուած.
այն պարզապէս ձեր եւ իմ
պարտականութիւնն է:
— Մայր Թերեզա

Հասուն կը համարուին լիովին հասակ առած մարդիկ (խօսքը ոչ
թէ մարմնական, այլ հոգեւոր հասունութեան մասին է): Բնակա-
նօրէն բոլորս կը ծնինք որպէս մանուկներ եւ կը մեծանանք՝ հասունու-
թեան հասնելով: Նոյն կերպով, հոգեւորապէս մենք կը ծնինք որպէս
մանուկներ, եւ կ'ակնկալուի, որ մենք պէտք է հասունանանք՝ Քրիստոսի
կատարեալ հասակին չափով:

Այս երկուքին միջեւ էական տարբերութիւն մը կայ: Բնական հասու-
նութիւնը կապուած է ժամանակին հետ: Երբեք լսած էք, որ երկու տա-
րեկան մանուկը 180 սանթիմետր հասակ ունենայ: Այդպիսին դառնալու
համար կը պահանջուի 15-20 տարի: Այնուամենայնիւ, հոգեւոր աճը
կապուած չէ ժամանակի հետ: Երբեք հանդիպած էք հաւատացեալնե-
րու, որոնք մէկ տարեկան են Քրիստոսի մէջ, սակայն աւելի հասուն են
անոնցմէ, որոնք փրկուած են քսան տարի առաջ:

Համաձայն Եբրայեցիներու 5.14-ի՝ հասունութեան ցուցանիշը այն է,
որ մեր ներքին զգայարանները կարողանան անսխալաբար զանազա-
նել իրական բարին եւ չարը:

Կարելի է նշել, որ ձեր սիրտը ունի հինգ զգայարան, ինչպէս եւ ձեր
մարմինը: Այս մասին պարզօրէն գրուած է Աստուածաշունչի տարբեր

հատուածներուն մէջ: «Ճաշակեցէ՛ք եւ տեսէ՛ք, որ Տէրը բարի է» (Սաղմոս 34.8, NLT): Այս մէկ խօսքին մէջ գրուած է մէկ անգամէն երկու զգայարանի մասին:

Մէկ անգամ Յիսուսը բազմութեան առջեւ յայտարարեց. «Ուել մարդ, որ լսելու ականջ ունի, պէտք է լսէ եւ հասկնայ» (Մատթէոս 11.15, NLT): Գրեթէ բոլոր ներկաները կրնային լսել իրենց բնական ականջներով, սակայն Ան կը խօսէր անոնց ներսի ականջներուն մասին:

Պօղոսը մէջբերեց Աստուծոյ խօսքը Իսրայէլին. «Մի՛ դպչիք անոնց պիղծ բաներուն, եւ ես պիտի ընդունիմ ձեզ» (Բ. Կորնթացիս 6.17, NLT): Նոյն առաքեալը նաեւ գրեց, որ Աստուծոյ «գիտութեան հոտը (կամ՝ բուրմունքը) մեզմով կը յայտնուի ամէն տեղ» (Բ. Կորնթացիս 2.14):

Մենք կրնանք տեսնել բոլոր հինգ զգայարանները ընդամենը այս չորս խօսքին մէջ:

Չանագանութիւն

Ինչպէ՞ս հնարաւոր է չչփոթել բարին եւ չարը, յատկապէս՝ այնպիսի ժամանակներու մէջ, երբ խաբէութիւնը լայնօրէն տարածուած է: Ինչպէ՞ս հնարաւոր է չիյնալ նոյն ծուղակը, որուն մէջ յայտնուեցաւ Եւան, երբ հաւատաց, որ չարը՝ բարի, հաճելի եւ իմաստուն էր: Պատասխանն է՝ օգտագործելով *զանազանութիւնը*: Այդ պարագային, ինչպէ՞ս զարգացնել այն. ճշմարիտ աստուածային երկիւղով:

Մաղաքեայ մարգարէն նախապէս ըսաւ, որ վերջին ժամանակներուն մէջ պիտի ըլլան երկու տեսակի հաւատացեալներ՝ Աստուծոյ երկիւղը ունեցողներ եւ չունեցողներ: Դժուար պահերուն Աստուծոյ երկիւղը չունեցող հաւատացեալները կը տրտնջան, կը համեմատեն եւ կը բողոքեն: Անոնց հաճելի չէ, որ իրենք պէտք է ծառայեն Աստուծոյ՝ հակառակութիւններ, նեղութիւններ եւ դժուարութիւններ կրելով, այն պարագային, երբ մեղաւորները, որոնք հաղորդակցութիւն չունին Աստուծոյ հետ, կը բարգաւաճին:

Աստուծմէ վախցողները կ'անցնին նոյն դժուարութիւններով, բայց այլ կերպ կը վարուին: Անոնք կը խօսին Աստուծոյ բարութեան մասին: Անոնք կը պայքարին՝ նեղութիւններ կրելով, եւ կը հաւատան այն ամէնուն, ինչ որ Ան կ'ըսէ իրենց դժուար հանգամանքներու մասին: Անոնք աւելի կը մտածեն Աստուծոյ ցանկութիւններու, ծրագիրներու եւ Թագաւորութեան մասին, քան իրենց ժամանակաւոր ոչ յարմարաւէտ վիճակի: Անոնք գիտեն, որ հաստատուած են Անոր հաւատարմութեան վրայ: Անոնց վերաբերմունքը այսպէս է.

«Թէեւ բալենիները չծաղկին եւ ելակները չհասնին, թէեւ բոլոր խնձորները որդնոտին, եւ ցորենի դաշտերուն աճը կանգնի, թէեւ ոչխարներու փարախները առանց ոչխարներու մնան եւ անասուններու գոմերը պարպուին, եւ ուրախալի փառաբանութիւն պիտի երգեմ Աստուծոյ: Ես իմ ուրախութեան անիւները պիտի ուղղեմ դէպի իմ Փրկիչ Աստուծոյ: Յուսալով, որ Աստուծոյ Իշխանութիւնը պիտի յաղթէ՝ ես սիրտ կ'առնեմ եւ կը զօրանամ: Ես կը վազեմ եղջերուի պէս: Ես լերան թագաւորի պէս կը զգամ ինքզինքս» (Ամբակումայ 3.17-19, MSG):

Մաղաքեայ մարգարէի միջոցով Աստուած ըսաւ, որ պիտի դարձնէ Անոնց Իր յատուկ գանձերը (յիշեցէ՛ք, որ Պօղոսը կը խօսէր «յատուկ անօթներու» մասին Բ. Տիմոթէոս 2.21-ին մէջ (CEV)): Մաղաքեան նախապէս ըսաւ, որ Աստուծոյ երկիւղը ունեցողներուն բերկրալի առաւելութիւններէն մէկը հետեւեալը պիտի ըլլայ. «Դուք կրկին *պիտի զանազանէք* արդարներուն եւ ամբարիշտներուն միջեւ» (Մաղաքեայ 3.18, NKJV): Ուրիշ ծեւով ըսելու համար՝ այս հաւատացեալները չեն շփոթեր *բարին* այն ամէնուն հետ, ինչ որ բարի չէ:

Նախորդ գլուխին մէջ մենք տեսանք Աստուծոյ բարութեան չափանիշը՝ առատութիւնը, որ արելին է, քան մենք կրնանք խնդրել կամ գիտնալ: Ինչ որ մէկուն համար առատութիւնը կրնայ անկման պատճառ դառնալ, իսկ միւսի համար՝ մեծ առիթ (հնարաւորութիւն) ըլլալ: Եթէ առատութիւնը ձեր նպատակն է, դուք, անկասկած, պիտի իյնաք նոյն ծուղակը, որուն մէջ յայտնուեցան Եւան, Կայէնը, Բաղասամը, Կորիսը, Սաուղը, Պեհեզիան, Յուդան, Աղեքսանդրոսը, Լաւոդիկէի եկեղեցին եւ բազմաթիւ այլ մարդիկ: Այնուամենայնիւ, եթէ ձեր առաջնահերթ նպատակը՝ զԱստուած հաճեցնելն է, դուք պիտի կարենաք զանազանել բարին եւ չարը, այսինքն՝ ձեր առատութիւնը ճիշդ կերպով տնօրինելու կարողութիւն պիտի ունենաք:

Ձանազանութիւնը՝ բանալի յատկանիշ է, իսկ մեր զանազանելու կարողութեան չափը ուղիղ համեմատական է Աստուծոյ հանդէպ ունեցած մեր երկիւղին: Թոյլ տուէք կրկնել այս միտքը. որքան արելի շատ ունենանք Աստուծոյ երկիւղը, այնքան արելի մեծ իմաստութիւն պիտի ստանանք՝ զանազանելու համար: Իր գահակալութեան սկիզբը Սողոմոնը աղաղակեց. «...Քու ծառային իմաստուն սիրտ տո՛ւր, որպէսզի Քու ժողովուրդդ դատէ, բարին եւ չարը որոշէ (կամ՝ *զանազանէ*)» (Գ. Թագաւորաց 3.9):

Այն իմաստութեամբ, որ Սողոմոնը կ'իշխէր, անասելի էր: Այն տարիներուն, երբ ան կը հետեւէր Տիրոջը, ան կը գրէր. «Եթէ դուն աղաղակես

զանազանութեան համար... Եթէ դուն փնտռես Ջինք արծաթի պէս եւ որոնես Ջինք պահուած զանձերու պէս, այդ ժամանակ պիտի հասկնաս Տիրոջ երկիւղը» (Առակաց 2.3-5, NKJV):

Այնուամենայնիւ, հազիւ որ Սողոմոնը կորսնցուց իր երկիւղը Աստուծոյ հանդէպ, ան շփոթեցաւ եւ դադրեցաւ զանազանել բարին ու չարը: Անոր համար ամէն ինչ «ունայնութիւն» եւ «քամիի աշխատանք» դարձաւ: Ամբողջ ժողովող գիրքը կը պատկերէ շփոթուած եւ խճճուած մարդ մը, որ երկիւղը կորսնցուցած է Աստուծոյ հանդէպ եւ, հետեւաբար՝ իր զանազանելու կարողութիւնը: Անոր միտքը տրտմած էր: Տարիներու ընթացքին իմ սիրտը կը ցաւէր այն բազմաթիւ առաջնորդներու եւ հաւատացեալներու համար, որոնք նմանապէս կը կորսնցնէին Տիրոջ երկիւղը եւ կ'իյնային խաբէութեան մէջ, քանի որ կը զրկուէին զանազանութենէն:

Ինչպէս արդէն ըսի, երբ աստուածային երկիւղ ունինք, մենք առիթ կու տանք, որ Աստուծոյ շնորհքը հեռացնէ մեզմէ ամէն պղծութիւն: Հետաքրքրական է, բայց մեր զանազանութիւնը կախուած է աստուածահաճոյ կեանքէն: Այնպէս որ, մենք եւս մէկ անգամ կը տեսնենք, որ սրբութիւնը՝ հիմնակառոյց է, որուն վրայ կը հենին մեր կեանքի որոշումները՝ կապուած մեր աշխատանքային գործունէութեան, փոխյարաբերութիւններու, դրամներու, հնարաւորութիւններու եւ կեանքի որեւէ բնագավառի հետ:

Նախ եւ առաջ մենք պէտք է ձգտինք երկիւղ ունենալ Աստուծմէ: Եթէ ասիկա ըլլայ մեր գլխաւոր առաջնահերթութիւնը, մենք չենք խաբուիր առատութեան պատճառով: Գրուած է. «Իր հարստութեանը յուսացողը վայր պիտի իյնայ» (Առակաց 11.28): Այնուամենայնիւ, նոյն գիրքին մէջ գրուած է. «Ես եմ հանձարը... Հարստութիւն եւ փառք կայ մօտս...» (Առակաց 8.14,18): Եւ կրկին՝ «Խոնարհութեան եւ Տիրոջ երկիւղի վարձքը հարստութիւն է...» (Առակաց 22.4): Ճշմարիտ հարստութիւնը՝ միջոց է, որ թոյլ կու տայ կատարել այն, ինչին համար, որ Աստուած կանչած է ձեզ, իսկ անոր կոչումը մշտապէս կ'ենթադրէ ազդեցութիւն մարդոց վրայ, այսինքն՝ Աստուծոյ թագաւորութիւնը կառուցելը:

Ամէն առաւօտ դուք պէտք է հարցնէք ձեզի հետեւեալը. «Այսօր իմ դրդապատճառը՝ Տիրոջ երկիւղն է, թէ՞ հարստութիւն ձեռք բերելը»: Եթէ ձեր նպատակը՝ աստուածային երկիւղն է, այն պիտի պաշտպանէ ձեզ խաբէութենէն. դուք չարութեան մասնակից չէք դառնար, որպէսզի ունենաք այն, ինչ որ բարի է:

Թոյլ տուէք պարզաբանել. միջոցները, ունեցուածքը, հարստութիւնը եւ առատութիւնը *բարի* են: Այնուամենայնիւ, եթէ ատոնք ձեր նպա-

տակն են, դուք չէք կրնար զանազանել եւ չէք հասկնար, երբ ատոնք ստանալու միջոցները չար են: Ես Աստուածաշունչէն պիտի օգտագործեմ պատմութիւն մը՝ այս գաղափարը բացատրելու համար:

Ժամանակն է առնելու

Իսրայէլի մէջ ընդունուած էր զոհաբերութիւն կամ նուէր մատուցել մարգարէին քով երթալու ժամանակ: Երիտասարդ Սաւուղը, որ տակաւին պէտք է թագաւոր դառնար, իր ծառայի հետ կը փնտռէր իր հօր կորսուած էջերը: Երբ փնտռուողը շատ յոգնեցուց զանոնք, Սաւուղի ծառան առաջարկեց երթալ մօտակայ քաղաքը եւ խնդրել հոն ապրող Սամուէլ անունով մարգարէի օգնութիւնը՝ էջերը գտնելու համար: Սաւուղը անմիջապէս պատասխանեց. «Եթէ երթանք, ի՞նչ պէտք է տանք անոր: Մեր պարկերուն մէջ հաց չէ մնացած: Մենք ոչինչ ունինք, որ նուէր մատուցենք այդ սուրբ մարդուն» (Ա. Թագաւորաց 9.7, MSG): Մարդիկ այդպէս կը մտածէին, երբ մարգարէին քով կ'երթային:

Այժմ տեղափոխուինք ուրիշ ժամանակահատուած: Ասորիներու բանակի հրամանատար Նէեմանը եկաւ Եղիսէ մարգարէին տունը, եւ երբ ի վերջոյ հնազանդեցաւ անոր ցուցմունքներուն, լիովին բժշկուեցաւ բորոտութենէն: Ան վերադարձաւ Եղիսէին քով՝ շնորհակալութիւն յայտնելու եւ նուէր մատուցելու համար: Մարգարէն պատասխանեց. «Կենդանի է Տէրը, Որուն առջեւ ես կանգնած եմ, եթէ ընդունիմ» (Ղ. Թագաւորաց 5.16): Նէեմանը կը համոզէր զինք ընդունիլ իր նուէրը, բայց Եղիսէն կրկին հրաժարեցաւ:

Եղիսէի անձնական օգնականը՝ Քեհեզիան, ներկայ էր ամբողջ այդ ընթացքին: Ան ցնցուած կը նայէր, մինչ Նէեմանը կը հեռանար՝ առանց սովորական համարուող նուէրը տալու: Հազիւ որ Եղիսէն հեռացաւ, Քեհեզիան վազեց Նէեմանի շքախումբին ետեւէն: Տեսնելով զինք՝ Նէեմանը կեցուց իր կարաւանը եւ հարցուց Քեհեզիայի զալուն պատճառը:

Քեհեզիան հաւաստիացուց զինք, որ ամէն բան լաւ է, բայց յետոյ ստեց Նէեմանին՝ ըսելով, որ Եղիսէին քով յանկարծակի կարիք յառաջացած էր: Ան ըսաւ. «Քիչ առաջ Եփրեմի սարէն երկու երիտասարդ մարգարէներ եկան: Ան կը ցանկար 34 քիլոկրամ արծաթ եւ երկու ձեռք հագուստ՝ անոնց տալու համար» (Ղ. Թագաւորաց 5.22, NLT):

Նէեմանը տուաւ երկու անգամ աւելի, քան «անհրաժեշտ» էր: Անոնք հրաժեշտ տուին միմեանց, եւ Քեհեզիան վերադարձաւ ու պահեց այդ նուէրները իր առարկաներուն մէջ:

Այնուհետև ան վերադարձաւ Եղիսէին քով եւ կեցաւ անոր առջեւ: Եղիսէն հարցուց, թէ ուր եղած է ան, եւ Քեհեզիան ստեց՝ պնդելով, որ ոչ մէկ տեղ գացած է: Այդ ժամանակ Եղիսէն ըսաւ.

«Չե՞ս հասկնար, որ ես հոգիով այդտեղ էի, երբ Նէեմանը իջաւ իր կառքէն՝ քեզ դիմաւորելու համար: Արդեօ՞ք ժամանակն է՝ առնելու դրամ եւ հանդերձներ, ձիթենիներու պուրակներ եւ խաղողի այգիներ, ոչխարներ եւ հորթեր, տղամարդ եւ կին ծառաներ: Քանի որ դուն ըրիր ասիկա, դուն եւ քու սերունդները յաւիտեան պիտի տառապիք Նէեմանի բորոտութեամբ» (Դ. Թագաւորաց 5.26,27, NLT):

Աստուածային երկիւղի (եւ այդ պատճառով ալ՝ զանազանութեան) պակասը Քեհեզիայի կեանքին մէջ խաբէութեան պատճառ դարձաւ: Ան մտածեց, որ եկած էր ստանալու ժամանակը, այնինչ ատոր ժամանակը չէր: Ան համոզուած էր, որ այդ պարգեւը արժանաւոր էր ստանալ՝ թերեւս մտածելով, որ ինքը կրնար վերցնել այն, քանի որ իր դեկավարը հրաժարեցաւ անկէ: Ի վերջոյ, ինչպէս եւ Եղիսէն, ան զոհեր ըրած էր եւ ներդրած էր իր կեանքը Աստուծոյ գործի համար: Արդեօ՞ք Աստուած չէր ցանկար, որ իրենք բարգաւաճէին: Եւ ահա, իրենց քով եկած էր այդ հարուստ հեթանոսը, որ կ'երկրպագէր օտար աստուածներու: Արդեօ՞ք մեղաւորներու հարստութիւնը չի պահուիր արդարներու համար: Ան եզրակացուց, որ Եղիսէն իմաստութեամբ չվարուեցաւ, երբ չընդունեց հասանելի վարձատրութիւնը իր ծառայութեան համար:

Քեհեզիայի տրամաբանութիւնը արդարացուց այն քայլերը, որոնց ան դիմեց, որպէսզի ստանար այն, ինչ որ արժանաւոր կը համարէր: Ան չունէր զանազանելու կարողութիւն եւ այդ պատճառով ալ չարը բարի համարեց: Եւ ան սարսափելի գին վճարեց իր անհնազանդութեան համար:

Նպատակն արդարացնում է միջոցները

Ես կրնամ բազմաթիւ պատմութիւններ պատմել՝ ցոյց տալու համար, թէ ինչպէ՛ս երկրային հարստութեան Տիրոջ երկիւղէն աւելի ձգտիլը սայթաքման պատճառ դարձած է թէ՛ առաջնորդներու, թէ՛ հաւատացեալներու համար: Ժամանակի ընթացքին այդ ընտրութիւնը շատ սուղի նայած է անոնց վրայ: Սկիզբը շահ ձեռք բերելու հնարաւորութիւնը գրաւիչ, խելամիտ եւ լաւ կը թուայ: Սկզբնական շրջանին կը թուայ, թէ անոնց գործերը օրինում են, եւ շատ շուտով անոնք յաջողու-

թեան պիտի հասնին: Այնուամենայնիւ, որոշ ժամանակ յետոյ ամէն ինչ կը վատթարանայ, իսկ աւելի ուշ անոնք շատ սուղ կը վճարեն իրենց որոշումներուն համար: Ես տեսած եմ քայքայուած ամուսնութիւններ, կորսուած ծառայութիւններ, դրամական անկումներ, առողջական բարդութիւններ, կործանուած փոխյարաբերութիւններ... Եւ այս ամէնուն հետ մէկտեղ, մարդիկ կը կորսնցնէին իրենց անկեղծութիւնը եւ իրենց սիրելիներու վստահութիւնը:

Քրիստոնէայ գործարարները պատմած են ինծի անթիւ տհաճ պատմութիւններ եսասիրութեան, սուտերու, գողութիւններու, նախանձի, կեղծիքի եւ միջոցներու ապօրինի իւրացման մասին, որ նկատուած են այլ քրիստոնէայ գործարարներու մէջ: Ո՞րն է այսպիսի վարքի պատճառը: Պատասխանը պարզ է. բարի թուացող աւարտը կ'արդարացնէ այն փոխզիջումը, որ անհրաժեշտ կը թուայ՝ աստոր հասնելու համար: Մարդը կը մտածէ. «Աստուծոյ կամքն է, որ ես յաջողութիւն, հարստութիւն եւ ազդեցութիւն ունենամ»: Այնուամենայնիւ, ան չ'օգտագործեր Աստուծոյ խօսքը որպէս զտիչ՝ իր ճանապարհին զգուշօրէն հետեւելու համար: Յաճախ այս փոխզիջումը միակ հնարաւոր տարբերակը կը թուայ: «Եթէ հիմա ոչինչ ընենք, շատ ուշ պիտի ըլլայ: Մենք մեծ հնարաւորութիւն կամ օրհնութիւն պիտի փայտցնենք»: Անհրաժեշտ է հասուն բնաւորութիւն ունենալ՝ Աստուծոյ մատակարարումին սպասելու համար:

Սատանան փոխզիջման տարաւ Յիսուսին Անոր ծառայութեան վաղ շրջանին մէջ: Ան գայթակղեցուց Յիսուսը՝ առաջարկելով՝ առանց որեւէ դժուարութիւն կրելու ետ ստանալ այս աշխարհի բոլոր թագաւորութիւնները, քանի որ Յիսուսը եկած էր ճիշդ այդ նպատակով: Ան պէտք է միայն երկրպագէր սատանային: Յիսուսի մարդկային բնութեան համար ասիկա, հաւանաբար, գայթակղիչ առաջարկ էր: Եթէ Ան ընդունէր սատանային առաջարկը, պիտի կարենար արագօրէն շատ մեծ ծառայութիւն կառուցել՝ խուսափելով բազմաթիւ դժուարութիւններէն եւ չարչարանքներէն: Ան պարզապէս պէտք է երկրպագէր սատանային:

Որքան յաճախ սատանան կ'առաջարկէ կատարել այն, ինչ որ Աստուած դրած է մեր սրտին մէջ, բայց աստոր համար մենք պէտք է փոխզիջման երթանք մեր ազնուութեան, բնաւորութեան, եւ հնազանդութեան հետ: Երկրպագութիւնը չի նշանակէր դանդաղ երգ՝ շինութիւն տուող բառերով: Երկրպագութիւնը կ'արտայայտուի այն բանով, թէ ո՞րուն մենք կը հնազանդինք: Կրնայ այնպէս ըլլալ, որ մենք դանդաղ երգեր երգենք եկեղեցւոյ մէջ, այնինչ մեր կեանքը, որ շատ ավելի բարձր կը խօսի մեր երգերէն, երկրպագէ խաւարին:

Աւելի վաղ ես ըսի, որ գրեթէ բոլոր հեղինակները, իրենց գիրքերուն մէջ օգտագործելով նոր եւ անծանօթ բառեր, առաջին հերթին կը նշեն ատոնց գլխաւոր իմաստը: Եթէ գտնէք այն աստուածաշնչեան հատուածը, որուն մէջ առաջին անգամ կ'օգտագործուի «երկրպագութիւն» բառը, դուք պիտի հասկնաք ատոր իրական նշանակութիւնը: Առաջին անգամ «երկրպագութիւն» բառը օգտագործուեցաւ Աստուածաշունչին մէջ, երբ Աստուած պատուիրեց Աբրահամին զոհաբերել ամենակարեւոր անձնաւորութեան կամ ամենակարեւոր բանը իր կեանքին մէջ՝ առանց որեւէ կերպով պատճառաբանելու իր յանձնարարութիւնը:

Աբրահամը երեք օրուան ճամբայ անցաւ որդիին հետ եւ հասնելով Մորիա լեռան ստորոտը՝ ըսաւ իր ծառաներուն. «Դուք իշուն հետ հոս կեցէք, եւ ես ու տղան մինչեւ հոն երթանք ու երկրպագութիւն ընենք» (Ծննդոց 22.5): Ան լեռ չէր բարձրանար՝ Աստուծոյ դանդաղ, քաղցրահունչ երգ մը երգելու համար: Աբրահամը, հնազանդելով Աստուծոյ, կը բարձրանար, որպէսզի մահուան մատնէր այն, ինչ որ ամենասուղն էր իրեն համար: Աբրահամի երկրպագութիւնը սահմանուեցաւ անոր հնազանդութեամբ:

Հնարաւոր է, որ յատուկ այս պատճառով Աստուած մէկ անգամ ըսաւ իր ժողովուրդին. «Հեռացուցէ՛ք ձեր աղմկոտ փառաբանութեան երգերը: Ես չեմ լսեր ձեր տաւիղներու երաժշտութիւնը: Փոխարէնը՝ կ'ուզեմ տեսնել իրաւունքի մեծ հեղեղ, *արդար կեանքի անվերջանալի գետ*» (Ամովսեայ 5.23,24, NLT): Ինծի հաճելի է «արդար կեանքի անվերջանալի գետ» արտայայտութիւնը: Ես կ'անուանէի ասիկա «*անսասան հնազանդութիւն*»:

Ամովսի օրերուն մէջ ապրող մարդոց կեանքը չէր համապատասխաներ Աստուծոյ Խօսքին, բայց անոնք կը յօրինէին նորանոր երկրպագութեան երգեր եւ կ'երգէին ատոնք իրենց հաւաքոյթներուն: *Երկրպագութիւնը կ'երեւայ այն բանով, թէ ո՞րուն մենք կը հնազանդինք, ոչ թէ՛ ո՞րուն մենք կ'երգենք:*

Ընտրել բարին, ոչ թէ Աստուած

Թոյլ տուէք պատմել, թէ ինչպէս անգամ մը ես իյնկայ գայթակղութեան ծուղակը՝ փոխզիջման երթալով իմ հնազանդութեան: Մեր ծառայութիւնը շատ երիտասարդ էր. այն տակաւին երկու տարեկան ալ չէր: Միակ բանը, որը կը կատարուէր մեր ծառայութեան մէջ, իմ ճամբորդութիւններն էին պզտիկ եկեղեցիներ, ուր հարիւր կամ ասելի քիչ մարդ կը յաճախէր: Մեր ճամբորդութեան միջոցը հիմնականին մեր

«Հոնտա Սիվիք» ինքնաշարժն էր: Մեր երկու զաւակները մեր հետն էին՝ ետեւի նստատեղին: Ինքնաշարժը հագիւ կը բաւէր մեր իրերուն համար, նաեւ՝ երկու արկղ լսաժապաւէններու, որոնք կը վաճառէինք մեր հաւաքոյթներուն:

Ինչպէս արդէն նշած եմ, օր մը՝ առաւօտեան, Աստուած խօսեցաւ սրտիս՝ պատուիրելով գիրք գրել: Ես անմիջապէս չինազանդեցայ այդ պատուէրին երկու պատճառով: Առաջինը՝ ես յիշատակած էի, որ շարադրութիւններ գրելը շատ դժուար կը տրուէր ինծի դպրոցին մէջ: Երկրորդը՝ ո՞ր պիտի ցանկար հրատարակել անանուն հեղինակին գիրքը: Այնուամենայնիւ, վերջապէս հնազանդեցայ եւ սկսայ գրել:

Պահանջուեցաւ մէկ տարի՝ այդ գիրքը աւարտելու համար: Այն շատ ժամանակատար եւ աշխատատար էր ինծի համար: Ես այցելեցի երկու հրատարակչութիւն եւ ներկայացուցի իմ ձեռագիրը, որուն վերնագիրն էր՝ «Յաղթանակ անապատին մէջ»: Հրատարակչութիւն մը ըսաւ ինծի, որ այն «չափազանց քարոզչական» է. միւսը ընդհանրապէս չպատասխանեց: Ես յուսահատեցայ: Լիզան եւ ես ընտրեցինք մեր միակ հնարաւոր տարբերակը. որոշեցինք անձամբ հրատարակել այն: Մենք գումար հանգանակեցինք քանի մը հազար օրինակի համար եւ վաճառեցինք գիրքերը այն եկեղեցիներուն մէջ, ուր կը ծառայէինք: Մարդոց հաճելի էր այդ գիրքը: Յաջորդ տարի ես գրեցի երկրորդ գիրքը: Կրկին, միակ հնարաւոր տարբերակը մեզի համար՝ այն միջոցներով հրատարակելն էր:

Երկրորդ գիրքը տպագրելէն քանի մը ամիս յետոյ մեր գրասենեակը հեռաձայնեց անձնաւորութիւն մը, որ նոր նախագիծերով զբաղող խմբագիր էր Ամերիկայի ամենախոշոր հրատարակչութիւններէն մէկուն մէջ: Ներկայանալէն յետոյ ան անմիջապէս յայտնեց իր հեռաձայնի նպատակը.

- Ճո՛ն, ինչ որ մէկը տուաւ մեզի ձեր «Յաղթանակ անապատին մէջ» գիրքը: Մեր հրատարակչութիւնը կը հաւատայ այս գիրքի ուղերձին, եւ մենք կը ցանկանք օգնել ձեզի, որ այն հասցնեք լայն զանգուածներու:

Մենք քանի մը վայրկեան խօսեցանք: Ան պատմեց այն բազմաթիւ միջոցներու մասին, որոնցմով անոնք կը պատրաստուէին վաճառել իմ գիրքը եւ գովեց իրենց մարքեթինկային (հանրաճանաչման) ու գովազդային բաժիններու աշխատանքը: Ամէն ինչ չափազանց լաւ կը թուար՝ ճշմարիտ ըլլալու համար. վերջապէս այդ գիրքը հասանելի պիտի ըլլար ամբողջ երկրին մէջ:

Այնուամենայնիւ, խօսափողը ցած դնելէն յետոյ ես անհանգստութիւն զգացի: Իմ հոգիին մէջ վատ զգացողութիւն յայտնուեցաւ այդ խօ-

սակցութեան ընթացքին: Յաջորդ առաւօտեան ես աղօթեցի եւ հզօր ձեւով զգացի, որ Աստուած կ'ըսէր. «Մի՛ ընդունիր այդ առաջարկը»:

Ես խօսեցայ Լիզային հետ այդ մասին. ան համաձայնեցաւ, որ թէեւ այդ առաջարկը լաւ կը թուար, բայց ան նոյնպէս երկմտութիւն կը զգար:

Աւելի ուշ այդ օրը Լիզան ըսաւ.

- Սիրելի՛ս, ես լաւ զգացողութիւն չունիմ աստոր համար, երբ կ'աղօթեմ:

Ես վերջնականօրէն համոզուեցայ, որ մենք պէտք չէ ընդունինք այդ առաջարկը:

Յաջորդ օրը այդ խմբագիրը կրկին զանգահարեց ինձի: Թէեւ ես գիտէի Աստուծոյ կամքը աստոր վերաբերեալ, միեւնոյնն է՝ կ'ուզէի լսել, թէ ինչ պիտի ըսէր ան: Այդ ժամանակ ես չհասկցայ ատիկա, բայց խօսակցութիւնը շարունակելու իմ ցանկութիւնը ցուցանիչ էր, որ իմ մէջ խնդիր կար: Ինչո՞ւ ես չէի կրնար պարզապէս հնազանդիլ: Ինչո՞ւ թոյլ կու տայի անոր համոզել ինձի, որ պէտք է հրատարակէի իմ գիրքը յատուկ այդ հրատարակչութեան մէջ: Կրնա՞յ պատահիլ, որ անոր խօսքերը կը սնուցէին սրտիս մէջ բոյն դրած սխալ ցանկութիւն մը, կամ կը շոյէին իմ եսասիրութիւնը:

Այդ խմբագիրը խանդավառութեամբ կը պատմէր, թէ ինչ ոգեւորութեամբ իր հրատարակչութիւնը կը ցանկայ տարածել իմ ուղերձը: Ան պնդեց, որ իմ ուղերձը անհրաժեշտ էր, եւ այն Աստուծո՛ւ տրուած խօսք էր մեր երկրին համար: Այդ հրատարակչութիւնը կ'աշխատէր բոլոր խոշոր իրացնող ընկերութիւններու հետ եւ կրնար վաճառել իմ գիրքը բոլոր քրիստոնէական եւ շատ աշխարհիկ գրախանութներուն մէջ՝ ամբողջ Ամերիկայով: Ան պատմեց անյայտ հեղինակներու մասին, որոնց գիրքերը իրենք հրատարակած էին, եւ այսօր նրանց ուղերձները տարածուած են Ամերիկայով մէկ, եւ անոնք համաժողովներու յայտնի խօսնակներ դարձած են: Անոր խօսքերով՝ այդ ամենը տեղի ունեցած էր իրենց հրատարակչութեան շնորհիւ:

Յաջորդ քանի շաբաթներու ընթացքին այդ խմբագիրը կը հեռաձայնէր ինձի երկու օրը մէկ, որովհետեւ ես չէի մերժեր զինք: Որքան ատելի կը լսէի զինք, այնքան ատելի կը համոզուէի, որ արժէր հրատարակել իմ գիրքը անոնց հրատարակչութեան մէջ: Եկաւ պահ մը, երբ սրտիս մէջ այլեւս զգուշաւորութիւն չէի զգար: Ես լռեցուցած էի Սուրբ Հոգիին ներքին վկայութիւնը: Ես առիթ տուած էի, որ շողոքորթութիւնը եւ մարդկային փաստարկները լռեցնէին Աստուծոյ հրահանգը այդ հարցին վերաբերեալ: Պարզապէս՝ իմ զանազանելու կարողութիւնը մարած էր:

Ելից 23.8-ին մէջ գրուած է. «Կաշառքը կը կոյրցնէ զանազանութիւն ունեցողներուն» (NKJV): Շողոքորթութիւնը՝ կաշառքի ձեւ է, եւ այն

կոյրցուց զիս: Ես կը պատրաստուիի ընտրել բարենպաստ հնարաւորութիւնները եւ առատութիւնը աւելի, քան Տիրոջ երկիւղը:

Թէեւ կինս խստօրէն զգուշացուց զիս ատոր համար, մենք պայմանագիր կնքեցինք, եւ անմիջապէս բազմաթիւ խնդիրներ առաջացան:

Այդ ժամանակ Լիզան եւ ես արդէն տասնմէկ տարուան ամուսնացած էինք: Յաճախ ան կ'ըսէր ինձի. «Դուն երբեք չես հիւանդանար»: Ան ճիշդ էր. ես հազուադէպ առողջական խնդիր կ'ունենայի, եւ եթէ ինչ որ բան ի յայտ կու գար, կ'անցնէր ամենաշատը քսանչորս ժամուան ընթացքին: Բայց այն օրուրնէ, ինչ մենք ստորագրեցինք այդ պայմանագիրը, ես կը պայքարէի տկարութեան դէմ եւ չէի կարենար ազատիլ ատկէ:

Ամէն ինչ սկսաւ հարբուխէն. իմ կեանքի ընթացքին ընդամէնը երկրորդ անգամ ըլլալով ես փսխեցի: Հագիւ որ հարբուխը անցաւ, ես վարակուեցայ ինչ որ վիրուսով մը: Լիզան եւ ես քաղաքէն դուրս ելած էինք՝ մեր ամուսնութեան տարեդարձը նշելու համար, եւ ես բարձր ջերմութիւն ունէի ամբողջ այդ ընթացքին: Իմ տենդը շարունակուեցաւ մինչեւ յաջորդ շաբաթ: Ես կը քարոզէի եկեղեցիի մէջ, եւ ամէն ծառայութենէն յետոյ կը վերադառնայի հիւրանոց ու կը դողայի ծածկոցներու տակ:

Այդ տենդը շարունակուեցաւ նաեւ երրորդ շաբաթ: Մենք զարմացած էինք, քանի որ ես երբեք այդպէս չէի հիւանդացած: Ի վերջոյ, ուժեղ հակամանրէական (անթիպայոթիք) դեղահատերը յաղթահարեցին այդ վիճակը, բայց երբ ւաւարտեցի ատոնց ընդունումը, քովս խիստ պաղառութիւն սկսաւ: Ես շատ վատ վիճակի մէջ էի. կոկորդս կը ցաւէր, չէի կրնար քիթով շնչել եւ բոլոր վատ ախտանշանները ունէի: Այդ հիւանդութիւնը չէր անցներ:

Կազդուրուելէն տակաւին երկու շաբաթ չէր անցած, երբ վնասեցի ծունկս: Վնասուածքը այնքան ծանր էր, որ քանի մը շաբաթ ամրակապ կը կրէի եւ հենակներով կը քալէի: Ըսես ատիկա բաւական չէր, անմիջապէս ատկէ յետոյ վարակուեցայ մէկ ուրիշ վիրուսով: Այս հիւանդութիւններու եւ վնասուածքներու շրջանը տեսեց աւելի քան երեք ամիս: Ամբողջ այդ ընթացքին Լիզան լիովին առողջ էր:

Մինչ ես կը կրէի այդ ամէնը, մենք լուրջ խնդիրներ ունէինք այդ հրատարակչութեան հետ: Կը թուար՝ չէինք կրնար համաձայնութեան գալ ոչ մէկ հարցի շուրջ: Մեր փոխյարաբերութիւններուն մէջ մեծ ճնշումներ կային, եւ գործը բոլորովին առաջ չէր երթար:

Ըսես ատիկա ալ բաւական չէր, մենք բազմաթիւ այլ խնդիրներու կը բախէինք, որոնք, կը թուար, որ անլուծելի էին: Այդ երեք ամսուան ընթացքին կեանքը շատ բարդացած էր: Թերեւս Դաւիթը ճիշդ այս պատ-

ճառով գրած էր. «Քանի տակաւին ես չէի տառապած, կը շեղուէի, բայց հիմա կը պահեմ Քու Խօսքը» (Սաղմոս 119.67, NKJV):

Աստուած շատ ողորմած էր այս իրավիճակին մէջ. Ան թոյլ տուաւ, որ տեսնէի իմ յիմարութիւնը: Ես առաջնահերթութիւնը տուած էի իմ ծառայութեան յաջողութեանը, ոչ թէ Անոր հնազանդելուն: Ես ընդունեցի իմ սխալը Աստուծոյ եւ կնոջս առջեւ: Ես ներուեցայ ու մաքրուեցայ: Անոր ողորմութիւնը այնքա՛ն զարմանալի է:

Այնուամենայնիւ, ես տակաւին ծուղակի մէջ էի: Ինծի հրաշք պէտք էր, որ խզէի իմ պայմանագիրը այդ հրատարակչութեան հետ: Լիզան եւ ես միաբան աղօթեցինք՝ խնդրելով Աստուծոյ միջամտութիւնը:

Երկու շաբաթ անց այդ հրատարակչութիւնը նամակ ուղարկեց մեզ՝ տեղեկացնելով պայմանագիրը խզելու մասին: Ես թեթեւութիւն զգացի, բայց եւ սուղ վճարեցի ատոր համար: Մենք վճարեցինք աւելի քան 4.000 տոլար՝ պայմանագիրը խզելու համար: Ատիկա շատ մեծ գումար էր մեր երիտասարդ ծառայութեան համար. այն կը կազմէր մեր մէկ ամսուան պիւտճէի կէտը:

Աստուածային հնարաւորութիւնը

Քանի մը ամիս անց ընկերներէս մէկը, որուն անունը Սքոթ է, ընթրիքի հրաւիրեց զիս՝ ըսելով. «Ճո՛ն, կ'ուզեմ ծանօթացնել քեզ ընկերոջս հետ»: Ես համաձայնեցայ:

Ճաշարանին մէջ Սքոթը ծանօթացուց ինծի իր ընկերոջ հետ, որուն անունը նոյնպէս Ճոն էր: Պարզուեցաւ, որ ան շատ յայտնի հրատարակչութեան մը տնօրէն էր: Սովորական խօսակցութենէն յետոյ, ընթրիքի կէտէն Ճոնը հարցուց, թէ ինչի մասին ես կը քարոզէի այդ ժամանակ: Որքան կը յիշեմ՝ ես այլեւս ոչինչ կերայ այդ հարցէն յետոյ:

Ես սկսայ բաժնեկցիլ անոնց հետ վիրաւորանքի մասին, որ այդ ժամանակ իմ քարոզներու թեման էր: Գրեթէ տասնհինգ վայրկեան ես ոգեւորութեամբ խօսեցայ Սքոթի եւ Ճոնին հետ:

Սքոթը պահ մը ընդհատեց զիս՝ ըսելով.

- Պարզապէս կ'ուզեմ՝ գիտնաք, որ մենք չենք կրնար հրատարակել այս ուղերձը, քանի որ մենք կը հրատարակենք տարեկան ընդամէնը քսանչորս գիրք, եւ այն ակ՝ հանրայայտ հեղինակներու կամ հովիւներու գիրքեր:

- Ես չեմ խնդրեր ձեզմէ հրատարակել այս ուղերձը,- պատասխանեցի: - Ես պարզապէս կը պատասխանեմ ձեր հարցին այն մասին, թէ ինչի մասին վերջերս կը քարոզեմ:

- Անշո՛ւշտ,- պատասխանեց ան: - Շարունակեցե՛ք, կը խնդրեմ:
 Ես շարունակեցի խօսիլ եւս հինգ կամ տասը վայրկեան վիրաւորանքի ծուղակի մասին: Երբ ւարտեցի, ճոնը հարցուց.
- Կրնա՞ք տալ ինձի այս ուղերձի ձեռագիրը:
 Ես անակնկալի եկայ՝ պատասխանելով.
- Դուք կարծեմ ըսիք, որ չէք կրնար հրատարակել այն:
 - Այս ուղերձը պէտք է տարածուի, եւ ես կ'ուզեմ ներկայացնել այն մեր հրատարակչութեան սեփականատիրոջը:

Այդ հրատարակչութիւնը ընդունեց իմ ուղերձը եւ հրատարակեց այն «Սատանայի խայծը» վերնագիրով: Ժամանակի ընթացքին այն հանրաճանաչ գիրք դարձաւ աշխարհի տարբեր երկիրներուն մէջ: Այս գիրքը գրելու ընթացքին «Սատանայի խայծը» վաճառուած է աւելի քան մէկ միլիոն օրինակով եւ թարգմանուած է աւելի քան վաթսուն լեզուներով:

Ես երբեք չեմ մոռնար այն օրը, երբ երկրորդ հրատարակչութիւնը, ուր ներկայացուցած էի գիրքիս ձեռագիրը, զանգահարեց զիս: Անոնք ըսին, որ անպայման կը ցանկան հրատարակել իմ ձեռագիրը եւ պատրաստ են անմիջապէս պայմանագիր կնքել հետս: Ես դրի խօսակողը, սկսայ աղօթել, եւ Աստուած յստակ ըսաւ իմ սրտին մէջ. «Նախորդ հրատարակչութիւնը՝ քու գաղափարն էր, իսկ այս հրատարակչութիւնը՝ Իմն է»:

Այս փորձառութիւնը պարզօրէն ցոյց տուաւ ինձի տարբերութիւնը բարիի եւ Աստուծոյ միջեւ: Ինչպէս շատ յաճախ տեղի կ'ունենայ, բարիի հնարաւորութիւնը առաջինն էր, իսկ Աստուծոյ հնարաւորութիւնը եկաւ աւելի ուշ: Նոյնը պատահեցաւ Աբրահամի եւ Սառայի հետ. սկիզբը ծնաւ Իսմայէլը, իսկ յետոյ՝ Իսահակը:

Աստուածային երկիւղի ապացոյցը

Ինչո՞ւ սխալ որոշում կայացուցի առաջին հրատարակիչին հետ: Անկեղծ պատասխանը այն է, որ ես կեդրոնացած էի առատութեան (ուղերձը աւելի շատ մարդոց հասցնելու) վրայ, ոչ թէ Տիրոջ երկիւղի: Այս պատճառով, տրամաբանութիւնը եւ ակնյայտ յաջողութեան մասին մտքերը մերժեցին եւ լռեցուցին այն, ինչ որ Աստուած պարզօրէն ցոյց կու տար իմ սրտին մէջ:

Հնազանդութիւնը՝ ճշմարտապէս Տիրոջ երկիւղը ունենալու արտաքին ապացոյցն է: Երբ Աստուծոյ երկիւղը ունինք, մենք...

- Անմիջապես կը հնազանդինք Անոր:
- Կը հնազանդինք Անոր, նոյնիսկ եթէ աստիկա անիմաստ կը թուայ:
- Կը հնազանդինք Անոր, նոյնիսկ եթէ աստիկա ցաւ կը պատճառէ:
- Կը հնազանդինք Անոր, նոյնիսկ եթէ օգուտ չենք տեսներ ատոր մէջ:
- Կը հնազանդինք Անոր մինչեւ վերջ:

Ուսումնասիրելով Աբրահամի գործողութիւնները փորձութեան ժամանակ՝ մենք կը տեսնենք, որ ան կատարեց այս կէտերէն ամէն մէկը: Վերլիչենք անոր մեծ փորձութիւնը:

Գիշեր մը Աստուած կը պատուիրէ Աբրահամին՝ զոհաբերել իր որդին՝ Իսահակին: Ան իսկապէ՞ս կը լսէ Աստուծոյ ծայնը, թէ՞ աստիկա վատ երազ է: *«Անկարելի՛ է, - կը մտածէ ան: - Մի՞թէ աստիկա կարելի է: Ես կը սիրեմ որդիս: Ես չեմ կրնար սպաննել Իսահակը: Ես խոստում ունիմ, որ անորմէ թագաւորներ եւ ազգեր պիտի ծնին: Ինչպէ՞ս այդ խոստումը պիտի կատարուի, եթէ սպաննեմ զինք»:*

Աբրահամը կ'աղաղակէ.

- Ի՞նչ: Ինչպէ՞ս Դուն կրնաս այսպիսի բան պատուիրել ինծի: Դուն խոստացար, որ անորմէ ազգեր պիտի ծնին:

Չկայ ոչ մէկ պատասխան Աստուծմէ. միայն լռութիւն:

Աբրահամը կ'իյնայ զգացմունքային փոթորիկի մէջ: Համոզուած եմ՝ այդ գիշեր ան չկրցաւ քնանալ: Մեզմէ քանի՞ն պիտի տրամադրէին երկու շաբաթ, ամիս կամ նոյնիսկ՝ տարի, որպէսզի մտածէին այդ պատուէրին մասին եւ, ի վերջոյ, համոզուէին, որ այն ողջամիտ չէ:

Այնուամենայնիւ, Աբրահամը այդպիսին չէր: Գրուած է. «Յաջորդ օրը՝ վաղ առաւօտեան, Աբրահամը ելաւ եւ իշուն համետը դրաւ» (Ծննդոց 22.3, NIV): Ան *անմիջապէս* հնազանդեցաւ:

Դուք երբեք հաղորդակցած էք ինչ որ մէկուն հետ, որ թեթեամտօրէն կ'ըսէ. «Արդէն քանի մը ամիս է՝ Աստուած կ'աշխատի հետս այսինչ հարցում», եւ ծիծաղելով կը փոխէ թեման: Եթէ մտածէք, աստիկա ողբերգութիւն է, քանի որ, փաստօրէն այդ մարդը կը պարծենայ, որ չունի աստուածային երկիր:

Աստուած կը պատուիրէ Աբրահամին՝ զոհաբերել իր կեանքի մեծագոյն խոստումը, որուն ան սպասած էր քսանհինգ տարի՝ առանց որեւէ բացատրութիւն տալու: Իսահակին զոհաբերելը *անիմաստ կը թուայ* Աբրահամին. չնայած ատոր՝ ան կը հնազանդի:

Երիտասարդ որդին զոհաբերելը խորունկ *ցաւ կը պատճառէ* Աբրահամին: Այդ ներքին ցաւը հանգիստ չի տար անոր երեք օրուան ճանա-

պարհի ընթացքին: Սկիզբը՝ Աստուծոյ ծայնը լսելէն անմիջապէս յետոյ, քիչ մը աւելի դիւրին էր, բայց ամէն օրուան աստուածային լռութիւնը կը սաստկացնէ անոր ցաւը: Այդ պայքարը կը հասնի գագաթնակէտին, երբ Աբրահամը զոհասեղան կը պատրաստէ իր սիրելի որդիին հետ: Միեւնոյնն է՝ Աբրահամը կը հնազանդի:

Ամենակարողը չի խոստանար Աբրահամին, որ եթէ ան հնազանդի, անոր որդիի փոխարէն մէկ այլ զոհ պիտի տրուի: Ի տարբերութիւն մեզի՝ Աբրահամը չունի Ծննդոց գիրքը եւ չի գիտեր իր պատմութեան աւարտը: Ան չի տեսներ ոչ մէկ օգուտ այդ պատուիրանէն, բայց միեւնոյնն է՝ կը հնազանդի:

Այսօր ամէն ինչ ուրիշ ձեւով է: Շատ-շատերը կը ցանկան տեսնել Աստուծոյ հնազանդելու օգուտը, մինչեւ հնազանդիլը: Որպէս ուսուցիչներ՝ մենք յաճախ ցոյց կու տանք Աստուծոյ հնազանդելու անձնական օգուտը մեր ուղերձներու մէջ: Որպէս հեղինակներ՝ եթէ մենք չնշենք, թէ ինչ օգուտ պիտի ստանայ ընթերցողը տուեալ գիրքէն մեր ստեղծագործութեան վերնագրի կամ ենթավերնագրին մէջ, այն չի վաճառուիր:

Վերջապէս, Աբրահամը տեղ կը հասնի, կը բարձրանայ լեռը, կը կառուցէ զոհասեղանը, կը կապէ Իսահակը եւ արդէն պատրաստ է խրել դանակը իր սիրելի որդիին սրտին մէջ: Ան կը հնազանդի մինչեւ վերջ:

Մինչ դանակը Իսահակի գլխավերեւն է, յանկարծ հրեշտակ մը կը յայտնուի եւ կը զոչէ. «Տղուն ձեռք մի՛ դպցներ եւ անոր բան մը մի՛ ըներ. քանզի հիմա գիտցայ, որ դուն Աստուծմէ կը վախնաս» (Ծննդոց 22.12):

Ուրկէ՞ այդ հրեշտակը գիտէր, որ Աբրահամը կը վախնար Աստուծմէ: Որովհետեւ ան անմիջապէս հնազանդեցաւ, երբ ատիկա անիմաստ կը թուար, ցաւոտ էր եւ որեւէ օգուտ չէր խոստանար, եւ ըրաւ ատիկա մինչեւ վերջ: Ան մեծահարուստ էր, եւ ամենասուղը անոր համար՝ իր որդին էր: Բայց Աբրահամի գլխաւոր նպատակը հարստութիւնը չէր. անոր առաջնահերթութիւնը Աստուծոյ հնազանդիլն էր:

Աստուածային երկիւղը կը պատրաստէ մեզ՝ առատութիւնը, միջոցները եւ հարստութիւնը ողջամտօրէն տնօրինելու համար: Աստուածաշունչը ճիշդ ասիկա նկատի ունի՝ ըսելով. «Տիրոջ օրհնութիւնը կը հարստացնէ, եւ Ան տրտմութիւն չ'աւելացնէր ատոր» (Առակաց 10.22, NKJV):

Անմիտ մօտեցում

Եթէ համեմատենք Յիսուսի աշակերտ Յուդան Աբրահամին հետ, շատ մեծ տարբերութիւն պիտի տեսնենք: Յուդան հանգիստ կ'անտեսէր ճշմարտութիւնը, եթէ ատիկա ձեռնադրու էր անոր: Ան միջոցներ կը

իրացնէր ծառայութեան գանձանակէն, կը ստէր, չէր հոգար աղքատներու մասին, կեղծաւոր էր եւ, ի վերջոյ, դաւաճանեց իր Առաջնորդին (տե՛ս Մատթ. 26.25,49 եւ Յովհ. 12.6, 13.2): Անոր դատողութիւնը մթագնած էր: Աստուածային երկիւղ չունենալու պատճառով ան չէր կրնար զանազանել ճիշդը՝ սխալէն, բարին՝ չարէն:

Մէկ անգամ հարուստ կին մը թանկարժէք օծանելիքի ամբողջ շիշ մը պարպեց Յիսուսի վրայ: Յուդան վրդովուեցաւ եւ բոլորին առջեւ քննադատեց անոր «անմիտ» արարքը. «Այդ օծանելիքը մէկ տարուան աշխատավարձ արժէր: Այն պէտք է վաճառուէր, իսկ այդ գումարը՝ աղքատներուն բաժնուէր» (տե՛ս Յովհ. 12.5, NLT): Անոր մեկնաբանութիւնը տրամաբանական եւ համոզիչ էր, եւ նոյնիսկ ազդեց այլ աշակերտներու վրայ: Անոնք նոյնպէս միջամտեցին՝ դատապարտելով անոր արարքը:

Յիսուս շտկեց Յուդայի ստեղծած ազդեցութիւնը՝ ըսելով. «Հանգի՛ստ ձգեցէք զինք: Ինչո՞ւ կը քննադատէք զինք՝ Իմ հանդէպ նման բարի բան ընելու համար... Այս կնոջ արարքի մասին պիտի յիշեն եւ պիտի պատմեն» (Մարկոս 14.6,9, NLT): Յիսուս անուանեց այդ կնոջ արարքը *բարի* եւ *մնայուն*. Յուդան դատապարտեց անոր արարքը՝ անուանելով *վատ* եւ *վաղանցիկ*: Անոր զանազանելու կարողութիւնը աղճատուած էր: Ան չէր զգար այն, ինչ որ Աստուծոյ սրտին մէջն էր:

Կարդացէ՛ք անմիջապէս յաջորդ խօսքը.

«Ատկէ յետոյ Իսկարիոսի Յուդան՝ տասներկու աշակերտներէն մէկը, գնաց գլխաւոր քահանաներու քով, որ պայմանաւորուէր՝ Յիսուսին անոնց մատնելու համար» (Մարկոս 14.10, NLT):

Ասիկա արդէն վերջին կաթիլն էր: Յուդան մինչեւ կոկորդը կուշտ էր. ան յոգնած էր Յիսուսի դեկավարման ձեւէն: Ան հետեւած էր այս Գալիլիացիին՝ սպասելով, որ Ան պիտի վերականգնէր Դաւիթի գահը: Համաձայն Եսայի մարգարէի՝ Մեսիան պէտք է յաւիտեան իշխէր: Ինչի՞նչ Յիսուս կը սպասէր. չէ՞ որ արդէն երեք տարի անցած էր: Եթէ Յիսուս հաստատէր Իր թագաւորութիւնը, Յուդան՝ որպէս Անոր գլխաւոր առաջնորդներէն մէկը եւ Անոր զանձապահը, պատուաւոր դիրք, հարստութիւն եւ իշխանութիւն կ'ունենար:

Յուդան մտածեց. *«Ես պիտի արագցնեմ ամէն ինչ: Եվ այլեւս չեմ սպասեր: Ես կ'ուզեմ իշխանութիւն, ազդեցութիւն եւ հարստութիւն ունենալ: Բաւական է՝ ինչքան առաջնորդները ծաղրեցին ու հալածեցին զիս: Ես այլեւս չեմ ուզեր, որ ինձի լուսնորդի գործակից համարեն: Եթէ ես մատնեմ Զինք երկրի առաջնորդներուն, Ան վերջապէս ցոյց պիտի*

տայ Իր զօրութիւնը եւ պիտի հաստատէ Իր թագաւորութիւնը, եւ ես բարձր պաշտօն պիտի զբաղեցնեմ»:

Թերեւս դուք վիճարկէք իմ մեկնաբանութիւնը Յուդայի դրդապատճառներու մասին, սակայն ես հիմնաւոր կը համարեմ այն: Յուդան մշտապէս կը տեսնէր Յիսուսին զօրութիւնը. Յիսուսը կը բժշկէր էր հիւանդները, կը հանդարտեցնէր փոթորիկը, յարութիւն կու տար մեռելներուն, կ'անհծէր թգենին, կը բանար կոյրերու աչքերը եւ խուլերու ականջները եւ այլ հրաշքներ կը գործէր: Յուդան կը լսէր Յիսուսի յաճախակի խօսքերը Թագաւորութեան մասին: Ան կը լսէր, որ Պետրոսը եւ միւս աշակերտները կը դաւանէին եւ նոյնիսկ կը յայտարարէին, որ Յիսուսը Մեսիան էր: Յիսուսի մեծութիւնը անոր առջեւ էր ամէն օր:

Այնուամենայնիւ, երբ մահուան դատապարտեցին Յիսուսը, ան գիտակցեցաւ, որ սխալ կը մտածէր, զոչաց իր արարքին համար եւ ինքնասպանութիւն գործեց՝ ինքզինքը կախելով: Ան ծրագիրը չիրականացուց իր եսակեդրոն ձգտումներու պատճառով:

Աբրահամը եւ Յուդան պարզօրէն ցոյց կու տան տարբերութիւնը Աստուծոյ երկիւղը ունեցող եւ չունեցող մարդոց միջեւ: Առաջինը զանազանելու կարողութիւն ունէր, երկրորդը կ'ապրէր խաբէութեան մէջ: Անոնց որոշումները պարզապէս կ'արտացոլէին այն, ինչ որ իրենց սրտերուն մէջ էր: Այս երկու տղամարդոց կեանքի աւարտը շատ կը տարբերէր մէկը միւսէն: Երկուքն ալ յիշուեցան, բայց՝ տարբեր պատճառներով:

Բոլորս ալ պիտի յիշուինք. ատոր մէջ կասկած չկայ, քանի որ մենք յաւիտենական էակներ ենք: Մենք պէտք է հարցնենք մեզի հետեւեալ հարցը. ինչպէ՞ս կը ցանկանք, որ մարդիկ յիշեն մեզ: Այս հարցումին պատասխանը պիտի որոշէ ձեր երկիւղը Աստուծոյ հանդէպ:

Ասիկա՛ է ամէնը

Մենք պէտք է մաքուր սիրտ ունենանք, ոչ թէ մշուշոտ, որպէսզի մեր դատողութիւնը ողջամիտ ըլլայ: Այդ պարագային, երբ անհրաժեշտ ըլլայ որոշել՝ արդեօ՞ք որեւէ նախաձեռնութիւն մը ոգեշնչուած է Աստուծո՞մէ, թէ՞ պարզապէս բարի կը թուայ, բայց վաղանցիկ է, մենք իրար չենք անցնիր: Մենք իմաստուն կերպով կ'ընտրենք մեր կողակիցը, մեր հաղորդակցութեան շրջանակը, մտերիմ ընկերներու, մեր աշխատանքային գործունէութիւնը, հնարաւորութիւնները, ներդրումները, մանուկները դաստիարակելու ձեւը, եկեղեցին, ուր պէտք է ծառայենք, կրթութիւնը եւ բազմաթիւ այլ բաներ, որոնք պէտք է ընտրենք կեանքին մէջ:

Հասնելով իր կեանքի աւարտին՝ մեծ փառք վայելելէն եւ ա՛լ աւելի մեծ անմտութիւն գործելէն յետոյ, Սողոմոնը բացականչեց. «Ասիկա՛ է ամէնը: Ահա իմ վերջնական եզրակացութիւնը. վախցի՛ր Աստուծմէ եւ հնազանդի՛ր Անոր պատուիրաններուն, որովհետեւ ասիկա իւրաքանչիւրի պարտականութիւնն է: Աստուած պիտի դատէ մեզ այն ամէնուն համար, ինչ որ կ'ընենք, ներառեալ ամէն ծածուկ բանի՝ թէ՛ բարի, թէ՛ չար» (Ժողովող 12.13,14, NLT):

Սողոմոնը խելագար դարձաւ. ան կորսնցուց իր զանազանելու կարողութիւնը եւ արդեն անկարող էր տարբերել, թէ ինչն էր ճշմարտապէս բարի, իսկ ինչը՝ ոչ: Աստուած ցոյց կու տայ անոր խելագարութիւնը Ժողովող գիրքի միջոցով: Բայց հրաշալին այն է, որ մենք կը տեսնենք, թէ ինչպէս Սողոմոնը վերադարձաւ ողջամիտ դատողութեան: Ան հասկցաւ, որ կեանքին մէջ չկայ աւելի կարելոր բան, քան աստուածային երկիւղը պահելը: Իր իսկ խօսքերով՝ «Ասիկա՛ է ամէնը»:

Ի՛նչ ընկեր, եթէ դուք կ'ուզէք տեսնել կեանքը այնպէս, ինչպէս Աստուած կը տեսնէ, ընկալել եւ ճանչնալ վերին իմաստութիւնը, ընտրեցէ՛ք Տիրոջ երկիւղը: Դուք երբեք չէք գղջար ձեր ընտրութեան համար:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

«Ինչպէս Դուն Ջիս աշխարհի դրկեցիր,
Ես ալ զանոնք աշխարհի դրկեցի»:
— Յովհաննէս 17:18

Մարդու համար սահմանուած
նպատակը ո՛չ երջանկութիւնն է,
ո՛չ ալ առողջութիւնը,
այլ՝ սրբութիւնը:
— Օսվալտ Չէմպրոս

Եկէ՛ք մեկ քայլ ետ երթանք եւ նայինք ընդհանուր պատկերին:
Աստուած խորապէս եւ սրտանց կը սիրէ ձեզ: Ան միայն լաւագոյնը կը ցանկայ ձեզի համար: Այն ամէնը, ինչ որ Աստուծմէ է, բարի է, սակայն ամէն բարի բան չէ, որ Աստուծմէ է: Այսպիսով, գոյութիւն ունին *բարի* բաներ, որոնք կրնան թոյլ չտալ մեզի ստանալու *լաւագոյնը*: Բոլորս կ'ուզենք ստանալ լաւագոյնը, բայց ատոր հասնելու ճանապարհը միշտ չէ, որ ակնյայտ է. այն գտնելու համար անհրաժեշտ է զանազանելու կարողութիւն ունենալ:

Մեր երկրային ընթացքի մէջ կայ ինչ որ մէկը՝ բացի Աստուծմէ, որուն հետ մենք պէտք է գործ ունենանք՝ սատանան, որ մեր թշնամին է: Սատանային գլխաւոր մտադրութիւնն է՝ ցաւ պատճառել մեզ եւ ատորմով խոցել մեզ սիրող Աստուծոյ սիրտը: Սուրբ Գիրքը կը պնդէ, որ մեր թշնամին «կը քողարկուի լոյսի հրեշտակի կերպարանքով», ինչէն յետոյ գրուած է. «Անոր ծառաները նոյնպէս կը քողարկուին արդարութեան ծառաներու կերպարանքով» (Բ. Կորնթացիս 11.14,15, NLT):

Գոյութիւն ունին բազմաթիւ ընտրութիւններ եւ ճանապարհներ, որոնք բարի կը թուան, բայց ատոնց վերջնական արդիւնքը տրտմութիւն, թշուառութիւն, կորուստ եւ մահ է (տե՛ս Առակ. 14.12): Մտածեցէ՛ք այս մասին. մեր թշնամին, անոր ծառաները եւ անոր ճանապարհները՝ այն ամէնը, ինչին վերջնական նպատակը մեր կործանումն է, քօ-

դարկուած են *բարիի* տեսքով: Աստուածաշունչին մէջ գրուած չէ, որ անոնք *կրնան* քօղարկուիլ, այլ՝ որ անոնք քօղարկուած են: Այնպէս որ, յիշեցէ՛ք հետեւեալը. սովորաբար այն, ինչը ամէնէն վտանգաւորն է ձեզի համար, չի յայտնուի ձեզի բացայայտ չարիքի կերպարանքով, այլ կը քօղարկուի բարիի տեսքով:

Քրիստոնէութեան վաղ շրջանին մեր թշնամին լարեց իր ուժերը՝ եկեղեցին կործանելու համար: Հաւատացեալները կը հալածուէին, կտտանքներու կ'ենթարկուէին եւ կը սպաննուէին: Բայց որքան աւելի մեր թշնամին կը փորձէր կործանել Աստուծոյ ժողովուրդը, այնքան եկեղեցին աւելի ազդեցիկ կը դառնար: Քանի որ սատանան յիմար չէ (այլ նոյնիսկ՝ շատ խելացի), ան եզրակացուց, որ Աստուծոյ ժողովուրդը կործանելու համար պէտք է առաջարկել անոնց բարի կեանք՝ հեռու Աստուծոյ իմաստութենէն: Ըստ էութեան, ասիկա նոյն մարտավարութիւնն է, որ նա կիրառեց Եդեմի պարտէզին մէջ:

Թերեւս այսօր, տեսնելով սատանային կողմէն դարեր շարունակ իրականացող աննկատ եւ խորամանկ մարտավարական քայլերու հետեւանքները, մենք աւելի լաւ կը հասկնանք, թէ որքան արդիւնաւէտ է ան: Բոլորս կը յայտնուինք այնպիսի վիճակի մէջ, երբ ընդունած ենք ճշմարտութեան այլ տարբերակներ՝ *իրական* ճշմարտութեան փոխարէն, որոնք լավ եւ յարմարաւէտ կը թուան: Մենք ամէնուր կը ներկայացնենք Յիսուսի բարութիւնը եւ Անոր դերը՝ որպէս Փրկիչ (ինչ միանշանակ ճշմարիտ է), բայց կը թերագնահատենք Անոր իշխանութեան եւ ազդեցութեան արժէքը, զօրութիւնը եւ չափը մեր կեանքին մէջ: Մենք ընդունած ենք Աստուծոյ գերիշխանութիւնը եւ մեր արդար դիրքը Անոր առջեւ, բայց անտեսած ենք սրբութեան ձգտիլը եւ հետեւաբար՝ Անոր պատուիրաններուն ականջ դնելու եւ հնազանդելու պատասխանատուութիւնը: Մեր կողմէն կազմուած «բարի» վարդապետութիւններու պատճառով մեր վարքի եւ կենսաոճի մաքրութիւնը գրեթէ անտեղի դարձած է:

Իրենց քրիստոնէական ընթացքին մէջ շատերը հաւատացած են, որ պէտք է պահպանել՝ բազմապատկելու փոխարէն: Անոնք պարզապէս հագիւ կը գոյատեւեն, ոչ թէ կը ձգտին առատութեան: Ըստ էութեան, մենք կազմած ենք աստուածաբանութիւն՝ հիմնուած մեր իսկ դատողութեան վրայ եւ ամրագրուած առանձին սուրբգրային հատուածներով, Աստուծոյ Խօսքի ամբողջական խորհուրդը ընդունելու փոխարէն՝ որպէս մեր բացարձակ հեղինակութիւն այն ամէնուն, ինչ Երկինքը նախատեսած է մեզի համար:

Այս միտումին կարելի է վերջ տալ եւ պէտք է վերջ տրուի: Ժամանակն է, որ կրկին ուսումնասիրենք Աստուածաշունչը եւ անկեղծօրէն խնդրենք

Սուրբ Հոգիէն՝ առաջնորդել մեզ ճշմարտութիւնը ճանչնալու մէջ: Մենք այլեւս պէտք չէ կարդանք Աստուածաշունչը այնպէս, ինչպէս կը հաւատանք, այլ մօտենանք Աստուածաշունչին անկեղծօրէն, բաց միտքով ու սրտով, եւ հաւատանք այն ամէնուն, ինչ կը կարդանք՝ խնդրելով Սուրբ Հոգիէն՝ բացայայտել եւ հեռացնել մեր կանխակալ ենթադրութիւնները:

Եկեղեցւոյ առաջնորդ, ես կը յորդորեմ ձեզ՝ սորվեցնել Աստուծոյ ամբողջ խորհուրդը: Թող որ ձեր գլխաւոր դրդապատճառը ըլլայ ոչ թէ հետեւորդներու մեծ բանակ հաւաքելը, այլ Աստուծոյ հոտը ճշմարտութեամբ սնուցելը եւ կորսուածներուն ճշմարտապէս հասնիլը՝ փրկութեան լիարժէք աստուածաշնչեան ուղերձով: Եթէ ձեր առաջնահերթ նպատակն է՝ համոզել եկեղեցի յաճախողներուն, որպէսզի յաջորդ շաբաթ նոյնպէս վերադառնան, խնդրեցէ՛ք Սուրբ Հոգիէն ներել ձեզ եւ ուղղեցէ՛ք ձեր ջանքերը Աստուծոյ հոտը ճշմարտութեամբ սնուցելուն: Եղէ՛ք ժամանակակից, թարմ եւ նորարար ձեր *մեթոտներու* մէջ, բայց անժամանակեայ՝ ձեր *ուղերձներու* մէջ:

Հաւատացեալ, ուր ալ ըլլայ ձեր ազդեցութեան շրջանակը՝ դասաւեներակի, թէ լսարանի, տարրալուծարանի, թէ գրասենեակին մէջ, դաշտի մէջ, տունը, թէ գործարար աշխարհին մէջ, ապրեցէ՛ք սիրով լեցուն սրտով եւ խօսեցէ՛ք ճշմարտութիւնը մարդոց հետ հաղորդակցելու համար: Թող որ մարդիկ երկիւղածութիւն ապրին եւ վկայեն, որ տեսնելով ձեզ՝ պիտի տեսնեն Յիսուսը: Թող որ անոնք վերապրին Աստուծոյ ներկայութիւնը ձեր կեանքին մէջ: Եթէ դուք ձգտիք ճշմարիտ սրբութեան, Անոր մեծութիւնը պիտի ճառագէ ձեզմէ:

Եթէ մենք չապրինք ըստ Քրիստոսի պատուիրաններուն, մենք չենք ունենար Անոր ներկայութիւնը, եւ Ան յայտնի չի դառնար աշխարհին Իր եկեղեցւոյ միջոցով: Անկեղծ ըսելու համար՝ մենք անձնապէս կը տուժենք ատկէ, բայց առաւել շատ կը տուժէ մեր հասարակութիւնը: Առաջին կարգին՝ Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը ծածկուած է մնալու. այնպէս որ, կորսուածները պիտի չկարենան կապ հաստատել այն միակ Անձնաւորութեան հետ, Որ կրնայ լիարժէք դարձնել զանոնք: Երկրորդը՝ մեր հաւատակիցները անպաշտպան պիտի դառնան «փոխզիջում» կոչուող վարակիչ հիւանդութենէն, որ կրնայ հեռացնել զանոնք Աստուծոյ սրտէն եւ ներկայութենէն:

Յիսուս այսպէս ըսաւ. «Անոնց համար Ես Իմ Անձս կը սրբացնեմ...» (Յովհաննէս 17:19): Ան առանձնացուց Ինքզինքը, որպէսզի հնազանդի Հօրը՝ յանուն Ձինք շրջապատող մարդոց: Ան ցոյց տուաւ Իր գլխաւոր դրդապատճառը՝ ւարստելով Իր խօսքը. «...որ անոնք ալ ճշմարտութեամբ սրբուած ըլլան»:

Մինչեւ Անոր վերադարձը, դուք եւ ես՝ միակ «Յիսուսն» ենք, որուն այս աշխարհը պիտի տեսնէ: Եկէ՛ք ցոյց տանք անոնց ճշմարիտ Յիսուսը, ոչ թէ երեւակայական ու անզօր Յիսուսը: Եկէ՛ք չբաւականանանք ամէն բանով, ինչ որ նուազ է լաւագոյնէն: Եկէ՛ք յարինք ճշմարտութեան եւ տեսնենք մեր անասան, սիրով լեցուն՝ հնազանդութեան ճշմարտապէս բարի պտուղները:



Ունեցէ՛ք երկարատեւ կեանք, ձգտեցէ՛ք սրբութեան եւ հասէ՛ք յաջողութիւններու ձեր նախածեռնութիւններուն մէջ: Այսպէս վարուելով՝ դուք դրական փոփոխութիւններու պատճառ պիտի դառնաք այլ մարդոց կեանքերուն մէջ:

«Եւ Անոր, որ կարող է ձեզ անբիծ պահել
 եւ Իր փառքին առջեւ անարատ կայնեցնել ցնծութիւնով,
 Մեր Փրկիչին
 Այն միակ Իմաստուն Աստուծոյ,
 [մեր Տէր Յիսուս Քրիստոսին ձեռքով],
 Փա՛ռք ու մեծութի՛ւն,
 Զօրութի՛ւն ու իշխանութի՛ւն
 [բոլոր դարերէն առաջ]:
 Ե՛ւ հիմա, ո՛ր բոլոր դարերուն մէջ:
 Ամէ՛ն» (Յուդայ 24,25):

Սիրելի՛ ընկեր,

«Բարի՞, թե՞ Աստուած»-ը՝ պարզ գիրք չէ: Այս ուղերձը կրնայ ոգեշնչել մարդոց՝ միանալու սրբութեան շարժումին: Այժմ դուք գիտեք, թե ինչպէս կարելի է ձեր կեանքի առատութիւնը հնազանդեցնել Յիսուսի իշխանութեան եւ շնորհքին: Ես կը ցանկամ սպառազինել ձեզ այս յայտնութեամբ, որ տանիք այն ձեր ազդեցութեան շրջանակին մէջ գտնուող մարդոց:

Դուք կրնաք միանալ այս շարժումին՝ փոխանցելով այն, ինչ որ սորվեցաք, ձեր ընկերներուն, ընտանիքին եւ շատ այլ մարդոց: Պօղոս առաքեալը մէկն էր, որ կը սովորեցնէր խումբ մը մարդոց փոքրիկ դպրոցին մէջ, եւ ատիկա բաւական էր, որ Աւետարանը ընդամէնը երկու տարուան մէջ հասնէր անոնց, որոնք կ'ապրէին Ասիայի մէջ: Այդ խումբի մարդիկ դարձան Աստուծոյ ներկայութիւնը կրողները (տե՛ս Գործք 19.1-10): Ի՞նչ կրնայ ընել Աստուած մեր միջոցով, եթէ մենք՝ Ձինք սիրողներս, միաբան ըլլանք:

Դուք կրնաք բաժնեկցիլ այս ուղերձով ձեր առօրեայ կեանքին մէջ: Դուք կրնաք օգտագործել այն՝ որպէս ուսումնասիրութեան առարկայ.


- Փոքր խումբերուն մէջ
- Եկեղեցիներուն մէջ
- Աշխատանքային ակումբներուն մէջ
- Ծառայողական դպրոցներուն մէջ
- Եւ շատ այլ վայրերու մէջ

Անկախ այն բանէն՝ դուք պիտի օգտագործէք մեր գաղափարները, թէ՛ ձերը, իմ խումբը պատրաստ է աջակցելու ձեզի: Մենք պիտի ստեղծենք լուծումներ յատուկ ձեզի համար՝ տրամադրելով զեղչեր, անվճար նիւթեր եւ աւելին: Բացի այս գիրքէն՝ մենք պատրաստած ենք վեց դասէ բաղկացած «Բարի՞, թե՞ Աստուած» դասընթացքը՝ թէ՛ ձայնագրուած, թէ՛ նկարահանուած տարբերակներով: Այս ամէնուն նպատակն է՝ օգնել ձեզի, որ այս ուղերձը ձեզ շրջապատող մարդոց հասցնէք:

Շնորհակալութիւն, որ կը համագործակցիք մեր հետ՝ Աստուծոյ Խօսքը ամէնուր տարածելու համար:

Ի սրտէ՛

Ճոն Պիվիր



ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ
ՆԻԹԵՐ ԵՒ ՔՆՆԱՐԿՄԱՆ
ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՇԱՐԱԹ

Կարդացէ՛ք գլուխներ 1-3-ը:

Այս շաբաթ դիտեցէ՛ք տեսանիւթ 1-ը:

ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Եւան որոշեց ուտել արգիլուած ծառի պտուղը, որովհետեւ այն *բարի, հաճելի* եւ *ցանկալի* կը թուար: Նկարագրեցէ՛ք այս յատկանիշները: Ի՞նչ կը նշանակէ՝ բարի թուալ: Իսկ՝ հաճելի՞: Իսկ՝ ցանկալի՞: Ինչպէ՞ս այս երեքէն ամէն մէկը կրնայ հեռացնել մեզ Աստուծոյ հնազանդելէն:
2. Ամբողջ պատմութիւնը Եդեմի պարտէզին մէջ կախուած էր միակ բանէն, որ Աստուած Իր իշխանութեամբ արգիլած էր: Ի՞նչ դասեր կրնանք քաղել այս պատմութենէն վստահութեան եւ մարդկային բնութեան մասին: Ինչպէ՞ս մենք կրնանք հակառակիլ Աստուծոյ որոշուած սահմանները խախտելու միտումներուն:
3. Գիրքերը, համացանցին մէջ հասանելի արձանագրուած ծայնագրութիւններն ու նկարահանուած նիւթերը, «պլոկ»-ները եւ շատ այլ միջոցներ, որոնք կը սորվեցնեն մեզ Աստուծոյ մասին, արժէքաւոր են: Այնուամենայնիւ, ձեր վերաբերմունքը այդ նիւթերու հանդէպ որեւէ կերպով փոխուե՞ցաւ, երբ հասկցաք տարբերութիւնը յայտնուած եւ փոխանցուած գիտելիքի միջեւ: Եթէ այո՝ ինչպէ՞ս:
4. Ոմանք կը համարեն, որ Աստուած *առնչութիւն ունի* բարիին հետ, այնինչ՝ միւսները կը համարեն Անոր բարիի *սկզբնապատճառը*: Պատմութիւնը հարուստ երիտասարդ իշխանի մասին՝ ցոյց կու տայ տարբերութիւնը այս երկու մօտեցումներու միջեւ: Ինչպէ՞ս կրնանք վստահ ըլլալ, որ ճիշդ պատկերացում ունինք բարիի մասին:
5. Դուք կը հաւատա՞ք Աստուածաշունչի ճշգրտութեան եւ հեղինակութեան: Կարդացէ՛ք Բ. Տիմոթէոս 3.16-ը եւս մէկ անգամ: Արդե՞օք կան տարածայնութիւններ ձեր համոզմունքներուն եւ այս խօսքի բովանդակութեան միջեւ: Քննարկեցէ՛ք ատոնք այն ամէնուն լոյսին տակ, ինչ որ սորվեցաք այս շաբթուան ընթացքին:

ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՆՅԻԹ

«Տէրը բարի է
 իւրաքանչիւրին հանդէպ»:
 — Սաղմոս 145.9, NLT

Պատմութիւնը այն մասին, թէ ինչպէս սատանան խորամանկութեամբ խաբեց Եւան, սթափեցնող է: Երբ Եւան խաբուեցաւ՝ հաւատալով, որ Աստուած ինչ որ բարի բան մը պահած էր իրմէ, ան չէր գտնուէր իր հիասթափութիւնները յաղթահարելու փուլին մէջ: Ան չէր սգար վերջերս ունեցած կորուստին պատճառով կամ չէր վերականգնուէր իր հանդէպ ցուցաբերուած անարդար վերաբերմունքէն: Ան կ'ապրէր կատարեալ միջավայրին մէջ, ուր չունէր ոչ մէկ կարիք եւ ամէն օր կը վայելէր շփումը Աստուծոյ հետ:

Աստուծոյ բարիի սկզբնաղբիւրը համարելու համար մենք պէտք է անխախտ համոզուածութիւն ունենանք, որ Աստուած բարի է: Նոյնիսկ Եդեմի պարտէզին մէջ սատանային յաջողեցաւ վիճարկել այս ճշմարտութիւնը: Այսօր մենք կը բախիւնք աւելի շատ գործոններու, որոնք կրնան վիճարկել մեր հաւատքը Աստուծոյ բարութեան հանդէպ:

Ի տարբերութիւն Եւային՝ դուք, անկասկած, վերապրած էք հիասթափութիւն, կորուստ, սխալ վերաբերմունք, շփոթութիւն, կարիք կամ ցաւ: Մենք կրնանք չնկատել այս բաներուն ազդեցութիւնը, քանի տակաւին մեր ցանկութիւնները չեն հակառակիւր Աստուծոյ հրահանգներուն: Բայց երբ որեւէ գայթակղութիւն կու գայ, մեր ներսը բոլոր կասկած յարուցող հարցերը, որոնք տակաւին պատասխանուած չեն, կը սկսին շնչալ մեր մտքերուն մէջ: Մենք կը մտածենք, որ թերեւս Աստուած ինչ որ բան կը պահէ մեզմէ, եւ կը սկսինք կասկածիլ, որ օգուտ պիտի ստանանք, եթէ վարուինք Անոր Խօսքով: Բայց յիշեցէ՛ք Առակաց 14.12-ը. «Կայ ճանապարհ, որ ճիշդ կը թուայ մարդուն, բայց ատոր վերջը՝ մահուան ճանապարհ է» (NKJV): Աստուած կամք ունի մեզի համար, եւ ոչինչ՝ անկէ դուրս, կը պարզելէ մեզի տեսական կեանք, ուրախութիւն, բաւականութիւն կամ օրհնութիւն անկախ այն բանէն, թէ որքան լաւ կը թուայ ատիկա:

Յաջորդ շաբթուան ընթացքին ես կը խրախուսեմ ձեզ անկեղծօրէն որոշել, թէ որքանով դուք կը հաւատաք Աստուծոյ բարութեան: Հարցու-

ցե՛ք Սուրբ Հոգիին, թէ արդեօ՞ք ձեր մէջ որեւէ յիշողութիւն կամ համոզմունք կայ, որուն պատճառով դուք կրնաք չվստահիլ կամ չհնազանդիլ Աստուծոյ: Երբ պարզե՛ք ատիկա, գտե՛ք խօսքեր Աստուածաշունչէն, որոնք կը յայտնուին Աստուծոյ ճշմարտութիւնը ձեր իրավիճակի մասին, եւ հռչակեցե՛ք ատոնք: Խոնարհաբար խնդրեցե՛ք Աստուծոյ Հոգիէն՝ նորոգել ձեր միտքը Իր Խօսքով: Անոր ճշմարտութիւնը դուրս պիտի բերէ ձեզ ազատութեան մէջ:

Մտորեցէ՛ք

«Գոհացե՛ք Տիրոջմէն, որովհետեւ Ան բարի է: Անոր հաւատարիմ սէրը կը մնայ յաւիտեան» (Սաղմոս 107.1, NLT):

Կիրառեցէ՛ք

Յետուն եւ Իսրայէլի ժողովուրդը պէտք է անցնէին Յորդանան գետը, որպէսզի մուտք գործէին Խոստման երկիր: Հունձքի ժամանակն էր, եւ գետը կը վարարէր իր ափերէն: Այնուամենայնիւ, Աստուած միջամտեց եւ կեցուց ջուրի հոսքը, եւ ամբողջ Իսրայէլը գետը անցաւ չոր գետնի վրայէն: Անկէ յետոյ Աստուած պատուիրեց Յետուին, որ ան յանձնարարէր ժողովուրդին՝ քարակոյտ կեցնել գետի ափին քով՝ յիշատակի համար, որպէսզի անոնք մշտապէս յիշէին, թէ ինչ ըրած էր Ան իրենց համար:

Յաճախ աւելի դիւրին է յիշել վատ բաները, որոնք տեղի ունեցած են ձեր կեանքին մէջ, քան այն բարի բաները, որոնք Աստուած ըրած է ձեզի համար: Այս շաբթուան ընթացքին սկսե՛ք «յուշարձաններ» կառուցել՝ նուիրուած այն բարի բաներուն, որոնք Աստուած կատարած է ձեր կեանքին մէջ: Նոթատեսր գնեցե՛ք, նշումներու բաժին բացե՛ք ձեր հեռաձայններուն մէջ, կարճ ձայնագրութիւններ ըրէ՛ք կամ գտէ՛ք այլ միջոցներ՝ յիշելու համար այն պահերը (փոքր, թէ մեծ), երբ Աստուծոյ հաւատարմութիւնը տեսած էք: Այս յիշողութիւնները պիտի դառնան վկայութիւններ, որոնք պիտի խրախուսեն ձեր սիրտը եւ պիտի բորբոքեն ձեր հաւատքը, երբ դժուարութիւնները կամ կասկածները փորձեն տարհամոզել ձեզ, որ Աստուած բարի է:

ԵՐԿՐՈՐԴ ՇԱՐԱԹ

Կարդացէ՛ք գլուխներ 4,5-ը:

Այս շարաթ դիտեցէ՛ք տեսանիւթ 2-ը:

ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Քննարկեցէ՛ք Յիսուսին դիրքը՝ որպէս Տէր, եւ Անոր կատարած աշխատանքը՝ որպէս Փրկիչ: Ի՞նչ տարբերութիւն կայ այս երկուքին միջեւ: Որքանո՞վ աստիկա կը համապատասխանէ այն ամէնուն, ինչ որ դուք լսած էք եւ ինչին հաւատացած էք: Արդեօ՞ք ինչ որ բան ձեր մտքին կամ վարքին մէջ պէտք է փոխուի, որպէսզի ձեր կեանքը համապատասխանէ Յիսուսի իշխանութեան մասին Աստուածաշնչեան ուսմունքին:
2. Եթէ այսօր բոլորս նոր երկիր տեղափոխուելու ըլլայինք, հոն մուտք գործելու համար պէտք է համաձայնէինք ապրիլ ըստ ատոր օրէնքներուն եւ չափանիշներուն: Արդեօ՞ք դուք այսպէս դիտարկած էք ձեր յարաբերութիւնները Աստուծոյ հետ: Ինչո՞ւ, կամ՝ ինչո՞ւ ոչ:
3. Պատկերացուցէ՛ք, որ կը գրուցէք ինչ որ մէկուն հետ, որ կը ցանկայ քրիստոնէայ դառնալ: Հիմնուելով այս շարաթուան ընթացքին սորվածին վրայ՝ ի՞նչ պիտի ըսէիք անոր:
4. Կարդացէ՛ք Մարկոս 8.34,35-ը: Մենք տեսանք, որ անձը ուրանալու ցանկութիւնը եւ անձը ուրանալը՝ նոյնը չեն: Բացատրեցէ՛ք, թէ ինչու մարդիկ Յիսուսին խօսքերը կատարելու փոխարէն կը սահմանափակուին միայն ցանկալով:
5. Կրկին կարդանք Մատթէոս 7.21-ը: Յիսուս կը թուարկէ չորս դրական յատկանիշ, որոնք կրնան ունենալ նոյնիսկ անոնք, որոնք ճշմարտապէս չեն հետեւիր Իրեն. հաւատք Իր ուսմունքներուն հանդէպ, զգացմունքային ներգրառուածութիւն, մասնակցութիւն Աւետարանի տարածման եւ ծառայութեան գործին: Մենք գիտենք, որ Աստուած չի ցանկար, որ ծառայենք՝ դատապարտութենէն կամ վախէն դրդուած: Ձեր կարծիքով՝ ինչպէ՞ս պէտք է արձագանգենք այս յայտնութեան:

ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՆՅԻԹ

«Բայց մենք Երկնքի
քաղաքացիներ ենք, ուր կ'ապրի
Տէր Յիսուս Քրիստոսը»:
— Փիլիպպեցիս 3.20, NLT

Նոր կտակարանի տեսանկյունէն, «Յիսուսը՝ Տէրն է» դաւանանքը, ըստ էութեան, կ'ամփոփէ քրիստոնէութիւնը ամբողջութեամբ: Ըստ Հռովմայեցիներու 10.9-ին՝ քրիստոնէական կեանքը կը սկսի, երբ մարդը կ'ընդունի Յիսուսին իշխանութիւնը: Այնուամենայնիւ, մեզմէ շատերուն համար «Յիսուսը՝ Տէրն է» արտայայտութիւնը այնքան ալ իմաստաւորուած չէ: Մենք կ'ըսենք, կ'երգենք եւ կ'աղօթենք՝ օգտագործելով այն, բայց չենք գիտակցիր այն փաստը, որ Յիսուսին *Տէր* անուանելը կը նշանակէ՝ ընդունիլ Անոր գերագոյն իշխանութիւնը մեր կեանքին մէջ:

Մինչեւ հաւատքի կեանք մուտք գործելը, մենք այս աշխարհի քաղաքացի էինք: Մենք պէտք չունէինք գիտնալու Աստուծոյ կամքը, ո՛չ ալ՝ փնտռելու այն մեզի համար: Սակայն հիմա մենք այլեւս այս աշխարհի քաղաքացիները չենք: Մենք Աստուծոյ Թագաւորութեան՝ Երկնքի Թագաւորութեան քաղաքացիներ ենք: Ամէն բան մեր կեանքին մէջ պէտք է համապատասխանէ Երկնքի Թագաւորութեան չափանիշներուն եւ արտացոլէ ասոր գերագոյն Իշխանի՝ Յիսուս Քրիստոսի բնութիւնը:

Ինչպիսի՞ն է Անոր բնութիւնը: Այս հարցումին պատասխանը գիտնալու համար կարդացէ՛ք Յիսուսին պատմութիւնը Գեթսեմանիի մէջ, որ գրուած է Սարկոս 14.32-42-ին մէջ: Գեթսեմանիէն անմիջապէս յետոյ Յիսուսը կը մատնուի եւ կը յանձնուի հռոմէացիներուն՝ խաչուելու համար: Յատուկ ուշադրութիւն դարձուցէ՛ք 36-րդ խօսքի վերջին, ուր Յիսուս կ'ըսէ Իր Հօրը. «Սակայն Ես կ'ուզեմ, որ կատարուի Քո՛ւ կամքը, ոչ թէ Ի՛մ» (NLT):

Խաչը բարձրանալը հնազանդութեան մեծ քայլ էր, բայց ճշմարտութիւնն այն է, որ չկան հնազանդութեան փոքր քայլեր: Երբ մենք կը պատուենք Յիսուսը՝ որպէս Տէր, մենք կը հնազանդինք Անոր կամքին, նոյնիսկ երբ փոխգիշումը շատ աննշան կը թուայ: Հնազանդելով՝ դուք անյարմար վիճակի մէջ կը յայտնուիք կամ կը վնասէք ձեր համբաւը: Մենք կ'ըսենք. «Ես կը ցանկամ Քու կամքը» ամէն իրավիճակի մէջ:

Դուք երբեք ընդունա՞ծ էք Յիսուսը այս պայմաններով: Թե՞ ձեր կեանքին մէջ տակաւին կայ այնպիսի բան (թերեւս՝ պարբերաբար

կրկնուող մեղք կամ եսակեղրոնություն), ինչ որ դուք մշտապես աւելի բարձր կը դասէք Աստուծոյ յանձնարարութիւններէն: Պէտք չկայ, որ դատապարտութիւն կամ ամօթ զգաք: Այնուամենայնիւ, ժամանակն է, որ ձգտիք ապրիլ նոր կեանքով: Աղօթքով եկէ՛ք Աստուծոյ առջեւ եւ խնդրեցէ՛ք Սուրբ Հոգիէն՝ օգնել ձեզի ճշմարտապէս պատուել Յիսուսը՝ որպէս Տէր: Երբ ժամանակ անցընէք Անոր ներկայութեան եւ Խօսքի մէջ, Ան պիտի սորվեցնէ ձեզի ապրիլ Երկնքի քաղաքացիի պէս:

Ստորեցէ՛ք

«Նետեցէ՛ք դուք ձեզ ամբողջ սրտով եւ ամբողջ ժամանակով... Աստուծոյ վարուելակերպի մէջ» (Հռովմայեցիս 6.13, MSG):

Կիրառեցէ՛ք

Աւելի ուշ այս գիրքին մէջ մենք պիտի խօսինք այն մասին, թէ ինչպէս Աստուած կը զօրացնէ մեզ հնազանդութեամբ ապրելու համար՝ առանց օրինապաշտութեան կամ ամօթի մէջ իյնալու: Բայց այս շաբաթ ես կը խրախուսեմ, որ անկեղծօրէն դուք ձեզի հարցնէք. «*Ես լիովին հնազանդեցուցա՞ծ եմ ես ինձի Յիսուսի իշխանութեան*»:

Բոլորս կը վրիպինք ինչ որ բնագաւառներու մէջ: Այնպէս որ, ես կ'առաջարկեմ ընել հետեւեալը. Գտէ՛ք ինչ որ մէկը, որուն կը սիրէք եւ կը վստահիք՝ ձեր կողակցին, մտերիմ ընկերոջ կամ եկեղեցական առաջնորդին, որ կը հաւատայ ձեր ուժերուն եւ կը ցանկայ լաւագոյնը ձեզի համար: Պատմեցէ՛ք անոր այն, ինչ որ սորվեցաք այս շաբաթ իշխանութեան սկզբունքի մասին եւ հարցուցէք, թէ արդեօ՞ք ան կը տեսնէ որեւէ փոխզիջում ձեր կեանքին մէջ, որ դուք տակաւին չէք շտկած:

Եթէ ան ըսելիք ունի, լսեցէ՛ք ուշադրութեամբ եւ բաց սրտով, իսկ յետոյ աղօթքով ներկայացուցէք անոր մեկնաբանութիւնները Աստուծոյ: Խնդրեցէ՛ք Անորմէ՛ յայտնել այն, ինչ որ ճշմարիտ էր այդ մարդուն խօսքերու մէջ: Խոնարհութիւնը՝ ազդեցիկ գէնք է խաբէութեան դէմ. այս պարզ կարգապահական քայլը կրնայ արտասովոր փոփոխութիւն առաջացնել ձեր մէջ:

ԵՐՐՈՐԴ ՇԱՐԱԹ

Կարդացէ՛ք գլուխներ 6,7-ը:

Այս շարաթ դիտեցէ՛ք տեսանիւթ 3-ը:

ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Ամէն լաւ նպատակ վտանգաւոր կը դառնայ, երբ այն կը փոխարինէ մեր սրտին մէջ Աստուծոյ ճանչնալու եւ պատուելու ցանկութիւնը: Խօսեցէ՛ք հետեւեալ նպատակներուն մասին: Ի՞նչ առումով ատոնք բարի են: Եւ հակառակը՝ ի՞նչ կերպով ատոնք կրնան խանգարել, որ հետեւինք Աստուծոյ, եթէ մենք դարձնենք ատոնք մեր առաջնահերթութիւնները:
 - Ֆինանսական ապահովութիւն
 - Համբաւ
 - Ազդեցութիւն
 - Առատածեռնութիւն
 - Մարդասիրական ջանքեր
 - Արդիւնաւէտ ծառայութիւն
2. Պատկերացուցէ՛ք, որ Մովսէսի տեղն էք, երբ Աստուած առաջարկեց ուղարկել Իսրայէլի ժողովուրդը Խոստման երկիր՝ առանց Իր ներկայութեան: Ձեր կարծիքով, այդ պահուն ի՞նչը պիտի օգնէր ձեզի կայացնել այն որոշումը, որ Մովսէս կայացուց:
3. Երբեմն մարդուն փոխյարաբերութիւնները Աստուծոյ հետ աւելի կը կեդրոնանան այն բանին վրայ, թէ Աստուած ինչ կրնայ տալ իրենց, քան՝ թէ ով է Ան: Թուարկեցէ՛ք այսպիսի վերաբերմունքի քանի մը նշան: Եթէ ձեր փոխյարաբերութիւններն Աստուծոյ հետ ցոյց կու տան այս նշանները, ինչպէ՞ս կրնաք շտկել ձեր ընթացքը:
4. Բաժնեկցեցէ՛ք ձեր կարծիքով այն մասին, թէ ինչ կը նշանակէ արդիւնաւէտ կերպով հասնիլ այս աշխարհին՝ առանց այս աշխարհին ընկերը ըլլալու:
5. Օրինապաշտութիւնը՝ ընդամէնը աշխարհիկութեան մէկ ուրիշ տեսակ է: Ձեր կարծիքով, ինչպէ՞ս կրնանք պաշտպանել մեր ընկերութիւնը Աստուծոյ հետ եւ չունենանք կրօնական մտածելակերպ:

ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՆՅԻԹ

«...Քու ներկայութեան մէջ
 ուրախութեան լիութիւն կայ...»:
 — Սաղմոս 16.11, ESV

Հաւատքի ամենամեծ փորձութիւններէն մէկը, որ, հիմնականին, անվնաս կը թուայ՝ ճամբան շրջանցելը կամ կարճ ուղիով երթալն է:

Մովսէսին տրամադրուեցաւ անապատին մէջ իր ճամբան շրջանցելու հնարաւորութիւն: Ան անցած էր Եգիպտոսէն մինչեւ Սինա լեռը՝ տրտնջացող եւ ապստամբ ժողովուրդի հետ, եւ Խոստման երկիրը մուտք գործելու հեռանկարը պէտք է որ շատ գրաւիչ ըլլար անոր համար: Այնուամենայնիւ, մի՞թէ Մովսէսը պիտի համաձայնէր խոստումին՝ ձգելով Աստուծոյ ներկայութիւնը:

Հազարաւոր տարիներ յետոյ Յիսուսը նոյնպէս Իր ճամբան շրջանցելու հնարաւորութեան հանդիպեցաւ անապատին մէջ: Երբ Յիսուսը նոր պէտք է սկսէր Իր ծառայութիւնը, սատանան հնարաւորութիւն տուաւ Անոր՝ շրջանցելու Իր առջեւ դրուած դժվարութիւնը եւ իշխանութիւն ստանալու բոլոր ազգերու վրայ: Յիսուսը պէտք է ընդամէնը երկրպագէր անոր: Մի՞թէ Յիսուսը փոխզիջման պիտի երթար եւ դիւրութեամբ պիտի ստանար այն, ինչ որ Աստուած պիտի տար չարչարանքներու միջոցով:

Այն, որ սատանան փորձեց իր մարտավարութիւնը Աստուծոյ Որդիին հետ, շատ բան կը խօսուի ատոր արդիւնաւէտութեան մասին: Աւելի ուշ մեր ուսումնասիրութեան մէջ կրկին պիտի անդրադառնանք այս պատմութեան, իսկ այժմ կարելոր է նշել հետեւեալը. Յիսուսը միակը չէր, Որ յաջողութեամբ դիմակայեց սատանային խորամանկ հնարին: Անապատին մէջ Աստուծոյ հետ մնալը Մովսէսը համեմատեց առանց Անոր Խոստման երկիր մտնելու հետ եւ ընտրեց անապատը: Ինչո՞ւ ան այդպէս վարուեցաւ: Պատճառը այն է, որ ան գիտէր, թէ ինչէն պիտի զրկուէր:

Ես կը ցանկամ, որ դուք կարենաք սրտանց «այր՛» ըսել հետեւեալ հարցումին. «Արդեօ՞ք Աստուծոյ ներկայութիւնը՝ իմ վերջնական նպատակն է»: Բայց որպէսզի ձեր պատասխանը մտաւոր վարժութենէն ըլլայ աւելին, դուք նախ՝ պէտք է կարենաք պատասխանել մէկ ուրիշ հարցումի. դուք գիտէ՞ք, թէ ինչ կը նշանակէ՝ ըլլալ Աստուծոյ ներկայութեան մէջ:

Ի՛նչ ընկեր, ես ցանկամ, որ դուք սիրահարուիք Աստուծոյ ներկայութեանը՝ ինչպէս Մովսէսը: Կը ցանկամ, որ դուք այն աստիճան փափաքիք մտերիմ ըլլալ Անոր հետ, որ ոչ մէկ շրջանցում կամ կարճ ուղի հրապուրէ՛ ձեզ: Այսպիսի ձգտումը կ'առաջանայ միայն՝ երբ մարդը անձամբ կը վերապրի Աստուծոյ ներկայութիւնը:

Յակոբոսը կը գրէ մեզ. «Մօտեցէ՛ք Աստուծոյ, եւ Ան պիտի մօտենայ ձեզի» (4.8, ESV): Մօտենալ կը նշանակէ՝ ժամանակ յատկացնել աղօթելու, երկրպագելու եւ Աստուծոյ խօսքը կարդալու համար՝ համարելով ատիկա ոչ թէ յանձնարարուած առաջադրանք, այլ՝ յարաբերութիւններ կառուցելու միջոց: Փնտռելով Աստուծոյ այսօր՝ դուք ճիշդ որոշումներ պիտի կայացնէք կեանքի խաչմերուկներուն, որոնց տակաւին պիտի հանդիպիք:

Մտորեցէ՛ք

«Եթէ փնտռէք Ձիս ամբողջ սրտով, դուք պիտի գտնէք Ձիս» (Երեմեայ 29.13, NLT):

Կիրառեցէ՛ք

Ամէն փոխարաբերութեան մէջ երկու կողմերէն իւրաքանչիւրը պէտք է ինչ որ բան առաջարկէ միւսին, օրինակ՝ խրախուսանք, խորհուրդ եւ գործնական աջակցութիւն: Բայց առողջ փոխարաբերութիւններու նպատակը՝ դիմացինէն ինչ որ բան ստանալը չէ. նպատակը՝ յատուկ դիմացինն է: Երբեմն մենք կը մոռանանք ասիկա, երբ խօսքը Աստուծոյ մասին է: Քանի որ Աստուած այն ամէնուն աղբիւրն է, ինչին որ պէտքը ունինք, մենք կրնանք այն աստիճան կեդրոնանալ Անոր խնդրանքներ ներկայացնելու վրայ, որ մոռնանք Ձինք ճանչնալուն մասին:

Անշուշտ, Աստուած կը ցանկայ, որ մենք ներկայացնենք մեր խնդրանքները: Բայց եթէ դուք լրջօրէն տրամադրուած էք Աստուծոյ ներկայութիւնը ձեր բարձրագոյն նպատակը դարձնելու հարցին մէջ, փորձեցէ՛ք կեդրոնանալ Անոր վրայ այս շաբթուան ընթացքին, երբ ժամանակ տրամադրէք Անոր: Մտորեցէ՛ք Աստուծոյ բնաւորութեան շուրջ: Գիտցէ՛ք, թէ ինչը կ'ուրախացնէ Ձինք: Վերցուցէ՛ք պատմութիւն մը Սուրբ Գիրքէն եւ մտորեցէ՛ք, թէ ինչպէս Ան կը յայտնուի այդ խօսքերուն մէջ: Ես կ'աղօթեմ, որ այդ ժամանակուան ընթացքին դուք այնպիսի բաներ բացայայտէք, որոնք պիտի դրդեն ձեզ աւելի խորապէս սիրահարուիլ ձեր Արարչին:

ՉՈՐՐՈՐԴ ՇԱՐԱԹ

Կարդացէ՛ք գլուխներ 8,9-ը:

Այս շարաթ դիտեցէ՛ք տեսանիւթ 4-ը:

ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Յաճախ մարդիկ կը կարծեն, թէ իրենց միտքը ուղղուած է Աստուծոյ ճանչնալուն, սակայն կը պարզեն, որ այն կը շեղի այլ բանով: Ինչպէ՞ս մարդը կրնայ զանազանել, թէ ինչին ուղղուած է իր միտքը իրականութեան մէջ:
2. Շատ ժամանակակէն մշակոյթներուն մէջ մարդիկ ծայրայեղութիւններու մէջ կը յայտնուին. Անոնք կը ձգտին նմանիլ հանրայայտ մարդոց, կը ցանկան վարուել անոնց պէս եւ նոյնիսկ կը փորձեն հանդիպիլ անոնց, թէեւ չեն ալ ճանչնար: Ի հակադրութիւն ատոր՝ Աստուած խոստացաւ, որ Ջինք փնտռողները պիտի գտնեն Ջինք: Ձեր կարծիքով, ինչո՞ւ մարդիկ յաճախ կը հակառակին իրենց կեանքի փոփոխութիւններուն, որոնք պիտի օգնէին անոնց ճանչնալ զԱստուած, բայց պատրաստ են շրջադարձային քայլերու դիմելու՝ այլ մարդ ճանչնալու համար:
3. Ի՞նչ կարելի է ընել՝ հաւաստիանալու համար, որ դուք կը փնտռէք Աստուծոյ ներկայութիւնը, ոչ թէ պարզապէս կը ցանկաք լաւ մթնոլորտ ստեղծել: Առաջարկեցէ՛ք գաղափարներ թէ՛ անհատական, թէ՛ խմբային միջավայրի համար:
4. Շատ կարելոր է մտածել սրբութեան մասին՝ որպէս Աստուծոյ հետ փոխյարաբերութիւններ կառուցելու միջոց, որովհետեւ սրբութեան վերջնական նպատակը՝ զԱստուած ճանչնալն է: Փորձեցէ՛ք գործադրել այս սկզբունքը՝ ուսումնասիրելով մեզ ծանօթ Տասը պատուիրանները՝ Ելից 20.1-17-ին մէջ փոխյարաբերութիւններ կառուցելու տեսանկիւնէն: Այդ պատուիրաններէն ամէն մէկը ի՞նչ կ'ըսէ ձեզի Աստուծոյ մասին:
5. Թոյլ տուէ՛ք այնպիսի բան առաջարկել ձեզի, ինչը անհնար է կատարել. փորձեցէ՛ք մտածել սրբութեան մասին Աստուծոյ տեսանկիւնէն (այո՛, ասիկա անհնար է, բայց փորձեցէ՛ք ընել ասիկա՝ որքանով կրնաք): Գիտակցելով, թէ ո՛վ է Աստուած եւ ի՞նչ կը ցանկայ մեզի համար՝ պատասխանեցէ՛ք, թէ ինչո՞ւ կարելոր է, որ Անոր ժողովուրդը սուրբ ըլլայ թէ՛ իր դիրքով, թէ՛ վարքով:

ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՆՅԻԹ

«...Ուրեմն, ըրէ՛ք այնպիսի բաներ,
որոնք կը տանին սրբութեան...»:
— Հռովմայեցիս 6.22, NLT

Ես կը սպասէի մինչեւ այս դասը, որ խօսէի սրբութեան մասին: Ես կ'ուզէի վստահ ըլլալ, թէ դուք կը հասկնաք, որ սրբութիւնը որեւէ կապ չունի վերահսկողութեան, մեղքի զգացումի կամ մարդկային չափանիշներուն համապատասխանելուն հետ: Սրբութիւնը՝ փոխարաբերութիւններ կառուցելու միջոց է:

Պատկերացուցէ՛ք, որ ձեր ընտանիքի անդամներէն մէկը, որուն դուք սրտանց կը սիրէք, մշտապէս անյարգալից վարք կը ցուցաբերէ ձեր հանդէպ, կոպտօրէն կը վարուի ձեր հետ եւ, ընդհանրապէս, վստահելի չէ: Թէեւ դուք կը սիրէք զինք, կը կարծեմ՝ ձեզի համար դժուար պիտի ըլլայ անմիջական կերպով հաղորդակցիլ անոր հետ: Եթէ այդ մարդը պատրաստ չըլլայ փոխուիլ, դուք ստիպուած կ'ըլլաք ողջամիտ սահմանափակումներ դնել ձեր միջեւ: Հաւանաբար, ատկէ մէկը պիտի ըլլայ այդ մարդուն ոչ ամէն օր հանդիպիլը:

Ինչպէս տեսանք անցեալ շաբաթ, Աստուած այն Անձնաւորութիւնն է, Որուն ներկայութեան մէջ մենք կը ձգտինք: Բայց Աստուած կատարելապէս Սուրբ է: Եթէ մենք հաղորդակցինք վատ վարք ունեցող մարդոց հետ, ատիկա կրնայ տհաճութիւն պատճառել ձեզի կամ նոյնիսկ՝ բացասաբար ազդել մեր վրայ: Այնուամենայնիւ, ոչ ոք կրնայ Աստուծոյ ներկայութեան մէջ ըլլալ՝ առանց սուրբ ըլլալու: Ահա թէ ինչու սուրբ ապրելը այդքան կարեւոր է:

Կրկին կարդացէք Եբրայեցիս 12.14-ը. «Հետեւեցէ՛ք... սրբութեան, որ առանց ասոր մէկը պիտի չտեսնէ Տէրը»: «Հետեւիլ» կամ «ձգտիլ» բառը բնագիրին մէջ կը նշանակէ՝ «ինչ որ բան ընել՝ մեծ ջանքով եւ յստակ նպատակով»²⁵: Ուշադրութիւն դարձուցէք, որ հետեւելը երկու առանձնայատկութիւն ունի՝ մեծ ջանքը եւ յստակ նպատակը: Մեր նպատակն է՝ ըլլալ Աստուծոյ ներկայութեան մէջ: Ուրեմն, եկէք ջանանք ապրիլ սուրբ կեանքով:

Սրբութիւնը որեւէ կապ չունի օրինապաշտութեան կամ անկեանք կրօնական կանոններու հետ: Կը նշանակէ՝ սրբութեան ձգտելու համար իւրաքանչիւրէս պիտի պահանջուի հետեւեալը.

Ա. Ըլլալ Աստուծոյ Խօսքի աշակերտը. Գոյութիւն ունին շատ բաներ, որոնք մարդկային դատողութիւնը կամ մեր հասարակութիւնը բարի կ'անուանեն, իսկ Աստուած՝ ոչ: Նմանապէս, կան որոշակի սահմանափակումներ, որոնք հոգեւոր կը թուան, բայց աստուծոյ չկան Աստուածաշունչին մէջ, այլ պարտադրուած են միայն մեր մշակութիւն կամ ասանդոյթներու կողմէն: Մեր չափանիշը՝ Աստուածաշունչն է: Մենք պէտք է ուսումնասիրենք Աստուածաշունչը, որպէսզի հասկնանք, թէ ինչպէս Աստուած կը սահմանէ սուրբ կեանքը:

Բ. Ուշադիր ըլլալ Սուրբ Հոգիին. Աստուած երբեք չ'առաջնորդեր ձեզ այնպիսի բանի, ինչ որ հակառակ է Իր Խօսքին: Ան ձեզ շատ աւելի լաւ գիտէ, քան որեւէ մարդ: Ան գիտէ այն բնագաւառները, որոնց մէջ դուք յատկապէս խոցելի էք գայթակղութեան համար: Այնպէս որ, Ան կրնայ պարզօրէն ցոյց տալ ձեզի, թէ ինչ կը ցանկաք, որ ընէք կամ չընէք:

Այս երկու աղբիւրներէն ունեցած հրահանգները պիտի օգնեն ձեզի հաստատ մնալ ձեր ճանապարհին:

Ստորեցէ՛ք

«...Եկէ՛ք ազատինք ամէն ծանրութենէ, որ կը դանդաղեցնէ մեր ընթացքը, յատկապէս՝ այն մեղքէն, որն այնքա՛ն դիւրաբար ծուղակի մէջ կը ձգէ մեզ: Եւ եկէ՛ք համբերութեամբ վազենք այն ընթացքը, որ Աստուած դրած է մեր առջեւ» (Եբրայեցիս 12.1, NLT):

Կիրառեցէ՛ք

Պօղոսը պատուիրեց Կորնթոսի եկեղեցիին. «Հետեւեցէ՛ք իմ օրինակին, ինչպէս ես կը հետեւիմ Քրիստոսի օրինակին» (Ա. Կորնթացիս 11.1, NIV): Ձեր կեանքին մէջ կա՞յ այնպիսի մարդ, որ շատ լաւ գիտէ Աստուծոյ Խօսքը եւ կը լսէ Անոր Հոգիին ձայնը: Ժամանակ յատկացուցէ՛ք այս շաբաթ եւ զինք զրոյցի հրաւիրեցէ՛ք: Հարցե՛ր տուէ՛ք այն մասին, թէ ինչպէս ան կը հաղորդակցի Աստուծոյ հետ, ինչ կերպով սկսած է հասկնալ Աստուածաշունչը եւ ճանչնալ Աստուծոյ ձայնը: Հաւանաբար, այդ մարդու իմաստութիւնը ձեռք բերուած է երկար տարիներու փորձառութեան վերջաւորութեան. այնպէս որ, ուշադիր լսեցէ՛ք:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱՐԱԹ

Կարդացէ՛ք գլուխներ 10-12-ը:

Այս շարաթ դիտեցէ՛ք տեսանիւթ 5-ը:

ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Համաձայն Աստուածաշունչի՝ թե՛ Աստուծոյ, թե՛ Անոր Եկեղեցւոյ զլխաւոր առանձնայատկութիւնը՝ սրբութիւնն է: Մինչեւ այս մասին գիտնալը, ի՞նչն էր, ձեր կարծիքով, Աստուծոյ զլխաւոր առանձնայատկութիւնը: Իսկ Անոր Եկեղեցւո՞յ: Կարելի՞ է ըսել, որ այս շաբթուան նիւթը ձեր մէջ բացայայտեց սխալ կարծիքներ եւ ոգեշնչեց նոր գաղափարներ:
2. Շնորհքի մասին ոչ լիարժէք կերպով քարոզելը ընդամէնը ծածկոց է մեր մեղքերուն համար: Համաձայն Նոր կտակարանին՝ շնորհքը ե՛ւ կը ներէ մեր մեղքերը, ե՛ւ կը զօրացնէ մեզ՝ սուրբ ապրելու համար: Ոմանց համար աւելի դիւրին է ընդունիլ այս արտայայտութեան առաջին մասը, քան երկրորդը: Բացատրեցէ՛ք, թէ ինչու Նոր կտակարանի ամբողջական ուղերձը շնորհքի մասին է «աւելի լաւ լուր»:
3. Կարդացէ՛ք Առակաց 27.6-ը: Ինչպէ՞ս այս խօսքը կը հակադրուի այն գաղափարին հետ, որ աւելի լաւ է՝ չքարոզել կամ չսորվեցնել որեւէ բացասական բան:
4. Օգտակար ուղերձը պայման չէ, որ ցանկալի ըլլայ: Իրականութեան մէջ, յաճախ հանդիպումը ճշմարտութեան հետ սկիզբը ցաւ կամ անյարմարութիւն կը պատճառէ, բայց հետագային տեսական ազատութիւն եւ փոփոխութիւններ կը պարզել մարդուն: Պատմեցէ՛ք որեւէ փորձառութեան օրինակ, որն օգտակար է, բայց ցանկալի չէ: Համաձայն ձեր օրինակին՝ ինչպէ՞ս մենք պէտք է վարուինք Աստուծոյ խօսքին հետ:
5. Խօսելով աշխարհը փոխելու մասին՝ մարդիկ յաճախ նկատի ունին օրէնսդրական բարեփոխումներ կամ հասարակական շարժումներ: Մենք նշեցինք, որ անձնական սրբութիւնը ազդեցիկ գէնք է՝ հասարակութեան մէջ փոփոխութիւններ առաջացնելու համար: Կրնա՞ք բացատրել, թէ ինչու:

ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՆՅԻԹ

«...Ուժե՛ղ եղիր այն շնորհքով, որ
Աստուած կու տայ քեզի Քրիստոս Յիսուսին մէջ»:
— Բ. Տիմոթէոս 2.1, NLT

Այսօր կարելի է շնորհքի մասին երկու տեսակի ուղերձ լսել: Ատոնց միջեւ յստակ տարանջատում կայ, որ կարելի է ամփոփել պարզ հարցով մը. «Դուք կը ցանկաք լա՞ւ զգալ ձեզ, թե՞ լաւը ըլլալ» (եւ «*լաւը ըլլալ*» ըսելով՝ ես նկատի ունիմ՝ *ըլլալ Աստուծոյնը*):

Այնպէս չէ, որ ընդունելով Նոր կտակարանի ուղերձը՝ մեր կեանքը թշուառ պիտի դառնայ: Ընդհակառակը՝ Յիսուս այսպէս նկարագրեց Իր առաքելութիւնը մարդկութեան համար. «Իմ նպատակն է՝ տալ անոնց հարուստ եւ լիարժէք կեանք» (Յովհաննէս 10.10, NLT): Քրիստոսի մէջ միշտ մնայուն ուրախութիւն կայ: Իրական շնորհքը ընտրելը աւելի շուտ կը նշանակէ՝ համապատասխանեցնել մեր առաջնահերթութիւնները Երկինքի հետ: Աստուած երբեք չի կարելորէր մեր յարմարաւէտութիւնը այն բանէն, ինչը բարի է մեզի համար: Իսկ մե՞նք:

Մենք մեզի կ'որոշենք, թէ շնորհքի ո՛ր ուղերձին հաւատանք: Մենք կրնանք կարդալ Աստուածաշունչը եւ միայն ընդունիլ այն հատուածները, որոնք ճիշդ կը համարենք: Մենք կրնանք գոցուիլ դժուարին ուղերձներու համար եւ լսել քարոզներ միայն մեր ցանկալի թեմաներով: Ինչպէս մեր օրինակի տղամարդը, որ երկու բժիշկներու քով գնաց՝ մենք կրնանք ապրիլ այն փստանշանով, որն աւելի հաճելի է մեզի:

Եթէ ընտրենք այս ճանապարհը, մենք լաւ պիտի զգանք մենք մեզի: Այնուամենայնիւ, եկէ՛ք ականջ դնենք Յիսուսի խօսքերուն. «Եւ ո՞րն է քու օգուտը, եթէ շահիս ամբողջ աշխարհը, բայց կորսնցնես քու անձը» (Մարկոս 8.36, NLT): Այնպէս որ, վերադառնալով մեր հարցին՝ դուք կը ցանկանաք լա՞ւ զգալ դուք ձեզի, թե՞ լաւը ըլլալ:

Յոյսով եմ՝ դուք կը սկսիք հասկնալ, որ շնորհքի զօրացման մասին ուղերձը անասելիօրէն բարի լուր է: Եթէ մենք հաւատանք, որ շնորհքը պարզապէս կը ծածկէ մեր սխալները, մենք պիտի սայթաքինք ամբողջ կեանքին մէջ, տկարացած պիտի ըլլանք շարունակ կրկնուող մեղքի պատճառով եւ վարակուած պիտի ըլլանք վախով ու սուտերով: Այնուամենայնիւ, եթէ ընդունինք զօրացնող շնորհքը, մենք աւելի պիտի

նմանինք Յիսուսին. մենք պիտի ունենանք ազատություն եւ վստահություն, լեցուած պիտի ըլլանք գթասրտութեամբ եւ զօրութեամբ եւ պիտի վայելենք Աստուծոյ օրհնութիւնը: Աստուծոյ շնորհքը՝ մեզ զսպող ծանրութիւն չէ, ինչպէս, որ կ'ըսէ Յովհաննէս առաքեալը.

«Աստուծոյ սիրելը կը նշանակէ՝ պահել Անոր պատուիրանները, եւ *Անոր պատուիրանները ծանր չեն*: Որովհետեւ ամէն Աստուծոյ զաւակ պարտութեան կը մատնէ այս չար աշխարհը, եւ *մենք կը ստանանք այս յաղթանակը մեր հաւատքով*» (Ա. Յովհաննէս 5.3,4, NLT):

Եթէ Աստուած իսկապէս բարի է, եւ եթէ Ան իրականութեան մէջ կ'ուզէ լաւագոյնը մեզի համար, պէտք չկայ, որ կասկածինք. Անոր պատուիրանները մեր լաւագոյն ճանապարհն են: Եւ քանի որ Անոր շնորհքը կը գործէ մեր մէջ, Անոր պատուիրանները ծանր չեն ըլլար: Որքա՛ն զարմանալի է:

Ստորեցէք

«Իմ շնորհքը՝ այն ամէնն է, ինչ որ պէտք է քեզի: Իմ զօրութիւնը լաւագոյնս կը գործէ տկարութեան մէջ» (Բ. Կորնթացիս 12.9 NLT):

Կիրառեցէք

Ղուք պատրաստ էք ձգել այն, ինչ որ կրնայ աւելի դիւրին կամ յարմարաւէտ թուալ, որպէսզի վայելէք Աստուծոյ պարգեւած կեանքը: Եթէ համաձայն ք, ըսէ՛ք ատիկա Աստուծոյ՝ աղօթքով.

Հայր, շնորհակալութիւն Քու զօրացնող շնորհքի համար: Ես կը ցանկամ ստանալ Քու շնորհքը՝ ոչ միայն որպէս իմ մեղքերու ներում, այլեւ՝ որպէս Քու զօրութիւնը, որ կարողութիւն կու տայ ինձի ընելու այն, ինչ որ վեր է իմ ուժերէն: Ես կը հաւատամ, որ Ղուս բարի ես, եւ այդ պատճառով գիտեմ՝ Քու բոլոր պատուիրանները իմ օգտին համար են: Ես կ'ուզեմ փառք բերել Քեզի, Աստուած: Վերափոխէ՛ զիս՝ դարձնելով աւելի ու աւելի Քեզի նման: Յիսուսի անունով. ամէ՛ն:

ՎԵՑԵՐՈՐԴ ՇԱՐԱԹ

Կարդացէ՛ք գլուխներ 13-16-ը:

Այս շարաթ դիտեցէ՛ք տեսանիւթ 6-ը:

ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Ինչպիսի՞ գործօններ կը դրդեն մարդոց՝ ակնկալել Աստուծո՞ւն աւելի քիչ, քան Ան կրնայ ընել: Եթէ երբեք բախած էք այսպիսի գործօններու, ինչպէ՞ս յաղթահարած էք:
2. Ստածեցէ՛ք միլիառատիրոջ եւ երեք գործարարներու օրինակի մասին: Ձեր կարծիքով, ինչո՞ւ երրորդ գործարարի տեսիլքը շատ աւելի մեծ էր, քան անոր ընկերներունը: Պատկերացուցէ՛ք, թէ ինչպիսի վերաբերմունք ունէր ան իր անցեալին եւ ապագային հանդէպ: Պատկերացուցէ՛ք, թէ ինչպէս ան հանդիպումին կը պատրաստուէր այդ ներդրողին հետ: Ի՞նչ ըրած էր ան՝ մեծ սպասում ունենալու համար, եւ ի՞նչ կրնաք դուք ընել, որ մեծ սպասում ունենաք Աստուծո՞ւն ձեր կեանքին համար:
3. Համաձայն այն ամէնուն, ինչ որ դուք սորվեցաք այս դասընթացէն՝ բացատրեցէ՛ք, թէ ինչո՞վ կը տարբերին երկրային միտք ունեցող մարդու եւ Աստուծոյ հասուն զաւակի զանազանելու կարողութիւնները: Ինչպիսի՞ եզակի միջոցներ կ'օգնեն քրիստոնէային ճշմարտապէս իրավիճակները զանազանելու:
4. Ինչպէ՞ս Աստուծոյ երկիւղը կը փոխէ մեր վերաբերմունքը, երբ մենք դժվարութիւններ կը կրենք: Ի՞նչ կ'ըսեն Տիրոջ երկիւղը ունեցող մարդիկ, երբ կը գտնուին ճնշման տակ: Ինչպէ՞ս անոնք կը վարուին:
5. Քանի որ մենք կ'աւարտենք այս դասընթացքը, ամփոփեցէ՛ք ձեր տպաւորութիւնները՝ թէ՛ անհատապէս, թէ՛ որպէս խումբ: Ի՞նչ սովորութիւններ, սկզբունքներ եւ արժէքներ դուք պիտի ընդգրկէք ձեր առօրեային մէջ այս դասընթացքէն յետոյ: Ինչպէ՞ս ատիկա պիտի արտայայտուի գործնականին մէջ: Ղարծուցէ՛ք ձեր քայլերը աւելի գործնական եւ յստակ, որ կարենաք զօրութեամբ առաջ շարժուիլ:

ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՆՅԻԹ

«Հեզութեան եւ Աստուծոյ երկիւղի
արդիւնքն է առատութիւնը եւ պատիւը եւ
բաւականութիւն պատճառող կեանքը»:
— Առակաց 22.4, MSG

Այս դասընթացքի շրջանակներուն մէջ մենք ուսումնասիրեցինք շարք մը ծանրակշիռ թեմաներ, որոնց կարգին էին Յիսուսի աստուածութիւնը, սրբութիւնը եւ շնորհքի իրական բնոյթը: Դուք պատասխանեցիք դժուար հարցումներուն ձեր կեանքին եւ պատկերացումներուն մասին: Այժմ ես կ'ուզեմ ձեր ուշադրութիւնը ուղղել այն կեանքին, որ դուք կրնաք ապրիլ:

Կարդացէ՛ք Եփեսացիս 3.20-ը՝ «Մեսիճ» Աստուածաշունչին մէջ.

Գիտէ՞ք, Աստուած կրնայ ընել ամէն ինչ՝ շատ աւելի, քան կրնաք երբեք պատկերացնել, կամ ենթադրել, կամ խնդրել ձեր ամենավայրի երազանքներուն մէջ: Ան կ'ընէ աստիկա ոչ թէ մեր հետ կոպիտ ձեւով վարուելով, այլ մեր մէջ գործելով. Անոր Հոգին խորապէս եւ մեղմօրէն մեր մէջ է:

Աստուած ոչինչ խնայեց՝ մեզ Իրենինը դարձնելու համար: Ան գնեց մեզ ամենաբարձր գինով, երբ տուաւ Իր Որդիին կեանքը՝ որպէս փրկագին մեզի համար: Միտքը այն մասին, որ Ան յանկարծ ժլատ դարձած է, անհիմն է:

Աստուած տուած է մեզ անհրաժեշտ ամէն ինչ, որ վայելենք լաւագոյնը, որ Ան պատրաստած է մեզի համար՝ Անոր Խօսքի ճշմարտութիւնը, Անոր Հոգիի առաջնորդութիւնը եւ Անոր շնորհքի զօրութիւնը: Այնուամենայնիւ, Եփեսացիներու նամակի հատուածը ցոյց կու տայ, որ Աստուած չի ստիպեր մեզի համագործակցիլ Իր նպատակներուն հետ: Ան կ'առաջարկէ մեզ ընտրել հաւատքը, զանազանութիւնը եւ խոնարհութիւնը, քանի որ ատոնց շնորհիւ մենք պիտի բացայայտենք այնպիսի կեանք, որ կը գերազանցէ մեր ամենավայրի երազանքները:

Այդ պարագային, Ի՞նչը ետ կը պահէ ձեզի: Ի՞նչը կը սահմանափակէ ձեր երեւակայութիւնը: Ի՞նչը կը դրդէ ձեզ փոքրիկ գումարներ խնդրել, երբ ձեր տրամադրութեան տակ կրնան անսահմանափակ միջոցներ ըլլալ:

Ժամանակն է, որ երազէք Աստուծոյ հետ: Ո՞ր բնագաւառին մէջ դուք կը սպասէք եւ կը հաւատաք պզտիկ բաներու: Ո՞ր խոստումները կը վախճնաք ընդունելէ: Ինչո՞ւ: Թոյլ տուէ՞ք, որ Աստուծոյ բարութիւնը ոգեշնչէ ձեզ: Սկսեցէ՛ք խնդրել այնպիսի բաներ, որոնց իրականացման գրեթէ չէք կարենար հաւատալ: Ան խոստացած է տալ նոյնիսկ աւելի՛ն:

Մտորեցէ՛ք

«Ոչ ոք երբեք այսպիսի բան չէ տեսած կամ չէ լսած, եւ նոյնիսկ չէ պատկերացուցած ինչ որ բան՝ այն բանին նման, որ Աստուած պատրաստած է Ձինք սիրողներուն համար» (Ա. Կորնթացիս 2.9, MSG):

Կիրառեցէ՛ք

Մենք խօսեցանք երազանքներու եւ սահմանափակումներու մասին. այժմ եկէ՛ք աւելի յստակ դառնանք: Այս շաբաթ որոշ ժամանակ յատկացուցէ՛ք երազելու համար: Որպէս սկիզբ՝ վերցուցէ՛ք թուրթի թերթ (կամ ատոր թուային համարժէքը) եւ թուարկեցէ՛ք ձեր կեանքի գլխաւոր բնագաւառները: Այս կէտերը, հաւանաբար, պիտի ըլլան ձեր ցուցակին մէջ.

- Փոխյարաբերութիւններ Աստուծոյ հետ
- Այլ փոխյարաբերութիւններ
- Անուսնութիւն եւ ընտանիք (ներկայ կամ ապագայ)
- Դրամներ
- Աշխատանքային գործունէութիւն
- Տեղեկան եկեղեցի եւ ծառայութիւն
- Յատուկ պարգեւներ կամ ցանկութիւններ


Ամէն վերնագիրի տակ գրեցէ՛ք ձեր սպասելիքները տուեալ բնագաւառի համար: Գրի՛ առէ՛ք այն, ինչ որ կայ ձեր սրտին մէջ եւ մտքին մէջ ձեր ապագային վերաբերեալ: Ի՞նչ կ'ակնկալէք Աստուծոյ հետ փոխյարաբերութիւններէն: Ինչպէ՞ս լաւագոյնս կը պատկերացնէ՛ք ձեր ապագան դրամական բնագաւառին մէջ: Իսկ ձեր ընտանիքի ապագա՞ն:

Այժմ աղօթքով աչքէ անցուցէ՛ք ձեր ցուցակը ամբողջութեամբ: Խնդրեցէ՛ք Սուրբ Հոգիէն յայտնել Իր կարծիքը եւ խոստումները: Ո՞ր տեղը վախը նեղուցած է ձեր մտահորիզոնը: Ի՞նչ չափով անցեալի վերքերն ու հիասթափութիւնները սահմանափակած են ձեր երեւակայութիւնը: Ի՞նչը, ձեր կարծիքով, կարելի չէ Աստուծոյ համար, եւ ի՞նչ կարծիք ունի Ան այդ մասին: Յիշեցէ՛ք՝ ձեր կարողութիւնը կ'որոշուի ձեր տեսիլքի չափով: Աստուած հեռացուցած է ձեր կեանքի սահմանափակումները: Ժամանակն է, որ նոյնը ընէ՛ք:

ՆՇՈՒՄՆԵՐ

1. Լոուրէնս Օ. Ռիչարտս, «Աստուածաշունչեան բառերու Նոր միջազգային հանրագիտարան» (Կրեմտ Ռեպիտս, Միշիկըն. «Zondervan», 1991թ.), էջեր 315-316:
2. Փիթըր Սթոունըր, «Գիտութիւնը կը խօսի. Մարգարէութիւններու եւ Աստուածաշունչի ճշգրտութեան գիտական ասպացոյց» (Շիքսկօ, «Moody Press», առջանց հրատարակութիւն, 2005թ.), Նայսաբան, <http://sciencespeaks.dstoner.net>:
3. Նոյնը, գլուխ 3:
4. Նոյնը:
5. Նոյնը:
6. Նոյնը:
7. Աստուածաբանութեան դոկտոր Սփիրոս Զոտիիաբեցի խմբ., «Նոր կտակարանի բառերու ուսումնասիրութեան ամբողջական բառարան» (Չաթանուկա, Թեննեսի, «AMG Publishers», 1992թ.), «փոլեուս» բառայօդուածը:
8. Թինըթի Քեյլըր, «Իթինըթի Քեյլըրի քարոզներու արխիւ (Նիւ Եորք Սիթի. «Փրկագնող» Երիցական եկեղեցի, 2013թ.), մուտքը՝ «Logos Bible Software»-ի միջոցով:
9. «Նոր կտակարանի բառերու ուսումնասիրութեան ամբողջական բառարան», «քոսմոս» բառայօդուածը:
10. «Daily Mail Reporter», «Համատեղ կեցութիւնը ամուսնութենէն առաջ այլեւ չի մեծցնէր ամուսնալուծութեան հաւանականութիւնը» («Daily Mail.com», Մարտ 22, 2012թ.), մուտքը՝ Փետրուար 26, 2015, <http://www.dailymail.co.uk/news/article-2118719/Living-marriage-longer-increases-chances-divorce.html>:
11. Ընդհանուր Քոուլըր, «Աւելի շատ մարդիկ համատեղ կեցութիւնը կը փնտռեն ամուսնութենէն առաջ, քան երբեք», («U.S. News & World Report», Ապրիլ 4, 2013), մուտքը՝ Փետրուար 26, 2015, <http://www.usnews.com/news/articles/2013/04/04/more-people-than-ever-living-together-before-marriage>:
12. Լոուրէնս Օ. Ռիչարտս, «Աստուածաշունչեան բառերու Նոր միջազգային հանրագիտարան» (Գրեմտ Ռեպիթս, Միշիկըն. «Zondervan», 1991թ.), էջ 639:
13. Զարլզ Սփերճըն, «Սրբութիւնը պարտադիր է» (քարոզ, «Մեթրոպոլիտէն Թեպերնեքըլ», Լոնտոն, հրատարակման անսաթիւը՝ Սեպտեմբեր 22, 1904թ.), մուտքը՝ «Logos Bible Software»-ի միջոցով:
14. Հարցում՝ թելադրուած «Մետենճըր Ինթերնեշընլ» ծառայութեան կողմէն: Կարդացէ՛ք. Ծոն Պիվիր, «Անկտորում հոգի. Այն զօրութիւնը, որ անհրաժեշտ է ձեզ՝ երբեք չյանձնուելու համար» (Քոլորատո Սփրինկս, Քոլորատո, «WaterBrook Press», 2011թ.), էջեր 26-27:
15. «Վիճակագրութիւն՝ համացանցային պոռնոկրաֆիայի վերաբերեալ», «Daily Infographic», մուտքը՝ Յունուար 24, 2014թ., <http://dailyinfographic.com/the-stats-on-internet-pornography-infographic>:
16. «Ռոքս»-ն կանայք կախումածութեան մէջ են պոռնոկրաֆիայէն: 10 վիճակագրութիւն, որոնք կրնան ցնցել ձեզ»: «Covenant Eyes», մուտքը՝ 27 Մարտ, 2014թ., <http://www.covenanteyes.com/2013/08/30/women-addicted-to-porn-stats>:
17. Նախորդ երեք պարբերութիւնները որոշակի փոփոխութիւններով մէջբերուած են Ծոն եւ Լիզա Պիվիրի «Պատմութիւն ամուսնութեան մասին» գիրքէն (Փալմեր Լեյք, Քոլորատո. «Մետենճըր Ինթերնեշընլ», 2014թ.), էջեր 181-182:
18. «Covenant Eyes», «Վիճակագրութիւններ պոռնոկրաֆիայի վերաբերեալ. 2014թ.-ի հրատարակութիւն», էջ 20:
19. Ընդհանուր Ռոպու, ««Porn & Pancakes»-ը կը պայքարը պոռնոկրաֆիկ կախումածութիւններու հետ», «CNN», Ապրիլ 6, 2007թ., մուտքը՝ Փետրուար 9, 2015թ., <http://edition.cnn.com/2007/US/04/04/porn.addiction/index.html>:
20. «Փաստեր եւ վիճակագրութիւններ ալքոհոլի մասին», «Ալքոհոլի չարաշահման եւ ալքոհոլիզմի ազգային ուսումնարան(ինստիտուտ)», մուտքը՝ Փետրուար 9, 2015թ., <http://www.niaaa.nih.gov/alcohol-health/overview-alcohol-consumption/alcohol-facts-and-statistics>:
21. Սթիվըն Ռայնպերկ, «Ամերիկացիներու մէկ երրորդը ալքոհոլային խնդիրներ կ'ունենայ կեանքի ինչ որ փուլին մէջ», «The Washington Post», Յունիս 2, 2007թ., մուտքը՝ Փետրուար 9, 2015-ին:
22. «Փաստեր եւ վիճակագրութիւններ ալքոհոլի մասին»,
23. Նոյնը:
24. Հետեւեալ նիւթը շնորհիք մասին ընդգրկուած է իմ «Անկտորում հոգի. Այն զօրութիւնը, որ անհրաժեշտ է ձեզի՝ երբեք չյանձնուելու համար» գիրքին մէջ (Քոլորատո Սփրինկս, Քոլորատո, «WaterBrook Press», 2011թ.): Այն հիմնուած է ուղերձի մը վրայ, որ եւ յաճախակի քարոզած եմ իմ ծառայութեան ընթացքին: Կը ներկայացնեմ այդ ուսուցումը այս գիրքին մէջ՝ որոշ փոփոխութիւններով:
25. Յոհաննէս Փ. Լուվ եւ Եուճին Ալպերթ Նայտա, «Նոր կտակարանի յունարէն-անգլերէն իմաստաբանական բառարան», (Նիւ Եորք. «United Bible Societies», 1996թ.), էջ 662:

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ. ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ



Երեք տարի շարունակ աշակերտները Յիսուսին հետ էին: Անոնք Յիսուսին հետ կը քալէին եւ կը լսէին ամէն ինչ, որ Ան կ'ըսէր իրենց: Այնուամենայնիւ, Յիսուս ըսաւ Իր ամենամտերիմ ընկերներուն, որ Ինք պէտք է ձգեր զանոնք, որպէսզի Սուրբ Հոգին կարենար գալ, եւ անոնց համար աւելի լաւ պիտի ըլլար, եթէ Ինք երթար (Յովհաննէս 16.7, 13-14): Եթէ ասիկա ճշմարիտ է աշակերտներուն համար, որոնք ամէն օր Յիսուսին հետ էին, ապա որքա՞ն աւելի մենք պէտք ունինք, որ Սուրբ Հոգին գործուն մասնակցութիւն ունենայ մեր կեանքերուն մէջ:

Սուրբ Հոգին յաճախ կը պատկերացուի որպէս «տարօրինակ» երեւոյթ մը, բայց Սստուածաշունչը պարզօրէն ցոյց կու տայ մեզի, որ Հոգին Անձ է եւ խոստացած է չհեռանալ մեզմէ: Այս փոխգործուն գիրքին մէջ ճոն Պիվիրը կը հրաւիրէ ձեզ՝ անձամբ յայտնաբերելու ամէնէն անտեսուած եւ սխալ հասկցուած անձնաւորութիւնը եկեղեցիին մէջ՝ Սուրբ Հոգին:

Այս փոխգործուն գիրքը կ'ընդգրկէ.

- Սերտողութեան ամէնօրեայ միւթեր
- Հարցեր՝ խմբային քննարկման համար:
- Յաւելեալ գլուխ մը, ուր Սուրբ Հոգիին մասին որոշ բարդ հարցերու պատասխաններ զետեղուած են:

Ներբեռնեցէ՛ք յաւելեալ միւթերը
առջանց հետեւեալ կայքէջէն.

www.CloudLibrary.org

Յաւելեալ միւթերը բազմաթիւ լեզուներով հասանելի են դիտելու եւ
ներբեռնելու համար YouTube.com, Youku.com
եւ միւթեր տարածող այլ կայքերու մէջ:

ԵՔԷ ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ ՍԸ ԲԱՐԻ Է, ԱՏԻԿԱ ՊԷՏՔ Է ՈՐ ԱՍՏՈՒԾՍԷ ԸԼԼԱՅ, ԱՅՆՊԷՍ ԶԷ՞

Մեր օրերուն «բարի» եւ «Աստուած» բառերը կարծես հոմանիշներ դարձած են: Մենք կը հաւատանք, որ այն, ինչ որ ընդհանուր առմամբ բարի կը համարուի, պէտք է որ համապատասխանէ Աստուծոյ կամքին: Առատածեռնութիւնը, խոնարհութիւնը եւ արդարութիւնը բարի են: Եսասիրութիւնը, ամբարտաւանութիւնը եւ դաժանութիւնը չար են: Կը թուայ, թէ այս տարբերակումը շատ պարզ է:

Բայց արդեօ՞ք ամէն ինչ այդքան պարզ է: Եթէ բարին այդ աստիճան ակնյայտ է, ինչո՞ւ Աստուածաշունչը կ'ըսէ, որ մեզի զանազանութիւն անհրաժեշտ է՝ այն ճանջնալու համար:

«Բարի՞, թէ՞ Աստուած» գիրքը՝ սովորական ուղերձ մը չէ այն մասին, թէ ինչպէս դուք ձեզի լուծէք ձեր խնդիրները: Այս գիրքը պարզապէս չ'առաջարկէր ձեզի, որ փոխէք ձեր վարքը. այն պիտի ընէ աւելին: Այն պիտի տայ ձեզի կարողութիւն, որուն միջոցով դուք պիտի կարենաք հաղորդակցիլ Աստուծոյ հետ այնպիսի մակարդակի վրայ, որ պիտի փոխէ ձեր կեանքի իրաքանջիւր բնագաւառը:

Կ'ԸՆԴԳՐԿԷ ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՆԻԹԵՐ ԵՒ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ԲՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ՝ ՆԱԽԱՏԵՍՈՒԱԾ 6 ՀԱԲԹՈՒԱՆ ՀԱՄԱՐ:

ՃՈՆ ՊԻՎԻՐԸ եւ անոր կինը՝ Լիզան, «Մեսինճըր Ինթերնեշնլ» ծառայութեան հիմնադիրներն են: Ճոնը քարոզիչ է, նաեւ՝ հանրաճանաչ գրող: Առանց փոխզիջման՝ ան համարձակօրէն եւ ջերմեռանդօրէն կը քարոզէ ճշմարտութիւնը: Ան կ'ուզէ սատարել տեղական եկեղեցիներուն եւ օգտակար դառնալ առաջնորդներուն քրիստոնէական միւթերով՝ անկախ անոնց բնակութեան վայրէն, լեզուէն կամ դրամական վիճակէն: Մինչեւ օրս անոր միւթերը թարգմանուած են աւելի, քան 90 լեզուներով: Երբ Ճոնը տունը գտնուի, սովորաբար կը փորձէ հանդգել Լիզային, որ միասին կոլֆ խաղան, նաեւ կը հաղորդակցի իր չորս որդիներուն, հարսին եւ թոռնիկներուն հետ:

Ներբեռնեցէ՛ք այս եւ այլ միւթեր հետեւեալ կայքէն.

www.CloudLibrary.org

Այս գիրքը նուր է հեղինակին կողմէն եւ վաճառքի ենթակայ չէ:



MESSENGER
INTERNATIONAL
MessengerInternational.org



Կ'ընկերակցե՛ք ձեր
Տեսուհիները Եւ Վարդերը

